**دیوان اشعار**

# خورن در ورویریان

به کوشش ،گردآوری، تنظیم، پیشگفتار، ویرایش ، تحشیه و انتشار

توسط ادیک باغداساریان (ا. گرمانیک)

با همکاری خانم تامار پانوسیان

**Khoren Ter-Vruyrian**

# Collection of poems

Collection, Introduction, Commentary notes, editing and publishing
by
**Edic Baghdasarian**

With assisstance of
**Mrs.Tamar Panosian**

ISBN: 978-1-927860-80-9

Հայկական Ուսումնասիրութիւնների Կենտրոն
Armenian Research Center

**Տորոնտո 2020 Toronto**

**Խորէն Տէր Վրոյրեան**



# ԸՆՏԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

**Առաջաբանը, ծանօթագրութիւնները և խմբագրութիւնը**
**Էդիկ Բաղդասարեանի**

**Համագործակցութեամբ**
**Թամար Փանոսեանի**

Հայկական Ուսումնասիրութիւնների Կենտրոն

**Խորէն Տէր Վրոյրեան**



# ԸՆՏԻՐ
# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

**Առաջաբանը, ծանօթագրութիւնները և խմբագրութիւնը**
**Էդիկ Բաղդասարեանի**

**Համագործակցութեամբ**
**Թամար Փանոսեանի**

**Հայկական Ուսումնասիրութիւնների Կենտրոն**
ISBN: 978-1-927860-80-9
**2020**
**Տորոնտո - Կանադա**



**Խորէն Տէր Վրոյրեան**



**Խորէն Տէր-Վրոյրեանի մայրն ու քոյրը**

**Հանգուցեալներ՝**

**Սալբինազ , Անուշ**

# Բովանդակութիւն

Առաջաբան........................................................................7
Խորեն Տեր Վրույրյանի մահվան 40-օրյակը...................... 10
Այս հրատարակության մասին......................................... 14
Հայրենասիրական երգեր................................................ 33
Քառոզչական_ԵւԴաստիարակչական.............................. 69
Առակներ_եւ_օրինակներ.................................................. 97
Տրտունջներ_եւ_մրմունջներ........................................... 113
Պօէմաներ.................................................................. 155

«Խրատական»............................................................. 155
«Հրանդը» Պօէմա........................................................ 207
Շահ Աբբասի Բռնագաղթը_Եւ_Մելիք Մովրովը ................ 225
Թարգմանութիւններ_Պարսից գրականութիւնից............. 297
Սաադի........................................................................ 318
**Յաւելված**.................................................................... 380

Ինչպէս տեսա Հայաստանը............................................ 381

Այլ փաստաթղթերի ընտրանի ....................................... 424

# Առաջաբան

*Խորեն Տեր Վրույրյանը ծնվել է 1914թ. Իրանի Բուրվարի գավառի Աբբարիկ գյուղում: Տարրական ուսումը ստացել էր Սանգաֆիդ գյուղի դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Փերրիա գավառի Բոլորան գյուղի Հայրիկյան դպրոցում, ապա մեկնել է Ջուղա և կրթությունը շարունակել Քանանյան միջնակարգ դպրոցում Մեսրոպ Մագիստրոս առաջնորդի օրոք:*

*Նա ապա մեկնել է Սուլթնաբադ (Արաք) և սովորել տեղի հայոց ազգային դպրոցում: Այնուհետև 17 տարեկան հասակից մինչև կյանքի վերջին տարիները զբաղվել է ուսուցչությամբ:*

*Նա դասավանդել է հայկական Սանգաֆիդ (Բուրվարի), Ջարթաղ և Ղորչիբաշի (Քյամարա, երկու տարի) գյուղերում և Թեհրանի հայաբնակ Վանագ գյուղում: Այնուհետև մեկնել է բանակ և զինվորական տառապալից ծառայությունը ավարտելով՝ կրկին շարունակել է իր դասավանդումը, Թեհրանի Մանսուրաբադի և Քուշեշ-Դավթյան դպրոցներում:*

*Խ. Տեր Վրույրյանը զգալով օրվա ամենամեծ կարիքներից մեկը, այն է՝ հայկական դպրոցի պակասը, հիմնեց Դանայի (1942թ.) այնուհետև Շահազիզ (1948թ.) դպրոցները Թեհրանում իր մի քանի ընկերների համագործակցությամբ: Նա չբավարարվելով այսքանով՝ 1952 թվականին հիմնեց Հայոց Թաբան դպրոցը (Թեհրանի Հեշմաթիե թաղամաս) և մինչև իր կյանքի վերջին տարիները տնօրինեց այն, ուր՝ նաև դասավանդեց զանազան առարկաներ, ի մասնավորի հայերեն լեզուն և գրականությունը:*

*Նա իր 50 տարիների ուսուցչական գործունեությամբ դաստիարակել է հարյուրավոր հայ մանուկներ, որոնք հետագայում*

*դարձան համայնքի նշանավոր դեմքեր ու մասնագետներ: Տողերիս գրողը եղել է նրա դպրոցի աշակերտը բոլոր ուսումնական տարիներում, 1960 ական տարիներում:*



Բուրւարի գավառի գիւղան տուն

*Խորեն Տեր-Վրույրյանը իր սրտի խորքերում ունենալով հայրենիքի մեծ կարոտը, 1978 թվականի օգոստոսին հաջողեց մեկնել իր բոլոր իղձերի ու երազանքների երկիր՝ Խորհրդային Հայաստան: Նա հայրենիքում չափազանց ջերմ ընդունելություն  է գտել թե՛ իր ազգակիցների և թե՛ մշակութային ու գիտական դեմքերի կողմից, հանդիպել է աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանին, հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազին, Հայրենի նշանավոր գրող Սերո Խանզադյանին և այլ նշանավոր անձանց:*

*Նա հայրենիքից վերադառնալով իր տպավորությունները զետեղել է իր «Ինչպես տեսա Հայաստանը» գրքում, որը հրատարակւել է 1981 թվականին Թեհրանում: Տողերիս գրողը պատիվ է ունեցել համագործակցել նրա հետ այս գրքի պատրաստամ աշխատանքներին:*

Խ. Տեր Վրույրյանը հավատացած լինելով երկար տարիների իր ջանքերի նպատակներին, ծառայել է իր ժողովրդին, ի մասնավորի Հեշմաթիե թաղամասի կարիքավոր և ճնշված հայ բնակչությանը, որոնց կողմից ընտրվել էր Թեհրանի Հայոց թեմի 10-րդ Պատգամավորական խորհրդի ապա Թեմակն խորհրդի անդամ:

Նա այդ 2-3 տարիների ընթացքում մինչև իր մահը, աշխատում էր իր թաղամասի ժողովրդի համար մի մարզա-մշակութային կենտրոն հիմնել Թեմական խորհրդի աջակցությամբ, որը դժբախտաբար իր սկսած գործի արդյունքներին ականատես չեղավ:

Խ. Տեր Վրույրյանը իր 50-ամյա հերթական աշխատանքներին զուգընթաց զբաղվել է նաև գրականությամբ. Նա ունի բազմաթիւ անտիպ բանաստեղծություններ, պոեմներ և թարգմանություններ, որոնք բխում են իր ժողովրդի սրտի խորքերց և ապրումներից: Նրա բանաստեղծութիւններում միանշանակ արտացոլվել են թե հայրենասիրական մոթիվները, թե չքավոր և զրկանքներ կրող հայերի կենցաղն ու պատկերը, իմաստասիրական երանգները, մարդկային վեհ գաղափարները, և այլն:

Նա հեղինակն է «Հրանդ» չափածո, «Ինչպես տեսա Հայաստանը» արձակ գրվածների, «Շահ Աբբասի բռնագաղթը և Մելիք Մովրովը» պոեմը, իր ուրույն բանստեղծություններն ու պեմները, պարսից գրականան թարգմանություններ:

Վաստակաշատ ուսուցիչ, տեսուչ, բանաստեղծ և մշակութային-հասարակական գործիչ Խորեն Տեր Վրույրյանը վախճանվեց 1982 թվականի մարտի 22-ին Թեհրանում, դժբախտ պատահարի հետևանքով[1]:

Էդիկ Բաղդասարյան
1982 թ. մարտ
Թեհրան

---

[1] - Այս կենսագրականը տրամադրել էի հանգուցեալի բարեկամ Ռ. Քէշիշեանին, որի հիման վրայ իր կենսագրական յօդւածն է տպագրել Ալիք օրաթերթի 1982թ. մայիսի 15-ի համարում: Կրկնութիւնից խուսափելով, այդ գրութիւնը չեմ ներառել այս գրքում-ԷԲ:

# Խորեն Տեր Վրույրյանի մահվան 40-օրյակը

Տողերիս հեղինակը, վերոնշյալ առաջաբանը գրել էր իր ուսուցիչ Խ. Տեր-Վրույրյանի վախճանման առիթով նույն օրերին հանգուցյալի պատվին այցելությունների կապակցությամբ և դամբանականին հնչելու համար:

Սակայն Հեշմաթիեհ թաղամասի Դահ-մեթրի պողոտայում գտնվող նորաստեղծ Էրեբունի Մարզա-մշակութային միության համագործակցությանբ, որը ի միջի այլոց հին Շահազիզ միության վերականգնած կազմակերպությունն էր, տողերիս հեղինակը ձեռնարկեց հասարակական հավաք հանգուցյալի մահվան 40-օրյակի առիթով՝ նույն միության սրահում, որը գտնվում էր նշված վայրում՝ Սահակյան դպրոցում:

Այդ առիթով համայնքային հրավեր պատրաստվեց հետևյալ բովանդակությամբ.

Հրաւէր

Այսու սիրով հրաւիրում ենք ձեզ ներկայ գնտւելու հասարակակն գործիչ և տարիների ուսուցիչ և տեսուչ հանգուցեալ Պրն. Խորէն Տէր Վրոյրեանի մահւան 40-օրեակի առթիւ Էրեբունի միութեան նախաձեռնութեամբ կազմակերպւած յուշերեկոյին, որը տեղի կունենայ ուբաթ Մայիսի 7-ին կ.յ ժամը 5-ին միութեան սրահում:

Էրեբունի Մարզա-Մշակութային
Միութեան Վարչութիւն

Այդ հուշերոկոյի համար ես գտել էի հանգուցյալի ձայնագրութիւններից, որը սփռւեց երեկոյի ընթացքում, հրաւիրել էի նախկին ուսուցիչներ ու հասարակական ու մշակութային գործիչներ, նախկին աշակերտեր և ազգականներ, սակայն երբ շուրջ 10 օր նախքկան այդ ծրագիրը բաժանել էինք հրաւերները նաև փակցրել հայկական խանութերի ապակիներին ու հանրային վայրերում, տեղեկացանք որ Դաշնակցականները սուտ լուրեր

*էին տարածել, իբր թե Խորենը «Թուդեական» էր, և ժողովրդին սպառնացել էին որպեսզի չմասնակցեն այդ հուշերեկոյին, որի արդյունքում մեր նախաձեռնությանը շատ քիչ թվով անձինք մասնակցեցին, ընդհարապես մերձավորներն ու մեր մոտ ընկերները: Թեպետ մեր պատրաստած ծրագիրը բազմաբովանդակ էր ու ճոխ, սակայն հաջողությամբ իրականացվեց սահմանափակ թվով մասնակիցներով:*

*Ելույթ ունեցան Միության վարչության կողմից, ես և մի շարք այլոք. ստորև ներկայացնում եմ իմ ելույթի տեքստը.*

Ողջույն հարգելի հայրենակիցնե՛ր,

Օրերն անցնում են լեռներից հոսող վարար ջրի պես և այդ օրերի ամեն մի վայրկյանն անցնելով՝ մենք ավելի ու ավելի շատ ու խորագին ենք զգում այն վեհ անձնավորության բացակայությունը՝ որը լրիվ իր կյանքը նվիրեց մեզ՝ Նաիրյան զավակներիս, կերոնի պես վառվեց և իր իր հարազատ ժողովրդին լույս և հույս պարգևեց:

Ինչպե՞ս կարող ենք Խորեն Տեր-Վրույրյանի սրտաճմլիկ և անակնկալ մահը նույնիսկ հավատալ: Նրան ենք փնտրում Մեսրոպյան ջահը ձեռքներիս, այս և այն կողմ ենք դեգերում, գտնում նրա հետքը և հետևելով՝ հասնում ենք նրա ամենահարազատ և ջերմ հանգրվանը, ահա գտնում ենք նրա ոչ-մարմնականը իր հարազատ ժողովրդի սրտի տրոփյուններում:

Խորեն Տեր-Վրույրյանը ծնվեց, սնվեց, սովորեց, աշխատեց, տառապեց և գրեց իր ժողովրդի համար, իր կյանքի բոլոր 66 տարիների ընթացքում ցուցաբերեց այնպիսի մի հազվադեպ զոհաբերություն, աշատանք և ուղեգիծ, որոնց շատ սակավները կարողացան ընդօրինակել: Նա երբեք չփոխեց իր գիծն ու դիրքը՝ ընդմիշտ մնաց իր ժողովրդական պատնեշի վրա և չլքեց այն, միշտ էլ պայքարեց անարդարության և իրավազրկության դեմ: նրա ազգանվեր ձեռնակներից են Դանայի, Շահազիզ և Թաբան ազգային դպրոցների հիմնադրումը իր մի քանի ընկերների համագործակցությամբ:

Այդ արտահայտելով հարկ է հիշել, որ այդ աշխատանքների փոթորկալից շրջանը զուգադիպում էր համշխարհային երկրորդ պատերազմի տարիներին ապա նոր բռնապետության հաստատմանը Իրանում ու Սառ պատերազմի թեժ ժամանակաշրջանին: Այո այդ սև օրերին էր, որ Պարոն Խորենը ձեռնարկեց դպրոցներ հիմնել, որոնց հոտևանքով ենթարվեց վտարման և հալածանքների թե պետական թե դաշնակցական տարրերի կողմից, սակայն նա չը ընկճվեց և չսարսափեց որևէ բանից, իր հոգով գնեց ահաբեկչական փորձը, որը կազմակերպել էր ՀՅԴ-ն: Սակայն չհաջովեց այն իր ոսոխներին և հրաշքով նա փրկվեց: Այդ մասին մանրամասնորեն նա պատմել էր ինձ նաև իր պարսիկ հարևանն էլ մի քանի օր առաջ պատմում էր այդ մասին որպես ականատես, հարևանները նրան Աղայե Մոդիր (Պարոն տեսուչ) էին կոչում:

« ... *Թեմականի անդամ ընտրությունների մասին արդեն հիշել եմ Առաջաբանում-ԷԲ*»:

Այսօր մենք, նրա երբեմնի աշակերտներս, ուսուցիչներս ու մերձականերս շատ լավ են ըմբռնում այն բոլոր աշխատանքների և տառապանքների արժանիքը, որ հանգուցյալ Պրն. Խորենը մեզ համար կրեց, որպեսզի իր ազգի զավակներին հայեցի դաստիարակչություն տրամադրի, այսօր երբ նրա աշախերտների մասին է խոսվում, անմիջապես մատնանշվում է նրանց հայերեն ձեռագիրը, որը հմայիչ է, գեղեցիկ ու հավասար, կարծես տպագրական պատկեր: Հիշում ենք, որ այդ շնորհալի ուսուցիչը դպրոցի առօրյա աշխատանքը ավարտելուց հետո, ինչպես էր թույլ աշակերտներին հավաքում մի դասարանում և հայերեն ավելյալ դասեր էր պարապում, առանց մի նյութական ակնկալիքի, բացի այն, ամեն տարի երկու շաբաթ ինքը անձամբ մասնակցում էր բոլոր դասարանների հայերնի ուսուցման գործին, նաև ավելորդ ժամեր ամենօրյա դասաժամերից դուրս, անձամբ ստանձնելով ավելյալ ծախսերը: Նրա համար աշախերտների մայրենի լեզվի գիտությունը սրբազան գործ էր:

...

Այժմ ժամանակն է ի հարգանք և պատիվ հանգուցյալի պայծառ հիշատակին, ըմբռնենք նրա գործունեության իսկական նպատակներն ու պատգամը, նրա երազանքները դարձնենք իրական, որպես մեր առաքելություն:

Թող նրա անմոռաց հիշատակը ընդիշտ ապրի մեր սրտերում և մեզ հույս ընծայի պայքարելու և ապրելու:

Շնորհակալություն;

Էդիկ Բաղդասարյան

# Այս հրատարակության մասին

*Տողերիս հեղինակը որպես Թաբան դպրոցի երբեմնի աշակերտ, չափազանց մոտ եմ եղել հանգուցյալ Խորեն Տեր-Վրույրյանին, քանի որ միշտ լինելով թե մեր դպրոցի թե կրթադաստիարակչական թաղային գերազանցիկ աշակերտ, միշտ վայելել եմ իմ ուսուցիչների և մասնավորապես հանգուցյալի քաջալերանքն ու ջերմ վերաբերմունքը։*

*Իմ հարաբերությունը Պարոն Խորենի հետ չափազանց մտերմացավ 1980-81 թվականներին երբ հրատարակեցի «Հայ Ժողովրդի Պատմության» պարսկերեն լեզվով երկհատորյակի առաջին հատորը, որի աննախադեպ հաջողություն և ընդունելություն ունեցավ։ Հանգուցյալը տեղեկանալով իմ ֆինանսական աննախանձելի վիճակի մասին, առաջարկեց օգնելու երկրորդ հատորի հրատարակման մասին, որը և տեղի ունեցավ, գիրքը հրատարակվեց հաջողությամբ, անյպես որ մի քանի շաբաթվա ընթացքում կարողացա ստացած պարտքը վերադարձնել նրան։*

*Նրա մահվանից հետո, որպես Պր. Խորենի ամենամոտ անձնավորություն (մենք հադիպում էինք համարյա ամեն օր, երբ մի օր թերանայի նրան այցելել, նա կգար մեր տուն, մայրիկիս կասեր որտեղ է այդ տղան, Սեթարեյե Սոհեյլ է եղել[1]), նրա անմիջական ընտանիքի անդամներն ու իր տիկին Վարդուհին խնդրեցին ինձ ստանձնեմ նրա գրական ժառանգության պահմանումն ու հնարավորության դեպքում հրատարակումը։*

---

[1]-Արաբերենով **Սեթարեյե Սոհեյլ,** **Կանոպուս** կամ **Կանաբոս**, Ողնուց համաստեղության ամենապայծառ և երկնքի պայծառությամբ երկրորդ (Սիրիուսից հետո) աստղը: Անունը ստացել է Սպարտայի արքա Մենելայոսի նավավար Կանոպուսի անունից: Արեգակից հեռու է մոտ 310 լ. տ., կամ 160 պս: Կանոպուսի տեսանելի աստղային մեծությունը —0, 75 է, իսկ բացարձակ մեծությունը −5.71:

Լուսատվությամբ Արեգակին գերազանցում է 7800 անգամ: Երևում է 37° հյուսիսային լայնությունից հարավ գտնվող վայրերից:Կանոպուսը ծերացեղ վառ գիգանտ է, A9 կամ F0 սպեկտրային դասի, համապատասխանաբար, անզեն աչքով այն սպիտակ է երևում: Պարցից գրականության մեջ փոխաբերակա իմաստով, նաշանկում է հազվագյուտ, հազվադեպ, քանի որ այդ աստղը երևում է ամեն 70 տարին մեկ անգամ:

*Այդպես էլ ինձ հանձնվեց նրա բոլոր գրությունները, ձեռագրերը: Նա վերջին տարիներում թարգմանում էր պարսիկ մեծ բանաստեղծ Սաադի Բուստանը: Այդ իրականացնելու համար ես և նա դիմեցինք նշանավոր գրախանութներ Սաադի գործերի լավագույն խմբագրությունններն գտնելու, այն գործերը որոնք ունեին բավարար ծանոթագրություններ, քանի որ Սաադի և ընդհանրապես պարսից դասական գրականության թարգմանությունը, որը լի է արաբական բառերով ու փիլիսոփայական հայացքներով, չափազանց դժվարին գործ է:*

*Այդպիսով էլ գտանք Սաադի չորս հատորները, որոնք և ես խնդրեցի ինձ տրամադրել ապագայում նրա թարգմանության խմբագրության և հրատարակման համար օգտագործել նույնը ինչը ինքն էր հիմք ծառայեցրել:*

*Այսօր շուրջ 40 տարի է անցնում հանգուցյալ Խորեն Տեր-Վրթըյրյանի վաճճանումից և ես ինչպես մտածել էի նրա գործերը հրատարակել, այժմ ուրախ եմ, որ ի վերջո իմ սիրասուն կողակից Թամարի օգնությամբ ի կատար եմ ածել իմ փափագներից մեկը և հրատարակում եմ իմ ավագ ուսուցչի գրական գործերը:*

*Այն օրերին, երբ հաճախ հանդիպում էի Պրն. Խորենին իր տանը, ինչպես նաև հանրաքաղքում ու ճանապարհին, խնդրում էի, որպէսզի իր կենսագրական մանրամասնությունները կամ ինքը գրի առներ, կամ թույլ տա ես գրեի, սակայն միշտ համեստությամբ էր արձագանքում իմ խնդրանքին և այդպես էլ դա չկատարւեց, բացի որոշ դրվագներ իր կյանքից, անհրաժեշտության դեպքում պատմում էր ինձ, որոնցից մի քանի նմուշներ արդեն նեկայացրել եմ, սակայն իմ ինքնակեսագրական կամ հուշերի գրքում կներկայացնեմ իմ բոլոր հանդիպումներն ու ուշագրաւ անցուդարձերը, հանուն պատմության:*

*Ինձ հանձնւած իրերը հետևյալներն են եղել.*

*1-«Շահաբբասի Բռնագաղթը և Մելիք Մովրով»-ի իսկական բնագիրն ու մի քանի պատճեններ:*

*2- Բանաստեղծությունների և պոեմների ժողովածուի իսկական ձեռագիրն ու մի քանի պատճեն:*

*3-Սաադիի Բուստանի թարգմանությունը, որը բաղկացած է առաջին, երկրորդ և հինգերորդ գլուխների որոշ դրվագների*

*թարգմանության իսկական օրինակը, սա նրա վերջին գործն է եղել քանի, որ կիսատ է մնացել և նա չի հասցրել ավարտել այն:*

*4- Չորս տետրակ, թարգմանությունների սղագրություններ իր իսկ ձեռագրով:*

*5-Մի տետրակ իր անձանական կյանքի մի դրվագ դանայի դպրոցից, որը ներակայացվում է այս բաժնից հետո:*

*6-Երկու տետրակ մի քանի էջեր իր ձեռագրով պարսկական գրականությոինից ընտրած և մաքուր ու կարգով արտագրած:*

*7-Մի տետրակ, որը պարունակում է իր մի քանի բանաստեղծությունները մաքրագրված, սրանք նեռարված են իր ժողովածուի մեջ:*

*8-Թաբան դպրոցի մի քանի ուսուցչական ժողովների արձանագրությունները հայերեն և պարսկերեն:*

*9- Մի երգերի տետրակ, հայերեն և պարսկերեն:*

*10 -Մի տետրակ , սղարություն, մի պատմվածք է «Վեցերորդի Վկայականը,» 60 էջ, մշակման կարիք ունի և առայժմ հնարավոր չէ տպագրել:*

*11- Մի տետրակ, հայերեն արձակ գրված, անվերնագիր, մշակման կարիք ունի և առայժմ հնարավոր չէ տպագրել:*

*12-Մի տետրակ պարսկերեն կարճ պատմվածք, անվերնագիր, մշակման կարիք ունի և առայժմ հնարավոր չէ տպագրել:*

*13-Մի տետրակ, «Ինչպես տեսա Հայաստանի» նախնական ձեռաքիր:*

*14-Մի քանի առանձին պատառիկներ:*

*15-Մի քանի անձնական նամակներ, Սփյուքահայության հետ Մշակութային կապի կոմիտեի կողմից նամակներ, իր վկայականներից մեկը, Թաբան դպրոցի արտոնությունը, մի քանի նկարներ և այլն:*

*Վերոնշյալ նյութերի մեծ մասը, որոնք հնարավոր էր, ներառվել է այս ժողովածուի մեջ:*

*Նկարներն ու որոշ նամակներ ու փաստաթղթեր ներկայացվում են այս գրքի ներսում և հավելվածում:*

*Ինչ վերաբերում է թարգմանություններին, հարկ եմ համարում նշել, որ որոշ տեղերում անհրաժեշտ եմ զգացել փոքր ինչ ճշտումներ կատարել, թե կետադրության, թե հնչեղության ու թելադրական վրիպակների ուղղումների վերաբերյալ:*

*Սաադիի թարգմանությունները տող առ տող համեմատել եմ պարսկերեն բնագրի հետ և հարկ եղած ծանոթագրություններ եմ տվել տողատակում։ Պիտի խոստովանել որ որոշ թարգմանություններ չափազանց դժվարին գործեր են եղել, որը նա հաջողությամբ է կատարել, կան նաև ոչ-հնչեղ դրվագներ որոնց չէի կարող դիպչել բոլորովին։*

*Հույսով եմ, որ այս աշխատությամբ կատարած լինեմ իմ պարտքը սիրելի ուսուցչիս հիշատակը հարգելու համար։*

*Էդիկ Բաղդասարյան,*
*Հուլիսի 28, 2020 թ.*
*Տորոնտո, Կանադա*

# Մի դրւագ իմ կեանքից[1]

*1948-49 ուս. տարւայ նախօրեակին Պրն. Դաւիթ Իսրայէլեանի արարքը պատրւագ ծառայեցնելով և իմ կողմից դա մի գրպարտութիւն համարելով Դանայի դպրոցի տեսուչ՝ Պրն. Խաչատուր Սաղաթլեանը առաջարկ դրեց Դանայի դպրոցի հոգաբարձութեանը ինձ պաշտօնից զրկելու և դուրսը թողնելու։ Այդպէս էլ արւեց։ Նրա առաջարկն ընդունւեց և ես մնացի դուրսը։*

*Մի յարմար զբաղմունք գտնել չը կարողացայ, ուստի զբաղւեցի գրաշարութեամբ և մի կերպ դժւարութիւնով անցրի այդ տարին։*

*Միւս ամռանը, երբ արդէն մօտ էր 1949-50 ուս. տարւայ արձանագրութիւնները, մի օր պատահաբար Նադերի խճուղիում հանդիպեցի Հօսէնալի Հաքիմիզադէ անունով իմ պարսիկ մի ընկերին, որի հետ միևնոյն զօրամասում և միևնոյն աստիճանով անց էի կացրել զինւորութիւնս։ Երկուսս էլ ուրախացանք այդ հանդիպումից։ Պարզւեց, որ նա սեփական առևտուր ունէր Հեշմաթիէի Շէյխան քառուղիում։ Իսկ երբ տեղեկացաւ իմ գործի անյաջողութիւնը, տխրեց և մի փոքր մտածելուց յետոյ ասաց։*

*«Մեր թաղամասի ժողովրդի թիւն օրէ օր աւելանում է։ Եկ այնտեղ մի դպրոց բաց։ Բոլոր պարսիկներին կասեմ երեխայ ուղարկեն։ Նորերս հայեր եւս եկել են և բնակութիւն են հաստատել այնտեղ, նրանք էլ երեխայ կուղարկեն քեզ մօտ։ Ես ամէն կերպ կօգնեմ քեզ և խօսք եմ տալիս գործը լաւ ընթացք կունենայ»։*

*Նրա նպատակն իհարկէ պարսկաց մի դպրոց բացելու մասին էր, սակայն երբ լսեցի որ հայեր էլ կան այդ թաղամասում աւելի ուրախացայ և որոշեցի հէնց մի հայոց դպրոց բացել այնտեղ և միայն հայ երեխաներ ընդունել այդ դպրոցում։ Հասցէ առայ, որ*

---

[1] - Խորագիրը մենք ենք ընտրել. իրականում Պրն Խորէնը գրել է այս բացատրական նամակը Դոկտոր Յովհաննէս Հախնազարեանին, որը Քուշէշ-Դավթեան դպրոցի տեսուչն էր և 1966 թւականից Իրանի հայկական դպրոցների ընդհանուր տնօրէնը.ԷԲ։

*նշանակեցի այդ թաղը գնալու, տեղը տեսնելու և խնդիրը մօտիկից ուսումնասիրելու:*

*Որոշւած օրը, ես անցայ ընկերոջս մօտ: Նա ինձ հիւրասիրելուց յետոյ տարաւ և ծանօթացրեց այդ թաղամասին: Վերադարձին ես իրենից շնորհակալութիւն յայտնեցի, գնահատեցի իր բարեացակամութիւնը: Սակայն խնդրեցի, որ նա ընդունի որ ես մի հայոց դպրոց բացեմ ու նա բարի գտնւի ինձ ծանօթացնելու այդ թաղի աչքի ընկնող մի հայ անձնաւորութեան հետ:*

*Ընկերս իմ այդ առաջարկն էլ ընդունեց և տարաւ մի հայի տուն: Այդ տունը Պրն. Մարտիրոս Տէր Գալստանեանի բնակարանն էր, մարդը որին ծանօթացրեց ինձ Պրն. Մարտիրոս Գալստանեանն էր:*

*Պրն. Մարտիրոսը ինձ շատ շուտ ճանաչեց, երեսս համբուրեց և չափից դուրս ուրախացաւ ինձ տեսնելով: Պարզւեց, որ մի քանի տարի առաջ երբ ես Բօզօրգնիա անունով մի հաստատութեան կողմից շինարարութեան կառավարիչ էի եղած Պրն. Մարտիրոսը ամիսներ այնտեղ շտեմարանապետի պաշտօն էր ունեցել: Ես էլ ճանաչեցի իրեն և շատ ուրախացայ ու գոհ մնացի այդ բարի զուգադիպումից: Ընկերս ուրախացաւ որ մենք ճանաչում ենք միմեանց և հեռացաւ:*

*Երբ նստեցինք և ես ցանկութիւնս յայտնեցի իրեն, նա շատ ուրախացաւ և խոստացաւ ամեն կերպ օգնել ինձ այդ գործում:*

*Իրենից խնդրեցի բարի գտնւելու վաղը երեկոյեան ժամի 8-ին այդ թաղի աչքի ընկնող մի քանի հայերին իր տուն հրաւիրելու, ես էլ գամ, ժողով անենք խօսենք այդ ուղղութեամբ և տեսնենք ինչ արդիւնք կստանանք այդ ժողովից:*

*Միւս օրը երեկոյեան այդ ժողովը գումարւեց: Ես էլ եկայ և ինձ ներկայացրի ժողովականներին: Խօսեցինք դպրոց բացելու մասին սակայն այդ ժողովից ոչ մի արդիւնք չստացւեց այդ գիշեր և նրանք այն կարծիքին էին, որ դպրոց բացելը կապ ունի մեծ ծախսերի հետ և իրենք այն ուժը չունեն որ օգնեն մեզ այդ գործում:*

*Զը յուսահատեցի: Ժողովից յետոյ Պրն. Մարտիրոսն ու ես մի քիչ էլ խօսեցինք և որոշեցինք դպրոցը բացել և ժողովրդի այդ յուսահատ դրութեանը կարևորութիւն չտալ: Պրն. Մարտիրոսը յայտնեց որ՝ Գորգան թաղամասում ևս հայեր կան, վատ չէր լինի, որ նրանց աչքի ընկնող անձնաւորութիւնների հետ ևս հանդիպում ունենայինք և մեր միտքը յայտնէինք: Միւս օրը Պրն. Մարտիրոսը, ես և Պրն. Ռաթէոս Իսկեանդարեանը գնացինք Գորգան թաղամասը, տեսանք մի քանի հոգու, խորհրդակցեցինք նրանց հետ և խնդրեցինք որ նոյն օրւայ երեկոյեան անցնեն Հեշմաթիէ Պրն. Մարտիրոսի բնակարանը աւելի մանրամասն խօսելու այդ ուղղութեամբ:*

*Երեկոյեան ժողովից ևս արդիւնք չստացւեց: Այստեղ ևս առաջ եկաւ այն տարաձայնութիւնը, որ Գորգանցիները ցանկացան դպրոցը բացւի իրենց թաղամասում, իսկ Հէշմաթիէցիները՝ իրենց թաղամասում: Նրանց կարծիքով դպրոցը որ թաղամասում բացւէր այդ թաղամասի հայութիւնը կը շատանար և նրանցից իւրաքանչիւրը ցանկանում էր որ իրենց թաղամասն օժտւէր այդ բարեմասնութիւնով:*

*Արդիւնք չստացւեց նաև ապագայ մի քանի ժողովներից որ գումարեցինք Պրն. Մարտիրոս Տէր Գալստանեանի բնակարանում: Գորգանցիներն էլ երբ չկարողացան ինձ համոզել Գորգանում բացել այդ դպրոցը նրանք ևս հեռու քաշւեցին:*

*Կայուն մնացինք միայն երեք հոգիներս՝ ես, Պրն Մարտիրոսը և հանգուցեալ Ռաֆայէլ Ռահիմնէժադը, որ սկզբում նրանց թւի վրայ էր սակայն կտրւեց նրանցից և միացաւ մեզ:*

*Որոշեցինք անպայման բացել դպրոցը ուստի և միջոցների դիմեցինք: Դիմեցի Պրն. Շահբազ Գրիգորեանին: Նա այն օրերում հիւսնագործութիւն ունէր և հայոց թաղային դպրոցների համար դպրոցական սեղան նստարաններ էր սարքում;*

*Յայտնեցի նրան իմ միտքը և խնդրեցի որ յանձն առնէր ինձ համար 50-ձեռք աշակերտական սեղան նստարաններ սարքելու: Այն օրւայ դրամով հազար թուման էր դառնում այդ սեղան նստարանների արժէքը, որից 400 հարիւր թումանը կանխիկ վճարեցի*

*և խոստացայ 600-թումանն էլ 4 ամսից յետոյ վճարել: Պրն. Շահբազը բացի իմ առաջարկն ընդունելուց շատ էլ ուրախացաւ և ոգևորեց ինձ, խոստանալով շուտով յանձնել սեղան նստարանները:*

*Անցանք շէնքի խնդրին: Շատ ման եկանք քանզի այդ թաղամասում մի յարմար տեղ չէր ճարւում: Վերջը մի տուն գտանք որ տասից աւելի փայտածածկ սենեակներ և մի շատ ընդարձակ բակ ունէր: Այդ շէնքը յարմար գտանք դպրոցի համար վարձելու, որին վարձել էր Մկրտիչ անունով մի հայ գոյնարար և ինքն այնտեղ ապրելուց բացի, ուրիշ սենեակներն էլ վարձու էր տւել մի քանի ուրիշ հայ ընտանիքների:*

*Վերը յիշւած երեք հոգիներս դիմեցինք Պրն. Մկրտչին, յայտնեցինք, որ դպրոց ենք ուզում բացել բայց շէնք չենք գտնում: Խնդրեցինք, որ մեծութիւն անէ այդ շէնքը մեզ յանձնելու, պայմանաւ որ շէնքը մեզ անցնելուց յետոյ նորից թողնենք ինքը արժան վարձով նստել այդ շէնքի մէջ, որովհետև դպրոցը առաջին, գուցէ և երկրորդ տարիները կարիք չունենա այդ բոլոր սենեակներին: Նա համոզւեց և խոստացաւ մեզ հետ գալ շէնքի տիրոջ մօտ և շէնքը մեզ անցկացնել, եթէ միայն շէնքի տէրն էլ ընդունէր այդ: Նա իր խոստումը կատարեց և շէնքի տիրոջ կամքով շէնքը մեզ յանձնեց: Շէնքը վարձեցինք ամսական 150-թումանով և երկու ամսւայ վարձն էլ նախապէդ վճարեցինք ես և Պրն. Մարտիրոսը:*

*Դպրոցը պատրաստւեց, սեղան նստարանները բերւեցին և յայտարարւեց որ արձանագրութիւնները սկսւել են արդէն:*

*Թաղից միայն չորս հոգի երեխաներ արձանագրւեցին, որոնցից երկուսը Պրն. Մարտիրոս Տէր Գալստնեանը, մէկը Պրն. Ռաթէոս Իսկեանդարեանը, մէկը հանգուցեալ Արշամ Յովսէփեանը և ուրշ ոչ ոք:*

*Դպրոցը բացւեց չորս հոգի աշակերտով և շուրջ քսան օր այլևս ոչ մի աշակերտ չարձանագրւեց: Պրն. Մարտիրոսը սկսել էր մի քիչ յուսահատւել, սակայն ես նրան մի քիչ յոյս ներշնչեցի*

և խորհուրդ տեւցի դեռ համբերել: Ֆարս երեխաներ շատ էին դիմում արձանագրուելու, սակայն մերժուած դուրս էին գնում:

Վերջապէս 20-օրից յետոյ երբ հայերը նկատեցին, որ իսկապէս դպրցը բացւել է և իրենք էլ արդէն ճաշակեցին Հեշամաթիէից Քուշէշ, Բուստան և կամ Ֆարս դպրոցներում երեխայ ուղարկելու դժւարութիւններն ու դառնութիւնները այնուհետև մէկ-մէկ սկսեցին երեխաներին ուրիշ դպրոցներից հանել ու բերել այդ դպրոցն արձանագրել, այն էլ իհարկէ Ադամի ձեռագիրն ուզելով մեզնից՝, թէ՝ արդեօք տարւայ կէսին չի՞ փակւի այդ դպրոցը: Տարեվերջին քարնամէ կը տրւի երեխաներին և այլն: Եւ բոլոր հարցերին դրական պատասխան ստանալուց յետոյ էին նոր միայն գրում:

Անցել էր 1949-50 ուսումն.տարւանից 28 օր երբ դպրոցի աշակերտութեան թիւը հասել էր 30-հոգու, և ես դիմեցի Ձեզ հէնց Ձեր աջակցութիւնը խնդրեցի այդ դպրոցի համար արտօնութիւն առնելու գործում: Ձեր մօտ էր նաև հանգուցեալ Միքայէլ Ստեփանեանը: Դուք ուրախացաք և առաջարկեցիք որ Ազգային Իշխանութիւններին յայտնեմ այդ մասին: Իսկ ինքներդ էլ խոստացաք գալ և անձամբ տեսնել այդ դպրոցը և յանձն առաք արտօնութեան խնդիրն էլ կարգադրել շուտով: Հասցէ առաք, ժամանակ նշանակեցիք և շուրջ մէկ շաբաթ անց բաւական մեծ նեղութիւնով եկաք գտաք և այցելեցիք այդ դպրոցը: Դպրոցում Ձեզ ընդունեցինք հետևեալները՝ Ես, Պրն. Մարտիրոս Տէր Գաստնեանը, հնգուցեալ Ռաֆայէլ Ռայիմնէժադը և հանգուցեալ Արշամ Յովսէփեանը:

Այդ օրը աշակերտութեան թիւը հասել էր 35-հոգու, որոնք միայն Ա. և Բ. դասարանի երեխաներ էին և տեղաւորւած երկու դասարանում: Դպրոցում նոր հրաւիւել և պաշտօնավարում էր մի ուսուցչուհի ևս օր. Յասմիկ անունով:

Դուք նախ այցելեցիք դասարանները ապա առաջնորդւեցիք ուսուցչանոցը ուր Ձեր պատւին մի փոքրիկ թէյասեղան էր կազմակերպւած:

*Դուք յայտնեցիք Ձեր տպաւորութիւնը։ Շատ հաւանեցիք տեղը, գնահատեցիք կատարուած աշխատանքները, յայտնեցիք Ձեր ուրախութիւնը հայկական կրթական այդ փոքրիկ օջախը բացելու համար և խոստացաք ամեն կերպ աջակցել այդ դպրոցին, ինչպէս նաև արտօնութեան խնդիրը շուտով կարգադրել Կրթական նախարարութիւնում։ Խոստացաք մի յօդուած ևս գրել «Ալիք» թերթում և գոհ տպաւորութեան ներքո թողեցիք դպրոցը, անչափ ուրախացնելով բոլորիս։ Այնուհետ մի գեղեցիկ յօդուածաշար գրեցիք և «Ալիք»-ում հրատարակեցիք այդ ուղղութեամբ։*

*Ինչ վերաբերում է Ազգային Իշխանութիւններին, շուտով մի նամակ գրւեց Թեհրանի Հայոց Թեմական Խորհրդին և հայոց այդ բարձրագոյն մարմնին զեկուցւեց ամեն բան։*

*Թեմական Խորհրդի կողմից ևս Պրն. Մևոս Համբարչեանը այցելեց այդ նորաբաց դպրոցը, մտաւ դասարանները, կատարեց որոշ հարցումներ, տեսաւ կատարուած աշխատանքները ու նա ևս ուրախ տրամադրութեան ներքո թողեց դպրոցը, խոստանալով ամեն բան զեկուցել Թեմական Խորհրդին։*

*Թեմական Խորհուրդը մի նամակով նախ շնորհաւորեց և գնահատեց այդ ազգօգուտ գործը ձեռնարկողներին, ապա հրահանգեց ընտրութիւն կատարել և պաշտօնական հոգաբարձութիւն ընտրել այդ դպրոցի համար և ընտրուողների ցանկը ուղարկել Թեմականին առ ի հաստատութեան։*

*Արտօնութիւն առնելու համար Դուք ինձ առաջարկեցիք Կրթական Նախարարութեանը ներկայացնող արտօնատէր և պետական տեսուչ գտնել և ներկայացնել Ձեզ։ Ինձ ընդունեցիք արտօնատէր դառնալու։*

*Հանգուցեալ Ռաֆայէլ Ռայիմնէժադը, որ իր մայրամուտին հասած մի մարդ էր ինչպէս երեւում էր, ուզում էր իր կեանքի վերջին օրերին մի բարի անուն թողած լինէր։ Դիմեց ինձ և շատ սրտագին խնդրեց, որ արտօնատէր իրեն ներկայացնեմ Ձեզ։ Խեղճ մարդը նոյնիսկ առաջարկում էր, որ իր վերջին հոգապահէքը, որ 50- թուման էր նւիրէր դպրոցին։ Դեռ նա խնդրում էր, որ*

*դպրոցի անունն էլ Ռաֆայէլ դրուէր։ Ես էլ նոյնը Ձեզ զեկուցեցի և Դուք նրան ընտրեցիք արտօնատէր։*

*Իսկ պետական տեսուչ ընտրելու խնդիրը մի քիչ յետաձգուեց։ Պրն. Սարգիս Կարապետեանը, ինչ-որ մի տեղից լսել էր պատմութիւնը և իր մօրաքրոջ ամուսնու՝ Թաղամասում ապրող և գործին ծանօթ կաթնավաճառ Պրն. Ռաթէոս Իսկեանդարեանի միջոցով յայտնել էր ինձ, որ իրեն ընտրեմ պետական տեսուչ և ներկայացնեմ ձեզ։ Ես մինչև այդ ոչ տեսել և ոչ էլ ճանաչում էի նրան։ Այդ մասին յայտնեցի Ձեզ և դուք իսկույն ընդունեցիք և նրան ընտրեցիք պետական տեսուչ։ (Անիծուէր այդ օրը)։*

*Շատ չէր անցել Ձեր առաջին այցելութիւնից, երբ մի օր Կրթական մի քննիչի հետ կրկին այցելեցիք դպրոցը։ Այդ այցելութիւնը արտօնութեան կապակցութեամբ էր։*

*Այդ օրը պատահաբար անձրևում էր։ Հակառակի նման մեր դասարանների կտուներն էլ կաթում էին և ես այդ կաթիլների տակ պարապում էի։ Քննիչը մի քիչ անյարմար գտաւ դասարանների այդ կաթելը սակայն ի յարգանս Ձեր նպաստաւոր զեկոյց պատրաստեց ու ներկայացրեց Կրթական նախարարութեան։ Շատ չանցած դպրոցի արտօնութիւնը հաստատուեց Կրթական Նախարարութեան կողմից յիշեալ երկու հոգու անուններով և ուղարկուեց դպրոց։*

*Երբ Պրն. Սարգիսը իրեն տեղ արաւ, սկսեց ուրիշ գործերի մէջ խառնուել։ Այնպէս որ հոգաբարձութեան ընտրութեան օրը նա իրեն մէջ գցեց, հոգաբարձու ընտրուեց ու անմիջապէս իրեն ընտրեց այդ նորընտիր հոգաբարձութեան նախագահ։*

*Առաջին ընտրութիւնը, որ կատարուեց Թեմական Խորհրդի հրահանգով և հաստատուեց Թեմականի կողմից, ունեցաւ ընտրական հետևեալ արդիւնքը և 57-հոգի ընտրողներից ընտրուեցին ստորև յիշուած անձինք։*

*1-Պ. Խորէն Տէր Վրոյրեան 47-ձայն.*

*2-Պ. Մարտիրոս Տէր Գալստանեան 36-ձայն.*

*3-Պ. Ռաֆայէլ Ռահիմնէժադ 30-ձայն.*

*4-Պ. Սարգիս Կարապետեան 27-ձայն.*

*5-Պ. Ռաթէոս Իսկեանդարեան 18-ձայն.*

*Գորգան Թաղամասից էլ հէնց նշանակովի այդ ցանկի մէջ աւելասւեցին Պ. Խաչիկի և Պ. Ծատուրի անունները, որոնք ժողովից ևս բացակայ էին, ի հարկէ երկպառակութեան առաջն առնելու նպատակով, սակայն նրանք հէնց սկզբից հրաժարւեցին այդ կազմից և բնաւ չմասնակցեցին։*

*Առաջին տարին* ***Շահազիզ*** *դպրոցի ծախսը ամսական հետևեալ պատկերն էր ներկայացնում։*

| | |
|---|---|
| *Ինձ տրւում էր ռոճիկ* | *2500 ռ.* |
| *Օրիորդ Յասմիկին* | *1300 ռ.* |
| *Շէնքի վարձ* | *1500 ռ.* |
| *Մանր ծախսեր* | *300 ռ.* |
| *Գումար* | *5600 ռիալ* |

*Այս խղճուկ գումարի 70-տոկոսը գանձւեց թոշակներից, 10-տոկոսը շէնքի աւելորդ սենեկների վարձու տրւած վարձից, իսկ 20-տոկոսն էլ Համբարձումի եւ Վարդավառի տօներին Վանագում և Դէյթառրիէում հաւաքւած հայութեան մէջ վիճակախաղ կազմակերպելու ինչպէս նաև տարեվերջի հանդէսի հասոյթներից և ուրի ձեռնարկներից։*

*Ինձ տալիք պարտքը, իդիմաց դպրոցի ամբողջ գոյքի, որ ես էի գնել, վճարւեց 1950-51 ուսումն. տարում։*

*Յարգելի Դոքտոր ջան*[1]*.*

*Շահազիզ դպրոցի 1950-51 ու. տարւայ, այսինք դպրոցի բացման 2-րդ տարւայ մասին ի՞նչ գրեմ։ Դուք արդէն լաւ գիտէք թէ ինչ կատարւեց այդ տարին։*

*Արձանագրութեան և տարւայ սկզբի բոլոր աշխատանքները նորից կատրեցի ես։ Ուսուցչական կազմն իհարկէ Ձեր գիտութեամբ ես հրաւիրեցի, դասերը բաժանեցի, դասացուցակ կազմեցի և աշխատանքները կարգի գցեցի։ Նոր տարւայ տօնին ևս գեղեցիկ ծրագրով մի լաւ հանդէս կազմակերպեցի, որը բեմադրւեց*

---

[1] - Դոկտոր Յովհաննէս Հախնազարեան։

*երեք գիշեր, երկու գիշերը թաղում, իսկ մի գիշերն էլ Դաւթեան դպրոցի սրահում, որը ոչ միայն գոհ թողեց հանդիսականներին, այլ մի մեծ հասոյթ հասցրեց և դպրոցին։*



Դոկտոր Յովհաննէս Հախնազարեան

*Սակայն չգիտեմ ինչ թոյն և ատելութիւն և մաղձ գոյացաւ Պ. Սարգսի սրտում ու հոգում։ Նա սկսեց իր դաւադրական ու մատնութեան աշխատանքները, և ոչ մի միջոց չխնայեց ինձ ցածրացնելու ու սևացնելու։ Նա սկսեց իմ մասին այնքան անհիմն յերիւրանքներ շարահիւսել Ձեզ մօտ մինչև Ձեր միտքը պղտորեց և Ձեր կարծիքը բոլորովին փոխեց դէպի ինձ։*

*Միջոցներ ձեռք առաւ հոգաբարձական կազմը լուծել տալու և երկրորդ ընտրութիւնը կատարել տալու, որ գուցէ այս անգամ ես չը ընտրւեմ։ Սակայն երբ 2-րդ ընտրութեանն և ես ընտրւեցի իրենից աւել ձայն բերելով այդ ընտրութիւնն ևս լուծել տւեց։*

*Երրորդ անգամւայ ընտրութիւնը կատարել տւեց մեծ հանդիսութեամբ։ Այդ անգամ արդէն ներկայ էր Թեմական Խորհրդի ներկայացուցիչը, Դուք և հանգուցեալ Տէր Մեսրոպ աւագ քահանայ Միրզայեանը և աւելի մեծ թւով ժողովականներ։ Ընտրութիւնից առաջ ճառախօսութիւններ եղան, Պ. Սարգսի և Ձեր կողմից, որ ուսուցչին ընտրելը սխալ բան է և Խորէնին ձայն չտալ ժողովուրդը և ես այդ խնդրեցի ժողովդից։ Ապա Տէր Հայրը աղօթեց*

*ժողովդին «Պահպանիչ» ասաց և այնուհետև կատարեց ընտրութիւնը: Եօթ հոգի անդամներ ընտրեցին, որոնցից մէկն ինքն էր, որ իրեն շուտով ընտրեց այդ նոր ընտրուած կազմի նախագահն ևս: Շատ չանցած այդ դափ ու զուռայով ընտրուած հոգաբարձութեանն և կանչելով Թեմականի ժողովին, լուծարքի ենթարկել տուեց գործել չկարողանալով նրանց հետ էլ և անուհետև ինքը միահեծան տէրն ու տնօրէնը դարձաւ այդ դպրոցի մինչև այն աստիճան, որ ուսուցինչնեի ռոճիկն էլ իր բնակարանում սկսեց վճարել, իր մեծութիւնն ևս առաւել ցոյց տալու համար:*

*Այնուհետև նրան մնաց մի ուխտ, հող պատրաստել 3-րդ ուսումն. տարւայ համար ինձ դուրս անել դպրոցից: Աղջկներին տարաւ իր տուն և նրանց սովորեցրեց գալ Ջեր տուն, ասել, որ Ջեզ վատաբանել ու հայհոյել եմ եւ այդ անխիղճներն էլ նոյնն արեցին: Դուք հաւատացիք և ինձ կանչեցիք Ջեր տուն ստուգելու համար: Ես բոլորովին քարացած մնացի երբ տեսայ որ այդ բարի ուսուցչուհիները դասը լաւ էին իւրացրել ու երեսխս էլ ստեցին իրենց թելադրուած զրպարտութիւնը: Բայց ես չեմ մոռանում, որ Պրն. Արտուշ Վարդերեսեանը ճիշտ խօսեց և ասաց, որ այդ խօսքերը և հայհոյանքները ես չեմ լսել Պրն. Խորէնից:*

*Այնուհետև Դուք կարգադրեցիք, որ ես հաշիւներն անցկացնեմ Պրն. Արտուշին և հասարակ ուսուցչի պաշտոն ունենամ մինչև տարեվերջ: Այդպէս է եղաւ:*

*Պրն. Սարգիսը Թեմականի և Ջեր ուժով տունս էլ դպրոցի բակից դուրս հանել տուեց: Տարեվերջի քննութիւններն էլ Ջեր կարգադրութեամբ կատրեց Պրն. Մարտիրոս Աբդալեանը:*

*Ջեր կարգադրութիւնով տարեվերջի հանդէսն էլ ես կազմակերպեցի և ընդմիշտ հրաժեշտս տուեցի այդ դպրոցին:*

*Յարգանօք՝*
*Խորէն Տէր Վրոյրեան*



نمونه ۶۹

وزارت فرهنگ

اداره دبیرخانه شورایعالی فرهنگ
شماره ۳۵۱۴
تاریخ
پیوست

آقای خورون مسیحی درورد ریان

برطبق رای نهصدوهفدهمین جلسه شورایعالی فرهنگ مورخ ۲۵/ ۶/ ۳۵ اجازه تاسیس یکباب دبستان کامل پسرانه بنام تایان بشما داده میشود که زیرنظر مدیرمسئولی که بعدا ازطریق وزارت فرهنگ اعزام خواهد شد درحشمتیه بخش ۲ تهران خیابان شیخان دائر نمائید مشروط بر اینکه کلیه مقررات وزارت فرهنگ را دقیقا بموقع اجراء گذارید وچنانچه بخواهید بعدا محل آموزشگاه را تغییردهید بایدقبلا نظروزارت فرهنگ راجلب کنیداین امتیازقابل انتقال بغیرنیست ۰

وزیرفرهنگ

Հայոց Թաբան դպրոցի պետական արտոնագիրը



Նստած՝ երկրորդը Խ. Տէր Վրոյրեան և երրորդը Էդիկ Բաղդասարեան



Թաբան դպրոցի աշախերոտութեան և ուսուցիչների հետ





Թաքան դպրոցի աշակերտութեան և ուսուցիչների հետ





Թաբան դպրոցի աշակերտութեան և ուսուցիչների հետ

# Խորէն Տէր Վրոյրեան

*Դու չքնաղագեղ Հայրենիք մեր շէն*
*Դու յոյսը հայոց, դու վառ ապաւէն*

# Հայրենասիրական երգեր

## Սիենք մեր լեզուն

*Ազգերը համայն սիրում են իրենց մայրենի լեզուն.*
*Պահում են սրտանց ու կեանք են տալիս նրա վառ սիրուն,*
*Գովքն են հիւսում իրենց մայր լեզւի, յօրինում երգեր,*
*Մշակոյթին են զարկ տալիս իրենց թափովն անձնուէր։*

*Ու մենք հայերս էլ սիրում պաշտում ենք մեր վսեմ լեզուն,*
*Հերոս պապերից մեզ աւանդ հասած այդ գանձը բեղուն,*
*Մեր Սուրբ Մեսրոպի տառերն ենք սիրում ապրում նրանցով,*
*Եւ ոչ մի լեզու չունի մեր լեզւի վեհութիւնը ծով։*

*Լեզւի հմայքն է մեր ազգին ցիր ցան՝ հայ պահել միայն.*
*Եւ ուծացումի վտանգից փրկել մեր ազգը համայն.*
*Հարկ է հայերս աւելի սիրենք մեր լեզուն չքնաղ.*
*Սիրենք մեր լեզւի մշակոյթը ճոխ ու հայ երգն ու տաղ։*

*Պատմութիւնը մեր հայ լեզւով գրած եկէք սովորենք.*
*Մեր նախնիքների ընթացած ուղին կարդանք ու դիտենք՝*
*Թէ ինչ մեծ ազգ ենք եղել նախկինում, ինչ գահակալներ.*
*Հերոս իշխաններ, անմահ հսկաներ ծնեց ազգը մեր։*

*Եկէք աւելի մտնենք հայ գրական աշխարհը ովկիան.*
*Դիտենք հանճարեղ մեր գրողների գործերն անսահման,*
*Մեծ գրւածները հայ պատմիչների կարդանք հայ լեզւով,*
*Ծնւենք հայ լեզւով, ապրենք հայ լեզւով, մեռնենք հայ լեզւով։*

## Հայոց սոխակին

*Հայաստանի չքնաղ սոխակ, դիւթող երգիչ դու աննման.*
*Թռար երբ որ Հայաստանում բոյնդ քնդեց թուրքը դաժան,*
*Ուր շրջեցիր Հայաստանում, նստելու տեղ դու չգտար,*
*Ամէն տեղ էլ համատարած՝ արիւն, աւեր, թալան, աւար։*

*Հայոց երկրի ծաղիկն ու ծառ հրդեհել էր թուրքն ապիկար,*
*Վարդ չթողեց Հայաստանում, օրը դարձրեց մութ ու խաւար,*
*Թափառական կեանք յանձն առար եւ աշխարհը ողջ շրջեցիր,*
*Ու տարագիր հայի նման գաղթական կեանք որդեգրեցիր։*

*Թափառեցիր շատ երկրներ, տեսար երկիր դու փոքր ու մեծ.*
*Երկրներից և ոչ մէկին քո լայն սիրտը չը հաւանեց.*
*Հայաստանն էր քո երկիրը, սակայն նրա աւերը հէգ,*
*Ընկճեց քեզ ու միշտ տանջեց, չը մոռացար դու այն երբէք։*

*Սիրուն սոխակ, այժմ ետ դարձիր, Հայաստանը քո աչքով տես,*
*Աշխարհումը այնպէս չքնաղ, շէնշող երկիր չկայ այլևս,*
*Որ պուճախը աչքդ ընկնի վարդ ու ծաղկով է պճնւել,*
*Ողջ երկիրը կանաչ թաւշի ու զմռուխտի տեսք է առել։*

*Ոսոխն անարգ էլ չի կարող հայոց երկրին բերի աւեր,*
*Նրա ուժից վեր է այլևս, որ դարձընէ քեզ բնաւեր.*
*Հայը հիմա աննկուն է, անպարտելի, քաջ ու արի,*
*Տէրն է իր վեհ հայրենիքի ու պահակը իր մայր երկրի։*

*Հայրենադարձ հայի նման կրկին բոյնդ բեր Հայաստան.*
*Անուշ երգիր ու դայլայլիր հայոց երկրի երգչի նման,*
*Այժմ ետ դարձիր քո ձագերով էլ մի մնայ դու տարագիր,*
*Չքնաղ երկիր Հայաստանը միշտ կմնայ երգի երկիր։*

## Հայաստանի քարակերտ վանքերը

Բարձունքներում խորախորհուրդ, անհուններում այն երկնամերձ,
Դարերի հետ կառուցուել են հայ վանքերը վեհ, բարձրաբերձ.
Շանթ, որոտը տարերային իրենց ուժով մեծադղորդ,
Չը ցնցեցին որմերն ամուր ու հոյակապ վիմով խրոխտ:

Հաւարն անեզր սուրբ է եղել, վեհ, ամրակուռ ու անսասան,
Աստուածասէր ազգ չի եղել, ողջ աշխարհում հայի նման.
Ու քարակերտ սուրբ վանքերը վկաներն են Հայաստանում,
Որ Աստծուն այս աշխարհում ամենից շատ հայն է սիրում:

Ո՞վ կառուցեց հնադարեան կոթողները այդ հոյակերտ,
Ով, որտեղի՞ց, կամ ոնց բերուեց քարերը կարծր, քարերը սերտ.
Ցածր խորքերից ո՞նց են բերուել մինչև բարձունքն այն բարձրաբերձ,
Ոնց են միմեանց վրայ դարսուել, դարձել կոթող սէգ, երկնամերձ:

Ու խորհում են խոր յուզումով այցելուները այլազան,
Ոնց են կերտուել ու կառուցուել ուխտատեղերն այն սրբազան.
Ու կառուցող հայ ազգը քաջ քանի՞ հազար զոհ է տուել,
Մինչև մի վանք, մի ուխտատեղ, մի յուշարձան է կառուցել:

Ամրակուռ սուրբ տաճարները՝ սրբատեղերն այն ահարկու,
Երբ դիտում է աստուածասէր հայ ուխտաւորն երկրպագու,
Զգաստացած խոր յուզումով նա խորհում է խորհուրդ խորին,
Թէ Տէրն ինչպէ՞ս շռայլել է այդքան եռանդ ու կամք հային:

Ու քարակերտ կամարները այնքան ողորկ, գողտրիկ ու նուրբ,
Ու իւրաւորին հիացնում են իրենց շքեղ կառոյցով սուրբ.
Ու ամեն մի հայ ուխտաւոր, երբ մտել է որևէ վանք:
Խորհրդաւոր կառոյցներն այն բերել են խոր նրան բերկրանք:

## Ազգ իմ պատուական

*Սիրում եմ ես քեզ, քո անցած ուղին, Ազգ իմ պատուական,*
*Դու կաս, կմնաս, կստեղծագործես, Ազգ նուիրական.*
*Ընթացած ճամբին քո միշտ տարածուած կապանք ու շղթայ,*
*Եւ դու մարտնչել, փշրել, խորտակել, անցել ես անահ:*

*Դու չես սոսկացել վագր ու առիւծից, բորենուց գազան,*
*Ջարին միշտ յաղթել ու ընթացել ես ուղիդ սրբազան,*
*Փշրել ես դաժան, բիրտ արգելքներ ու ընթացել առաջ,*
*Ոսոխդ ցնդել՝ երբ նկատել է կեցուածքը քո քաջ:*

*Դու խաղաղութեան հետևորդն եղար, կռիւն ատեցիր,*
*Սերնդից սերունդ վեհ խաղաղութիւն միշտ քարոզեցիր,*
*Բայց երբ բորբոքեց զայրոյթդ արդար՝ չարը դառնածին,*
*Սուրդ ձեռք առար ու խորտակեցիր նրա չար հոգին:*

*Արդարութիւնը միշտ պահպանեցիր, մղեցիր պայքար, Բայց այդ չցանկաց քո նենգ թշնամու սիրտը չար ու քար,*
*Հայ ստեղծագործ, շինարար ոգուդ ոսոխդ անարժան,*
*Ատեց, եւ ուզեց քեզ միշտ խանգարել, Ազգ իմ սիրական:*

*Ու ամեն անգամ, երբ ծաղկեցրիր երկիրդ չքաղ,*
*Այրեց արւեստդ, աւերեց գործդ՝ թշնամիդ ճիւաղ.*
*Դու կառուցեցիր աւերւածները կրկին ու կրկին,*
*Աշխարհն հիացաւ, երբ խոր ըմբռնեց հայիդ քաջ հոգին:*

*Դրախտ է դարձել այժմ Հայաստանը. հայ ձեռքով արի,*
*Աւելանում են գործարանները տարի առ տարի,*
*Ողջ երկրների գիտնականները գալիս են այցի,*
*Ու հիացնունքով գովք են յօրինում հային խելացի:*

## Ես հայ եմ ծնւել

*Ես հայ եմ ծնւել, բայց ոչ իմ երկրում, այլ երկրում մի այլ,*
*Տւայտանքներում դեգերել է միշտ իմ հոգին մռայլ.*
*Տիեզերքում ես որպէս մի ասուպ պտտել եմ իզուր,*
*Բիրտ ոլորտներում պատիր ու ունայն կեանքս է անցել զուր:*

*Օ՜, հայոց երկրի, կառուցման գործիդ չեմ եկել հանդէս,*
*Ծով անուրջներում ձգտել եմ լինել քո հողումը վէս,*
*Բայց կապանքներով փակւած եմ եղել, պարուրւած ուժգին.*
*Նենգ ու չար բախտը չի հանդուրժել իմ հոգու թռիչքն:*

*Երկիր, դու առատ շռայլեցիր ինձ պարգևներ բեղուն,*
*Ազգասիրական դու վեհ զգացմունք տւիր իմ հոգուն.*
*Հէգ պատմութիւնդ ուժ տւեց հոգուս, եռանդի մի ծով.*
*Հայրենասէրի կայծն իմ մէջ զարթնեց քո ներշնչումով:*

*Ծառայելու վառ ձգտումը ամէն իմ ժողովրդին,*
*Հայրենակարօտ ու վտարանդի մատաղ սերնդին,*
*Դու տւեցիր ինձ, քո մշակոյթը, քո գիրքը անգին,*
*Հանճարներիդ պերճ գործերն են դիւթել իմ սիրտն ու հոգին:*

*Եւ յոյժ ցասումով խռոված, դժկամ թախծում է հոգիս,*
*Բիրտ կապանքներում ինձ չվիճակւեց նւիրւել երկրիս.*
*Մայր հայրենիքիս կառուցման հզօր ու ծով վերելքին,*
*Չկրցայ խառնել կաթիլն իմ ու տալ տուրքն իմ մարդկային:*

*Ես հայ եմ ծնւել, բայց ոչ հայ երկրում, այլ հեռու մի վայր,*
*Բայց ուր էլ լինեմ, չկայ ինձ համար մի ուրիշ աշխարհ,*
*Իմ հայրենիքը՝ չքնաղ Հայաստան, դու ես մի միայն,*
*Առանց քեզ չկայ ինձ այլ հայրենիք աշխարհում համայն:*

## Ժողովուրդ իմ քաջ

*Ազգ իմ օտարից մենք շատ ենք խաբուել, տեսել շատ վնաս*
*Օտարը հային միշտ էլ դարձել է ցաւ ու պատուհաս.*
*Ջուր ենք յոյս դնում օտարին մի օր, մի ժամ, ակնթարթ,*
*Օտարը հային միշտ դաւ է նիւթել, միշտ լարել թակարդ:*

*Շատ մեծ ազգեր մեզ յուսադրեցին, բայց ամենը սուտ*
*Հեուից դիտեցին երբ, մեզ կոտորեց ոսոխն անգութ.*
*Մեր օրհասական խաչելութեանը կամաւ կուրացան,*
*Ու նենգութիւնով եղեռնագործին թև-թիկունք դարձան:*

*Մեզ յոյս տուողը բնաւ մեզ չօգնեց՝ իր շահով տարւած,*
*Ուրացաւ և խիղճ, և արդարութիւն, այլ և իր Աստուած.*
*Է՛, նրան ինչ փոյթ, որ քաղաքակիրթ մի ազգ էր մեռնում,*
*Նրա աչքը միշտ իր շահն էր տեսնում, շահը որոնում:*

*Ազգ իմ, նեղ օրին մեր ուժը միայն մենք մեր մէջ գտանք,*
*Երբ մի շունչ, մի կամք, մի անձ, մի հոգի ու մի ոյժ դարձանք,*
*Մեծ հերոսութեամբ ճիւաղ թշնամու դէմը կանգնեցինք,*
*Փշրեցինք նրան ու մեր սուրբ հողը ազատագրեցինք:*

*Ժողովուրդ իմ քաջ, թող մենք յարատև ձեռք ձեռքի տուած,*
*Դարձեալ միակամ, մի անձ, մի հոգի ու մի ուժ դառած,*
*Միշտ նոյն իդէալին ձգտենք ու մնանք անյողդողդ ու քաջ,*
*Մեր կամքով միայն, մեր ծունկի ուժով ընթանանք առաջ:*

## Սիրուն թութակ

*Սիրուն թութակ, չքնաղ թռչուն,*
*Ով է փակել վանդակում քեզ,*
*Դու ճգնում ես ողջ օրն ի բուն,*
*Որ փրկվելու մի ճար գտնես։*

*Սիրուն թռչուն, դու մենակ չես*
*Տանջվում, ճգնում այդպես ուժգին.*
*Հայրենիքից հեռու քեզ պես*
*Ես էլ տքնում եմ դառնագին։*

*Օտար երկրում ես ոչ մի օր*
*Չեմ զգացել ինձ հարազատ.*
*Միշտ պարփակված խեղճ ու մոլոր*
*Կեանքս է մաշվել հէգ, անազատ։*

*Սիրուն թութակ, բաղձանքը մեր*
*Ազատվելն է բանտից դժնեայ,*
*Թռչել ազատ ու կենսաբեր*
*Մեր երկիրը թանգ հնամեայ։*

*Դու գնաս քո անտառը վէս,*
*Երգես երգը քո կաթոգին,*
*Ես էլ գնամ չքնաղատես*
*Իմ Հայաստան երկիրն անգին։*

## Երկիր իմ չքնաղ

*Ես կեանք եմ առել քո սուրբ հողից դուրս, Երկիր իմ չքնաղ*
*Քո հուր կարօտը սիրտս է այրել, այրել է դեռ վաղ,*
*Հեռու եմ ապրել, պանդուխտ անցաւ իմ կեանքը դառնագին,*
*Բայց սիրտս յաւէտ քեզ է որոնել, երկիր իմ անգին։*

*Քո հրեշտակային հեքիաթներն եմ լսել ու հրճուել,*
*Քո դիւցազների քաջութիւնները՝ սիրտս է գրաւել,*
*Բանաստեղծներիդ անգին խօսքերով դիւթուել եմ գերուել,*
*Դէպի քեզ գալու, քեզնով ապրելու օրն եմ երազել։*

*Շատ պօէտներ են գովքդ յօրինել խօսքերով վսեմ,*
*Ասել են թէ դու Տիրոջ մշակած դրախտն ես Եդեմ,*
*Երկինքդ ծիծղուն, օդըդ ջինջ, մաքուր, ջուրդ պարզ, յստակ,*
*Լեռներդ հպարտ, գետերդ վարար, ծովերդ անտակ։*

*Բայց երբ ես այցի եկայ ու տեսայ, Երկիր իմ օծյալ,*
*Քո մասին ինչ որ գրել են, երգել, դեռ քիչ է դարձեալ.*
*Դու արժանի ես, հրեշտակները երգչախումբ կազմեն,*
*Սրբական ձայնով քո հողի վերև գովքդ գեղգեղեն։*

*Ուխտել եմ սակայն որ պիտ կատարի ուխտը իմ սրտիս,*
*Մէկը իմ դուռը բախի և ուրախ տայ ինձ աւետիս,*
*Ասի.-Դէհ վեր կաց, ժամդ լրացաւ, մտիր կարաւան,*
*Գնա՛ դէպի քո չքնաղ հայրենիք՝* ***ազատ Հայաստան։***

## Չքնաղ կուսանք

*Սփիւռքի հայ չքնաղ կուսանք՝ վեհաշուք,*
*Չքնաղագեղ Հուրիներ էք, մեծ էք դուք․*
*Թէպէտ դուրս էք ձեր մայր երկրից լուսագեղ,*
*Սակայն մեծ էք ձեր նախնեաց պէս ամեն տեղ։*

*Մեծ է եղել մեր Անահիտ դիցուհին,*
*Եւ Աստղիկը գեղեցկութեան թագուհին,*
*Երկար դարեր իբրև հայոց հին Աստուած,*
*Հայը նրանց աղօթել է երկիւղած։*

*Մեծ կայսրուհի Շամիրամը ասորի*
*Որ չքնաղ էր ու մեծ կինն էր աշխարհի,*
*Սրտանց սիրեց մեր Գեղեցիկ Արային*
*Իրեն կորցրեց նրա սիրուց տենդագին։*

*Բայց չկրցաւ տիրել Հայոց արքային*
*Ամեն միջոց գործ դնելով կայսրուհին,*
*Հայոց արքան սիրում էր հայ թագուհուն,*
*Նուարդը շատ հմայուն էր ու գիտուն։*

*Խոսրովիդուխտ արքայազնը՝ գեղուհին․*
*Եւ Աշխէնը, Հայոց չքնաղ թագուհին,*
*Լուսաւորչին հանդիսացան թև-թիկունք,*
*Հաստատեցին նոր կրօն, նոր հայկազունք։*

*Հայոց երկրի ռազմադաշտում քաջաբար․*
*Հայ զինուորի մէջքին կանգնած հաւասար․*
*Հայ քաջ կինը մարտնչել է ու զոհուել,*
*Իր հայրենեաց սիրուն թանգ կեանքն է տուել։*

*Որտեղ լինես դարձեալ նոյնն ես, հայ աղջիկ,*
*Հին հայուհու տեղակալն ես, նազ աղջիկ,*
*Մի ուրացիր քո մեծ ազգն ու նետւիր ցած,*
*Ուրացումով կործանուած ես ու կորած։*

*Հայոց կուսանք, դուք հանճար էք ու շքեղ.*
*Անբիծ ապրէք ձեր կեցւածքով ամեն տեղ*
*Ու լաւ գիտցէք մեծ էք քանի դեռ հայ էք,*
*Հայ անունով դուք միշտ կապրէք, կը յարգւէք։*

### Ցանկանում եմ

*Ցանկանում եմ փայլուն օր հայրենիքին իմ չքնաղ,*
*Վտարանդի հայերի դարձն իր երկրում անյապաղ.*
*Միահամուռ ամենքը դարձած մի ուժ գերբնական.*
*Սարքեն, կերտեն, կառուցեն Հայոց երկրի ապագան։*

*Ցանկանում եմ ոչ մի հայ չունենայ մի թշւառ կեանք,*
*Ամեն հայի վիճակւի՝ սէր, խնդութիւն ու բերկրանք.*
*Հայը իր մայր երկրից դուրս գուր չտքնէ անօգուտ,*
*Ապրէ ուրախ իր երկրում, գործ կատարէ ազգօգուտ։*

*Ցանկանում եմ, որ բնաւ չճարւի հայ դաւաճան,*
*Անկեղծ գործի լծւելու ողջն էլ հագնեն պատմուճան,*
*Ցանկանում եմ, որ շահը չը պարտադրէ ոչ ոքին,*
*Դաւել, քայլել ի վնաս հայրենիքին, իր ազգին։*

*Ցանկանում եմ հաստուցում ազնիւ հային գործունեայ*
*Նրան, որ երկրի օգտին կեանքն է դնում անխնայ,*
*Նրան, որ խոր գիտութեամբ նոր գիւտեր է հնարում,*
*Նրան, որ հայ լեզուն է ճոխացնում ու կերտում։*

## Հայ գիրքը սփիւռքում

*Մեծ ցաւ է երբ դիտում ես աստանդական հայը մեր.*
*Հայ գրքից շատ հեռու է ու դէպի նա չունի սէր.*
*Ինչո՞ւ հայ գիրքը չունի հայ ընթերցող սփիւռքում,*
*Ինչո՞ւ հայը հայ գրքից խուսափում է ու խոկում։*

*Շատ հայի տուն եմ մտել և ստուգել եմ իրաւ*
*Այդ տներում հայերէն գիրք չեմ տեսել ես բնաւ.*
*Ինչո՞ւ հայը իր տանը հայ գրքեր չի ընթերցում,*
*Մեսրոպեան վեհ հայ գրքից հայն ինչո՞ւ է աչք գոցում։*

*Հայ գիրքն յաւերժ պահելը թանգ է նստել հայ ազգին,*
*Հայն իր լեզւի ջերմ սիրուն տւել է կեանքն ու հոգին.*
*Որդուց որդի փոխանցել հայոց գիրքը, հայ լեզուն,*
*Կերտել, մշակել են այն գրողները հայկազուն։*

*Իսկ այժմ ինչո՞ւ է փոխւել հայ սերունդը սփիւռքի*
*Ինչո՞ւ տանը չի հիմնում գրադարան հայ գրքի*
*Քաղցրութիւնը հայ գրքի էլ որտեղից կառնի նա,*
*Թէ հայ գիրքը չկարդայ ու այդ գործում թերանայ։*

*Կատարեալ է հայ գիրքը ու անթերի հայ լեզուն,*
*Դեռ վաղուց են հաստատել գիտնականներն իմաստուն*
*Հայ ազգասէր ուսանող, կարդա՛, հայ գիրքը բեղուն,*
*Գոհար, յակինթ, մարգարիտ ու ադամանդ հայ լեզուն։*

*Հայ՛, կարդա՛ դու հայ գիրքը ու ճանաչիր Մաշտոցին.*
*Լուսաւորիչը ո՞վ է, տես ով է Խորենացին,*
*Շնորհալի ունենք մենք, Նարեկացի մեծ հանճար,*
*Շիրակացի ու Քուչակ, անմահ փառքի սուրբ տաճար։*

*Իսահակեան ունենք մենք, Աբովեան ու Պռոշեան,*
*Ունենք գամառ Քաթիբա, անմահ Րաֆֆի, Թումանեան,*
*Ծատուրեան ու կուրղինեան, Վարուժան, Սիամանթօ,*
*Սայաթ-Նովա, Թէքէեան, Շիրւանզադէ ու Լէօ։*

*Շատ են հայ հանճարները մէկ-մէկ թւել որ մէկին,*
*Հայ գիրք կարդա դու սրտանց, որ ճանաչես ամենքին.*
*Նրանք ցաւոտ դարերում ճգնել, տքնել են երկար,*
*Ու գրել են մեզ համար գրքեր մէկը մի գոհար։*

## Դուն պիտի ապրես

*Դարեր փառապանծ ջահով լուսատու,*
*Փառքով ապրել ես, իմ քաջ ազգ Հայկեան.*
*Երբ դեռ չը կային ազգերից ոմանք,*
*Դու կայիր քո վեհ երկրով Նայիրեան։*

*Բազում փոթորիկ, մրրիկ, հեղեղներ*
*Փչեցին իրենց յորդ թափով ուժգին,*
*Նրանց թնդիւնին կորան շատ ազգեր,*
*Բայց դու պահեցիր կեանքդ թանկագին։*

*Դուն պիտի ապրես, որ տաս աշխարհին*
*Հսկայ կոթողներ, շինարար որդիք,*
*Որ աշխարհաչակ կոթողներիդ հետ*
*Յաւիտեան մնայ քո փառք, արժանիք։*

*Եթէ կործանիչ, ապիկար մի ազգ*
*Տիրել ցանկանայ խաղաղ աշխարհին,*
*Դու պիտի ապրես տաս քաջ ռազմիկներ,*
*Նրան կործանող ազգերի շարքին։*

*Վաղուց աշխարհին դուն ցուցանել ես*
*Քո դիւցազնական փառքը քաջարի,*
*Յաւէտ պիտ ապրես, որ ապացուցես,*
*Թէ չկայ մի ազգ հայ ազգից արի։*

*Դուն պիտի ապրես, տաս գիտնականներ,*
*Որ հետազոտեն անցքդ պատմական,*
*Նախկին վանք, մատուռ, գիւղ, քաղաք, բարբառ,*
*Ու կերտողներիդ բերեն երեւան։*

*Այժմ հայրենիքն երբ իր դուռն է բացել,*
*Սփիւռքի հային կանչում է երկիր,*
*Ու տուն է դառնում յոգնած ու տանջւած*
*Սփիւռքի հայը պանդուխտ, տարագիր,*

*Դուն պիտի ապրես հսկայ ուժ դառած*
*Խանդավառ երգես գարունը քո նոր,*
*Հայոց հոյակապ փառքը հինաւուրց,*
*Անսասան ուժով պահես զօրաւոր։*

## Հայաստան

*«Երգ»*

*1.*

*Աստուած տեսաւ վեր երկնքից դառը վիճակդ.*
*Չքնաղ հայրենիք,*
*Հայրենասէր զաւակներիդ սիրեց ողորմաց,*
*Շնորհեց բարիք,*
*Առիւծանման քաջ դիւցազններ, անձնուէր ուժեղ հսկաներ*
*Քեզնում ստեղծեց,*
*Անվեհեր քաջերիդ գնով, նրանց հզօր բազկի ուժով*
*Քեզ կեանք ստեղծուեց.*
*Յաւէտ մնաս քաղցր Հայրենիք, չպակասին քո արժանիք,*
*Հայոց ազգիդ սուրբ յենարան, լուսոյ խորան վեհ Հայաստան։*

*2.*

*Շատ տարիներ հալածուեցիր օտար ազգերից,*
*չկար քեզ հնար.*
*Արիւնարբու, նենգ կատաղի թշնամիներդ*
*Անհաշիւ, անծայր,*
*Կտրիճ, հերոս զաւակներդ, հայրենասէր ռազմիկներդ*
*Մարտեցին ահեղ,*
*Անցան լեռ ժայռերի գլխին, ու գիշատիչ նենգ ոսոխին*
*Փշրեցին ուժեղ։*
*Օծեալ հողդ անքակտ մնայ, ծաւալ ստանայ, մեծանայ,*
*Կանգուն մնաս դու յաւիտեան, լուսոյ խորան՝ վեհ Հայաստան։*

*3.*

*Տիգրան մեծ, Արա գեղեցկի պէս գահակալներ*
*Շատ ես ունեցել,*
*Հայկ, Արամի և Վահագնի նման առիւծներ*
*Սնել, մեծացրել.*

*Արշակունեան, Բագրատունեան, Ռուբէնեան քաջ արքայական*
*Շատ ցեղ ես տուել*
*Աբգար, Գագիկ, Արտաշէսներ, Տրդատ, Լևոն, Վարդան քաջեր*
*Քեզանում իշխել.*
*Կտրիճներդ անյաղթ մնան, աճեն, ծաղկեն ու բազմանան,*
*Հնուց մնացած թանգարան, առիւծների բոյն Հայաստան։*

4.

*Երկար  դարեր զաւակներդ աշխարհում ցիր-ցան*
*Վատնել են զուր կեանք*
*Հայրենիքի վառ կարօտով տանջւել, չարչարւել*
*Չեն տեսել բերկրանք.*
*Զրկանք, հալածանք, չարչարանք, ստրկութիւն ու տառապանք*
*Տարան դիմացան,*
*Կտրիճի պէս քաջ կանգնեցին, ամեն չարիք դիմադրեցին*
*Ու հերոսացան,*
*Զաւակներիդ նոր յոյս, բերկրանք, երբ ստացար վերստին կեանք,*
*Տէրունական սուրբ պատւանդան, լուսոյ խորան՝ վեհ Հայաստան։*

5.

*Զաւակներիդ դարերի վառ իղձը կատարւեց,*
*Բացւեց քեզ նոր օր,*
*Քաղաքակիրթ կայսերական երկրների հետ*
*Մրցում ես այսօր,*
*Անմարդաբնակ չոր դաշտերդ, խոպան փշոտ անտառներդ*
*Շէն դրախտ դարձան,*
*Հոյակապ շէն քաղաքներդ, արդիւնաբեր աւաններդ*
*Մնան յաւիտեան։*
*Երնէկ ազգդ կենտրոնանայ, քաջերի քաջ մի ազգ դառնայ,*
*Ու ամենով միաբերան, ասեն.- Կեցցես Մայր Հայաստան։*

## Բաղձանք

*Ստեղծագործ ու արի հայոց ազգը կենսունակ,*
*Իր շինարար բնույթով ունեցել է մեծ հուշակ.*
*Ու հանճարեղ հայ ազգը եթե լիներ միաբան,*
*Կը հասներ այն մեծ փառքին, որին կարոտ է դեռ այն:*

*Եթե հայը անցյալում պառակտումը իր թողներ,*
*Օ՜, ինչ գիտեր կաներ նա, ինչ հրաշքներ կը գործեր.*
*Անջատման վէրքը հային միշտ էլ աղէտ է բերել*
*Պառակտումով տուժել է, ներհակ դէպքում միշտ պարտել:*

*Արքաները մեր հայոց՝ բնաւ չպիտ պարտւէին,*
*Եթե հայ իշխանները նրանց յենակ կանգնէին*
*Իշխանները ապստամբ միշտ երկիրն են աւերել,*
*Ներքուստ հայոց արքայի մէջքն են կոտրել, կործանել:*

*Կրօնական դէպքերը քիչ աղէտ չէն բերել մեզ,*
*Կաթողիկոս ու արքայ որպէս ոսոխ պաարզապէս*
*Մեծ ճեղքւած են ստեղծել ու ճեղքւածքը այդ դաժան,*
*Մեր ոսոխին մղել է հայոց երկրի աւերման:*

*Հայ գործիչը սիրւել է իր մահիցը մի դար անց,*
*Արժանացել գովեստի և օրհներւել գերազանց,*
*Բայց գնահատւող այն անձը իր օրին միշտ հալածւել,*
*Անտեսւել է բիւր անգամ, տառապել է ու ճգնել:*

*Ու դարերից ընթացած անհաճոյ կողմերը այդ*
*Դեռ սփիւռքում թողել է իր հետքերը բացայայտ.*
*Կուզեմ ամեն տեղ չքւի պառակտումը հայ ազգի,*
*Իր տեղը տայ միութեան ու փոխադարձ յարգանքի:*

*Մի հայ սիրել չի կարող, կուսակցական թէ չէ նա,*
*Թէկուզ ինչքան արժանիք, ձիրք ու տաղանդ ունենայ,*
*Յանցաւոր է քանզի նա ծուել, թեքուել չգիտէ,*
*Այդպէսները սփիւռքում կորում են հետզհետէ։*

*Սքանչելի է սակայն, երբ Հայրենի աշխարհում*
*Վերջ է գտել հիմնովին ներհակութիւն, պառակտում.*
*Քոյր ու եղբայր համերաշխ շէնացնում են հայ հողը*
*Ու հմայւում է, դիւթւում Հայաստան այցելողը։*

*Օ՛, եղբայր իմ պատւական, եկէք սփիւռքում էլ մենք,*
*Անկեղծ սիրենք մէկ-մէկու, թիւր արարքը մեր թողնենք*
*Ազգի կարիքը հոգանք, ընթացք բռնենք օգտակար,*
*Ու ցիր ու ցան մեր ազգի ցաւին գտնենք դեղ ու ճար։*


1940. Յունիս 10.

Պարոն Խորէնի նամակը իր եղբօր՝ Սամսոնին
Այս նամակը 2019 թվականին պատահաբար գտել է իմ սիրելի ընկեր Էդիկ Մեհրաբեանը, ով նաև Խորէնի աշխակերտներից է

# Ձօն

*Հայաստանի մեծ եւ հայրենասէր բանաստեղծ*
*Հովհաննէս Շիրազին*

*Շիրազ, դու հայոց Մեծդ բանաստեղծ, մեծասքանչ պօէտ,*
*Դու ժամանակի գերագոյն երգիչ, սիրուած առյաւէտ.*
*Դու հայրենիքիդ վեհագոյն զաւակ, այրուղն իր ցաւով,*
*Ցերեկ թէ գիշեր զարթուն թէ քնած՝ միշտ տարուած երգով։*

*Դու հերոսական մեծ հզօր ուժով ընդմիշտ յաղթական,*
*Անվերջ ձգտեցիր ներս տանել Մասիսն՝ վեհ անապական,*
*Դու վեհ ես, հերոս, որքան որ վեհ են Սիսն ու Մասիսը,*
*Ու մենը-մենակ դու տարար քո տուն Մասիսն ու Սիսը։*

*Դարեր պիտ անցնեն, որ հայոց ազգը տայ մի հատ Շիրազ,*
*Ազգն աղօթում է, որ դու ողջ մնաս, այդ է իր երազ,*
*Երբ դու երգում ես հայոց ցաւերից, այդ մենակ դու չես,*
*Ամբողջ հայ ազգն է իր սրտի խորքից սերտ ձայնակցում քեզ։*

*Մեր ազգն հերոս է, չի մնայ տակը և ոչ մի ճնշման,*
*Վառ է և յաւէտ վառ պիտի մնայ հայոց ապագան.*
*Չենք թողնի մնան գերի մեր հողերն ու լեռները վէս,*
*Մի օր կը բերենք մեր պատկանելին մեր երկիրը ներս։*

*Դո՛ւ, հերոս երգիչ, Մեծդ բանաստեղծ, Վահագնդ օրւայ*
*Դու ստեղծուել ես քաջութիւն տալու ցեղիդ վեհազնեաց,*
*Երգդ տալիս է, ոգի և աւիւն, Շիրազդ աննկուն,*
*Դու կաս, միշտ կապրես ու կը մեծարուես, մատաղ քո սիրուն։*

## Լիբանան

*Դու ողջ աշխարհի սիրեցեալ երկիր, չքնաղ լիբանան,*
*Միջարեւելեան երկրեաց թագուհի, չքեղ աննման.*
*Այցելուներիդ հիացման դու վայր, գովքի արժանի,*
*Սիրուած Փիւնիկիա, դու սոսկ մի Եդեմ դրախտ անուանի։*

*Անգութ, բարբարոս Թուրքը հայ երկիրը երբ քանդեց, կիզեց,*
*Ցեղասպանութեան նենգ, ցածր ու դաժան դաւը գործադրեց.*
*Երբ միլիոններով հայ ջարդեց, երկիրն արաւ քար ու քանդ,*
*Համր ու խուլ մարդը դիտեց, բայց լռեց՝ քար խղճով իր ժանտ։*

*Ազգիս բեկորը քեզ ապաւինեց, աննման երկիր,*
*Գիրկդ բացեցիր ու ծոցդ առար հային տարագիր*
*Ջերմ գուրգուրեցիր, տուիր օթեւան, արեցիր բարիք,*
*Ու հայ որբերին դու դարձար օրրան, դարձար հայրենիք։*

*Հայը կյանք առաւ, վերագտաւ իրեն, կերտեց մշակոյթ,*
*Կրթական օջախ, վերելքի վայրեր բերեց երեւոյթ.*
*Ստեղծեց արւեստ, արւեստասէրներ տւեց բազմազան,*
*Գիտութեան ճամբով ընթացաւ քեզնում ազգս սրբազան։*

*Ա՜խ, ինչո՞ւ ծագեց քո մէջ երկւութիւն, քէն ու պատերազմ,*
*Ինչո՞ւ գժտւեց ժողովուրդը քո, խառնւեց քո կազմ,*
*Ինչո՞ւ ոխերիմ ոսոխի նման ջարդեցին իրար,*
*Չքնաղ, հայակապ շէնքերդ արեցին աւեր ու աւար։*

*Երնէկ չարդ միշտ չքւի, հեռանայ շքեղ Լիբանան։*
*Աւերւածներդ կառուցւեն կրկին, նախկինի նման.*
*Ժողովուրդը քո ապրի, կառուցի երկիրդ Փիւնիկ,*
*Ազգս էլ նրա հետ մշակոյթ կերտէ, ապրէ երջանիկ։*

## Հայոց Աշխարհ
*Երգ*

*Հայոց աշխարհ, Մայր Հայաստան, վեհ չնաշխարհիկ*
*Լուսատու ջահ, սուրբի տաճար, մի բերդ անառիկ.*
*Ապրել ես դու դարերի հետ, պիտ ապրես յաւէտ,*
*Կանգնել ես շանթ, մրրկի դէմ հայոց ազգի հետ։*

*Կրկներգ. Հայոց երկիր, հայոց աշխարհ,*
*Կանգուն մնաս դու յաւիտեան,*
*Հայոց արի, քաջ ազգի հետ*
*Մնաս յաւերժ վեհ անսասան։*

*Հայոց ազգը ծատ է սիրել հայրենիքն իր վէս,*
*Ջոհ է տւել, հայ երկիրն է պահել վեհ ու վէս,*
*Չի սոսկացել ոչ մի ուժից հայը մեծանուն,*
*Ամէն ուժի յաղթահարել, կացել է կանգուն։*

*Հայոց երկիր, հայոց աշխարհ...*

*Հայոց աշխարհ, դու հայ ազգի յոյսն ես հաստատուն,*
*Աշխարհացրիւ հայը ամէն կը դառնայ իր տուն.*
*Պիտ ողջ հայը կենտրոնանայ հայրենիքն իր վէս,*
*Ու իր երկրի կերտման գործին կառչէ միապէս։*

*Հայոց երկիր, հայոց աշխարհ...*

## Ցանկալի նպատակ

*Այս լայն աշխարհում, կամար երկնի տակ.*
*Մարդն ունենում է իրեն նպատակ.*
*Ինձ էլ նպատակ ու իղձ կայ միայն.*
*Դառնալ մի ռազմիկ իմ երկրին համայն:*

*Ուզում եմ լինել մարտնչող զինւոր,*
*Հայրենի երկրիս հսկել ամեն օր.*
*Շրջել լեռները բարձր ու անառիկ,*
*Պահել անդորրը երկրի իմ քաղցրիկ:*

*Ուզում եմ պահել անդորրը երկրիս,*
*Որ տեղը մնայ հանգիստը ազգիս.*
*Ու թէ իմ երկրին չարիք սպառնայ,*
*Մարտնչեմ, յաղթեմ թշնամուն դժնեայ:*

*Ու թէ այդ մարտում սաստիկ վէրք գտնեմ,*
*Դա էլ մի բախտ է, որ կարօտն ունեմ.*
*Վերջին րոպէին պիտ զգամ բերկրանք,*
*Որ հայրենիքիս զոհեցի իմ կեանք:*

## Հայոց ուսուցիչ

*Ուսուցիչդ հայոց, երբ խորհում եմ ես մեծութիւն քո,*
*Թոյլ եմ գտնում ինձ երգելու վսեմ էութիւնը քո.*
*Դու սուրբ ես խսպառ, դու համակ լոյս ես ու բարեհոգի,*
*Մոմի պէս վառուել ու ցուցանել ես շաւիղն ամենքի։*

*Փառասէր չեղար, փարթամ ապրելու չձգտեց հոգիդ.*
*Երջանիկ մի կեանք վարելու իղձը դէմ եղաւ կամքիդ.*
*Կեանքը զրկանքով մաշեցիր ընդմիշտ ու հերոսաբար*
*Քայլեցիր առաջ, իրագործեցիր քո սուրբ գաղափար։*

*Երբ տեսար իրօք արդիւնաւորուեց գործդ պատուական,*
*Սանըդ ուսանող լաւ տեղ գրաւեց, հասաւ հանգրւան.*
*Դարձաւ գիտնական, դարձաւ աստղագէտ, դարձաւ մի մեծ մարդ*
*Այն պահուն միայն քեզ լաւ զգացիր իբրև բարեբախտ։*

*Դու ցուցանեցիր ամբողջ կողմերով վեհութիւնն ազգիդ,*
*Ու պարգևեցիր վեր սաւառնելու թևեր սաներիդ,*
*Ազգասիրական վառ զգացմունքը դու տուիր հային,*
*Հային հայ ճամբով շիտակ քայլելու ցուցնեցիր ուղին։*

*Հայոց ուսուցիչ, խօսք չեմ գտնում ես քեզ մեծարելու.*
*Գովեստի բոլոր խօսքերը փոքր են քեզ արժէքելու.*
*Փառք քո մեծութեան, քո գաղափարին, քեզ՝ ազգով տարւած,*
*Հատուցել միայն կարող է անել իր մօտ քեզ Աստւած։*

## Զօն

***Թեհրանի պետական համալսարանի բազմավաստակ դասախօս և***
***Թեհրանի Հայոց «Նուպար» դպրոցի երկար տարիներիր տեսուչ՝***
***Դօքտոր Աշոտ Առաքելեանին։***

*Հաւաքոյթ էր, ֆարսեր էին հաւաքւած,*
*Բարձրը դասից, ողջ դօքտորներ կիրթ, ուսեալ,*
*Խոսում էին լաւ ու վատից շուրջ նստած,*
*Ազգերից ու մարդկանցիցը կատարեալ։*

*Երբ զրոյցը թեքւեց դէպի հայերին,*
*Ողջ յայտնեցին հիանալի լաւ կարծիք,*
*Բոլորը լաւ գովք ու հմայք յայտ բերին,*
*-Հայը կիրթ է,- ասին- չունի նա կեղծիք։*

*Ու երկրի մի բարձրը դիրքի գիտնական,*
*Ներբողեց մի հայ դասախօս դօքտորի.*
*Ասաց.- Իմ դիրքն ես նրան եմ պարտական*
*Նա է հասցրել ինձ մեծ դիրքի ու օրի։*

*Սովորել եմ համալսարան տարիներ,*
*Բայց ճիշտ ուսմունքն այն հայից եմ ստացել,*
*Ունեցել եմ շատ դասախօս վարպետներ.*
*Այն հանճարն է ինձ գիտութեան հասցրել։*

*Գիտնականներ մենք այս երկրում շատ ունենք,*
*Դօքտոր Աշոտ Առաքելեան մի հատիկ.*
*Մենք պիտ այն մեծ հային գլուխ խոնարհենք,*
*Նա շատերիս վրայ ունի երախտիք։*

*Ներբողեցին ներկաները գերազանց,*
*Գովեստի մեծ խօսքեր ասին հային մեծ,*
*Ես էլ մի հայ հպարտացայ չափազանց,*
*Որ գիտական արժէք ունի հայը մեծ։*



Թաբան դպրոցի բակում՝ 1965 թւականի ապրիլ,
Հայրենի գրող Գեղամ Սարեանը՝ նստած
Խորոն Տէր-Վրոյրեան՝ կանգնած կենտրոնում

*Ապրիլեան անմահ հերոսների*
*կապակցութեամբ*

## Փա՛ռք, յաւէտ փառք Ձեզ

*Լուռ խորախորհուրդ ովկիան խոհերում,*
*Հայ նահատակներ, Ձեր փառքն եմ խորհում,*
*Ձեր սուրբ պանծալի յիշատակը վառ,*
*Յաւէտ տեղ ունի իմ հոգու խորքում։*

*Աքնչելի էր այն վսեմ ուղին,*
*Որով ընթացք դէպ սուրբ նպատակ.*
*Ազգ, հայրենիքի ու ազատութեան*
*Վեհ նպատակին դարձաք նահատակ։*

*Շատ էր ոսոխը, ահռելի, անգութ,*
*Սիրտը բիրտ ժայռից, լեռքարից հոգին,*
*Չը խղճաց բնաւ, լիրբ վայրագութեամբ*
*Գործադրեց դաժան եաթաղանն ուժգին։*

*Համայն իր ուժով սեղմեց կուտակեց,*
*Պայթեց ցնորւած հայ երկրի վրայ,*
*Գարշ աղտեղութեամբ ոճիր աւերմունք,*
*Տաղտկալի եղեռն գործեց անխնայ։*

*Սակայն շանթ, որոտ, հուր նիզակ, սւին*
*Եւ գարշ ոճիրի միջոցները ժանտ*
*Կորցրին այն ուժը, որ կարենային,*
*Ձեզ ծունկի բերել ու տալ Ձեզ զարզանդ։*

*Որպէս ախոյեան քաջ մարտնչեցիք,*
*Բնաւ չը սոսկաց Ձեր սուրբ վեհ հոգին,*
*Փրկեցիք երկիր, ազգ, կրօն, լեզու,*

*Սոսկաց, ցնորուեց ճիւաղ թշնամին:*

*Հայ նահատակներ, յիշատակը Ձեր*
*Բնաւ չեն մոռնայ որդիքդ հայկազուն*
*Գլուխ խոնարհած ծունկի կը չոքեն,*
*Եւ լուռ կը խորհեն Ձեր փառքը անհուն:*

*Փա՜ռք, յաւէտ փա՜ռք Ձեզ, Ձեր անցած ճամբին,*
*Փա՜ռք Ձեր աճիւնին, Ձեր ընկած հողին,*
*Փա՜ռք նւիրական Ձեր անմահ անւան,*
*Յաւիտեան փա՜ռք Ձեր սուրբ գաղափարին:*

## Ուր էիր Աստուած

*Ով հայոց Աստուած, երբ ստեղծեցիր հային անւանի,*
*Տւեցիր նրան ամեն սրբութիւն, շնորհ պիտանի.*
*Տւեցիր նրան վեր սաւառնելու, թռիչքի թևեր,*
*Որ նա սաւառնէր դէպի երկինքը, դէպի բարձր եթեր:*

*Երբ ուղարկեցիր որդուդ՝ Յիսուսին մեղսալից աշխարհ,*
*Շեղւած մարդկութեան ընթացքն ուղղելու իբրև մի ղամբար.*
*Ազգերն անբարիշտ չարութեամբ լեցուն ատեցին նրան,*
*Լոկ հայն Հիսուսին դարձաւ հետևորդ ու սիրեց նրան:*

*Հայն իր լեռների բարձըր գագաթին վանքեր կառուցեց,*
*Անթիւ, անհամար սրբատեղ հիմնեց ու քեզ աղօթեց.*
*Յիսուսի կամքով հայը ընթացաւ ու կառչեց նրան.*
*Սակայն ազգերը հեթանոս ու չար այդ չցանկացան:*

*Բայց ինչո՞ւ Աստուած, ինչու չտեսար երբ ջարդեցին մեզ.*
*Վայրագ ազգերն երբ, որպէս չար դահիճ սուր քաշեցին մեզ.*
*Դարերի ընթացքում երբ ոսոխները ջարդեցին հային,*
*Ինչո՞ւ լռեցիր, ո՞ւր էր վճիռը քո Աստուածային:*

Ո՞ւր էիր Աստուած, երբ գազան թուրքը հային եղեռնեց,
Գարշ աղտեղութեամբ երբ իր ցնորած թոյնը մեզ թափեց.
Երբ շանթահարուած նա գործ դրեց իր եաթաղանը ժանտ,
Երբ նենգ ճիւաղը ողջ Հայաստանը արաւ քար ու քանդ:

Ո՞ւր էիր Աստուած, երբ թուրք դահիճը, հային պիտանի
Հորերը նետեց մեծ-մեծ խմբերով ողջ-ողջ՝ կենդանի,
Ապա հող ու քար լցրեց ու արաւ գետնին հաւասար,
Հորերն անելով կենդանի հային շիրիմ աննշմար:

Ո՞ւր էիր Աստուած, երբ թուրք դահիճը խպառ ցնորած,
Ձերբակալեց հայ գիտնականներին կիրթ ու զարգացած,
Քշեց գիշերով դէպ կառափնարան, ջարդեց բոլորին,
Թողնելով անգլուխ ու անառաջնորդ հայ ժողովրդին:

Ո՞ւր էիր Աստուած, երբ թուրքը անարգ ու անագորույն,
Սպանեց, ջարդեց, քանդեց, հրդեհեց Հայաստանն ուրոյն.
Ցեղասպանութեան դժխեմ ծրագրով ջարդեց բոլորին
Չը խնայելով կին ու պատանուն, ծերին, մանուկին:

Ո՞ւր էիր Աստուած, երբ հանեց հային տանիցն հայրենեաց
Զինու զօրութեամբ ջարդ կոտորումով թուրքը ցնորած
Ու քշեց բոնի անապատները Արաբէստանի,
Արաւ հրէշն այն, որ չէր էլ անի վագրը վայրենի:

Ո՞ւր էիր Աստուած, երբ թուրքը արաւ հային տեղահան,
Ցրեց աշխահում դարձնելով նրան լերկ աստանդական,
Ողջ ունեցածը թալանեց, խլեց, արաւ սոսկ աւար,
Բիրտ կողոպուտով հայ ժողովրդի օրն արաւ խաւար:

Ո՞ւր էիր Աստուած, երբ բռնագաղթին լերկ անապատում,
Հայ կիննն էր ընկել քաղցից, դադրումից երեխան գրկում,

*Հոգի էր տալիս, շունչ չկար մորը, իսկ խեղճ երեխան.*
*Մոր ստինքներն էր փնտրում, որոնում, որ ծիծ տար իրեն։*

*Ո՞ւր էիր Աստուած, երբ հայը չոքած դէպ երկինք նայեց.*
*Ու բազկատարած, քեզնից գութ հայցեց ու քեզ աղերսեց*
*Իսկ թուրք դահիճը, վանքերն աւերեց, ձի կապեց այնտեղ,*
*Սուրբ անօթները խլեց, կողոպտեց հրէշը տգեղ։*

*Ո՞ւր էիր Աստուած, երբ թուրք ոհմակը բիրտ անփառունակ,*
*Քաշելով չքնաղ հայ կին-աղջկան դէպ հրապարակ,*
*Մերկացնում էին, հրաման արձակում այդպէս մերկ պարել,*
*Ո՞ւր էր գութդ տէր, ինչո՞ւ էիր դու հային մոռացել։*

*Ո՞ւր էիր Աստուած, երբ Հյաստանի գեղուհիներին,*
*Այն չքնաղագեղ ու սքանչելի նազանիներին*
*Ջոկջկում էին, տանում սուլթանի տունը պղծավայր,*
*Ուր նա զօռում էր լինել մուսուլման՝ կին իրեն համար։*

*Ո՞ւր էիր Աստուած, թէ տեսար հայի աղէտներն ամեն,*
*Ինչո՞ւ չօգնեցիր ու չը խղճացիր քրիստոնեայ հային,*
*Չէ որ հայը այդ արհաւիրքները իզուր չտարաւ,*
*Այլ քրիստոնեայ լինելու համար նա խաչ բարձրացաւ։*

*Ով հայոց Աստուած, հայը ոչ ոքից էլ գութ չի հայցում,*
*Ողջ ազգերն իրենց խուլ ձևացըրին հայկական հարցում,*
*Հայն իր դարաւոր հողերն է ուզում ու պիտ տիրէ այն.*
*Ով հայոց Աստուած, դու հային օգնիր այդ գործում միայն։*

## Մայրս

*Միայն մի սիրտ կարեկցեց իմ դժնեայ դառը օրին,*
*Այդ իմ մօր սիրտն էր միայն, որ վշտացաւ դառնագին:*

*Միայն նա ինձ սփոփեց ու վիշտըս ինձ հետ տարաւ,*
*Ախ միայն նա, միայն նա հիւանդացաւ ու ընկաւ:*

*Գիշերները չէր քնում, իմ խեղճ մայրը ծերունի,*
*Այլ աղաչում, որ Աստուած բարի գործում ինձ օգնի:*

*Մայրս ընդմիշտ ըղձում էր, որ ունենամ հանգիստ կեանք,*
*Թշնամուս սիրտը փոխւէր, չտար ինձ ցաւ ու տանջանք:*

*Մօրս բաղձանքն էր ապրել, մինչև տեսնէր, որ արդէն*
*Չարը, վատը, անհաճոն ու դաւերն ինձ թողել են:*

*Նա ուզում էր հայի դէմ ես չունենամ քէն ու ոխ,*
*Հայի չար արարքի դէմ լինեմ զիջող, համբերող:*

*Մօրս կամքն էր՝ չարի դէմ չբռնէի ընթացք չար,*
*Այնքան, որ նա դարձի գար, զղջար, չարից ետ դառնար:*

*Մօրս բաղձանքն էր՝ երբէք չդաւէի հային ես,*
*Եւ օգտակար դառնայի մեր հայ ազգին պարզապէս:*

*Ինչ էլ արել եմ մօրս, գիտեմ ես եմ պարտական,*
*Գնացել եմ թէպէտ միշտ իր սրտի ուզած ճամբան:*

*Օ՜, սիրում եմ իմ մօրը, անկեղծ սիրով անսասան,*
*Սուրբ է, անբիծ ինձ համար նրա մաքուր գերեզման:*

# Ապրիլին

*Ապրիլ անողոք, ինչո՞ւ դու դարձար դէպ հայը դաժան,*
*Ամէն երկրի կեանք, հայ երկրին բերիր, կսկիծ անբաժան.*
*Քո կոյր նախանձից ինչո՞ւ դու հային բերիր սուգ ու լաց,*
*Դէպ հայը դարձար անչափ անողորմ, անծայր անաստուած։*

*Ապրիլ, մենք ազգ ենք սարքող, յօրինող ու խաղաղասէր*
*Մենք չենք ցանկացել կուել ու դառնալ այլոց երկրին տէր.*
*Սակայն ուրիշի ցաւն ու ախտն ինչ էր, որ մեզ կոտորեց,*
*Համայն մեր ազգին, ծերին մանուկին ջարդի ենթարկեց։*

*Մարդկութիւնն համայն այն հաւատն ունի որ կար մի դրախտ*
*Եւ եթէ դրախտ գոյութիւն ունի մեր աշխարհն է այդ*
*Ապրիլ բայց ինչո՞ւ ցանկացար դրախտը փոխել դժոխքի,*
*Ինչո՞ւ ընթացար մարդակեր հրէշի դիւային կամքի։*

*Ամէն տարի երբ Ապրիլ գալիս ես, ցաւով ենք լցւում,*
*Ցաւոտ անցեալն է մեր խաղաղ հոգում կրկին փոթորկւում,*
*Յուզւում, մորմոքւում, ալեկոծւում ենք կրում տառապանք,*
*Հայի եղեռնը, մեր կրած ջարդը մենք ո՞նց մոռանանք։*

*Դարերի ընթացքում մեր ոսոխների հորդաները մութ*
*Հրոսակների աւերմունքները վայրագ ու անգութ,*
*Միթէ՞ քիչ էր մեզ, միթէ՞ տեղ կար դեռ մեզ տեսնել աղէտ,*
*Նորից կոտորուել, նորից խաչ ելնել այնքան դառնաղէտ։*

*Ապրիլ, որակեալ մի ազգ ենք հերոս, քնած չենք երբէք,*
*Ձեռք պիտի բերենք այն որ մերն է ու մենք կորցրել ենք.*
*Սակայն մեր սրտի խոր բացւած վէրքը չի բուժվի բնաւ,*
*Եւ մենք նողկանքով միշտ կը յիշենք քեզ՝ ապրիլ անիրաւ։*

## Ձօն

***Թեհրանի պետական համալսարանի բազմավաստակ դասախօս եւ Թեհհրանի հայոց դպրոցների վերատեսուչ Պրօֆ. Դր. Ռուբէն Աբրահամեանին, իր 45 ամեայ գործունէութեան յոբելեանի առթիւ***

*Բազմավաստակ դու գիտնական, ազգիդ պարծանք, ազնիւ տեսուչ,*
*Շատ տարիներ ծառայեցիր ազգիդ սրտանց ու վայելուչ.*
*Քու սուրբ գործը միշտ եղել է ջինջ, անաղարտ ու աննման,*
*Ու տարել քեզ միշտ դէպի վեր, դէպի բարձունքն անապական։*

*Թէ ծով ասեմ կը վշտացնեմ, դու մի ովկիան ես գիտութեան,*
*Հայոց լեզվի դու մի հերոս և դեռ ուրիշ այլ գիտութեան,*
*Սովորել ես շատ լեզուներ, սովորում ես դեռ նորեց էլ.*
*Որոշել ես աշխարհի մէջ ոչ մի լեզու դու չթողնել։*

*Առաւօտեան դեռ շատ կանուխ, երբ զարթնում ես քնից անուշ,*
*Գրքերով ես շրջապատուած, կարդում ես մինչ գիշերը ուշ.*
*Չես ցանկանում կեր ու խումով կամ հաճոյքով անցկացընել,*
*Այլ սիրում ես լուսադէմից մինչև գիշեր կարդալ, գրել։*

*Խոհեմ վարքըդ այս աշխարհում ամենքին էլ գոհ է թողել,*
*Քո թանկագին գիտութիւնից անթիւ անձինք են օգտւել.*
*Օտարազգեայ լեզուներից թարգմանել ես դու շատ գրքեր,*
*Քեզ ունեցանք ճանաչեցինք՝ Ֆերդոսի ու Բաբա-Թահէր։*

*Պահլաւերէն լեզւի վարպետ, կեանք տւողը դու այդ լեզւի,*
*Պահլաւերէն ամբիոնի մեծ վարպետը դու Իրանի.*
*Պռօֆեսոր, ապա դօքտոր տիտղոսներին դու արժանի,*
*Բարի անունդ այս աշխարհում պիտի մնայ միշտ կենդանի։*

## Դեռահաս կեանքիս թանկագին ընկեր Գրիգոր Սէֆեանին

*Գարնան ծաղիկ կեանքիս ընկեր, Գրիգոր,*
*Ինչքան քաղցր էր մեր ժամանակ ու մեր օր,*
*Երբ դեռատի կեանքում մեզ կար մաքուր սէր,*
*Կանաչ, չքնաղ ծաղկանց գրկում, գիւղում մեր։*

*Եղբայրական մեր սուրբ սէրը անեզերք,*
*Դիւթել էր մեզ ու հմայել մեր տարերք.*
*Չքնաղ բնութեան բուրումնալից ջերմ գրկում,*
*Տիեզերքի հմայքն էինք վայելում։*

*Գիշերները այգիներում մենք բազմած,*
*Արծաթ լուսնի նուրբ շողերով ողողուած,*
*Քէֆով տարուած, երգ զրոյցն էր մեզ դիւթում,*
*Երանութեան գրկում բախտն էր մեզ ժպտում։*

*Ինչքան քաղցր էր եկեղեցում մեր գիւղի,*
*Երբ ես ու դու կանգնում էինք կող-կողի,*
*Երգում էինք եկեղեցու սուրբ երգեր,*
*Իսկ ժողովուրդն հիանում էր երգից մեր։*

*Դարձել էինք մի տան տղայ ես ու դու*
*Ա՜խ, սրբութիւնն ինչքան մեծ էր մեր հոգու։*
*Մեր ծնողքը ջերմ սէր էին տածում մեզ,*
*Երկուսիս էլ մի հաւասար սիրակէզ։*

*Ու Անուշը, սիրուն հարսը ձեր մեծ տան,*
*Չքնաղագեղ հրեշտակը աննման,*
*Հրապոյրն էր ու բերկրանքը քո կեանքի,*
*Նա տալիս էր մեզ իր պարտքը յարգանքի։*

*Բայց թեքուեց մեր ճակատագիրն այնուհետ,*
*Մենք շատ տեսանք դառնութիւններ ու աղէտ.*
*Ինչո՞ւ բախտը ձախող թեքեց մեր ուղին,*



*Այն ինչ մենք միշտ ծառայեցինք մեր ազգին:*

Թաքան դպրոց - 1965 Ապրիլի 30
Հայրենի բանաստեղծ՝ Գեղամ Սարեան՝ կենտրոնում նրա աջ կողմը
Խ. Տէր Վրոյրեան իսկ ձախ կողմը՝ բանստաեղծ Գալուստ Խանենց

# Քառոզչական
# Եւ
# Դաստիարակչական

## Դպրոցական խմբերգ

*Սովորող ենք մենք դպրոցի,*
*Ժամանակը ոսկի է մեր,*
*Թող չվատնենք րոպէն անդարձ,*
*Լինենք աշխոյժ, քաջ կամքի տէր:*

*Իւրաքանչիւր դասի ժամին*
*Պիտ սովորենք մենք մի նոր բան,*
*Որ նւիրւած մեր ուսուցչի*
*Ժամը չանցնի զուր ու ունայն:*

*Ուսուցիչը ուզում է տալ*
*Սիրտն ու հոգին ու կրթել մեզ.*
*Պիտի սիրենք, յարգենք նրան,*
*Սերտենք դասը մենք սիրակէզ:*

*Հանգիստ չունեն ծնողքը մեր,*
*Ջարչարւում են գիշեր ու օր,*
*Նրանց իղձն է մի օր տեսնել*
*Մեզ աւարտած ու բախտաւոր:*

*Հայրենիքը պահանջում է*
*Կարդալ, դառնալ մեծ գիտնական,*
*Ծաղկեցընել ինչէս դրախտ,*
*Մեր երկիրը պապենական:*

*Մենք սիրում ենք միշտ գործ դնել,*
*Մեր եռանդը կրկնապատիկ,*
*Որ սիրեն մեզ՝ մեր ծնողքը,*
*Դասատուներն ու հայրենիք:*

## Ուսում

Կեանքը շքեղ է, երբ մարդն աշխարհում քայլում է անշեղ,
Սխալ ընթացքով յածելը զուր է ու կեանքը տգեղ․
Կեանքի զարդն հանուր ուսումն է մարդու, թէ մարդն ունի այն,
Կը վայելէ յարգ, կսիրուէ, կերթայ շիտակ իր ճամբան։

Դարեր են եկել ու դարեր անցել, մարդն է ապրել միշտ,
Մթնում թափառող անկիրթ ցեղերի կեանքն է եղել վիշտ․
Ուսումից զրկուած դեգերել է մութ ուղիում անճար,
Մոլորուած մարդը, երբ չի ունեցել վերելքի հնար։

Ուսումը մարդու թռչելու միջոց, փետուրն է ու թեւ,
Մարդն այդ թեւերով թռչել է կարող՝ վերեւ, շատ վերեւ․
Ուսումը մարդու լոյսն է աչքերի, ով այդ լոյսն ունի,
Առանց շեղումի իր ճամբան կերթայ, շուտ տեղ կհասնի։

Այս կամ այն գիտի քամակից գնալ, ձգտումն է մարդու,
Նոր գիւտեր անել, ստեղծագործել, դա խղձն է մարդու․
Բայց ուսեալ մարդն է յաղթանակ շահել, նոր գիւտ հնարել,
Մարդուն տուել է հանգստի միջոց, լաւ անուն թողել։

Ուսում ու արհեստ թէ չունենայ մարդ՝ թոյլ է ու տկար,
Նա ո՞նց է կարող իր ազգին, երկրին լինել օգտակր․
Ուսումն է տալիս մարդուն քաջութիւն, անում յաղթական․
Ուսում ստացիր, ստեղծագործիր, ապրիր մշտական։

## Սիրենք որբերին

*Մղձավանջն է մարդուն տիրում, ընկճում,*
*Երբ խեղճ, անտէր մի որբուկ է նա տեսնում,*
*Մարդուն մաշող, ընկճող շատ ցաւեր կան,*
*Բայց սիրտ մաշող այդ ցաւն էլ է բիրտ, դաժան:*

*Քո զաւակը երբ ունի քեզ, չունի ցաւ,*
*Հրապուրում, սէր ես տածում դու անբաւ.*
*Ինչ սիրտն ուզէ, խսկոյն և եթ կառնես դու,*
*Կուզես զոհւել, ցաւը առնել քո որդու:*

*Բայց խեղճ որբին ո՞վ է տածում անկեղծ սէր,*
*Ով է նրան կարեկցողը, նրան տէր.*
*Հայրական ջերմ համբոյր նրան ով կտայ,*
*Ով նրան սերտ կփաղաքշէ կը գթայ:*

*Դու չես ցանկայ որդուդ վրայ նստէ ճանճ,*
*Կեանք ես ըղձում նրան, արեւ ու ճաճանչ*
*Միջոցներ ես ստեղծում շատ հաճոյքի*
*Ուզում ես նա տէրը դառնայ աշխարհքի:*

*Ու իրաւ է, որ սիրտ ունի որբն էլ խեղճ,*
*Նա էլ կուզէ ապրել, ուտել, լինել պերճ.*
*Հաճոյքի բոյրն առնել նա էլ է ուզում*
*Սակայն ով է նրան միջոց ստեղծում:*

*Ես ու դու էլ եկ ունենանք բարի սիրտ,*
*Որբի հանդէպ քնքոյշ լինենք, ոչ թէ բիրտ.*
*Սիրենք նրան, ցոյց տանք անկեղծ գուրգուրանք,*
*Գգւենք նրան, բարիք անենք, տէր դառնանք:*

## Բարի եղիր

*Լսիր խօսքս քաղցրիկ որդիս,*
*Լսիր, կուզեմ տալ քեզ խրատ,*
*Բաղձանքըս է յաւէտ յիշես*
*Իմ խրատը թանկ անաղարտ*
*Բարի եղիր, բարի խորհիր,*
*Դարձիր ամրոց մի բարութեան*
*Ջգտիր ընդմիշտ, որ վաստակես*
*Բարի անուն դու յաւիտեան:*

*Դարեր եկել, դարեր անցել,*
*Չարից նշան չկայ բնաւ,*
*Ամէն մէկ գարշանքով է*
*Չարից խօսել, յիշել սակաւ.*
*Չար սիրողներ թէ եղել են,*
*Մահացել են, կորել անհեր*
*Անունները անէծքով է*
*Յիշւել իրենց մահից էլ յետ:*

*Բարին՝ բարի ծիլ կարձակէ,*
*Ծիլն էլ կտայ պտուղ բարի,*
*Ով ճաշակի, կը ցանկանայ*
*Ինքն էլ ցանել սերմը բարի,*
*Այն վատը, որ քեզ դուր չգայ,*
*Մի ցանկանայ բանաւ մէկուն*
*Չար արարքը կապարից էլ*
*Ծանր է նստում մարդու հոգուն:*

*Հնուց շինւած ամոցներից*
*Չի մնացել մէկը կանգուն.*
*Թագաւորներն իրենց փառքով*

*Գլորվել են անդունդն անհուն,*
*Ունայնացել հող են դարձել*
*Հսկաները անյաղթ, արի,*
*Բայց դարէդար մնացել է*
*Բարի մարդկանց գործը բարի:*

## Մանուկ իմ անգին

*Անհոգ, անիմաստ խաղերով ունայն,*
*Մի վատնիր ոսկի կեանքդ թանկագին.*
*Ընտրիր քեզ կայուն վեհ նշանակէտ,*
*Ձգտի՛ր միշտ դէպ վեր, մանուկ իմ անգին:*

*Քո ուսումնական շրջանը ոսկի,*
*Շատ վաղանցուկ է, կրկին չի դառնայ*
*Ու այն, որ այսօր պիտի սովորես*
*Վաղը սովորել չես կարողանայ:*

*Դպրոց, ուսումից զրկուել են ոմանք,*
*Չար բախտը նրանց չի ժպտել բնաւ*
*Գիտակից ու խեղճ զրկուածները այն*
*Ցաւով են տարել կեանքը անիրաւ:*

*Աշխարհն անցել է քեզ նախնիքներից,*
*Ճգնել են նրանք, տանջուել դարէդար,*
*Փնտրել են կեանքիդ միջոցներն հանուր,*
*Գալիքին էլ դու թող ջահըդ անմար:*

*Քաջ զինուորն եղիր քո հայրենիքի,*
*Նրա պաշտպանման հերոսն անվեհեր,*
*Ընթացիր ճամբով նախնեացդ վսեմ.*
*Ցեղիդ յէնարան կանգնիր աներեր:*

*Ու պարզ ճակատով մի օր էլ հպարտ*
*Կանգնիր հրապարակ, ցուցնիր քո անրած,*
*Որ ողջն անխտիր ընթացքդ դիտեն,*
*Ստեղծած գիտիդ մնան հիացած։*

## Գեղեցիկ է աշխարհը

*Գեղեցիկ է աշխարհը, թէ մարդը ծուռ չգնայ,*
*Չարը, վատը աշխարհից եթէ իսպառ չքանայ.*
*Եթէ բացւի աշխարհում արդարութեան մի վրան,*
*Եւ իր շուքի տակ առնի կիզւած, զրկւած մարդկութեան։*

*Ինչքան լաւ է օտարին մարդը անէ այն միայն,*
*Որ թէ արւի իր հանդէպ, վատ չը թւայ իրեն այն,*
*Մարկանց գործը թէ լինի բարի, ազնիւ ու արդար,*
*Այս աշխարհում էլ ոչ ոք չի մնայ խեղճ ու անճար։*

*Կուսակցական անունով զուր է ատում մարդ մէկին,*
*Եւ ինչո՞ւ է նախանձում մէկը միւսի վերելքին.*
*Ով գիտէ այն ատելին նի մեծ հանճար չդառնայ,*
*Չանէ մի գիւտ օգտակար, փակւած մի դուռ չբանայ։*

*Միլիոնատէր հարուստը, որի կայքին չկայ չափ,*
*Ունի ոսկի անհաշիւ, ապարանքներ հոյակապ.*
*Ցւայտ ու գեխ իր կեանքում մի չարիք է նա անբաւ,*
*Աշխարհը թէ կործանւի նրա փոյթը չէ բնաւ։*

*Մահկանցու անհատը լաւ է իրեն հաշիւ տայ,*
*Որ աշխարհը ունայն է, ոչ մի մարդու չի մնայ,*
*Աշխարհակալ թէ լինի, կամ մի դիւցազն աննման,*
*Ժամկէտ ունի ապրելու, շիրիմն է վերջին կայան։*

*Միլիոններով գանձ դիզել, ճամբայ քայլել անիրաւ,*
*Մարդկանց զրկել ու կիզել անիմաստ գործ է իրաւ.*
*Երբ մարդն այնքան անզօրէ, որ պիտ մահին ենթարկւի,*
*Ու չգիտէ իր դիզած գանձը ինչպէս պիտ ծախսւի:*

*Գեղեցիկ է աշխարհը, էթ մարդը ծուռ չգնայ,*
*Չարը, վատը աշխարհից եթէ իսպառ չքանայ,*
*Եթէ ամենքն էլ միայն դէպի բարին ընթանան,*
*Եթէ բարի գործերում, ողջն էլ բաժին ունենան:*

## Լաւ ընկեր

*Մարդն աշխարհում երջանիկ է*
*Եթէ ունի լաւ ընկեր,*
*Լաւ ընկերը կեանք է մարդուն*
*Յենարան է անձնւէր:*
*Պիտի կեանքում շատ որոնել,*
*Ու պըրպըտել անդադար,*
*Տիեզերքում պիտի շրջել,*
*Գտնել ընկեր մի անչար,*

*Սիրտդ մի բաց անարգ մէկին,*
*Երբ սրտակից չէ նա քեզ,*
*Երբ անհոգ է քո ցաւերից,*
*Աչքի առաջ չունի քեզ.*
*Ոնց ցաւդ ասես մէկին երբ նա.*
*Լաւիդ բնաւ չի խնդում,*
*Չի կամենում բախտդ տեսնել,*
*Ու բարձրից է քեզ նայում:*

*Մեծ հրաշքով եթէ գտար*
*Անկեղծ ընկեր՝ անաչառ,*

*Բռնիր քղանցքն, ամուր պահիր*
*Քո ողջ ուժով անսպառ,*
*Եթէ գտար անկեղծ ընկեր,*
*Գիտցիր ունես յենարան,*
*Բարդութեան մէջ էլ չես մնայ,*
*Մենակ, անտէր, անպաշտպան։*

*Բարդութիւնդ լաւ ընկերից*
*Մի թագցնի երբ նեղն ես,*
*Ելք կը գտնի անելիդ,*
*Նա կը գտնի ճամբայ քեզ,*
*Նա չի կարող հանգիստ նստել,*
*Երբ տանջւում է իր ընկեր,*
*Իրեն կուզէ նահատակել,*
*Բայց չնստել անտարբեր։*

*Արդ սիրելիս, լաւ ընկերիդ*
*Դու էլ դարձիր անձնազոհ,*
*Ճիգդ գործ դիր լաւ ընթացքով,*
*Որ ընկերդ մնա գոհ,*
*Ու փոխադարձ օգնիր նրան,*
*Երբ նկատես նեղն է նա,*
*Լաւ ընկերին քիչ է եթէ*
*Մարդն իր կեանքով զոհ գնայ։*

# Մեծը նա է

*Դիւրին չէ քեզ, թէ տենչել ես լինել մեծ,*
*Մեծութիւնը ձրի մէկին չը տրուեց.*
*Մեծի անուն միշտ նրան է վիճակուել,*
*Ով որ մեծի ուղիով է ընթացել:*

*Մեծութիւնը դիզելու մէջ չէ անշուշտ*
*Մեծ չէ բնաւ ով ագահ է ու անկուշտ.*
*Ով որ կեանքը ուզէ միայն իր համար.*
*Ով իր ազգին չդառայ մի բարերար:*

*Մեծը նա է, ով բերում է մարդուն շահ.*
*Ով ուրիշին պատուհաս չէ ոչ մի պահ,*
*Ով մօտիկից մարդկանց ցաւերն է դիտում,*
*Ով որ մէկի ցաւի ճարն է որոնում:*

*Մեծը նա է, ով զիջող է, հանդուրժող,*
*Ով չկամի ոխի դիմաց առնել ոխ,*
*Վատի դէմ մարդ թէ վատ անել ցանկանայ,*
*Ոնց է կարող մեծի անուն շահել նա:*

*Մեծը նա է, ով կարող է լաւ դատել,*
*Ով չցանկայ լաւի դիմաց վատ անել,*
*Կը փոթորկեն քո և նրա միջավայր,*
*Եթէ մեծ ես ինքդ դատիր անաչառ:*
*Թէ տենչում ես շահել մեծի դու անուն,*
*Դարձիր լապտեր ու լոյս սփռիր ամենուն,*
*Թող քո լոյսով մոլորուածը ետ դառնայ,*
*Իր շաւիղը գտնէ մէկը, ճիշտ գնայ:*

## Հեռու մնալ տգէտից

*Զգուշիր ընդմիշտ հեռու մնալ տգէտից,*
*Տգէտն երբէք քեզ չի լինի սրտակից.*
*Տգէտն ինչքան քեզ լաւ ցանկայ, սիրէ քեզ,*
*Նա քո վէրքին վէրք կը բարդէ պարզապէս:*

*Տգէտն երբէք չպիտ կրնայ դատել ճիշտ,*
*Սիրած մարդու կեանքը կանէ ցաւ ու վիշտ.*
*Նա չի զգում իր արածն է չար ու վատ,*
*Ուրիշին է սխալ կարծում անընդհատ:*

*Զուր մի տքնիր ապացուցել քոնն է ճիշտ,*
*Դու ես շեղւած, մոլորւածը իր մօտ միշտ,*
*Խօսքը զօռով նրա գանգը չի մտնի,*
*Քարից կարծր է իր ուղեղը, մեղք չունի:*

*Արդ սիրելի՛ս, թէ չես ուզում տանջել քեզ,*
*Տգէտից կաց հեռու, որքան կարող ես.*
*Տգետը քեզ հուր կը դառնայ, կը կիզէ,*
*Ու մոխիրդ էլ քամուն կտայ, ոնց ուզէ:*

## Հայոց թագաւորն ու իր քաջ սպարապետը

*Հայոց Թագաւորն ռասիմ ուղարկեց,*
*Սպարապետին պալատ հրաւիրեց.*

*Հրահանգեց նրան զօրքն առնի գնայ*
*Երկրի հարաւը, այնտեղ ամրանայ:*

*Լուր է առել, որ Թշնամին ահեղ*
*Զօրքով շարժւում է հայ երկիրն այնտեղ:*

*Արքայի կամքն էր, նա զօրքը տանէր,*
*Երկիրը գալիք վտանգից փրկէր:*

*Բայց Թագաւորն ու իր շուրջի մարդիկ*
*Սպարապետին տեսան, որ սաստիկ*

*Նեղւում է, տանջւում ու խիստ շնչելիս,*
*Իր գոյնը սաստիկ գնում է գալիս.*

*Սակայն լսում է նա Թագաւորին,*
*Ականջ է դնում ամեն մի բառին:*

*Սպարապետը երբ դուրս է գալիս,*
*Ու իր զգեստը խիստ Թափ է տալիս,*

*Մի մեծ կարիճ է ընկնում ցած գետին,*
*Որ տասը խայԹէր տւել իր մարմնին:*

*Արքան երբ առաւ այդ լուրը ցաւոտ,*
*Սպարապետին շուտ կանչեց իր մօտ.*

*Թէ՝ կարիճն ինչո՞ւ չի հանել նախքան,*
*Որ իրեն ցաւ ու խայթեր տար այդքան:*

*Սպարապետը գլուխ խոնարհեց,*
*Արքային այսպէս պատասխան տուեց.*

*-Կարեւորն արքայ, խօսքդ էր ինձ համար,*
*Քո հրահանգին ուշըս պիտ գնար:*

*Կարիճի խայթին թէ չհամբերեմ,*
*Սուր ու գնդակի դէմն ինչպէս կանգնեմ...*

*Արքան այդ խօսքից շատ խանդավառուեց,*
*Կանգնեց ու քաջի երեսն համբուրեց:*

*Սեղմեց իր կրծքին, գուրգուրաց նրան,*
*Պարգեւեց նրան նշան քաջութեան:*

*Ասաց.-վստահ եմ, քաջ սպարապետ,*
*Կերթաս, թշնամուն կը յաղթես եւ եթ.*

*Ու հայն երբ քեզ պէս հերոս ունենայ,*
*Միշտ պատերազմում յաղթող կը մնայ:*

## Դիտիր նրան

*Լուռ հայացքով, ուշի ուշով դիտի՛ր նրան,*
*Բազմամիլիոն գանձը նրա չունի սահման.*
*Չի յղփանում գանձ դիզելուց ու դեռ անյագ*
*Տքնում է միշտ, տենչում դիզել էլ անքանակ:*

*Կեանքից զրկւում, չի վայելում, տանջւում է միշտ*
*Գանձ դիզելու ցաւը նրան դարձել է վիշտ.*
*Արդեօք ո՞ւր է ձգտում գնալ կամ ո՞ւր հասնել,*
*Մի՞թէ կուզէ ապրել հազար տարուց աւել:*

*Է՜, մարդն ինչո՞ւ չի մտորում, որ մահ էլ կայ,*
*Ու շատ չանցած իրեն մահւան օրն էլ կը գայ.*
*Ինչո՞ւ նա չի զգաստանում խղճում իրեն,*
*Չի վայելում, ու կեանք վարում հանգստօրէն:*

*Շատ շատերն են տքնել, դիզել գանձ անհամար,*
*Կեանք-հաճոյքից զրկել իրեն ոնց խելագար,*
*Բայց երբ մեռել, ուրիշներն են վայելել այն,*
*Կուել անգամ, նրանց տւել յիշոց միայն:*

*Չի մնացել աշխարհում մարդ մէկն յաւիտեան*
*Հերթով եկել, անց են կացել, ոնց կարաւան*
*Իսկ թէ բարի մի գործ արւի, դա կմնայ,*
*Բարի գործով մարդ կմնայ միայն անմահ:*

## Մի մոռցիր

*Երբ նստած ես ապարանքում քո շքեղ.*
*Հաճոյքի ողջ միջոցներով գունագեղ,*
*Կեանք ես վարում ճոխ փարթամ ու յորդառատ*
*Յիշիր, որ կան կարօտեալներ՝ խեղճ, աղքատ:*

*Իշխանական փարթամ կեանքում երբ դու կաս,*
*Երբ տեսնում ես ոչինր չունես դու պակաս,*
*Կեր ու խմիր, քէֆըդ արա հիացիր,*
*Բայց տառապող խեղճ թշւառին մի մոռցիր:*

*Դու վայելիր բարիքները բնութեան,*
*Ինչ փափագես դէպի բարին, արա այն,*
*Նժոյգ եծիր, շքեղ վայրեր պըտըտիր,*
*Բայց տարաբախտ ցաւոտ մարդկանց մի մոռցիր:*

*Վերնայարկիդ պատուհանից նայիր ցած,*
*Պատի տակը մերկ գետնին է մէկն ընկած.*
*Այդ թշւառը հողոտ գետնին է կառչել.*
*Մուրալով է ուզում դժբախտն այդ ապրել:*

*Մաշւած, հիւծւած այդ խեղճերի թիւն է շատ,*
*Նրանք չունեն ոչ մի կենակ, հարազատ,*
*Մարդն է նրանց զրկել, ձգել այդ օրին,*
*Բարի եղիր ու աջակցիր խեղճերին:*

## Գիրք

*Շրջիր աշխարհն ու վայելիր*
*Պերճանքները այլազան*
*Ընտրիր անկեղծ սերտ ընկերներ,*
*Կազմակերպիր խրախճանք,*
*Կերէք, խմէք ընկերներով,*
*Ստեղծէք լաւ հանգամանք,*
*Սակայն ներքուստ այդ ամենը*
*Քեզ չի բերի լի բերկրանք։*

*Օդանաւեր նստիր շրջիր*
*Աշխարհները այլ եւ այլ,*
*Նաւեր նստիր ովկիանները*
*Շրջիր, դիտիր քայլ առ քայլ*
*Ընտանիքդ շուրջդ նստիր,*
*Անցկացըրու բերկրալի,*
*Սակայն կզգաս հաճոյքներդ*
*Կատարեալ չեն լի ու լի։*

*Իսկ եթէ գաս գիրքը սիրես,*
*Նրան անես քեզ ընկեր,*
*Հաճոյք կառնես, կզգաս լրիւ*
*Կատարուել են քո ըղձեր.*
*Գիրքը կտայ քեզ զարգացում,*
*Կը դառնայ քեզ ուղեցոյց,*
*Շեղւած ճամբից կը դարձնէ,*
*Ու կարձակէ քո հանգոյց։*

*Գրքից շատ բան կը սովորես*
*Կը դառնաս անձ օգտակար,*
*Բարի ընթացք կը կիրառես,*

Ջարին կատես անդադար.
Աշխարհի չորս ծագերից դու
Կառնես ստույգ նորություն,
Գրքից կառնես նոր ուսմունքներ,
Կը սերտես նոր գիտություն:

Գիտուններն են գրել գիրքը,
Յաջորդներին թողել այն,
Ուղղեցույց են ուզել դառնալ
Բարիք անել մարդկությեան,
Եթէ սրտանց կարդաս գիրքը
Ջես յագենայ դու բնաւ,
Կը խուսափես ու չես գնայ
Դու ճանապարհ անիրաւ:

Գիրքն է տւել այս աշխարհին
Յառաջացում ու վերելք,
Գիրքն է արել աշխարհի ողջ
Մեծ ցաւերին ճար ու ելք,
Գիւտերը ողջ գրքերով են
Յայտնաբերւել, ստեղծւել,
Գրքերով են կարողացել
Երկինքները պըտըտել:

Գիրքը կտայ խօսելու ձև՝
Մաքուր, շիտակ, դուրեկան,
Գիրքը կտայ քեզ գութ ու խիղճ,
Մարդ սիրելու ճիշտ ճամբան,
Գիրք կարդալով դու կարող ես
Դառնալ մի օր գիւտարար,
Ու հռչակւես ողջ մարդկութեան,
Որպէս մի անձ օգտակար:

*Գիրքն է անշուշտ ճամբայ բացել*
*Մարդուն լուսին գնալու,*
*Ու նոյն գիրքը անտարակոյս*
*Հրատն էլ է տանելու.*
*Ով իմանայ՝ գրքով մարդը*
*Հրատն ընտրէ հանգրւան,*
*Նւաճէ նա հրատն անգամ,*
*Ու դուրս գայ նա յաղթական:*

## Ծոյլ մի՛ լինիր

*Ծոյլ ու անհոգ զուր մի վատնիր կեանքը քո*
*Ու մի՛ լինիր բախտից բնաւ դու դժգոհ,*
*Մեղաւոր չէ մէկը եթէ դու ծոյլ ես,*
*Ծուլութիւնդ մէկի աչքից դու մի տես:*

*Ծուլութիւնը քեզ չի բերի օգուտ, շահ,*
*Եթէ ինքդ քեզ չես խղճում, ո՞վ խղճայ.*
*Թէ չաշխատես, չես ունենայ դու ապրուստ,*
*Ծուլութիւնը քեզ կը տանի դէպ կորուստ:*

*Ծուլութիւնից մնացիր խեղճ, անուսում,*
*Չը սերտեցիր բնաւ դասդ դպրոցում,*
*Խրատները քեզ ողջ անցան ի դերև,*
*Մթնեցրիր ինքդ քո օրն ու արև:*

*Եթէ ծոյլ ես ու ընկած ես մի անկիւն,*
*Հասոյթ չունես, մեղաւոր չէ բնութիւն.*
*Դժբախտութեան պատճառը քո թէ փնտռես,*
*Դա քեզանում, միայն քո մէջ կը գտնես:*

*Եղանակը եթէ մթնի, փոթորկի,*
*Օրը եթէ վատանայ ու մրրկի,*

*Դու մի ասա իմ բախտից է այդ մըրրիկ,*
*Մենակ դու չես, աշխարհում կան շատ մարդիկ.*
*Անախորժ շատ օրեր կը գան, կը գնան,*
*Դառն ու ցաւոտ դիպւածները միշտ էլ կան,*
*Սակայն բնաւ մի վհատիր, եղիր քաջ,*
*Չարին յաղթիր, որ բարին գայ քո առաջ։*

## Երկու փոքրիկներ

*Երկու փոքրիկներ դպրոց գնալիս,*
*Զրուցում էին երթի ընթացքում,*
*Նրանց խօսքը, որ սրտից էր գալիս.*
*Հրճւանք էր բերում մարդու և յուզում։*

*-Յովիկ գիշերներն ես ուշ եմ քնում,-*
*Ասաց նրանցից մէկը ընկած,*
*Ուզում եմ առնել լաւ սանի կոչում,*
*Դաս եմ սովորում, դասով եմ տարւած։*

*Վատ է վիճակը իմ սիրելի հօր,*
*Տնքում է դաժան իր ծանըր գործում,*
*Վաստակը քիչ է, մեր կեանքը ստոր,*
*Ցաւ ենք քաշում մենք կորած կարիքում։*

*Մաշւել է հայրս իր ծանըր գործում,*
*Նա միշտ գործել է իր ուժից.*
*Չի գնահատւել բնաւ իր գործում,*
*Դաժան տանջանքից մէջքն է կորցրել։*

*Ու պիտ աշխատեմ ես գիշեր-ցերեկ*
*Դաս սերտել. առաւել լաւ թւանշան,*
*Որ շուտ աւարտեմ, հօրս՝ յոգնաբեկ*
*Դառնամ ես նեցուկ, օգնող ձեռք նրան։*

*-Կեցցես, Վարդան ջան, սիրում եմ ես քեզ,*
*Գերազանցիկն ես մեր դասարանի,*
*Ես էլ եմ սիրում դաս ռերտել քեզ պէս,*
*Ու չը թողնել, որ պահը զուր անցնի:*

*Մենք ենք ճրագը հօրն ու մօրը մեր,*
*Պիտ արդրացնենք յոյսերը նրանց,*
*Ցանկանք աւարտել, տածել նրանց սէր,*
*Պիտ աշխատենք միշտ լինել գերազանց:*

## Սովորիր

*Դպրոց գնա՛, ազնիւ մանուկ, առ ուսում,*
*Որ մեծանաս չը մնաս խեղճ, անուսում.*
*Այնքա արժէքի տէր կը դառնաս,*
*Որքան ուսում ու կրթութիւն ստանաս:*

*Գիտցիր որ միշտ փոքր ու մանուկ չես մնայ,*
*Մի թողիր, որ ոսկի ժամդ զուր գնայ.*
*Իւրաքանչիւր օր պիտ նոր բան սովորես,*
*Թշնամի ես ինքդ քեզ թէ այդ չանես:*

*Սովորի միշտ ու ըմբռնիր քո դասը,*
*Որ կարենաս մտնել ուսման դարպասը.*
*Ծնողներիդ յոյսը դու ես, պատանի,*
*Ազգդ նաև քո վրայ մեծ յոյս ունի:*

*Մի ազգ այնքան պատւի տէր է ու անւան,*
*Որքան ունի աշխարհահռչակ գիտնական,*
*Այդ սովորիր իմ աչքի լոյս պատանի,*
*Որ դառնաս դու մեծ գիտնական պիտանի:*

## Յուսադրիչ պահեր
### Գարուն

*Օ՝, ինչպես գովեմ հրապոյրդ անուշ, գարուն աննման,*
*Դու սփոփում ես ու կեանք ներշնչում ցաւոտ մարդկութեան.*
*Սառած աշխարհը ջերմութիւն առնում, հմայւում է այն,*
*Դառը դէպքերի վէրքերն ամոքւում, բուժւում են համայն:*

*Օ՛, թովիչ գարուն, դու հրապուրող խղճուկ գեղջուկին,*
*Սառնամանիքից հանում ես նրան, հանդ տանում կրկին,*
*Ու նա մշակում, դրախտ է դարձնում դաշտերը բերրի,*
*Վարում ու ցանում, ցանքսն է խնամում յոյսերով բարի:*

*Թռչունները ամէն երբ ձմռան ահից գնում են հարաւ,*
*Երգելով դառնում, թովչանք են բերում սրտերին ծարաւ.*
*Սոխակի երգն է անուշ դայլայլով դիւթում բոլորին,*
*Քաղցրիկ համերգն է ամոքիչ դառնում այրւած սրտերին:*

*Նորից կանաչում,ծաղկում է աշխարհ, կեանք առնում բնութիւն,*
*Աշխարհը հանուր զարթնում է քնից, առնում  յարութիւն.*
*Տխուր ու թախծոտ դէմքերը բացւում, առնում են թովչանք,*
*Ապրելու յոյս է ներշնչում մարդուն, մարդնն է առնում կեանք:*

*Գարուն, տալիս ես, դու շքեղութիւն ու վայրեր դիւթող,*
*Դաշտեր հմայող ու ալեծածան սէգ արտեր  շէնշող,*
*Զքնաղ տեսք առնում, կանաչ են հագնում լեռները հպարտ.*
*Սէգ բլուրները դառնում են շքեղ ու կանաչազարդ:*

*Պտղատու ծառերն այգու պարտիզի խաղաղ լուռ ու մունջ,*
*Զարթնում են քնից, դառնում մոգական շքեղ ծաղկեփունջ.*
*Ապա գնալով բեռնաւորւում են բարիքով լեցուն*
*Խնկաբոյր, անուշ բուրմոնք են մղում դառնացած մարդուն:*

*Օ՛, անուշ գարուն, դու քնքուշ գարուն… …*

## Աբ-Ասք

### *1*

*Լարջան գաւառի Աբ-Ասք գիւղը մեծ.*
*Մէկն է Իրանի գիւղերից այն հին.*
*Ու մի առանձին հմայք ունի նա.*
*Իր աղբիւրներով բուժիչ, հանքային։*

*Հարազ մեծ գետն է անցնում Լարջանով,*
*Հոսում, անցնում է Աբժ-Ասքի մօտով,*
*Ու յորձանքներով իր խորհրդաւոր,*
*Մեր Արաքսին է նմանում տեսքով։*

*Արևմուտքից է գետն սկիզբ առնում,*
*Արևելք ուղղում ընթացքին աննման,*
*Իր հետ երկարող զոյգ լեռներն հպարտ.*
*Աջից ու ձախից հսկում են նրան։*

*Երկու լեռների միջի խոր հովտում,*
*Գետի հետ կայ և գիւղերի շարան,*
*Գիւղերն էլ իրենց սիրուն թովչութեամբ,*
*Շքեղացում են տեսքը բնութեան։*

### *2*

*Օ՜, ինչ շքեղ է աշխարհն իր տեսքով,*
*Դիւթիչ, ուշագրաւ ու յուսադրական,*
*Փառաշուք լեռներ, փրփրուն գետեր,*
*Ծաղկալից ձորեր, բնութիւն դիւթական։*

Նստած եմ ահա, Հարազի ափին,
Վարար գետն եմ դիտում հոգեթով,
Յորձանք է տալիս, թռիչքներ գործում,
Ու անուշ երգում մեղեդին իր ծով:

Գետի ափին ես նայում եմ հյուսիս,
Առջես թովիչ, հրաշք տեսարան,
Վիթխարի գետը կանաչով պատած,
Լանջին դարաւոր ծառեր անհամար:

**3**

Գիշերն է իջել Լարջանի վրայ,
Ահռելի մութը տիրել Լարջանին,
Օրւայ գեղեցիկ յուշերով տարած,
Քնեցի ես էլ Հարազի ափին:

Աք-Ասքի կողքին, գետի եզերքին,
Կայ հիւրանոց զով վրաններով,
Առջևն ընդարձակ մեծ տարածութիւն,
Պատած դարաւոր հսկայ ծառերով:

Մի վրանում էլ ես իջևանած,
Քնեցի գիշերն իմ վրանի մօտ,
Ամբողջ գիշերը քաղցր երազով,
Ես զմայլեցի մինչև առաւօտ:

Շատ շքեղ է և լուսաբացն Ասքի,
Մեղմ զեփիւռ է քո դէմքը գորգուրում,
Ու քամու հեզիկ հոսանքի առաջ,
Ծառերն են սուլում, անուշ օրօրում:

### *4*

*Հարազի ափին, ես մի բարձունքում,*
*Նայում եմ հյուսիս՝ չքնաղ տեսարան,*
*Դամաւանդ սարն է հյուսիսում բազմած,*
*Հսկում Հարազին, հսկում շուրջն իրեն։*

*Սակայն խորթ են ինձ, չեմ դիւթւում բնաւ,*
*Երբ զգում եմ ես դուրս եմ իմ երկրէն,*
*Հոգիս կը հրճւի այն պահուն, երբ*
*Հայրենի երկրում տեսնեմ այդ ամէն։*

*Իմ Մասիս սարն եմ յիշում կարօտով,*
*Ու Արազ գետը մեր յաւերժական.*
*«Դամաւանդ, Հարազ», «Մասիս ու Արազ»,*
*Անունով, տեսով միմեանց շատ նման։*

*Բայց իմն էմ սիրում, իմն եմ պաշտում,*
*Մատաղ լինեմ ես իմ երկրին չքնաղ,*
*Ինչ որ հայինն է իմ յոյսը,*
*Նրան եմ սիրել, սիրել եմ դեռ վաղ։*

## Վարդուհուն

*Հմայիչ տիկին, ասա՜, ուր է քո հմայնքը քնքուշ,*
*Երբ կարող էիր ինձ կեանք ներշնչել, ինչո՞ւ այդքան ուշ.*
*Դու խելացի ես, դու գիտես դիւթել, ապրեցնել մէկին,*
*Դու համակ սէր ես, շնորհք ես, կեանք ես, դու ազնիւ հայ կին:*

*Կնոջ մասին իմ կարծիքը այլ էր, թէպէտ նա անբիծ.*
*Բայց նրա կոպիտ արարքը մարդուն միշտ պիտ տար թախիծ,*
*Ու թւում էր թէ չպիտի լինի հրճւանք բերող կին,*
*Որ կինը պիտ միշտ վշտացնի մարդուն, դարձնէ՝ ցաւագին:*

*Բայց ներիր եթէ դեռ քեզ չնեսած ծուռ եմ մտածել,*
*Լաւ կնոջ վարքը ես դեռ չտեսած սխալ եմ կարծել,*
*Ապրելու յոյսը վաղուց էր մեռել իմ մէջ դառնագին,*
*Այդ դու էիր, որ գուրգուրեցիր ինձ, կեանք տւիր կրկին:*

*Ու այսուհետ իմ կեանքը գալիք քեզ եմ պարտական,*
*Պիտ ապրեմ սակայն քեզ համար, դու կին գովական,*
*Օ՜, պիտի ապրեմ ու գովք յօրինեմ քեզ նման կանանց,*
*Ա՜խ ինչքան լաւ է հայ կանայք լինեն հմայք բերող անձ:*

## Հէրմէսի աւազանը

*Լարջան գաւառի Աբ-Ասք մեծ գիւղում,*
*Գետի եզերքին կայ մի աւազան.*
*Օգտակար է նա իր բուժիչ ջրով,*
*Լողալն այդ ջրում շատ է դուրեկան։*

*Այդ ջուրն էլ մէկն էր գիւղի ջրերից,*
*Որոնք բղխում են ու գնում իզուր,*
*Եւ մարդիկ նրանց կողքից անցնելիս,*
*Չեն էլ մտածում թէ գնում են ուր։*

*Հէրմէսը մեր հայ ցեմենտ-աղիւսով,*
*Աղբիւրի առաջ սարքեց աւազան,*
*Որ թէ լողանայ ինքը այդ ջրում,*
*Թէ այլքն այդ ջրից բաժին ստանան։*

*Ու այնուհետև, ամեն մի անցորդ,*
*Փափագեց լողալ այդ աւազանում,*
*Ու այդ հանքային օգտակար ջրից*
*Գտել ցաւերին հիմնական բուժում։*

*Ու ամեն մէկը թարմացած մարմնով,*
*Անկեղծ աղօթեց, օրհնեց Հէրմէսին,*
*Թէ՝ բարի եղբայր, արարքիդ համար,*
*Արարիչը քեզ պարգևէ բաժին։*

*Դա ապացոյց է, որ ուր էլ մարդ,*
*Բարիք կատարէ, թէկուզ կարծւած  զուր,*
*Դա իսկոյն և եթ բարիք ետ կտայ,*
*Բարիքը բնաւ չի անցնի իզուր։*

# Առակներ
# եւ
# օրինակներ

## Սխալ դատողը

*Մեծ ընկուզենու շւաքում պառկած,*
*Խոր մտածում էր մէկը զարմացած.*
*Թէ՝ Տէրն ինչու է այսպէս ստեղծել,*
*Արդեօ՞ք նա րի գործում չի՞ սխալւել։*

*Ընկոյզի ծառն այս մեծ ու անսասան,*
*Պտուղը այսքան փոքր ու աննշան.*
*Մինչ ձմերուկը, մեծ սեխն ու դդում,*
*Մի փոքրիկ խոտի վրայ են աճում։*

*Այսպէս խորհելով թմրեց, գնաց քուն ,*
*Ու ճիշտ այն անուշ, խոր քնած պահուն,*
*Մի ընկոյզ ը ծառից պոկւեց ցած ընկաւ,*
*Ու քնած մարդու ճակատին կպաւ։*

*Հարւածն ուժգին էր, արթնացաւ քնից,*
*Սաստիկ ցաւ զգաց ու ցատկեց տեղից,*
*Բայց երբ սթափւեց, զննեց մի վայրկեան,*
*Նոր գործն զգաց ճիշտ վեհ Արարչութեան։*

*-Ստեղծութիւնդ ճիշտ է, ով Աստւած,*
*Շատ սխալ էր իմ ձևը մտածած,*
*Թէ ընկուզենին տար պտուղ շատ մեծ,*
*Ի՞նչ էր լինելու վիճակն իմ տխեղծ։*

*Այս ընկոյզը թէ լինէր ձմերուկ,*
*Կորած էր արդէն իմ կեանքը խղճուկ.*
*Քննադատել քեզ, ներիր ինձ Աստւած,-*
*Ասաց մարդը և իր սխալըն զգաց։*

## Իր կնոջը որոնողը

*Մէկը գետի մէջ փնտրում էր մի բան,*
*Ջրի հոսանքի հակառակ քայլում.*
*Ու մի անցւոր մարդ հարցնում է նրան.*
*-Այդ գետի մէջ դու ի՞նչ ես որոնում։*

*-Իմ կնոջն եմ ես որոնում,*
*Ասում են, որ նա գետն է ընկել.*
*Ես էլ նրան եմ փնտրում, որոնում,*
*Գուցէ կարենամ խեղդւելուց փրկել։*

*-Բայց զարմանում եմ գործից քո արած,*
*Դու դէմ ես գնում ջրի հասանքի,*
*Կնոջդ ջուրը թէ լինի տարած,*
*Տարած կլինի հետն իր ընթացքի։*

*-Խեղճ մար՛դ, ես գիտեմ թէ ինչ եմ անում,*
*Նա քայլել է միշտ դէմ ու հակառակ.*
*Ուղիղ չի քայլել նա ոչ մի դէպքում,*
*Նրան չի ազդել խրատ ու առակ։*

*Անկարելի է, որ կարողանար,*
*Ջուրը նրան տանել հետն իր ընթացքի,*
*Ինչպէս միշտ այժմ էլ, վստահ, անվթար,*
*Դէմ է գնացել ջրի հոսանքի։*

## Խեղճ գողը

*Մի գող գնաց մէկի տունը գողութեան,*
*Ենթադրելով որ այդ տանը կայ շատ բան։*
*Երիտասարդ մէկին տեսաւ նա պառկած,*
*Մօտ գնաց ու տեսաւ նրան քուն մտած.*
*Քնած չէր, բայց իրեն դրեց նա խոր քուն,*
*Տեսնէր գողը ի՞նչ է անում իրեն տուն։*
*Մեծ կտորը փռեց գողը՝ ինչ գտնէ,*
*Կտորի մէջ կոյտէ, ուսէ ու տանէ…*
*Երբ գողն ընկաւ շրջելու որ գտնէ բան,*
*Քնածն իսկոյն ելաւ, առաւ կտորն այն,*
*Թաղքի վրայ փռեց իսկոյն՝ կոշտ ու հին,*
*Պառկեց, տեսաւ տեղը փափկեց ահագին։*
*Գողը տանը շատ պըրպըտեց, բայց իզուր,*
*Ոչինչ չըկար, ոչինչ չեկաւ աչքին դուր։*
*Ու յուսահատ ետ դարձաւ, որ դուրս գնայ,*
*Տեսաւ կտորն այն քնածի տակումն ա։*
*Բանն ինչ էր, դժբախտ գողը հասկացաւ,*
*Նա իր փռած կտորից էլ վազ անցաւ.*
*Ինչպէ՞ս կանգնէր ու կտորը պահանջէր,*
*Ու իր համար մի ահռելի ցաւ սարքէր…*
*Գլուխը կոր գողը փոշման դուրս գնաց։*
*-Դուռը գոցիր,- գոռաց մարդը այն քնած։*
*-Չէ քո արև, դուռը երբէք չեմ գոցի,*
*Քանի որ քեզ տակի շոր ես բերեցի,*
*Գուցէ մի խեղճ գող էլ նորից քո տուն գայ,*
*Մի շոր բերի, այն էլ առնես քո վրայ։*

## Չեղծարարն ու իր հոտը

*Մէկը ունէր այծ, ոչխարի մի մեծ հօտ,*
*Ու մի հովիւ աստուածապաշտ ու երկչոտ.*
*Որ իր գործում շատ անկեղծ էր ու շիտակ,*
*Կուզէր իրեն անել հօտին նահատակ:*
*Հօտը տանում՝ արածեցնում էր դաշտ ու սար,*
*Դալար խոտոտ արօտներ, որտեղ կար:*
*Ու ամեն օր կթում էր կաթն անարատ,*
*Բերում էր տուն տիրոջն յանձնում լիառատ:*
*Հօտի տէրը ջուր էր խառնում այն կաթին,*
*Տալիս հովւին, տանէր օտարին:*
*Հովիւը միշտ քարոզում էր խրատում,*
*Թէ՝ աղա ջան, զուր ես այդ գործը անում,*
*Ջուր ես կեղծ կաթ վաճառում դու խեղճ մարդկանց,*
*Վերջը դա քեզ վատ կը բերի չափազանց:-*
*Սակայն մարդը չէր ասում՝ ինձ հետ ես,*
*Իր կեղծ գործը շարունակեց միշտ այնպէս:*

*Մի օր տէրը իր հովւի հետ միասին,*
*Հօտը դեպի մի գետատեղ քշեցին:*
*Ուզեց հօտը արածէր մինչ իրիկուն,*
*Ինքն էլ գնաց մի բարձունքում մտաւ քուն:*
*Գառնան օր էր, մէկ էլ ամպեց գոռգոռաց,*
*Ու երկնքից ուժեղ անձրև իջաւ ցած…*
*Շուտով ահեղ ջուրը բռնեց ամեն տեղ,*
*Ու գոյացաւ մի ահռելի մեծ հեղեղ,*
*Հեղեղն առաւ գետատեղ ու արօտը,*
*Իսպառ տարաւ ոչխարի այն մեծ հօտը:*
*Կաթում խառնած մաս-մաս ջուրը այն ամբողջ*
*Միացաւ ու տարաւ մարդու հօտը ողջ:*

## Մէկ ռիալի հարիսայ

*Մէկը գնաց հարիսայի խանութում,*
*Ուզեց որ տան կէս ռիալի հարիսայ,*
*Ու հարիսան լցրած մի մեծ ամանում,*
*Մեծ յարգանքով դրւեց առաջը նրա։*

*Ախորժակով երբ ուտում էր հարիսան,*
*Նկատեց որ մի պինդ բան կայ նրանում,*
*Ուրախացաւ, որ անպայման միս է այն,*
*Բայց երբ զննեց տեսաւ լաթ է ամանում։*

*-Է՜յ, խանութպան, հարիսայում ինչ է սա,*
*Է՜, խայտառակ բան կը լինի էլ այսպես,*
*Ես քեզանից ուզեցել եմ հարիսայ,*
*Բայց ամանից ինչո՞ւ լաթ է դուրս գալիս։*

*-Ընդամենը դու մէկ ռիալ վճարել,*
*Ուզում ես, որ Քաշան[1] ընտիր գորգ դուրս գայ,*
*Մէկ ռիալին այդ լաթն էլ է դեռ աւել,-*
*Ասաց նա, որ վաճառում էր հարիսայ։*

---

[1] - Քաշանը քաղաքամայր Թեհրանից ոչ հեռու քաղաք է, որի գորգերը շատ հայտնի են ու ընտիր.ԷԲ:

## Ուղտի ձագը

*Մի գիւղացի դաշտում մի օր զբօսնելիս,*
*Մի ուղտի ձագ տեսաւ անտէր ման էր գալիս.*
*Որտեղից էր այդ ուղտի ձագն այնտեղ ընկել,*
*Անշուշտ անցնող քարաւանից էր կտրուել:*

*Մարդը մութին ուղտի ձագը բերեց իր տուն,*
*Ուրախացած իր մօտ կանչեց սիրած որդուն.*
*Ասաց.- Որդի՛, ուղտի ձագը գոմում կապիր,*
*Տէր կաց նրան, կեր-ջուր արա՛, լաւ խնամիր:*

*Ու տես որդիս, այս գաղտնիքը մեր մէջ մնայ,*
*Մինչև ձագը լաւ մեծանայ, մեծ ուղտ դառնայ,*
*Չը լինի թէ բերան բացես, բացայայտես դա մէկին,*
*Մէկը դուրս գայ ու տէր կանգնի ուղտի ձագին:*

*Այսպէս երկա՜ր ուղտի ձագը պահեց գաղտնի:*
*Մի օր տղան գնաց գոմը և ինչ տեսնի.*
*Ուղտի ձագը կապը կտրել, դուրս է ծլկել,*
*Հետքը չկար՝ ո՞ւր էր կորել, ո՞ւր գնացել:*

*Տղան ուզեց գնայ լուր տայ դէպքը իր հօր,*
*Հայրը տանը հիւրեր ունէր շուրջը բոլոր.*
*Ինչպէ՞ս ասէր, որ հիւրերից ծածուկ մնար,*
*Ուր իր հայրը ուղտի ձագից տեղեկանար:*

*-Հայրի՛կ, այն, որ մենք չունէինք, էլի չունենք…*
*Այս բառերով ուզեց հօրը տալ տեղեկանք.*
*Հայրն այդ խօսքը ամենևին չհասկացաւ,*
*Ուղտի ձագին աչքի առաջ չունէր բնաւ:*

*-Հայրիկ, այն որ չունէինք մենք, չունենք էլի…*
*Կրկնեց որդին իրեն խօսքը զարմանալի.*
*Գլխի չընկաւ հայրը ինչքան զօռեց իրեն,*
*Ախըր առաջ ի՞նչ չունէին, որ այժմ չունեն:*

*-Հայրիկ, այն որ մենք չունէինք, չունենք կրկին…*
*Որդու խօսքը չը հասկացաւ հայրը կրկին.*
*Ասաց.- որդի՛ս, այն որ առաջ չունէինք մենք,*
*Հէնց լաւ է, որ մենք չունենանք, կարիք չունենք:*

## Գիւղի գրագէտը

*-Տիրացու կարդա՛, այս թուղթը խնդրեմ,-*
*Գիւղի գրագէտին ասաց մի գեղջուկ.*
*-ինձ ասա՛, ի՞նչ է գրուած այս թղթում,*
*Արդեօ՞ք հասել է ժամանակն ու ժուկ:*

*Ու գիրը կարդաց գրագէտը մեր,*
*Որպէս մի նամակ բարևներ գրած,*
*-Այդ ի՞նչ ես կարդում, նամակ հօ չէ այդ,*
*Պարտամուրհակ է դրամի դիմաց:*

*-Դէ լաւ այդ ասա՛, որ ես հասկանամ,*
*Պարտումուրհակի ձևով էլ կարդամ…*
*Շուրջի մարդկանցը զարմանք է պատում,*
*Թէ թուղթն երկու ձև սա ոնց է կարդում:*

## Երկու դէրւիշ

*Երկու դէրւիշ գնում էին միասին,*
*Ընկեր էին միմեանց օգուտ-վնասին:*

*Մէկը չունէր իր գրպանում մի մեծ բան,*
*Միւսն ունէր հինգ հատ ոսկի իր գրպան:*

*Նա որ ոչինչ չունէր իր հետ, հոգ չունէր,*
*Անվախ գնում ու նստում էր, ուր լինէր:*

*Երկիւղ չունէր նա ոչ ոքից, գողը չար*
*Ի՞նչ պիտ անէր, կամ ի՞նչ տանէր երբ չկար:*

*Չէր մտածում թէ՝ այստեղը երկիւղ կայ,*
*Կամ այնտեղից գուցէ իրեն վտանգ գայ:*

*Հանգիստ գնում, հանգիստ նստաում՝ քնում էր,*
*Անապահով, երկչոտ տեղեր, ուր լինէր:*

*Իսկ սոսկում էր նա, որ ունէր հինգ ոսկի,*
*Մտահոգւած, հանգիստ չունէր նա իսկի:*

*Նրանք հասան մի տեղ, որ կար մի ջրհոր,*
*Որ կենտրոնն էր գողերի չար ու մոլոր:*

*Դատարկն իսկոյն ջուր խմեց ու հովացաւ*
*Ապա պառկեց հանգիստ մտքով քուն մտաւ:*

*Բայց հինգ ոսկու տէրը անծայր անհանգիստ,*
*Ցաւ է քաշու ու տանջում էր անչափ խիստ:*

*Քունը նրա աչքից իսպառ հեռացել,*
*«Ա՜խ ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ»ն էր բարձրացել:*

*Նրա բարձըր «ի՞նչ անեմ»-ի աղմուկից,*
*Զարթնեց ընկերն ու վեր թռաւ խոր քնից:*

*Ասաց.- ընկե՜ր, է՜հ, ին՞պէս թէ «Ի՞նչ անեմ».*
*Ասա՜ , գուցէ ցաւիդ մի ճար ես անեմ:*

*-Ընկերն ասաց,- Ինձ մօտ ունեմ հինգ ոսկի,*
*Դրա վախն է ինձ քրքրում ուղղակի:*

*Այստեղ, որ կանք մի վատ տեղ է, վախով լի,*
*Գողի բոյն է անվստահ ու սոսկալի:*

*Դու քնում ես հանգիստ, անդորր, անսոսկալ,*
*Ես չեմ կրում նստել, քնել կամ գնալ:*

*Դատարկն ասաց.- Տուր ինձ քո այդ հինգ ոսկին,*
*Ու հանգիստ կաց, ես ճար կանեմ քո գործին:*

*Տւեց նրան այն հինգ ոսկին ընկերը,*
*Նա էլ առաւ, հանգիստ նետեց ջրհորը:*

*Ասաց . - հիմա ազատւեցիր ինձ նման,*
*Հանգիստ նստի՜ր, քնի՜ր, գնա քո ճամբան:*

## Հաւատարիմ գրպանահատը

*Մէկն արշալոյսին լոյսը չբացւած,*
*Բաղնիս գնալու մտքով դուրս գնաց.*
*Մութի մէջ տեսաւ մարդու ուրւական,*
*Մօտ գնաց տեսաւ իր ընկերն է այն.*
*Ասաց.- ընկեր ես գնում եմ բաղնիս,*
*Ասա՛, արդեօ՞ք դու ինձ հետ չե՞ս գալիս։*
*Ոչ, - ասաց ընկերն,- այդպէս միտք չունեմ,*
*Բայց մինչև բաղնիս քեզ հետ կը քայլեմ։*

*Այսպէս գնացին նրանք միասին,*
*Մինչև շատ քիչ էր մնում բաղնիսին։*
*Ճանապարհն այնտեղ երկու էր դառնում.*
*Բաղնիս երթողի ընկերը մութում,*
*Առանց ասելու իր ընկերոջ բան,*
*Թեքւում է գնում այն միւս ճամբան…*
*Բաղնիս երթողն էլ չը նկատեց,*
*Որ իր ընկերը իրենից բաժանւեց։*
*Դեպքի բերումով, ոնց է պատահում,*
*Որ նրա հետքով մի գող քայլում,*
*Բաղնիս էր ուզում գնալ այն գողն էլ,*
*Բայց մարդը բնաւ այդ չէր նկատել։*

*Երբ հասաւ բաղնիս մարդը յետ նայեց,*
*Ընկերի տեղ նա գողին նկատեց.*
*Քանի տեղ լոյսը չէր բացւել, մութն էր,*
*Կարծեց այն գողը իր ընկերն էր։*
*Նա ունէր իր մօտ շուրջ հարիւր մանէթ,*
*Դա գողին յանձնեց մարդն իսկոյն և եթ,*
*Ասաց.-թող մնայ քո մօտ աւանդ սա,*
*Պէտք չէ բաղնիսում ինձ մօտ մնաց դա.*

*Բաղնիսից յետոյ, երբ մի այլ անգամ*
*Քեզանից ուզեմ, տուր ինձ այդ դրամ։*
*Գողը դրամը առաւ ու նստեց,*
*Մարդու դուրս գալուն երկար սպասեց։*

### *Բ*

*Մարդը դուրս եկաւ. լոյսըն էր բացւել,*
*Ուղիղ դէպի տուն սկսեց քայլել։*
*Գողը յետևից կանչեց.-Բարեկամ,*
*Այդ ո՞ւր ես գնում, եկ առ քո դրամ.*
*Այսօր աւանդդ պահելու համար,*
*Գործից զրկւել եմ, մնացել շւար։*
*Մարդն ասաց .- Ի՞նչ է, ասա դու ով ես,*
*Քեզ չեմ ճանաչում, ինձ բան տալիք չես։*
*-Ես,- ասաց,- գրպան կտրող մի մարդ եմ,*
*Դու այս դրամը տւիր, որ պահեմ։*
*-Լաւ,- ասաց մարդը,- թէ գրպանհատ ես,*
*Ինչո՞ւ չը տարար այս դրամը քեզ։*
*-Դրամն այս,-ասաց,-ինձ աւանդ տւիր,*
*Եւ ինձ աւանդիդ մահող կարգեցիր,*
*Տմարդութիւն է աւանդը ուտել,*
*Աւանդ դնողին նենգութիւն անել.*
*Ու եթէ կարգը այդպէս ընթանայ,*
*Մարդկանց մօտ հաւատ չի մնայ,*
*Էլ չի հաւատայ ոչ ոքի, ոչ ոք,*
*Կեանքը մարդկային կը դառնայ դժոխք.*
*Ու մարդը թէկուզ մի գրպանահատ,*
*Պիտ չօգտագործէ ուրիշի հաւատ.*
*Ասել են՝ աւանդն յանձնեցին հողին,*
*Հողը ապահով յանձնեց յանձնողին։*

## Մայրախնամ որդին

*Լինում են երկու բարեպաշտ եղբայր,*
*Որ ունենում են մի ծեր ընկած մայր։*

*Մէկը նրանցից մօրն էր ծառայում,*
*Միւսն էլ Աստծուն միշտ երկրպագում։*

*Մի գիշեր պահուն ճգնաւորն յուզւած,*
*Ջերմ աղօթում էր առ ի Տէր Աստւած։*

*Ու աղօթքի մէջ իր քունն է տանում…*
*Մէկը երազում գալիս է, ասում.*

*-Թողութիւն եղաւ եղբօրդ արդար,*
*Դու էլ նրանով թողութիւն գտար։*

*Բայց բողոքում է ճգնաւորն յուզւած,*
*-Ողջ կեանքս եղել է աղօթք առ Աստւած։*

*Եղբայրս միայն մօրն է ծառայել,*
*Իսկ ոնց է ինձնից նա այժմ առաւել,*

*Որ այժմ թողութիւն շնորհի նրան,*
*Նրանով գիջւի իմ մեղքը միայն։*

*Խօսքին պատասխան այսպէս ստացաւ,*
*-Քո գործը Աստծուն կարիք չէ բնաւ։*

*Եղբայրդ անում է այնպէս մի բարիք,*
*Որ ձեր ծեր մայրը ունի շատ կարիք։*

## Հայ գրողը սփիւռքում

*Ծանր է սփիւռքում դառնալ հայ գրող,*
*Չկայ օգնող ձեռք, չկայ համակրող,*
*Չկայ խրախուսանք գրւածքի համար,*
*Քննադատութիւն՝ առատ ու երկար։*

*Թէ ուզի գրել հայը սփիւռքում,*
*Պիտ գնայ դէպի տքնում ու անկում.*
*Յոյզերը իրեն տանջեն շարունակ,*
*Բայց ոչ փող ունի ոչ էլ ժամանակ։*

*Հայը պիտ ճգնէ, տայ գործ գրական,*
*Զոհելու գնով տպել տայ նրան.*
*Բայց քիչ տիրաժով տպւած գիրքը նոր,*
*Չունի հայ գնորդ ու հայ կարդացող։*

*Գրքի գրողը ապա ստիպւած,*
*Յրում է ձրի գրքերը տպւած.*
*Բայց ում տալիս է իր աժան ընծան,*
*Մի «շնորհակալ» չի լսում խեղճն այն։*

*Նւիրւած գիրքը տանում է իր տուն,*
*Անփոյթ նետում է մարդը մի անկիւն,*
*Չի կարդում բնաւ այդ գրքից մի բառ.*
*Անտեղեակ գրքի գրւածից իսպառ։*

*Աչքդ լոյս լինի սփիւռքի գրող,*
*Յոյզերով գրիր, հիւսիր տող առ տող,*
*Հատուցման համար նայիր դէպ երկինք,*
*Կեանքն ինչիդ է պէտք, աղօթիր Տէրն ինք։*

# Տրտունջներ
# եւ
# մրմունջներ

### Ալին ու Վալին

*Իրանում տօն էր, մեծ տօն ազգային,*
*Ցանկութեան մէջ էր Թեհրանը այդ օր,*
*Ու ճիշտ կէսօրին պիտ փոխւէր տարին,*
*Նովրուզն ասէին միմեանց շնորհաւոր:*

*Ու մէկ էլ հնչեց թնդանօթն ուժգին,*
*Ազդարարելով երկրին նոր տարին,*
*Հեռատեսիլը ցոյց տւեց Շահին,*
*Որն իր ողջոյնի խօսքն ասաց երկրին:*

*Խօսեց թագուհին, թագաժառանգը,*
*Ապա վարչապետն կարգով ու հերթով,*
*Ու զեկուցեցին երկրի վերելքը,*
*Իրենց կատարած գործերն հոգեթով:*

*Ու ճիշտ այդ ժամին Ալին ու Վալին,*
*Թաց ու մերկ գետնին նստել են ճաշի,*
*Քարթու սանգակը[1] թաթախում մածնին,*
*Ուտում մածունով այդ հացը կաշի:*

*Եղբայրներ էին Ալին ու Վալին,*
*Գիւղն ունէին գործ՝ հողագործութեան,*
*Իրենց հասոյթի մեծ մասը կալին՝*
*Խանին պատկանեց ըստ սովորութեան:*

*Մի քիչ էլ մնաց, Ալին ու Վալին,*
*Տւեցին պարտքի, պարտքն էր շատ նրանց.*
*Նրանց դատածը հէնց գնած կալին,*

[1] - Բառացիորեն նշանակում է քարիկ, նա պարսկական հացի մի տեսակ է, որը թխվում է տաք քարիկների վրայ-ԷԲ:

*Այլևս ոչինչ չը մնաց իրենց:*
*Ձմռան ցուրտ օրին, գաղթեցին քաղաք,*
*Տքնում էին ծանր, գործում կարիքից,*
*Դրամ վաստակում ձրին, անձրևի տակ,*
*Որ ընտանիքը փրկեն սով-քաղցից:*

*Ալի-Վալիներ շատ կան աշխարհում,*
*Նրանց կեանքն ամեն զրկանք ու կապանք.*
*Նովրուզը նրանց ցաւն է նորոգում,*
*Նովրուզը նրանց վիշտ է ու կապանք:*

## Մարդը

*Աշխարհ, ունայն ու պատիր, օրենքներդ չար,*
*Թոհուբոհի դու կենտրոն, միշտ մութ ու խաւար.*
*Դու միշտ լեցուն չարութեամբ, վայրագ ու դաժան,*
*Դու ինչ ունես հաճելի կիզւած մարդկութեան:*

*Դժնեայ մարդը չի բռնել ընթացք օգտակար,*
*Դարեր քայլել է այդպէս խոցոտ ու տկար.*
*Վիրապներ է նետել միշտ մարդն իր նմանին,*
*Չի ձգտել նա բուժելու իր սիրտը խրթին:*

*Չի յագենում մարդն ագահ, ինչքան ունենայ,*
*Սուզւում է ինչքի խորքում, ինչքան կարենայ.*
*Չի յղփանում նա՝ թէկուզ խեղդւի ծով ինչքում,*
*Իր տհաճ այդ թիւր գծով դէպ կորուստ մեկնում:*

*Մահկանացու չար մարդը քեզնում, ո՛վ աշխարհ*
*Ուզել է յաւերժ ապրել ու միշտ գործել չար.*
*Չխորհեց ու չցանկաց դիտել ուրիշին,*
*Երբ այն մէկը ձգւել է գնալ դէպ բարին:*

*Մահը եղել է ու կայ, կլինի թէպէտ,*
*Բայց մարդն ագահ ձգտում է ապրել առյաւէտ,*
*Ու անջրպէտը անեզր է ու կայ,*
*Թոյլը հզօրի դեմ միշտ ցաւի ենթակայ։*

*Աշխարհ, դու դաժան աշխարհ, լպիրշ, անարդար,*
*Թոհուբոհի դու կենտրոն, չար ու անպատկառ,*
*Դու դժնդակ մի դժոխք, մի դժնեայ հնոց,*
*Դու խեղճին միշտ յօշոտող, հզօրին ամրոց։*

## Դու և ես

*Աշխարհ եկանք հայրենակից դու և ես,*
*Բայց աշխարհը քեզ համար էր, միայն քեզ…*
*Քոնն էր փառքը ու հմայնքը, ինչ որ կար,*
*Հրապույր ու նազանքները անհամար։*

*Ձիդ քշեցիր ուր ցանկացար՝ ըղձեցիր,*
*Հրաշք բախտիդ վերին եզրը կանգնեցիր,*
*Քոնն էր դրւատ ու պերճանքը, վերելքը,*
*Ինչպէս քոնն էր վեհութիւնն ու վայելքը։*

*Սաւառնակ ու ուղղեթիռդ անվարան,*
*Ուր ցանկացար սաւառնեցին, սլացան.*
*Ուր բազմիցս անհուն փառքը տիրեց քեզ,*
*Տիեզերքի տէրը դարձար պարզապէս։*

*Թէ այդպէս էր, ինչո՞ւ ես եկայ աշխարհ,*
*Բիրտ, անողոք, դժնեայ կեանքում ցաւագար.*
*Բերնիս փականք, ձեռքերս կապ, շղթայւած,*
*Քեզ ստեղծեց, էլ ինձ ինչո՞ւ Տէր Աստւած։*

*Ամէն րոպէ մի նոր տանջանք, մի նոր ցաւ,*
*Անհրապոյր, անշուք կեանքս զուր անցաւ.*
*Դալուկ սիրտս չուրախացաւ գէթ մի օր,*
*Իղձերս ողջ անկատար, մութ ու մոլոր։*

*Ես չկրցայ հովոց գնալ գիւղը մօտ,*
*Սիրտս լիքը կարօտ, կարօտ ու կարօտ.*
*Չը ցանկանայ չարիք գործել ես բնաւ,*
*Իսկ իմ վառած ճրագը լոյս չունեցաւ։*

# Գինի խմենք

## Նախերգանք

*Արի՛, ընկեր մոռանանք բռնությիններն անհամար,*
*Որոգայթները լարած և ինչ տեսնում ենք մենք չար,*
*Ինչքան տքնենք, տառապենք, չը գիտեմ ուր կը հասնենք,*
*Կը թմրեցնի գինին մեզ, ե՛կ խմենք ու թմրենք մենք։*

*Տիեզերքը այս դիւթող, զմռուխտ գոհար աշխարհն այս,*
*Ապականում է անզուսպ մարդը ագահ, պատուհաս.*
*Ու ոսկեշող տիւը նա շրջում մութի միշտ աւա՛ղ,*
*Պղծում է սրբութիւնը երկրագնդի այս չքնաղ։*

*Շատ ենք տուժել, տառապել, յուսալքւել ապարդիւն,*
*Ու ձիգ, երկար գիշերներ, անրջել ենք զուր արթուն,*
*Աստղծուն շատ ենք հայցել ու նրանից խնդրել ճար,*
*Բաւ է անզուսպ մեր յուզմունք, գինի խմենք փրկարար։*

*Ե՛կ զսպենք մեր վրդովմունք, դիմաց նստեք մէկ-մեկու,*
*Մեր սրտերի ցաւերը բացենք, պատմենք իրարու.*
*Ապա գինիով միայն մոռացման տանք ցաւը մեր,*
*Գինի խմենք ու արբենք, դառնանք մի քիչ անտարբեր։*

## Ա
## Ինչո՞ւ եկայ ես աշխարհ

*Աշխարհից ի՞նչ կպակսէր թէ չգայի ես աշխարհ,*
*Ի՞նչ եմ դիտել Աշխարհում, բացի ճնշում չար ու քար,*
*Դժոխային դաւադիր, զեխ գործերը նենգ ու թիւր,*
*Միշտ իմ հոգու երկնքում սև ամպեր են բերել մութ։*

*Աշխարհ չեկայ ես անդուլ չարութիւններ համրելու,*
*Հեկեկանքը որբ մանկան, լայն աղեխարշ դիտելու,*
*Որբևայրի կնոջ ծանր կեանքի վկան լինելու,*
*Այդ դժնդակ, նողկալի ցաւերովը տանջւելու։*

*Ի՞նչ կարիք կար ինձ դիտել, որ ժանդարմը ապիկար,*
*Գանահարէր պառկեցրած գիւղացուն խեղճ ու տկար,*
*Նահատակւող խեղճ զոհի աղերսանքը զուտ անցնէր,*
*Իսկ ժանդարմը խենթ ու չար, որպէս դահիճ չը զիջէր։*

*Դիտել եմ ես գեղջուկին կապանքներում անհամար,*
*Քարից հանած իր հացն էր շորթում հզօրն ապիկար,*
*Տզրուկները գարշելի ծծում էին իր արիւն,*
*Ու անպաճոյճ իր կեանքին տալիս էին տրտմութիւն։*

*Կարիք չկար ինձ տեսնել՝ որբևայրի խեղճ կնկան,*
*Որ իր խուցում թողնում էր իր չորս կամ հինգ որբ մանկան,*
*Ինքը գնում ուրիշի տուն, ամբողջ օրը աշխատում,*
*Է՜, ով գիտէր այն խուցում որբերին ոնց էր անցնում։*

*Ցաւով տեսայ այն շատւոր ընտանիքին չքաւոր,*
*Որ բիրտ կեանքում դեդևում, չունէր գործող ու բանւոր,*
*Կարեկցող ձեռք չունէր նա, կեանք վարելու ելք նաև,*
*Ու ճարահատ տան կինը, վաճառում էր ակներև։*

*Տեսել եմ միշտ, որ խեղճն է տուժել, կրել տառապանք,*
*Հզորը միշտ խողխողել, թոյլին տուել է տանջանք,*
*Սուրն հզօրի միշտ կտրուկ մխել է սիրտն անզօրի,*
*«Արդարութիւն» ասածը շրջել է կողմն հզօրի։*

*Վիշտ էր տեսնել զաւակին դժբախտ հայրը կեանքի տար,*
*Ուսման դնէր, ցաւ քաշէր, հազար կարիքը հոգար,*
*Միջոցներ ձեռք առնէր, որ որդին դառնար մի հանճար,*
*Բայց զաւակը սուր խոթէր հօր սրտում ու ծուռ գնար։*

*Չէ, իմ կամքով չեմ եկել աշխարհ, դու պիղծ, նենգ ու չար,*
*Աշխարհ, դաժան ու դժնեայ, խօլ ու շւայտ, բիրտ ու քար,*
*Որ դիտէի ես անարգ բռնութիւններ ու ճնշում,*
*Չէ, քար աշխարհ քո վարքը, խօլ ընթացքը չեմ սիրում։*

*Դաժան վարքը աշխարհի շատ խոր ազդեց իմ հոգուն,*
*Շատ գիշերներ չեմ քնել, անըրջել եմ լուռ արթուն,*
*Բայց ընկեր ջան, չեմ գտել բնաւ ես իմ ցաւին ճար,*
*Գինի լցրու, եղբայր ջան, գինի խմենք փրկարար։*

## Բ
## Ծենն ու շինականը

*Խեղճ շինարար գեղջուկի ցաւը չունի չափ, սահման,*
*Ով իր տեղից բարձրացրել՝ ճնշել զօռել է նրան,*
*Հրոսակներն յելուզակ թալանել են անդարդար,*
*Բռնագրաւել են, խլել՝ իր վաստակը սուրբ, արդար։*

*Խեղճ գեղջուկը շունչ չունի, արնաքամ է եղել նա,*
*Գիւղատէրը բռնակալ կերել է միսը նրա.*
*Շրջիկները պետական, խանի մարդիկն անկշտում.*
*Պատճառներ են բռնում սուտ, կեղեքում են՝ կողոպտում։*

*Անխիղճ անգութ ժանդարմը, ո՞նց էր ծեծում գիւղացուն,*
*Կերել, խմել քանի օր ու շնտռել խեղճի տուն,*
*Ծեծում, դրամ էր ուզում, որ գնար հոտը կտրէր,*
*Պատրւակով մի անմիտ, մատնութիւնից կարեւոր:*

*Ձմռան ցրտին գեղջուկը հաց չունի, գարի թէկուզ,*
*Գէր տղրուկը կտայ մէկ, որ կալին առնի երկուս,*
*Խեղճի կալը տանում են գիւղատէրն ու վաշխառուն,*
*Խեղճը ի՞նչպէս հանդուրժի, ո՞նց դիմանայ այդ քամուն:*

*Մերկ է նրա մարմինը, չունի հագուստ իր հագին,*
*Ոտաբոբիկ է խեղճը, չունի կօշիկ թէկուզ հին,*
*Ապրում է նա հողաշէն, փտած, մռոտ խրճիթում,*
*Ո՞նց գերի է նա ապրում, խարխափում է նա մութում:*

*Ապրելու ոչ մի միջոց չունի դժբախտ գիւղացին,*
*Իր մութ խոնաւ հիւղակի նման մութ է իր հոգին,*
*Նա չի ապրում, այլ գուցէ պատրաստ է իր հոգին տալ.*
*Բայց դաւաճան իր հոգին դեռ չի ուզում տեղի տալ:*

*Ու բնութիւնն էլ ասես թշնամի է խեղճի հետ,*
*Նա էլ բերում է անզուսպ իր վնասն ու իր աղէտ,*
*Նա էլ գալիս է, բերում իր չարիքը ահաւոր,*
*Ու լրացնում գեղջուկի վիշտը խաւար ու մոլոր:*

*Շան մեծ յոյսով գիւղացին լաւ ցանք դրեց աշնանը,*
*Որ առատ հունձք ունենար, պարտքերը տար ամռանը.*
*Բայց երաշտը չար ու նենգ, մոխիր դարձրեց այն ցանքը,*
*Մի շիթ անձրև չեկաւ ցած, նա ո՞նց սգար իր կեանքը:*

*Մի դժնդակ ու վայրագ, ահարկու մեծ ցաւ էլ կայ,*
*Այն մորեխն է որկրամոլ, որչի գիջի ու կը գայ,*

*Գառնանը ողջ ցանքը նուրբ կուտի խպառ արմատից*
*Այնպէս, որ ասես արտը  ցանքս չի եղել բնաւից:*

*Ժանդախտն եկաւ սպանեց տաւար, եզ, հորթ ու կով,*
*Գեղջուկի մէջքը կոտրեց, այլևս ապրէր նա ի՞նչով,*
*Այդ ցուցանքը ահարկու բնաւ չը զիջեց նրան,*
*Ու թշխառ կեանքը խեղճի՝ տարաւ խպառ ձախողման:*

*Շինականի ահաւոր ցաւերից որը թւել,*
*Նրա անթիւ խոցերը հազարներից են աւել.*
*Ունի զաւակ նա քանի ոտաբոբիկ ու քաղցած,*
*Ուսումնարանից զրկւած, դաշտի գործով զբաղւած:*

*Ամռան սաստիկ տօթ օրին, երբ հուր է թափում արև,*
*Մանուկները գեղջկական իրենց ուժից շատ վերև,*
*Աշխատանքներ են տանում բարդ ու խրթին գեղջկական,*
*Ներքուստ ծնողը խեղդւում, սակայն ինչ ճար կայ դրան:*

*Ու չաւարտւեց գեղջուկի ցաւերը բիրտ ու կնչռոտ,*
*Նրա վէրքը չը բուժւեց, անդուլ մնաց նա ցաւոտ,*
*Ով բարձրացաւ անխնայ նրա ցաւին բարդեց ցաւ,*
*Ոչ մի ատեան, դատարան նրա ձայնը չհասաւ:*

*Շինականը ի վերջոյ լքում է շէնն ու փախչում,*
*Դեպի անյայտ մի ուղի, չը գիտէ ուր է գնում,*
*Անտարակոյս գնում է գտնելու նոր հանգրւան,*
*Գուցէ փրկել կարենայ ընտանիքի ապագան:*

*Արդ ընկեր ջան, ի՞նչ անենք, միթէ քիչ ենք տքնել մենք,*
*Մենք մի տեղ չենք հասնելու այս աշխարհում անօրէնք,*
*Ե՛կ նստենք մտերիմ, անուշ խմենք մեր գինին:*
*Այդ նեկտարը փրկարար, կթարմացնի մեր հոգին:*

## Գ
## Քաղաքն ու իր կնճիռները

*Քաղաքում էլ չեմ տեսել ճշմարտություն, սէր ու կեանք,*
*Ամեն տեղ դաւ ու պատրանք, ամեն ինչ կեղծ ու խաբկանք*
*Սուտ է, սուտ է ամենը, միշտ խաբում են իրարու,*
*Գինի խմենք եղբայր ջան, բաժակը գինի լցրու;*

*Թոյլ ու տկարն ամենուր յանցաւոր է, մեղապարտ,*
*Նա չի կարող ոչ մի տեղ փասել, որ ինքն է անպարտ,*
*Անմեղն անդուլ պատւած է, եթէ չունի յենարան,*
*Ինչքան կուզէ թող պորթկա, ով է դարձնում ուշք նրան։*

*Դատարանում դատ ունի թշւառ մէկը անպաշտպան,*
*Անմեղ, արդար է թէպէտ, սակայն չունի հաստարան,*
*Դատաւորը այնքան է ձգձգում ու քարշ տալիս,*
*Որ դատը դեռ չլուծած խեղճը հոգի է տալիս։*

*Ապարանքներ ես տեսնում բազմայարկ ու վեհաշուք,*
*Արդիական, երկնահաս, որ տանում են մարդու ուշք,*
*Իւրաքանչիւր աղիւսը այդ հոյակապ շէնքերի*
*Անշուշտ արիւն է մէկի, մի խեղճ մարդու՝ բանւորի։*

*Հոյակապ այդ շէնքերը պատկանում են այն անձանց,*
*Որոնք արիւն էն ծծել ու տուգել են չափազանց,*
*Այն ձեռքերը որ ճգնել, կառուցել են շէնքերն այդ,*
*Իրենք չունեն մի հիւղակ, կեանք են վարում շատ տւայտ։*

*Թշւառները ընչազուրկ, թափառում են օրն ի բուն,*
*Յոգնած, խոնջած ամեն օր, որոնելով վարձու տուն,*
*Ու կացարան չեն գտնում, ով է տուն տալիս նրանց,*
*Երկմտանքում թէ գուցէ՝ վարձը չստացւի իրենց։*

Շատ ու շատերը աշխարհում մի խցիկ ունեն վարձած,
Ու խեղդւում են այդ խուցում տասը հոգով խցկըւած,
Հիւրասենեակը նրանց, խոհանոցն ու ճաշարան,
Ննջարան ու բաղնիքը այդ մի հիւղակն է միայն։

Ուրիշ տաղտուկ ցաւ էլ կայ, աւել բիրտ, անողոք,
Երբ տանտէրը պետութեան նեկայացնում է բողոք,
Իր մեծ դիրքից օգտւում  ու կաշառք է գործ դնում,
Իրերը խեղճ վարձւորի բռնի փողոց է թափում։

Կաշառակերութիւնը ծաւալել է անսահման,
Վա՜յ էնմարդուն, որ գործը ընկնի երկրի պետութեան,
Ուր գնաց մարդ, ուր դիմէ, պիտ կաշառք տայ, ճար չկայ,
Ապա թէ ոչ օրէնքով նա միշտ պարտւած կը մնայ։

Շւայտ ու ցոփ, զեխ կեանքի հաջոյքներում խոր զուզւած,
Ծոխ ապրում է ընչեղը, մոռացած մարդ ու Աստւած,
Երբ ընչազուրկ մի այլ ոք զաւակին զոռում, ծեծում,
Ցանկանում է քնեցնել, բայց նա քաղցից չի քնում։

Երկրներ է դիտում, հրաշալիքներ տեսնում նոր,
Աշխարհն հեծած շրջում է նա, որ մեծ է ու հզօր.
Մինչ նոյն երկրում մի այլ ոք ցաւերի բեռը ուսին,
Զրկանքի մէջ է մինչև կյանքը իր վերջին։

Կրթող ուժը ամեն ուր ուսուցիչն է անկասկած,
Նա պիտ կրտէ նոր սերունդ, աշխարհին տայ մարդ կրթւած,
Բայց տառապած էական այդ իրեն ոնց տայ իդեալին,
Երբ այդ հիւծւած, քայքայւած անձին գին չտւեցին։

Շատ անձինք են նկատւում անապաստան ու մոլոր,
Որ պառկում են ու ննջում հողոտ մայթում, բաց, տկլոր,
Թաւալւելով հողերում փող են մուրում պատից անց,

*Թշուառ կեանքն է թմրեցրել զգացումը այդ անձանց։*

*Ազգակցութեան սէր չը կայ, մէկը միւսից լիքն է՝ կուշտ,*
*Եթէ մէկը նիւթ-դրամ ունի, սիրւած է անշուշտ.*
*Հիմնւած է ամեն ինչ սոսկ պիղծ նյութի գոյութեան,*
*Մարդը եթէ չունի այն, չունի ընկեր ազգական։*

*Փողոցն ընկած տնքում է հիւանդը թոյլ ու մոլոր,*
*Կանգնելու ուժ չունի նա, դժգոյն, տկար է անզօր.*
*Մելամաղձոտ ու տըկար, կարիք ունի լուրջ բուժման,*
*Սակայն մարդը քարասիրտ չի դարձնում ուշք նրան։*

*Այո, քացրիկ ընկերս, այդ ամենը մենք դիտել,*
*Ա՛խ ենք քաշել, ցաւ քաշել, մեր ձեռքից բան չի եկել.*
*Է՛յ, ինչ անենք մեր ուժով, ինչ ենք կարող անել մենք,*
*Գինի խմենք, դրանով,գուցէ մի քիչ կազդուրւենք։*

## Դ
## Գործատէրն ու գործաւորը

*Գործարանի հնոցի կիզող հուրի դէմ կանգնած,*
*Հաշւում, մաշւում է տաքից յոգնած, խոնջած ընկճւած,*
*Աշխատում է օրն ի բուն գործաւորը անդադար,*
*Ստացած վարձն է չնչին, չունի ոչ մի ճար-հնար։*

*Գործաւորներն այլազան աշխատում են ամենուր,*
*Չունեն նրանք գործի ժամ, գործում են օրն ընդհանուր,*
*Յոգնելը զուր է նրանց, պիտ չը դադրեն մինչ գիշեր,*
*Գինի խմենք, ընկեր ջան, լինենք մի քիչ անտարբեր։*

*Արհեստաւոր բանվորը միշտ վտանգի ենթակայ,*
*Խիստ տքնում է եռանդուն, տալիս աւիւնն անխնայ,*

Ձեռավարձը շատ չնչին, տան կարիքը անսահման,
Կյանքն է տանում զրկանքով, կարոտանքով ձեռնունայն։

Շէնքի գործում տքնում է բանուորը խեղճ ու տկլոր,
Ցածից ցեխ ու աղիւս է կրում յարկերը բոլոր,
Մելամաղձոտ ու տխուր ելարան է բարձրացնում,
Շինանիւթը շալակած վերի յարկերն է տանում։

Ու տանջւում է օրն ի բուն, գոյն չկայ իր երեսին,
Դաժան գործի դիմացը, առած ռոճիկն է չնչին,
Ի՞նչ է նրա կերածը, թթու մածուն ու չոր հաց,
Աշխարհ՛ն  իրօք մի բանտ է այդ խեղճ մարդուն տառապած։

Գործարանի հաստոցը կամ սղոցը անգիտակ,
Արկածում է բանուորին, մատը կտրում է յստակ
Անդամհատում է խստիւ, հէգ տեսք տալիս բանուորին
Հաշմանդամ է դարձնում մինչև իր կյանքը վերջին։

Թաց տեղեր են աշխատում, շատ բանուորներ օրն ի բուն,
Քարածուխի հանքերում կամ մի խոնաւ ներքնատուն,
Թունելներ են փորում խոր կամ հորերում մութ-խոնաւ,
Աշխատանքից ծանր ու սև ստանում են ոսկրացաւ։

Ոսկրացավը երբ ախտեց ծնկացավից երբ ընկավ,
Բանուորին տէր ու հարցնող լոյս չի ընկնի էլ բնաւ,
Տկար, դժկամ նա կապրի, միշտ գերի իր անկողնուն,
Ողորմած մահ՛ն է նրան տալիս միայն փրկութիւն։

Գործաւորը զայրագին բողոքում է ու ճչում,
Բռնութիւնից, ճնշումից պոռթկում է ու աղերսում,
Նա չի սիրում ուժգնութիւն, բռնութիւն, զօռ ու ճնշում,
Բազկատարած աղօթում, արդարութիւն է խնդրում։

*Բայց աղերս ու պոռթկումը անարձագանք է մնում,*
*Գործատէրը ապերախտ լրիւ խուլ է ձևանում,*
*Ոչ մի ատեան, դատարան չի ունկնդրում բանւորին,*
*Դատաւորը նենգ ու չար, պաշտպանում է հզօրին։*

*Բայց բանւորը երբ ինքն է ունենում մի գործարան,*
*Ինքն է դառնում այնուհետ մի պատուհաս անվարան,*
*Բռնութիւն ու կեղեքում, զօռ, ճնշում է մոռանում,*
*Ու այնպես է վարւում որ նախկինն իր հետ էր վարւում։*

*Ի՞նչպես կարող ենք փոխել մարդկութեանը ես ու դու,*
*Ջուր տանջւելը միտք չունի, շահ չի բերի դա մարդու,*
*Գինի լցրու եղբայր ջան, կենաց խմենք ու արբենք,*
*Բաւ է այլևս օտարի ցաւերով մեզ տանջենք։*

## Ե
## Ընդհանուր փոխյարաբերութիւններ

*Սուտ են բոլոր սէրերը, մէկը միւսին է խաբում,*
*Հարազատը անկեղծ չէ, մէկ-մէկի չեն վստահում,*
*Ներքուստ լցված նախանձով, դեդևում են մութ, մոլոր,*
*Միմեանց փնտրում անդունդներ, մէկը միւսին փորում հոր։*

*Շատ են սիրում մէկ-մէկի՝ թէ՛ աղջիկը, թէ՛ տղան,*
*Մէկը մեռնում է միւսին, իրեն նետում գերեզման,*
*Պսակվում են սիրով, բայց մեղրամիսը դեռ չանցած,*
*Ապահարզան են խնդրում, մէկը միւսից դառնացած։*

*Ծնողները զավակին սէր են տածում անսահման,*
*Իրենց զրկում ամենուր նրան տալիս են ուսման,*
*Աչք են գոցում հաճոյքից, զաւակի ցաւն են քաշում,*
*Նրան դիրքի հասցնելով, իրենք հիւսւում են՝ մաշւում։*

*Իսկ այդ զաւակն ապերախտ, բարձր դիրքի տէր դառցած,*
*Մոռանում է ամեն ինչ, ողջ արարքը ծնողաց,*
*Փարթամ կեանք է ստեղծում, երջանկանում զոյգի հետ,*
*Հիւծւած, մաշւած ծնողքը մոռացւում են այնուհետ։*

*Թւով քիչ են բարեսիրտ ու անձնազոհ այն անձինք,*
*Որ կարեկցում են մարդուն, անում ամեն տեղ բարիք,*
*Կեանքը զոհում են իրենց, տալիս ինչք ու ունեցած,*
*Ծովից հանում խեղդւողին, օգնում թոյլին ցած ընկած։*

*Բայց թէ յանկարծ լաւն ընկաւ, ոչ ոք նեցուկ չէ նրան,*
*Մարդու արած բարիքը ողջ լինում են մտահան,*
*Հարազատ ու ազգական, մերձակայքը իր ամեն,*
*Զար ոսոխի նենգ դիրքով դէպ նա ընթացք կը բռնեն։*

*Բարիք արա ամեն տեղ, տուր քո ոգին անխնայ,*
*Օտարների հանգոյցը մարձակելու միշտ գնա՛,*
*Քո ողջ կայքը մասնատիր, որոնց դու շատ սիրում ես,*
*Բայց զգոյշ կաց, որ նրանց փորած հորը չնետւես։*

*Ումանց որ սէրն ես տածել, կարծել ես սերտ բարեկամ,*
*Նրանք քո դառը օրին չեն էլ յիշի քեզ անգամ,*
*Ընկերներդ որ յաճախ նրանց դարձել ես յենակ,*
*Խոյս կտան քեզ կը փախչեն, քեզ կթողնեն մեն-մենակ։*

*Բարեկամներդ անողորմ, որոնց դու միշտ սիրել ես,*
*Կը լքեն քեզ կմոռանան, կը թաքցնեն քեզ երես,*
*Եղբայներդ ոչ միայն նեցուկ չեն քեզ նեղ օրին,*
*Կը խռովեն քեզանից կը դառնան քո թշնամին։*

*Մարդն ինչո՞ւ է շողոքորթ, ստոր, քծնոտ ու նանիր,*
*Կարիքի մէջ շողոմող, ստրուկ, խոնարհ, անբասիր,*
*Սուտիդ, Վատիդ, սխալիդ, անխիղճ գործիդ աչք գոցող,*

*Երբ բռնակալ ես, հզօր, նա քեզ հլու հանդուրժող։*

*Բայց թէ յանկարծ իջար ցած, քեզ ենթարկւող անձը այն,*
*Ուժգին դէմքդ է կանգնում, դառնում հսկայ ախոյեան,*
*Նա իր ուժգին հարւածը իջեցնում է քո գլխին,*
*Ու խորտակման քո գործում, բերում է իր մեծ բաժին։*

*Գող է մարդը, սուտասան, մարդասպան է անիրաւ,*
*Այդ մահաբեր ախտերը բուժելու չէ նա բնաւ,*
*Ապերախտ է, ուրացող, անպարկեշտ ու նենգամիտ,*
*Այն որ գազանը չանէ, կանի մարդը չարամիտ։*

*Մարդկութեանն այս աշխարհի, ի՞նչպես փոխենք ես ու դու,*
*Ինչքան նստենք ու տքնենք, դէ լաւ ինչ ենք անելու,*
*Բաժակը գինի լցրու, իմ սիրասուն ընկեր ջան,*
*Բուժիչ ճարը մեր վշտի կարմիր գինին է միայն։*

## Ձ

## Հայությունը Սփիւռքում

*Ու գանք մի քիչ էլ խօսենք հայի կեանքից սփիւռքի,*
*Հայը դարեր քայլել է ուղիներով տաժանքի,*
*Հայն սփիւռքում ամենուր կառուցել է ու կերտել,*
*Բայց կառուցման իր գործը հայ երկրին շահ չի բերել։*

*Բարդ ու խրթին գործերը հայինն է ամեն տեղ,*
*Հայն ստեղծող, յօրինող, կառուցող է գունագեղ.*
*Օտարութեան մէջ հայը կեանքն է տւել անխնայ,*
*Գինի լցրու հայ եղբայր, մեր ցաւը թող մեզ մնայ։*

*Բարոյական մեծ արժէք ոչ ոք հային չի տւել,*
*Օտարների շուքն հային ամպհովանի չի դարձել,*

Արևի ջերմը միշտ էլ հրկիզել է հային քաջ,
Ու այդ այրւած դէմքով է հայն ընթացել միշտ առաջ։

Օտար երկրում չի կարող հայը լինել Նախարար,
Ակներև չէ բարեկերտ հայի վաստակն օգտակար,
Պատերազմի դաշտում է՝ հայը հերոս, ռազմավար,
Բայց որպէս պարզ մի զինւոր, և ոչ իբրև զօրավար։

Օտար երկրում հայ կուսանք շեղւում են ու կուլ գնում,
Ստեղծագործ հայ ազգը դէպ ուծացումն է գնում,
Արևմուտքում մերթ ընդ մերթ ձուլւում են մեր հայկազունք,
Գինի խմենք հայ ընկեր, թմրենք, մոռնանք մեր յուզմունք։

Հայոց լեզուն չեն սիրում, օտար երկրում հայ մանկունք,
Հայոց դասը չեն սերտում, չեն սիրում էլ հայ ուսմունք,
Հայոց գիրքը իր տանը չի ընթերցում հայը մեր,
Ու տեղեակ չէ  հայ գրքում կան ինչ շքեղ գոհարներ։

Օտար երկրում հանճարներ շատ են ծնում հայ կանայք,
Բայց կորում են ձիրքերն այդ, երբ չունեն տէր, գանձ ու կայք,
Ամեն երկրում իր ազգը ձգտում է տալ շատ հանճար,
Իսկ հայ ձիրքով հանճարը՝ կորում, մեռնում է իսպառ։

Հայի մեծ ցաւն սփիւռքում անմիութիւնն է միայն,
Պառակտումով տուժում է, հային վայել չէ էլ այն,
Ու մերթ ընդ մերթ  երբ հայն ունեցել է պառակտում,
Արհաւիրք ու աղէտը, շատ է քաշել աշխարհում։

Ու չգիտես թէ ինչո՞ւ, նա շեղել է իր ճամբան,
Նա Հայաստան չի գնում՝ դրախտ երկիր աննման,
Նա մնում է տարագիր, աստանդական՝ սփիւռքում,
Իրեն տեղից տեղ անում, երկրից երկիր է փոխւում։

*Արևմուտքում ձուլւում է, հայը պանդուխտ տարագիր,*
*Մոռանում է հայ լեզուն, կարդում օտար ազգի գիր,*
*Զույգ է ընտրում այլ ազգից, տանում կեանքը իր տւայտ,*
*Հանւում է հայ ցուցակից, նետւում ուրիշի որոգայթ։*

*Հային ցաւ է բռնկել նոր՝ անհարկու ու դաժան,*
*Ու դէպ կորուստն է տանում այն սփիւռքի հայութեան*
*Ուղին թեքել է հայը, Ամերիկա է գնում,*
*Այն հայակուլ աշխարհը, գնում է դէպ ուծացում։*

*Է՛, ինչո՞ւ է նա թողնում իր երկիրը դրախտավայր,*
*Ինչո՞ւ է նա  բախտ փնտրում, օտար երկրում, օտար վայր,*
*Ինչ է մղում այլ աշխարհ, ողորմելի մեր հային,*
*Որ թողնում է իր երկիրը, ստրուկ դառնում օտարին։*

*Հայն սփիւռքի փրկության ունի միայն մի ուղի,*
*Բռնի ճամբան իր երկրի, հայրենի դուռը բախի,*
*Պանդխտության դարերի փոշին թափ տայ թօթափէ,*
*Հայրենիքի վերելքին իր կաթիլը նա խառնէ։*

*Մարդն հայրենի աշխարհում իրեն կզգայ շատ ազատ,*
*Այնտեղ միայն նա կզգայ ինչ է երկիրն հարազատ,*
*Հանճարն այնտեղ չի մեռնի, տաղանդները կեանք կառնեն,*
*Գիւտարարներ կստեղծւեն, երկրի օգտին կը գործեն։*

*Ա՛խ, թէ բացւէր մի նոր այգ, վտարանդի ազգը մեր,*
*Կենտրոնանայ հայրենիք, գործեն, միմեանց տածեն սէր,*
*Եկ ընկեր ջան, լիք լցնենք բաժակները գինով,*
*Խմենք մեր իղձն օգտակար կատարւելու մեծ յոյսով։*

## Է
## Աշխարհն ու իր վայրագութիւնները

*Ու ընդհանուր աշխարհը բոյն է վատի՝ չարութեան,*
*Ազգերն իրար խաբում են, միմեանց փորում գերեզման,*
*Պատերազմ են հրահրում, տեղի տալիս բռնութեան,*
*Բիրտ են, վայրագ ու անգութ, մարդակուլ են ու դաժան:*

*Ռազմական մեծ զէնքերի նոր գիւտեր են հնարում,*
*Հզօրներին, մեծերին՝ փոքր ազգերն են կուլ գնում,*
*Ու դարէդար հզօրը կլլել է թոյլ անզօրին,*
*Նրա արւեստը՝ կուլտուրան քինով յանձնել է հրին:*

*Երբ դժնդակ ու դժխեմ մի պետութիւն բռնակալ,*
*Հրէշային աւերիչ իր ծրագրով ոխակալ,*
*Կըլլեց անզօր մի անմեղ քաղաքակիրթ պետութեան,*
*Վայրագ հզօր ազգերից ոչ ոք հասաւ օգնութեան:*

*«Արդարութիւն»ը միայն լոկ մի բառ է՝ անիմաստ,*
*Բառարանում միայն կայ այդ բառին մի ճոխ իմաստ,*
*Գործադրութիւնը նրա իրաւ ոչ ոք չտեսաւ,*
*Այդ բառն իր իմաստով չօգտագործւեց ի բնաւ:*

*Արւեստագէտ հայ ազգը իր բնոյթով հեզ, խոնարհ,*
*Կառուցում էր, նորոգում իր դարաւոր հին աշխարհ,*
*Մշակոյթ էր կերտում միշտ, շէնացնում իր ապագան,*
*Հին վանքերն էր նորոգում, ճոխացնում իր կուլտուրան:*

*Բայց գիշատիչ մարդակերպ գազանները կատաղի,*
*Իրենց վարքով զազրելի հայ երկրում միշտ անտեղի,*
*Սպանեցին, գերեցին, աւերեցին դարէդար,*
*Ու չը թողին հայ երկրում քարի վրայ նստէր քար:*

*Ու ամենից մահաբեր, դժնդակ, չար ու դաժան,*
*Թուրք հրէշը մարդակուլ, աւերող ու ցեղասպան,*
*Փքուեց, պայթեց ժանտ հոգով երկրի վրայ հայ անմեղ,*
*Ու եղեռնեց հայ ազգին, քանդեց նրա տուն ու տեղ։*

*Քաղաքակիրթ հայ ազգը բարձրացաւ իր Գողգոթան,*
*Միլիոններով կոտորեց Թուրքը անգութ, ցեղասպան,*
*Նենգ, մարդակուլ դահիճը, մոնղոլական ախտով չար,*
*Վայրագութեամբն իր մոլի՝ ամայացրեց հայ աշխարհ։*

*Եղեռական նենգ գործում, սրի քաշեց ամենքին,*
*Չը խնայեց կնոջ, հիւծուած ծերին, մանուկին,*
*Գաղթի ճամբին էլ հային Թուրք դահիճը մարդակեր,*
*Ջարդեց, փշրեց, ջախջախեց, անկղ ու գայլին արաւ կեր։*

*Արաբիայի անջրդի անապատում հրակէզ,*
*Տարագրուած հայ ազգը զոհուեց, դարձաւ ողջակէս,*
*Գաղթական հայ փշրանքը հազիւ գտաւ ապաստան,*
*Ի սփիւռս աշխարհի որոնեցաւ հանգրւան։*

*Մեծ ու հզօր ազգերը նկատեցին ողջ մէկ-մէկ,*
*Ողբերգեցին, գրեցին գրողները սրտաբեկ,*
*Միջազգային մամուլում լցուեց անցքը այն ցաւոտ.*
*Բայց պատմութեան մնացին գրւածքներն այն արիւնոտ։*

*Ու բոլոր մեծ ազգերը, որպէս քար ու ապառաժ,*
*Դիտեցին քար լռութեամբ ու տեղերից չեկան շարժ,*
*Ցեղասպան Թուրք ոսոխին չասացին էլ մուխը քեզ,*
*Պապանձւեցին, զոհեցին իրենց շահին հային քեզ։*

*Բռնագրաւեց հայ հողը բռնակալը ցնորւած,*
*Հայի արդար վաստակը Թալանեց Թուրքն անաստւած,*
*Սրբատների, վանքերի կարասիքն ու զարդարանք,*
*Թալանեց ու այդ գործում Թուրքը զգաց մեծ բերկրանք։*

*Ու աշխարհի ատեանում հայն ունի իր դատն արդար,*
*Իր հողերն է պահանջում, դա լաւ գիտի ողջ աշխարհ,*
*Տարածել է ամեն տեղ, իր բողոքը հայը մեծ,*
*Սակայն ինչո՞ւ մինչև օրս հայի դատը չը լուծւեց։*

*Հայը երկար տարիներ աչքը յառած Աստըծուն,*
*Բազկատարած աղօթեց, խնդրեց արդար հատուցում,*
*Բայց Աստւած էլ ոսոխին դարձաւ խսպառ թև-թիկունք,*
*Հային աղօթը տւեց միշտ ներհակ ու ձախ արդիւնք։*

*Սակայն հայը քաջարի չը պիտ նստի սուս, անբան,*
*Իր իրավունքն առնելու ինք պիտ գտնի իր ճամբան,*
*Ու թէ հայը լուծի իր վրէժը Թուրքից չար,*
*Աշխարհն իրաւ թող ասի.- Հայը մի ազգ է տկար։*

## **Վերջաբան**

*Է՛, ինչ անենք, որ աշխարհն մեր կամքով չի ընթանում,*
*Մեր ձեռքից ի՞նչ է գալու, ո՞վ մեր ցաւը տանում,*
*Ջուր տեղն ինչքան մենք տրտմենք, աշխարհի ցաւը քաշենք,*
*Ե՛կ ամեն ինչ մոռանանք, բաժակները մեր ըմպենք։*

*Շատ ենք խորհել, տենչացել ու ցաւ քաշել օրն ի բուն։*
*Գիշերներ ենք անցկացրել անուրջներով մենք արթուն,*
*Ու սոսկալի տենչանքում միշտ գինին է փրկել մեզ,*
*Կարմիր նեկտարն հաճելի, ե՛կ որ խմենք դու և ես։*

*Ե՛կ, եղբայր ջան, այսուհետ մոռնանք ամեն ցաւ ու վիշտ,*
*Եւ ստեղծենք մեզ համար ուրախ ժամանց մենք ընդ միշտ,*
*Գինին դնենք մենք մէջտեղ, խմենք առատ ու արբենք,*
*Այս աշխարհի ցաւերը մոռացման տանք, չը յիշենք։*

## Ամառանոցում

*Մի տարի ամռան ես գյուղ գնացի,*
*Քաղաքի տոթից յոգնած, ընկճւած,*
*Իմ ծննդավայր գիւղը կարծեցի,*
*Կը կազդուրի իմ ջղերը յոգնած:*

*Գիւղի մօտ մերոնք կարօտով անհուն,*
*Դիմաւորեցին ուրախ, հոգեթով,*
*Իրենց մէջ առած, ինձ հասցրին տուն,*
*Դրօշմելով ինձ համբոյրներ հերթով:*

*Իմ գյուղ հասնելը տարածուեց իսկոյն,*
*Ազգականներս ողջ եկան այցի,*
*Հարեւթն էլ եկաւ, տխուր ու տժգոյն,*
*Ցաւոտ էր մարդը, դէմքից կարդացի:*

*-Վարժապետ,- ասաց.-բարով ես եկել.*
*Ինձ բախտն է օգնել, որ դու եկել ես,*
*Օգնի՛ր, օգնի՛ր ինձ, տունս է քանդւել...*
*Խնդրում եմ օգնի՛ր, եթէ կարող ես:*

*Այս մի շաբաթ է անտեղի, իզուր,*
*Երկու նենգ ժանդարմ իջել են իմ տուն,*
*Ինձ խաչ են հանել, տանջել ամեն օր,*
*Ուտում են խմում, շնթռում օրն ի բուն:*

*Գիւղատիրոջ չար մարդն իսպառ սուտից,*
*Գանգատ է գրել ժանդարմի մեծին,*
*Թէ՝ ծառ եմ կտրել իմ ծառաստանից,*
*Գիւղատիրոջը չեմ տւել բաժին:*

Այն սուտ բողոքից զրկւել են սրանք,
Իմ տուն ու տեղը տւել են քամուն,
Մի մեծ գումար էլ ուզում են տուգանք,
Ասում են. «Ջը տաս, օր չես տեսնի դուն»։

Համեղ նախաճաշ պիտ տամ ես նրանց,
Ճաշին, ընթրիքին ամեն ուտելիք,
Ողջ օրը ծխում աֆիոնը իրենց,
Ուտելիքի հետ ուզում են խմիչք։

Վարժապետ գիտես, որ ոչինչ չունեմ,
Իմ տան զարդը լոկ մի գորգ էր փոքրիկ,
Ճարահատ այդ մէկ գորգն էլ ծախել եմ,
Արել եմ դրանց կեր ու ուտելիք։

Դրամ չունեմ ես տամ դրանց տուգանք,
Հազար ցաւ ունեմ ու մի կով, մի եզ,
Ցաւ է իմ կեանքը, վիշտ ու տառապանք,
Թէ կովս էլ ծախեմ, ի՞նչ հող տամ գլխիս։

Վարժապետ, արի՛ Աստւածդ սիրես,
Այս փորձանքից ինձ մի կերպ ազատիր,
Օրէնքից տեղեակ քաղաքի մարդ ես,
Նրանց չար բոյնը իմ տանից քանդիր։

Առանց դրամի դրանք չեն գնայ,
Դու տուր անցկացրու, թող գնան կորեն,
Իմ չնչին կալից թէ մի բան մնայ,
Յետոյ կը ծախեմ, քեզ կը վճարեմ։

Լսեցի տխուր այդ պատմւածքը,
Խոր ալեկոծւեց իմ յոգնած հոգին,
Մինթէ կարող է մարդն իր կեցւածքը,
Խաղաղ պահել այդ ցաւալի պահին։

*Ի՞նչ անէի ես այդ պահին տխուր,*
*Ի՞նչ տայի այդ խեղճ մարդուն պատասխան,*
*-Այսօր,- ասացի,- ինձ ժամանակ տուր,*
*Վաղը կը փորձեմ անել ես մի բան։*

*Օրն անցաւ մի կերպ, մերոնց տեսայ ես,*
*Ու կարօտս առայ բոլորից մէկ-մէկ,*
*Հաբեթի ցաւը կրծում էր հոգիս,*
*Գիշերը քնել չը կրցայ երբէք։*

*Միւս առաւօտ, կէսօրւան մօտիկ*
*Ես դեռ չը հասած Հաբեթի տանը,*
*Աֆիոնի հոտը փչում էր սաստիկ,*
*Մարդ շատ հեռուից էր զգում այդ բանը։*

*Ներս մտայ, տեսայ մէջտեղ մի մանղալ,*
*Շուրջը նրա զոյգ ժանդարմի ուրուն,*
*Գիւղը քահանան մի հինգ աղսախկալ*
*Թաղիքի վրայ նստած այն հեռուն։*

*Իմ գալը նրանց դուր չեկաւ կարծես,*
*Միայն հայերն իմ ողջոյնը առին,*
*Արհամարհանքով ես անցայ վերև,*
*Նստեցի նրանց մանղալի կողքին։*

*Նրանք նայեցին երեսիս խէթ-խէթ,*
*Եւ զգացին, որ իրենց դարձայ ցաւ,*
*Վերջացաւ իրենց յախռելու ժամկէտ,*
*Պիտ գնան կորեն, իրենց ժամն անցաւ։*

*Հայերի պատւելն ինձ՝ ներս մտնելուն,*
*Կեղեքողներին պատճառեց զարմանք,*
*Իսկ իրենց կողմից ոչ խօսք, ոչ ժպտուն,*
*Ինքս խօսեցի, տալով կշտամբանք։*

-Այս խեղճ մարդու տուն դուք ի՞նչ գործ ունէք,
Ի՞նչ մեղք է գործել արդեօք այս մարդը,
Մի շաբաթ է այս մարդուն տանջում էք,
Ի՞նչ էք խեղճ մարդուն նետել Թակարդը:

-Ինչո՞ւ էք հարցնում, դուք ինչն էք սրա.-
Ասաց նրանցից մէկը կատաղած,
-Այս մարդը անխիղճ մարդ է աշկարայ,
Սա չունի օրէնք, սա չունի Աստուած:

Այս անփոյթ մարդը իր ծառստանից
Ծառեր է կտրել ծախել ուրիշին,
Հաշւի չի առել, որ այդ ծառերից
Կալւածատէրն էլ ունի իր բաժին:

Օ՛, որքա՞ն զարմանք, որքա՞ն արտառոց,
Իրենք յօշոտող զազրելի գազան,
Խօսում են խղճից, խօսում Աստծուց,
Ու ծծում արիւն տզրուկի նման:

-Խիղճ ու Աստըծուց ինչք՞ւ էք խօսում,
Երբ դուք չգիտէք ինչեր են դրանք,
Ոչինչ չկայ այս խեղճ աղքատ տնում,
Բացի խեղճութիւն, կարօտ ու զրկանք:

Այս մէկ շբաթը դուք հասկանում էք,
Թէ ո՞նց է անցել այս խեղճի կեանքը,
Դուք հազար անգամ նրան մորթել էք,
Փշրել էք նրա կեանքի առանցքը:

Այս մէկ շաբաթը դուք կերել էք այն,
Որ սա պիտ ուտէր մի ամբողջ տարի,
Սա այժմ ո՞ւր գնայ, ասէք այն միայն,
Որ ապահովի իր հացը գարի:

*Կալւածատիրոջ գործակալը չար,*
*Ջուր է գանգատւել այս մարդու դիմաց,*
*Գիւղիցը մի ոք լոկ թշնամաբար,*
*Այդ սուտով մարդուն մատնել է ձեռաց:*

*Այս մարդը բնաւ ինձ չէ ազգական,*
*Մի տնաւորն էլ նա է այս գիւղի,*
*Խղճուկ կեանք ունի շատերի նման,*
*Կեղեքումներից անթիւ, անտեղի:*

*Բաւ է կարծում եմ, այս տունը թողէք,*
*Դրամ էք պահանջում դուք այս խեղճ մարդից,*
*Էլ արիւն չունի, դեռ էլի ծծէք,*
*Դրամն ես կտամ, առէք ինձանից:*

*Մայրաքաղաքից ես նոր եմ եկել,*
*Սա ի՞նչ օրէնք է, ես չեմ հասկանում,*
*Մի սուտ բողոքից ժանդարմն անարգել,*
*Գնայ ու անի սիրտն է ուզում:*

*Կալւածատէրը ու իր մարդը չար,*
*Ինչո՞ւ են լարում թակարդներ պէս-պէս,*
*Պետական մարդիկ զուր են անդադար,*
*Հաց աշխատողներին քայքայում այսպէս:*

*Եկել եմ հովոց քիչ հանգստանալ,*
*Բայց ետ կըդառնամ, էլ չունեմ կարիք,*
*Լաւ է քաղաքի տօթում նեղանալ,*
*Քան գիւղում դիտել բիւր ցաւ ու չարիք:*

*Մեզ հաց տւողը հաճոյքներից զուրկ,*
*Վարում է շատ պարզ, տաղտկալի մի կեանք,*
*Խի՞ղճ է այդ կեանքն էլ դարձնել այսպէս սուգ,*
*Կորզել այսպիսի աւար ու տուգանք:*

Գեղջուկը համայն չարին ենթակայ,
Ճնշւում, կեղեքւում՝ կրում է բիւր ցաւ,
Նրա կեանքը միշտ եղած տակն ու վրայ,
Թէկուզ պատճառը մատնութիւն ու դաւ:

Եկէք ստրուկի աչքով չը նայենք,
Սուրբ ու պաշտելի՝ տանջւող գիւղացուն,
Թող լաւ ըմբռնենք և ուղիղ դատենք,
Որ նրանք են կեանք տալիս բոլորին:

Լռութիւն տիրեց, երբ լռեցի ես,
Ժանդարմի մէկը ելաւ դուրս գնաց,
Յանկաց, որ ես էլ դուրս գնամ ասես,
Երբ դուրս գնացի, նա խօսեց յուզւած:

-Ճնշումն այս երկրի ովկիան է անտւստ,
Մենք այդ ովկիանի կաթիլն ենք միայն,
Միթէ՞ մեզանով վերջ կը գտնի զուտ,
Այս երկրի ժնշում, կեղեքումն համայն:

Ճիշտ է ասածդ, վկայում եմ ես,
Ոչ ոք այս երկրում ուղիղ չի քայլում,
Մեր մեծն երբ մի տեղ առաքում է մեզ,
Առաջ իր բաժին սակն է որոշում:

Հաշւի չի առնում դիմացինն ով է,
Ունևոր է նա, թէ հացի կարօտ,
Մեզնից իր սակն է պահանջում զոռով,
Հէնց դառնանք թէ չէ, կը կանչի իր մօտ:

Հիմա ես կառնեմ ընկերիս, կերթանք,
Ու այս խեղճ մարդուն կազատենք իսպառ,
Մեծ բաժինը մեզանից կտանք,
Ես շատ ազդւեցի քո խօսքից արդար:

*Մեծի բաժինն էլ վճարուեց նրանց,*
*Հաբեթն ազատուեց, գնացին նրանք,*
*Բայց շինականին տարիներ մնաց,*
*Ծնշում, կեղեքում, զօռ ու տառապանք։*

## Թալանուածը

*Յովակիմը մի ծերունի դալկացած,*
*Ցաւով մաշեց իր դժնդակ կեանքը սեւ,*
*Ապրած գիւղում տքնեց, ճգնեց ու տոկաց,*
*Տաղտուկ կեանքում չտեսաւ օր ու արեւ։*

*Յովակիմը երբ դեռ փոքր էր, մի գիշեր,*
*Իրենց տունը մտաւ զինուած մի խմբակ…*
*Թալանն իրենց նա սոսկումով յիշում էր,*
*Ամբողջ տարաւ զինուած խումբն այն յելուզակ։*

*Կեանքը տւին թշուառութեան գիրկն ընկած,*
*Խեղճ տղայի հայր ու մայրը անճարակ,*
*Յովակիմը՝ խեղճ պատանին որբացած,*
*Հօտաղ դարձաւ սրան-նրան շարունակ։*

*Յովակիմը այնուհետեւ մեծացաւ,*
*Ամուսնացաւ, ունեցաւ կին երեխայ,*
*Բայց իր մէջքը էլ նա շտկել չկրցաւ,*
*Կարօտանքով տարաւ կեանքը իր դժնեայ։*

## Դատաստան

*Սուզուած, խորտակուած ովկիան մտքերում,*
*Խորհում եմ վճիռն Ամենակալի,*
*Յուզւում, մորմոքւում, տանջւում եմ անվերջ,*
*Գտնում եմ անգութ կամքը Բարձրեալի։*

*Այդ ո՞վ է ասել, որ մարդը գերի,*
*Խարխափի գրկումն անօրէն կեանքի,*
*Զրկուած, տրորուած, լլկուած ամենուր,*
*Կըրի միշտ բեռը մեծ տառապանքի։*

*Փողոցի մայթով մարդն ընթանալիս,*
*Մինչև երբ տեսնի մերկ մուրացկաններ,*
*Անյոյս, յոգնաբեկ, հիւանդ ու տժգոյն,*
*Պատի տակ կծկուած, խնդրեն շահիներ։*

*Ողորմելի, մերկ թշւառները այդ,*
*Տւել են իրենց կեանքն ու ունեցուած*
*Ենթարկւել են բիւր հազար բռնութեան,*
*Ու հազիւ ընկել պատի տակ հիւծուած։*

*Շա՜տ մեծ է, երկար, այդ ցաւոտ մարդկանց,*
*Կեանքի պատմութիւն, բնաւ այդ մասին,*
*Անարդարութեան լպիրշ, կեղեքիչ,*
*Չար ձեռքն է նրանց յանձնել այդ օրին։*

*Անթիւ, անհամար ստրուկներ կան խեղճ,*
*Որոնք ենթարկուած չար բախտին դաժան,*
*Կարօտ չոր հացի մանրը փշրանքին,*
*Շրջում են մոլոր, մերկ, անապաստան։*

*Ու մինչ աշխարհը կատարեալ դժոխք,*
*Մահ կեանքը նրանց, որ չունեն տուն-տեղ,*
*Փառաշուք, շքեղ ապարանքներում,*
*Ապրում են ոմանք, քնքուշ, փառահեղ։*

*«Աստծոյ կամքն է սա», ասում են նրանք,*
*Բիւր բարիքներում սուզւած ու տարւած,*
*Փառաշուք, փարթամ, շւայտ, ցոփ կեանքում,*
*Հանուր մարդկութեանն իսպառ մոռացած։*

*Բայց աւա՜ղ, աւա՜ղ սուտ է այդ ամէն,*
*Ես չեմ հաւատում այդ խօսքը տխմար,*
*Աստւած է ասե՞լ մոռանալ ամէն բան,*
*Ոճիրներ գործել օրէնը հազար։*

*Աստւած է ասե՞լ, որ մարդը հրէշ,*
*Ուրանայ խիղճը, քար դարձնէ հոգին,*
*Ճնշի, կեղեքի, իրաւազրկէ,*
*Սև օրին յանձնի թոյլ ու կեղճ մէկին։*

*Կամ յափշտակւած դրամներով այդ,*
*Կառուցի բուրգեր շքեղ, երկնահաս,*
*Շւայտ կեանք վարի արքայանման,*
*Մարդ կոչեցեալին դարձած պատուհաս։*

*Օ՜, ոչ մի Աստւած այդպէս չի ասել,*
*Չար բելիարի կամքն է միայն դա,*
*Սատանայինն է դատարանն այդ չար*
*Անշուշտ, Աստծուն քնացրել է նա։*

*Ու ինչէ մնում ճնշւած մարդկութեան,*
*Փշրել, խորտակել դատաստանն այդ չար,*
*Բացել, արձակել կապանքներն ամէն,*
*Պատռել շէյթանի սիրտը չար ու քար։*

*Պիտ ոչնչանայ, խորտակւի խպառ,*
*Չար դատաստանը նենք բելիարի,*
*Պիտ արդարութեան մեծ, լայնատարած,*
*Վրանը փռւի չորս կողմն աշխարհի։*

*Երբ կարողացաւ մարդկութիւնը ողջ,*
*Ստեղծել խաղաղ, շինարար մի դար,*
*Մտքի անարգել վեհ թռիչքի հետ,*
*Երբ մարդը բռնեց ընթացք օգտակար։*

*Երբ ողջն անխտիր ապրեն անարգել,*
*Բնութեան բարիքից բաժին ստանան,*
*Այն պահին Աստուած քնից կը զարթնի,*
*Կը լինի նրա արդար դատաստան։*

## Անէծք այդ ժամին

*Ուրախացել է իմ մայրը մի օր,*
*Յղի ժամանակ*
*Որ ինքը պիտի մայր դառնայ մի օր,*
*Ունենայ զաւակ,*
*Ու մի օր էլ երբ աշխարհ եմ եկել,*
*Հրճւել է ուժգին։*
*Պարուրելով իր տղայ մանկանը,-*
*Անէծք այդ ժամին։*

*Անշուշտ ծնողքս մի օր կողք-կողքի,*
*Իրենց գիրկն առած,*
*Իրենց մանկանն են սիրել, գուրգուրել,*
*Իմ սիրով տարւած։*
*Մէկը միւսի գրկից խլելով*
*Հրճւել է ուժգին,*
*Մոռացման տալով ծով ցաւերն իրենց,-*
*Անէծք այդ ժամին։*

Երբ լեզուս բացւել, ու կակազելով,
Բառ եմ թոթովել,
Զորեքթաթ տալով, ընկնել-կանգնելով,
Առաջ եմ շարժւել,
Ամեն շարժումս հրաշք է թւացել,
Ծնողացս անգին,
Բախտաւոր մէկն են իրենց համարել,-
Անէծք այդ ժամին։

Գրքերս առած և ուրախ՝ դպրոց
Գնացի մի օր,
Սիրեցի գիրքը և սովորեցի
Դասեր նորանոր,
Թէ ծնողներս և թէ դասատուս
Սրտանց խնդացին,
Տարւել էին ողջն իմ ապագայով.-
Անէծք այդ ժամին։

Մի օր էլ դարձայ առոյգ ու կայտառ
Մի երիտասարդ,
Ինձ պաշարեցին գեղեցիկ խոհեր,
Ու ցնորքներ բարդ,
Ազգիս նւիրւել ձգտեցի սրտանց
Ու թափով ուժգին,
Կպայ ազգօգուտ կրթական գործին,-
Անէծք այդ ժամին;

Բայց փուշ-տատասկը բռնեց իմ ճամբան,
Տառապեց հոգիս,
Վէրքեր ստացայ ու համարւեցի
Չարագործն ազգիս,
Մատնողը հայ էր ու արժանացած
Դօկտոր տիտղոսին,

*Մաքուր հայ գործչի համբաւ ստացած,-*
*Անէծք այդ ժամին։*

*Դժբախտ մարդկութեան ցաւերն այնուհետ*
*Դիտեցի մէկ-մէկ,*
*Տոչորուած սրտիս ամեն օր բացեց,*
*Մի նոր դաժան վէրք,*
*Անզօր ուժով իմ օգնել կամեցայ*
*Ցեղիս կաթոգին,*
*Բայց միշտ կաշկանդեց բռնութեան ձեռքն ինձ,-*
*Անէծք այդ ժամին։*

*Ամենուր տեսայ ստրկական կեանք,*
*Բռնութիւն, տանջանք,*
*Զրկանք, հալածանք, արտասուք, կապանք,*
*Վիշտ ու տառապանք,*
*Ուժեղի սուրը ճեղքեց, խողխողեց*
*Խեղճին, տկարին*
*Արդարութեան շուքն անգամ չը տեսայ,-*
*Անէծքայդ ժամին։*

## Անյայտ մահը

*Մայրաքաղաքի լայն խճուղու, լայն մայթով մի օր,*
*Ծանր յոյզերիս հետ ընթանում էի յոյժ մտամոլոր,*
*Մեծ անց ու դարձ էր տիրում այդ մայթում, աղմուկ ու ժխոր,*
*Ոմանք շատ ուրախ, ոմանք մտազբաղ, ոմանք էլ տխուր։*

*Մայթին կից առւով տիղմախառն հոտած սև ջուր էր անցնում,*
*Մի մարդ էլ պառկած փորի վրայ դէմքը խրած այդ ջրում,*
*Ցաւն ի՞նչ էր նրա, ինչո՞ւ էր փռւել յատակին կեղտոտ,*
*Հնարաւոր չէր այդ ջուրը խմել, սև ջուրը աղտոտ։*

*Անցորդ-դարձողը չար ու քար խղճով չէր նայում բնաւ,*
*Թէ խեղճ էակն այդ ինչո՞ւ էր փռւել, կամ ունէր ի՞նչ ցաւ,*
*Ա՜խ Աստուած, ինչո՞ւ մարդն ստեղծւել է այդքան քարասիրտ,*
*Կենդանին հանդէպ իր ցեղակցին չէ այդքան կոշտ ու բիրտ։*

*Գամւեցի տեղս, խորհեցիի օգնել այդ խեղճ էակին,*
*Տեսնել ցաւն ի՞նչ է, ինչո՞ւ է պառկել կեղտոտ յատակին,*
*Բայց ուշ էր արդէն, երբ որ գլուխը հանեցի ջրից,*
*Խեղդւել էր… դէմքը ջրում խրւելուց, զրկւելով օդից։*

*Այդ ցաւոտ մահւան պատճառը ի՞նչ էր, անյայտ էր…արդեօ՞ք*
*Քաղաքին օտար գիւղից նոր եկած ընկնաւոր մի ոք,*
*Որ երկար շրջել, սաստիկ յոգնել էր, ընկել ուժասպառ,*
*Թէ քաղց ու սովից ուշաթափւել էր ու հանգել իսպառ։*

## Ճշմարտութիւնը ես ո՞ւր որոնեմ

*Ճշմարտութիւնը ես ո՞ւր որոնեմ*
*Դիմեմ դէպի ո՞ւր,*
*Սուտ է ու խաբկանք, կեղծիք ու պատրանք,*
*Աշխարհն ընհանուր.*
*Ինչո՞ւ է մարդը ընտրում միշտ հուրին,*
*Ընթանում միշտ շեղ,*
*Իր թիւր ընթացքով, քանդող բնոյթով*
*Քանդում ամեն տեղ:*

*Նողկալի ոխը, զազրելի քէնը*
*Թո՛ղ մարդ ու որդի,*
*Մինչև ե՞րբ մարդը գերի դառնայ բիրտ*
*Կեղծիքի, սրտի.*
*Ինրո՞ւ չարիքը մարդն ընտրի յենակ,*
*Պատրանքը վահան.*
*Դժնդակ ճամբով քարշ տայ ու տանի*
*Իր կեանքը ունայն:*

*Ինչն է ստիպում խիղճը քար դարձնել,*
*Եւ ատել բարին,*
*Միշտ չար մտածել ու դառնալ հլու*
*Զարութեան գերին,*
*Հեզ գառ ձևանալ, գառի մորթ հագնել,*
*Խաբել բոլորին,*
*Գայլի պիղծ շնչով, պատռող ժանիքով*
*Պատռել բոլորին:*

## Անկարեկցութիւն

*Քաղաքի մայթով անցնելիս մի օր,*
*Տեսայ մերկ գետնին փռւել է մի մարդ,*
*Թշւառականն այդ քուն էր մտել խոր,*
*Հողոտ գետնի վրայ, անփույթ ու հանդարտ։*

*Անցնող դարձողի փոյթը չէր բնաւ,*
*Որ գետնին փռւած էակն այդ թշւառ,*
*Մի որդ էր անպէտք, թէ մի մարդ իրաւ,*
*Կամ ուշաթափւած մի պանդուխտ անճար։*

*Կանգ առայ ասի քնած այդ մարդուն,*
*-Թէ իրօք խե՞նթ ես, գնա՛ խենթանոց,*
*Իսկ թէ կեղեքւել ու չունես տուն-տեղ,*
*Վեր կաց բողոքիր, ցաւդ սա այլոց։*

*Զրկւած, կեղեքւած շատ կան ամենուր,*
*Գնա՛, որոնի՛ր, միացի՛ր նրանց,*
*Նրանք էլ անշուշտ քո պէս խեղճ, մոլոր,*
*Լոկ իրաւունքն են պահանջում իրենց։*

*Ընկնել պառկելով փողոցում անհոգ,*
*Մարդ արարածը չի հասել մի տեղ,*
*Երբ արիւն ծծող տզրուկները լոկ*
*Արիւն են ծծում, տուզում ամեն տեղ։*

*Զրկւած, զրկւածը մահով կը փրկւի,*
*Նրա կեանքը լոկ դժողք է խսպառ.*
*Բայց անմահ է երբ պայքարում զոհւի,*
*Ու կեանքը տայ գէթ ուրիշի համար։*

## Շինական ախպէր

*Ծով կարիքներում սուզուել, խորտակուել,*
*Ճնշւում ես անվերջ, շինական ախպէր,*
*Անթիւ հոգսերից թուլացել, մաշուել,*
*Աշխարհում դու խեղճ, անպաշտպան, անտէր։*

*Գարուն թէ ամառ, աշուն թէ ձմեռ,*
*Տանջւում ես անվերջ ոսկրացած մարմնով,*
*Յոյս ու հաւատը մարմնումդ անմեռ,*
*Հաց ես վաստակում սուրբ կեանքիդ գնով։*

*Հէնց ձիւնն հալւում է, բացւում է գարուն,*
*Սկսւում են քո գործերը դաժան,*
*Մէկը միւսին յաջորդում իսկոյն,*
*Ծառ-տունկ մշակել, վար, ջուր, առուհան։*

*Ամռան հրավառ, տօթակէզ օրին,*
*Վառ առաւօտից մինչև ուշ գիշեր,*
*Վառ արևի տակ, ձեռքդ գերանդին,*
*Քաղում ես ցորեն, ոսպ, գարի, սիսեռ։*

*Օ՜, դիտել եմ երբ կէսօրին դաշտում,*
*Ճաշի ես նստում դու գործից յոգնած,*
*Քաղցր ախորժակով պարզ ճաշդ ուտում,*
*Ապա քնում ես հողի վրայ բաց։*

*Աշնան գունաթափ, տխուր օրերին,*
*«Հօ-հօ եզիկ ջան» քո ձայնն է հնչում,*
*Խաղաղ դաշտի մէջ, աշնանացանին,*
*Եզներիդ խնդրում, «Դէհ հօ» ես կանչում։*

*Դու հանգիստ չունես նաև ձմեռը,*
*Ցերեկը տաւար խնամում, ձիւն քերում,*
*Օդումդ նստած ձիգ գիշերները*
*Մաշւած խոփ, արօր, բահդ ես նորոգում։*

*Երկաթէ կամքով կրում ես ընդմիշտ*
*Ծանր ցաւերդ, սիրասուն ախպէր,*
*Շքեղ յոյսերով երազում ես միշտ,*
*Թէ մի օր լինես ազատ կեանքի տէր։*

*Բայց միշտ մնում է յոյսդ անկատար,*
*Ծանրը հարկերը մէջքդ են կոտրում,*
*Քարից դուրս բերած վաստակդ արդար,*
*Անգութ բռնութեամբ խլում են, տանում։*

*Հարուստ մարդկանց տուն, օրն երեք անգամ*
*Սփռոց է բացւում, բիւր բարիքներով,*
*Ուտում են խմում ու չեն հասկանում,*
*Թէ այդ որտեղից, աշխատել է ով։*

*Քաղաքի անթիւ հաճոյքին անտես,*
*Վարում ես անծայր հասարակ մի կեանք,*
*Թէպետ ինքդ զուրկ, սակայն տալիս ես*
*Աշխարհին ապրուստ, հաճոյք ու բերկրանք։*

*Գործի՛ր, սիրելիս, մի յուսահատւիր,*
*Ընթացքդ սուրբ է, գործդ պատւական,*
*Շուտով կը բացւի քեզ նոր լուսաբաց,*
*Ես մօտ եմ տեսնում ժամդ փրկութեան։*

## Մարդը իր կամքով չի եկել աշխարհ

*Մարդը իր կամքով չի եկել աշխարհն այս բիրտ ու դաժան,*
*Ուր միայն ճնշում, կեղծիք ու պատրանք, վէրք ու ախտեր կան,*
*Թէ դու ես ստեղծել, ով Տէր երկնային, ի՞նչ կարիք կար այդ*
*Ստեղծել մի մարդ, ստեղծման օրից ոտքին որոգայթ։*

*Այո, շքեղ է տեսքը բնութեան, լեռները դիւթող,*
*Դաշտերը կանաչ ու ալեծածան արտերը շէնշող,*
*Գետնից դուրս բղխող աղբիւրներն յստակ շքեղ են, սիրուն,*
*Որ ջուր են տալիս մարդուն, արտերին ամառ թէ գարուն։*

*Ծովերն ալեծուփ ու խռովայոյզ տեսք ունեն չքնաղ,*
*Շքեղ են նաև այն պահերում երբ հանդարտ են՝ խաղաղ,*
*Շքեղ են՝ փարթամ, սէգ բլուրները կանաչ, ծաղկազարդ,*
*Գետ ու գետակներ անուշ կարկաչով ու վազքով հպարտ։*

*Շքեղ է նաև երկինքն աստղաբիբ գիշերւայ պահուն,*
*Շուսնի աչծաթեայ գերագոյն շողը շքեղ է, սիրուն.*
*Ու դեռ աշխարհում հըրաշալիքներ շատ կան ամենուր,*
*Իսկ ցաւոտ մարդու կեանքը տառապած թախծոտ է, տխուր։*

*Ցաւ ու տառապանք վիճակւեց միայն ճնշւած մարդկութեան,*
*Խեղճ զրկւածները բնաւ չտեսան բարիքը բնութեան,*
*Կեղեքւած, զրկւած մարդու սև կեանքը մութ է ու խաւար,*
*Միայն տքնելու, սև օր քաշելու նա եկաւ աշխարհ,*

*Այո, սև աշխարհ, կարգերդ են դժխեմ, հզօրը ուժեղ,*
*Տանջանքի բեռը ուսին տանում է խեղճ թոյլը անմեղ...*

## Աշխարհ

*Աշխարհ, աշխարհ, նենգ աշխարհ,*
*Ոչինչ չունես դու արդար,*
*Օրենքներդ չար ու քար,*
*Դու համակ ցաւ ու պայքար։*

*Աշխարհ քեզնից կուշտ եմ ես,*
*Աշխարհ  չեմ սիրում ես քեզ,*
*Լաւդ, վատըդ ամբողջ քեզ,*
*Աչք չունեմ քո վրայ ես։*

*Կուշտ եմ քեզնից ով աշխարհ,*
*Դու նենգ, դու դաւ, դու բիրտ, չար,*
*Ես գերի եմ, դու մի բանտ,*
*Բաւ է տաս ցաւ ու զարզանդ։*

*Ո՞ւր էր լաւդ, բիրտ աշխարհ,*
*Դու միշտ եղար անարդար,*
*Դու հզօրին միշտ պաշտպան,*
*Խեղճին տանող կորստեան։*

# Պօէմաներ

«Խրատական»

## Հիւրասէր հովիւը

### Ա

*Մի արևելեան երկրի Թագաւոր,*
*Իր շքախմբով որսի գնաց մի օր,*
*Մայրաքաղաքից անցան շատ հեռու,*
*Ցրւեցին դաշտում, կորցրին իրարու։*
*Ու Թագաւորը կտրւեց խմբից,*
*Իր մօտ չգտաւ ոչ մի ուղեկից…*
*Ողջ օրը շրջեց, ուղին կորցրած,*
*Երբ օրը մթնեց, մնաց շւարած։*
*Շատ գնաց թէ քիչ, հասաւ մի գիւղի,*
*Ցանկացաւ մէկի դարպասը բաղխի,*
*Գիշերը մնաց, ննջի այդ գիւղում,*
*Ու վաղը մեկնի ուր սիրտն է ուզում։*
*Այսպէս նա մի տան դարպասը բաղխեց,*
*Դուռը այն բացւեց, հիւրը ներս կանչւեց,*
*Տանտէրը սիրով ողջունեց նրան,*
*Ու չգիտէր թէ Թագաւորն է այն։*

### Բ

*-Տեղ կտաս քո տուն այս գիշեր մնամ,*
*Ու վաղը ճամբս շուտ բռնեմ գնամ.-*
*Ասաց Թագաւորն այն մարդուն խղճուկ,*
*Երբ տեսաւ նրա վիճակը անձուկ։*

*Տանտէրը գլուխ խոնարհեց նրան,*
*Եւ հիւրին այսպէս տւեց պատասխան.*
*-Ջուր ես ինձանից իրաւունք հարցնում,*
*Այս տունը աղքատ քեզ է պատկանում։*

*Ջիու սանձն առաւ, քաշեց գոմ նրան,*
*Թամբը վերցրեց, տւեց կեր դարման,*
*Կինն էլ իր հերթին՝ յարգով չափազանց.*
*Հիւրին հրաւիրեց խրճիթը իրենց:*
*Ապա երկուսով՝ նրանք մարդ ու կին,*
*Հիւրին յարգելու միջոց ձեռք առին.*
*Կարեւոր չէ այն թէ հիւրը ով է:*
*Գիւղում կյարգւէ, ով կուզի լինէ:*
*Գիւղացու դուռը բաց է ամեն տեղ,*
*Ով որ ցանկանայ կը մտնէ այնտեղ,*
*Եւ հարցնող չկայ թէ աղքատ է նա,*
*Ով մտնէ իր տուն պատիւ կստանայ,*
*Ու ոչ թէ մի օր, այլ ամիս, տարի,*
*Նրան յարգանքով կը կառավարի,*
*Պատառը կանի հիւրին ուտելիք,*
*Կը պատւի այնպէս, որ լինի կարիք:*
*Հաշւի չի առնի, որ քաղաքացին,*
*Տեղ չի տայ բնաւ գիւղացի մէկին.*
*Ու միշտ գիւղացին իր մէջ լաւ զգաց,*
*Որ ինքը գործով երբ քաղաք գնաց,*
*Քաղաքացին միշտ թեքեց իր երես,*
*Եւ բնաւ չասաց ճանաչում եմ քեզ:*
*Օտարականը թէկուզ ով լինի,*
*Եթէ փողոցում ընկնի ու մեռնի,*
*Ոչ ոք չի խղճայ, ձեռքը չի բռնի:*
*Ոչ մէկը նրան չի նայի օգնի:*
*Բնաւ չի եղել մի օտարական*
*Հէնց թէկուզ մի օր քաղաքացու տան*
*Օթեւան գտնէ, հիւր դառնայ նրան,*
*Գէթ մի օր այնտեղ գտնի ապաստան,*

*Թագաւորն երբ խրճիթում նստեց,*
*Սաստիկ ծարաւ էր, առաջ ջուր խնդրեց.*

*Բայց հիւրընկալը ջրի փոխարէն*
*Մի գաւաթ թարմ կաթ մատուցեց իրեն։*
*Թագաւորն յոգնած առաւ գաւառը,*
*Մեծ ախորժակով խմեց այն կաթը,*
*Ու այնքան էր նա ծարաւել, քաղցել,*
*Որ կեանքում այդպէս համ չէր զգացել։*
*Գիւղացին ուզեց զոհ գնալ հիւրին,*
*Ու արաւ նրան իրեն կարելին…*
*Ընթրիքին հիւրին բերին խորոված,*
*Որ թագաւորի բանն էր շատ սիրած։*
*Թագաւորն այստեղ զգաց նաև այն*
*Որ միսը թարմ է, նոր մորթւած միայն,*
*Բայց և զարմացաւ, խեղճը որտեղէն,*
*Այդ միսը ճարեց ու բերեց իրեն։*

*Քնելուց հիւրը նորից խնդրեց ջուր,*
*Բայց հիւրընկալը արդօ՞ք գնար ո՞ւր,*
*Որ կարողանար քաղցըր ջուր գտնէր,*
*Այդ գիւղի ջուրը աղի ո՜նց խմէր,*
*Էլ կաթ չունէր նա այդ ուշ ժամին*
*Ում դուռը գնար, ողջ քնել էին…*
*Բայց մարդը հանգիստ չէր կարող նստել,*
*Ու տանը հիւրին պապակւած թողնել։*
*Մտածեց ու շուտ գտաւ մի ճամբայ,*
*Իրենց մօտ սարում մի քաղցր աղբիւր կայ,*
*Սափորը առնի, վազէվազ գնայ,*
*Այն ջրից բերի ու իր հիւրին տայ,*
*Այդպէս էլ արաւ…*

*-Ջուրդ համեղ է, պաղ ու կենարար,*
*Բայց ասա, ինչո՞ւ այդքան ուշացար,*
*Կամ ինչո՞ւ այդպէս հևում, տնքում ես,*
*Ասա՛, խնդրում եմ, ինչ պատահեց քեզ.*

Ասա՛, մի քաշվի՛ր, ինձ ուղիղն ասա՛,
Այս գիշեր ես ձեզ ծանըր բեռ դարձայ,
Ու ների՛ր եղբայր, ների՛ր խնդրում եմ
Ձեր արածն երբէք ես մոռացող չեմ։
Ասաց Թագաւորն իր հիւրընկալին,
Սպասելով իր ճիշտ պատասխանին։

-Տէր իմ խնդրում եմ ինձ մի հարւածիր,
Մեր տունն այս գիշեր դու լոյս բերեցիր,
Երբէք մի տխրի՛ր, անուշ մտի՛ր քուն,
Մեծ բերկրանք բերիր դու քեզ հետ մեր տուն։
Այս գիւղի ջուրը աղի է, անհամ,
Քո բերին բնաւ չպիտի տար համ․
Բայց չէի կարող ես հանգիստ նստել
Եւ հիւրին տանը պապակւած թողնել։
Գիւղին մօտ սարում կայ մի պաղ աղբիւր,
Այդ աղբիւրն ունի միայն քաղցըր ջուր․
Սափորը առայ, վազեցի այնտեղ,
Ու քեզ բերեցի այս ջուրը համեղ։
Քնի՛ր խնդրում եմ ու հանգստացի՛ր,
Ինձ համար բնաւ դու մի մտացի՛ր,
Ես իմ պարտքն եմ կատարել միայն,
Ձեռքիցս ինչ եկել արել եմ հէնց այն․
Ամեն օր քեզ պէս հիւր չեմ ունենայ
Կուզեմ, որ կեանքս քեզ մատաղ դառնայ։

Թագաւորն յետոյ խօսեց նրա հետ,
Տւեց մի քանի հարցեր այնուհետ․
Պարզւեց, որ նա այդ գիւղի հովիւն էր,
Ինչքազուրկ մարդ էր ու ոչինչ չունէր,
Նրա ողջ կայքը մի այծ է եղել,
Կաթը ջրի տեղ հիւրին է տւել,
Իսկ այծը մորթել և հիւրի համար,

*Ընթրիք է սարքել իր հիւրին յարմար:*
*Քնեց Թագաւորն, սակայն ողջ գիշեր*
*Մտքից դուրս չեկաւ հովիւն անձնուէր:*

## Գ.

*Թագաւորն արդէն նստած էր գահին,*
*Բերել էր տուել և հիւրընկալին…*
*Իշխաններն ևս կանչուել էին ողջ,*
*Ովքեր, որ դատել գիտէին առողջ:*
*Ու թագաւորը պատմեց ամեն բան*
*Որսի օրն ինչ որ պատահեց իրեն,*
*Ապա սպասեց, որ տեսնի մի պահ,*
*Ով կը դատէ ճիշտ ու անկողմնապահ,*
*Ու այժմ ինչ անի, որ կարողանայ*
*Հովւի արածի տակը չը մնայ,*
*Կամ ինչպէս արդար հատուցում անի,*
*Որ այն խեղճ մարդուն ճիշտ փոխարինի:*

*-Տէր իմ, կարծում եմ, որ մի այծ գնենք,*
*Ու իր այծի տեղ իրեն նուիրենք,*
*Տւած կը լինենք իր այծը իրեն,*
*Նա չի վնասի,- ասաց մի իշխան:*

*-Տէր, եթէ մի փոքր գումար իրեն տանք,*
*Կստեղծւի իրեն բարեկեցիկ կեանք,*
*Լաւ կապրէ ու քեզ կօրհնէ անդադար.-*
*Միտքը յայտնեց մի ուրիշ նախարար:*

*-Բայց լաւ է քաղաք բերել տայ արքան,*
*Պալատում նրան դարձնէ այգեպան,*
*Այստեղ կունենայ նա կեանք բաւարար,*
*Լաւ կապրէ,- ասաց ուրիշ նախարար:*

-Իսկ ես գտնում եմ, որ մեր մեծ արքան
Մի զոյգ եզ գնի, նուիրէ նրան,
Նա գիւղում կպչէ հողագործութեան,
Ու թողնէ գործը խաշնարածութեան,
Գուցէ այնուհետ գործը լաւ գնայ,
Մի աւելի լաւ ապրուստ ունենայ
Ու նրա կեանքը անցնի բաւարար.
Առաջարկեց մի ուրիշ նախարար։

Այսպէս ամեն մէկն իր խօսքը ասաց.
Ու թագաւորը մնաց զարմացած,
Թէ մարդկութիւնը այսքան նենգ պատիր
Ինչու է դատում չար ու անհարիր.
Մինչև ե՞րբ մարդը թոյլին անտեսէ,
Հզօրին կառչէ ու գերադասէ.
Մինչև ե՞րբ մարդը իր խիղճն անէ քար,
Ու խեղճի հանդէպ լինի անարդար։

-Ոչ ճիշտ չէ բնաւ ձեր խօսքը համայն,
Ողջդ էլ խօսեցիք իմ օգտին միայն.
Թէ ուզեմ անել արդար դատաստան,
Իմ գահն ու թագն եմ նրան պարտական.
Ու եթէ գահըս նրան նուիրեմ,
Դեռ էլի շատ կայ, որ նրան հասնեմ,
Ես մի թագաւոր պիտի տամ նրան,
Իմ ունեցածի մի մասը միայն։
Իսկ առատաձեռն այս մարդն անձնուէր,
Զոհեց այն ինչ, որ աշխարհում ունէր,
Որ հիւրը իր տուն միայն մի գիշեր,
Ուրախ անցկացնէր, տանէր լաւ յուշեր։

Ապա աթոռից իջաւ անխնայ,
Ու հովւին խնդրեց այնտեղ բարձրանայ։

*Սակայն հովիւը բնաւ այդ չարաւ,*
*Այլ թագաւորի ոտքերը ընկաւ,*
*Աղաչեց նրան գահը բարձրանայ,*
*Եւ գահը իրեն արժանի մնայ։*
*Ու ինքը սակայն մեծ գործ չի արել*
*Մարդասիրական պարտքն է կատարել։*

*Թէպէտ այնուհետ թագաւորն երբէք,*
*Հովւին չմոռցաւ արեց շատ բարիք,*
*Ստեղծեց նրան բարեկեցիկ կեանք,*
*Ջքացրեց նրա կարիքն ու զրկանք*
*Սակայն ողջ կեանքում մնաց համոզւած,*
*Որ իրեն երբէք չտւեց Աստւած,*
*Այն զոհող հոգին, որ կարողանար*
*Գիւղացի հովւին լինէր հաւասար,*
*Մի գիշեր իր տուն մնացող հիւրին,*
*Տար ինչ որ ունէր երկրի երեսին։*

## Բարիքը բարիք եա կտայ

### *1*

*Մօթաւաքէլը[1] ունէր մի ծառայ,*
*Նա շատ խելօք էր, ազնիւ, գործունեայ.*
*Անունը Ֆաթհ էր ու Մօթաւաքէլ*
*Վաղուց էր նրան իր որդին կոչել;*
*Ամեն արհեստ ու արւեստ նա գիտէր,*
*Լող սովորելու իղձ ևս ունէր.*
*Ու նա չէր քնում, ցերեկ ու գիշեր,*
*Ջգտում էր գուցէ լողն էլ սովորէր։*

*Մօթաւաքէլը տւեց հրաման,*
*Որ իր մարդիկը թող շուտով գնան,*
*Մի քանի հմուտ լողորդ որոնեն,*
*Առնեն իրեմց հետ ու պալատ բերեն,*
*Որ Ֆաթհին յանձնէր այդ լողորդներին,*
*Տիգրիսում լողալ սովորեցնէին։*
*Լողորդներն եկան, Մօթաւաքէլին*
*Խոստացան անել իրենց կարելին,*
*Ֆաթհին լողալը լաւ սովորեցնեն,*
*Ու լողում նրան վարպետ դարձընեն։*

*Եւ շուտով Ֆաթհը սովորեց լողալ,*
*Ջրի հետ գնալ, ջրի հետ խաղալ,*
*Բայց դեռ ոչ հմուտ, որ կարողանար*
*Ջրի հոսանքի դիմաց ընթանար։*
*Բայց Ֆաթհն շտապեց քիչ մնաց իրեն*
*Դէպ մահը տանէր կորէր յաւիտեան։*

---

[1] - Բաղդադի Աբբասեան տան 10-րդ խալիֆը։

## 2

Եւ ահա մի օր Ֆաթհը մեն-մենակ
Գնաց ու ցատկեց Տիգրիսը անտակ.
Գետի ջուրը շատ վարար էր ուժգին,
Շրջեց, սկսեց տանել խեղճ Ֆաթհին,
Ֆաթհն էլ այնքան հէնց գիտէր լողալ,
Որ կարողանար ջրի հետ գնալ։
Այսպէս լողալով գնաց ջրի հետ,
Մինչև որ տեսքից չքացաւ անհետ...
Երբ ճամբայ կտրեց բաւական երկար,
Մի փոքր ապաստան գտաւ իր համար.
Գետն ընթանալիս խփել էր ուժգին
Իր դէմքը կանգնած լեռանն ահագին,
Մի ոլորապտոյտ ստեղծել ահեղ,
Ու իր ընթացքը թեքել ջուրն այնտեղ։
Ոլորապտույտում ջուրն ուժգին խփել,
Տեղ-տեղ իր դիմաց խորշեր էր բացել.
Ֆաթհը մեծ ջանքով իրեն հասցրեց
Խորշերից մէկում ու այնտեղ նստեց.
Եւ այնպէս խեղճը իր կեանքից զրկուած,
Նայում էր տեսնէր ինչ կանէր Աստուած։

## 3

Մօթաւաքէլը երբ առաւ այդ լուր,
Իր սիրտը ընկաւ սոսկալի մրմուռ,
Կանչեց նա իսկոյն վարժ լողորդներին.
-Գնացէ՛ք,- ասաց- փնտրեցէ՛ք Ֆաթհին
Ամբողջ Տիգրիսը տակն ու վրայ արէ՛ք
Ֆաթհին այնպէս էլ գտէ՛ք ու բերէ՛ք
Ով բերի նրան թէկուզ անկենդան
Հազար դինար ես կբաշխեմ նրան։

Լողորդները հէնց առին հրաման,
Իսկոյն Տիգրիսի ջրի մէջ ընկան.
Տիգրիսն ամեն արին տակն ու վրայ,
Գուցէ գտնէին դիակը նրա.
Ջրում ամեն տեղ գնում էին ներս,
Մերթ սուզւում էին, մերթ գալիս երես:
Այսպէս փնտրեցին նրանք ամեն տեղ,
Մի քանի օրից մէկն հասաւ այնտեղ,
Ուր Ֆաթհին էր խորշում յուսահատ նստած,
Լողորդը ուրախ մօտ գնաց ասաց.
-Է՜, դու հերոս Ֆաթհ, քեզ եմ փնտրում ես
Էլ մի երկնչիր, արդէն փրկւած ես,
Վտանգ այլևս չկայ քեզ համար,
Փրկութեան ժամի դու արժանացար
Հէնց կերթամ, կբերեմ նաւակ.
Կը նստեցնեմ քեզ, կտանեմ քաղաք:

### 4

Լողորդը իսկոյն, դարձաւ վազէվազ
Մօթաւաքէլի մօտ գնաց վռազ,
Ասաց.- Ով արքայ, ինձ ի՞նչ կտաս դուն,
Եթէ կենդանի բերեմ քո որդուն:

Մօթաւաքէլը մնաց զարմացած,
Մտածեց՝ այս ինչ հրաշք է Աստւած:
Զարմանքով նայեց այն լողորդին քաջ,
Ասաց.- Մօտ արի , դէհ արի առաջ
Ասա՜, իրաւ է, թէ ինձ խաբում ես
Բայց թէ կենդանի իմ որդուն բերես,
Կտամ հինգ հազար դինար քեզ կանխիկ,
Որով դու դառնաս ընդմիշտ երջանիկ:
Լողորդը ասաց.- Ֆաթհին գտել եմ,
Նաւակ պիտ տանեմ, նրան շուտ բերեմ:

**5**

*Նաւակը տարաւ լողորդը խկոյն,*
*Ազատեց Ֆաթմին ու ողջ բերեց տուն.*
*Մօթաւաքէլն էլ շատ ուրախացած*
*Տւեց լողորդին գանձն իր խոստացած:*
*Ասաց.- Բերէք շուտ կերակուր ու հաց,*
*Ֆաթմը չափազանց կլինի քաղցած*
*Լրիւ եօթ օր է նա բան չի կերել,*
*Ու զարմանում եմ նա ո՞նց է ապրել:*

*-Տէր իմ քաղցած չեմ, ես կերել եմ հաց,*
*Ինձ ողորմել է մարդասէրն Աստուած.*
*Ամեն օր փայտեայ մի մատուցարան*
*Ջուրը բերում էր, քսան հաց վրան,*
*Ես խորշից ձգւում, ձեռքս երկարում,*
*Երկու երեքը քաշում ու ուտում...*
*Այդ ձևով միայն ապրեցի եօթ օր,*
*Ու կենդանի եմ դեռ մինչև այսօր*
*Ամեն հացի վրա գրւած էր հարկաւ՝*
*Մօհամմէդ էբն օլ Հասան օլ Ասքաւ[1]:*

**6**

*Մօտաւաքէլը արձակեց հրաման՝*
*Մունետիկները թող շուտով գնան,*
*Կանչեն քաղաքում այն մարդն ով է, որ*
*Տիգրիսում հաց է ձգում ամեն օր.*
*Թող գայ ու ասի նպատակն իրեն*
*Որ խալիֆն անէ մեծ բարիք նրան:*

*Միւս առաւօտ մէկ եկաւ, ասաց.*
*-Ով խալիֆ ես եմ քո մարդը ուզած.*
*Մօթաւաքէլը հարցրեց.- Դու ո՞վ ես,*
*Ի՞նչ նշանով դու այդ կհաստատես.*

---

[1] - Մօհամմէդ որդի Հասան օլ Ասքաւի:

*Ջրում հաց ձգելդ է ինչքա՞ն ժամանակ.*
*Ի՞նչ է քո միտքը, ի՞նչ քո նպատակ:*

*-Տէր իմ, եթէ դու ուզում ես նշան,*
*Ամեն հաց ունի կնիք իմ անուան.*
*Սարքում եմ փայտեայ մի մատուցարան,*
*Օրական քսան հաց դարսում եմ վրան,*
*Տանում եմ ձգում Տիգրրիսի ջրում,*
*Մի տարի է, որ այդ գործն եմ անում:*
*Իսկ նպատակս էլ հէնց այն է միայն,*
*Որ ես լսել եմ ասած առակն այն*
*Թէ՝ «Բարիք արա ու ջուրը նետիր,*
*Ցամաքը ետ կտայ քեզ բարիքը իր»:*
*Իղձս է միայն անել իմ բարին,*
*Բարի գործելու չգիտեմ ուղին…*
*Հէնց այդ է գալիս ձեռքիցս միայն,*
*Այն , որ կարող եմ՝ անում եմ հէնց այն,*
*Նայում եմ տեսնեմ ինչ արդիւնք կտայ,*
*Ճիշտ է՞ բարիքը՝ բարիք ետ կտայ:*

*-Այո, շատ ճիշտ է խօսքն այդ զօրաւոր,*
*Խրախուսեց նրան խալիֆը հզօր,*
*Արած բարիքը թէկուզ նետես ջուր,*
*Բարիք ետ կտայ, չի անցնի իզուր…*
*Քո սուրբ արարքն է պատճառ դարձել, որ*
*Իմ որդին ջրում ապրել է եօթ օր:*
*Մի քանի գիւղեր կը նւիրեմ քեզ,*
*Որ ամեն տեղ քո բարիքը անես…*
*Սերնդից սերունդ դու վայելիր այն*
*Եւ այլոց դարձիր բարեգործ միայն:*
*Մարդն ուրախացած տիրեց այդ կալւած…*
*Բայց և ընդունեց, որ ճիշտ է ասւած,*
*Թէ՝ «Բարիքն արած թէկուզ նետես ջուր,*
*Բարիք ետ կտայ, չի անցնի իզուր»:*

## Գիտուն ուսուցիչը

### *1*

*Կար մի թագաւոր, հզօր ու արդար,*
*Բանիմաց գիտուն, փորձւած, շինարար,*
*Նա ունէր միայն մի տղայ զաւակ,*
*Տղան իր խելքով ունէր մեծ հռչակ:*
*Ու թագաւորը տալիս է հրաման.*
*Որ իր մարդիկ վեր կենան գնան,*
*Գտնեն մի քանի մեծ գիտնականներ,*
*Որ արքան որդու ուսուցիչն ընտրէր:*

*Գալիս են պալատ իր ուզած մարդիկ՝*
*Մեծ գիտնականներ, խելօք, ազդեցիկ...*
*Հարցեր է տալիս ստուգում նրանց*
*Արքան, որ տեսնէ որն է գերազանց.*
*Նրանցից մէկին ընտրում է արքան,*
*Նրան կարծում է ողջից գիտնական:*

*-Դու,-ասում է-պիտ որդուս ուսուցես*
*Ամեն գիտութիւն, ինչ որ դու գիտես,*
*Թագաւորական ուսմունքներն ամեն*
*Պիտ սովորեցնես անկեղծ դու իրեն;*
*Նա պիտ սովորէ իշխել իր երկրին,*
*Ու լաւ խնամել երկրագործներին*
*Նա պիտ սովորէ գանձը ոնց պահել,*
*Իր պետութեանը ոնց կառավարել.*
*Սովորէ պահել օրէնքները հին.*
*Սիրէ ու յարգէ իր ժողովրդին.*
*Դատողութիւնը իր լինի արդար,*
*Բնաւ չունենայ ընթացք անարդար...*

Թէ ուրիշ երկրից ճնշում գործ դնեն.
Նա կարողանայ պաշտպանել իրեն:
Նա աչք չունենայ ուրիշի երկրին,
Բայց իր երկիրն էլ չտայ ուրիշին.
Նա պիտ սովորէ կանոն ռազմական
Որ թշնամու դէմ լինի յաղթական.
Ու երբ ուզածս դու լաւ կատարես,
Իմացիր, որ լաւ կը վարձատրուեց:

Ուսուցիչը երբ լսեց արքային,
Յանձն առաւ գործը կատարել տեղին...
Իր սանին կրթեց այնպէս որ կարգն էր,
Ինց թագաւորի կամք ու փափագն էր:
Տանջուեց, չարչարուեց ուսուցիչն երկար
Թագաժառանգին կրթելու համար,
Մինչև այն ժամը, որ զգաց արդէն,
Սովորել է նա գիտութիւն ամեն,
Թէ թագաւորին ինչեր են կարիք,
Ինչպէս կատարէ իր երկրին բարիք:

**2**

Ու թագաւորին եկան յայտնեցին
Թագաժառանգի կրթութեան մասին:
Արքան հրամայեց, որ վաղը և եթ.
Պալատ գայ որդու դաստիարակ վարպետ,
Թագաժառանգն էլ թող ներկայ լինի,
Որ ցոյց տայ թէ ինչ կրթութիւն ունի:
Մեծ ու փոքրերը պալատի ամեն.
Նրա շնորհքը պիտ տեսնեն, դիտեն.
Ցոյց տայ, որ գիտէ դիմագիտութիւն,
Լաւ ու վատ զատել, հոգեբանութիւն:

*Երբ վարպետն առաւ հրովարտակն այն,*
*Ժամանակ խնդրեց երեք օր միայն…*
*Խնդրանքը նրա ընդունեց արքան,*
*Տւեց երեք օր ժամանակ նրան:*

*Առաջին օրը, վարպետ դասատուն,*
*Ձի նստեց իր հետ իր սանը գիտուն,*
*Որ գնան շուրջը քաղաքի շրջեն:*
*Երբ կտրւեցին քաղաքից արդէն,*
*Թագաժառանգին ձիուց իջեցրեց,*
*Նրան հետիոտն իր առաջ ձգեց,*
*Մղոններ քշեց արագ իր ձիուն,*
*Վազեցընելով արքայի որդուն:*
*Արքայազնը նուրբ տառապեց, յոգնեց,*
*Մինչև տուն դարձան և օրը մթնեց:*

*Վարպետն հեռատես երկրորդ առաւօտ,*
*Եկաւ դպրոցը աշակերտի մօտ.*
*Ու հրամայեց ոտքի կանգնի նա.*
*Ամբողջ ցերեկը նա կանգնած մնայ:*
*Նուրբ ապրած տղան այն թագաւորի,*
*Տանջւեց այն օրն էլ ինչպէս մի գերի:*

*Ահա հասաւ և երրորդ օրը չար,*
*Թագաժառանգի չարչարման համար:*
*Ուսուցիչն եկաւ դպրոցը այդ օր,*
*Ու ներկաներին դուրս արաւ բոլոր:*
*Արքայի որդու ձեռ-ոտը կապեց,*
*Հարիւրից աւել նրան փայտ խփեց.*
*Ծանր հարւածներից տղայի մարմին,*
*Խիստ վիրաւորւեց հէնց այդ նոյն ժամին…*
*Ու նրան այդպէս թողնելով կապւած*
*Փախաւ ու անյայտ մի կողմը գնաց:*

*Երբ մարդիկ եկան, տեսան արարքն այդ,*
*Բացեցին նրա կապն ու որոգայթ,*
*Ապա այդ լուրը տարան արքային,*
*Արքան պատիրեց բերել տղային:*
*Երբ սկսեցին տղային քննել,*
*Տեսան որ գիտէ կարծւածից աւել...*
*Թագաւորն ասաց.-Պիտ խոստովանել,*
*Որ ուսուցիչը ոչինչ չի խնայել.*
*Ծգնել է իրօք այդ մարդն անձնազոհ,*
*Նրա լաւ գործից ես գոհ եմ, շատ գոհ,*
*Ուսում է տւել նա բազմատեսակ,*
*Իրեն արել է որդուս նահատակ:*
*Սակայն յայտնի չէ ինչու է տանջել*
*Վերջում իմ որդուն ու անյայտացել...*
*Գնացէ՛ք, գտէ՛ք, ուր էլ որ լինի,*
*Այս հանելուկը գայ մեկնաբանի:*

## *3*

*Հրահանգն արքայի մարդիկ երբ առան,*
*Իսկոյն ուսուցչին փնտրելու ելան.*
*Շատ որոնեցին, անցաւ ժամանակ,*
*Մինչև որ գտան ուսուցչին գիտակ:*
*Թագաւորի մօտ բերեցին նրան,*
*Արքան մեծ պատւով ընդունեց իրեն,*
*Կանգնեց առաջը յարգեց շատ սրտանց*
*Մեծարեց նրան արքան չափազանց:*
*-Մի քաշւիր, ասաց.-ինձանից երբէք.*
*Ինձ մօտ դու ունես անսահման արժէք,*
*Տուր իմ հարցերին դու ճիշտ պատասխան,*
*Ինձ հարկաւոր է այդքանը միայն...*
*Առաջին օրը ինչո՞ւ անսահման*
*Տանջել ես սանիդ վազեցրել այնքան.*

*Երկրորդ օրն ինչո՞ւ այնքան անխնայ,*
*Կանգնել ես տւել իր ոտքի վրայ.*
*Երրորդ օրն ինչո՞ւ ծեծել ես, կապել,*
*Ու այդպէս թողած դու անյայտացել:*
*Քէն չունեմ քո դէմ, ես նեղացած չեմ,*
*Պատճառը լսել ես ցանկանում եմ:*

*Ուսուցիչն ասաւ.- Ողջ մնայ արքան,*
*Քո մեծութիւնը մնաց յաւիտեան.*
*Կարգն է, որ արքան սիրէ ընկերին,*
*Սիրէ իր անկեղծ գործակիցներին:*
*Բայց մէկ էլ ահա մարդիկ կլինեն*
*Որոնք ատելի կդառնան իրեն,*
*Սակայն ամեն ինչ պիտ չափն ունենայ*
*Ոչինչ իր չափից աւել չգնայ:*
*Ես ցանկացայ, որ արքայազն անբիծ,*
*Գիտենայ ինչ է՝ զօռ, ճնշում, թախիծ.*
*Նրանցից, որոնք առաջը ձիու,*
*Վազում են ոտքով մինչև իրիկու...*
*Նրանցից, որոնք երկար ժամանակ*
*Կանգնած են մնում, տանջւում շարունակ...*
*Նրանցից, որոնք ծեծւում են կապւում,*
*Ու ամբողջ օրը կապւած են մնում:*
*Եւ արքայական վրէժով լցւած,*
*Աչքը ցասումի արիւնը բռնած,*
*Թէ բռնի նրա բարկութիւնն ուժգին,*
*Ու ցանկանայ խիստ պատժել նա մէկին,*
*Տանջանք, ճնշում ու բարկութիւնն ամեն,*
*Որ իր նկատմամբ գործադրւել են,*
*Միտը բերի նա, մի քիչ մեղմանայ,*
*Շատ ծանըր պատիժ մէկին չտայ նա.*
*Այլ տայ այնպիսի մի պատիժ նրան,*
*Որ կարողանայ տանել ենթական:*

*Եսկ թէ ինչո՞ւ ես հեռացայ փախայ*
*Պատճառը այն էր, խելացի արքայ,*
*Որ արքայազնի մարմինը կապտած*
*Տանջանքն ու զօրը իրեն խիստ հասած,*
*Գուցէ թէ շարժէր քո գութն հայրական,*
*Ու ինձ պատժելու տայիր հրաման,*
*Եւ նեղութիւնն իմ անցնէր ի դերև,*
*Թափուէր ու չքուէրէ ոնց կաթիլը անձրև։*

*Թագաւորն երբ խոր ուսումնասիրեց,*
*Մեծ խորհուրդ գտաւ արարքում այդ մեծ,*
*Վարպետի ճակատն համբուրեց սիրով,*
*Շատ գովեց նըրան, նստեցրեց իր քով։*
*Հրահանգեց պարգև բերելու նրան,*
*Եւ նրա պատւին կազմեն խրախճանք։*
*Ու նրան կարգեց երկրին նախարար,*
*Որ ընդմիշտ լինի իրեն օգտակար։*

## Օձ թագաւորը

### 1

Թշուառ ու անգործ մի խեղճ ուղտապան,
Տանը նստել էր տկար, անպաշտպան,
Խով մտքերի մէջ տարուել էր՝ սուզուել,
Թէ ոնց դուրս գար այդ վիճակից անել,
Նա ունէր մի ուղտ, մի այգի միայն,
Բայց դրանցից էլ շահ չկար իրան։
Դէպի ո՞ւր գնար, ումը նա դիմէր,
Խեղճ ուղտապանը ինքն էլ չգիտէր,
Վեր կացաւ տխուր քայլեց դէպ այգի,
Գուցէ մոռանար ցաւերն ահագին,
Էլ ուրիշ ճամբայ չունէր, որ գնար,
Կողպ էր իր առաջ ամեն ճանապարհ։
Խեղճ ուղտապանը այգում մի յարմար
Տեղ էր պատրաստել նստելու համար,
Ու երբեմն երբ նա այգի գնար,
Կը նստէր այնտեղ, կը հանգստանար։
Այգում այդ օրն էլ ման եկաւ, յոգնեց,
Ապա եկաւ ու իր տեղը նստեց.
Ու գլուխն առաւ երկու ափի մէջ,
Սկսեց խորհել ցաւերը անվերջ։

Խեղճ մարդը այդպէս աղքատ չէր եղել,
Չար բախտ էր նրան այդ օրին յանձնել,
Իր առևտուրը մէկ էլ ձախողեց,
Իրեն այդ դժբախտ օրին հասցրեց։
Նա ունեցել էր ուղտի կարաւան,
Ողջ պարտքի տուել գնացին, տարան,
Մեծ տուն ու տեղի տէր էր խեղճ մարդը,

*Ինչու իրենից խռովեց բախտը։*
*Որտեղ գնաց իր կայքը անհամար,*
*Ինչո՞ւ իր վրայ իջաւ մութ խաւար…*
*Այդպէս մտքերում նա կորած, տարւած*
*Խնդրում էի իրեն ճար անի Աստւած։*

*Մարդը գլուխը բարձրացըրեց վեր,*
*Որ այգու վրայ մի հայեացք նետէր,*
*Տեսաւ մի օձ է գալիս դէպ իրեն,*
*Բայց մարդը բնաւ չկորցրեց իրեն,*
*Տեսաւ, որ օձը սողաց ու սողաց,*
*Եկաւ և ուղիղ նստեց իր դիմաց,*
*Ու չտեսնւած մի բանի նման,*
*Աչքերը յառած նայում էր իրեն։*

*Մարդը երբ մի քիչ սթափւեց տեսաւ,*
*Որ սա հասարակ մի օձ չէ բնաւ.*
*Օձի գլխին կար, ոսկեգոյն մի թագ,*
*Վիզը կարապի, մորթը նուրբ բարակ,*
*Տեսնողի աչքին այնպէս էր թւում,*
*Թէ տեղնուտեղը յակինթ է փայլում։*
*Հիանալի էր օձը իրապէս,*
*Տեսքով գեղեցիկ, դուրեկան ու վէս,*
*Վայելուչ հպարտ նստել էր այնտեղ,*
*Կասես որ չկար իրենից փառահեղ։*

## ***2***

*Սարսափը պատեց տարաբախտ մարդուն,*
*Ելաւ, սկսեց փախչել դէպի տուն…*
*Օձն այդ տեսնելով ինքն է շփոթւեց,*
*Մարդկային լեզւով խօսել սկսեց։*

-Մի՛ վախիր ինձնից, դու բարի էակ,
Քեզ վնասելու չունեմ նպատակ.
Ես քեզ կսիրեմ, դու մի խեղճ մարդ ես,
Գիտեմ գործումդ դու ձախողած ես…
Ուզում ես սակայն մի ճամբայ գտնել,
Դժբախտությունից ինքդ քեզ փրկել.
Իսկ դա դժւար է երբ չունես յենակ,
Ի՞նչ ես դու կարող անել մեն-մենակ:
Ինչքան մտածես ի զուր է իզուր,
Պիտ յոգնեցնես քո միտքը տխուր…
Անել վիճակից չես փրկւի բնաւ,
Ձեռք բռնող մէկին երբ չունես իրաւ:
Ես ցաւդ գիտեմ, դու մոլորւել ես,
Սակայն ես մենակ չպիտ թողնեմ քեզ…
Չպիտի թողնեմ դու աղքատ մնաս
Եթէ իմ հանդէպ չար միտք չունենաս,
Հեռացրու վախդ, ուրախ մօտ արի,
Ես թագւոր եմ ամբողջ օձերի…
Ինձ մօտ ոչինչ է գանձ հարստութիւն,
Հազարներ կտամ իմ ուզած մարդուն.
Անձիս վնասել թէ չցանկանաս,
Ինձանից բարիք դու շատ կստանաս:
Բայց այն էլ ասեմ, մի իղձ ունեմ ես,
Քեզ շատ կյարգեմ թէ այդ կատարես,
Ես կաթ եմ սիրում ու խնդրում եմ քեզ,
Օրը մի բաժակ թարմ կաթ ինձ բերես,
Թ՞է անես դու այդ ես կմնամ գոհ,
Կփոխարինեմ ես արածը քո:

Ուղտապանը հէնց այդքանը լսեց,
Ուրախութիւնից իրեն կորցրեց…
Իր ամբողջ կեանքում երբէք չէր լսել,
Օձը մարդու պէս, կարող է խօսել:

*Մարդն այդ համարեց մի բարի նշան,*
*Բախտն էր իր դուռը եկել ինքն իրեն…*
*Դարձաւ ու օձին խոր գլուխ տուեց,*
*Ձեռքերը կրծքին առաջը կանգնեց,*
*Ուժ ու սիրտ արաւ, հաւաքեց իրեն,*
*Եւ օձին այսպէս տուեց պատասխան։*

*-Օ՜ , օձ թագաւոր, բարի ու արդար,*
*Սա մի երա՞զ է, թէ լուրջ պատահար.*
*Թէ ցնորք չէ սա, այլ իրօք մի դէպք,*
*Իմ կեանքը կտամ թէ քեզ լինի պէտք։*
*Աշխարհում ոչինչ չեմ խնայի քեզ,*
*Թէ նոյնիսկ որդուս կեանքն էլ ուզես,*
*Աշխարհում միայն մի էգ ուղտ ունեմ,*
*Կաթն ուրախութեամբ ես քեզ կբերեմ,*
*Եւ հէնց հիմա էլ ունեմ ես թարմ կաթ,*
*Սպասիր գնամ, բերեմ մի գաւաթ։*

### 3

*Գիւղացին արագ վազեց դէպի տուն,*
*Կաթն առաւ, այգին շտապեց իսկոյն.*
*Օձի առաջ դրեց կաթը բաժակով,*
*Ինքն էլ կանգնեց խոնարհ հայեացքով…*
*Մարդու արարքը այդքան գեղեցիկ,*
*Օձից հեռացրեց ամեն չար կարծիք։*
*Օձը հաճոյքով խմեց կաթը ողջ,*
*Մինչև վերջացավ գաւաթը ամբողջ.*
*Եւ ուրախ դէպի իր բունը սողաց։*
*Ուղտապանն էլ լուրջ կանգնել էր ապշած,*
*Սպասում էր լուռ, դիտում ամեն բան,*
*Թէ ինչ է անում օձերի արքան։*
*Օձ թագաւորն էլ իսկոյն հրապարակ,*

*Դէպ ուղտապանը ետ դարձաւ շտապ…*
*Դժւար է ասել ուղտապանն ինչքան*
*Խնդաց, երբ տեսաւ ոսկի էր միայն,*
*Օձի բերանի առած այն բանը,*
*Որ բերեց ձգեց կաթի ամանը:*
*Մեծ զւարճութիւն պատեց խեղճ մարդուն,*
*Առաւ այդ ոսկին, ուրախ քայլեց տուն,*
*Վճռելով իր մէջ, որ վաղը կրկին*
*Օձին կաթ տանել ճիշտ ժամանակին:*

### *4*

*Միւս առաւօտ, դարձեալ նոյն ժամին,*
*Կաթը ձեռք առաւ, քայլեց դէպ այգին.*
*Ինչ զարմանալի բան թւաց նրան,*
*Որ օձն էլ արդէն կսպասէր իրեն.*
*Կարծես ասում էր՝*
*«Ով մարդ կաթը բեր, որ սիրով խմեմ.*
*Քո ոսկին բերեմ ու քեզ նւիրեմ»:*
*Ուղտապանն էլի ձեռքի գաւաթը,*
*Օձի առաջ դրեց մէջը լիք կաթը.*
*Կաթից ծարաւած օձը իմաստուն,*
*Խմեց ու դարձեալ սողաց մտաւ բուն,*
*Վերադառնալով ոսկին բերանը.*
*Որ բերեց ձգեց կաթի ամանը.*
*Եր ուղտապանը բերկրանքով անհուն,*
*Նոր ոսկին առած, ուրախ դարձաւ տուն:*

### *5*

*Եւ ահա մարդը պարտք համարեց այդ,*
*Տանել կաթ օձին օրը մի գաւաթ.*
*Եւ այդ գործի մէջ ինչո՞ւ թերանար,*

*Երբ կաթ կտանէր, ոսկի կստանար։*
*Ու այդպէս ահա մի տարի չանցաւ,*
*Որ նա անւանի մի հարուստ դարձաւ...*
*Ապրուստի ձևը նա փոխեց իսպառ*
*Նոր կեանք ստեղծեց շքեղ ու պայծառ։*
*Շտկւեց կարգին, էլ այն մարդը չէր,*
*Որ տարի առաջ մէկը տեսել էր։*
*Դարձաւ գեղեցիկ մի երիտասարդ,*
*Կասես թափւում էր դէմքից կարմիր վարդ։*
*Ու ամեն մէկը  մնաց զարմացած,*
*Թէ այդ թշւառը , որտեղի՞ց յանկարծ*
*Դարձաւ այդքան մեծ անւանի հարուստ,*
*Ու չարը տւեց նրանից փախուստ։*
*Մտածեց՝ սարքել փառաւոր մի տուն,*
*Մեծ բակ ու պարտէզ ծառերով լեցուն,*
*Շատրվաններով, բակում աւազան,*
*Շուրջը ծաղիկներ շքեղ բուրաստան,*
*Որ պատիւ բերէր մի հարուստ մարդու,*
*Կեանքն ապահովէր իր կին ու որդու։*
*Կարճ ժամանակում սարքեց ամեն ինչ,*
*Այլևս պակաս չթողեց ոչինչ։*
*Այսպէս էլ ահա ուղտապանը մեր,*
*Դարձաւ մեծ անւան և մեծ փառքի տէր։*

## *6*

*Ուղտապանն ահա նամակ ստացաւ,*
*Հեռու տեղից էր գրւած այդ տեսաւ.*
*Հրաւէր էր դա, մի գործի համար,*
*Կարևոր գործ էր, պիտ անշուշտ գնար;*
*Մարդը երկմտեց, մտածեց մեկնի,*
*Օձ թագւորին հապա ի՞նչ ասի.*
*Միթէ կարող էր միայն մի վայրկեան*

Մեծ բարերարին անել մտահան։
Կանգնեց սկսեց մտածեց երկար,
Վերջն էլ ահա այն գտաւ յարմար,
Որ իր ողջ դերը կատարէր որդին,
Մինչև որ մեկնէր ու դառնար կրկին։

Մի օր էլ ահա որդուն վերցրեց,
Տարաւ օձի մօտ ու նրան խնդրեց,
-Արքայ մի գործ է առաջս ընկել,
Եւ պարտաւոր եմ այդ գործով մեկնել,
Ձեր բարի կամքը եթէ կամենայ,
Թող քեզ ծառայէ տղաս անխնայ,
Քո օրւայ կաթը թող տղաս բերէ,
Իր հլու, խոնարհ պարտքը կատարէ,
Միչև ճամբորդեմ, գնամ մի առ ժամ.
Ետ գամ ծառայեմ քեզ քանի ես կամ.
Որդուս էլ կասեմ ինչ հարկաւոր է,
Կասեմ իր գործը անկեղծ կատարէ։

* * *

Օձ թագաւորը շատ տարակուսեց,
Դրանում լաւ բան չնախատեսեց.
Բայց և չցանկաց մերժել նա մարդուն,
Ասաց.-«լաւ գնա՛, ու թող քո որդուն»։
Ուղտապանն ևս զգաց մեծ բերկրանք,
Երբ օձն ընդունեց իր արած խնդրանք։

**7**

Ճանապարհին հայրը շատ
Կարդաց իր որդուն խրատ
Ասաց.- որդի իմ անգին,

*Լսիր խրատս կարգին.*
*Օձին անկեղծ ծառայիր,*
*Նրան շատ մեծ արժէք դիր,*
*Օձին թէ չունենայինք,*
*Մենք վաղուց կորած էինք*
*Օձի շնորհիւ է միայն,*
*Մեր կայքը միանգամայն,*
*Պիտ տնովի աղօթենք*
*Օձին երկար կեանք մաղթեբք,*
*Ու ի սրտէ ցանկանանք,*
*Որ չունենայ նա վատ կեանք*
*Օձին դու տար պատուաւոր*
*Ուղտի թարմ կաթը ամեն օր,*
*Ու չլինի մոլորւես*
*Մեզ փրկողին դաւ նիւթես,*
*Մինչև ես վերադառնամ,*
*Տեսնեմ գործդ հիանամ։*
*Վերջին հրաժեշտն էլ տւեց,*
*Որդուն համբուրեց, մեկնեց…*
*Թողնենք, որ հայրը գնայ իր ճամբան,*
*Տեսնենք ի՞նչ արաւ այն անփորձ տղան։*

### 8

*Որդին քանի օր հօր ասածի պէս,*
*Ծառայեց օձին ուրախ ժպտերես.*
*Կը տանէր թարմ կաթ օրը մի անգամ,*
*Կստանար օձից մի ոսկի դրամ։*
*Մէկ էլ չար բախտը նախանձեց նրան,*
*Եւ ուզեց տանել կորուստը յաւիտեան;*
*Մտածեց՝ լաւ է օձին սպանեմ,*
*Ու սրա գանձը ամբողջ գրաւեմ,*
*Ինչո՞ւ ամեն օր մի-մի բաժակ կաթ,*

*Տամ ու ստանամ ոսկիներն հատ-հատ,*
*Կամ ինչո՞ւ օձին լինեմ ծառայող,*
*Երբ այլ միջոցի դիմել եմ կարող.*
*Մեծ գանձը անշուշտ մեր այգում է ողջ,*
*Օձին սպանեմ իմն է այդ ամբողջ…*

*Վճռական կերպով անպիտան տղան,*
*Վճռեց իր միտքն անպիտան։*
*Մի օր մի ձեռքը մի կաթի գաւաթ,*
*Մի ձեռքն էլ մահակ ծայրը պինդ երկաթ,*
*Քայլեց դէպ այգին դէմքը այլայլուած,*
*Խենթ մարդու նման սաստիկ չարացած,*
*Իր տեղը դրեց կաթի ամանը,*
*Սպասեց օձին այն անպիտանը։*
*Ու ժամանակին երբ օձը եկաւ,*
*Տղայի անխիղճ միտքը հասկացաւ։*
*Տեսաւ, որ տղան փոխուել է այսօր,*
*Ճիշտ այնպես, ինչպէս մի մեծ սգաւոր.*
*Տեսաւ երկաթեայ մի մահակ առել,*
*Ու չար աչքերը արնով է լցուել.*
*Տեսաւ, որ տղան նենգ ու չետադէմ,*
*Սրտի խորքում չար միտք ունի իր դէմ,*
*Նկատեց, որ այդ տեսարանը չար,*
*Մի բարի գալիք չպիտ ունենար.*
*Սակայն մեղմութեամբ դեռ սպասում էր,*
*Թէ հետեւանքը ինչ պիտի լինէր.*
*Բայց հէնց ամանին երկարեց վիզը,*
*Մէկ էլ կտրեց պոչի մի թիզը…*
*Գործադրեց տղան իր միտքը չիմար,*
*Վնասեց օձին իրենց բարերար,*
*Բայց երբ դանակը ոսկորին հասաւ,*
*Օձն էլ տանել չկարողացաւ,*
*Սողաց, տղային հասաւ զայրացած,*

*Խայթեց նրան թույնով՝ գլորեց ցած։*

## *9*

*Ժամանակ անցաւ։ Ուղտապանն եկաւ,*
*Շքեղ յոյսերով հազիւ տեղ հասաւ։*
*Առաջ տղային կանչեց կարօտած…*
*Բայց տղան արդէն վաղուց էր մեռած։*
*Ախ դժբախտ մարդուն, ի՞նչ պիտի անէր,*
*Արդէն ամեն բան անցել, պրծել էր,*
*Մի շատ խելացի խօսք կայ վաղեմի,*
*Թէ՝ անցած բանին տէրը ողորմի։*
*Խեղճը վշտացաւ, նստեց սուգ արաւ,*
*Սակայն վիշտ-սուգից մի բան դուրս չեկաւ։*
*Երբ որդու մահւան պատճառը հարցրեց,*
*Տեսաւ մեռել է օձի խայթոցից։*
*Ամեն ինչ կարդաց, զգաց ամեն բան,*
*Որդին էր գնացել իր սխալ ճամբան,*
*Թախիծը խպառ պատեց խեղճ մարդուն,*
*Նա ոչ թէ միայն կորցրել էր որդուն,*
*Կորցրել էր նաև օձ թագաւորին,*
*Որ իր չար բախտը թեքեց դէպ բարին։*
*Շատ մտածելուց գտաւ մի ճամբայ,*
*Որ սիրտ անի ու վեր կենայ գնայ,*
*Դարձեալ այցելի օձ թագաւորին,*
*Հաշտւի նրա հետ ու դառնայ կրկին։*
*Ու գնաց կանգնեց օձի բնի մօտ,*
*Ողբ ու աղերսով, սիրտը-արիւնոտ.*
*Սկսեց խնդրել օձին սրտագին.*
*-Դուրս ե՛կ, իմ տեսիլք, իմ յոյս իմ անգին…*
*Միթէ դու չէի՞ր, որ եղբօր նման՝*
*Ինձ կատարեցիր բարիք անսահման.*
*Միթէ դու չէի՞ր, որ վեհանձնաբար՝*

*Ինձ շնորհեցիր ոսկի անհամար.*
*Միթէ դու չէի՞ր, որ պատճառ դարձար՝*
*Հռչակւէի ես աշխարհէ աշխարհ.*
*Միթէ դու չէի՞ր, ով օձ թագաւոր,*
*Որ բաշխեցիր ինձ վիճակ փառաւոր,*
*Վստահ որդիս է շեղւել դաւել քեզ,*
*Թեզանից յանկարծ չեմ նկատում ես,*
*Ու այժմ ես թախծոտ քո բնի առաջ,*
*Քեզ եմ սպասում անելով աղաչ,*
*Գոնէ դուրս ե՛կ, դուրս , ա՛խ իմ անգին,*
*Պատմիր պատճառն ինձ ու դարձիր կրկին:*

* * *

*Օձը երբ լսեց մարդու աղերսը,*
*Դուրս եկաւ բնից վիշտը իր ներսը,*
*Մարդուն նետեց իր հայեացքն անաչառ,*
*Մարդկային լեզւով խօսեց քանի բառ,*
*-Քանի իմ պոչով տառապում եմ ես,*
*Ու որդուդ մահւան վիշտն էլ կայ քեզ,*
*Եթէ աշխարհը իմն ու քոն լինի,*
*Հաշտութիւն մեր մէջ էլ օգուտ չունի:*
*Գնա՛ ու որդուդ վշտով տառապիր,*
*Էլ պատճառ երբէք դու մի՛ որոնիր,*
*Ես էլ իմ պոչով թող տառապեմ միշտ,*
*Իմ սիրտն էլ յաւէտ թող մաշէ այդ վիշտ:*
*Ոչ փափագում եմ ուղտի կաթ ուզել,*
*Ոչ էլ իղձս է ուղտապան տեսնել:*
*Ասաց ու օձը սողաց մտաւ բուն,*
*Խեղճ ուղտապանն էլ տխուր դարձաւ տուն:*

## Բարեպաշտ ճգնաւորը և իր կինը

*Կար մի ճգնաւոր բարեպաշտ, արդար,*
*Նա ունէր մի կին ազնիւ հոգատար.*
*Կինը բամբակ էր մանում ամեն օր,*
*Մարդն էլ ճգնութեամբ զբաղուում ողջ օր,*
*Աշխարհի վատից իսպառ կտրուած,*
*Միշտ աղօթում էր առ ի Տէր Աստուած,*
*Օրուայ մէջ միայն այնքան էր անում,*
*Որ մանած թելը շուկայ էր տանում,*
*Վաճառում, գանձի մի մասով կրկին*
*Բամբակ էր գնում, որ մանէր իր կին,*
*Իսկ միւս մասով, ուտելիք գնում,*
*Իրենց ապրուստն էր հոգում, հայթայթում։*

*Մի օր ասկետը թելը վաճառեց*
*Իր սովորական բամբակը գնեց,*
*Եւ դեռ չէր գնել ուտելիքը տան,*
*Որ մի խեղճ կանգնեց իր դէմ յանդիման*
*Ու ողորմութեան դիմում կատարեց,*
*Անծայր թշուառն այդ օգնութիւն խնդրեց…*
*Ճգնաւորն ազդուեց, դրամը ամբողջ,*
*Սրտանց յանձնեց այն խեղճին վատառողջ։*

*Ասկետը դատարկ վերադարձաւ տուն…*
*Կինը այդ օրը սին տեսաւ մարդուն,*
*Պատճառը հարցրեց կինը խնդադէմ,*
*-Ասա՛, ամուսին, ասա՛, խնդրում եմ,*
*Ինչո՞ւ թախծոտ ես դու արտասովոր,*
*Ինչո՞ւ ուտելիք չես բերել այսօր.*
*Մեր կերը ինչպէ՞ս այսօր հայթայթենք,*
*Տունը մենք բնաւ ուտելիք չունենք։*

*-Այո, տիկին իմ, ճիշտ ես նկատել,*
*Յուզուած եմ այսօր, յուզուած առաւել.*
*Երբ վաճառեցի թելը մեր այսօր,*
*Իմ դէմ դուրս եկաւ մի կարիքաւոր.*
*Թշուառ էր խեղճը, մաշուած ու նիհար,*
*Դաժան կարիքում չունէր ոչ մի ճար:*
*Անգութ մարդը չէր կարեկցում նրան,*
*Նրան հաշուելով մի մարդ անպիտան:*
*Ոմանք չօգնելով, չտալով մի բան,*
*Հռհռում էին, սոսկ ծաղրում նրան,*
*Նրա բիրտ ցաւին չարած որ մի ճար,*
*Ցաւ էին բարդում ցաւին անդադար:*
*Խղճահարուեցի, մղկտաց հոգիս,*
*Տուեցի նրան ինչ որ կար ձեռքիս,*
*Ու վստահ գիտցիր բարիքի դիմաց,*
*Մարդուն մոլորուած չի թողնի Աստուած:*
*Այժմ գեղեցիկը այն է որ տեսնենք,*
*Մեր տանը աւել ապրանք ինչ ունենք,*
*Տանեմ վաճառեմ, ձեռք բերեմ մի գին,*
*Դարձնենք մեր կեանքի անիւը կրկին:*

*Նրանց տանը կար մի խեցեայ աման,*
*Գործ չէր ածում երբևէ դրան.*
*Խորհուրդ արին դա տանեն վաճառման,*
*Այդպիսի իրենց կարիքը հոգան;*
*Ու ճգնաւորը այն շուկայ տարաւ,*
*Շատ շրջեց, գնորդ դրան չգտաւ*
*Շւարած նա դեռ շրջում էր յոգնած*
*Մէկը այն կողմից եկաւ իր դիմաց:*
*Նա ունէր նեխուած մի ձուկ իր ձեռքին,*
*Մօտ եկաւ, ասաց նա ճգնաւորին:*

*-Ո՛վ բարի մարդ, ե՛կ անենք առուտուր,*

Խեցեայ ամանն այդ եկ ու դու ինձ տուր,
Ու դիմացը առ այս ձուկը նեխուած,
Է՛, առուտուր է, ինչ պէտք է արած։

-Համաձայն եմ ես, թող լինի այդպէս,
Նեխուած ձուկը ինձ, այս ամանը քեզ։

Ճգնաւորն առաւ այդ ձուկը նեխուած,
Տուն բերեց, կինը մնաց զարմացած,
-Ի՞նչ անեմ.- ասաց – այս ձուկը ասա՛,
Նեխուած է, ինչպէ՞ս մենք պիտ ուտենք սա։
-Անհոգ կա՛ց, հոգիս, մեր պարէնն այսօր
Այդ է վիճակուած,- ասաց ճգնաւոր,-
Մաքրիր ու եփիր ուտենք, կշտանանք,
Աղօթենք Աստծուն ու նրան փառք տանք...
Ինչ անենք, այսօր թող այդպէս լինի,
Երբ ցանկութիւն ու կամքն է Վերինի։

Կինը մաքրում էր ձուկը կիսայոյս,
Երբ փորը բացեց, մի բան տուեց լոյս.
Զննեց ու տեսաւ անգին քար է այն,
Խնդումից ճչաց նա միանգամայն։
Տարաւ, ցոյց տուեց նա ճգնաւորին,
Խիստ բերկրանք զգաց նա ևս իր հերթին։
Բայց ճգնաւորը յարուցեց կասկած,
Կարող է լինել ուրիշինը յանկարծ...
Ու կնոջն ասաց.- լաւ նայի՛ր դրան,
Թէ յղկուած է ու ծակ ունի վրան,
Անշուշտ ուրիշինն է, հալալ չէ դա մեզ,
Իսկ թէ յղկուած չէ և ծակ չունի ևս,
Պարէն է, որ մեզ տուել է Աստուած,
Կը վաճառենք դա կուտենք անկասկած,
Կինը լաւ նայեց տեսաւ յղկուած չէր,

*Լաւ զննեց տեսաւ, որ ծակ էլ չունէր,*
*Նա ճգնաւորին ասաց այդ մասին,*
*Ճգնաւորն ևս հրճւեց իր հերթին։*

*Ճգնաւորն ունէր մի անկեղծ ընկեր,*
*Նա ճանաչում էր այդպիսի ակեր,*
*Տարաւ այդ ակը ցոյց տւեց նրան,*
*Զարմացաւ ընկերն երբ որ տեսաւ այն։*
*Նա ճգնաւորին ասաց զարմացած.*
*-Սա որտեղի՞ց է քո ձեռքը հասած։*
*-Պարէն է սա, որ Տէրն է հասցրել,-*
*Ու անցքը նրան սկսեց պատմել։*
*-Սա իմ կարծիքով, թանգ է չափազանց,*
*Հազար ոսկուց դեռ գինն է անց.*
*Բայց կայ մի փորձւած գոհարավաճառ,*
*Նա սրա գինը գիտէ անպատճառ,*
*Նրա տեղն ստոյգ այժմ քեզ կասեմ ես,*
*Կերթաս նրա մօտ, նա շատ կօգնէ քեզ։*

*Ճգնաւորը ուրախ ակը ձեռքն առած,*
*Ակնավաճառի մօտ գնաց ցուցնած։*
*Ակնավաճառին ցոյց տւեց ակն այն,*
*Շւարեց մարդը հէնց միանգամայն։*
*-Կը գնեմ,-ասաց-այս գոհարը ես*
*Ու հարիւր հազար ոսկի կտամ քեզ։-*
*Հեզ ճգնաւորն էլ խօսքին խօսք չասաւ.*
*Լրիւ այն գանձը մարդուց ստացաւ,*
*Ու մշակնելով կրեց նա իր տուն։*
*Մի աղքատ մտաւ, ասաց այդ պահուն...*
*-Ինձ ի՞նչ կտաս այդ գանձից քեզ հասած,*
*Ու մի բան անես, որ սիրէ Աստւած.*
*-Լաւ կը կիսեմ ես դրամը բոլոր,*
*Կէսը քեզ կտամ,- ասաց ճգնաւոր։-*

*Ու ամբողջ գանձը երկու մաս արաւ.*
*Մի մասը սիրով աղքատին տւաւ:*
*Ծգնաւորի այդ արարքը շիտակ,*
*Լրացրեց նրա արարքը յստակ:*
*-Բարի ճգնաւոր, գանձըդ քեզ մնայ,*
*Քո կեանքն այսուհետ միշտ ուրախ գնայ,*
*Ես չառաքւեցայ գանձդ կիսելու,*
*Այլ Տէրն ուղարկեց ինձ քեզ փորձելու.*
*Աշխարհը կանգուն ու շէն չի մնայ,*
*Թէ արդար, բարի մարդը չքանայ,*
*Բարեգործ եղի՛ր, օգնի՛ր միշտ խեղճին*
*Որ հանգստութիւն լինի քո խղճին.*
*Աշխարհում ոչինչ չի մնայ մարդուն,*
*Բացի բարի գործ ու բարի անուն:*
*Հրաժեշտ տւեց մարդը այնուհետ,*
*Չքացաւ տեսքից ու գնաց անհետ:*

* * *

*Տարիներ ապրեց ճգնաւորն արդար,*
*Ու միշտ էլ օգնեց խեղճերին անճար.*
*Աստըծունը միշտ տւեց Աստըծուն,*
*Իր կարեաց չափով մարդունն էլ մարդուն,*
*Դու էլ ընթերցող, ապրիր միշտ այնպէս,*
*Որ ոչ ոքի ցաւ, վիշտ չպատճառես,*
*Արձակիր կապը խեղճի, անճարի,*
*Ու միշտ էլ գնա՛յ ճանապարհ բարի:*
*Եւ լաւ է եթէ չես անում բարիք,*
*Խեղճ մարդոց վրայ չդառնաս չարիք...*
*Եթէ չես լինում մէկին բարերար,*
*Գոնէ մի շինիր նրա հանդէպ չար.*
*Ու եթէ նեղում չես ատենահաս,*
*Գոնէ մի դարձիր մարդուն պատուհաս,*

*Որ խղճիդ մօտ միշտ դու հանգիստ մնաս*
*Լալով եկել ես, խնդալով գնաս,*
*Անունդ մնայ մինչև յաւիտեան,*
*Այլքն ևս լսեն, քո ճամբով գնան,*
*Ու աշխարհն ամբողջ թէ լաւով գնայ,*
*Ոչ ոքի սիրտը չպիտ վշտանայ։*

## Առատաձեռն ու արդարադատը

*Մի տարի երաշտ պատեց մի երկիր,*
*Բերք չտվեցին արտերը բերրի,*
*Յանքսը չորացաւ, սով տիրեց երկրին.*
*Ծառերն անպտուղ ու չոր մնացին։*
*Շինականները ողջ քաղաք փախան,*
*Իր կեանքը իրենց փրկել կարենան...*
*Գործերը ամբողջ կանգ առան իսպառ,*
*Մթագնեցին դէմքերը պայծառ։*
*Այդ ահեղ պահին ճնշւում էր մի մարդ,*
*Ունէր շատ զաւակ, տունը բազմամարդ.*
*Վաճառեց, եկաւ տունը ինչ որ կար,*
*Ու հասաւ մի տեղ, որ էլ ճար չկար։*
*Բազում հոգսերից ընկճւած, յոգնած,*
*Հարևանի մօտն իր հարուստ գնաց.*
*Գործել էր առաջ այդ հարուստի մօտ,*
*Կարծեց նա կօգնի այդ օրին կարօտ.*
*Վիճակը պատմեց նա հարևանին,*
*Օգնութիւն խնդրեց այդ դառը ժամին։*

*Շատ ցաւալի է,- ասաց.- հարևան,*
*Գործել ես ինձ մօտ ես դէմ չեմ դրան,*
*Բայց գործիդ որպէս հատուցում արդար,*
*Վարձ եմ վճարել լի ու բաւարար.*
*Յանցաւորը հէնց ինքդ ես միայն,*

Որ առատութեան օրումը քո լայն,.
Չես եղել այնքան խոհեմ, հեռատես,
Որ քո նեղ օրւայ ցաւի դէմ կանգնես,
Ու չես ստեղծել քեզ մի ապագայ,
Որ այս նեղ օրին քո ցաւը հոգայ:
Սրտանց ցաւում եմ թէպէտ քեզ համար,
Բայց չեմ կարող քեզ լինել օգտակար.
Գնա՛, այսուհետ անհոգ մի՛ մնա,
Նեղ օրւայ ճարը լայն օրը արա:

. . .

Մարդը ի՞նչ ասէր այդ խօսքին արդար,
Ճիշտ էր հարուստի դատումն անաչառ...
Երբ դարձաւ տրտում, գնում էր խոհուն,
Ճամբին հանդիպեց իր այլ դրացուն,
Որը կարող էր ու մեծահարուստ,
Նրան տեսնելով խեղճն ազդւեց ներքուստ:

Հարուստը նրան երբ տեսաւ այդպէս,
Խղճմտանքն իրեն տանջեց հոգեպէս,
Առաջը կտրեց, հարց տւեց նրան,
Հարցրեց պատճառը այդ մեծ տրտմութեան:
Մարդը իր անցքը պատեց համառօտ,
Ու հէնց իր ներկայ վիճակը ցաւոտ:

Այստեղ հարուստը սիրտ տւեց նրան,
Որ բնաւ այլևս չը տանջէ իրան.
-Հոգ մի տար,-ասաց,-կը կանգնեմ մէջքիդ,
Կը քաշեմ ծախսը ողջ ընտանիքիդ,
Մինչև որ անցնեն այս օրերը դառ,
Սով ու թանգութիւն վերանան իսպառ:
Ու արաւ այնպէս, ինչ խօսք էր տւել,
Մինչև վերջացան օրերը անել:

* * *

*Այս պատմութեան մէջ տեսանք երկու մարդ,*
*Մէկն առատաձեռ, միւսն արդարադատ.*
*Արդար դատելը բարի է անշուշտ,*
*Բայց խեղճ սովեալին չը դարձնէ կուշտ,*
*Ու առատաձեռն լինելն է դժւար,*
*Իր շահից անցնել, խեղճին անել ճար...*
*Դժւար է իրնից մաս տալ ուրիշին.*
*Աստւած է կարող այդ անել մէկին,*
*Ով առատաձեռն լինի, ողորմած,*
*Նա անում է այն, որ կանի Աստւած.*
*Ու եթէ վերև տեղ կայ Աստծու կուշտ,*
*Առատաձեռնի տեղն է դա անշուշտ։*

## Հնարագէտ վաճառականն ու իր նենգ ընկերը

*Կար շատ բանիմաց ու հնարագէտ*
*Մի վաճառական իր գործին վարպետ.*
*Ուզեց ճամբորդել, սակայն չգիտէր,*
*Ճամբորդութիւնը ինչքան պիտ տևէր։*
*Ունէր վաղեմի մի ընկեր մօտիկ,*
*Լայն ու նեղ օրին կերթար մտերմիկ*
*Կը խորհրդակցէր նրա հետը նախ,*
*Ապա կսկսէր իր գործը յաճախ։*
*Վաճառականը շատ էր չաչարւել,*
*Մինչև երկու լիտր արծաթ էր շահել,*
*Աւանդ դրեց դա իր ընկերոջ տուն,*
*Ընկերը պահէր,ետ տար իր գալուն.*
*Նրա միտքն այն էր, թէ կորըր ընկնէր,*
*Դրամագլուխ դա իրեն անէր,*
*Սկսէր կրկին առուտուրը հին,*
*Ու շարունակէր իր գործը նախկին։*

Ճամբորդեց մարդը հեռու երկրներ,
Դա տևեց երկա՜ր-երկա՜ր տարիներ.
Աշխարհներ շրջեց, շատ բաներ տեսաւ,
Դրամներն ամեն քոռ ու փուչ եղաւ,
Ճամբորդութիւնից չշահեց ոչինչ,
Գուցէ այդ ճամբին զոհեց ամեն ինչ։
Մի օր էլ յոգնած վերադարձաւ տուն,
Արծաթին ընկած կարիքը անհուն…
Գնաց ընկերին տեսնի կարօտած,
Նաև առնելու արծաթը յանձնած։
Բայց ընկերը կեղծ վաճառել էր այն,
Արժէքը ծախսել ողջ միանգամայն։
Յանկարծ երբ տեսաւ դարձած ընկերին,
Կորցրեց իրեն, դող ընկաւ մարմին,
Նախ ցոյց տւեց իբր իր սէրը նրան.
Ապա սկսեց կեղծ ձև տալ իրեն.
Թէ՝ բա չես ասի, արծաթը համայն
Դրի անկիւնը մառանի մեր տան,
Անտեղեակ այնտեղ մկների բոյն կայ,
Ու մուկը կուտի արծաթն անխնայ.
Ու մէկ էլ երբ, որ ես մտայ մառան,
Արծաթի տեղը ես գտայ միայն,
Անպիտան մուկը կերել է այնպէս,
Ու թողել է ինձ քո մօտ սևերես։

-Վաճառականը չասաց որ սուտ է,
Ինքն էլ հաստատեց թէ՝ մուկը կուտէ,
Ինքն ևս շատ է այդ մասին լսել,
Որ մուկը միշտ էլ արծաթ է կերել։

Նենգ ընկերն իր մէջ շատ ուրախացաւ,
Կարծեց ամեն ինչ արդէն վերջացաւ.
Ծաղրեց ընկերի սխալ դատումին,

*Որ շուտ հաւատաց իր այդ մեծ սուտին:*
*Ապա, որ սուտը մնայ հաստատուն,*
*Ուզեց որ վաղը նա հիւր գայ իր տուն,*
*Որ նրան յարգի, պատւի, մեծարի,*
*Նրա կասկածը ընդմիշտ փարատի:*

*Վաճառականը հրաւէրն ընդունեց,*
*Ու հանգիստ սրտով այդ տունը թողեց:*
*Սակայն դուրս գալուն, երբ տեսաւ դռան*
*Խաղում էր այն նենգ մարդու երեխան,*
*Նրան մի հնարքով տարաւ իր հետ տուն,*
*Թագցրեց իր տանը բոլորից թաքուն:*

*Վաճառականը խոստման համաձայն,*
*Հիւր գնաց տանը դավաճանի այն…*
*Բայց հիւրընկալը չքմեղանք խնդրեց,*
*Հիւր ընդունելուց նրան հրաժարւեց*
*Թէ՝ երէկւանից քո գնալուց յետ,*
*Երեխես չկայ, կորել է անհետ:*
*Ամբողջ տները մօտ ու հեռակայ,*
*Որոնել ենք մենք, չկայ ու չկայ,*
*Մունետիկները երեքից աւել,*
*Յայտարարել են, քաղաքում կանչել,*
*Բայց աւա՜ղ, չը կայ երեխաս,*
*Անհանգիստ եմ ես, ուշք չկայ վրաս:*

*Վաճառականը լուրջ դէմք ստացաւ,*
*Ապա դառնալով ընկերին ասաւ,*
*-Քո այդ ասածին վկայում եմ ես,*
*Իմ տեսածին մօտ մի բան է կարծես.*
*Երբ գնում էի ձեր տանից երէկ,*
*Օդում տեսա մի դէպք սրտաբեկ,*
*Երեխան կտցին մի հսկայ ուրուր,*
*Թռչում էր տանում, յայտնի չէ թէ ո՞ւր.*

Ու քո ասածի, պատմածի նման,
Անշուշտ եղել է այդ քո երեխան:

-Է՛, տգէտ խօսքդ ով կհաւատայ...
Ուրուրի քաշը, որ մի լիտր չկայ,
Ո՞նց է կարող մի երեխայ տանել
Որի քաշը տաս լըտրից է աւել.-
Երեխայի տէրն ասաց դառնացած,
Վաճառականին չհաւատացած:

-Ո՛չ, կպատահի, զուր մի՛ նեղանայ,
Այստեղ զարմանքի ոչ ի բան չկայ.
Այն քաղաքում, որ մուկը թոյլ, անբան,
Երկու լիտր արծաթ ողջ միանգամայն,
Կուտէ, կը մարսէ հեշտութեամբ, հանգիստ,
Ինչպէս չի կարող ուրուրը այն խիստ,
Մի երեխայի կտցի ու տանի,
Թէկուզ կշիռը տասը լիտր լինի:

Դաւաճանը մատ բերանը տարաւ,
Բանի խորհուրդը շատ լաւ հասկացաւ.
Իր նենգութիւնը ինքը առաւ յանձն,
Ընկաւ գետին ու ասաց.- ով վեհանձն,
Դաւաճանել եմ ու քեզ եմ ստել
Մուկը չէր կարող արծաթը ուտել.
Նենգամիտ եղայ, չար ու դաւաճան,
Ամօթալի եմ մինչ կեանքիս վախճան...
Աղաչում եմ քեզ, յանցանքս ների՛ր,
Արծաթը կտամ, ինձ դարձեալ սիրի՛ր,
Երեխաս ինձ տուր, բաւ է ինձ կսկիծ,
Յաւէտ պիտ տանջեմ իմ ցածրութիւնից:
Այսուհետ դէպ քեզ ես չեմ լինի կեղծ,
Թող դառնանք նախկին ընկերներն անկեղծ,
Ու քանի լաւը աշխարհումը կայ,
Մարդ չը պիտ լինի վատին ենթակայ:

## Գիտուն վարչապետը

*Հայոց աշխարհում կար մի թագավոր,*
*Կիրթ ու խելացի, կարող ու հզոր,*
*Իր վաչապետին պաշտոնանկ արավ.*
*Նրա  պաշտոնը ուրիշին տվավ:*
*Ու պաշտոնանկին առաջարկեց նա,*
*Որ այն երկրի մէջ, ուր որ կամենայ,*
*Ապրելու համար մի լավ տեղ ընտրէ,*
*Որ ինքը արքան նրան նվիրէ,*
*Վէզիրն իր կայքով, ազգականներով,*
*Քաշվի այնտեղ ու ապրի ապահով:*
*Բայց նախարարը այդ չհավանեց,*
*Այլ թագավորից միմիայն ուզեց,*
*Որ մի ավերակ գիւղ յանձնէ իրեն,*
*Որ ինքը գնայ շէնացնէ այն,*
*Ու այնտեղ ապրէ քանի կեանք ունի,*
*Թագավորի կեանք, արևը օրհնի:*

*Ու թագավորը տվեց հրաման,*
*Որ իր մարդիկը վեր կենան գնան*
*Մի քանի ավեր գիւղեր որոնեն,*
*Ու վարչապետին իր կողմից յանձնեն:*

*Առաքված մարդիկ ընկան շրջելու,*
*Երկրում ավերակ գիւղեր գտնելու:*
*Բայց ողջ երկիրը նրանք ման եկան,*
*Ոչ մի ավեր գիւղ երկրում չգտան:*
*Երկար շրջելուց ետ դարձան նրանք,*
*Թէ՝ երկրում ավեր գիւղ մենք չգտանք:*

. . .

*Վարչապետն ասաց.- գիտէի արդէն.*
*Որ կառավարած իմ երկիրն է շէն,*
*Ու ինչքան էլ որ փնտրեն, որոնեն,*
*Ոչ մի աւեր գիւղ չպիտի գտնեն:*
*Սակայն երկիրն այս, որ ինձնից առիր,*
*Այնպէս գործուեայ մի մարդու յանձնիր.*
*Որ մի օր եթէ ցանկանաս առնել,*
*Այնպէս յանձնէ քեզ, որ ես եմ յանձնել:*

*Թագաւորն երբ խոր ուսումնասիրեց,*
*Իր մեծ սխալը յանձն առաւ, յուզուեց,*
*Պաշտօնանկ մարդուց ներում խնդրեց նա,*
*Ապա խնդրեց իր պաշտօնին դառնայ,*
*Պարգևատրեց գիտուն մարդուն այն,*
*Եւ խնդրեց դարձեալ առաջւայ նման*
*Ծառայէ երկրում այնքան անձնուէր,*
*Որ չգտնուի երկրում գիւղ աւեր:*

## Հնարագէտ թագաւորը

*Ազադ-օ-Դովլէ արքան Իրանի,*
*Բարի էր գիտուն, խելօք անուանի,*
*Իր արքայական օրում, ատենում,*
*Այսպէս մի դէպք է պատահում երկրում:*
*Մի երիտասարդ ուխտի պիտ գնար*
*Ճամբորդութիւնը պիտ տևէր երկար...*
*Նա ունէր իր մօտ մի քսակ ոսկի,*
*Որը արդիւնքն էր հօր տանջւած կեանքի,*
*Իր վաճառական հայրը անմահ անհամար*
*Տանջանք էր քաշել ու տքնել երկար,*
*Մինչ տնտեսել էր այդ քսակ ոսկին*
*Ու ժառանգութիւն թողել զաւակին:*
*Ուզեց այդ ոսկին նա մէկին պահ տար,*

*Մինչև որ գնար ու կրկին դառնար…*
*Մեծ դատաւորին յանձնեց այդ քան,*
*Որը քաղաքում ունէր մեծ հռչակ,*
*Դատաւորին էլ թէ չհաւատար,*
*Ինչ ակնկալիք ուրիշից ունենար:*

*Մի տարուց յետոյ երբ դարձաւ գնաց,*
*Պահանջեց ոսկին իր աւանդ դրած…*
*Բայց դատաւորը ուրացաւ խսպառ,*
*Սուտ համարեց այդ պահանջը արդար:*
*Երիտասարդը ինչքան աղաչեց,*
*Նենգ դատաւորին դա բնաւ չազդեց,*
*Սպառնաց խեղճին, որ՝ թէ շատ խօսես,*
*«Գիտցի՛ր խենթանոց կուղարկեմ ես քեզ»:*
*Երիտասարդը էլ ինչ ճար ունէր,*
*Իր իրաւունքը նա ո՞նց հաստատէր:*
*Դուրս ելաւ լալով, տխուր, յուսահատ.*
*Լալիս էր, հոգոց քաշում անընդհատ.*
*Արտասւում էր խիստ ու անձրևի պէս,*
*Արցունք էր թափում, թրջում իր երես.*
*Թէ՝ ինչո՞ւ մէկը լինի դատաւոր,*
*Երբ ինքը գող է ու այնքան ստոր,*
*Որ իր մօտ դրած աւանդն անխնայ*
*Ազատ կուլ տայ և ուտի, ուրանայ:*
*Արտասւելով նա գնում էր տխուր,*
*Ինքն էլ չգիտէր թէ գնում է ուր…*
*Երբ յանկարծ մէկը առաջը կտրեց,*
*Նրա այդ լալու պատճառը հարցրեց:*
*Նա թագաւորին մի մարդ էր մօտիկ,*
*Եւ պալատումը խօսքը ազդեցիկ:*
*Երիտասարդին լսել ուզեց նա*
*Եւ օգնել նրան որքան կարենայ:*
*Երիտասարդը պատմեց ամեն բան*

Նենգ դատաւորի կեղծ արարքը այն,

Մարդը երբ լսեց այդ անցքը ցաւոտ,
Խիստ սրտնեղուեց, ցաւ զգաց իր մօտ,
Երիտասարդին նա տարաւ իր հետ,
Թագաւորի մօտ այն հնարագէտ։
Անցքը ողջ պատմեց թագաւորին նա,
Որ արքան անցքից լաւ տեղեկանա…
Թագաւորն ևս սաստիկ ցաւ զգաց,
Երիտասարդին նայեց ու ասաց․
-Այս մարդուն հիւր կաց մի քանի օրով,
Մինչև որ ոսկիդ լրիւ ապահով,
Այն ստոր մարդուց առնեմ ու տամ քեզ,
Եւ նրան քեզ մօտ անեմ սևերես։

* * *

Ու թագաւորը շուտ մարդ ուղարկեց,
Նենգ դատաւորին պալատը կանչեց,
Տարաւ նրան իր ոսկու գանձարան,
Անթիւ անհամար գանձ ցուցնեց նրան։

-Գիտես,- ասաց նա – թէ ինչ միտք ունեմ,
Կուզեմ այս ոսկին քո մօտ պահ դնեմ,
Ուղարկում եմ քո տուն, ապահով պահես
Ու իմ մահից յետ տաս աղջիկներիս։
Սակայն գաղտնիքը մնայ ինձ և քեզ…
Այդ մասին դու խօսք ոչ ոքի չասես։
Ուրիշ մէկին ես չեմ կարող գտնել,
Որ կարողանամ հաւատ ընծայել…
Ես վախենում եմ տղաներս ամեն
Իմ գանձարանը ամբողջ գրաւեն
Ու աղջիկներիս ոչ մի մաս չտան,
Այդ խորունկ ցաւով մտնեմ գերեզման։

Այժմ գնա՛ տունդ տեղ սարքիր դրան,
Ու երբ սարքեցիր, ե՛կ ինձ յայտնիր այն:

Դատաւորն ասես հրճւանքից ցնդեց,
Երբ Թագաւորից այդ խօսքը լսեց.
Նա այն օրից երբ աշխարհ էր եկել,
Այդքան մեծ մի գանձ բնաւ չէր տեսել:
Մտածեց՝ ինչքան բախտաւոր եմ ես,
Բախտն է ինքն արել ինձ երես,
Թագաւորից զատ ոչ ոք չի գիտնայ,
Այդքան մեծ գումար ինձ մօտ աւանդ կայ...
Ծեր Թագաւորն էլ երկար կեանք չունի,
Նա կեանքն արել է, շուտով կմեռնի
Ես կը վայելեմ քանի կեանք ունեմ,
Շքեղ, փառաւոր ինձ կեանք կստեղծեմ...
Ինձնից յետոյ էլ զաւակներս ամէն,
Այդ գանձը կուտեն, երջանիկ կապրեն:

Կեղծ դատաւորը երբ դարձաւ իր տուն,
Որմնադիր կանչեց հրճւանքով լեցուն.
Մի նկուղ սարքեց իր տանը ամուր,
Ու Թագաւորին հաղորդեց այդ լուր:
Արքան էլ գնաց տեսաւ գիշերով
Հաւանութիւն տւաւ մեծ սիրով,
-Սպասիր ,- ասաց – դու մի քանի օր,
Որ քեզ ուղարկեմ այն գանձը բոլոր:

Ու Թագաւորը խելօք իմաստուն,
Շարունակեց իր արարքը գիտուն.
Երիտասարդին նա կանչեց պալատ
Որ՝ դատաւորի մօտ գնայ հաստատ,
Ու նրան ասի,- տուր դու իմ ոսկին,
Թէ չէ կգնամ գանգատ արքային,

*Եղածը կասեմ ամբողջը ես նրան,*
*Կը խնդրեմ իրենից արդար դատաստան...*
*Ու հրամայեց, նա տայ թէ չտայ,*
*Գայ ու արդիւնքը իրեն իմաց տայ:*

*Երիտասարդը այդպէս էլ արաւ...*
*Կեղծ դատաւորը սաստիկ նեղն ընկաւ.*
*Մտածեց եթէ այդ ոսկին չտայ,*
*Ու մարդն արքայի մօտ գանգատ գնայ,*
*Արքային կասկած կյարուցի դա,*
*Ու մեծ գանձն արքան իրեն պահ չի տայ:*
*Լաւ է, որ այդ փոք ոսկին տայ տիրոջ*
*Ու տէր դառնայ այն մեծ գանձին ամբողջ:*

*Դատաւորն իրեն կեցւածքը փոխեց,*
*Քաղաքավարի կեցւածք որդեգրեց.*
*Ներում խնդրեց իր մոռացման համար.*
*Թէ՝ ինքը չուզեց ուտել այդ գումար:*
*Մեղք չի ունեցել ինքը այդ գործում,*
*Մեղքը եղել է իրեն մոռացում,*
*Պահ դրած ոսկու մասին նոր յիշեց...*
*Ապա նա ոսկին քսակով բերեց,*
*Ու լրիւ յանձնեց երիտասարդին,*
*Խնդրեց այդ մասին չասել ոչ ոքին:*

*Երիտասարդն երբ ոսկին ստացաւ,*
*Անհամբեր, արագ նա պալատ դարձաւ,*
*Եղելութիւնը պատմեց արքային,*
*Ու մէջտեղ դրաւ քսակով ոսկին:*
*Արքան զայրացաւ անչափ, անսահման*
*Արդեօ՞ք ինչպիսի պատիժ տար նրան,*
*Որ հանդարտէր իր սիրտն ալեկոծւած,*
*Ու արդար վճռից գոհ մնար Աստւած.*

*Ու հրահանգեց, որ իսկույն գնան,*
*Իր մօտ բերեն նենգ դատաւորին այն,*
*Դատաւորն եկաւ, արքան խոր նայեց,*
*Ապա զայրացած նրան հարցրեց.*

*-Է՛, դու դատաւոր, նայիր այս մարդին,*
*Ճանաչում ես այս երիտասարդին,*
*Երբ դատաւորը նկատեց նրան,*
*Ու ոսկու քսակը շատ ծանօթ իրեն,*
*Շատ լաւ ըմբռնեց որ արքան իրօք,*
*Գործ էր դրել այդ հնարքը խելօք,*
*Որ իր նենգ ու կեղծ արարքը պարզւէր,*
*Ու այն խեղճ մարդու ոսկին ստացւէր.*
*Նա ինչպէս իրեն համարէր անմեղ,*
*Երբ գործել էր այդ կեղծիքը ահեղ։*
*Ուզեց գետինը ճեղքւէր, պատռւէր,*
*Ու իրեն կուլ տար, ծածկէր, թաքցնէր։*

*Արքան զայրոյթից թուք ձգեց նրան,*
*Ու բացայայտեց կեղծիքն անվարան.*
*-Է՛, դու զեղծարար, նենգ, ցածր ու ստոր,*
*Դու այս քաղաքի կոչւած դատաւոր,*
*Երբ դու այսքան մեծ կեղծիք գործ դնես,*
*Էլ ուրիշներից ինչ սպասեմ ես,*
*Այժմ ես գիտեմ, թէ ոնց ես դիզել,*
*Կայք ու կալւածքըդ ու այդքան տուզել.*
*Մարդկանց արիւնն ես քամել դու տմարդ,*
*Չես հաշւել մի օր պիտ ընկնես թակարդ։*
*Ո՛չ, հերթն իմն է, չեմ զիջի ես քեզ.*
*Ա՛յ, դու խաբեբայ պիղծ ու աներես.*
*Էլ դատաւոր չես դու այսուհետև,*
*Բանտն է քո տեղը, ահա քո պարգև,*
*Գնա՛, անպիտան, այնքան այնտեղ կաց,*

*Որ փտես, կորչես արարքիդ դիմաց։*
*Ու արքան զրկեց պաշտոնից նրան,*
*Բանտը նետելու տվեց հրաման,*
*Իսկ իր խելացի հնարքով սիրուն,*
*Երիտասարդին հասցրեց իր ոսկուն։*

# ՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ
# ՉԱՓԱԾՈՅ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Վերջերս, երբ Թեհրանում բեմադրուեց Վարանդի «Առիւծասպանն ու Արքան» պօէմա՛ն, այդ առթիւ գրուած երկու՝ Ն. Տէր Մեսրոպեանի («Ալիք» 8 Յունիս) եւ Վ.-ի (13 Յունիս), յօդուածներում յիշուել էր, որ «Թերեւս առաջին անգամն է Իրանում բեմադրւում չափածոյ մի գործ։ (Գոնէ ես տեղեակ չեմ)» եւ «պիէսը իր տեսակի մէջ նորութիւն էր իրանահայ թատրոնի մարզում»։

Ի լուսաբանութիւն անհրաժեշտ է ասել, որ ինչքան տեղեակ եմ, չափածոյ փոքր պիէսներ, ինչպէս՝ «Զարի Վերջը», «Մկների ժողովը», «Մի կաթիլ մեղր» եւ այլն, միշտ էլ երեւացել են դպրոցական բեմերի վրայ։ Նոր Ջուղայում, 1957 թուի Դեկտ. 31-ին, Նոր Տարուայ առթիւ, բեմադրուել է նաեւ «Փարուանա» պօէմը, իսկ այս բոլորից բացի եւ աւելի ընդարձակ ծաւալով մի չափածոյ, բեմադրուել է 1947 թուին, Փերիայի Խոյգան գիւղում։

Բեմադրուած այդ պիէսան, Խորէն Տէր Վրոյրեանի «Հրանդ» պոէման է, որը պիէսայի էր վերածուել եւ բեմադրութեան համար յարմարեցուել Փերիոյ հայկական դպրոցների շրջանային տեսչի՝ Լեւոն Մինասեանի կողմից, եօթը փոքր վարագոյրներով, որ բեմադըրուել է Վարդանանց տօնի առթիւ, Խոյգան գիւղում 1947 թուի Փետրուար 12-ին եւ 17-ին։ (Թղթակցութիւնը տեսնել՝ «Ալիք» օրաթերթում, 1947 թ. Փետր. 28)։

Նոյնպէս Մինասեանի կողմից ամփոփուելով ու յարմարեցուելով 1942 թուի Փետրուար 8-ին, Խոյգան գիւղում բեմադրուել է Նշան Պէշիկթաշլեանի «Սոսկալի Նազար» (Քաջ Նազար) պիէսան, որը թէեւ լրիւ չափածոյ չէ, բայց մեծ թուով բանաստեղծական կտորներ ունի իր մէջ։ («Ալիք» 1942 թ. 24 Մարտ)։

ՄԱՍԻՍ

صاحب امتیاز و مدیر مسؤل دکتر وارطان هوانسیان
خیابان نادری کوچه گوهرشاد شماره ۲۰
تلفن ۴۹۱۴
وجوه باسم لیون کلانتریان ارسال شود
شماره ۳۳۸۷ سال هیجدهم
شنبه ۱۱ آذر ۱۳۲۷

2
Դեկտեմբեր
1948
11 ԱԶԱՐ 1327

ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ ԹԻՒ 272


## ՏԷՐ ՎԱՐԴԱՆ ՔԱՀ. ՏԷՐ ՎՐՈՅՐԵԱՆ

Կարճատև հիւանդութիւնից յետոյ, Նոյ. 24-ին, Թեհրանի Բեհջաթաբադ թաղամասում իր մահկանացուն կնքեց Բուրվարի շրջանի Սանգեֆիդ գիւղի սիրուած ու յարգուած քահանան՝ Տէր Վարդան Տէր Վրոյրեանը 65 տարեկան հասակում։

Թաղումը կատարուեց յաջորդ օրը։ Տեղահանման հետեւանքով առաջացած անտեսական ծանր վիճակը նկատի առնելով, Թեհրանի Եկեղեցական Վարչութիւնը անհրաժեշտ դիւրութիւններ էր ընձեռել թաղումը լաւ պատշաճի կատարելու համար։

Թէ անզգածուած և թէ նախապէս քաղաքացում հաստատուած բոլոր բուրվարցիները շտապել էին իրենց վերջին յարգանքը մատուցանել իրենցից ընդմիշտ բաժանուող սիրելի հոգեւոր հօրը:

Ս. Աստուածածին եկեղեցում կատարուեց Ս. Պատարագ—հոգեհանգիստ, որից յետոյ դամբանական խօսեց Արժ. Տէր Ց. քահ. Հաճեանը, վեր հանելով հանգուցեալ Տէր հօր արժանիքները, որպէս համեստ ու ժողովրդասէր հոգեւորականի։ Հանգուցեալի դին խուռն բազմութեան մասնակցութեամբ առաջնորդուեց դէպի Դուլաբի Բուրաստան գերեզմանատուն, առաջ հողին յանձնելու։

Թաղման յատուկ ծիսակատարութեան մասնակցում էին տեղւոյ գրեթէ բոլոր եկեղեցական քահանաները։

Հանգուցեալ Տէր հայրը համարւում էր վերջին շառաւիղն էր Բուրվարի շրջանի անցնող սերնդի քահանայական դասի։ Նրան ծանօթ և մօտ շփուող անձնաւորութիւնները միայն կարող են բնութագրել նրա բարձր նկարագիրն ու առաքինութիւնները, որպէս հոգեւոր հօր և որպէս եկեղեցականի։

Նրա ժողովրդականութեան պերճախօս ապացոյցն է այն կանոնաւորութիւնը, որի մէջ էին գտնւում իր հովուած Արաքի և Սանգեֆիդ գիւղերի եկեղեցական—ազգայնական և հասարակ ազգային գործերը նրա ջանքերի շնորհիւ, գիւղերում հայերը միշտ վերանորոգւում էին ի շահ գիւղացիութեան։

Իր պարզ ու համեստ բնաւորութեան շնորհիւ, ոչ միայն շրջապատի, այլև օտար շրջանակների, ինչպէս նաև գիւղատէրերի և պետական մարդկանց լայն յարգանքն ու համակրանքն էր վայելում։ Նրանք տառացիօրէն ուշադրութեամբ էին ընթացք տալիս նրա որևէ դիմումին։ Բազմաթիւ են դէպքերը՝ երբ նոյն գիւղատէրերը ընդառաջելով Տէր հօր խնդրանքին, նիւթական աջակցութիւններ էին ցոյց տալիս գիւղացիներին։

Հանգուցեալը անսահման սիրով էր լցուած և խորը հաւատք ունէր դէպի մայր երկիրը, այդ իսկ պատճառով առաջին հերթին արձագանգելով Ներգաղթի Կոմիտէի կոչերին, հապճեպ կերպով, շատ չնչին արժէքով ծախու հանեց իր ունեցած-չունեցածը, ժամ առաջ հայրենիք մեկնելու համար, իր սիրած ժողովրդի հետ։ Սակայն ինչպէս ամենքին յայտնի է, հակառակ իր ցանկութեան, ներգաղթը դադարեց և բոլոր իր յոյսերն ու երազները ջուրն ընկան։

Այս յուսախաբութիւնը մի կողմից և բնական ու թափառական դարձած իր ժողովրդի անտեսական ու բարոյական քայքայման վիճակը միւս կողմից և թշուառութեան մատնուած իր համագիւղացիներին օգտակար լինելու անկարողութեան գիտակցութիւնը երրորդ կողմից, մաշեցին ու քայքայեցին նրա հոգեկան հետ նաև ֆիզիքականը, որ այլևս առավել չկարողանալով, օրըստօրէ վատթարացող պայմաններին, ընդմիշտ աչքերը փակեց, թողնելով իր հարազատներին ու սիրելիներին խոր վշտի մէջ։

Թող հողը թեթև գայ մեր սիրելի Տէր հօր թարմ աճիւնին:

Մ. Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

## ՀՐԱՆԴԸ

(Պօէմա)

Խորէն Տէր Վրոյրեանի, 1944 թ. Թեհրան, տպ. Մոդեռն, էջ 16, գին 20 ռիալ։

Հեղինակը գաւառական մեր համեստ ուսուցիչներից է: Նիւթը՝ մի խրատական ու իմաստալից տաղ, մի ծանօթ զրոյցի տարբերակը (վարիանտ)։

Խոհեմ ու հեռատես հայրը կտակում էր, թէ ինչ վիճակի պիտի մատնուի իր շփացած զաւակը։ Այդպէս, որպէս վերջին խօսք՝ տալիս է որդուն, թէ երբ շռայլելով ամբողջ ունեցուածքը կը լքուի իր բոլոր ընկերների ու բարեկամների կողմից և կը ցանկանայ անձնասպանութիւն գործել, թող իրեն կախի գամի ինչ որ պարանից։ Երբ անկուշտ Յացած Հրանդից ոչ միայն երես են թեքում, այլև նրան ստախօս են համարում իր լաւ ու լայն օրերի ընկերները, նա կատարում է հօր խօսքը։ Բայց խեղդիչ պարանի փոխարէն գտնում է հօր թաքցրած գանձը: Դառնալով մի այլ Հրանդ, մէկ շքեղ խնջոյքի մէջ իր ծէ խօշոր սուտը որպէս ճշմարտութիւն է հարկադրում նախկին ընկեր-բարեկամներին։ Այդ հացկատակ, պնակալէզները հաստատում են, թէ մուկը կարող է երկաթ ուտել։

Առակ տարածուած ձևի համաձայն, Հրանդը (կամ մի այլ ոք) կծու կերպով երեսներին է խփում նրանց [illegible] կոծիքը և խայտառակելով՝ դուրս վռնդում իր տնից։ Հեղինակը շատ է մեղմել նրա վերաբերմունքը, ընդշացրել [illegible], որդու զայրոյթով բորբոքուած մարդու հիւմորիստ, թախծօրէն հեգնող ներկայացնելով:

Չնայած յիշեալ և մի քանի այլ թերութիւններին, հետաքրքիր աշխատութիւն պիտի համարել «Հրանդը»։ Պարզ, անսեթևեթ ոճ, կենդանի պատմողի շնորհք, անկեղծ շունչ։

Հեղինակն այդ աշխատութիւնը նուիրել է իր հօր՝ Պետրոս Տէր Վրոյրեանի յիշատակին։

Ա. ՄԱՄԵԱՆ

## «Հրանդը» Պօէմա



ԽՈՐԷՆ ՏԷՐ ՎՐՈՅՐԵԱՆ

# ՀՐԱՆԴԸ

(ՊՕԷՄԱ)

ՏՊԱՐԱՆ «ՄՈԴԵՐՆ», ԹԵՀՐԱՆ
1944

Հանգուցեալ հօրս՝ Պետրոս Տէր Վրոյրեանի անմոռաց
յիշատակին եմ նւիրում սոյն գրքոյկս։

ԽՈՐԷՆ ՏԷՐ ՎՐՈՅՐԵԱՆ

# ՀՐԱՆԴԸ

## 1

Մի հին, անուանի, մեծ գիւղի ծոցում,
Վահան անունով մի մարդ էր ապրում.
Աստուած Վահանի գործը յաջողել՝
Հազար-հազարի տէր էր դարձրել։
Թէ այն հին գիւղում, թէ այն գաւառում
Հարուստ Վահանի ճրագն էր վառում։
Ունէր ոչխարի մի քանի հօտեր,
Կովերի նախիր, ձիերի ջոկեր,
Գառ ու ուլերի տասնեակ երամակ,
Լծկան եզ, գոմէշ, արջառ անքանակ.
Փողի՞ն ի՞նչ հաշիւ, արծաթ թէ ոսկի,
Ոնց որ հաշուէիր վերջ չկար իսկի։
Ունէր մի տիկին ազնիւ ու արդար,
Որի նմանը ոչ մի տեղ չկար,
Աղքատախնամ ու շատ որբասէր,
Թշուառների քոյր, անճարների տէր։
Աշխարհում նրանց տանջում էր մի ցաւ,
Խեղճերը զաւակ չունէին բնաւ։
Հարուստ Վահանը ու հեզ գեղջկուհին,
Այդ ծանր ցաւից տառապում էին։
Մի օր երկուսով աղօթքի նստած,
Ձեռքները պարզում դէպի վեր Աստուած,
Նրանից խնդրում, որ խղճայ, գթայ,
Իրենց ողորմի և մի զաւակ տայ,

Որ գայ տէր դառնայ ամեն կալուածքին,
Շէն պահի իրենց օջախը կրկին։

2

Մի օր էլ նրանց մի տեսիլք թուաց,
Որ հրեշտակը իջաւ ու ասաց.
— Դո՛ւք Տիրոջ ընտրեալ ազնիւ ընտանիք,
Ես եկել եմ որ տամ ձեզ աւետիք.
Ձեր մաքուր հոգին երբ տեսաւ Աստուած,
Տուեց անհաշիւ ձեզ կայք ու կալուած,
Այժմ էլ երբ տեսաւ ձեր վիշտը անտակ,
Վճռեց նուիրել մի հատիկ զաւակ։
Տէր Աստուածն է ինձ ուղարկել ձեզ մօտ,
Որ տամ աւետիք ձեր սրտին կարօտ.
Քանի որ քաղցած, թշուառ, մուրացկան,
Ձեզնից են տեսնում մի ուրախ վայրկեան,
Մի տարուց յետոյ, անշուշտ, անպայման,
Դուք պիտ ունենաք ձեր ուզած տղան։ —
Ասաց հրեշտակն ու անյայտացաւ,
Դէպի կապուտակ երկինք սլացաւ։

3

Վահանն ու իր կին ուշաթափուեցան,
Այդ ինչ հրաշք էր, բան չհասկացան.
Միայն ինչպէս որ ասաց հրեշտակ,
Մի տարուց յետոյ ունեցան զաւակ.
Ու մկրտեցին բերկրանքով անհուն,
Մանուկին «Հրանդ» կոչեցին անուն։
Երբ որ նա դառնար եօթը տարեկան,
Նա պէտք է գնար դպրոց, կրթարան,
Բայց աւա՜ղ, գիւղում այդպէս բան չկար,

Դպրոց, վարժարան, կրթարան չկար.
Իսկ եթէ մէկից դպրոց հարցնէիր,
Պատասխան միայն այս կստանայիր.
—Է՜, ես որ ուսում չունեմ՝ չե՞մ ապրում,
Որ իմ էրեխին հիւքման տամ ուսում.
Ուսլիք Աստծուց դու թալաք արա,
Թէ չէ կարթալ ու մարթալս ո՞րն ա.
Էն Աստօծը որ քանդրին ցեխ գցեց,
Ուսլիքն մուշախաս ճակատին գրեց։

4

Այսպէս Հրանդն էլ երբ որ մեծացաւ,
Ափսո՜ս, շատ ափսո՜ս, ուսում չստացաւ,
Փայփայանքներով մեծացած տղան,
Ինչ արաւ, ոչ ոք խօսք չասաց նրան.
Ուտել խմելու յետեւից ընկաւ,
Ինչ աչքը տեսաւ՝ սիրտը ցանկացաւ.
Ոչ ցանկաց կարդալ և ոչ փող շահել,
Սովորեց ծախսել, ցիր ու ցան անել։

5

Տարիներ անցան, Հրանդ մեծացաւ,
Մինչ քսան տարուց հասակն անցկացաւ.
Ամեն առաւօտ հէնց քնից զարթնէր,
Շուրջն էին պարում մի խումբ ընկերներ,
Շրջապատելով ուրպէս մի իշխան,
Խոնարհւում էին ու պատւում նրան.
Ու հէնց արձակէր մի խօսք, հրաման,
Կը կատարէին իսկոյն անպայման.
Հրանդը քէֆի տեղն էր որոշում,
Եւ խումբն իսկոյն այնտեղ շտապում,

Իրենց հետ առած ամեն ուտելիք՝
Ոչխար, գառ, հավ, ձու, և ամեն խմիչք։
Այն գյուղում այլևս մի տեղ չմնաց,
Որ Հրանդը քեֆ չլիներ արած.
Այգիների մեջ, բուրաստաններում,
Աղբյուրների մոտ, կանաչ դաշտերում։
Երբ նրանց քեֆը կայացավ մի օր,
Մի տեսնենք ինչպես անցկացավ էն օր.
Հրանդը օղու բաժակը լցրեց,
Ձեռքն առավ, կանգնեց ու արտասանեց.

— Օ՜, լավ ընկերներ, դուք իմ աչքի լույս,
Դուք էք աշխարհում իմ նեցուկ ու հույս.
Հարստությունից ինչ ասէք ունեմ,
Պատրաստ եմ ամբողջ ձեր ճամբին փտնեմ։
Չեմ մոռանայ ձեզ ես ոչ մի վայրկեան,
Պայմանավ դուք էլ սերտ լինէք միայն,
Ինչ որ կամենաք, կարիք ունենաք,
Հէնց յայտնէք թէ չէ՝ ինձնից կստանաք։
Բաց է ձեր առաջ մեր տան դուռը միշտ,
Իմ դէմ չունենաք երբեւէ մի վիշտ,
Թէ հայրս, մայրս ձեր դէմ նեղանան,
Զտեսած հաշուէք ու թողէք գնան.
Ձեր սիրողը միշտ ինքս եմ միայն,
Թէ ուզէք հոգիս կը տամ անպայման.
Եթէ չքաւէ ձեզ ոչխար կամ գառ,
Ես մորթել կտամ երինջ ու արջառ,
Գլուխս միայն կենդանի մնայ,
Ձեր ուզած քեֆը միշտ կը կայանայ։

Հրանդը հէնց դեռ խօսքը չաւարտած,

Կեցցէ՛ն ու ուռա՛ն չորս կողմից թնդաց.
Մեծ ընկերներից մէկն անաչառ,
Սերտ դրւատանքով խօսեց քանի բառ.

—Դու մեր հարազատ եղբայրն ես, Հրանդ,
Մենք քեզ կը սիրենք յաւէտ անկաշկանդ.
Մենք էլ ենք ուզում քեզ պէս մեծ եղբօր
Սիրել ու մօտ լինել ամեն օր։
Ամեն օր հէնց քեզ շրջապատում ենք,
Կարծում ենք թէ մենք աշխարհի տէրն ենք։
Աստւած այն օրը վայել չանէ մեզ,
Որ դժբախտութեան մէջ տեսնենք մենք քեզ.
Թէ պատահի քեզ որեւէ փորձանք,
Քո ճանապարհին կզոհենք մեր կեանք.
Թող քո սեղանդ միշտ առատ տեսնենք,
Որ մենք գանք ուտենք, քեզ հետ քէֆ անենք։

Աւագ ընկերը հէնց ճառը ճառեց,
Ծափահարութեան ձայն էր որ լսւեց,
Բռաւօ՛, կեցցէ՛, հէնց այդ էր միայն,
Գոչեցին նրանք ողջ միանգամայն։

6

Խեղճ հօր վիճակը դարձաւ ողբ ու սուգ,
Ապա մի նայէք ու վկայէք դուք,
Ի՞նչ պիտի լինէր մի խեղճ հօր վիճակ,
Եթէ ունենար այդպէս մի զաւակ։
Կանչեց իր միակ կամակոր որդուն,
Ու տւեց նրան խրատ իմաստուն.
—Սիրասուն որդի՛ս, խրատս լսի՛ր,
Քո ունեցածդ իզուր մի վատնիր,

Եթէ ունենաս ողջ քեզ են եղբայր,
Իսկ թէ չունենաս՝ չեն նայիլ իսպառ,
Կը ծախսեն, կուտեն, կը խմեն, կը հագնեն,
Բայց ոչ եղածը ցիր ու ցան կանեն.
Մեղք ես, զաւակս, խղճում եմ ես քեզ,
Թէ սնանկացար՝ մի մուրացկան ես,
Քաղցր ընկերներդ այն վայրկեանին,
Անշուշտ կը դառնան քո չար թշնամին.
Այժմ քո կամքն է, արա ոնց կուզես,
Ու հետեւանքը ինքդ կը տեսնես։

7

Հօր խրատները անցան ապարդիւն,
Ու պատճառեցին թախիծ խեղճ մարդուն.
Հրանդը առատ ծախսեց ու բաշխեց,
Իսկ աշխատանքի երբէք չնայեց։
Ու խեղճ Վահանը էլ ճար չիմացաւ,
Խրատներն ամեն ապարդիւն անցաւ,
Առաւ մի ուրագ, մի երկար պարան,
Մի լիք մեծ տոպրակ ու մի ելարան,
Մեն-մենակ ամբողջ մարագում կրեց,
Իւր գիտելիքն այնժամ կատարեց.
Բայց թէ ինչ արաւ, յետոյ կիմանանք,
Այժմ այդ խնդիրին չանդրադառնանք։

8

Վառւած, վշտացած ու յուսահատւած,
Վահանը կանչեց որդուն ու ասաց.
— Հրանդ, ես քեզ շատ տւեցի խրատ,
Աւաղ, չունեցաւ արդիւնք քիչ թէ շատ.
Սակայն մի բան էլ ունեմ ասելու,

Որն անշուշտ քո գլուխդ է գալու.
Ամբողջ ունեցած կայքդ կը վատնես,
Երջանիկ կեանքդ ձեռնթափ կանես,
Յոյսդ կը կապես բարեկամներիդ,
Բայց նրանք կանեն թուք-մուր երեսիդ,
Յետոյ կը դիմես դրացիներիդ,
Բայց նրանք երբէք չեն կպչի դարդիդ,
Ապա կը խնդրես քո ընկերներիդ,
Բայց նրանք քարով կը խփեն գլխիդ.
Վերջապէս աշխարհ, երկիր, բնութիւն,
Թշնամի են քեզ, չունիս փրկութիւն...
Կը ջղայնանաս, կը յուսահատուես,
Կը վշտանաս ու խելքդ կը ցնդես,
Ազատութեան ելք երբէք քեզ համար,
Միայն մահը քեզ կը գտնես յարմար,
Բայց խեղճ զաւակս, ի՞նչ պիտի անես,
Մահն էլ քեզանից կը թեքի երես։
Շատ եմ մտածել բարակ ու երկար,
Մինչև գտել եմ քեզ միայն մի ճար.
Կը մտնես մարագ, կը տեսնես գերան,
Որին կախել եմ մի երկար պարան,
Պարանի ծայրին օղակ է դրած,
Կը դնես վիզդ, քեզ կը նետես ցած,
Կը թափահարես օղակն ամրանայ,
Ու քեզ սպանի, ազատի անխնայ,
Վերջին րոպէին, երբ դեռ շունչ ունես,
Կը տեսնես անհուն սէրն իմ դէպ քեզ։

9

Վերջին խօսքերը ճնշեցին որդուն,

Վիշտ պատճառեցին անծայր ու անհուն,
Բայց ո՞նց ձեռք քաշէր իր արարքներից,
Ձեռքն էր վարժւել մանուկ հասակից,
Եւ ի՞նչպէս թողնէր այն ընկերներին,
Որոնք Հրանդի աչքի լոյսն էին։
Կամ այլես ի՞նչ անել կարող էր,
Գործելու ճամբայ երբէք չգիտէր.
Երկմտեց Հրանդ, բայց վճռեց դարձեալ,
Ծախսող, քաշխող ու ընծայող կենալ,
Սիրելի մնալ բարեկամներին,
Աչքաթող չանել իր ընկերներին։

**10**

Ունայն ու փուչ աշխարհի
  Վարքն ու տրարքն է շատ վատ.
Չկայ մէկը որ դառնայ
  Իւր խոստմանը հարազատ.
Թէ Արարիչն իւր բարի
  Կամքը թեքի մի մարդից,
Լաւ է մի մահ էլ շնորհի,
  Ու ազատի կսկիծից։
Աստուածային սուրբ կամքով,
  Պէտք է միշտ մարդ կեանք վարի,
Իսկ եթէ ոչ՝ մարդն ո՞վ է,
  Որի յոյսով մարդ ապրի.
Թէ մարդ պահել կարեցաւ
  Իւր պատիւը թանկարժէք,
Անչափ սիրեց ինքն իրեն,
  Եւ հասկացաւ իր արժէք։

Անցեալ օրուայ պատուաւորն
Այսօր դարձաւ անազնիւ,
Միւս օրուայ խելացին,
Այսօր դարձաւ անպատիւ։
Լաւ է սնանկացածին,
Կայծակ խփի սպանի,
Քան թէ բնութիւնը օգնի,
Թողնի նրան կենդանի։

11

Ժամանակ անցաւ։ Կամակոր որդին
Հանդիպեց իր հօր գուշակած օրին.
Ամբողջ ունեցած կայքը նա վատնեց,
Անգամ պատերի սեպերն էլ քաշեց.
Բայց և հասկացաւ, որ օր ըստ օրէ,
Ոչնչանում է ու ընկնում պատւէ.
Տեսաւ դրացի, ընկեր, բարեկամ,
Չեն ուզում տեսնեն երեսն անգամ...

Մի օր Հրանդը տեսաւ մի այգում,
Ընկերներն ամեն քէֆ էին անում,
Գնաց պարտէզի փակ դռան յետև,
Ու խնդրեց նրանց կարճ ու յարատև.
— Իմ լաւ ընկերներ, իմ աչքիս լոյսեր,
Տեսէք ես Հրանդ ընկերն եմ ձեր,
Ի՞նչպէս առանց իմ ներկայ լինելուն,
Ձեր քէֆն է լինում շքեղ ու սիրուն.
Միթէ ես չէի՞, որ եղբօր նման,
Ձեզ շուրջս առած՝ կը տայի հրաման.
Միթէ ես չէի՞, որ ազնուաբար
Զը խնայեցի կայքս ձեզ համար.

*Այն ես չէի՞, որ ձեր պատուի համար*
*Աչքաթող արի ծնող ու աշխարհ,*
*Այն դուք չէի՞ք, որ ամեն առաւօտ,*
*Հաւաքւում էիք ողջ խմբով ինձ մօտ,*
*Միթէ դուք չէի՞ք, որ ողջ միաբան,*
*Խոստանում էիք յոյսեր անսահման.*
*Թէ կարելի է հէնց այսօր միայն,*
*Թոյլ տուէք անցնեմ ձեզ մօտ մի վայրկեան...*

*Նրան պատասխան խորին լռութիւն,*
*Տեղի չունեցաւ մի խօսք, մի ծպտուն.*
*Չը բաւարարուեց նա այդ ամենով,*
*Ցանկաց թէ էլ ինչ պիտ անցնի գլխով,*
*Մեծ դժուարութեամբ պատը բարձրացաւ*
*Ու այն պարտէզի ներսի կողմն անցաւ,*
*Տխուր ու տրտում մօտեցաւ խմբին,*
*Նստեց մօտ անցնող առուակի թմբին։*
*Երկար ժամանակ նստեց լուռ ու մունջ,*
*Չեղաւ դէպ իրեն մի խօսք, մի մրմունջ.*
*Յուսահատաբար ինքը խօսք բացեց,*
*Նոյն օրւայ գլխի անցածը պատմեց.*

*—Լսէք, պատմեմ ձեզ մի փոքրիկ հէքեաթ,*
*Տեսէք ո՞նց է երբ թեքւի մարդու բախտ.*
*Երբ ես ցանկացայ գալ նստել ձեզ մօտ,*
*Ձեռքս էր դատարկ ու սիրտս կարօտ.*
*Շւարած մոլոր ման եկայ երկար,*
*Չկարողացայ անել ցաւիս ճար,*
*Դիմեցի մօրս անհուն թախիծով,*
*Պատմեցի նրան դարդերս իմ ծով.*
*Ազնիւ մայրիկս խոր հոգոց քաշեց,*

Ապա իմ այրված սիրտս փաղաքշեց.
Ասաց. «Հրանդ ջան, թող ես մեռնեի,
Որ այդ վիճակում քեզ չտեսնեի.
Ցավում եմ որ երբ վերջացավ քո կայք,
Դարձավ թշնամի քեզ քո շրջակայք»։
Ապա որոնեց անկիւններր տան,
Մինչ գտավ արկղից իւր վերջին լուման.
Դրացիներից գնեց քիչ ձու, եղ,
Ու կազմակերպեց մի հատ ձվածեղ.
Ձվածեղն առնելով ուրախ քայլեցի,
Ձեր հավաքույթին ես շտապեցի,
Որտեղից որտեղ ճամբին մի ագռավ,
Կտցեց իմ ձեռքից ու երկինք թռավ...
Հրանդը հէնց դեռ խոսքը չավարտած,
Ծաղր ու ծանակի ձայն էր որ թնդաց.

—Այ դու անամօւն, յիմար արարած,
Հերիք դու փչես անմիտ ու բաց-բաց,
Հավատալու չէ երկնքից ագռավ,
Իջավ ձվածեղ կտցեց ու տարավ.
Թէ կուզես արդար դուրս գալ՝ այն սաս,
Թէ չէ փուչ խելառ երբէք մի խօսա.
Դու ընկեր չես մեզ, այլ ցավ ու կրակ,
Կուզես մեզ անել փուչ ու խայտառակ.
Ապա էն սաս ով հրավիրեց քեզ,
Որ գաս նստես ու էդպէս սուտ փչես.
Դէհ, շուտ այստեղից վեր կաց, հեռացիր,
Եւ այսուհետև անպայման գիտցիր,
Որ տեղդ չէ ուր մենք ենք հավաքված,
Կամ որտեղ ուրիշ շրջան է կազմած։

Իսկ թէ մի անգամ տեսնենք որ կրկին,
Ուզում ես մեկնես քո քայլը նախկին,
Կը բերենք գլխիդ Աստծոյ բարկութիւն,
Քեզ ոչ յարութիւն և ոչ թողութիւն։

Հրանդի գլխին նստեց ողջ աշխարհ,
Աչքի լոյսն հատեց, դարձաւ խելագար,
Այնպէս սկսեց բղաւել, գոռալ,
Որ ձայնից գետին սկսեց դողալ։
— Այ դու անարդար, անիրաւ աշխարհ,
Դու ինձ խաբեցիր, խաբեցիր իսպառ,
Սէր, եղբայրութիւն էի ցանկանում,
Մարդկանց լաւութիւն էի ես անում,
Բայց հէնց վերջացաւ կայքս անհաշիւ,
Դարձայ ստասան, խելառ, անպատիւ.
Ո՛չ, այլևս ես չեմ կամենում կեանք,
Կրելով այսպէս անգութ տառապանք,
Ողորմած մահով կարող եմ միայն,
Կեանքս ազատել, չտանջուել այսքան.
Բայց երբ չկայ մահ, միայն ու միայն
Ես պիտի դիմեմ ինքնասպանութեան,
Իմ սիրելի հօր խօսքն է կանաչել,
Իմ թշւառ կեանքից մահն էլ է փախչել.
Հէնց այժմ պիտ դիմեմ կախուած պարանին,
Կեանքս ազատեմ այս վայրկեանին։

Ու վազեց ուղիղ դէպի հին մարագ,
Դրեց իւր վիզը օղակն արագ,
Եւ ամբողջ ուժը մէկտեղ հաւաքած,
Գալիք օրերից իսպառ կշտացած,
Հէնց թափահարեց ողջ ուժով պարան,

Որ հսկայ ուժից կոտրւեց գերան,
Ու այն գերանից պարզ, մաքուր ոսկին
Զնգալով իջաւ, փուեց յատակին։
Ցնորք էր արդեօք, թէ լուրջ պատահար,
Պլշած կանգնել էր, դարձել ապշահար,
Բայց երբ սթափւեց՝ գնեց մի վայրկեան,
Հասկացաւ միայն հօր սէրն անսահման...

12

Հրանդը արդէն փործւեց, խրատւեց,
Աշխարհի վարքը իւր գլխով փորձեց.
Գնեց տնային կահ-կարասիներ,
Պատրաստեց այնպէս՝ ինչպէս առաջ էր։
Ու ամեն կողմից եկան երեան
Ընկեր, դրացի, ծանօթ, հարեան։
Կամար կապուտակ բաց երկնքի տակ
Մնաց կազմելու մի փորձ անկատակ.
Դիտել ինչ հիման վրայ է աշխարհ,
Խելօք էլ է թէ իսպառ խելագար։
Ցանուն իր տօնի խնճոյք գումարեց,
Ու գիւղն ամբողջ տուն հրաւիրեց,
Կանչւեցին նաև թէ ընկերները,
Թէ այն գաւառի բոլոր մեծերը։
Երբ հացկերոյթի ժամանակ հասաւ,
Ճոխ սեղան նրանց առաջ բացւեցաւ,
Ու մի հին սալ էլ ձեռքումն առած,
Ներս մտաւ Հրանդն ու այսպէս ասաց.
— Լսէք, պատմեմ ձեզ մի չտեսւած բան,
Որ կատարւել է մեր տանում միայն.
Քանի օր առաջ մի ճրագ ձեռքիս,

Մտայ մութ մառան, ինչ ընկաւ աչքիս,
Մի քանի մուկեր հաւաքուել էին,
Այս սալի գլխին և ուտում էին.
Թէ չէք հաւատում, ահա մի նայէք,
Կատարուած դէպքը ձեր աչքով դիտէք։
— Մենք կը հաւատանք, յաճախ կը լինի,
Մուկն երկաթի հետ անչափ սէր ունի, —
Գոչեց մեծերից մէկը բարձրաձայն,
Ու վկայեցին ողջ միանգամայն...
— Այդ էի ուզում միայն հասկանալ,
Մէ մուկն կարող է ուտել պինդ սալ.
Սակայն դուք ձեր ջերմ քէֆով զբաղուէք,
Կերէք, խմէք ու երգէք, քէֆ արէք։ —
Ասաց Հրանդն ու հասկացաւ նոր,
Որ այս աշխարհում կը պատահի, որ
Երբեմն ամուր սալն երկաթի,
Մուկն հեշտութեամբ կը ծամի, կուտի,
Երբեմն՝ երբէք հաւատալու չի
Ագռաւն ուտելիք կտցի ու թռչի։

# Շահ Աբբասի Բռնագաղթը
# Եւ
# Մելիք Մովրովը



**Պոէմի աջաին էջը բանաստեղծի տպագրական ձեռագրով**

ԽՈՐԷՆ ՏԷՐ ՎՐՈՅՐԵԱՆ Թեհրան 6-10-' 1981 թ.

Յարգելի և շատ սիրելի Տիար Լեւոն Մինասեան
Նոր Ջուղա.

Նախ անկեղծ բարեւներս եմ յղում Ձեզ և մաղթում եմ առողջութիւն, յաջողութիւն և երջանիկ կայտառութիւն:

Այսօր, երկար ժամանակ է, որ կանխատեսում եմ գալ Ջուղա, սակայն չեմ յաջողում ինչ: Ինչքան լաւ էր, որ ջերմաջնորհ Արքայական հայրը չէր բերել Վեհափառ և իր Մեծութեան ու վեհանձնութեան հարցերը այդ ժողովրդութիւնը: Սրբազան հօրից դուք կարդացել այս նամակը, իմ՝ գրած մի գրքոյկը՝ «Յովհաննէս Հայրապետեանը» խորագրով՝ Նուիրած Ձեզ և իմ՝ մի խաղաղ աշխատութեան յիշատակի Ֆորմ «Հայ Արքայի Պատմագիրը և ... » խորագրով: Կանխատեսում եմ նուէրս յանձն առնելով կարդաք այդ գրքոյկն, լաւ ուսումնասիրէք և եթէ շտկումների կարիք լինի, Նշանակէք և գրէք ինձ, որ կարգադրեմ այդ շտկումները: Ձեր ատուածորդը կարդաց և շատ հաւանեց այն: Յուսամ հաւանել եմ, որ եթէ կցանկանաք և ներողութիւն չի լինի ձեզ չնորհ անել մի յառաջաբանի գրելու, որով անչափ երախտապարտ կը լինէք ինձ:

Այժմ դառնանք այդ գործքին պատմութեան խնդրին:



Դրն. Խորէնի նամակը Լեւոն Միանսեանին

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ
Նոր Ջուղա - Սպահան
Փոստարկղ թիւ 4, հեռ. (031) 43471

چاپخانه خلیفه‌گری ـ کلیسای وانک
جلفای اصفهان
صندوق پستی شماره ۴، تلفن (۰۳۱) ۴۳۴۷۱

[illegible] 1981թ. — تاریخ ۱۳
№ — شماره

Հարգոյ

[illegible]



Լեւոն Միանսեանի պատասխան նամակը Պրն. Խորէնին

## Առաջաբան

Հայ ժողովուրդը՝ Շահ Աբբասի ձեռքվ բռնագաղթի ենթարկուելուց յետոյ՝ տեղ բռնելով Իրանի զանազան վայրերում, ենթակայ եղաւ ալան-թալանի, հալածանքի և բռնագրաւումի, դիմագրաւ եղաւ տեղի ու ժամանակի բոլորովին աննպաստ պայմանների և բնական դժւարութիւնների (հեղեղ, երաշտ), տարաւ գիւղատէրերից կամ աւարառուներից հասած զրկանքներն ու զուլումները, կուրծք տւեց հողին ու քարին, աշխատեց, տնքեց և անպարագրելի զոհաբերութիւններով ապահովեց իր օրապահիկն ու քայլեց դարերի միջով:

Հայրենիքից զրկւած Հայ ժողովուրդը, փռւած Սպահանից մինչև Համադան-Ղազւին տարածքի վրայ, ուելի քան մի տասնեակ գաւառներում ու հարիւրաւոր գիւղերում, ապրեց՝ պահելով հայրենիքից բերած աւանդութիւններն ու ազգային սովորութիւնները, որոնք դարձան նրա ինքնուրոյն դպրոցը, մշակոյթը, պատմութիւնը, սրբազան հաւատքն ու հաւատամքը:

Սահեցին ու անցան տարիները՝ կազմելով դարեր - և մի օր էլ, հայրենակարօտ հայ ժողովուրդը, 1945 թւականի վերջերին, աննախընթաց խանդավառութեամբ, լսեց ներգաղթի կախարդական ու խորհրդաւոր յատարարութիւնը և 1946 թւականի Յունիսին Գափլա շրջանի 12 գիւղերը, իսկ Յուլիսին՝ Բուրւարի շրջանի 7 գիւղերը ներգաղթեցին հայրենիք, սակայն, շատ չանցած, բեկանւեց ներգաղթի ծրագիրը և հայ գիւղացիութիւնը անել վիճակի մատնւելով, լքեց իր պապենական օջախը և ցրիւ եկաւ՝ իր համար ապահով վայր փնտրելու:

Տեղահան եղած ժողովուրդն իր ետև թողեց իր բազմադարեան սրբութիւնները՝ եկեղեցիները, սիրելիների շիրիմները, տարիների տքնաջան աշխատանքի արդիւնք՝ իր տունն ու տեղը և ապաստան գտաւ մի նոր միջավայրի մէջ՝ միշտ կարօտով յիշելով իր լքած բոյնը, իր պարզ ու համեստ ապրուստը, իր պապերին ու հարազատներին, որոնց գերեզմանները մնացին անտէր, անխունկ, առանց պաշտամունքի ու աղօթքի...

Սա եղաւ նրա երկրորդ «բռնագաղթը»:

Աւելի քան երեք ու կէս դար ապրեց հայ շինականը՝ դիմադրելով դաւին ու ցաւին, սարին ու քարին, լոռին ու քոռին[1], խաւին ու դաւին... իսկ հիմա, որ լքել են երբեմնի շէն ու ծաղկուն և արգաւանդ գիւղերը, կորչել ու անհետ կորչում են սրբազան յիշատակարանները, գիտակից, տեղեակ ու սրտցաւ անհատներ, իրենց բարոյական պարտքն են իմացել՝ գրի առնելու և փոշիների տակից դուրս հանելու ազգային ու տոհմիկ աւանդութիւնները, վերակենդանացնելու հայաբնակ գաւառում ապրող հայ անւանի դէմքերն ու դէպքերը, վերականգնելու արդէն յուշ դարձած սխրագործութիւնները, որոնց համար գրեթէ չկայ ոչ մի պատմական տւեալ, գրաւոր փաստարկ կամ ապացոյց...[2]

Ափսո՜ս, որ շա՜տ ենք ուշացել:

Բայց աւելի լա՜ւ է ուշ, քան երբէք:

Մելիք Մովրովի և ուրիշ հերոսների պատմութիւնները գրւելու էր ոչ թէ հիմա, այլ երեք ու կէս դար առաջ, երբ թարմ էր պատմութիւնը և ամեն ոք տեղեակ՝ իրականութիւններից ու մանրամասնութիւններից:

Հիմա ոչ թէ պատմութիւնն է խօսում, այլ՝ աւանդութիւնը:

Գրիչը հանդերձ է հագցնում այդ աւանդութեանը, բանաստեղծը տալիս է թևեր և ահա աւանդութիւնը՝ ընդելուզւած պատմական իրականութեան հետ՝ վերակենդանանում է՝ երանգւած նոր բառերով ու յանգերով, նոր գոյներով ու յոյզերով:

Մտքի ուժեղ թռիչք է պէտք, արտակարգ զօրութիւն, դարձնելու ժամանակի անիւը դէպի ետ, տասնեակ տարիների փոշու տակից դուրս քաշելու դէպքը և պատմելու գեցեղիկ ու գեղարւեստական չափածոյով, տալով նրան ժամանակի գունաւորումները, ապրումներն ու յոյզերը:

---

[1] - Քոռ – այստեղ գործածւել է՝ ցեխ, տիղմ և կեղտ իմաստով: Նշանակում ում է գիւղը կեանքը:

2 -Այս առաջաբանը գրւել է աւելի քան 40 տարի առաջ երբ դեռ չէին հրատարակվել մեր «Իրանահայ համայնքի ամբողջական պատմությունը» 10 հատորով և բազմաթիվ այլ շխատություններ-ԷԲ:

Պրն. Խորէն Տէր Վրոյրեանը, իր «Շահ Աբբասի Բռնագաղթը և Մելիք Մովրովը» պոեմայի մէջ ներդրել է իր ներաշխարհի և ծննդավայր-միջավայրի ապրումները, գեղջկական մաքուր ու ջինջ երազները, աւանդութիւններն ու սովորութիւնները, որոնց մէջ, միաժամանակ հանդէս են գալիս հերոսներ, որոնք կեանք են ստանում, յառնում ու ծառանում են բռնակալութեան դէմ՝ եթէ դա լինի նոյնիսկ երկրի շահը կամ աւատական մի իշխան՝ պաշտպանելու համար իրենց իրաւունքն ու նամուսը, միևնոյն ժամանակ ցոյց տալու հայ ժողովրդի ասպետական ոգին, մեծահոգութիւնն ու վեհանձնութիւնը:

Մելիք Մովրովի պօէման գրել է նաև հանգուցեալ Հայկ Յովսէփեանը, բայց ահա, նոյն վերնագրի տակ, երևան է գալիս՝ իր բնոյթով, բովանդակութիւնով, կառոյցով, յանգաւորումով բոլորովին մի նոր արգասիք՝ ճոխացնելու մեր գրականութեան էջերը, զարդարելու երբեմնի հայաբնակ Բուրւարի գաւառի պատմութիւնը և ապա հայ մշակոյթը:

Գնահատելի և արժէքաւոր գործ է սա:

Յոյս, որ Պրն. Խորէնը կը սկսի գրել նաև Մելիք Նուրիջանի պօէման, աւելացնելով մի նոր ծաղկեփունջ հայ գրական անդաստանի վրայ...

*Աբր. Յովասափեան*
*Յունւարի 20, 1982թ.*
*Թեհրան*

**Շահ**

**Աբբասի**

**Բռնագաղթը**

**Եւ**

**Մելիք**

**Մովրովը**

## Ա: մաս

*Շահ Աբբասը երբ գահ բարձրացաւ,*
*Ու Իրանում նա թագաւոր դարձաւ,*
*Դարձաւ մի արքայ գոռոզ ու ահեղ,*
*Ու գործ դրեց իր ճնշումն ամեն տեղ։*
*Նա դարձաւ դաժան ու խիստ բռնակալ,*
*Միտք դրեց դառնալ մեծ աշխարհակալ․*
*Ահարկու էր նա, գութ չկար նրան,*
*Իր ողջ գործերում նա խիստ էր, դաժան։*
*Սարսափ էր թափում նրա վրայից,*
*Դիփ դողում էին իր հուժկու ահից․*
*Երկրում բոլորին ենթարկեց իրան,*
*Ու ըմբոստներին պատժեց իրեն,*
*Նա արքայանիստ ընտրեց Սպահան։*
*Իր ուժը դրեց լաւ շէնացնել այն,*
*Հաստատեց երկրում նա անդորրութիւն․*
*Հիմնեց ճամբէքում եջևանատուն։*
*Կառուցեց իրեն պալատներ շքեղ*
*Լայն խճուղիներ բացեց ամեն տեղ․*
*Մզկիթներ հիմնեց հոյակապ, սիրուն,*
*Որ դարեր մնան պաշտամունքի տուն։*
*Նա ուզեց թողնել գործեր փառաւոր․*
*Որ միշտ իր անունը մնար հզօր*
*Նա մի սէյեդ էր՝ իսլամ մոլեռանդ*
*Իսլամ կրօնին ունէր խիստ եռանդ,*
*Իր արքայական ամբողջ շրջանում,*
*Մոլլաներին էր համախոհ լինում։*
*Բռնակալ էր նա, բայց եւ շինարար,*
*Իր երկրին տարաւ ընթացք օգտակար․*
*Բայց բռնակալը հարևան երկրին,*
*Ընդմիշտ խէթ նայեց ու դիմեց վատին։*

*Թոյլ ազգերին նա պատուհաս դարձաւ*
*Հայի հնադէպ գումք չունեցաւ բնաւ.*
*Գործադրեց կամքը իր գազանային,*
*Թալանեց, գերեց նա անմեղ հային.*
*Տեղին կը թըւենք արարքն իր բիրտ.*
*Թէ ինչ արաւ այն, Շահը քարասիրտ։*

* * *

*Շահ Աբբասն ուզեց մեծ զօրք հաւաքել,*
*Ու դէպ արեւմուտք բանակը շարժել։*
*Յարձակուել օսման պետութեան վրայ,*
*Քէն ունէր Օսման տէրութեան հետ նա։*
*Տարիներ առաջ Օսմանն յարձակուել.*
*Կռուել, Իրանից հող էր գրաւել,*
*Այժմ Շահ Աբբասը ոտքի էր կանգնել,*
*Ուզում էր կռուել, իր հողն ետ առնել։*
*Օսմանն էլ բնաւ լաւ ազգ չէր եղել,*
*Անտեղի արիւն նա շատ էր թափել.*
*Նա էլ ամեն տեղ ուժ էր գործ դրել,*
*Ջարդել ու այլոց հողերն էր տիրել։*
*Ցեղասպան էր նա ու տմարդաբար*
*Մարդ էր սպանել անմեղ՝ բիւր հազար…*
*Օսմանը հային միշտ էլ դարձաւ ցաւ,*
*Ոճիրներ գործեց անթիւ անհամար,*
*Ու հայ ազգին իր իսկ հայրենիքում*
*Հանգիստ չըթողեց այդ ցեղն արնախում.*
*Լարեց որոգայթ ու դարձաւ վթար.*
*Միշտ խլեց հայի վաստակն արդար.*
*Իր հետ մահ բերեց իր եկած օրից,*
*Երբ ախտով խուժեց նա մոնղոլիայից*
*Շատ ազգերի նա մատնեց ոչընչման,*
*Նրանց արեւտը յանձնեց կործանման։*

Բնավ չիմացաւ Օսման ցեղը չար
Ինչ են բառերը՝ անմեղ ու արդար…
Տեղն էր թէ պարսից շահն այն դըժնի
Օսմանին տար իր պատիժն արժանի.
Լաւ է՝ որ վատին միշտ վիճակւի վատ,
Զարիքով տըքնի չարը անընդհատ։

* * *

Մեծ զորք հաւաքեց Շահ Աբբաս արքան.
Ու շարժւեց դէպի Ատրպատական
Յարձակւեց Օսման բանակի վրայ
Ջարդեց, կոտորեց բանակը նըրա
Ճակատում պարտւեց Օսման զորքն իսպառ,
Ու երբ տեսաւ, որ էլ հնար չկար.
Նահանջի ճամբան բռնեց, ետ դարձաւ,
Ու խուճապահար դէպի տուն փախաւ։
Շահ Աբբասի զորքը թուրքին լաւ քըշեց,
Իրանի հողից իսպառ դուրս նետեց,
Ու առած զորքը, հըպարտ, յաղթական
Դարձաւ Սպահան Իրանի արքան։

* * *

Ժամանակ անցաւ։ Շահ Աբբաս արքան
Ուզեց վրէժ լուծել երկրից Օսմանեան.
Յանկացաւ մեծ զորք, մեծ ուժ հաւաքել,
Յարձակւել, Օսման երկիրը տիրել.
Սաստել ու ճնշել, պատիժ տալ թուրքին,
Անել այն, որ Թուրքն արաւ օտարին…
Եւ ահա շուտով մեծ զորք հաւաքեց,
Ու դէպ արեւմուտք բանակը շարժեց։
Գնաց ու հասաւ մեր հին Ջուղային,

Բանակը դըրեց Արաքսի ափին․
Ու միտք դրեց նա մտնել Հայաստան,
Այնտեղից անցնել մի խիստ յարձակման։
Հայը այն օրը չունէր թագաւոր,
Օսմանն էր իշխում հայ երկրին բոլոր․
Իսկ Թուրքի գործն էր թալան ու աւար․
Այն նենգ հրէշի սրտում գութ չկար։
Չարչարել էր նա քրիստոնեայ հային․
Ու վրան թափել իր թոյնն իժային։
Հայը հասել էր յուսահատութեան,
Ելք էր որոնում ու ճար փըրկութեան։
Սրա ու նրա դուռն էր նա բախում,
Օգնութեան ձեռք էր նրանց երկարում,
Ուզում էր մէկը ուժ հանդիսանայ,
Ու Թուրք հրէշից փրկի հային նա։
Նա աչքը յառած դէպի երկինքը,
Ուզում էր իրեն փըրկի Տէրն ինքը․
Ուզում էր տեսնել թէ որ անկիւնէն
Մի լոյսի նշոյլ պիտ ծագէ իրեն։
Նա եկեղեցում ծունկի աղօթեց,
Ու Տէր Յիսուսից օգնութիւն հայցեց․
Բայց ոչ մի տեղից չեղաւ հային յոյս
Բարի բախտն հայից իսպառ տըւեց խոյս։
Խեղճ հայը չունէր տէր ու տիրական,
Մենակ էր, մենակ ու անօգնական։

* * *

Երբ Շահ Աբբասը «Արաքս»-ին հասաւ,
Հայ ժողովուրդը շատ ուրախացաւ․
Մըտածեց իրենց արդէն յոյս բացւեց,
Իրեն կը փըրկի Շահ Աբբասը մեծ։
Օսմանին կը տայ իր պատիժը չար,

*Ու հային կանի փրկութեան մի ճար.*
*Հային կազատի ամեն ճնշումից,*
*Կազատի անգութ Օսմանի լուծից։*
*Մեծ ազատութիւն կը բերի հային։*
*Դէպ հայը կանի իր ամեն բարին…*
*Պատրաստեցին ողջ գնան ընդառաջ,*
*Ու յարգեն նրան արքային պատշաճ։*
*Եւ ջուղայեցիք մեծարանքներով,*
*Արքային վայել շարժ ու ձևերով,*
*Հագած պատւաբեր հագուստներ շքեղ*
*Գնացին առաջ արքային ահեղ։*
*Քահանաները զգեստաւորւած,*
*Տիրացուները ժամշապիկ հագած,*
*Խաչ ու խաչվառով, մոմ ու բուրվառով,*
*Շարականի քաղցր երգով ու տաղով.*
*Թափորը շարժւում գնում էր առաջ,*
*Գընում էր Շահին շըքերթն ընդառաջ։*
*Խօջայ Խաչիկի տանից մինչ Արաքս,*
*Շահի ոտքի տակ փռւած էր մետաքս…*
*Պատանիները փոքրահասակի*
*Ձեռքներում գինի ու բաժակ ոսկի,*
*Քաղցրահամ գինին Շահին մատուցում,*
*Ու քաղցրիկ ձայնով երգ էին ասում։*
*Երբ Շահը հասաւ տունը Խաչիկի,*
*Խօջան սկիտեղ մէջը լիք ոսկի,*
*Իր որդու ձեռքով Շահին նւիրեց,*
*Ու բարեգալուստ մեծ հիւրին մաղթեց.*
*Հայ իշխաններն էլ նւէրներ բերին,*
*Մեծ ու մեծ ընծաներ յանձնեցին Շահին…*
*Շահ Աբբասին տիրց արմանք ու զարմանք։*
*Երբ հայից տեսաւ այդքան մեծարանք։*
*Խօջայ Խաչիկի ապարանքը մեծ.*
*Երբ Շահը տեսաւ խորապէս ցնցւեց։*

Շքեղ պալատն այն մեծ ու փառաւոր,
Գուցէ եւ չունէր ոչ մի թագաւոր։
Շահը երեք օր խօջին հիւր մնաց,
Ու առած պատւից մնաց զարմացած.
Վայելեց համեղ ամեն ուտելիք,
Քաղցրահամ գինի, տարբեր ըմպելիք.
Ամեն ինչ տեղին, ամեն ինչ կարգին,
Կեանքում չէր հասել դեռ այդ յարգանքին։

* * *

Շահ Աբբասն երբ մտաւ Հայաստան,
Օսմանեան զօրքին գտաւ յանդիման,
Պատերազմական ուժեղ դիրք բռնեց
Իսկոյն յարձակման գործն սկսեց։
Օսմանեան զօրքը Ֆարս զօրքի դէմ մեծ,
Իրեն թոյլ գտաւ, նահանջի դիմեց,
Երեւանի բերդում ամրացաւ Օսմանն
Պարսից բանակը շրջապատեց այն։
Ինն ամիս տեւեց կռիւն անդադար,
Մինչեւ որ պարտուեց Օսման զօրքն իսպառ,
Ջարդ ու փշուր եղաւ ողջ զօրքը Օսման,
Ֆարս Շահն այդ կռւում եղաւ յաղթական,
Իսկ այդ ինն ամսում դժւար է ասել,
Թէ Հայաստանն ինչ աղէտ է տեսել…
Ֆարս զօրքն ինչ աւեր ասես որ չարաւ
Ողջ Հայաստանը տակն ու վրա դառաւ,
Թալանեց, քանդեց, ճնշեց, կողոպտեց,
Ջար Սադայէլի երեսը պարզեց,
Անպաշտպան, անմեղ, անզէն հայի դէմ
Գործ դրեց ամեն չարիքներ դըժխեմ։

* * *

Շահ Աբբասը երբ հասաւ Հայաստան,

*Ու տեսաւ հայի տունն ու անդաստան,*
*Շւարեց հայի հանճարի վրայ,*
*Տեսաւ անսահման շինարար է նա,*
*Տեսաւ ունի նա արւեստ, գիտութիւն,*
*Ունի շատ մեծ ընդունակութիւն,*
*Տեսաւ որ հայը պարկեշտ է, ազնիւ,*
*Իր գոյութեանը բերում է պատիւ.*
*Հայի քարակերտ վանքերն հոյակապ*
*Բերեց շահին խոր սարսուռ ու սարսափ:*
*Նա դեռ չէր տեսել այդքան ուժ ու կամք.*
*Չէր տեսել այդքան սէր ու հաւատամք.*
*Նա դեռ չէր տեսել այդպիսի հաւատ.*
*Իր պաշտամունքին, կրօնին հաստատ:*
*Չէր տեսել այդքան ժողովուրդ ճկուն,*
*Դժւարութեանը համբերող, տոկուն.*
*Չէր տեսել քարեայ այդքան պերճ, սիրուն*
*Տաճարներ գողտրիկ, հին ու հաստատուն*
*էջմիածինը երբ գնաց տեսաւ,*
*Շւարեց իսպառ, բայց և հիացաւ.*
*Մտածեց, որ երբ դառնայ Սպահան.*
*Ինքն էլ կառուցի մի մզկիթ նման.*
*(Ու Սպահանի Մասջիդշահը մեծ,*
*Բարի նախանձով Աբբասը սարքեց):*
*Տեսաւ, որ հայը տաղանդ է իսպառ.*
*Արտակարգ ձիրք է և ուժ անըսպառ:*
*Գործունեայ է նա, ու մարդ իրական.*
*Հայի նմանը չունէր նա Իրան:*
*Տեսաւ բնաւ նա չի յուսահատել*
*Այլ միշտ սարքել է, կերտել, կառուցել.*
*Այդ էին ասում (շէն ու գյուղերն) այն.*
*Որ տեսնում էր նա այն երկրում համայն:*
*Տեսաւ այդ ազգը կըռիւ չի ուզել,*
*Այլ սիրել է միշտ սարքել, կառուցել.*

*Ուր որ նա աչք էր ձըգում ու նայում,*
*Երկրի շէներն էր նրան հըմայում։*
*Տեսաւ որ գիտէ արհեստ շատ տեսակ,*
*Ամեն գործում նա ժիր է, ընդունակ.*
*Երկրագործութիւն գիտէ լաւ կարգին,*
*Վաճառական է նաև ըստ հարկին.*
*Այգեգործ է նա, ունի տունկ ու ծառ.*
*Երկիրը կանաչ դրախտ է պայծառ*
*Լիքն է ու առատ ամեն տեղ ոսկին,*
*Գիտեն ձեռք բերել ամեն ինչ կարգին։*
*Ճարտարապետ է խելօք ու գիտուն,*
*Ունի կառուցւածք ամուր, հաստատուն։*
*Գինին ունի նա իսկ և իսկ յակինթ.*
*Ու մարդուն է բերում ուրախ քէֆ ու խինդ.*
*Եւ ինքն երբ խըմեց, նեկտարն այդ անուշ,*
*Իրեն աւելցաւ խելք, միտք, ու յուշ։*

* * *

*Ու շահ Աբբասը չար միտք յըղացաւ,*
*Հայի արածը իսպառ մոռացաւ,*
*Մըտածեց թե կայ այսպէս ժողովուրդ,*
*Ինչո՞ւ մընայ այս երկրում անխորհուրդ։*
*Ինչու՞ թողնեմ ես այս ժողովրդին,*
*Որ լինի ենթակայ այն չար Օսմանին.*
*Ինչո՞ւ շահաբեր գործերն այս ամեն,*
*Անարգ Օսմանի շահին ծառայեն։*
*Ինչո՞ւ հայ խելքից շահւի Օսմանը,*
*Ու դառնայ ինքը հայի իշխանը։*
*Սըրանց ամենին կը տանեմ Իրան,*
*Կանեմ այս երկրից իսպառ տեղահան*
*Վըստահ ժողովուրդն այս տաղանդաւոր*
*Իմ երկրին կը տայ արդիւնք բիւրաւոր.*
*Այս ժողովրդի միտքն Յառաջադէմ.*

*Երկիրըս կանի մի դրախտ Եդեմ։*

* * *

*Ու Շահ Աբբասը վճռեց անպայման*
*Գործադրել իր այդ միտքն անպիտան.*
*Միտքը չար, դաժան ու անմարդկային՝*
*Հանել իր երկրից ու գերել հային։*
*Այդ գործի համար ժողով գումարեց,*
*Հայ իշխաններին նա իր մօտ կանչեց,*
*Ու միտքը յայտնեց չար ու անիրաւ,*
*Որ իշխաններին բընաւ դուր չեկավ…*
*Զըգիտէին նենգ առաջարկին այն*
*Խեղճերն ի՞նչ անեն, ի՞նչ տան պատասխան*
*Ինչպէ՞ս ուրացաւ Շահն երախտամոռ,*
*Հայի տուած այն յարգանքը բոլոր…*
*Ի՞նչ էին սպասում Շահից անիրաւ,*
*Բայց իրենց յոյսը վերջն ի՞նչ դառաւ։*
*Աղ ու հացն հայի նա ո՜նց ուրացաւ,*
*Ու այնպէս հայի գըլխին ցաւ դարձաւ։*
*Ինչպէ՞ս հայրենի տունը թողնէին,*
*Ու բիրտ գերութեան ճամբան բռնէին։*
*Ինչպէ՞ս թողնէին օջախն հայրական,*
*Իրենց դարձնէին մի աստանդական.*
*Ինչպէ՞ս թողնէին երկիրն այն դրախտ,*
*Ուղի բռնէին անյայտ ու դժբախտ։*
*Այգին ու պարտէզն ո՞վ կը տիրանար,*
*Իր արտն ու ցանքսը էլ ո՞ւմ բերք կը տար…*
*Սուրբ վանքերն իրենց ի՞նչ կը դառնային,*
*Թէ անտէրութեան լոկ ենթարկուէին.*
*Եկեղեցիներն էլ ո՞վ պիտի գընար,*
*Պաշտամունք անէր ու աղօթք կարդար…*
*Գերեզմանատան շիրիմները թանգ*
*Ո՞ւմից կառնէին այց ու արձագանք։*

Հայրենի երկրի թողնելը նրանց,
Սուգ էր ու պատիժ ու մեծ ցաւ անանց…
Թողնել հողն իրենց անհնար էր դա,
Պիտի խնդրէին, որ Շահը գըթայ,
Անցնի այդ մտքից վատ ու խիստ դաժան,
Զըծախի հային նա այդքան աժան։
Իրենց փափագն էր, որ Շահն երբ գար,
Հային անէր նա դեղ դարման ու ճար.
Սակայն յոյսն իրենց ինչու՞ նետուեց ջուր,
Եւ օդը ցրնդեց ամէն ինչ իզուր։
Խօջայ Խաչիկի տունը երբ եկաւ,
Նա հայից անչափ շնորհակալ եղաւ,
Յայտնեց, որ կօգնէ հային բաւական,
Կը դառնայ թիկունք, հովանի նրան։
Կազատի հային Օսմանի լծից,
Կը դառնայ նրան յոյս ու կարեկից։
Սակայն ինչո՞ւ նա դարձաւ այդքան բիրտ,
Դէպ հայը դարձաւ այդքան քարասիրտ։
Ինչո՞ւ նա փոխուեց, մոռցաւ ամէն բան,
Դարձաւ անողորմ, դարձաւ խիստ դաժան։
Ինչո՞ւ իր երկրի շէնացման համար
Ուզում է քանդել մի ուրիշ աշխարհ…
Ինչո՞ւ է ուզում հային ժըրաջան
Իր երկրից հանել, անել ցիր ու ցան։
Չէ՛, հայն այդ անել չի կարող բընաւ,
Դա անմարդկային միտք էր անիրաւ։
Հայ իշխանները արքայից զզւած,
Մերժման խօսքն ասին սաստիկ վրդոված,
Խընդեցին Շահին չլինել դաժան,
Հային իր երկրից չանել ցիր ու ցան։

* * *

Հայ իշխանների մերժումն երբ տեսաւ,

Քարասիրտ Շահը սև դահիճ դարձաւ
Կանչեց իր զօրքի զօրավարներին,
Ամիրգունային, Ալլավերդխանին,
Յայտնեց իր միտքը չար ու անպիտան,
Ու տըւեց նրրանց ահեղ հըրաման,
Որ գնան նրանք Հայաստանն ամեն
Քանդեն, աւերեն ու հային հանեն․
Պատւիրեց նըրանց Շահը անիրաւ,
Զունենան նրանք խիղճ ու գութ բնաւ։
Մեծ զօրք յանձնելով նա ամեն մէկին․
Ղրկեց նրանց այն չար հպատակին,
Որ տեղահանւած ժողովըրդին այն,
Քըշեն բըռնութեամբ դէպ երկիրն Իրան։

* * *

Ալլավերդիխանն ու Ամիրգունան
Երբ Շահից այդպէս հըրաման առան,
Զօրքերն առած ընկան Հայաստան
Էլ ոչ մի չարի առջև կանգ չառան։
Ցրեցին զօրքը, գընան ամեն տեղ,
Կատարեն Շահի հըրամանն ահեղ․
Շահ Իրանի զօրքը դեռ ֆարման չառած․
Արաւ այն ինչ որ չունէր նախընթաց․
Իսկ ֆարման առած դէ պարզ էր արդէն․
Ինչեր կանէին խեղճ հային անզէն։
Սըրի քաշեցին անպաշտպան հային,
Զըխնայեցին ծերին, մանուկին։
Աըրի զօռութեամբ դուրս էին անում
Հային իր տանից, տունն էլ թալանում․
Հրդեհում էին հայի տունն ու տեղ,
Շատ վատ էր նրանց արածը տըգեղ։
Մօր գըրկից փոքրիկ մանկանը խըլում,

*Ահեղ կըրակի գիրկն էին նետում…*
*Վայրագութիւնը հասցրին ի կատար*
*Գութ ու խիղճ երբեք նըրանց մէջ չկար…*
*Նամուս ու պատիւ չունէին բնաւ,*
*Արեց ով այն, ինձ ձեռքիցն եկաւ։*
*Հրդեհ ու թալան, կողոպուտ, աւար,*
*Հանել իր տանից, քշել օտար վայր,*
*Այդ մնաց հային, նրան ճար չկար,*
*Բարբարոսութեան գրկումն անարդար։*
*Ծերունիների ողբն աղիողորմ,*
*Անարձագանք էր մնում ամեն կողմ…*
*Աբբասի զօրքի ամեն մի զինւոր*
*Մի չար դահիճ էր, նրան գութ էլ ուր։*
*Գերի տանելու գործը դիւրացնում,*
*Ծերին, մանուկին հուրն էին նետում.*
*Մայրը ողբում էր, սըգում դառնագին,*
*Ուշք դարձող չըկար այդ աղերսանքին։*
*Մարդկային սիրտ չէր նրանց սիրտը քար,*
*Գազանի գութ էլ նրանց մէջ չը կար…*
*Քանդեցին նրանք Հայաստանը ողջ.*
*Անտուն թողեցին հայութեանն ամբողջ,*
*Ու դուրս քըշեցին դիփ Հայաստանից*
*Նախիջևանից, Հայգաշիմանից,*
*Ապարանից ու Սալմաստից, Խոյից,*
*Ծաղկաձորից ու Ուրծա-Գառնիից,*
*Արճէշ-Բերկրիից, Բան-Մանազկերտից,*
*Ու Ալաշկերտի լրիւ նահանգից,*
*Մակուից, Կարսից ու Կաղզւանից,*
*Էրզրումից ու Խնուս-Բասէնից…*
*Այդ բազմահարիւր դժբախտ հայերին,*
*Դէպի Պարսկաստան գերեվարեցին։*
*Օ~, ողբերգութիւն, ցաւոտ կացութիւն,*
*Չէր կարող տանել քարն այդ ծանրութիւն.*

Նախիջևանը բերնէ ի բերան
Լցւեց ամբողջ հայ գերով տեղահան.
Լաց ու աղերսը չունէր տուտ ու ծայր.
Ողջ Հայաստանն էր սըգում ծայրէծայր…
Բայց Շահի զօրքին խըղճմտանք չկար.
Քարից էլ կարծր էր նըրանց սիրտը քար
Սուրը անտեղի բարձրանում իջում
Արդար ու անմեղ մարդ էր սպանում
Սուրը չէր խղճում ծերին, մանուկին,
Երբ ընկնում էին ուժասպառ գետին,
Ու բոլոր նրանց, որ քաղցած, յոգնած,
Ծընկաչոք, անօգ ընկնում էին ցած…
Ասա՛, անխիղճ մարդ, բիրտ, անագորոյն
Վայրագ, անողոք, չար ու խստագոյն.
Վագր ու առիւծը մէկով կըշտանում,
Ու մի մեծ հօտից մէկին են տանում.
Գէթ լինէիր հէնց գազանի նման,
Քո արածին էլ լինէր մի սահման.
Միլիոնները քեզ դեռ չի յագեցնում,
Ասա՛, որտեղ ես դու հասնել ուզում։
Իսկ քեզ եմ ասում ճնշւած ժողովուրդ,
Ինչո՞ւ այդքան խեղճ, այդքան անխորհուրդ։
Ինչո՞ւ դու էլ սուր քո ձեռքը չառար,
Ջըպաշտպանեցիր իրաւունքդ արդար
Ինչո՞ւ խեղճացար ու աղերսեցիր,
Անարգ թշնամուց դու գութ հայցեցիր…
Ինչո՞ւ դու չառար քո նետն ու աղեղ,
Ջըսպանեցիր քո թշնամուն տգեղ…
Ինչո՞ւ յարգեցիր նենգ Շահին այնքան,
Եթէ նա դարձաւ քեզ այնքան դաւաճան,
Ա՜խ, եթէ ազգ իմ, զէնք ձեռք առնէիր,
Նենգ Շահին զէնքով դիմաւորէիր…
Շահը չկարծէր քեզ այնքան անճար,

Ու գործ գըդընէր միտքն իր խիստ ու չար։
Զէնքը կը փրկէր չար ոսոխից քեզ,
Ինչո՞ւ զէնք չառար, պաշտպանէիր քեզ…
Է~հ, սպանէիր դու էլ թըշնամուն,
Ու ցոյց տայիր քո ուժը դիւցազուն.
Դու էլ ջարդէիր ու կոտորէիր,
Սուրի վրէժը սուրով առնէիր,
Ա~խ, թէ վրէժդ առնէիր զէնքով.
Դու էլ ընկնէիր հերոսի մահով.
Սրի դէմ դու էլ սուր գործ դնէիր.
Սպանէիր ու պատւով մեռնէիր։

* * *

Արաքսն են ուզում անցկացնել հային,
Բայց դա դըժւար էր ու անհնարին։
Այդ բազմութիւնը երբ զըգիտէր լող.
Ջուրն անցնել այն կողմ՝ էլ ոնց էր կարող։
Կամուրջ էլ չըկար ամուր հաստատուն,
Որ օգնէր նրանց գետը անցնելուն…
Մի քանի փոքրիկ լաստերով միայն,
Պիտի անցնէր այն ժողովուրդն համայն։
Բայց դա դիւրին, պիտ տարի տևէր,
Մինչև ողջ գերին Արաքսն անցնէր։
Ու հէնց այդ տաղտուկ ու դառը պահուն
Պատահեց մի այլ ցաւ մեծ ու անհուն…
Իրանի Շահը Երւանդաւանում,
Մէկ էլ մի շատ վատ լուր է ստանում…
Ու Սինան փաշան մի մեծ զօրք առած,
Իր դէմ է գալիս վըրէժով լըցւած։
Շահ Աբբասին խիստ երկիւղ է պատում
Թէ՝ գուցէ ինքը յաղթւի այդ լուում…
Ու խիստ շփոթւած նահանջում է յետ.
Շտապ գալիս է հասնում Արաքս գետ։

*Տեսնում է սաստիկ շփոթ ու խուճապ.*
*Իրեն պատում է մի ուժգին սարսափ...*
*Ինչպե՞ս անցկացնի այդ գետը վարար,*
*Տեղահան արած հայ գերին ստւար...*
*Իրեն ժամանակ չըկար էլ այնքան,*
*Հապճեպ գալիս էր մեծ զորքը Օսման։*
*Զօրքն շտապում էր իրեն հասցընել*
*Տեղահան հայի առաջը կտրել.*
*Հային ետ դարձնել կրկին իր երկիր,*
*Ձըթողնել որ նա դառնայ ցն ու ցիր.*
*Ձըթողնել երկիրն ամայի դառնայ*
*Ու ինքն այդ երկրում էլ շահ չունենայ։*
*Իսկ շահ Աբբասի նպատակն այն էր,*
*Որ հաստատ հային գետն անցկացնէր,*
*Ու ոնց էլ լինէր հային տեղահան*
*Քըշէր երկիրն իր, տանէր Սպահան,*
*Որ նախ Օսմանեան հողը աւերէր*
*Ապա Իրանը հայով շէնցնէր։*

* * *

*Ու Շահ Աբբասը սև դահիճ դարձաւ,*
*Խիստ զարհուրելի մի միտք յղացաւ*
*Հրաման արձակեց նա անմարդկային*
*Իր անխիղճ, անգութ, անսաստւախ զօրքին,*
*Որ սուրերն առած ետևից ճըռշեն.*
*Ու ժողովըրդին Արաքսը քշեն.*
*Դէմ կանգնողներին չըխղճան բնաւ,*
*Կոտորեն, ջարդեն ինչպէս գառ ու հաւ.*
*Հաշւի չառնեն, որ կին է ենթական,*
*Կամ փոքր ու անմեղ երեխայ լալկան.*
*Ձըխղճան նաև ծերին անկարող,*
*Կոտորեն եթե գնալ չեն կարող.*
*Սրածեն, ջարդեն ու գետը թափեն,*

Գետից անցնելն իր բախտին յանձնեն,
Ով որ լող գիտէ թող գետը անցնի,
Ում էլ որ ջուրը տանի թող տանի...
Հային ոչ մի յոյս, մահն էր իր առաջ,
Այլեւս զուր էր լաց, ողբ ու հառաչ.
Թէ գետը մտնէր, վստահ պիտ խեղդուէր,
Իսկ թէ ոտք դէմ տար, պիտի սպանուէր.
Եռւը սուրն էր: առաջն հեղեղ,
Երկու մահերը, մէկը իրարից ահեղ:
Ու նա որոշեց, թէ պիտի մեռնէր.
Լաւ էր իրենց սուրբ գետում դա լինէր.
Արաքսում՝ հայոց գետում հոգի տար,
Դիակն էլ լուծուէր ջրին մաս դառնար:
Ու մտաւ գետը հայը անճարակ,
Խեղդուեց, ջրի հետ գնաց իր դիակ.
Եւ հայոց գետը դարձաւ գերեզման
Մեր խեղդուող հային անթիւ, անսահման:
Խեղդուեցին չքնաղ աղջիկները մեր.
Ու առաքինի պատով տիկիններ,
Խեղդուեցին հերոս տղաները մեր,
Ամեն մէկը մեծ ընտանիքի տէր.
Մեռան մեր մատղաշ փոքրերն աննման.
Իրենց սրտերում կարօտ անսահման.
Խեղդուեցին իրենց մուրազը չառած.
Փէրիներն հայոց դեռ չամուսնացած.
Պատանիները՝ յոյսն ապագայի
Խեղդուեցին... Մեռաւ բախտը խեղճ հայի:
Խեղդուեցին անթիւ անմեղ մանուկներ.
Խոնջած ու յոգնած, դալկացած ծերեր...
Խեղդուեցին ամբողջ ու ջուրը տարաւ.
Այդ մեծ չարիքին հայն արժանացաւ...
Գետն ահռելի էր ու ջուրը վարար.
Մարդուց, Աստըծուց հային ոչ մի ճար:

Հոգևոր դասն էլ անմաս չըմնաց.
Նա էլ խեղդուեց ջրի հետ գընաց։
Ազատուեց միայն նա որ գիտէր լող.
Նա եւ կարողացաւ անցնել միւս կող։
Չըխղճաց հային Շահը անպատկառ,
Նրա կըրծքի տակ մարդու սիրտ չըկար.
Չըխուղճաց նրա զօրքը հրոսակ,
Ջօրքը բիրտ, դաժան, զօրքը այլանդակ...
Օ՜, դու մարդկութիւն լպիրշ զազրելի,
Ողջ գազաններից դու սարսափելի.
Գազանը չար գործ չի կարող անել,
Դու ես որ կանես գազանից աւել.
Քո ժանիքներն են աւելի պատռող.
Գազանը քեզ հետ չափուել չի կարող։
Ա՜խ, եթէ դու էլ՝. Ո՛վ անարգ դահիճ,
Գէթ ունենայիր գազանի չափ խեղճ.
Ո՜վ, դու անարգ մարդ, զազիր ու նանիր,
Ինչպէ՞ս գործեցիր դու այնքան ոճիր...
Թէ կայ սադայէլ ու Սանդարասներ.
Այդ դու ես ով մարդ, չարութեան վարպետ.
Է՜յ, դու մարդ կոչուած, ինքըդ վկայիր,
Սատանան արա՞ւ, այն որ դու արիր.
Խըղճուկ սատանան ասա, ով է որ,
Քո գործերն են միշտ մեծ ու զօրաւոր.
Սատանան բնաւ չի կարող անել
Այն, որ դու արել ու գիտես անել։
Մարդ, ասում են քեզ խաբեց սատանան
Ոչ՛, այդ դու ես որ կը խաբես նրան,
Սատանան ով է, որ չափուի քեզ հետ,
Դու ես որ նրան կը խփես սուր նետ։
Յետ չըկանգնեցիր քո փառքի ճամբին
Գարշանքը հասցրիր գագաթնակէտին...
Ասա դու նենգ մարդ, սոսկ ամբարտաւան,

Ինչո՞ւ թոյլի դէմ հերոս ես այդքան.
Չես կանգնում ոչ մի չարիքի առաջ,
Ոճիր գործելուն դու վարպետ ու քաջ։
Թոյլը քո առաջ մեղաւոր է միշտ.
Թոյլի դէմ դու միշտ չար ու անբարիշտ.
Շանը մի անգամ թէ տան պատառ հաց.
Յաւէտ կը յիշի բարիքն այդ արած.
Իսկ դու ապերախտ, լաւին անարժան.
Կը մոռանաս թէ աշխարհն էլ քեզ տան...
Լաւ մարդն ինչքան էլ յարգի, պատուէի քեզ.
Թէ թոյլ է իսպառ աչքաթող կանես։
Ասա, պարդախ մարդ, ինչո՞ւ մարդ լաւին
Ատում ու դէմը դիմում ես չարին։
Սակայն մարդ, երբ դու հըզօռին հասնես.
Կը դառնաս խղճուկ մի վախկոտ աղւէս,
Կը փախչես, ինչքան քո ուժը ների.
Որ քեզ ազատես ու չընկնես գերի։
Մարդու թռիչքը բարի ու արդար.
Ե՞րբ ուզեց տեսնել քո աչքը տըկար
Մարդու արւեստը վեհ ու դիւթական.
Այն դու էիր որ տարար կործանման.
Կառուցւածքները մարդու շինարար,
Դու արիր քարքանդ, գետնին հաւասար։

## Բ: մաս

## Մելիք Մովրով

*Մելիք Մովրովը մի ասպետ էր քաջ.*
*Ամեն գործում նա խելացի, պատշաճ*
*Ապարանք ուներ նա Փարաքարում,*
*Ողջ գիւղը նրան պաշտում էր, սիրում։*
*Քաջ իշխան էր նա իր հայրենիքում,*
*Չար գալիքին միշտ պատնէշ էր կանգնում.*
*Իր ժողովրդի քաջ հերոսն էր նա,*
*Ոչ ոք իր կամքին ընդդէմ չէր գնայ։*
*Խընդում էր եթէ մի հայն էր խնդում,*
*Տըխրում էր եթէ մի հայն էր խնդում,*
*Տըխրում էր եթէ մի հայն էր տխրում.*
*Թէ բան էր հային մի նեղ պատահէր.*
*Նեղից հանելու միջոց ձեռք կառնէր.*
*Թէ գիւղն ստանար թշնամուց հարուած,*
*Սուրն իր ձեռքից նա չէր դնի ցած։*
*Իր գիւղին եթէ հասնէր մի վտանգ,*
*Պատրաստ կը լինէր զոհելու իր կեանք*
*Մելիք Մովրովը լաւ գիտակցում էր,*
*Որ Օսմանն հային մի մեծ չարիք էր*
*Նրա կողմից միշտ ճնշում կար հային,*
*Նա ունէր իր վատ միտքը դիւային...*
*Բայց հայն արդէն հաշտուել էր դրան,*
*Տալիս էր տուրքը, որ պիտ տար նրան.*
*Երբեմն Օսմանը երբ վազէր աւել,*
*Կարողանում էր հայն առաջն առնել...*
*Բայց Օսմանն երբէք մինչ այդ չէր խորհել,*
*Հայոց հողն իսպառ քար ու քանդ անել։*
*Կուզէր հայ հողը միշտ էլ շէն մնար*

Ու ինքն այդ երկրից իր տուրքն ստանար...
Այո՛, այնտեղ էլ հային ճնշում կար.
Բայց իրենց հողն էր էլի ինչ որ կար.
Տանելի էր դա հային անիշխան
Եւ հայն ունէր կեանքն հաւաքական:
Հայն իր պապերի գերեզմանն ունէր.
Իր վար ու ցանքի հողերի տէրն էր:
Ունէր բիւրաւոր որբատեղիներ,
Շքեղ հին վանքեր, եկեղեցիներ:
Իսկ Շահ Աբբասը, գուլումն այդ քանդիչ,
Տակն ու վրայ էր անում ամեն ինչ,
Այդ արհաւիրքը դաժան, անողոք,
Աշխարհումը դեռ չէր տեսել ոչ ոք:
Դա զօռ էր, ճնշում, անագորոյն ցաւ,
Դա մեծ օրհասս էր, որ հային հասաւ...
Մելիք Մովրովն իր ծով մտքերում
Սուզուել էր, խոհեմ ելք էր որոնում:
Թէ պիտի հային տեղահան անեն,
Ու որպէս գերի այլ երկիր տանեն,
Եւ այդ մարդակուլ փոթորիկը մեծ.
Եկաւ ու աղէտ հայ երկրին բերեց,
Ու բռնագաղթն էր Շահի նպատակ,
Էլ ինչո՞ւ մնալ գերի ճնշման տակ,
Մըտածում էր նա, մի ճամբայ գտնել,
Ու գէթ իր գիւղը աղէտից փրկել.

* * *

Մելիք Մովրովը՝ հայ ասպետը քաջ
Գնաց ու կանգնեց Շահ Աբբասի առաջ.
Ասաց.- Պօսք ունեմ ես քեզ, ով արքայ,
Ծրնշում գործ մի՛ դիր իմ գիւղի վրայ.
Ես մինչև հիմա գործի բերումով,

Ճամբորդել եմ քո երկիրն իմ կամքով.
Ծանօթ եմ ես քո երկրի ճամբէքին.
Քո երկրի դիրքի ամեն դրւածքին:
Հրաման տուր ոչ ոք չզօռի իմ դէմ,
Ես ինքս իմ գիւղով Իրան կը մեկնեմ.
Ինձ հետ կը տանեմ իմ գիւղն ամբողջ,
Կուզեմ տեղ հասցնել նրանց ողջ-առողջ:
Իրանում որտեղ ասես, ես կերթամ.
Միայն թոյլ տուր ինձ իմ կամքով գնամ...
Ուզում ենք տանենք ինչ կարողանանք.
Ճանապարհին մենք մեր ծախսն ունենանք.
Իմ գիւղից կուզեմ չմեռնի ոչ ոք,
Երեխայ ու կին, ծեր ու տարիքոտ:
Բոլորին էլ ողջ հասցնեմ Իրան,
Այնտեղ, որտեղ քո կամքին է հաւան:
Միայն ուզում եմ, ուր էլ որ լինենք,
Հայ մնանք ու մեր հաւատը պահենք.
Ուզում ենք մենք միշտ քրիստոնեայ մնալ,
Այդ հաւատքով էլ աշխարհից գնալ:
Չենք կարող փոխել կրօնը մենք մեր,
Պիտ այդ ընդունի մեծութիւնը ձեր...
Էլ ուրիշ ոչինչ չենք ուզում որ տաք,
Հայն աշխատող է ու շատ ընդունակ:
Շահ Աբբասն երբ ասպետին լըսեց,
Այդ հերոս մարդու կերպարը սիրեց.
Սիրեց խօսքերը նրա համարձակ.
Ու զգացմունքն իր յայտնեց բացարձակ:
Մելիք Մովրովի անունը հարցրեց,
Գրեց անունն ու իր մօր պահեց...
Ասաց.- Դիւր եկար ինձ ով հայ ասպետ.
Կասեմ ոչ ոք գործ չունենայ քեզ հետ.
Իրանում որտեղ սիրես, հաւանես,
Հէնց այնտեղն ես կը նւիրեմ քեզ,

*Որ այնտեղ գնաք գիւղ-ազգականով,*
*Գործէք միասին, ապրէք ամենով։*
*Ձեր ազգութիւնը դէմ չեմ պահելուն.*
*Ձեր կրօնին էլ կացէք հաստատուն...*
*Որ ճամբով որ դուք գետէք գնացէք,*
*Իսֆահան հասէք ու այնտեղ կացէք։*
*Մինչև իմ գալը դու գնայ, շրջիր.*
*Ուր որ դու սիրես այնտեղն ընտրիր,*
*Որ երբ զօրքիս հետ ես գամ տեղ հասնեմ,*
*Քո ընտրած տեղը ես քեզի յանձնեմ։*
*Քո քիմք ու կամքը ինձ շատ դուր եկաւ,*
*Քըմահաճոյքդ սիրեցի հարկաւ.*
*Գաւառապետի պաշտօն կը տամ քեզ*
*Կը վարւեմ այնպէս ինչպէս դու ուզես.*
*Դու քաջ ասպետ ես, երևում է այդ,*
*Քո շարժ ու ձևից պարզ է, բացայայտ.*
*Խօսք եմ տալիս քեզ այդպէս էլ մնաս,*
*Իրանում էլ դու քո տեղն ունենաս.*
*Ու գրեց, կնքեց գրաւոր ֆարման,*
*Հայոց Ասպետին նւիրեց արքան։*

* * *

*Գաղթում էր արդէն գիւղը Փարաքար,*
*Հակում էր նրան գիւղի այրուձին.*
*Խըռնւած էին այր, կին ու տարար,*
*Մի ուղի ընտրած ջոկ ու առանձին։*

*Մելիքը գիտէր ապահով ճամբան,*
*Իր կարաւանը տանում էր անահ.*
*Կամուրջը գիտէր, ծանօթ էր նրան,*
*Տանում էր գիւղը դէպի այն՝ վստահ։*

Ոչ ոք չէր կարող իր ուղին փոխել.
Շահից նա արդէն ունէր հրաման։
Իր ժողովրդին ուզում էր փրկել.
Այն մասին, որին ինքն էր տէր, իշխան։

Գնում էր գիւղը, Փարաքարն ամեն,
Իր կայքը շարժան տանում էր իր հետ.
Թէ ուր էր գնում, անյայտ էր իրեն,
Բախտն էր իր առաջ դրել այդ աղէտ

Պարտադրուել էր այդ ժողովրդին
Գաղթն ու քօչելը ու անյայտ ճամբան։
Դժւար էր, դաժան, խժխեմ ու խրթին.
Չորս ամիս կոխել արահետ, կածան։

Օ~, քաոս էր դա, ծեր ու պատանի,
Կին ու երեխայ եւ ծծկեր մանուկ
Խառն իրենց հետ տաւարն ընտանի,
Յոգնած գնում էր թախծոտ ու դալուկ։

Մի օրը խոնջած ճամբայ էր կտրում,
Դաշտում կանգ առնում գիշերը յոգնած,
Միւս օրն ուտում ու հանգիստ առնում,
Արածեցնում էր տաւարը քաղցած։

Եւ ահա նրանք հասան Սպահան՝
Չորս ամիս ճամբին ծանր օրեր քաշած
Յոգնած ու խոնջած նրանք կանգ առան.
Իրենց գալիքի ցաւովը տարւած։

Մելիք Մովրովն իր ժողովրդին,
Միջոց է տալիս որ հանգստանան.
Ինքը վերցնում է Թահմազ, Մուրադին
Որ տեղ ընտրելու հետևից գնան։

*Թահմազ, Մուրադը եղբայրներն էին*
*Մելիք Մովրովի ու միշտ էլ պատրաստ.*
*Որ Իրենց եղբոր կամքով գնային,*
*Լինէին նրա կամքին միշտ զգաստ:*

*Մելիք Մովրովը դեռ Հայաստանում,*
*Ունէր մի քանի ձիաւոր ընտիր.*
*Քաջի հետ էին նրանք միշտ լինում,*
*Ու քաջի խօսքին լըսող, ուշադիր:*

*Մելիքն անչափ սիրում էր նրանց,*
*Գաղթի ճամբին էլ միասին էին.*
*Որոշել էին մինչև վերջ սրտանց*
*Մելիքի կամքով, խօսքով գնացին:*

*Ես այշմ Մելիքը եղբայրների հետ*
*Իր ընկերներով ընկան շրջելու,*
*Ու որոնելու երկրում կէտ առ կէտ.*
*Գըտնելու իրենց տեղն ապրելու:*

*Սպահանից դէպ արևմուտք անցան,*
*Գնացին Փերիա, անցան Բուրւարին,*
*Բուրւարիում երբ Փահրա գիւղն հասան,*
*Այնտեղ դուր եկաւ նրանց բոլորին:*

*Գեղեցիկ գիւղ էր Փահրան բաւական,*
*Դաշտերը կանաչ, օդը կենսունակ,*
*Բուրավէտ ծաղկունք լի ալեծածան*
*Բերրի բարեբեր, հողը ընդարձակ:*

*Փահրային մօտիկ մի ուրիշ գիւղ կար,*
*Փարշիշ գիւղն էր դա, շքեղ աննման,*
*Ծաղկունքը բռնած դաշտը հաւասար,*
*Կանաչութիւնը՝ առատ, անսահման:*

Ընդարձակ հովտի շուրջը եզերած,
Գեղեցիկ լեռներ, կանաչ, սիգապանծ.
Երկնքի մովում բազ,երամգ ձգւած.
Դիւթօղ ու շքեղ տեսքովը իրանց։

Մի սիրուն գետ էր անցնում հովիտով,
Ակունքն արևելքի հեռու լեռներից.
Անցնելով Փահրա, Փարշիշի մօտով,
Մարդ զմայլւում էր գեղեցիկ տեսքից։

Օդը զովասուն, բարեխառն ու ջինջ,
Հովիտն ամբողջ մի վայր մոգական,
Փահրա, Փարշիշին էլ պակաս ոչինչ,
Իրանում չըկար շքեղ վայր այդքան։

Զուր չէր Շահ Աբբասն իր հովոցն ընտրել,
Փարիշիշի շքեղ բնութեան գրկում.
Այնտեղ գեղեցիկ պալատ կառուցել,
Ամառը գընում ու հանգստանում։

Փարշիշն ամառը այլ տեսք էր առնում,
Քաշւում էր Շահի շքախումբն այնտեղ,
Դաշտումը շքեղ վրաններ խփում,
Ջերմ եռ ու զեռ էր տիրում ամեն տեղ։

Հէնց ձիւնը հալւէր ու գարունը գար,
Զարդարւում էին Փարշիշն ու Փահրան,
Զմրուխտ էր հագնում դաշտ, բլուր ու սար.
Դառնում էր ծաղկած դրախտ աննման։

Իրանում նա շատ վայրեր էր տեսել,
Բայց ոչ մի տեղին չէր եղել հաւան,
Իսկ Փահրային նա շատ էր հաւանել,
Ճիշտ Հայաստանը Թւաց դա նրան։

*Մելիքը գտաւ իր տեղն ուզած,*
*Ուղեկիցներն էլ հաւանեցին այն,*
*Փնտռելու գործը արդէն վերջացած*
*Ետ վերադարձան նրանք դէպի Սպահան։*

*Մելիք Մովրովը՝ քաջ ասպետն այն,*
*Զրկուել էր արդէն իր հայրենիքից,*
*Բայց նրա ցաւը այն էր միմիայն*
*Որ ժողովրդին փրկէր զրկանքից։*

*Շտապում էին հասնել քոչւորին,*
*Նրանց կարիքը, ցաւերը հոգան,*
*Թեթևացնելու հոգսը դժւարին,*
*Օժանդակէին ինչքան կարենան։*

* * *

*Շահ Աբբասն եկաւ, հասաւ Սպահան,*
*Տեղ հասաւ նաև գերին տեղահան,*
*Հայի քիչ մասն էր մնացել արդէն,*
*Գետի աղէտը ամենքը գիտեն.*
*Ու թող չը յիշւի թէ ճանապարհին,*
*Ինչ դառը ցաւեր վիճակւեց հային.*
*Է~հ, ասենք հայը հասաւ Սպահան,*
*Բաւականանանք այդքանով միայն։*
*Գիւղացուն Շահը ցրեց գիւղերում,*
*Հէնց Սպահանին մօտ գաւառներում,*
*Անգիտակ ու բիրտ լօռ ցեղի կողքին,*
*Որ դա էլ դարձաւ ցաւ ժամանակին։*
*Սպահանին կից մի քաղաք հիմնեց,*
*Քաղաքացոնց էլ այնտեղ տեղ տւեց.*
*Նոր Ջուղա կոչեց նոր քաղաքն այն,*
*Որ հային դարձաւ մի նոր հանգրւան,*
*Հայերն այնուհետ կրկին ու կրկին,*

Դառն ու վատ օրեր շատ ճաշակեցին.
Էլ հային լաւ կեանք պիտ գար որտե՞ղից,
Երբ հայը զրկւեց իր հայրենիքից...
Բռնագաղթը հէնց այստեղ ում թողնենք,
Մելիք Մովրովի մասին մենք խօսենք:

* * *

Մելիք Մովրովը Շահի մօտ գնաց,
Զեկուցեց նրան գործերն իր արած.
Յայտնեց՝ ընտրել է այնտեղն արդէն,
Որ պիտ իր գիւղով գնան ու ապրեն:
Միայն ուզում են Շահն այդ արտօնի,
Խոստացածի պէս դա իրենց յանձնի...
Մելիք Մովրովին Շահը մօտ կանչեց,
Ու նրա այրւած սիրտը փաղաքշեց.
Ասաց.- Դու քաջ ես, այդ ես լաւ գիտեմ,
Քեզ հետ կը վարւեմ, ինչ խոստացել եմ:
Քեզ եմ նւիրում քո տեղն ընտրած,
Հաւանել եմ ես քո գործն արած...
Իրանում չկայ այդքան սիրուն տեղ,
Ամառն ես էլ գընում եմ այնտեղ:
Այնտեղ գեղեցիկ պալատ ունեմ ես.
Այդ լաւ է, որ դու հէնց այնտեղ լինես:
Դու մեծ ես գիտեմ, պիտ մեծ էլ մնաս:
Այդ շրջանում դու ղեկավար դառնաս.
Գաւառապետը լինես շրջանի,
Կարգադրես ՝ ով որ մի խնդիր ունի:
Զօրքի ղեկավար կը կարգեմ ես քեզ,
Որ կուի դէպքում ինձ էս օգնես:
Գնա, լաւ ապրիր, ուրախ կեանք վարիր,
Ժողովուրդդ առ քո գիւղը մեկնիր.
Գնացէք Տէրը թող լինի ձեզ հետ,
Գնացէք այնտեղ ապրէք այսուհետ:

Ու Շահը կանչեց սխոռապետին.
Տալ մի ընտիր ձի պարգև ասպետին,
Ու սիրտ տաքացնէր ասպետն այդ երկրին,
Շնացնէր հողը, կապւէր Իրանին.
Որ առաջնորդէր Բուրւարին ամեն,
Վար ու ցանքն իրենց նոր ձևով անեն.
Սովորեցնէր որ պարտէզներ գցեն,
Պտուղի ծառեր տնկեն, մշակեն.
Այգեգործութեան ետևից գնան,
Ծառաստան հիմնեն, խաղող ունենան,
Տեղացիներին լաւ սովորեցնեն,
Գիւղտնտսութիւնն ինչպէս կատարեն։

* * *

Փահրան դարձաւ մեծ գիւղ հայկական,
Հայն ստեղծեց իր կեանքն հաւաքական։
Փարաքար գիւղի ժողովուրդն ամեն
Այնտեղ կառուցեց տուն պատշաճ իրեն։
Հայն այնտեղ իրեն նոր կեանքն սկսեց,
Եկեղեցի էլ գիւղում կառուցեց.
Որ ժամանակին աղօթքի գնաց,
Ժամ ու աղօթքից անմաս չմնաց.
Ուզէր ու չուզէր պիտ հաշտւէր կեանքին
Հայ մնար ու միշտ՝ կապւած հաւատքին։
Դըպրոց էլ հիմնեց, ուղարկեց որդուն,
Գնաց սովորի իր հայոց լեզուն։
Սովորոյթը ողջ պահեց հայկական,
Ծես աւանդութիւն իր պապենական.
Պահեցին օրէնքն իրենց սրբազան։
Ծոմ, պահք, այլ ծէսերն առաջւայ նման։
Փոքրը չգնաց մեծին հակառակ.
Զուգեցաւ լինել անառակ զաւակ։

Ալիւրն երբ մաղեց, վրան խաչ քաշեց,
Նոր լցրեց տաշտը և ապա հունցեց։
Հիւրասէր դարձան, հիւրին յարգեցին,
Միմեանց սիրով կապւած մնացին.
Սիեցին կարգը նահապետական.
Փոքրերը մեծի կամքով ընթացան։
Հարսն ունեցաւ ընթացք պատւաբեր.
Յարգեց կեսրարին, կիսրոջ ու տագեր.
Եղբայրը սիրեց եղբօրն անսահման,
Ու նրա օգտին տւեց ամեն բան։
Տարազը իրենց պահրեցին մաքուր,
Չուզեցան իրենց կաթին խառնել ջուր...
Տօնում էին դիփ տօներն հայկական,
Տօները սիրւած ու նւիրական
Նոր տարի, Ջրօրհնէք ու տօն Ղևոնդեանց.
Սուրբ Սարգիս նաև Քաջն Վարդանանց.
Տեառընդառաջն էլ լաւ էին տօնում,
Տերընդաս վառում, վրայով թռչում։
Փոթոթորիկ ու միջինք, ծառզարդար.
Միշտ կը տօնէին, մոռացում չկար.
Խաչելութիւնն ու խաւարում գիշեր.
Ամեն տարի մեծ սուգով կը յիշւէր։
Զատիկը տօն էր նրանց շատ ուրախ,
Այդ տօնին չկար նրանց ախ ու վախ.
Գարուն բացւելուն, այդ ծաղկած օրին,
Մեծ ցնծութիւն էր պատում բոլորին։
Համբարձման տօնը օր էր խնդալու.
Ուխտի գնալու, մուրազ առնելու.
Բոլորն այդ օրը դաշտն էին գնում,
Քէֆ էին անում և ուրախանում։
Սպասում էր միշտ հացն անհամբեր,
Վարդավառը գար, բերկրութիւն բերէր,
Աւանդութիւնը սրբութեամբ պահում,

*Մէկ-մէկու վրայ ջուր էին թափում*
*Ու տօնում էին տօները բոլոր,*
*Տօներն հայկական, թէ հին և թէ նոր։*

* * *

*Թէպէտ Ասպետը նոյն մեծն էր որ կար,*
*Իր դիրքի տէրն էր ինչպէս նախկինում,*
*Ընկերներ ունէր բարի, հոգատար,*
*Որ իրեն սիրում, էին բռնում,*

*Շահի նուիրած նժոյգը հեծնում,*
*Մի խումբ ձիաւոր իր ընկերներով,*
*Սար-դաշտերն էին շրջում պտտում,*
*Հայրենի երկրի հանգով ու կարգով,*

*Գիւղերն էլ էին երբեմն շրջում,*
*Եւ սղղութիհն տալիս գիւղացուն,*
*Ամեն տեղ նրանց լաւ էին յարգում։*
*Կեանք էին վարում նրանք դիւցազուն,*

*Մելիքը սակայն այն հերոս հսկան,*
*Չէր մոռանում իր երկիրն հայրենի*
*Ապրում էր դժգոհ, թախծոտ, աննշան։*
*Պանդուխտի կեանքով, խորքերն Իրանի։*

*Մելիքի գիւղը Փահրան էր արդէն,*
*Ու Բուրւարին էր գաւառը նրա,*
*Մելիքը չունէր պակաս բան իրեն,*
*Բայց միշտ տխուր էր, հէգ՝ սիրտը նրա։*

*Մելիքն զգում էր, որ խորթ էր Փահրան,*
*Չէր սիրում հայը երկիրն այն օտար,*
*Սիրում էր երկիրն իր պապենական,*
*Որտեղ ապրել էր նա դարէ ի դար։*

Ջուր էր Շահ Աբբասն նրանց տեղ տուել
Մօտիկ իր Սարշիշ ամառանոցին,
Ջուր էր խոստանում հովանաւորել,
/ու նրանց կապել Իրանի հողին։

Հյը միմիայն իր հողն էր սիրում,
Իր պապենական հողը դիւթական,
Տառապած հայրն էլ չէր հանգստանում,
Չըկար հատուցում Իրանում նրան։

Մելիք Մովրովը միշտ տառապում էր,
Իր ժողովըրդի ցաւն էր քաշում նա,
Մելիքը մեծ էր, հայն այդ լաւ գիտէր,
Իր հայի ամեն յոյսն էր իր վըրայ։

Ամեն ժողովուրդ ուզում է լինե
Իր հայրենիքում ու իր ազգի հտ,
Գործել իր երկրում, երկրին ծառայել,
Գնալ իր երկրի լաւ ու վատի հետ։

Հայոց Աշխարհը լիքն էր բարիքով,
Հայ ժողովուրդը ուրախ էր այնտեղ.
Առողջ էր հայը, կենցաղով, հոգով,
Օդ ու ջուրն իրենց դարման էր ու դեղ։

Բայց ինչո՞ւ իրենց պատեց մութ խաւար,
Ինչո՞ւ գերւեցին քշւեցին Իրան,
Ու բախտն իրենց, ո՞ւր գնաց դէպ չար.
Դարձնելով նրանց մի աստանդական։

Օտար երկիրը որ լինէր դրախտ,
Չէր դառայ նրանց հայրենի երկիր։
Օտար երկրումը նրանց էլ ուր բախտ,
Լոկ պանդուխտ էին, տխուր տարագիր։

Ինչ էլ լինէին Փարշիշն ու Փահրան,
Հայը միշտ այնտեղ տխուր էր, տրտում,
Կեանքն այդ գիւղում չէր ժպտում նրան,
Երբ նա օտար էր Իրանի հողում։

Երբ որ նա զրկւեց հայրինի երկրից,
Լաւ օրերն արդէն նրանից անցան,
Աշխարհը նրան բանտ էր փշալից,
Այն օրւանից երբ դարձաւ ցիր ու ցան։

Միշտ փափագում էր Փարաքարեցին,
Որ էլի դառնայ երկիրն հայրենի,
Բայց նրանք արդէն գիտակցում էին,
Որ մելիքով միայն գուցէ որ լինի։

* * *

Մելիքը մի շատ սիրուն քոյր ունէր,
Աշխարհումը նա հէնց միայն մէկ էր։
Նըրա անունն էր Չքնաղ Սրբուհի,
Չըկար նրա պէս մի գեղեցկուհի։
Ուր էր նկարիչ, որ կարողանար,
Նկարէր այնքան գեղեցիկ նկար...
Իր երկու սև ծով աչքերը խոշոր,
Հմայում էին դիտողին անզօր։
Բոյ ու բուսաթը ճիշտ բարդի մի ծառ,
Հայեացքը նրա չքնաղ ու պայծառ.
Սպիտակ դէմքիցն իր լոյս էր կաթում,
Անմեղութիւն էր իր դէմքից թափում։
Յօնքերն իր դեռ երկօրեայ լուսին,
Շատ էին սազում չքնաղ երեսին.
Կարապի բիւրեղ վիզը սպիտակ,
Շատ էր յարմարւում իր բոյին բարակ.

Իր սև ծամերը երկու հիւս արած
Ու հաստ հիւսերը թիկունքը ձգած
Տալիս էր այնքան շքեղ տեսք նրան։
Ինչպէս եղնիկի եղջիւրն աննման։
Իր խոժոռ դէմքը ողորկ ու գողտրիկ.
Շատ ելակի էր, չքնաղ ու քաղցրիկ
Տխուր նայւածքը արդար ու անմեղ,
Դարձնում էր տեսքը աւելի շքեղ։
Իր ատամները ճերմակ լալ գոհար,
Մաքուր ադամանդ ու ակնաշատ.
Քիթ ու բերանը նուրբ ու համաչափ,
Ամեն ինչ լրիւ, ամեն ինչ անափ։
Ձեռք ու մատները լուսին սպիտակ
Նա ասես մարդ չէր, այլ մի հրեշտակ.
Չքնաղ Սրբուհի, ունէր ամեն ինչ,
Աստւած տւել էր, չէր մերժել ոչինչ.
Իշխանուհու իր հանդերձը սիրուն,
Տալիս էր նրան հրապոյր ուրոյն։
Փահրա, Փարշիշը և ողջ Բուրւարին
Ինչքան որ կային տղամարդ ու կին.
Չըքնաղ Սրբուհու գովքն էին հիւսում
Իր գեղեցկութեան խօսքն էին ասում։
Շատ սրտեր էին արտակարգ դոփում,
Չքնաղ Սրբուհու սիրով տրոփում։
Հայ երիտասարդ քաջերը բոլոր,
Ասել-լսելու խօսք չունէին նոր։
Խօսքը որ նրանց սրտին էր նստում,
Չքնաղ Սրբուհու շուրջն էր պտտում։
Ու խորհում էին ողջ քաջերը մեր,
Թէ այն Չքնաղը ում կը վիճակւէր.
Արդեօ՞ք ում կը տար իր սիրտն ու սէր,
Ում կընտրէր Հուրին իր կեանքի ընկեր։
Երբ գործում էին նրանք միասին,

*Ու խոսում էին չքնաղի մասին,*
*Էլ գործը նրանց դժւար չէր թւում,*
*Հաճույքից նրանք չէին էլ յոգնում:*

* * *

*Ու Շահ Աբբասի ականջը հասաւ*
*Չքնաղ Սրբուհու հրաշակն ու համբաւ:*
*Նրան ասացին՝ չուտես, չը-խմես,*
*Չքնաղ Սրբուհու երեսին նայես:*
*Շահը զարմացաւ՝ ո՞վ է այն հուրին,*
*Որի գովքն այնքան տարածել էին…*
*Նա ուզեց տեսնել չքնաղ Սրբուհուն*
*Դիտել իր աչքով այն գեղեցկուհուն:*
*Որոշեց ամառն երբ հովոց գնայ.*
*Չքնաղ Սրբուհուն այնտեղ տեսնի նա.*
*Տեսնի թէ ճի՞շտ է այն գովեստը ամեն,*
*Որ նրա մասին արել են իրեն:*

* * *

*Ամառը եկաւ: Այն գոռոզ արքան*
*Եկաւ Փարշիշում խփեց իր վրան…*
*Շուտով Մելիքին նա իր մօր կանչեց,*
*Եւ թէ իրենից, թէ գիւղից հարցրեց:*
*Գիշերը պահեց ընթրիքի նրան,*
*Ու հարցեր տւեց շրջանից այն…*
*Երբ միջինքն ուզեց վեր կենայ, գնաց,*
*Շահն աչքով արաւ՝ իրեն մօտենայ,*
*Ու կամաց խօսեց Շահը ծածկաբար,*
*Այնպէս որ միայն Ասպետն իմանար.*
*Յայտնեց, որ ինքը վաղը գիշերւան,*
*Հիւր է լինելու Մելիքին իր տան.*
*Գիշերն իր տունը լինի Մելիքը,*
*Միմիայն ինքը, իր ընտանիքը:*

*Իր հետ կը լինի իր մի նախարար,*
*Պիտ այդ չիմանայ ուրշ մի օտար։*
*Իբր նըպատակն էլ հէնց միայն այն էր,*
*Որ Մելիքի տուն-ապրուստը տեսնէր։*
*Զուզեց որ քաշի ոչ մի նեղութիւն,*
*Հաց չի ուտելու ինքն ասպետի տուն.*
*Չի ունենալու որ մի ախորժակ,*
*Կը խըմի գինի միայն մի բաժակ։*
*Ասպետին բնաւ դա խորթ չթւաց,*
*Շահն առաջ էլ իր տանն էլ եկած.*
*Մելիքն էր մեծը ամբողջ շրջանի,*
*Ինքն էր գաւառի մարդը անւանի.*
*Զարմանալի չէր թէ Շահն իր տուն գար,*
*Շրջանից հարցնէր, բան տեղեկանար,*
*Տեսնէր հայերի կեանքը մօտիկից,*
*Ու ցւյց տար իրեն նրանց կարեկից։*

* * *

*Ու Շահը գնաց քաջ Ասպետի տուն,*
*Գնաց ու տեսաւ չքնաղ Սրբուհուն։*
*Տեսաւ ու գնաց բոլոր միտքն ու յուշ*
*Օ~, իր տեսածը մի վարդ էր քնքուշ։*
*Տեսաւ որ ինչքան ասել են, գովել,*
*Աւելին է այն, դեռ քիչ են ասել։*
*Խեղճացաւ Շահը, պապանձւեց լեզուն,*
*Գերի դարձաւ նա կոյսին սրբազան։*
*Տեսաւ իր ամբողջ վեհութիւնը մեծ.*
*Չքնաղ Սրբուհու դէմ հալւեց, մաշւեց։*
*Նա հիմա չունի ուժ ու զօրութիւն,*
*Մի թոյլ էակ է, չունի քաջութիւն.*
*Պատրաստ է Կոյսի առաջը չոքել,*
*Ու նրանից սէր մուրալ, աղերսել։*
*Չքնաղ Սրբուհին, քաջ հերոսուհին,*

Տապալեց իսպառ այն գոռոզ Շահին
Վրէժը լուծեց բոլոր հայերի,
Որոնց խոշտանգեց ու առաւ գերի։
Շահը այդ պահոն էլ չէր բռնակալ,
Նա մեղմ էր, հարդարտ ու անոխակալ։
Հայոց աղջկայ ուժը անսահման.
Գոռոզ արքային տարաւ կործանման...
Շատ էր գործ դրել նա հային ճնշում,
Վերջն ինք գնաց դէպի ընկճւում։
Սինան փաշայի գալուն խեղճացաւ,
Բայց ոչ այդքան նա խըղճալի դարձաւ։
Ասպետի տանից թէպէտ նա մեկնեց,
Բայց սիրտն ու հոգին հէնց այնտեղ թողեց...
Գիշերը քնել չըկարողացաւ,
Մղձաւանջային գիշեր ունեցաւ.
Հայոց օրիորդի ուժը դիւթական
Արել էր նրան իսպառ խելահան։
Չըքնաղ Սըրբուհու ուժը շատ մեծ էր,
Նա գոռոզ Շահին դիւթել, գերել էր։
Շահը գիտէր, որ չըքնաղ Սրբուհին
Կանգնած էր բախտի ծայրումը վերին.
Նա կոկոն վարդ էր, ծաղիկ նոր փթթած
Իսկ ինքն արդէն հասակն առած.
Պատշաճ չէր իրեն, որ ոտք երկարէր,
Չքնաղ Սրբուհու հետ ոտը մեկնէր։
Մէկ էլ որ ինքը սէյիդ, մուսուլման
Ու մոլլաներին կառչած մշտական
Ինչպէս էր կարող ունենալ հայ կին,
Մոլլաներն իրեն ինչե՞ր կասէին։
Չէ՞ն ասի՝ ոնց դու առատ մէկին,
Երբ դէմ էր նա քո ազգին կրօնին։
Տառապում էր միշտ շահը ընկճւած
Օրեր շարունակ նա նեղը ընկած.

*Մտածեց երկար, չափեց ամեն կողմ։*
*Չափեց իր ուժը Շահը անողորմ,*
*Տեսաւ չի կարող Սրբուհուց անցնել,*
*Ու նրա սիրուց ընդմիշտ տառապել։*

* * *

*Ձով երեկոյ էր, խաղաղ ամեն տեղ,*
*Լրիւ լուսինն իր պայծառ, շքեղ*
*Արծաթեայ լոյսն էր սփռել, տարածել,*
*Անդորրութիւն էր երկրին պարգեւել։*
*Պարզ էր երկինքը, պայծառ ու մաքուր,*
*Աստղերն երկնքում փայլում էին լուռ...*
*Ասպետն էլ պառկած կտրանը մենակ,*
*Խորհում էր տխուր պայծառ լուսնի տակ։*
*Իր ժողովրդի ցաւն էր քաշում նա*
*Անհաշիւ էին ցաւերը նրա։*
*Մելիքն ուզում էր իր երկրում լինել*
*Ողջ մարդկութեան հետ ապրել ու մեռնել...*
*Իրենց վանքերը գեղեցիկ, շքեղ,*
*Հիմա դատարկ են ու թափուր այնտեղ.*
*Հիմա խաչերը թեւերը փռած,*
*Հայի վիշտերն են յղում առ Աստուած...*
*Էլ ո՞ր հայն այնտեղ կերթայ, կաղօթի,*
*Իր ժողովրդին արեւ կը մաղթի։*
*Ոսկորներն ընկած նահատակների,*
*Տուած զոհերը նախկին դարերի,*
*Մայր Հայաստանում մնացին անտէր,*
*Էլ նրանց վրայ ո՞վ խունկ կը ծխէր։*
*Ննջեցեալներին իրենց հին ու նոր,*
*Էլ ո՞վ կայցելեր ողջ տարին բոլոր։*
*Ով հոգեհանգիստ կը կարդար նրանց.*
*Պաշտամունք կանէր վեհ ու փառապանծ։*
*Ծով մտքերի մէջ նա յոգնեց, քնեց,*

Բայց քոնն էլ իրեն հանգիստ չթողեց…
Երազում մի մեծ զազրելի վիշապ,
Եկաւ ու մտաւ իրենց տունն շտապ,
Գնաց փաթաթւեց Զըքնաղ Սրբուհուն,
Ու սեղմեց նրա կոկորդը սիրուն.
Սրբուհին ինչքան տանջւեց, չարչարւեց,
Տգեղ վիշապը մէջքը չըթողեց։
Վիշապը գնաց միայն այն պահուն,
Երբ վնասել էր չքնաղ Սրբուհուն,
Ապա Ասպետը իր նետն արձակեց,
Ուղիղ վիշապի թիկունքը մխեց։
Լուծեց վրեժը վիշապից այն չար,
Վիշապը պարտւեց դարձաւ նետահար…
Երազից ազդւած Ասպետը զարթնեց,
Հէնց այդ չար պահին դարպասը բախւեց,
Ու շփոթւեցին ողջ միանգամայն,
Է~հ, քեզ ով զարմանք, Շահ Աբբասն էր այն։
Մելիքն էլ ահա, սաստիկ շըփոթւած,
Քնատ աչքերով արագ իջաւ ցած,
Հիւրասենեակը առաջնորդեցին,
Բարեգալուստի խօսքեր ասացին։
Բայց զգացին դա բարի նշան չէր,
Անշուշտ նա մի մեծ սըրտացաւ ունէր.
- Բարի լինի տէր, այս գալուստը ձեր.-
Ասաց Մելիքը դժկամ, անհամբեր։
- Բարի է, - ասաց Շահը անազնիւ,-
Չեմ ուզում դուք ինձ տաք ոչ մի պատիւ.
Շատ հանգիստ եղէք, ոչինչ ուտող չեմ,
Այլ միմիայն մի առաջարկ ունեմ։
Եկել եմ ձեր տուն աղջիկ ուզելու,
Զքնաղ Սրբուհու ձեռքը խնդրելու.
Ես շատ ջանացի անցնել այդ մըտքից,
Դա վեր եղաւ իմ կարողութիւնից։

Չեմ կարող ապրել առանց նրան ես.
Մելիք իրապէս պիտ այդ ընդունես.
Ուզում եմ շուտով ինձ պատասխան տաք,
Դուք չլինէք իմ կամքին հակառակ:
Աղջիկ ուզելը պիտ սիրով լինի,
Ինչ համ կունենայ թէ լինի բռնի:
Ես ուզում եմ, որ դա շատ գաղտնի մնաց,
Իմ պալատումը ոչ ոք չիմանայ:
Իսկ այժմ ես կերթամ, դուք լաւ մտածէք,
Երկու օր յետոյ ինձ պատասխան տւէք:

* * *

Շահը գիշերով եկաւ, վայ գալուն,
Եկաւ ցաւ բերեց նա Ասպետի տուն.
Անհանգստութիւն բերեց բոլորին,
Ահռելի ցաւը նրանց չէր դիւրին,
Ինչպէս Սրբուհուն մուսուլմանի տան,
Այն էլ մէկին որ քանդեց Հայաստան,
Քանդեց ու արաւ հային տեղահան
Եղեռնեց, խեղդեց, տարաւ կործանման.
Մէկին, որ մոլի իսլամ էր, սէյեդ,
Համախոհ էր միշտ, մոլլաների հետ:
Մէկին որ տարիքն առել էր արդէն,
Ու դեռատիի տեղ դրել իրեն.
Ինչպէս դուր կը գար մի չքնաղ լուսին
Մի սև ամպի հետ լինէր միասին,
Շահն այդ չարակամ էլ ինչե՞ր չարաւ,
Էլ ի՞նչ ցաւ ասես հային չբերաւ:
Միթէ՞ հայն ինչ էր նրան պարտական,
Որ ամէն ձևով էլ տանջում էր նրան.
Ա~խ, Աստւած նրան իր պատիժը տար,
Որ հայի դէմ միշտ դաժան եղաւ՝ չար...

Մելիք Մովրովը չքնեց բնաւ,
Ջար մղձաւանջի գիշեր ունեցաւ,
Միթէ քիչ էին ցաւերը նրա,
Որ դա էլ բարդւեց ցաւերի վրայ։
Նա ոնց էր կարող այն մտքին հաշտւել,
Իր բարի քրոջն ոսոխին յանձնել։
Նրան սէյիդի տալ արտասովոր,
Ու քամուն յանձնել իր բախտը բոլոր.
Ինչքան լաւ էր, որ իր մայրը մեռաւ,
Աննման որդու ցաւը չտեսաւ։
Իսկ օրիորդը սաստիկ դառնացաւ,
Կասես աշխարհից խսպառ վերացաւ...
Շահի արարքը այն խենթ ու խելառ.
Անտանելի էր ու ցաւ անսպառ.
Որտեղից եկաւ այդ ցաւը իրեն,
Այդ ցաւը դաժան, ցաւը անօրէն.
Ինչպէս էր կարող սիրել նա մէկին,
Որ դժբախտութիւն բերեց իր ազգին.
Ինչպէս էր կարող ատելի մէկին
Համակերպւել ու դառնալ նրա կին.
Խելքի, շնորհքի մարմնացումը այն,
Պարծանքը ազգի ու իր հայութեան,
Տէրը այն ամբողջ համբաւ, հըռչակի,
Վայելողն ամեն պատւի, յարգանքի,
Տէրը գերբնական մեծ կարողութեան,
Ինչպէս էր կարող գահավէժ լինել,
Եւ ունայնութեան գիրկն իրեն նետել։
Ինչպէս էր կարող գահավէժ լինել,
Եւ ունայնութեան գիրկն իրեն նետել։
Ինչպէս էր կարող հաշտւել այն մտքին
Որ լինելու է մուսուլմանի կին,
Թէկուզ դա լինէր իսլամ տիրակալ,
Կամ մի այլազգի մեծ աշխարհակալ։

Նա գնաց ընկաւ գիրկն իր եղբօր,
Սկըսեց ողբալ շատ արտասուլոր.
Օգնութիւն խնդրեց իր քաջ եղբօրից,
Թէ ինչպէ՞ս փրկւի այդ ծանր ցաւից:
Ասաց.- Ինչո՞ւ ես ապրեցի, եղբայր,
Երբ ինձ պիտի գար այս սուրը սուրսայր:
Չեմ կարող ընաւ հաշտւել այն մտքին,
Որ գնամ դառնամ մուսուլմանի կին.
Այն էլ մէկին որ մեր տունը քանդեց,
Մեզ մեր լաւ երկրից հանեց ու գերեց.
Այն էլ մէկին որ քանդեց Հայաստան,
Ու անմեղ հային արաւ ցիր ու ցան.
Այն էլ մէկին որ հային նախանձեց,
Հանեց իր երկրից ու գետը լցրեց.
Այն էլ մէկին որ չի զգում այնքան.
Որ ծեր է՝ ինձ չէ համապատասխան:
Եղբայր ասա՛ ինձ, թէ՝ ես ինչ անեմ,
Այս ծանր ցաւը ես ինչպես տանեմ...
Եկ որ մտածենք մի ճամբայ գտնենք,
Տեսնենք այս ցաւից ինչպէս ազատւենք.
Ինչու մուսուլման իր ազգը թողեց,
Վատ Շահը ցաւը մեր դուռը բերեց
Չէ, չեմ կարող այս ցաւին դիմանալ.
Ատելի մէկին գնալ կին դառնալ:
Ասպետը զգաց քրոջ վիճակը,
Ձեռքից չըռւեց քաջի կեցւածքը
Քրոջն համբուրեց ու շատ պաղարիւն,
Ասաց.- Քոյրիկ ջան, մերն է յաղթութիւն...
Շահւ գուցէ մեզ գործ դնի ճընշում.
Ու մեր կամքի դէմ անի որոշում,
Բայց վստահ եղիր քոյրիկ իմ անգին.
Հաստատ իմ նետն է մնալու մէջքին:
Այժմ հանգստացիր, գնա քնելու,

Ասպայքարի մէջ մենք ենք շահելու...
Չկայ մի չարիք առանց բարիքի.
Մենք պիտ սպասենք մեծ յաղթանակի։

* * *

Ասպետն ունէր մի քաղցր ընտանիք.
Ունէր խելօք կին ու զաւակ քաղցրիկ.
Ունէր եղբայրներ անկեղծ, սիրալիր,
Լաւ ազգականներ իրեն համակիր.
Ընկերներ ունէր իրեն շատ կապուած.
Իր տուն դուռը միշտ առջևները բաց...
Նահապետական այդ շէն յարկի տակ,
Մէկ-մէկու հանդէպ սէր կար անպարփակ.
Չքնաղ Սըբուհին այդ ընտանիքում,
Տեղ էր գրաւել ամենքի սրտում.
Ասպետն իր քրոջ սիրում էր անչափ,
Որպէս դիցուհի պաշտում էր անափ։

* * *

Օ~ ծանր պահ էր Ասպետի համար
Նա Շահ Աբբասին պատասխան պիտ տար,
Որ գեղեցկուհուն Շահին են տալու
Թէ իրենց մերժման խօսքն են ասելու։
Շահը մենակ էր, մօտը մարդ չկար,
Ասպետն էր միայն, պիտ պատասխան տար.
Չէր ուզում Շահը որ իմանային,
Թէ ինքն ուզում է ունենալ հայ կին,
Եւ այժմ անհամբեր նա սպասում էր.
Տեսնէր Ասպետն իրեն ինչ կասէր։
-Շահընշահ,- ասաց Ասպետը նրան,
Շնորհ արէք, որ չլինի այդ բան.
Մենք հայ, կրօնով ձեզանից տարբեր,

Մեծ Շահընշահիդ այդ չէ պատւաբեր,
Որ մուսուլման մեծ ձեր ազգը թողնէք
Ու գաք հայուհի մի աղջիկ առնէք:
Ուզում էք գաղտնի առնել մի հայ կին,
Բայց դա կը բացւի շուտով ամենքին:
Այն ժամանակ դա փոշման կանի ձեզ,
Ու դա պատւազերծ կանի նաև մեզ:
Հայաստանում դուք վստահ խոստացաք,
Որ մեր ազգութեան, հետ գործ չունենաք.
Մեր խօսքը մեր մօտ ունի մեծ արժէք:
Քոյրս թէ մնայ միշտ իր կրօնին,
Դա դէմ կը լինի ձեր դաւանանքին:
Շահընշահ, մէկ էլ նա նշանւած է,
Իր նշանածին նա այժմ ի՞նչ ասէ.
Նա ընտրել է իր կեանքի ընկերը,
Տւել է մէկին իր սիրտն ու սէրը:
Մեծ Շահնշահիդ իմ խնդիրն այն է,
Որ իր մեծութեամբ այդ մտքից անցնէ.
Այլևս ոչ մի խօսք չունեմ ասելու.
Մեծ Շահնշահիդ կեանքն եմ օրհնելու:
Շահ Աբբասը լուռ լսեց Ասպետին,
Ու նայեց նրան շատ խորազըննին.
Մի առ ժամանակ խորհեց, լուռ մընաց,
Ապա Ասպետին նա իր խօսքն ասաց.
-է~հ, Մելիք Մովրով, ես յարգում եմ քեզ,
Վաղուց զգացի, որ դու մեծ մարդ ես.
Քո մեծութիւնը ես հաշւի առայ,
Ինչ որ ասացիր, ես ասացի՝ հա,
Վարւեցի քեզ հետ, ինչ դու ցանկացար.
Այս երկրում էլ դու քո տեղն ունեցար:
Եւ հիմա թէ դու ինձ հակառակես.
Գիտցիր որ ինձ շատ կը վիրաւորես:
Սիրոյ խընդիրը մի տարբեր բան է

Դա սիրտն է անում, մարդը մեղք չունի։
Ես մըտածեցի բոլոր կողմերը,
Սակայն ինձ յաղթեց բըռնկւած սէրը։
Եւ որովհետև սէր կայ սրանում,
Ճնշում գործ դնել ես չեմ ցանկանում։
Թէ սիրով լինէք ինձ հետ այդ գործում,
Ես կանեմ այն որ ձեր սիրտն է ուզքում։
Իր ազգութիւնը պահի Սըրբուհին,
Եւ հաստատ մընաց իր իսկ կրօնին։
Իմ կողմից միայն վէզիրն կիմանաց,
Կարգի կը բերէ գործն իր ձեռքով նա։
Զքնաղ Սրբուհին ինքը մեն ու մենակ
Պիտի ունենայ իրեն մի դղեակ.
Ինքը թող լինի մի հայ թագուհի,
Իր նաժիշտներն էլ ընտրի հայուհի
Բայց վըստահելի պիտ լինեն նրանք,
Այնպէս վարւեն որ փորձանք չունենանք։
Իսկ թէ գժտըւէք ու ինձ դէմ կանգնէք,
Էլ ինչ որ տեսաք ձեր աչքով տեսէք.
Ամբողջ Փահրան ես տակն ու վրայ կանեմ.
Շահ Աբբասը չեմ, եթէ այդ չանեմ.
Սրի կը քաշեմ բոլորիդ էլ ես,
Էլ չասէք՝ որ դու չասացիր այդ մեզ։

* * *

Դառը վիճակ էր ապրում մեծ Փահրան,
Կեանքի ու մահւան խնդիր կար այնտեղ.
Գիւղը կանգնել էր հոգու նման,
Ուզում էր գտնել իր ցաւին մի դեղ։

Ժողով է արդէն հաւաքւած են ողջ,
Տարէց մարդիկը ներկայ են ամեն.
Կան և Ասպետի քաջերն ամբողջ,
Խորհրդակցում են մի ճամբայ գտնեն։

*Երկու ճամբայ կայ նրանց առաջին,*
*Կամ հիմնայատակ կործանւի Փահրան*
*Կամ գեղեցկուհին՝ Ջքնաղ Սրբուհին,*
*Առնի նենգ Շահին, կին դառնայ նրան։*

*Բայց գեղեցկուհին վաղուց էր ընտրել*
*Իր ճանապարհը, Շահին չառնի նա․*
*Իսկ թէ Շահն ուզէ բռնութեամբ տանել,*
*Վըստահ ու հաստատ ինքնքասպան դառնայ։*

*Ոչ ոք չէր կարող Սրբուհուն զօռել,*
*Թէ դու անպայման գնա առ Շահին*
*Մէկին որ Հայոց Աշխարհն էր քանդել,*
*Ու մահ էր բերել տառապած հային։*

*Արդե՞օք ողջ գիւղը պիտի կործանւէր,*
*Փրկութեան ուրիշ էլ ի՞նչ ճամբայ կար,*
*Ժողովը ուրիշ էլ ի՞նչ որոշէր,*
*Երբ որ փրկութեան ոչ մի յոյս չկար։*

*Այնտեղ ճնշւում էր հայ գեղեցկուհին,*
*Ի՞նչ անէր արդեօք, ընտրէր որ ճամբան,*
*Իրեն համոզէր կին գըներ Շահին,*
*Թէ վճռածի պէս դառնար ինքնասպան։*

*Ինչ էր լինելու, եթէ նա ընտրէր*
*Իր երկրորդ ճամբան, արդեօք Շահը չար*
*Պիտի ողջ Փահրան հիմքից կործանէր,*
*Ու սրի քաշէր մարդկութեանն արդար։*

*Վըճռեց։ Վեր կացաւ իր միտքն յայտնելու*
*Ասաց․- Ով հայրեր, իմ քաջ եղբայր ջան,*
*Ճիշտ է, թէ ստիպէր Շահն ինձ առնելու,*
*Ես վճռել էի դառնալ ինքնասպան։*

*Բայց երբ մեր գիւղին վընաս չհասնէր*
*Երբ բանն ինձանով միայն վերջանար.*
*Շահը մեր գիւղին վնասել չուզէր,*
*Ողջ գիւղը սրի քաշել չցանկար։*

*Հիմա կը գընամ ես Շահին ստոր,*
*Իմ ճակատագիրն երբ այդ է միայն.*
*Թող որ ազատւի մեր գիւղը բոլոր,*
*Գալիք չարիքը ես գրկեմ համայն։*

*Ժողովականներ, ձեր զոհը ես եմ,*
*Ժողովը փակէք, գնացէք ձեր տուն.*
*Գիւղը փրկելուն ինչ ասէք կանեմ,*
*Կուզեմ մեր գիւղը մընայ հաստատուն։*

*Է~, գիւղը փրկւեց, բայց ցաւն ահագին,*
*Չէր կարող մարսել համայնքը գիւղի,*
*Ասպետի քոյրը, հայ գեղեցկուհին*
*Գընար կին դարնար մի նենգ ոսոխի։*

* * *

*Չքնաղ Սրբուհին գնաց նենգ Շահին,*
*Թող չանդրադառնանք նրա պըսակին.*
*Ինչքան մօտենանք ցաւը դիտելու,*
*Այնքան աւել ենք մենք մորմոքւելու։*
*Թող որ չիմանանք ինչ դաւանանքով,*
*Շահը պըսակեց, կին տարաւ իր քով...*
*Զրկւեց աղջիկը, էլ ինչ հարսանիք,*
*Ո՞ւմ հետ և ինչպէ՞ս ու այն էլ գաղտնիք.*
*Աշխարհում ցաւ է, խոր ցաւ ու անհուն,*
*Յանձնեն աղջըկան չսիրած մարդուն,*
*Կամ մի տղայի մի աղջիկ բերեն,*

Որ տղան երբէք չսիրէ իրեն։
Սպահանումը Չքնաղ Սրբուհին,
Ունէր մի փոքրիկ գղեակ առանձին.
Նաժիշտներն էին երկու հայ աղջիկ,
Իր ընկերներից, անչափ գեղեցիկ։
Չունէր էլ ուրիշ ընկեր խօսակից,
Բացի իր երկու հայ նաժիշտներից...
Շահը գալիս էր միշտ էլ ծածկաբար,
Իր գալը պիտի ոչ ոք չիմանար...
Բայց հարեմումը արդէն պարզւել էր.
Որ Շահն ուրիշ տեղ սիրուհի ունէր։

* * *

Դեռ երեք տարին նոր էլ լրացել,
Չքնաղ Սրբուհու տանելուց անցել,
Որ յայտնաբերւեց, բացւեց ամեն բան,
Շահի գաղնիքը բոլորն իմացան։
Ու լեզուն բացւեց հարեմի կանանց.
Օ~, դա դժւար էր նրանց չափազանց.
Շահը հարեմում այնքան կին ունէր,
Էլ նրա հայ կին առնելը ո՞րն էր.
Արհամարհանք չէ՞ր, որ շահը թողնէր
Մուսուլման կնոջ, գնար հայ առնէր։
Շահի համախոհ մոլլաներն ամբողջ
Ու իր ազգական սէյեդները ողջ,
Անչափ տխրեցին երբ տեղեկացան.
Որ հայ կին ունէր Շահ Աբբաս արքան։
Գնացին պալատ Շահին տեսնելու.
Ու նախատական խօսքեր ասելու.
—Շահ Աբբաս,- ասաց մեծ այաթօլլան,
Արածդ դէմ է մուսուլմանութեան...
Ինչո՞ւ ես առել դու այլազգի կին,

Երբ նա դէմ է մեր կրօնին, ազգին։
Մեր պարտքն է Շահի կանացը յարգել.
Հանդիպելիս միլտ գըլուխ խոնարհել
Ինչպէս ենք կարող հային անել այդ.
Երբ չունենք նրա կըրօնին հաւատ։
Շահ, քո արարքով արդեօք չես կարծում.
Որ քո սուրբ, մաքուր հարեմն ես պղծում,
Դու մի ֆարս սէյեդ, մարգարէի թոռ,
Ինչու ես պղծում քո գահն ու աթոռ
Գիտենք որ նրան դու խօսք ես տըւել,
Իր ազգութիւնն ու կրօնը պահել.
Դա մեծ ցաւ է մեր իսլամ կրօնին,
Անարգանք է դա մեր մարգարէին։
Մենք չենք հրամայում, այլ խնդրում ենք քեզ,
Մեր աղաչանքը, խնդրանքը յարգես,
Թողնես այդ այլազգ, այլակրօն կնկան,
Գնաս փառաշուք քո անշեղ ճամբան։
Կրկին ու կրկին մենք խնդրում ենք քեզ,
Այդ հայ կնոջից դու ձեռբազատուես.
Հայոց այն չքնաղ գեղեցկուհին վէս,
Անշուշտ մի ձևով կախարդել է քեզ...
Չենք թողնի այսօր այս պալատը մենք,
Մինչև այդ խօսքը քեզանից չառնենք։
Նեղ տեղն էր ընկել Շահ Աբբասը մեծ.
Երկար ժամանակ թախծեց չխօսեց.
Որ դոնով մտնէր, արածը ճիշտ չէր,
Արդարանալու նա ճամբայ չունէր...
Վերջում մռնչաց ու հազաց ուժգին,
Ջայրոյթի տօնով ասաց ամենքին։
-Լաւ, թոյլ տւէք ինձ այդ մասին խորհել,
Ու խոհեմութեամբ ձեր ուզածն անել.
Հայ գեղեցկուհին բնաւ մեղք չունի,
Ես նրան առայ զօռով ու բռնի։

Վեհ չքնաղութեան մարմնացումն այն.
Պատիւ է բերում իմ երկրին համայն…
Եւ այժմ երբ պիտի նրանից զատւեմ,
Պիտ խոհեմութեամբ այդ գործն անեմ.
Չեմ կարող թևից բռնել ու նետել,
Ես դըրա համար նրան չեմ բերել:
Արած գործերն իմ բիրտ ու անվայել.
Շատ են, չեմ կարող նոր էլի բարդել:

* * *

Ջաղացի մօտ, գետի ափին,
Ճամբի եզրին կար մի արտ,
Ասպետինն էր, ցորեն էին,
Վարում այդ, արտը պարարտ:

Ասպետն այնտեղ խոհուն կանգնած,
Իր վարւորներին էր նայում,
Տեսաւ հեռւից ձիուն նստած,
Մէկն իրենց էր մօտենում:

Ձիաւորը եկաւ հասաւ.
Բարև տւեց վարւորին,
Ապա քաղցր տօնով ասաւ.
-Կուզեմ տեսնել Մովրովին:

-Մովրովի հետ ինչ գործ ունես,-
Ասաց նրան Ասպետը.
Որտեղի՞ց ես եկել, ո՞վ ես,
Ի՞նչ գործ ունես իր հետը:

-Շահի ղրկած սուրհանդակ եմ.
Թուղթ եմ բերել Շահից ես,
Պիտի թուղթը նրան յանձնեմ,
Վերադառնում պարզերես:

-Մովրովն ես եմ, թուղթը ինձ բեր,
Տեսնեմ ի՞նչ է գրել նա.
Գնանք մեր տուն մի բան էլ կեր,
Հանգստային ու գնա՛։

-Չէ, չեմ կարող ես գալ ձեր տուն.
Պատուէր ունեմ քեզ յարգել,
Քեզ պիտ չտամ ես նեղութիւն,
Շահն այդպէս է պատուիրել։

Մարդը թուղթը տւեց գնաց,
Բացեց կարդաց Ասպետն այն.
Թղթում միայն այն էր գրւած.
«Գործ ունեմ, եդ Սպահան»։

* * *

Մելիք Մովրովը գընաց Սպահան,
Շահ Աբբասի մօտ, որ լսի նրան։
-Մելիք, -ասումէ –սխալւեցի ես,
Ա~խ, ինչքան լաւ էր լըսէի ես քեզ։
Ընթացաց ուղի ձեր կամքին ընդդէմ,
Անհանգիստ եմ այժմ ես իմ խղճի դէմ...
Պատշաճ չէր բնաւ իմ գործը արած,
Խեստ սայթաքեցի ու նետւեցի ցած.
Երանի~ թէ քո խօսքով գնացի,
Ու փորձանքներից հեռու մնացի։
Հայութեան հանդէպ քարասիրտ եղայ,
Զըքմեղանքի խօսք ինձանումը կայ.
Չեմ կարող բընաւ արդստանալ ես.
Ճնշում, բռնութիւնս համարեմ անտես.
Բայց այս սխալը շատ է տանջում ինձ,
Բողոք եմ լսում իմ սրտի խորքից։
Չքնաղ Սրբուհուն արձակում եմ ես.

Թող գնայ ապրի իր ուզածի պէս...
Այս երեք տարին նա միշտ տխուր էր,
Գոնէ մի անգամ չտեսայ՝ հրճուէր։
Փարշիշ գիւղը ես բաշխում եմ նրան,
Դա լինի իրեն ընդմիշտ սեփական.
Թող գբահ գրալու օակատբ ւն ահբտեղմ
Ու կեանք ստեղծի իրեն փառահեղ։
Մի գիւղ էլ նորից նւիրում եմ քեզ,
Քո անունը պիտ այդ գիւղին դնես.
Մովրովսստան պիտ այդ գիւղը կոչւի
Որ քո անունը յաւիտեան յիշւի։
Ճիշտ է ամեն տեղ վատ են ասում ինձ
Բայց ես ազդւած չեմ այդ չար խօսքերից։
Ուզում եմ միայն իմ մեղքը քաւել.
Իմ ճնշման դիմաց մի բարիք անել։
Վաղը յարգանքով ես ձեզ կը ճամբեմ,
Մեծ շքախմբով ձեզ գիւղ կուղարկեմ։
Մելիքն ասելու ոչ մի խօսք չունէր,
Վաղուց իր խօսքը ասել, պրծել էր...
Երեք ամ առաջ Շահին ասաց նա,
Որ իր ընթացքն ինչ վերջ կունենայ։
-Շահ, -ասաց Մելիքն- շնորհակալ ենք,
Գիւղերը բնաւ մենք կարիք չունենք։
Մենք հայ ենք ու միշտ գործելու վարժւած,
Կարողանում ենք քարից հանել հաց։
Մենք աչք չունենք ձեր կայք ու կալւածին,
Լաւ է այդ մնաց միշտ արքունիքին,
Միայն խնդրում ենք, թոյլ տաք որ գնանք,
Հէնց այսօր, ինչո՞ւ այս գիշեր մնանք։
Կարիք չկայ մեզ շքախումբ այլեւ.
Շքախումբ բնաւ էլ չի սազի մեզ...
Սրտաճմլիկ էր կացութիւնը այդ,
Շահը փղձկաց ու լացեց բացայայտ։

Յայտնի չէր թէ ո՞ր մեղքն էր նա զղջում,
Այն որ կատարեց նա բնաջնջում,
Արաւ ընհանուր հայութեան դիմաց,
Թէ Սրբուհու դէմ խղճի խայթ զգաց։
Բայց ինչ էլ լինէր պարտւել էր արդէն,
Անչափ թոյլ ու խեղճ զգաց նա իրեն․
Այդ հերոս հայն էր, որ յաղթեց նըրան,
Տարաւ վատ մարդուն քաւութեան, զղջման։

* * *

Գարուն էր ցանքսը հասկ էր արձակել,
Բայց հատիկները դեռ չէին լցւել․
Մի ամիս դեռ կար ցորենը հասնէր,
Որ գիւղացին իր քաղն ըսկսէր։
Մելիք Մովրովը կանչեց գզիրին․
Ասաց․- Գնա դու իմաց տուր գիւղին,
Տունը մի քաղւոր առած սուր մանգաղ․
Վաղը գան մեր տուն տանեմ նրանց քաղ։
Անունը տւեց բոլոր այն մարդկանց,
Որ պիտի ասէր գըզիրը նրանց։
Միւս առաւօտ քաղւորներն եկան,
Սուր մանգաղներով Ասպետի դռան։
Ասպետն էլ եկաւ, ապա ամենով,
Դէպ գետի կողմը քայլեցին կարգով։
Հասան ցորենի արտերը նրանք,
Ասպետը ասաց․- Այստեղ առէք կանգ․
Սկըսէք քաղել այս արտերն ամեն,
Ինչքան որ ունենք մենք այստեղ ցորեն…
Երեկոյեան երբ ձեզ տեսնելու գամ,
Տեսնեմ ձեր գործը և ուրախանամ։
Մելիք Մոլրովը այդպէս պատւիրեց,
Ու ինքը դէպի գետափը քայլեց։

*Գետափին կար մի պարզ ու պաղ աղբիւր,*
*Իբր թէ ուզում էր խմել այնտեղ ջուր,*
*Ապա սկսեց ջրի հետ խաղալ,*
*Քիչ ժամանակ էլ ձեռքերը լւալ։*
*Երբ կանգնեց քայլեց դէպ քաղւորները,*
*Տեսաւ քաղում են տհաս արտերը…*
*Գընաց ու ասաց։- Բաւ է մի՛ քաղէք,*
*Այլ եկէք շուրջս, խօսքս լըսեցէք։*
*Սա մի փորձ էր, որ ուզեցի անել,*
*Տեսնել ձեր մեծին գիտէ՞ք դուք յարգել…*
*Այս ցորենները դեռ քաղելու չեն,*
*Մի ամսից յետոյ հազիւ կը հասնեն։*
*Բայց երբ ասացի որ դուք քաղէիք,*
*Դուք բընաւ խուքիս խօսք չըբերեցիք.*
*Հիմա վըստահ եմ դուք ինձ յարգում էք,*
*Թէ ուրիշ խօսք էլ ասեմ կը լըսէք։*
*Այժմ եկէք բացօդ, պայծառ երկնի տակ,*
*Ասեմ ու յայտնեմ ձեզ իմ նըպատակ.*
*Ուզում եմ՝ նորից գնանք Հայաստան,*
*Գնանք երկիրը մեր հայրենական։*
*Մեր կամքով չեկանք, գերեց Շահը մեզ,*
*Ինչ ցաւ քաշեցինք, դա յայտնի է ձեզ։*
*Գողգոթա ելանք, խաչւեցինք սաստիկ,*
*Մեր գլխով անցաւ ամեն փոթորիկ…*
*Ինչքան էլ մնանք այս երկրումը մենք,*
*Միշտ ստորադաս ու խեղճ պիտ ապրենք։*
*Երկրի այս մասը որ մենք ենք ապրում,*
*Բռի լոռ ցեղն է այստեղ բնակւում.*
*Իսկ այդ լոռ ցեղը պատուհաս է մեզ,*
*Այդ ցեղի մէջ մեզ չկայ ասպարէզ.*
*Լոռի գործն է միշտ թալան ու աւար*
*Մեր օրն այդ ցեղը միծտ կանի խաւար.*
*Մեզ միշտ էլ կասեն «Արմանի նաջէս».*

Մեր արածը միշտ կը լինի անտես։
Երբ երկրի Շահից այդքան ցաւ քաշենք,
Դաժան լոռ ազգից էլ ի՞նչ սպասենք։
Շահը բռնութեամբ մեզնից կին տանի,
Երբ քէֆը պրծաւ իր տանից հանի...
Մենք նրանց ստրուկ, նրանք մեզ իշխան.
Մեր նամուսի հետ ոնց ուզեն խաղան։
Մենք պիտի գնանք կրկին Փարաքար,
Գնանք ու առնենք մենք այնտեղ դադար.
Գնանք կառուցենք մեր գիւղը կըրկին,
Ծառայենք հային ու հայրենիքին։
Մենք անբաւ ցաւեր կունենանք ճամբին,
Սակայն կը հասնենք մեր նպատակին։
Փարաքարեցին ուխտ ունէր դառնալ,
Այդ ուխտն ուզում էր իրականանալ։
Լսէք, որ ասեմ ինչ պիտի անենք,
Պիտի վաճառենք ինչ որ մենք ունենք,
Պիտի վաճառենք ինչ որ մենք ունենք,
Պիտի վաճառենք ունեցածը մեր,
Ու հայթայթենք մեզ դրամ ու ձիեր։
Պիտ չշտապենք այդ գործում բնաւ,
Մեր ունեցածին չառնենք գին սակաւ.
Դեռ մի տարի մենք ունենք ժամանակ,
Ջանենք ոչ մի բան շտապ ու արագ,
Յետ էլ չմնանք և մի տարում մենք
Մեր գործերն ամեն պիտի վերջացնենք,
Որ յաջորդ գարնան պատրաստ ամեն բան,
Մեկնենք հայրենի երկիրն՝ Հայաստան...
Խիստ պատւիրում եմ, գաղնապահ լինենք.
Հէնց այսօրւանից գործը սկսենք.
Պիտի ունենանք մենք դրամ ու ձի,
Գնանք ու սրտանց մենք լծւենք գործի...

* * *

Տարին լըրացաւ, արւեց ամեն բան,
Մի գարնան գիշեր քօչն ընկաւ ճամբան.
Ամեն մէկն ունէր իրեն յատուկ ձի,
Գնում էին ոնց ռազմի այրուձի.
Գնում էին շուտ շտապ ու արագ,
Ամեն նեղութիւն կոխում ոտքի տակ,
Ընթանում էին անվախ և ուրախ,
Թողնելով Փահրան, ամեն ախ ու վախ։
Հայրենի երկրի սիրով տոգորւած.
Գնում էին վառ յոյսերով տարւած,
Ցանկանում էին ու առնել թուչել.
Ժամ առաջ իրենց երկիրը հասնել։
Մի օր էլ ուրախ Արաքսը հասան.
Նրանց խնդումին էլ չկար սահման,
Իջան միամիտ, պրծաւ ամեն ցաւ,
Նրանց տանջանքը արդէն վերջացաւ,
Խրախճանք արին և ուևախացան,
Ապա ցնծութեամբ կամուրջն անցան.
Խոր շունչ քաշեցին, երկար ու ազատ,
Իրենց մայր երկրում, հողում հարազատ։

* * *

Քոչ ու գաղթն իրաւ դժւար է սաստիկ,
Ունի զոհ ու մահ, դէպք չարաբաստիկ,
Տանջանք ու ցաւեր անսպասելի,
Ահռելի պահեր, անչափ սոսկալի...
Տարան ամենը ու մի օր հասան
Իրենց սիրելի գիւղը հայրական.
Ի~նչ ուրախութիւն, ինչ երջանկութիւն,
Օ~, նրանք արդէն գտան փրկութիւն,
Մեծ գերութիւնից արդէն դուրս եկան,

*Եկան փարաքար գիւղը հայրակն։*
*Գնացին գտան տներն աւերակ,*
*Նաև տխրեցին միաժամանկ։*
*Կանգուն էր մնացել Սուրբ եկեղեցին,*
*Գնացին այնտեղ աղօէք արեցին.*
*Գիւղի քահանան պատարագ արեց.*
*Բոլորին մէկ տեղ սրբութիւն տըւեց։*
*Ուխտեցին միմեանց աւելի սիրել,*
*Իրենց մայր հողին կապւել, շէնացնել։*
*Անցաւ քանի օր գիւղն հանգստացաւ,*
*Կառուցման գործն իր հունի մէջ մտաւ.*
*Բոլորը սրտանց գործի լըծւեցին,*
*Աշխատանքները վերըսկսեցին։*
*Բայց ասպետը դեռ անելիք ունէր,*
*Կանչեց տղերքին հերոս, անձնւէր,*
*Ասաց.- Ես նորից պիտ դառնամ Իրան,*
*Եւ ուղիղ գնամ մինչև Համադան.*
*Այստեղ իմ քաջերն պիտի ինձ օգնեն,*
*Նրանք էլ իրենց նպաստը բերեն։*
*Հիմա ինձ ասէք, ով կը գայ ինձ հետ,*
*Իր հետն առնելով իր աղեղն ու նետ։*
*- Պատրաստ ենք,- ասին քաջերը բոլոր,*
*Մենք չենք թողնի քեզ մենակ ու մոլոր…*
*Կը գանք ուր էլ դու գնալու լինես,*
*Մենք ամեն գործում ուժ կը դառնանք քեզ*
*Միայն մեկնումիդ ժամը մեզ յայտնիր,*
*Քո այրուձին ենք միամիտ կացիր։*
*Ամեն գործի մէջ ուժ գործ կը դնենք.*
*Քո նպատակը մենք կիրագործենք։*
*Օրը որոշւեց և ահա մէկ օր,*
*Ճանապարհ ընկան քաջերը բոլոր։*
*Գընում էին ողջ շտապ ու արագ,*
*Քշում ձիերը միշտ քառասըմբակ.*

*Քշում էին որ շուտ գնան հասնեն,*
*Իրենց խորհուրդը իրականացնեն։*

* * *

*Շահն ուներ մի համադանցի կին,*
*Որ մեծն էր կանանց, իր իսկ թագուհին…*
*Նա ամեն ամառ Համադան կերթար,*
*Ու ամառն ամբողջ այնտեղ կը մընար…*
*Մեծ պալատ ուներ նա Հմադանում,*
*Ամառն այնտեղ էր նա հանգստանում։*
*Շատ չէին ապրում պալատումը այն*
*Մի քանի հոգի նաժիշտներ միայն,*
*Քանի հոգի էլ մարդ ծառայողներ,*
*Ու մեծ թագուհու քույր ու եղբայրներ։*
*Նա երկիւղ չուներ, ո՞ւմից վախենար,*
*Ո՞վ կը յանդգնէր իր դէմ լինել չար.*
*Ով կուզէր կեանքից զրկւել ու մեռնել.*
*Մեծն Շահ Աբբասի կնոջ ծուռ նայել…*
*Ու ամռան երեք ամիսն ապահով,*
*Լաւ կազդուրւում էր օդ~ջրումն այդ հով։*

* * *

*Հայոց քաջերը հասան Համադան,*
*Գնեցին մի մեծ երկար ելարան.*
*Քաղաքից հեռու, պալատին մօտիկ,*
*Գտան մի ծառուտ, հով ու գեղեցիկ։*
*Իջան ձիերից ու հանգստացան,*
*Ջիերն, ու իրենք կերան կշտացն…*
*Կէս գիշերից անց, երբ ողջ քնեցին,*
*Նրանք նոր իրենց գոծն ըսկսեցին։*
*Ելարան դրին, պատը բրձրացան,*
*Ու այն պալատի ներսի կողն անցան,*

Մտան ու մէկ-մէկ զարթնեցրին նրանց,
Կապեցին ձեռքերն ետևը իրանց։
Սուրը ձեռքներին թոյլ չըտւեցին,
Որ մի սենեակից միւսն անցնէին.
Որ սենեակում էլ նրանք մարդ գտան,
Միևնոյն բանը արեցին նրան։
Բոլորի ձեռքերն ետև կապեցին,
Ապա Թագուհու դուռը բախեցին։
Թագուհին զարթնեց, ճրագը վառեց,
Ու խիստ վախեցած նա դուռը բացեց.
Տեսաւ Մովրովին քաջ ու դիւցազուն,
Սաստիկ սարսափեց, կապ ընկաւ լեզուն։
Բայց քաջ Ասպետը նրան բարևեց,
Ու շատ քաղցրութեամբ նրան սիրտ տւեց։
Ասաց.- Մի վախիր, դու մեծ Թագուհի,
Դուք չէք կարդացել դեռ հոգին հայի...
Հայը ազնիւ է, վեհանձն ու բարի.
Միշտ բարի եղաւ նա ընդդէմ չարի.
Նպատակ չունեմ վնասելու քեզ,
Այլ շնորհք ցոյց տամ, շնորհքս տեսնես։
Անշուշտ պալատի մարդիկն էլ կուզեն
Իմ մեծ շնորհքը դիտեն ու պատմեն։
Ապա Թագուհուն մի մոմ, մի տախտակ
Տւեց ու յայտնեց իր միտքը յստակ.
Ասաց,- Դարպասից դէպի դուրս քայլիր,
Երեք հարիւր քայլ գնաց ու կանգնիր.
Տախտակը հեռու պահիր իմ դիմաց.
Շատ ամուր պահիր, որ չընկնի այն ցած,
Մոմն էլ մի ձեռքով պահիր ճիշտ այնպէս,
Որ լոյսը ընկնի տախտակի երես։
Թագուհի՛ եթէ այդքանը անես,
Իմ արած գործը կը հըմայի քեզ։
Եւ եղաւ այնպէս, ոնց Մելիք ուզեց,

Ապա չոքեց նա ու նետը լարեց,
Շատ սրտեր էին դոփում, տրոփում,
Թէ՝ քաջն ուզում է ինչ անել մութում։
Ու նետն արձակեց։ Օ~, կեցցես հերոս,
Տախտակը մութում քեզ դարձաւ փարոս,
Մխուեց քո նետը ճիշտ իր նշանին,
Ու հըմայեց այդ ողջ դիտողներին։
Թագուհին վազեց համբուրեց նրան,
Ասաց գովեստի իր խօսքն անվարան.
-Դու քաջ ես, հերոս, ասաց թագուհին.
Կասեմ ամեն տեղ, կասեմ ես Շահին,
Ա~խ, ինչո՞ւ ահը ձեռքից տեց քեզ.
Դու մեծ ես, քաջ ես, դու իմ եղբայրն ես։
Ինչո՞ւ Շահը քեզ խոցեց, վշտացրեց,
Ու քեզ իր երկրից հեռանալ տեց։
Դու հայոց իշխան, ինձ ասա՛ շիտակ,
Ի՞նչ է քո միտքը, ի՞նչ քո նպատակ.
Ասա՛, ես կասեմ ամենը Շահին,
Կասեմ անշուշտ այն, որ հարկն է քաջին.
Կասեմ որ զղջայ իր արարքի դէմ,
Շահը լաւ չեղաւ ձեզ հետ, այդ գիտեմ…
Շահը թէ ռազմի գործում չը լինէր,
Կը գար ու ճամբից քեզ կը դարձնէր։
Բայց արևելքում շահը ռազմում էր,
Էլ քեզ հասնելու ժամանկ չունէր,
Նա գիւղեր բաշխեց քեզ ու քո քրոջ,
Բայց դու թքեցիր, լքեցիր ամբողջ։
Այժմ մելիք ասա, ինչ որ կամենաս,
Շահի կողմից դու ինձնից կստանաս։
-Ոչ մեծ թագուհի, ոչինչ չեմ խնդրում,
Ես երջանիկ եմ իմ հայրնիքում։
Միայն ես եկայ իմ խօսքն ասելու,
Ու ասպետութիւնս ապացուցելու։

*Իմ նետը բընաւ վըրիպում չունի,*
*Երբէք նշանից նետս չի անցնի,*
*Շահին սպանելն հեշտ էր ինձ համար,*
*Եթէ մի տեղից միւսն ընթանար,*
*Ես դիրք բռնէի իր ճամբին մի տեղ.*
*Ու նետս ուղղէի իր գլխին անշեղ։*
*Եւ այժմ կարող եմ տանել նաև քեզ,*
*Քանի որ լրիւ դու իմ ձեռքումն ես,*
*Բայց հայ ասպետը չի անի բնաւ,*
*Հայը չըգիտէ նենգութիւն ու դաւ...*
*Միշտ զօրավիգ է թոյլին տկարին,*
*Դէմ չի գնայ իր, լաւ գաղափարին։*
*Ծիշտ հակառակը Շահ Աբբասն եղաւ,*
*Տապալեց իմ ազգն երբ անզօր գտաւ.*
*Քանդեց, աւերեց Հայաստանն ուրոյն,*
*Եղաւ շատ անգութ ու անագորոյն.*
*Ջրախեղդ արաւ բիւր հազար հայեր,*
*Ու իրեն հաշւեց քաջ ու անվեհեր։*
*Չըքնաղ քրոջըս երբ տեսաւ, սիրեց,*
*Ապա եկաւ ու իրեն կին ուզեց.*
*Ջօռեց, սպառնաց ընդդէմ մեր կամքին,*
*Ու հազար ցաւով տարաւ իրեն կին...*
*Բայց երբ իր կրքին յագուրդ տւեց նա,*
*Որպէս անպէտք իր նետեց անխնայ...*
*Չկարդաց նրա սիրտը վիրաւոր,*
*Գնաց իր ճնշման ճամբով սովոր։*
*Ոչ, այլևս ես չեմ ուզում ոչինչ,*
*Իմ հայրենիքում ունեմ ամեն ինչ.*
*Կրկին կը շինենք հայրենիքը մեր,*
*Բայց էլ չենք լինի խեղճ ու անտարբեր։*
*Սովրեցրնք մենք ամեն –ամեն բան,*
*Ջօրք կը ստեղծենք մենք էլ անսահման*
*Ուրիշին էլ չենք հաշւի բարեկամ,*

*Այլ մենք էլ վստահ մի ուրիշ անգամ,*
*Երբ որևէ շահ մեր երկիրը գայ,*
*Խաչ ու խաչվառով շրքերթ չենք գնայ.*
*Էլ մենք աղ ու հաց, գինի ու ոսկի,*
*Շահի առաջը չենք տանի իսկի.*
*Մետաքս չենք փռի նրա ոտի տակ,*
*Որ չկործանի մեզ հիմնայատակ.*
*Խալւարով ոսկի չենք բերի նւէր.*
*Որ նա չդառնայ մեր ողջ ինչքին տէր։*
*Եթե նա կը գայ իր ձեռքն առած չէնք,*
*Մենք էլ հէնց զէնքով կը դիմաւորենք։*
*Եթէ ցանկանայ նա մեզ ցոյց տայ սուր,*
*Մենք էլ կը մխենք նրա սիրտը թուր...*
*Իսկ թէ նետ աղեղ իր ձեռքը տեսնենք,*
*Մենք էլ իր աչքին հէնց նետ կը մխենք.*
*Էլ թշնամու դէմ մենք խեղճ չենք մնայ.*
*Ինչ անի մէկին, երկու կստանայ։*
*Ես պրծայ խօսքս, դուք Շահին ասէք,*
*Ինչ որ այս գիշեր տեսել, լըսել էք։*
*Դէ մընաք բարով, Աստուած պահի քեզ...*
*- Է~, կանգնիր Մովրով, խօսք ունեմ ես քեզ.*
*Ասաց Թագուհին չափազանց յուզւած,*
*Արցունքն աչքերից իջեցնելով ցած.*
*-Ասած, արածըդ տեղին էր իրաւ,*
*Դա իմ սըրտի մէջ արձագանք գըտաւ.*
*Ազատ ու անկախ ապրելու համար,*
*Պիտի ունենալ լաւ չէնք անպատճառ,*
*Որ երբ թշնամին իր ուժը ցոյց տայ,*
*Նա իր արժանի պատիժն ստանայ.*
*Սըրին սուրն է որ կը տայ պատասխան,*
*Ու մի երկրի նա կանի ինքնիշխան,*
*Ու մի երկրի նա կանի ինքնիշխան։*
*Քաջութեանդ համար դու պարգև ունես,*

*Քօռէ Ղազալը նւիրում եմ քեզ,*
*Նւէր նաև քեզ մի ոսկյա գաւաթ,*
*Որ ես նրանով խմում էի կաթ։*
*Ու մեծ թագուհին ասաց՝ բերեցին․*
*Իր պարգևները քաջին յանձնեցին։*
*Ապա նա յուզւած համբուրեց քաջին,*
*Իր բարիերթի խօսքն ասաց վերջին․*
*- Գնա՛, մաղթում եմ՝ բարի ճանապարհ,*
*Աստւած օրհնի քեզ, գնա՛ քո աշխարհ։*
*Ու հայ հերոսն իր քաջերն առած,*
*Դէպ իր Հայաստան աշխարհը գնաց։*

# Թարգմանութիւններ
## Պարսից գրականութիւնից

- *Մոլավիի մասին (Էդիկ Բաղդասարեան)*

**Մոհամմադ Ջալալեդդին Բալխին** (Ռումի, Մոլավի, Մոուլանա) 13-րդ դարի պարսից գրականության ամենանշանավոր միստիկ բանաստեղծն է, ում ստեղծագործությունը խորը հետք է Մոհաղղաղ Թերմիզին, թափառական դերվիշ Շամս Թաբրիզին և հատկապես սուֆի խոշոր բանաստեղծ Սանայի Ղազնավին, Աթթարը և այլոք:

Անհրաժեշտ է նշել, որ Ջալալեդդին Բալխին իր ստեղծագոչծությունները գրել է 38 տարեկանից հետո, երբ արդեն ապրել էր իր կյանքի կեսից ավելին: Հենց այս տարիքում էլ ծանոթանում է Շամս Թաբրիզիի հետ, իրադարձություն, որը փոխում է բանաստեղծի մաբողջ կենսակերպը: Շամսի հետ զրույցները դառնում են ներշնչման առիթ: Մոուլանայի և Շամսի հարաբերությունների մասին եղած տեղեկությունները ավանդախառն են: Ըստ Թաբրիզիի «Մաղալեներ»-ի շրջանառվում էր մի տեսակետ, թե Շամսը իրական անձ չի եղել, այլ ընդամենը Մոլավիի տեսիլքների արդյունքն է: Եվրոպացի հայտնի արևելագետ Նիկոլսոնը և Բրաունը, որ քաջատեղյակ էին բանաստեղծի ստեղծագործություններին, թեև կասկածի չեն ենթարկել Շամսի գոյության իրողությունը, սակայն այն կարծիքն են հայտնել, թե նա սովորական և անուսում մի դերվիշ է եղել և հենց այդ պարզությամբ էլ գրավել է Մոուլանային: Այս հարցին վերջնական լուծում տվեց Մոհամմադ Ալին Շամս Թաբրիզիի «Մաղալեներ»-ի հրատարակումը: Արդեն «Մաղալեներ»-ի հիման վրա եզրակացվեց, որ Շամսը, հակառակ տարածված տեսակետի, իրականում բանիմաց և արժանավոր հոգևոր առաջնորդ է եղել: «Մաղալեներ»-ը թեկուզ և վնասված հատվածով, փաստում են, որ գործ ունենք պարսից գրականության նշանակալի հուշարձաններից մեկի հետ: «Մաղալեներ»-ի բովանդակության քննությունը ցույց է տալիս, որ Մոլավիի «Մասնավի ե մանավի» պոեմը սերտ առնչություն ունի Շամսի այս ժողովածուի հետ: Վերջինիս մի շարք զրույցներն և առակներն ինչպես նաև դրանց մեկնությունը կարելի է գտնել «Մասնավիե»-ում կամ «ֆիհի մա ֆիհի» երկում: Նրանց փոխհարաբերությունները սոսկ շեյխ-մորիդ

առանչակցության վարքագծով չէին սահմանափակվում: Նրանց նվիրակից բարեկամությունը և աշխարհընկալումային ընդհանրությունները սերտացել էին բազմաթիվ օր ու գիշերների զրույցներում:

11-12դդ. նախկին դյուցազներգական ոգու և աշխարհիկ խնդիրների փոխարեն գրականություն էին թափանցել և գերակա էին դարձել բարոյախրատական և կրոնափիլիսոփայական թեմաները:

Բադի ազ Զամանը ճշգրտում է, թե մինչ Սանային եղած գրական ստեղծագործություններում նույնպես կարելի է հանդիպել միստիկական գաղափարների, սակայն Սանային էր, որ դրանք կանոնակարգեց և ներմուծեց գրականություն: Առաջինն նա էր, որ «Հադիղաթ ալ հաղայեղ» և «Շարիֆաթ աթ թարիղաթ» պոեմներով սկզբնավորեց սուֆիական պոեմը: Այս ժանրի առաջին քայլերը Սանայիի անվան հետ է կապում նաև Բերտելսը:

Մինչդեռ մասնագետները միակարծիք են, որ Ջալալեդին Բալխիի «Մասնավի է մանավին» սուֆիական պոեմի զարգացման բարձրակետն է: Այսինքն՝ Ջալալեդին Բալխին զարգացման լրափուլին է հասցրել այն ժանրը, որի սկզբնավորողը Սանային է: Այս մասին գիտակցել է Մոլավին և մեծ բանաստեղծին բնորոշ երախտագիտական շեշտով ասել. «Աթթարը հոգին էր, իսկ Սանային աչքերը, մենք գնում ենք Աթթարի և Սանայիի հետևից»:

Աթթարի նկատմամբ ակնածանքը անշուշտ բանաստեղծը կրում էր դեռևս պատանեկան տարիքից: 2 բանաստեղների ստեղծագործություններում առկա է կառուցվածքային նմանությունը, 2-ն էլ աչքի են ընկնում լուսաբանական նյութի առատությամբ:

«Մասնավիի» առաջին մասը նվիրված է շարիաթի իսլամի օրենսդրական հիմնադրույթների լուսաբանմանը: Մոլավիի կարծիքով, կատարելագործման ուղի ոտք դնելու համար հավատացյալը պետք է կատարյալ լինի և աներկբա հավատա աստծուն:-ԷԲ:

## Մէկը եկաւ արտը ճեղքել սկսեց

*Մոլաւիից*

*Մէկը եկաւ արտը ճեղքել սկսեց,*
*Տխմար մէկը նր դիմացաւ, բղաւեց.*
*-Այս գետինը ինչու ես դու աւերում,*
*Ճեղք-ճեղք անում ու խղճալի դարձնում:*
*-Տխմար ասաց-անցի՛ր, ինձ մի տնազիր,*
*Դու սարքւածը աւերակից անջատիր,*
*Թէ այս արտը քար ու քանդի տեսք չունի,*
*Երբ կը դառնայ ծաղկաստան, արտ ցորենի:*
*Բանջարանոց կամ կանաչ ցանքս չի դառնայ,*
*Այս արտը թէ տակն ու վրայ չը դառնայ...*
*Թէ չը աղաս ջրաղացում ցորենը,*
*Չի զարդարի նրանով մեր սեղանը:*
*Կտոր-կտոր արաւ շորը մի դերձակ,*
*Մարդը զարկեց խեղճ դերձակին այս գիտակ,*
*Թէ՝ «Ինչու այս դիպակն ընտիր ու շատ թանկ*
*Պատառեցիր, ինչ անեմ այս կտորտանք»:*
*Ամեն հին տուն թէ մի նոր շէնք դարձնեն*
*Չէ որ պիտի նախ այն հինը աւերեն.*
*Աւերեույթ այս գործն եմ ես աւերում,*
*Սակայն փուշն եմ ես ծաղկաստան դարձնում:*

***

## Լողմանը և իր Խաչան

*Մոլաւիից*

*Լօղմանի հայրն նրան ճանաչեց,*
*Խոնարհւեց նրան, դէպ նա սէր տածեց.*
*Ինչ կերակուր որ իրեն բերէին,*
*Մեկին կուղարկէր կանչել Լօղմանին*
*Որ նախ Լօղմանը ձեռք մեկնէր դրան,*
*Մնացածը նոր ինքն ուտէր միայն։*
*Սեխ էին բերել մի օր արմաղան,*
*Սակայն շրջանում ներկայ չէր Լօղման,*
*Խաչան պատւիրեց իր մի ծառային,*
*«Շուտ գնա՛ կանչիր որդուս Լօղմանին»։*
*Հէնց Լօղմանն եկաւ նստեց իր դիմաց,*
*Խաչան ձեռքն առաւ դանակը սրած,*
*Երբ կտրեց, տւեց մի մասը նրան,*
*Կերաւ անուշ մեղր, շաքարի նման,*
*Հայրն այդ տեսնելով տւեց երկրորդը,*
*Եւ այդպէս մինչև տասնեօթերորդը*
*Մնաց մի մասը.- ասաց ես ուտեմ,*
*Այս սեխի անուշ համը ես տեսնեմ։*
*Երբ կերաւ, դառնից կրակ բորբոքեց,*
*Թէ լեզուն խոցեց, թէ կոկորդն այրեց,*
*Անզգայ դարձաւ այդ դառնից առժամ,*
*Ապա ասաց.- է՜յ, աշխարհ կեանք, համ,*
*Ո՞նց անուշ արիր դու թոյնը այսքան,*
*Ո՞նց սէր հաշւեցիր դու այս բոնութեան,*
*Ասաց.- Կերայ քո շնորհատու ձեռքից,*
*Ու հարկ էր կախել գլուխս ամօթից…*
*Թէ քո մի դառնից ես ճշամ, գոռամ,*
*Իմ մարմնին լինի հողն հարիւր անգամ։*
*Քո շաքարաբաշխ ձեռքի համն ունէր,*
*Այս սեխը բնաւ դառնութիւն չունէր։*

## Մովսէսն ու հովիւը

*Մոլաւիից*

*Մոհսէսը ճամբին տեսաւ մի չոբան,*
*Որ աղօթում էր, խօսում ինքն իրեն։*

*-Ով Աստւած ո՞ւր ես, որ ծառադ լինեմ,*
*Տրեխդ կարեմ, գլուխըդ սանրեմ,*
*Ձեռիկդ համբուրեմ, ոտիկըն շըփեմ*
*Քնելու ժամին տեղիկդ աւլեմ,*
*Թէ բան է մի օր դու հիւանդացար,*
*Հարազատի պէս լինեմ հոգատար.*
*Տէր Աստւած կեանքս մատաղ լինի քեզ,*
*Ողջ զաւակներս, գերդաստանս ու ես*
*Քեզ մատաղ լինեն այծերս ամբողջ,*
*Անունիդ զոհեմ. «հի՜-հա՜»-ը իմ ողջ։*
*Հովիւն անհեթեթ խօսում էր այսպէս,*
*Մովսէսը ասաց.-Այ մարդ ում հետ ես,*
*Ասաց.- Այն մարդու, որ մեզ ստեղծեց*
*Երկինք-երկիրը նա յայտնաբերեց*
*Մովսէսը ասաց.-ինչ ես քեզ կորցրել,*
*Աստըծուն թողած, անօրէն դարձել.*
*Այդ խօսքերից թէ չփակես բերան,*
*Կրակ կը թափի կայրի մարդկութեան*
*Ասաց.-Ով Մովսէս բերանս կարեցիր,*
*Փոշիմանեցնելով, կեանքս այրեցիր։*
*Հագուստը պատռեց և ա՜խ քաշեց խոր,*
*Գլուխ առաւ ու ընկաւ սար ու ձոր...*
*Ձայն եկաւ Աստծուց դէպի Մովսէսին.*
*-Ինչո՞ւ ջոկեցիր իմ ստեղծածին*
*Դու եկել ես սոսկ առ ի միացման,*
*Ոչ թէ եկել ես առ ի անջատման.*
*Մենք արտաքինին, խօսքին չենք նայում.*

*Մենք ներս ու սիրտն ենք միշտ հաշւի առնում։*
*Երբ Մովսէսը լսեց Աստւած ն էր սաստում,*
*Գնաց գտնելու հովիւին դաշտում.*
*Վերջը գտաւ ու աւետեց նրան,*
*-Աչքալուսանք տուր, եկաւ հրաման,*
*Ոչ մի օրէնք, կարգ էլ մի՛ որոնիր,*
*Ոնց սիրտդ կուզէ այնպէս աղօթիր։*

***

*Մոլաւիից*

*Տէր Յիսուսը սարն էր փախչում մի անգամ,*
*Կուզէր պատռել ասես առիւծն անզգամ.*
*Մէկը հետքից վազեց, ասաց .- Այդպէս ո՞ր,*
*Ի՞նչ ես թռչում, հետքդ չը կայ սուր ու թուր,*
*Այդ ումից ես այդպէս փախչում, ով Տէր մեծ,*
*Հետքդ չը կայ երկիւղ ու ահ կամ առիւծ,*
*Ասաց .- Փախչում եմ յիմարից, դէն գնայ,*
*Ազատում եմ ես ինձ, արգելք մի դառնայ…*
*Յիմարներից ոնց Յիսուսը՝ փախիր դուն,*
*Յիմարների խօսքը թափեց շատ արիւն։*

***

*Մոլաւիից*

*Շունն էր սատկում և Արաբն էր աղերսում,*
*Արցունք թափում և իր ցաւերն էր ասում.*
*-Այժմ ի՞նչ անեմ, ես ի՞նչ հնարք գործ դնեմ,*
*Սրանից յետ ես առանց քեզ ո՞նց ապրեմ։*
*Մի անցորդ մարդ ասաց․- է՛, այդ ի՞նչ լաց է,*
*Ողբ ու կոծդ ահա այդ ում դիմաց է։*
*Ասաց․- Կայքս մի բարի շուն էր միայն,*
*Այսպէս ահա ճամբի մէջ է մեռնում այն,*
*Ջօրը որսորդ, գիշերըն էր ինձ պահապան,*
*Որձ առիւծ էր, ոչ թէ շուն նա, է՛յ իշխան.*
*Թշնամու դէմ խիստ ու գողեր փախցնող,*
*Բարեբնոյթ, հաւատարիմ, ինձ սիրող։*
*Անցորդն ասաց․-Ի՞նչն է , վէրք է ստաց՞լ,*
*Ասաց․- Քաղցից, քաղցն է այդ օրը ձգել։*
*Անցորդն յետոյ ասաց․-Է՛ դու ազատ մարդ,*
*Քամակիդ լիք մի պարկ ունես, ի՞նչ է այդ։*
*Ասաց․-հաց է, համեղ պաշար իմ մէջքին,*
*Կրում եմ ես, սա սնունդ է իմ մարմնին*
*Անցորդն ասաց .- Ինչո՞ւ չես տայ շանը հաց,*
*-Այդքան չունեմ մտերմութիւն – նա ասաց,*
*Առանց դրամի ճամբում ինձ հաց ձեռք չի գայ,*
*Բայց աչքերիս արտասուքը ձրի կայ։*
*Ասաց․- հողը գլխիդ, դու տիկ փուչ ու փուք,*
*Կտոր մի հացը քո մօտ լաւ է քան արցունք։*

## Ճամբորդն ու Արաբ հիւրտնկալը

*Մոլաւիից*

*Մի ճամբորդ իրեն գործի բերումով,*
*Մի Արաբի տուն մնաց գիշերով,*
*Ողջ զաւակները նրա փոքր ու մեծ*
*Ունէին անուն ինչպէս գայլ, առիւծ,*
*Ծառայողները, որ ունէր իր տուն,*
*Ունէին գառան, ոչխարի անուն։*
*Հիւրը հարցըրեց.- Արաբ զօրաւոր,*
*Այս անուններից զարմանում եմ, որ.*
*Ասաց.- Որդիքս, որ վրանումս են,*
*Թշնամու համար զգաստ պատրաստ են,*
*Ծառաներն ամեն սպասաւոր են*
*Նրանք պիտ հիւրին ծառայեն յարգեն,*
*Գայլ, առիւծ պիտ, որ թշնամուն բռնեն,*
*Ու հերոսութեամբ նրան յօշոտեն.*
*Հիւրին յարգելու գառ, ոչխար են պէտ,*
*Որոնցից հիւրին չը հասնի աղէտ։*

## Խորհրդակցութիւն գիտուն թշնամու հետ

*Մոլաւիից*

*Խորհրդակցում է մէկի հետ մի մարդ,*
*Որ իրեն օգնի գործերում իր բարդ։*
*Ասաց.- Բարի մարդ, ուրիշին գտիր,*
*Դէպքդ նրա հետ մէջ դիր ու խորհիր։*
*Ինձ մի փաթթւիր, թշնամիդ եմ ես,*
*Թշնամու խորհուրդն արդիւնք չի տայ քեզ։*
*Մի բարեկամի գտիր, քանի նա,*
*Որպէս բարեկամ բարիդ կուզենայ.*
*Անկասկած ես քեզ թշնամի մէկն եմ,*
*Ուղիղ չեմ ցոյց տայ, այլ քեզ կը շեղեմ։*
*-Է՛, դու խելօք մարդ, ճանաչում եմ քեզ,*
*Գիտեմ վաղեմի իմ թշնամին ես,*
*Սակայն մի մարդ ես խելացի գիտուն,*
*Խելքդ չի թողնի, որ ծուռ գնաս դուն։*

**Նուրադդին իբն Աիմադ Ջամի** (օգոստոսի 18, 1414, Ջամ, Խորասան – նոյեմբերի,19, 1492, Հերաթ),պարսիկ, փիլիսոփա և գ րող: Համարվում է Պարսկերեն լեզվով պոեզիայի դասական շրջանի վերջին բանաստեղծը: Ծնվել է ազդեցիկ հոգևորականի ընտանի-քում: Կրթություն է ստացել Հերաթում և Սամարղանդում: Հարել է «նաքշբանդիյե» սուֆիական օր դենին: 1456 թվականին աներոջից ժառանգել է օրդենի ղեկավարի պաշտոնը Հերաթում: Ջամինի վաղ շրջանի ստեղծագործություններից են սուֆիական արձակ տրակ-տատները, «Ոսկե շղթա» պոեմի առաջին մասը (1472), ինչպես նաև ռիթմին ու տաղաչափությանը վերաբերող աշխարհիկ տրակտատները, մոււհամմաներ կազմելու ձեռնարկը:Ջամիի գրական գործունեության ծաղկման շրջանը (1474 թվականից հետո) սկսվում է «Գաղտ նիքների ծով» (1475) ու «Ոգու շողարձակում» կրոնափիլ. քասիդներով ու «Բարե կամության հովեր որբության օթևանից» (1476-1478) ժողովածուով (սուֆիական սրբերի վարքագրություններ): 1480-1487 թվականներին ավարտել է «Յոթ թագ» («Մեծ արջ համաստեղությունը») պոեմների շար քը, որի մեջ ամփոփված «Սալաման և Աբսալ», «Ցուսուֆ և Զուլեյխա» և «Լեյլի ու Մեջնուն» պոեմներում հեղինակը սիրավեպի դասա-կան ժանրն օգտագործել է ճշմարիտ, աստվածային սիրո ճանապարհին մարմնական սերը հաղթահարելու սուֆիական ուսմունքը շարադրելու համար: «Ընծաազնվազարմերին» (1481-1482) պոեմն ընդգրկում է 20 առակ, որոնցում մերկացվում է իշխանությունների կամայականությունն ու հոգևորականության երկերեսանիությունը: «Արդարակյացների տերողորմյան» (1482-1483) և «Ոսկե շղթա» (մ. 2-3, 1485-1486) պոեմներն աչքի են ընկնում շառլատանության մերկացումով և երկիրն իմաստությամբ ու մարդասիրաբար կառավարելու կոչերով:

Շարքը եզրափակում է «Գիրք իմաստության Իսկանդարի» (1486-1487) պոեմը՝ Նիզամիի «Իսքանդարնամե»-ի բանաստեղծական պատաս-խանը: Ջամիի կյանքի վերջին տարիները նշանավորվել են բանաս-տեղծություններով ընդմիջվող «Բահարիստան» (1487) արձակ ստեղծա-գործությամբ, քնարական 3 դիվանով (1479-1491) և «Տրակտատ երաժշտության մասին» գործով: Ջամիի ստեղծագործությունը վիթխարի ազդեցություն է թողել ինչպես պարսկալեզու, այնպես էլ իսլամական աշխարհի շատ ուրիշ գրականությունների զարգացման վրա:-ԷԲ:

## Սևամորթ տգեղը և հայելին

*Ջամիից*

*Դևի ցեղի մէկը ինչպէս ամպը մութ,*
*Շրթունքը հաստ, ինչպէս կարաս մուգ կապոյտ,*
*Գոյնը ինչպէս մի սև ածուխ չը վառած,*
*Դէմքը ինչպէս փայտեայ ափսէ սև այրուած,*
*Ճամբին գտաւ մի փոշոտուած հայելի,*
*Իր քղանցքով փոշին սրբեց լի ու լի։*
*Հայելիում երբ իր դէմքին աչք ընկաւ,*
*Մի կերպարանք ոնց լսեցի նա տեսաւ։*
*Թքեց՝ սիրուն այն հայելու երեսին,*
*Ստոր աչքով ձեռքից ձգեց այն գետին։*
*Ասաց.-Եթէ չը գիտնային քո արժէք,*
*Այսպէս ճամբին չէին նետիլ քեզ երբէք.*
*Մարդկանց մօտը այնքան ցածըր գին ունես,*
*Որքան ինքդ քո այդ տեսքով տգեղ ես*
*Ինձ նման սուրբ թէ լինէր քո բնութիւն,*
*Չէր լինի քեզ ցեխ ու հողում տեղ ու տուն*

* * *

*Երբ իր դէմքին մարդը երկար չը նայեց,*
*Հայելին և ոչ իրեն մեղք դրեց.*
*Չարը ու բարին երբ միմեանց են յաջորդում,*
*Ամեն մէկի բաժինն է իր արժէքում։*
*Ամբողջը լոյս, մաքրութիւն էր հայելին,*
*Եղաւ տգեղ դէմքի ցուցնողն հայելին*
*Մարդու տեսքը եթէ տգեղ ու սև էր,*
*Էլ չը գիտեմ հայելին ինչ մեղք ունէր։*
*Ջամի, այս մեծ կամարն ինչպէս հայելի,*
*Իմ ցուցմունքով նրանով է հաճելի,*
*Որ մարդն ինչ որ անում է այս աշխարհում,*
*Իր արածի տեսքն է միայն նկարում։*

## Գեղազգեստ Տգէղը

*Ջամիից*

*Մի դեռահաս երիտասարդ նոր ասպարէզ դուրս եկած,*
*Արքայական զգեստներով իր մարմինը զարդարած.*
*Ներս մտաւ մի ազատամիտ գիտնականի հացարան,*
*Ուր բաւարար խաղաղ մտքով գտնում էր նա ապաստան,*
*Երբ գիտունը այդպէս տեսաւ նրան վերև անցըրեց,*
*Համախմբուած հաւաքոյթի շատ վերևը նստեցրեց։*
*Խոսակցութեան եղանակը երիտասարդն հէնց առաւ,*
*Ասուլիսի դուռը հէնց որ այն մարդու մօտ բաց արաւ,*
*Ամեն տեղից խօսքեր ասաց, շատ անհաշիւ, անազդու,*
*Բայց բոլորն էլ գիտութիւնից ու հանճարից շատ հեռու։*
*Ոչ մաքուր էր իր բարբառը, ոչ իմաստը ճշմարիտ,*
*Նրա ամեն խօսք ու բառում մտքի սխալ ճշգրիտ...*
*Երբ երկարեց նրա լեզուն փուչ խօսքերով անհաւան,*
*Նրան ասաց հնամենի ալևորը.-Է՜յ ջիւան,*
*Դուրս ես տալիս թերութիւնդ հէնց քո լեզւով, բերանով*
*Ի՞նչ ես բռնում քո առջևը վարագոյրով, հագուստով*
*Կամ խօսքերդ ուղղիր, ճշտիր յարմարեցրու հագուստիդ,*
*Կամ հագուստըդ յարմարեցրու բարբառիդ ու խօսքերիդ։*

## Հաթամի առատաձեռնութիւնը

*Ջամիից*

*Հաթամըն մի ծով, մի հանք էր պարգեւման,*
*Մի օր էլ իր ցեղից ընկաւ ջոկ, բաժան.*
*Մի քարաւանի իր անցքը ընկած,*
*Տեսաւ մի գերի ոտը շղթայւած։*
*Իսկոյն Հաթամին մօտեցաւ գերին,*
*Ազատման համար խնդրեց գլխեգին,*
*Հաթամը այնտեղ ձեռքում չունէր բան,*
*Նրան օգնելուց կոտր գտաւ իրան։*
*Ու նա բարութեանբ ոտքն առաջ մեկնեց,*
*Գերու կապանքը իր ոտքը դրեց,*
*Նրան ազատեց այդ խիստ կապանքից*
*Թոյլ տւեց հանգիստ գնալ իր կողմից։*
*Հաթամի ցեղը երբ հասաւ իրեն,*
*Կապանքում գտաւ գերու պէս նրան,*
*Իր ունեցածից տւին գլխագին,*
*Կապանքից նրա ոտքն էլ հանեցին։*

## Կռունկն ու լացարարը

*Ջամիից*

*Մի լացարար կար Բաղդադի մօտ,*
*Լացքի գործին բաւական հմուտ.*
*Տիգրիսի ափին լացք էր անում,*
*Լացքի գործով իր հացը հանում։*
*Նա ջրի ափին տեսնում էր յաճախ,*
*Որ մի կռունկ էր պըտըտում անվախ*
*Ու երբ ջրումը տեսնում էր մի որդ,*
*Կտուցն երկարում, բռնում էր կոկորդ։*
*Աշխարհում գոհ էր այդքանով միայն,*
*Բացի այդ ամբողջ օդ էր հաշւում այն...*
*Մի օր էլ ահա, մի բազէ յանկարծ,*
*Արագ թռչելով վերև սլացած,*

Դէպ մի աղաւնի խիստ մտած դարան,
Բռնեց կոկորդը, ճանկն առաւ նրան.
Իրեն յատուկ նա վեհանձըն ու մեծ,
Քիչ մասը կերաւ, շատ մասը թողեց։
Երբ այդ նկատեց կռունկը յստակ,
Սիրտը տոչորւեց, ներսն ընկաւ կրակ...
Ասաց.- Ես մարմնով նրանից մեծ եմ,
Նրա հնարքին ինչո՞ւ չը դիմեմ.
Աշխարհը ամեն թռչուն, անասուն,
Մինչև երբ մնամ մի որդով կայուն.
Այսուհետ ես էլ ջանք գործ կը դնեմ,
Եւ ինձ արժանի որս ձեռք կը բերեմ.-
Ասաց ու բացեց թևերը իրան,
Սաւառնեց օդում բազէի նման,
Ու պատահաբար տեսաւ օդի մէջ,
Մի աղաւնի էր անում ելևէջ։
Բազէի նման նա մտաւ դարան,
Որ առնէր քինոտ իր ճանկը նրան,
Գլխիվայր ընկաւ իր չար բախտից՝ ցած,
Տիղմ ու ցեխով լի մի փոս լճացած,
Տիղմ ու ցեխի մէջ թևերը խրւեց,
Երջանկութիւնն իր ձախողման փոխւեց։
Լւացարարը տեսաւ այդ ամեն,
Որ կռունկն ահա որս դարձաւ իրեն։
Շուտ գնաց բռնեց և ուրախ սրտով,
Դէպի իր տունը շտապեց շուտով։
Մէկը հարցըրեց զարմացած նրանից,
-Այդ ի՞նչ թռչուն է, ու դա որտեղից
Ասաց.- Կռունկ է, որ ուզեց փորձել,
Դառնալ մի բազէ, նրա գործն անել.
Որսի քամակից գործ դրեց հնար
Բայց իրեն արաւ ինձ մի որս անճար։
Ով իր կարպետից ոտքն աւել մեկնի,
Իրեն անկասկած անդունդ կը նետի,
Բազէն լաւ է, որ իր որսին գնայ,
Բուն էլ մշտական իր պէս բու մնայ։

**Նիզամի Գյանջեւի** կամ **Էլյաս էբն-է-Յուսոֆ-է Նեզամի-է Գանջեի** (1141, Գանձակ - 1209, Գանձակ), պարսկական գրականության դասական, միջնադարյան Արևելքի խոշորագույն պոետներից մեկը, պարսկական էպիկ գրականության խոշորագույն պոետ-ռոմանտիկ, ով պարսկական էպիկ գրականություն է բերել խոսակցական և իրատեսական ոճերը: Օգտագործելով թեմաներ ավանդական ժողովրդական բանահյուսության արվեստից և գրավոր պատմական քրոնիկներից, Նիզամին իր բանաստեղծություններով համախմբել է նախաիսլամական և իսլամական Իրանը:

Նիզամիի հերոսառոմանտիկ գրականությունը առաջիկա դարերի ընթացքում շարունակել է ազդեցություն ունենալ ամբողջ պարսկալեզու աշխարհի վրա և դարերի ընթացքում ոգեշնչել է այն երիտասարդ պոետներին, գրողներին և թատերագիրներին, ովքեր փորձել են նմանակել իրեն ոչ միայն Պարսկաստանում, այլ ամբողջ տարածաշրջանում՝ ներառյալ այնպիսի ժամանակակից երկրների մշակույթները, ինչպիսիք են Ադրբեջանը, Հայաստանը, Աֆղանստանը, Վրաստանը, Հնդկաստանը, Իրանը, Պակիստանը, Տաջիկստանը, Թուրքիան, Ուզբեկստանը: Նրա արվեստը ազդեցություն է ունեցել այնպիսի մեծ պոետների վրա, ինչպիսիք են Հաֆեզ Շիրազին, Ջալալադդին Ռումին և Սաադին: Նրա հինգ մեծ պոեմները (մասնավի)՝ («Խամսե») բացահայտում և ուսումնասիրում են զանազան թեմաներ տարբեր բնագավառներից և մեծ համբավ են ունեցել, ինչը ապացուցում են նրա ստեղծագործությունների պահպանված ցուցակների մեծ թիվը: Նրա պոեմների հերոսները՝ Խոսրովը և Շիրինը, Լեյլին և Մեջնունը, Իսկանդերունը մինչ այժմ հայտնի են բոլորի կողմից ոչ միայն ամբողջ իսլամական աշխարհում, այլ նաև այլ երկրներում:

1991 թվականը ՅՈՒՆԵՍԿՕ-ն պոետի 850-ամյակի կապակցությամբ հայտարարել էր Նիզամիի տարի:

## Լաւերի քաղաքը

*Նեզամիից*

*Ալեքսանդրն երբ ծովից եկաւ մտաւ դաշտ,*
*Անցկացնելով իր գլխովը անցքեր շատ,*
*Նա տեսաւ մի շքեղ քաղաք զարդարուած,*
*Ինչպէս դրախտ բարիքներով լեփ-լցւած։*
*Երբ որ եկաւ ու քաղաքին մօտեցաւ,*
*Դուռ երկաթից, քարից , փայտից չտեսաւ...*
*Այն քաղաքը մտաւ իր հետ քանի ծեր,*
*Որոնք էին բանիմաց ու անձնուէր։*
*Շատ խանութներ տեսաւ հարուստ, լեցուն, լիք*
*Բոլորը բաց, առանց փակ ու բանալիք,*
*Բնակիչներն այն քաղաքի հիւրասէր,*
*Եկան առաջ ցոյց տւեցին նրանց սէր,*
*Ճանապարհից նրանց տարան մի դղեակ,*
*Դղեակն ինչպէս կապոյտ երկինքն ընդարձակ։*
*Բարիքներով զարդարեցին մի սեղան,*
*Շարեցին ու իրենք խոնարհ կանգնեցան...*
*Երբ ընդունեց աղուհացը մեծ արքան,*
*Երեսն արաւ ուրախադէմ մարդկանց այն.*
*-Հարցրէ՛ք նրանց.-Այդպէս անվախ ինչո՞ւ էք,*
*Այդ ինչպէս է, որ ոչ ոքից ահ չունէք.*
*Աղէտից զերծ, ոնց էք ապրում համարձակ,*
*Ոչ ոք չունի իր դռանը կողպէք, փակ,*
*Ոչ ոք չունի նոյնպէս այգուն այգեպան,*
*Հօտն իր ետև չունի հովիւ, պահապան.*
*Ազատ արձակ հօտը արած դաշտ ու սար*
*Հովիւ չկայ ու հօտը հարիւր հազար,*
*Այն շրջանի մեծերն արդար գիտնական,*
*Թագաւորին այսպէս տուին պատասխան,*
*-Երբ հարցրեցիր մեր վիճակից լաւ ու վատ,*
*Թագաւորիդ կասենք մենք էլ անարատ,*
*Ճշմարիտը այն է, որ մեր խումբը ողջ,*

Որ ապրում ենք դաշտ ու սարը այս ամբողջ,
Ծուռ գնալու դուռն աշխարհին են փակել,
Այս աշխարհում ճշմարտութեամբ ենք ապրել,
Սուտ չենք ասում երբէք և ոչ մի դէպքում,
Գիշերը մենք շրջուն երազ չենք տեսնում։
Չենք հարցնում մի բան, որից շահ չը կայ,
Որ Աստըծուն այդ արարքը դուրս չի գայ,
Թոյլ ընկերին օգնում ենք ու ձեռք բռնում,
Կարծրութեան դէմ համբերատար ենք մնում։
Մեզնից ոչ ոք, ոչ ոքից չէ ունևոր,
Ճիշտ ենք կիսում մեր մէջ մեր կայքը բոլոր.
Մենք բոլորս հաւասար ենք մեզ կարծում,
Ուրիշների լացելուն չենք ծիծաղում.
Գողերից մենք երկիւղ չունենք շարունակ,
Քաղաքում իշխան չունենք, թաղում էլ պահակ,
Ուրիշներից չենք գողանում մենք մի բան,
Մեզնաից այլքն էլ չեն գողանում մեզ նման.
Մեր տներին չունենք կողպէք ու փական,
Ոչ ոչխարին և ոչ եզան պահապան,
Զրպարտութիւն ոչ ոքից չենք սովորել,
Ուրիշների թերութեանը աչք գցել,
Մէկին մենք չենք տւել ծուռը ուղղութիւն,
Կռիւ մենք չենք փնտրում, չենք թափում արիւն…
Մէկ-մէկու վիշտ-տխրութեանը տխուր ենք,
Ուրախութեան մէջ էլ միմեանց ընկեր ենք,
Մեզնից գազան ու կենդանի չի փախչում,
Ոչ էլ մեզնից նրանց ցաւ ու կագ հասնում։
Շատ չենք ուտում նման էշի ու եզան,
Ոչ էլ թացից, չորից փակում ենք բերան.
Մէկից ծածուկ չենք ասի խօսք զրպարտանք,
Որ երեսին այդ խօսքն ասել չը կրնանք։
Մարդկութիւնից նա մեր մէջ տեղ կունենայ,
Ով մեր նման մաքուր, զուսպ վարք ունենայ.

*Երբ մէկը մեր նկարագրից այլանայ,*
*Մեր շրջանից իսկոյն նա դուրս կը գնայ։*

*Ալեքսանդրն երբ տեսաւ այդ կարգ-կանոնին,*
*Տարակուսած՝ շւարած իր աթոռին.*
*Քանզի այդպէս լաւ պատմութիւն չէր լսած,*
*Արքաների գրքերում էլ չէր տեսած։*
*Սրտում ասաց .- գաղտնիքներից այս վսեմ,*
*Թէ ուշիմ եմ, պիտի խրատներ վերցընեմ։*
*Էլ չեմ ցանկայ ես աշխարհում յարձակւել,*
*Ու ամեն մի որսադաշտում ցանց ձգել.*
*Ուղեւորւելս ծով ու դաշտեր իզուր չէր,*
*Պէտք էր, որ իմ անցքը այստեղ էլ ընկնէր.*
*Պիտի թողնեմ գազանային իմ վարքը,*
*Պիտ սովորեմ գիտուններին այս կարգը։*

## Տգէտ ընկերը և գիտուն թշնամին

*Նեզամիից*

*Գիտուն թշնամին, որ ցաւ է թէպէտ,*
*Լաւ է, քան սիրած ընկերը տգէտ,*
*Միմեանց տարեկից չորս փոքր երեխայ,*
*Դուրս ելան, մէկը՝ հարուստի տղա։*
*Ճամբին այն տղայի ոտքը դուրս սողաց,*
*Բղաւեց ցավից, ուժգին ընկաւ ցած.*
*Շունչը կտրւեց այն երեք մանկանց,*
*Պատահած դէպքից ընկերոջը իրանց։*
*Մէկը, որ շատ մօտ ընկեր էր նրան,*
*Ասաց .- Եկէք մի հոր ձգենք սրան,*
*Որ ծածուկ մնայ դէպքն այս պատահած*
*Ու մենք չը մնանք հօր մօտ ամօթխած.*
*Նրանց մէջ կար մի խոհեմ երեխայ,*
*Որ թշնամին էր այդ ընկածին նա,*
*Ասաց .- Այս դէպքը գաղտնի չի մնայ*

*Ընկերների մէջ այս դէպքին ներկայ,*
*Քանի որ ես եմ թշնամին սրա,*
*Այս դէպքի մողքը կվերցնեմ իմ վրայ,*
*Վեր կացաւ գնաց ու հօրը յայտնեց,*
*Հայրն էլ ճար արաւ, երեխին փկեց։*

## Սէրը ընտրիր, քէնը թող խսպառ

*Նեզամիից*

*Որս անելով Նուշիրւանը ձին քշեց,*
*Արքայական շքախմբից կըտրւեց.*
*Արքայի մօտ մնաց մեն մի նախարար,*
*Երկուսից զատ այնտեղ էլ ոչ ոք չը կար,*
*Թագաւորը որսադաշտի մօտակայք,*
*Տեսաւ մի գիւղ քարուքանդ ու աւերակ,*
*Երկու թռչուն իրար մօտիկ հէնց այնտեղ,*
*Միջոցն իրենց թագաւորի սրտից նեղ,*
*Արքան ասաց .- Վէզի՛ր ի՞նչ են աղմկում,*
*Աղմկելով միմեանց ինչե՞ր են ասում։*
*Վէզիրն ասաց .- Ժամանակի թագաւոր,*
*Կասեմ եթէ արքադ հաշւի կարևոր,*
*Այս թռչունը աղջիկ տւեց այն մէկին,*
*Ու նրանից պահանջում  է կաթնեգին,*
*Թէ՝ «աւերակ գիւղն այս պիտի դու ինձ տաս,*
*Կրկին քանի այսպէս գիւղեր ինձ կը տաս»։*
*Միւսն ասաց .- Այդ խօսքիցդ վազ անցիր,*
*Արքայի զօռ, ճնշումը տես հիացիր,*
*Եթէ արքան սա է, հոգ մի տար այլևս,*
*Աւերակ գիւղ հարիւր հազար կը տամ քեզ։*
*Թագաւորին այս խօսքն այնպէս խոր ազդեց,*
*Որ ա՜խ քաշեց, ծանըր տնկաց ու կոծեց,*
*Ձեռքով ուժգին գլխին խփեց ու ողբաց*
*Անխղճութեան արդիւնքն ի՞նչ է բացի լաց։*
*Այդ խօսքն այնպէս թագաւորին խոր ազդեց,*

*Որ ա՛խ քաշեց, աղաղակեց ու կոծեց։*
*Մարդկանց ինչքը բռնի տիրեմ ես ինչքան,*
*Անհոգ մնամ մահ-դամբանից ես փաղւան,*
*Բռնութիւնով ինչո՞ւ եմ ես հռչակւում,*
*Բռնանում եմ, վա՜յ ինքս եմ ինձ անում։*

*Մինչև ե՞րբ պիտ ճնշման փոշի ես ցրեմ,*
*Իմ պատիւն ու այլոց արիւնը թափեմ։*
*Այդ մեծ ցաւից արքան այնպէս տաքացաւ,*
*Որ իր շնչից ձիու պայտը կակղեցաւ։*
*Իր դրօշին ու բանակին որ հասաւ,*
*Իր ողջ երկրին գուրգուրանքով մօտեցաւ,*
*Այն օրւանից վատ արարքին գիծ քաշեց,*
*Վատ արարքն ու բռնութիւնը նա թողեց։*
*Արդարութիւն հիմնեց երկրում, կարգեր լաւ,*
*Մինչ վերջին շունչ թողեց վարքերն անիրաւ.*
*Ապագայում հասաւ բարի մեծ անւան,*
*Բարի գործի արդյունքն է դա մշտական։*
*Կեանքդ անցուր գոհ թողնելով դու մարդկանց.*
*Որ Աստւած էլ քեզ գոհ թողնի ի դիմաց,*
*Սէրը ընտրիր ու քէնը թող դու խսպառ,*
*Ինչպէս արև ու լուսինը անսպառ։*
*Ով իր կեանքը բարութիւնով սկսեց*
*Իր բարիքը իրեն երես դարձըրեց։*

# Սաադի

**Աբու Մուհամմեդ ադ-Դին իբն Աբդ Ալլահ Սաաաադի Շիրազի** (1181 - 1291), պարսիկ բանաստեղծ-մորալիստ:

Սաադիի կյանքը կարելի է բաժանել 3 փուլի՝ դպրոցական (1205 - 1226), թափառական (1226 - 1256) և շեյխական (1256 - 1291): «Սաադի» մականունը ստացել է աթաբեկ Ֆարս Սաադա իբն Զանգիի (1195 - 1226) անունից, ում մոտ ծառայում էր նրա հայրը և ով մասամբ դաստիարակել է Սաադիին:

Հենց Սաադա անվամբ էլ իբն Ղանգի Մուսլիխ ադ-Դինը ընդունվում է Բաղդադի Նիզամիա մեդրեսեն: Սովորել է սուֆիական շեյխերի մոտ և փորձել է մտնել նրանց ասկետական իդեալների մեջ: Սովորելու տարիներին էլ սկսել է ստեղծագործել, և նրա այդ ժամանակաշրջանի բանաստեղծությունները լի են կյանքի պատանեկան սիրով: Արդեն ծերության տարիներին նա խոստովանել է, որ սիրել է երաժշտությունը, չնայած իր հայտնի ուսուցիչ Աբուլ-Ֆարաջ Ջուզիի հակառակ համոզմունքների:

Մոնղոլների հարձակումը Իրանի վրա պատճառ դարձավ, որ Սաադին լքի հայրենիքը և իր կյանքի հետագա 30 տարիները անցկացնի տարբեր իսլամադավան երկրներում, սակայն օտարության մեջ: Կարծիք կա, որ Սաադին 14 անգամ (որից մեծ մասը ոտքով) ուխտագնացություն է կատարել դեպի Մեքքա: Արաբական դասական լեզվի հիանալի իմացության շնորհիվ նա Դամասկոսում դառնում է քարոզիչ, հետո որպես վանական մեկնում է Երուսաղեմի անապատներից մեկը: Այնտեղ նա գերի է ընկնում խաչակիրների մոտ, ովքեր նրան տեղափոխում են Տրիպոլի, և նա որպես բանվոր աշխատում է ամրոցի շինարարությունում: Այնտեղից նրան որպես ստրուկ գնում է մի հարուստ՝ Ալեպպո քաղաքից և ամուսնացնում իր տգեղ և անկիրթ աղջկա հետ: Չդիմանալով այդպիսի կյանքին՝ Սաադին փախչում է Հյուսիսային Աֆրիկա:

Դեգերելով ամբողջ Փոքր Ասիայով, նա հանգրվանում է իր ծննդավայր Շիրազում և իր որդու՝ Աբու-Բեքրի հովանավորությամբ մինչև կյանքի վերջ բնակվում է վանքում:

Սաադին գրել է շատ բանաստեղծություններ և արձակ ստեղծագործություններ՝ որպես սովորեցնող օրինակներ բերելով հենց իր թափառական կյանքի փորձը: Զգալով աշխարհի անցողիկությունը և ունայնությունը՝ նա փաստորեն համաձայնվել է իրեն նախորդող սուֆիական հայացքներ տեր մյուս բանաստեղծների հետ: Այդպիսիք էին ինչպես նրան նախորդող, այնպես էլ նրանից հետո ստեղծագործած պոետներ Ֆարիդադդին Աթթարը, Ջալալէդդին Ռումին, շեյխ Աբդ ալ-Քադիր ալ-Ջիլանին և ուրիշներ:

Լավ ճանաչելով մարդկանց ու մարդկային բնությունը՝ նա միաժամանակ գրում էր, որ ոչ բոլորն են ընդունակ հեռանալու աշխարհից, վարելու միանձնյա կյանք և բացառապես տրվելու հոգևոր պատկերացումներին: Դրա համար նա աշխարհիկ կյանք վարողներին խորհուրդ է տալիս վարել ասկետական կյանք: Այսինքն ապրել աշխարհի մեջ, սակայն չտրվել աշխարհայինին, հասկանալ դրա անցողիկությունը և ամեն րոպե պատրաստ լինել կորցնելու երկրային ունեցվածքը:

1257 թվականի գրել է «Բոստան» պոետական տրակտատը, որը պոետական զգացմունքների խորությամբ և հոգևոր իդեալների նկարագրվող բարձրությամբ համարվում է սուֆիական գրականության մեծագույն գործերից մեկը: Այդուհանդերձ Սաադիի լավագույն գործը համարվում է «Գյուլիստան» ստեղծագործությունը: Այն մեծ ժողովրդականություն է վայելում և դարձել է յուրաքանչյուր պարսիկի սեղանի գիրք՝ ուսումնասիրվելով նաև նրանց դպրոցական ծրագրում: «Գյուլիստանը» լի է բազմապիսի առակներով և ասույթներով:

Սաադիի հիմնական վաստակն այն է, որ նա իր գազելներում կարողացել է միաձուլել սուֆիստական և սիրային թեմաները: Յուրաքանչյուր երկ կարելի է դիտարկել ինչպես սիրային, այնպես էլ փիլիսոփա-դիդակտիկ տեսանկյունից: Նրա ստեղծագործության շարունակող է համարվում մեկ այլ պարսիկ հայտնի բանաստեղծ Հաֆեզը:

**Քաղվածքներ**

- Ով գիտելիքներ է ձեռք բերել, բայց չի օգտագործում, նման է այն հողագործին, որը դաշտը վարել, բայց չի ցանել:

*անդամներ են մին մարմնի*
*Ստեղծման մեջ գալիս են նույն գոհարից*
*Հենց որ ժամանակը մի անդամին ցավ բերի*
*Հանգիստ չի մնա մյուս անդամներին*
*Դու որ ուրիշների ցավից անհոգ ես*
*Չարժե որ անվամբ դու մի մարդ կոչվես:*

○ Այս բանաստեղծությունը գրված է նաև ՄԱԿ-ի Նյու Յորքի շենքի շեմին

▪ Պարսկերենով՝

بنی آدم اعضای یک پیکرند    که در آفرینش ز یک گوهرند
چو عضوی به درد آورد روزگار    دگر عضوها را نماند قرار
تو کز محنت دیگران بی غمی    نشاید که نامت نهند آدمی

- Արդարադատ թագավորը թե լավ իշխել կարենա,
  Ժողովուրդը նրա համար հզոր բանակ կդառնա:
- Նիհար ձին է կռվի պահին պիտանի,
  Ոչ թե պարարտ ու հաստ եզը ընտանի:
- Ով իր թշնամուն պատեհ առիթով չի սպանի, ինքը իր թշնամին է:
- Տեսնում ես երբ թշնամուդ թույլ, ցույց մի տա քեզ հպարտ,
  Ամեն ոսկրի մեջ կա ուղեղ, ամեն շապկի մեջ՝ մի մարդ:
- Թշնամուց խորհուրդ ընդունելը վտանգավոր է, սակայն լսելը՝ թույլատրելի, պայմանով, որ տված խորհրդի հակառակն անես, այն ժամանակ ճիշտ կլինի:
- Խեղճացած թշնամուդ մի՛ խնայիր, երբ ուժեղանա՝ քեզ չի խնայի:
- Օձի գլուխը թշնամուդ ձեռքով ջախջախիր, որպեսզի մեկն ու մեկից ազատվելու առիթն ունենաս. եթե թշնամիդ հաղթի՝ օձը սատկած կլինի, իսկ եթե օձը հաղթի, թշնամուցդ կազատվես:
- Ստոր մարդուն թե պաշտպանես, նրան ցույց տաս սեր, բարիք,
  Քո երկրում իսկ, քո անունից նա կգործի միշտ չարիք:
- Էշը, եթե լինի բարձած իր ուժերին համաչափ,
  Տեղ կհասնի նա անվտանգ, հաստատապես ու շտապ:
- Թե չղջիկը լույս ցերեկով չի տեսնում,
  Ի՞նչ մեղք ունի արեգակը դրանում:
- Հիմար մարդը լավ կանի, որ չխոսի, իսկ եթե այդքանն ըմբռնի, այլևս հիմար չի լինի:
- Դժբախտները ցանկանում են անխնա,
  Որ աշխարհում երջանիկ մարդ չմնա:
- Ձիու համար արոտն է լավ, քան ասպարեզն արշավանքի,
  Բայց ուրիշի ձեռքին է միշտ սանձը նրա իրավունքի:
- Երկու հոգի պետության և կրոնի թշնամիներ են՝ անգութ թագավորը և տգետ կրոնավորը[1]

[1] - https://hy.wikiquote.org/wiki/%D5%8D%D5%A1%D5%A1%D5%A4%D5%AB

## Ծաղկի տեղ ծաղիկ, փշի տեղ փուշ դառ

***Սաադիի կասիդներից***

*Ձեռքդ հասնում է, էհ մի գործ արա՛,*
*Նախքան, որ դառնաս անօգուտ մի տարր*
*Այն որ բերել են շահնամէներում,*
*Ռոստամ մեծ հերոս և էսֆանդիար,*
*Որ հասկանան այս երկրի տէրերը,*
*Շատ մարդկանցից է յիշատակ աշխարհ.*
*Թէ բարի անուն մնայ մի մարդուց,*
*Լաւ է քան մնայ տուն ոսկենկար.*
*Գեղեցիկ տեսքը ոչինչ է մարդու,*
*Վարքով գեղեցիկ եղիր դու եղբայր,*
*Գիտես խե՞լքն է լաւ արդեօ՞ք թէ հոգին,*
*Ես կասեմ եթէ պահես անվթար։*
*Մի մարդու մարմնին խելք է հարկաւոր,*
*Թէ ոչ, շունչ ունի էշն էլ իր կերպար։*
*Նախքան այն, որ քո ձեռքից դուրս տանի,*
*Ղեկը քո կամքի պտոյտն այս աշխարհ,*
*Սերմ ցանիր, թէ քեզ հարկաւոր է կալ,*
*Գանձ ես ցանկանում, նեղութիւն յանձն առ,*
*Բարիքի փառքը բարի հարուցիր,*
*Տէրը սիրուն է մարդուն անաչառ։*
*Նրա շնորհը մեծ ու անսահման,*
*Նրա պարգևը անթիւ, անհամար.*
*Թէ ամեն մազիդ լինի մի լեզու,*
*Չես տայ մէկ փառքը բարիքի հազար,*
*Խեղճ ու աղքատի իղձը տեղը բեր,*
*Որ ամբողջ կամքդ կատարէ աշխարհ,*
*Անցածների լաւ անունը մի տար,*
*Որ մնայ բարի անունդ անվթար,*
*Վիրաւորների սիրտը դու խորհիր*
*Ու ժուժկալ մարդկանց օրհնանքը արդար,*
*Վատերի հետ վատ, լաւերի հետ լաւ,*
*Ծաղկի տեղ ծաղիկ, փշի տեղ փուշ դառ,*
*Դևից մի վախիր, մարդկանց չի կցւի,*
*Դևակերպ մարդուց դու միշտ երկիւղ տար,*
*Ով էլ որ գազան կամ վատ մարդ խնամէ,*
*Ուշ թէ շուտ իրեն կը դառնան հոգիառ։*

# Սաադի
# Բուստան
### Դրվագներ

### Բուստան- գլուխ Ա



## Կարեկցութիւն անճարներին

*Դամասկոսում մի տարի տեղի տւեց այնպէս սով,*
*Որ սէրն իսպառ մոռացան սիրահարները սիրով:*
*Ագահացաւ, նախանձեց այնպէս երկինը երկրին,*
*Որ չթրջին շուրթն իրենց ցանքսըն ու արմաւենին*
*Բոլորովին չորացան աղբիւրները դարաւոր,*
*Բացի որբ մանկան աչքից չերևեցաւ մի այլ ջուր.*
*Որբևայրի մի կնոջ հառաչանքից չէր այլ բան,*
*Եթէ մի ծուխ բարձրանար ծխնելոյզիցը մի տան:*
*Ոչ մարգերում կար կանաչ, ոչ պարտիզում կար ճիւղիկ,*
*Մորեխ կերաւ ցանքսերը, իսկ մորեխին էլ մարդիկ...*
*Այդ ժամանակ ես տեսայ իմ սիրելի ընկերին,*
*Որ նրանից կար միայն մի չոր կաշի ոսկորին:*
*Զարմացայ ես, քանի որ նա կարող էր ու հարուստ*
*Աստիճանի մեծ տէր էր, ունէր լաւ կայք ու ապրուստ:*
*Նրան ասի.- Է՜յ ընկեր խառնւածքով շատ մաքուր,*
*Անճարութիւն ինչ ընկաւ քո առաջը, ինձ ցոյց տուր:-*
*Ուժեղ գոռաց ինձ վրայ, թէ քո խելքը որտեղ է,*
*Երբ գիտես ու հարցնում ես քո հարցմունքը տեղին չէ.*
*Խստութիւնը չե՞ս տեսնում աստիճանից էլ անցաւ,*
*Նեղութիւնը իր չափից ծայրահեղութեան հասաւ:*
*Նրան ասացի.- Այո, բայց այդ երբէք քեզ փոյթ չէ,*
*Թոյնը այնտեղ կսպանէ, որ չճարւի թիւրակէ:*
*Զլինելուց թէ մէկը ոչնչանայ ու մեռնի,*
*Քեզի հօ կայ, փոթորկից բադիկը ինչ փոյթ ունի:*
*Մտիկ արաւ դէպի ինձ վշտացած այն գիտունը,*
*Այնպէս, ինչպէս տգէտին նայում է իմաստունը:*
*Ասաց.- Թէպէտ ծովափին լինի մարդը է՜յ ընկեր,*
*Հանգիստ նստել չի կարող երբ սուզւում է իր ընկեր,*
*Զունենալուց չէ, որ իմ երեսի գոյնն է դեղնել,*
*Թշւառների հոգսըն է իմ երեսը դեղնցրել:*
*Գիտնականը վէրք ու խոց չի ցանկանայ որ տեսնի,*
*Ոչ ուրշի անդամին, ոչ էլ վրան իր մարմնի.*
*Երբ տեսնում եմ չկերաւ խեղճ, չքաւոր թշւառը*
*Տիղմ ու թոյնի համ ունի իմ բերանի պատառը:*

* * *

*Մեծի մէկը, որ լաւ ու վատն էր զատում,*
*Աբդօլազզի զաւակից այս է պատմում.*
*Որ ունէր մի մատանիքում ակն անգին.*
*Շքեղ գնորդ, շատ ընտիր էր՝ թանկագին.*
*Գիշերն ասես այն լուսատուն մեծարժէք,*
*Մի քար էր որ լոյս էր տալիս ոնց ցերեկ.*
*Պատահեց որ գոյացաւ մի երաշտում,*
*Մարդանց դէմքը մաշւեց, հալւեց ինչպէս մոմ։*
*Երբ մարդկանց մէջ չտեսաւ, ուժ, զօրութիւն,*
*Նստելն հանգիստ չը համարեց առնութիւն*
*Մէկն երբ տեսնի թոյնը մարդկանց բերանն ա,*
*Անուշ ջուրը կոկորդից ցած չի գնայ։*
*Նա մեղքացաւ աղքատներին, որբերին,*
*Հրամայեց վաճառեցին մատանին։*
*Մի շաբաթում դրամն ամբողջ նա ցրեց,*
*Անճարներին, աղքատներին բաժանեց։*
*Մարդիկ նրան կշտամբեցին առաւել,*
*Թէ՝ այդպիսին էլ չես կարող ձեռք բերել։*
*Լրսել եմ որ խօսում էր ու արտասւում.*
*Դէմքից ջուրը թափւում էր ոնց վառւող մոմ.*
*Թէ՝ տգեղ է թագաւորին զարդարանք,*
*Երբ քաղքենին քաշում է ցաւ ու տանջանք*
*Կարելի է ինձ առանց ակ մատանի.*
*Բայց և մարդկանց սիրտը վէրք, ցաւ չըլինի.*
*Եջանիկը նա է միայն ու միայն,*
*Որ նախ այլոց հանգիստն ուզէ, նոր իրեն։*
*Չեն փափագել հանճարները գիտակից,*
*Ուրախանալ ուրիշների վըշտերից։*

## Աղօթքն այլոց ծառայելուց չէ այլ բան

*Արքաների լուրերում կայ նախկինի,*
*Որ երբ Թաքլէն նստեց գահին արքունի,*
*Այսպէս ասաց մի բարեմիտ կիրթ մէկին,*
*Թէ՝- Իմ կեանքը անցաւ անմիտ, զուր ու սին.*
*Ուզում եմ ես նըստել անկյուն, աղօթել,*
*Այս հինգ օրը կորցըրածըս ետ գըտնել:*
*Երբ որ լսեց լուսամիտը իմաստուն,*
*Սուր զայրացած ասաց.- Թաքլէ, բաւ է դուն…*
*Աղօթքն այլոց ծառայելուց չէ այլ բան.*
*Ծնրադրութեամբ, քուրձ, համրիչով չէ էլ այն,*
*Արքայական գահի վըրայ դու միշտ կաց,*
*Մաքուր վարքով ու արարքով դէրւիշ կաց:*

* * *

*Լսել եմ որ իր մերձիմահ ժամանակ*
*Նուշիրւանը որդուն արաւ այս կտակ.*
*Թէ՝ խաթրապահ մնայ, դէրւիշ միշտ եղիր,*
*Ոչ թէ միայն քո հանգիստը դու ուզիր.*
*Հանգստութիւն չպիտ մարդիկ ունենան,*
*Թէ դու ուզես քո հանգիստը հէնց միայն*
*Գիտուն մարդը երբէք այն չի ընդունի,*
*Հովիւը քընի, գայլը հօտի մէջ լինի:*
*Գնա՛, աղքատ, կարօտ մարդկանց դու օգնիր,*
*Քանզի արքան ռամիկով է թագակիր,*
*Արքան ծառն է ու ռամիկը իր արմատ,*
*Տղաս, ծառը արմատով է միշտ հաստատ.*
*Մարդկանց սրտին մի աշխատիր վէրք դնել,*
*Իսկ թէ դնես, քո արմատն ես դու քանդել,*
*Եթէ ուղիղ ճամբայ ուզես դու գնալ,*
*Ջգտիր Աստծոյ մարդկանց ճամբով ընթանալ.*
*Բնութիւնը իմաստութիւն է բերում*

Մարդը լաւն է ընտրում, վատից հեռանում.
Այդ երկուսը թէ արքայի մէջ գտնես,
Նրա երկրում ապաւինել կարող ես.
Բաշխումի մէջ յուսադրութեան պտուղ կայ,
Երկնաւորի մեծ բաշխումի յոյսը կայ.
Ուրիշներին աղէտ բելել չի ցանկայ
Որ չը լինի իր երկրին էլ աղէտ գայ,
Թէ արքայի բնութեան մէջ այդ չը կայ,
Նրա երկրում հանգստութիւն էլ չը կայ
Թէ սիրում ես քո երկրը ընդունիր
Իսկ եթէ զուտ ձիաւոր ես ձիդ քշիր.
Ընդարձակել դու մի յուսալ այն երկրին.
Որ ռամիը վատ է յուսալ այն երկրին.
Որ ռամիկը վատ է ուզում արքային.
Դու ապստամբ քաջերիցը վախեցիր,
Նրանից որ երկիւղած չէ երկնչիր.
Նա երազում երկիրը շէն կը տեսնի,
Ով իր երկրի ժողովրդին վշտացնի.
Վատանուն ու աւեր կը գայ ճնշումից
Հեռատեսն այս խօսքին կերթայ շատ խորքից
Ռամիկին պիտ չատել, չանել նահատակ,
Քանզի նա է արքային մէջք ու յենակ
Յարգանք տածիր գեղջուկին հէնց քեզ համար.
Որ նա սրտանց կառչէ գործին իր դժւար.
Խղճի գործ չէ, որ վատ անես այն մարդուն,
Որ նրանից դու տեսել ես լաւութիւն։
Լսել եմ, որ Խօսրովն ասաց Շիրուէին,
Այն րոպէին երբ ենթարկւում էր մահին.
-Այնպէս ապրիր, որ ինչ ըղձես, որոշես,
Շինականի օգտին գործես, մտածես,
Արդարութեան գործին եղիր միշտ հաւան,
Որ մարդիկ քո հրամանից դուրս չը գնան.
Շինականը չի սիրում զօռ բռնութիւն,

*Այդ վատ գործից նա հիւսում է պատմութիւն,*
*Շատ չի անցնի, որ կը քանդւի իր արմատ,*
*Նա որ ինքն է հիմքը դրել գործին վատ.*
*Աւերում է սրով ոսոխն անիրաւ.*
*Բայց ծեր կնոջ սրտի մուխի չափ բնաւ.*
*Ծրագը որ այրի կինը գայ վառէ.*
*Կը տեսնես, որ մի քաղաք կը վառէ,*
*Արդիւնաբեր ոչինչ չը կայ աշխարհում*
*Քան այն մեծը որ երկիրն է լաւ վարում.*
*Երբ հերթը գայ այս աշխարհից մեկնումի,*
*Արգահատանք իր շիրիմին կուղարկւի:*
*Լաւ ու վատը մարդկանց երբ որ անցնում են,*
*Այն լաւ է որ բարի անւամբ քեզ յիշեն:*

* * *

*Հողագործին աստւածավախ մարդ ընտրի,*
*Ժուժկող մարդն է ընդմիշտ շինողը երկրի.*
*Երկրի քանդող մարդկանց արիւն ծծողն է*
*Նա որ շահըդ մարդ տանջելուն կը գտնէ:*
*Իշխանութիւն պիտի մէկին չը յանձնած,*
*Որ իր ձեռքից մարդկանց ձեռքն է առ Աստւած:*
*Չարագործին մի պատժիր ինչքն առնելով,*
*Նրան լաւ է քանդել ամբողջ արմատով.*
*Բարեգործին խնամողը վատ չի տեսնի,*
*Երբ վատ խնամես ինքդ քեզ ես թշնամի:*
*Մի համբերիր դու բռնասէր գործիչին,*
*Որ պիտ քանդել գերութիւնից իր կաշին,*
*Գայլի կաշին հէնց սկզբից պիտ քանդել,*
*Ոչ՛ երբ մարդկանց ոչխարներին է պատռել:*

* * *

*Ինչ լաւ ասաց վաճառականն այն գերւած*
*Երբ շուրջն էին բռնել գողերը զինւած.*

*«Երբ գողերից գայ քաջութիւն, առնութիւն,*
*Կամ երկրի զօրք և կամ կանանց բազմութիւն,*
*Թագաւորը փերեզակին երբ տանջեց.*
*Բարի ճամբան երկրի առաջը փակեց.*
*Այտնտեղ յուշով մարդիկ պիտի չը գնան,*
*Երբ վատ լսեն այնտեղ ինչո՞ւ պիտի գնան.*
*Փերեզակ ու բանբերի հետ լաւ վարւի*
*Որ անունըդ ընդմիշտ լաւով տարածւի.*
*Վաճառականն երբ օտար է յարգում են,*
*Որ լաւ անուն իրենց աշխարհը տանեն.*
*Կը խորտակւի այն երկրիը շատ շուտով,*
*Որից օտարն անցաւ ցաւոտ յուշերով.*
*Օտարասէր եղիր, օտարը խնամող,*
*Քանզի օտարն է լաւ լուրեր տարածող.*
*Հիւրին պատւիր ու ճամբորդին էլ սիրիր,*
*Սակայն նրանց վնասիցը խուսափիր,*
*Օտարիցը լաւ է զգոյշ միշտ լինես,*
*Տեսար ընկեր դարձաւ, սակայն կեղծեց քեզ.*

* * *

*Օտարը երբ չար բան ունի իր գլխում,*
*Տանջանք մի տուր, մի թող մնայ քո երկրում,*
*Թէ դու տանջանք չըտաս իրեն տեղին է,*
*Քանզի վատ գիծն իր թշնամին իր հետն է.*
*Թէ պարսիկ է ու տեղացի թող մնայ.*
*Թող որ Սանա՛, Սէղլաբ, Հռոմ չը գնայ.*
*Հէնց քո երկրում մինչև կէսօր առ հոգին,*
*Չի կարելի ցաւը յանձնել օտարին.*
*Որ պիտ ասեն՝ շրջւի ամբողջ հողը այն,*
*Որտեղից որ այսպէս մարդիկ դուրս եկան.*

* * *

*Մտերիմներդ աւելացրու շատ ու լաւ,*
*Քանզի երբէք սնուցածից չի գայ դաւ,*

Երբ ծառայողդ տարիքն առնի հնանայ,
Տարիների իրաւունքը մի մոռնայ:
Թէ տարիքը կապեց գործի ձեռքերն իր,
Առատաձեռն քո ձեռքերը դու բացիր:
Լսել եմ, որ Շափուրը ձայն չ՛հանեց,
Երբ խօսրովը կենսաթոշակն իր կտրեց,
Աղքատ կեանքն իր երբ որ հասաւ ի գագաթ,
Թագաւորին շարահիւսեց այս հեքիաթ.
Թէ՝ թագաւոր, բարի գործերդ անպակաս,
Թէ ես մեռնեմ, դու գիտութեամբ կը մնաս.
Երբ բաշխեցի երիտասարդ կեանքս քեզ,
Այժմ երբ ծեր եմ մի քշիր ինձ դու այլևս:

***

Պաշտօն թէ տաս, տուր հարուստին անւանի.
Սնանկն երբէք թագաւորից վախ չունի.
Սնանկն երբ երբ իր վիզը տանի ուսը ներս
Նրանից բան չի գայ բացի ճիչ, աղերս:
Ճիշտ գործերից եթէ շեղւի մի գործիչ,
Պէտքէ դնել նրա վրայ մի հսկիչ.
Թէ հսկիչն էլ միանայ այն գործիչին,
Դու հեռացրու թէ հսկիչին թէ գործչին:
Աւանդապահն պիտ Աստծուց երկնչէ՛,
Ճիշտ չէ, եթէ նա քեզանից երկնչէ.
Վստահելին պիտ երկիւղէ բարձրեալից.
Ոչ թէ դատից, արգելումից ու մահից,
Ցրիր, համրիր, ման եկ, նստիր դու հանգիստ,
Որ հարիւրից մէկին գտնես ռիալիստ:

## Հեքիաթ

Օման ծովից դուրս եկաւ մի ճամբորդ մարդ
Ման էր եկել ծովեր, դաշտեր, տեղեր բարդ
Տեսել էր նա արաբ, թուրք ու տաճիկ, յոյն.
Ամեն ազգից իր մէջ ունէր գիտութիւն.
Աշխարհ տեսած ու գիտութիւն ձեռք բերած,
Ճամբորդութեան մէջ շատ բաներ սովորած.
Կազմւածքն ուժեղ ոնց հաստատուն ուռի ծառ,
Սակայն աղքատ, առանց տերև խեղճ ու սառ.
Շորերին կար երկու հարիւր կարկատան,
Կարծես վառւած, ինքն էլ մէջը այրւած բան,
Դուրս եկաւ նա ծովափի մի քաղաքում,
Ուր մի բարի, արդար արքայ էր ապրում.
Որ խորհում էր բարի անուն վաստակել,
Խեղճերին էր սիրում, յարգում առաւել.
Թագաւորի ծառաները լողացրին
Անձ գլուխը, ճամբի փոշին մաքրեցին
Թագաւորի պալատը երբ ներս գնաց,
Երկրպագեց, կրծքին ձեռքը դըրած.
Մտաւ դահլիճն արքայական ու օրհնեց
Թագաւորին երջանիկ կեանք, որ մաղթեց.
Արքան ասաց որտեղի՞ց ես դու եկել,
Քեզ ի՞նչ եղաւ որ մեր մօտ ես դու եկել.
Ի՞նչ ես տեսել այս քաղաքում լաւ ու վատ,
Ասա դու ինձ բարեհամբաւ պոյազատ։
Ասաց.- Է՛հ դու երկրի աստւած բարի, հեզ
Աստւած օրհնէ, բանտը դառնայ ընկեր քեզ,
Չեմ գնացել ես մէկի տուն այս երկրում,
Որ ճնշումից ցաւ ունենայ իր սրտում։
Չեմ տեսել ես գինի խմած մարդ հարբած.
Գինետներն ես տեսել եմ աւերւած

Թագաւորին հէնց այդ վարքը գովելի,
Բաւ է, որ իր ժողորդին է սիրելի
Խօսելիս նա, բերնից գոհար էր թափում
Քաղցր գրոյցով արքային էր գրաւում.
Մարդու խօսքերն արքային շատ եկաւ դուր
Կանչեց իր մօտ մեծարեց ի տրիտուր.
Ոսկի տւեց գալու համար ու գոհար,
Ցեղից հարցրեց և ուր եկած էր աշխարհ.
Պատմեց անցքը, և ինչ հարցրեց իրենից,
Պանդուխտ կեանքից, ուրիշներից անցեալից։
Արքան խորհեց, իր մէջ գտաւ այն յարմար.
Որ իր երկրին պէտք է այսպէս նախարար.
Սակայն ուզեց չը վռազել այդ գործին,
Որ ժողովուրդն չը ծիծաղի արածին։
Առաջ նրա խելքը պիտի լաւ փորձել,
Արժանիքի համեմատ էլ գնահատել,
Տիրութիւն ու ցաւ է մարդուն միշտ բերում
Երբ չը փորձած ու վռազ է գործն անում,
Թէ դատաւորն մտածելով տայ վճիռ,
Ձի ամաչի ընկերների մօտը իր,
Լաւ նայիր երբ նետ կայ ձեռքիդ, դեռ ունես
Ոչ թէ այնժամ երբ որ արդէն նետել ես
Յովսէփի պէս ուզէ լինել մէկն անպարտ
Տարիներ պիտ որ սիրելի դառնայ մարդ
Շատ ժամանակ պիտի անցնի յիրաւի
Որ մարդու խորք, վարք ու բարքը ճանաչւի
Ամեն կողմից նրա վարքը ստուգեց
Մարդը գիտուն կարգապահ էի նկատեց։

**Աստծու հետ խօսել**

Խառնւածքով բարի տեսաւ լաւ դատող,
Խօսքը չափւած, մարդկանց չափը ճանաչող,
Դատելու մէջ շատ մեծ տեսաւ մեծերից,

*Նրան վերև նստեցրեց իր վէզիրից,*
*Այնպէս ուժեղ գիտութիւններ գործ դրեց*
*Որ ոչ ոք իր հրամանից չը խոցւեց,*
*Իր հրամանին ամբողջ երկիրն առաւ նա.*
*Ջը ցաւեցրեց, չուզեց մէկը նեղանայ.*
*Դժգոհների բերանն ամբողջ նա փակեց*
*Իր ձեռքով էլ որ մի վատ խօսք չը գրեց*
*Նախանձ մարդն երբ մի նենգութիւն գործերում*
*Ջընկատեց, դարձաւ ցորենը տապակում.*
*Երբ նա տեսաւ գործը մի տեղ է հասել,*
*Որ թէ արքան, թէ երկիրն է ազատւել,*
*Այն գիտունից երկիրը շատ շէնացաւ.*
*Հին վէզիրի սրտում ծագեց մի մեծ ցաւ,*
*Խելօք մարդու գործում նա ճեղք չտեսաւ*
*Որ նրանով կարողանար տալ պարսաւ*
*Անկեղծ մարդն ու վատը տաշտ են ու մրջիւն*
*Այն չի կարող ճեղքել մչջիւնն եռանդուն*
*Արքան ունէր երկու նաժիշտ արևհար*
*Մէջքեր կապած ծառայելու անընդհատ.*
*Երկու չքնաղ հուրի-փերի միասին*
*Ջքնաղագեղ ինչպէս արև ու լուսին։*
*Այն քաղցրախօս գիտուն մարդու խօսքերը.*
*Բռնեց երկու շիմշատների սրտերը,*
*Երբ որ տեսան նա բարի էր վարքը լաւ*
*Մարդուն ևս ազդեց սակայն նա արդար*
*Բայց ոչ այնպէս սր նենգ մարդը կարծէր չար*
*Մարդը գիտէր տարփանք չկայ իրենում*
*Երբ հայացքը դէպ նրանց էր դարձնում։*
*Հին վէզիրը կարծիք տարաւ այդ մասին,*
*Նենգը տարաւ այդ հեքիաթը արքային,*
*Թէ՝ չգիտեմ ինչ են կանչում  ով է նա*
*Ջի ուզում այս երկրում խոհեմ ապրի նա,*
*Լսել եմ որ նաժիշտներին շատ է մօտ.*

Դաւաճան է հեշտասէր ու վաւաշոտ․
Ճամբորդները շատ անփոյթ են վարում կեանք
Քաղաքակիրթ օրէնսգէտ չեն նրանք
Չի կարելի սևերեսն այն անգիտակ,
Որ արքայի դահլիճն անէ խայտառակ
Միթէ շահի բարիքն արած կը մոռնամ․
Որ տեսնեմ ես այդ արատը ու մոռնամ։
Ենթադրելով չի կարելի զրպարտես
Զասացի քեզ մինչև վստահ չեղայ ես
Իմ մարդկանցից մէկն հետևեց այդ խնդրին
Տեսաւ ուժգին գիրկն էր առել նաժիշտին․
Ասացի ես հիմա արքայ դու գիտես․
Դու էլ փորձի այդ խնդիրը ինչպէս ես․
Զարախօսեց շատ վատ ձևով նենգը այն
Թէ՝ վատ մարդը պիտ չունենայ հանգրւան
Զարամիտը այն փոքր բանն երբ նկատեց․
Մեծի ներսը մի թէժ կըրակ բռնկեց
Փոքրիկ բանով կարելի է կրակ անել․
Այնուհետև վաղեմի ծառը այրել
Թագաւորին այնպէս այդ լուրը վառեց․
Որ եռաց ու կաթսայի պէս դուրս թափեց
Բարկութիւնից ուզեց խեղճին մահու տայ
Բայց լռելը առաջ յարմար տեսաւ նա․
Խորհեց իսկոյն թէ՝ դեռ պիտի սպասել,
Մարդկութիւն չէ խնամածին սպանել․
Մի տանջիր երբ խընամել ես դու մէկին
Մի նետ խփիր մէկին երբ կայ քո խնամքին
Չը պիտ բարիք անել մէկին՝ խնամել
Երբ ուզում ես անխիղճ ձևով սպանել,
Մինչև շնորհք չընկատուեց նրանում
Տեղ չը բռնեց քո մօտը նա պալատում․
Այժմ էլ մինչև լաւ չը պարզւի մեղքը քեզ․
Էշնամու չար խօսքերով պիտ չը դատես․

Արքան սրտում պահեց գաղտնիքը այդպէս,
Գիտունների սրտով գնաց պարզապէս.
Էյ գիտուն մարդ, սիրտը բանտ է գաղտնիքին,
Երբ ասացիր շղթայով չի գայ կրկին։
Արքան գաղտնի նայեց մարդու գործերին
Բայց թեքութիւն նկատեց իր արածին։
Որ մէկ էլ նա դէպ մի նաժիշտը նայեց
Ձքնաղ փէրին շրթունքի տակ ծիծաղեց
Երկու մարդ երբ յուշ ու միտք մի տեղ ունեն
Առանց շրթունք շարժելու միտք կյայտնեն
Թէ ուզում ես աստիճանդ մնա իր տեղ
Սիրտ մի կապիր սիրուններին այն անմեղ
Երբ վարժեցրիր աչքըդ եարին միշտ տեսնի
Ոնց ջրգող քեզ Եփրատն էլ չի կշտացնի
Թագաւորին ծուռ կարծելը հաստատուեց
Յոյզքը նրան մելամաղձոտ դարձրրեց
Գիտութեան լաւ կողմերով իր գիտական
Նախարարին ասաց.- Է՛հ մարդ պատւական
Ես քեզ անչափ գիտուն էի ենթադրում,
Երկրի գործերն յոյսիդ էի ես թողնում,
Կարծում էի դու ուշիմ ես ու ճարտար,
Չէի կարծում չարասիրտ ես, անպատկառ.
Այսպէս բարձրր դիրքն ափսոս է քեզ համար,
Մեղքը իմն է քեզ գտնում եմ ես արդար.
Երբ չարամիտ ստրոր մէկին խնամեմ,
Նենգութիւնը նա պիտ տանէ իմ հարեմ.
Գլուխն հանեց մարդը գիտուն հասկացող,
Այսպէս ասաց թագաւորին կասկածող.
-Երբ քղանցքն իմ մաքուր է այդ յանցանքից
Ես վախ չունեմ սուտ հիւսով մի նենգ մադից
Այդ կարծիքը իմ մէջ բնաւ չի ծագել,
Չգիտեմ ո՞վ ասաց այն որ չեմ արել.
Արքան ասաց.- այն որ արի բացայայտ

Ոսոխները քո երեսին կասեն այդ.
Այսպէս ասաց նախարարը վաղեմի,
Դու էլ այն որ գիտես ասա, ինձ պատմիր
Ծիծաղեց նա մատը տարաւ բերանը
Ասաց.- լաւ որ նա է ասել այդ բանը
Այն խանդոտը որ նստել եմ ես իր տեղ
Միթէ պիտ լաւ ասի ինձնից ամեն տեղ
Այն ժամանակ նա թշնամի ինձ դառաւ,
Երբ որ արքան նրան ինձնից ցած դասաւ
Երբ թագաւորն ինձ նրանից բարձր հաշւեց
Չը գիտի՞ որ նրան ոսոխ դարձըրեց
Երբ տեսնի որ ես բարձր եմ ու ինքը ցած
Մինչ յաւիտեան նա կը մնայ խռոված.
Ես կըպատմեմ մի պատմութիւն ականջ դիր
Երբ ուշադիր լսեցիր ինձ նոր դատիր,
Չը գիտեմ թէ տեսել եմ ես որ գրքում,
Որ տեսել է շէյթանին մէկն երազում
Բոյը բարդի, ինքը հուրի բարետես,
Արևի պէս լոյս էր սփռում իր երես,
Մօտ գնաց ու ասաց զարմանք, այդ դու ես
Հրեշտակն էլ չէ քեզ մնան բարետես,
Դու որ այդքան գեղեցիկ ես, ոնց լուսին
Աշխարհումը ինչու այդքան վատ կասեն
Նկարիչը քեզ արքայի պալատում
Ինչո՞ւ է ծուռ, սև ու տգեղ նկարում.
Քեզ զազրելի, սոսկալի են ենթադրել,
Բաղնիսումը շատ տգեղ են նկարել.
Բախտը թեքւած սատանան երբ այդ լսեց
Ողբալով նա ճչաց, գոռաց, աղմկեց.
Էթ բարեբախտ այն ոչ թէ իմ պատկերն է
Սակայն գրիչը իմ թշնամու ձեռքումն է.
Նրանց արմատն ես կտրել եմ դրախտից.
Այդ քէնից է, որ նկարում են վատ ինձ.

Նրանց արմատն ես կտրել եմ դրախտում
Այդ է որ ինձ քէնից վատ են կնկարում
Ունեմ նաև բարի անուն ու սակայն.
Պատճառ ունի չարամիտը չասէ այն.
Վէզիրը որ իմ դիքին է ջուր ածել
Մղոններով իր չար դաւից պիտ փախչել
Բայց արքայի ցասումից չեմ մտածում,
Անմեղը միշտ քաջութեամբ է խօսքն ասում.
Թէ քննիչը ստուգէ նա կերկիւղէ
Ով որ պակաս քարով ապրանք վաճառէ
Եմ խօսքը երբ գրչի տակից ճիշտ հանեմ,
Ես ամեն մի վատ ասողից հոգ չունեմ։
Արքաբ նրա խօսելուցը հիացաւ
Կոշտ խօսքերը մեղմացրեց ու ասաւ
-Մեղաւորը շատ խօսելով քաղցր ու մեծ
Իր յանցանքից չի կարենայ մնալ զերծ.
Ասեն թէ ես քո թշնամուց չեմ լսել
Այդ արարքը ես իմ աչքով եմ տեսել.
Որ պալատի բազմութիւնից դու միայն,
Նայում ես միշտ այն երկուսին միմիայն
Ծիծաղեց այն խելոք մարդը և ասաց,
Ճիշտ է և ճիշտ խօսքը չպիտ ուրացած.
Տեսնում ես որ աղքատը ախ է քաշծում.
Ու կարօտով հարուստ մարդուն է նայում.
Պարմանական ամեն ինչքը իմ գնաց
Որպէս խաղ ու կատակ կեանքս ողջ գնաց,
Չեմ համբերում որ չնայեմ ես նրանց.
Նրանք ունեն չքնաղութիւն գերազանց,
Ինձ եւս կար ծաղկենման տեսք շքեղ,
Կազմւածքըս գեղ եցիկ էր ու բիւրեղ
Այս հասակիս պիտի մանել ինձ պատան
Մազն իմ բամբակ մարմինս իլիկ իսկական
Կար երկու շարք մարգարիտ իմ բերանում

*Ինչպէս պատ որ արծաթով է այն շարւում.*
*Այժմ նայիր ինձ խօսելու ընթացքում*
*Ընկան մէկ-մէկ չունեմ մէկն իմ բերանում։*
*Անցան ինձնից այն օրերը սիրելի,*
*Կանցնեն նաև այս օրերը դեռ էլի.*
*Գիտուն մարդը ծակեց գոհարը խօսքի*
*Նրանից լաւ բնաւ խօսել չէր լինի*
*Արքան նայեց իր պետական մեծերին.*
*Ասաց.- Մարդու լաւ խօսքերին չըկայ գին,*
*Զքնաղներին նրա նայելը չէ յանցանք,*
*Ով կարենայ բերել սիրուն չքմեղանք.*
*Թէ իմ խելքով ես կամացուկ չերթայի,*
*Չարի խօսքով պիտի նրան տանջէի*
*Նա որ քէնով սուր քաշի ու սպանի*
*Ձեռքի ետևը կը կծէ կը փոշմանի.*
*Յանցաւորի խօսքը մինչև չը լսես,*
*Էթ վատ անես խիստ փոշիման կը լինես.*
*Նոր վէզիրին պարգև, ոսկի, դիրք տւեց,*
*Չարախօսին էլ անպատիժ չը թողեց.*
*Այն գիտնական նախարարի շնորհիւ,*
*Երկրում շահեց բարի անուն ու պատիւ.*
*Բարի, արդար ու լաւ կարգեր հաստատեց,*
*Գնաց ու նա բարի անունն իր թողեց։*
*Արքաները որ օրէնքով են գընում,*
*Օրինական յաղթանակ են միշտ տանում*

***

*Այս դարում այնպէս մարդ ես չեմ տեսնում,*
*Թէ տեսնում եմ Բու-բաքր Սաադին եմ տեսնում,*
*Մեծ ծառ ես դու, է՛հ թագաւոր կենարար,*
*Հով ես ձգել ճիշտ մի տարւայ ճանապարհ*
*Կուզէի ես իմ բախտից ու լաւ աստղից,*
*Որ փիւնիկը հով ձգէր ինձ վերևից,*

Խելքն ինձ ասաց. Փիւնիկը քեզ բախտ չի տայ.
Բախտ ես ուզում այն մեծ հովի տակ գնայ.
Տէր Աստուած դու բարի աչքով ես նայել
Որ այս հովը մարդկանց վրայ տարածել
Աղօթողն եմ այս պետութեան օրն ի բուն
Աստուած պահիր դու այս հովը հաստատուն.
Լաւ է նախքան սպանելը բանտ դնել
Կտրած գլուխն էլ չի լինի պատւաստել,
Ով որ տէրն է հրամանի, մեծութեան
Մարդկանց ձայնը չի սրտնեղի էլ նրան.
Այն գլուխը որ գոռոզ է, անհամբեր,
Արքայական թագը նրան չէ պատւաբեր
Երբ ցասումդ է բռնում խելքըդ տեղ պահիր,
Կը համբերի ով որ յուշ ու խելք ունի.
Ոչ թէ խելք որ ցասմանն հպատակ լինի,
Ցասման զօրքն երբ իր դարանից դուրս վազէ
Ոչ տէր Աստուած, որ օրէնք, ոչ խիղճ կասէ։
Երկնքի տակ չեմ տեսել դև այդ տեսակ
Նրանից են փախչում քանի հրեշտակ.

***

Օրէնքը ում թոյլ տւեց որ սպանեն,
Մի վախեցիր թող որ նրան սպանեն
Եթէ գիտես հարազատներ ունի նա,
Նրանց բաշխիր, ու հանգիստ տուր անխնայ,
Մեղքը միայն այն բռնակալ մարդունն էր,
Ի՞նչ մեղք ունեն իր խեղճ կինն ու մանուկներ
Մարմինդ ուժեղ ու բանակդ էլ շատ մեծ է,
Է՛, թշնամու երկրին դու մի հալածէ
Որ նա փախչի դէպի բարձըր մի ամրոց
Անմեղ երկրին հասնի աղէտ արտառոց,
Բանտի մարդկանց վիճակին էլ աչքածիր,

*Այնտեղ եղած անմեղներին արձակիր*
*Երկրումդ վաճառական թէ մեռնի,*
*Նրա ինչքը չըպիտի որ թալանուի:*
*Քանզի երբ, որ նրա համար լաց լինեն,*
*Իր հարազատ, բարեկամները կասեն.*
*Թէ՝ թշուառը օտար երկրում մահացաւ*
*Իր ապրանքն էլ բռնակալը դիփ տարաւ*
*Այն խեղճ ու որբ մանկան մասին դու հոգա,*
*Ու նրա խոր ա՜խ քաշելուց խիստ սոսկա.*
*Յիսուն տարւայ լաւ անւանը շատ անգամ*
*Տապալում է մի վատ արարքն անզգամ:*
*Բարեգործներն որ լաւ անուն են թողած,*
*Չեն կողոպտել բնաւ ուրշի ունեցած.*
*Աշխարհին թէ մէկը լինի թագաւոր*
*Մարդկանց ինչքը տիրէ, աղքատ է ստոր.*
*Կարօտանքում ազատ մարդը մահացաւ,*
*Ու աղքատի մօտը ուտել չուզեցաւ:*

***

*Լսել եմ որ արդարադատ մի արքայ,*
*Ունէր երկու կողմն աստառով մի կապայ.*
*Մէկըն ասաց.- Ով թագաւոր բարեշէն*
*Չինաց դիպակ տուր որ կապայ քեզ կարեն*
*Ասաց.- այսքան հագուստն է ինձ համար.*
*Նրա համար հարկ չեմ առնում ըստ հարկին.*
*Որ զարդ անեմ ինձ ու իմ գահ ու թագին*
*Եթէ ես էլ կանանց նման շոր հագնեմ,*
*Մարդու նման ոնց ոսոխի դէմ կանգնեմ.*
*Ես էլ ունեմ երկու հարիւր իղձ փափակ,*
*Սակայն իմ չէ գանձարանը հօ մենակ*
*Գանձարանը միայն զօրքի համար է,*
*Ոչ թէ զուգւել, զարդարւելու համար է*

***

*Զօրքը երբ որ թագաւորից ներհակւի*
*Սահմաններին հսկելու այն չի հակւի.*
*Երբ թշնամին գիւղացու էշը տանի*
*Թագաւորն էլ տասանորդ ուր առնի*
*Ոտխն էշը տարաւ, արքան էլ բաժին,*
*Ինչ անի խեղճն, ոնց նայէ գահ ու թագին:*
*Առնութիւն չէ ընկածին զոռ ու ճնշում,*
*Ստոր հաւը մրջունի կուտն է տանում.*
*Այն մարդիկը բախտի պտուղը կուտեն,*
*Որ ձեռքի տակ ապրողներին չը զրկեն.*
*Ստորադրեալ մէկը եթէ ընկնի ցած*
*Խուսափիր երբ նա աղերսի առ Աստուած*
*Թէ մեղմութեամբ լինի տիրել մի երկիր,*
*Արիւն թափել ու կուելուց խուսափիր*
*Երդւում եմ, որ մի ողջ երկիր թէ բռնես,*
*Չի արժում որ կաթիլ արիւն դու թափես:*

***

*Լսել եմ, որ Ջամշիդ արքան բարեկեց,*
*Մի աղբիւրի քարի վրայ քանդակեց,*
*Այս աղբիւրին մեզ պէս շատերն են շնչել*
*Ու գնացել են երբ իրենց աչքն են թարթել.*
*Աշխարհներ են բռնել ուժով քաջանման*
*Սակայն իրենց հետ չեն տարել գերեզման:*

***

*Երբ թշնամուդ դու եղել ես յաղթական*
*Էլ մի տանջիր այդ ցաւը բաւ է նըրան*
*Թշնամուն քո մօտ կենդանի պահելուց,*
*Լաւ է, սպանել ու արնի տակ մնալուց:*

## Հեքիաթ

*Լսել եմ որ Մեծն Դարեհ թագաւոր,*
*Իր զօրքիցը կտրուեց մի որսի օր,*
*Առաջ վազեց մի հովւապետ սրընթաց,*
*Բայց Դարեհի սրտում ծագեց մի կասկած*
*Թէ՝ ոսոխ է ինձ կուելու է գալիս,*
*Հեռւից կարեմ կաղամախեայ պինդ նետիս*
*Քիանական աղեղն ուղղեց դէպ նրան,*
*Որ մի շնչում ոչնչացնէ հովւին այն*
*Ջոբանն ուժգին լիքը սրտով որոտաց*
*-Թշնամի չեմ, մի սպանիր ինձ –ասաց.*
*Ջորանն ուժգին սկսեց խիստ բղաւել,*
*-Թշնամի չեմ մի ջանոց ինձ սպանել,*
*Ես նա եմ որ շահի ձիերն է պահում,*
*Գործիս բերմամբ եմ եկել այս մարգերում.*
*Թագաւորի սիրտը երբ որ եկաւ տեղ,*
*Ծիծաղեց ու ասաց,- է՛հ դու մարդ ահեղ.*
*Քեզ օգնութեան հասաւ բարի հրեշտակ*
*Ապա թէ ոչ գըլխիդ կը գար նետն իմ տակ,*
*Արօտատեղի տէրը խնդաց ու ասաց.*
*-Խրատը մեծից չի կարելի թագցըրած.*
*Գովելի չէ, որ թագաւորն ուղղակի,*
*Իր թշնամուն բարեկամից չը ջոկի.*
*Մեծի համար ապրելու կարգն այն է որ,*
*Ճանաչի իր ծառաներին գործաւոր:*
*Դու անգամներ ինձի քո մօրն ես տեսել,*
*Ձիերից ու արօտներից ես հարցրել*
*Այժմ էլ սիրով քեզ ընդառաջ եմ եկել,*
*Ջարմանք է որ ինձ ոսոխից չես ջոկոլ*
*Ես կարող եմ, աշխարհակալ թագակիր,*
*Հազար ձիից մի ձի հանեմ շատ ընտիր.*
*Ես հովւութեան համար ունեմ միտք ու խելք*

Դու էլ քո հօտն ունես, նրանց գտիր ելք:
Երբ որ Դարեհն մարդու խրատը լսեց.
Բարիք արաւ նրան ու խօսքն ընդունեց:
Գնում էր ու խօսում իր հետ ամօթխած,
-Պիտի սրտում գրել խրատն այս ասած.
Այն գահին ու երկրին վնաս կը հասնի
Որ արքայի հնարքն հովւից ցած լինի:

***

Գանգատւողի գանգատը ոնց կը լսես,
երբ երևակ սարի վրայ տուն ունես
Այնպէս քնիր որ ողբալու ձայն լսես.
Թէ գանգատւող լինի դատին դու հասնես
Նա կռծում է ճնշողներից որ շուրջդ են,
Ու ինչ ճնշում նրանք անեն, դա քոնն են.
Այն վատ շունը կառապանի փէշ պատռեց,
Որ ռամիկը տգէտ այդպէս վարժեցրեց:
Շատ համարձակ եղար խօսքում Սաադի դու,
Երբ որ տէգը ձեռքդ է յաղթող եղիր դու
Ինչ որ գիտես ասա խօսքդ, ճիշտ խօսիր,
Ոչ կաշառք առ, ոչ ծածկած բան ունեցիր.
Ինչք մի սիրիր, գիտութեան տեարը լաւ,
Ագահութիւնդ թող ու ինչ կայ պարզ ասաւ

***

Լուր առաւ մի իշխան էրաղում.
Որ մի աղքատ կամարի տակ է խօսում:
է դու էլ մի դռանից ես յուսադիր,
Դու էլ դըռան նստողներին յոյս եղիր:

***

*Չես ուզում որ սիրտդ լինի ցաւագար,*
*Դու էլ ուրիշ ցաւագարի սիրտն առ.*
*Գանգատուղին թէ չը հասնեն ու տրտմէ*
*Թագաւորին երկրի գահից կը զրկէ.*
*Դու քնած ես հարեմումը կէսօրին*
*Պանդուխտն այրւի դուրսը արևի տակին.*
*Այն խեղճ մարդու դատին հասնողն է աստւած*
*Որ թագաւորն նրա դարին չէ հասած։*

# Բուստան- գլուխ Բ

## Կեր բազուկիդ ուժով որքան կարող ես

*Մէկը տեսաւ անձեռք ու ոտ մի աղւէս,*
*Ապշեց Աստծոյ սէր ու շնորհից մեծապէս.*

*Թէ՝ ինչպէս է այս վիճակով նա ապրում,*
*Որտեղից է անձեռք ու ոտք նա ուտում.*

*Այս էր խորհում դէրւիշը խեղճ ու մռայլ,*
*Որ մի առիւծ եկաւ ճանկում շնագայլ.*

*Կերաւ դժբախտ շնագայլին առիւծն այն,*
*Ինչ որ մնաց աղւէսը կուշտ կերաւ այն.*

*Միւս օրը էլի այնպէս պատահեց,*
*Պարէնատուն նրա պարէնը տւեց.*

*Հաստատւեց այն տեսնող մարդու աչքերին,*
*Վերադարձաւ ու լենւեց նա արարչին:*

*-կը նստեմ ես ինչպէս մրջիւն մի անկիւն,*
*Պարէնը չեն կերել փղերն աննկուն:*

*Մի քանի օր կզակ տարաւ իր գրպան,*
*Թէ՝ բաշխողը պարէն կը հէնց իր տան.*

*Նրան օտար կամ ընկեր հոգ չը տարաւ,*
*Ոնց մի տաւիղ ոսկոր, երակ, մորթ դառաւ:*

*Նւազումից երբ հատեց իր համբերանք,*
*Պատի խորշից հասաւ իրեն նախատանք:*

*-Գնա՛, պատառող առիւծ դարձիր է՛յ անճիշտ,*
*Մի՛ ձգտիր քեզ ոնց աղւէսը անկեալ միշտ.*

*Ինչպէս առիւծ քեզնից թողնել աշխատիր.*
*Ոչ ոնց աղւէս աւելցուկով կշտացիր։*

*Կեր բազուկիդ ուժով որքան կարող ես,*
*Ջանացիր որ քո կշեռքում դու գտնես։*

*Ծեր դէրւիշի ձեռքը բռնիր էյ ջիւան,*
*Ոչ թէ ընկիր, ուրշին կանչիր օգնութեան…*

*Երկու կեանքում նա միայն լաւ կը տեսնի*
*Ոչ Աստուծոյ մարդկանց բարիք հասցընի։*

***

*Թէ խելօք ես , ամեն բանի խորքը տես,*
*Այն ներքինն է, որ կը մնայ, ոչ երես.*
*Ով հասկացող ու երկիւղած չլինի,*
*Իր կերպարում ոչ մի իմաստ չի լինի։*
*Այն մարդը հանգիստ ուն կուննենայ հողի տակ,*
*Որ ուրիշները հանգիստ քնեն շուքի տակ…*
*Կեանքում ինքըդ քո հոգը տար, երբ մեռնես.*
*Կծծի օտարն հոգ չի տանի քեզ այլևս։*
*Ինչքն ու ոսկին երբ դեռ քոնն է, տո՛ւր դու այն*
*Քեզնից յետոյ, դու նըրան չես իշխան,*
*Թէ չես ուզում սրտով լինել դու տրտում,*
*Տրտումներին ընդմիշտ պահիր քո մտքում.*
*Ցրիր այսօր գանձարանըդ խեղճերին,*
*Վաղն այլևս քո ձեռքը չէ բանալին։*
*Դու քեզ հետ տար քո պաշարը միւս կեանք,*
*Կին, զաւակից չի լինի քեզ խղճմըտանք։*
*Այս աշխարհից մըրցանակը նա տարաւ,*
*Ով գընալու իր բաժինն իր հետ ունեցաւ,*
*Հոգ տանելուն ոչ ոք նման իմ մատների,*
*Այս աշխարհում՝ իմ քամակը չի քորի.*
*Այժմ առ ափըդ աշխարհում ինչ ունես,*
*Քանզի վաղը դու քո ձեռքը կը կծես.*

*Խեղճի գաղտնիքն ուրիշներից դու գոցէ,*
*Որ Աստուած էլ քո գաղտնիքը չը բացէ։*
*Օտարին մի քըշիր դուռից քո՝ անմաս,*
*Որ չըլինի օտար դռները մընաս։*
*Չքաւորին բարիք արա երբ մեծ ես,*
*Ու երկիւղիր, որ չքաւոր չըլինես։*
*Կարօտների սրտին բերկրանք ստեղծիր,*
*Կարիքաւոր օրւադ կեանքը դու յիշիր։*
*Օտարի դուռն երբ չես մուրում դու փառք տուր,*
*Ու մուրողին մի վանիր, երբ գայ քո դուռ։*

***

*Հայրամեռի վըրայ շուքդ տարածիր,*
*Փոշին սրբիր, ոտի փուշը դուրս քաշիր,*
*Գիտցիր ինչն է նրան այդպէս ընկճել,*
*Ծառը բնաւ անարմատ չի կանաչել։*
*Երբ որբին գլխահակ քո դէմ տեսնես,*
*Մի մի համբուրիր քո զաւակի դէմք, երես։*
*Որբն երբ լացի նրա սիրտը ով կառնի,*
*Է՛յ, չըլացի ու թէ որբը որոտայ,*
*Երկնքում Աստուած գահը կը թնդայ,*
*Քո գթութեամբ մաքրիր անցունքն իր աչքի,*
*Քաղցըր սիրով սրբիր փոշին իր դէմքի,*
*Եթէ գնայ հօր շւաքը գըլխից իր,*
*Քո շւաքում առ դու նըրան, խնամիր։*
*Այն ժամանակ թագ իմ գլխին ունէի,*
*Երբ հօրըս մօտ իմ գլուխը ունէի,*
*Թէ իմ անձին երբևիցէ ճանճ նստէր,*
*Քանի հոգու ուրախ դէմքը կընկճւէր.*
*Այժմ թէ գերի տանեն ինձ իմ ոսոխներ,*
*Տեղեկութիւն չի առնի ոչ մի ընկեր.*
*Ես տեղեակ եմ մանուկների վիճակից,*
*Քանզի մանկուց հայրս գնաց իմ գլխից։*

Մէկը հանեց ոտի փուշը մի որբի,
Երազ եկաւ գիտնականին՝ Խօջանդի.
Որ շրջում էր ծաղկաստանում ու խօսում,
Թէ՝ այն փուշից ինչ վարդեր են բողբոջում:

***

Լսել եմ Հայր Աբրահամին եօթը օր,
Ոչ մի ճամբորդ չպատահեց չեկաւ հիւր.
Առաւօտեան չէր ուտում մարդն այն գիտուն
Մինչ մէկը ճանապարհից գար իր տուն:
Դուրս գնաց նա ու ամեն կողմ աչք ածեց,
Հեռու հովտում մէկին տեսաւ, նկատեց
Որ հովտում ոնց ուռենի մեն-մենակ,
Մազու գլուխը ծերութիւնից սպիտակ:
Գնաց մօտը ողջունեց այն մարդուն
Մեծերի պէս հրաւիրեց նրան տուն
Ասաց.- Դու իմ աչքերի լոյս ու բիբեր,
Իմ աղ ու հացն ուտելու դու շնորհ բեր.
«Այո» ասաց մարդը, ելաւ ու քայլեց,
Բնութիւնը այն սուրբ մարդու երբ դիտեց,
Մարգարէի պահնորդները այն խեղճին.
Պատւով տարան տան վերևը նստեցրին:
Հրամայեց հացի սեղան բացեցին,
Ու բոլորով սեղանի շուրջ շարւեցին...
Երբ ամենը աղօթքն արին ի կատար,
Այն ծերունուց չը լսեցին ոչ մի բառ.
Ասաաց.- Ով ծե՛ր, որ տեսել ես օր բազում,
Ծերերի պէս բարիք քեզնում չեմ տեսնում,
Օրէն՝ չէ՞, որ եթէ պարէն դու ուտես,
Պարէն տւող տէր Աստծուն դու յիշես:
Ծերը թէ չեմ կարող բռնել այն ուղին,
Որ չի ասել կրակապաշտ ծերունին:

*Մարգարէին արդէն դարձաւ բացայայտ,*
*Որ կրակապաշտ էր այն ծերը տարաբախտ,*
*Անարգ ձևով դուրս քշեց այն օտարին,*
*Ջուզեց թողնել լաւերի մօտ այն վատին,*
*Տիրոջ կողմից հչեշտակը իջաւ ցած*
*Հանդիմանեց Աբրահամին ու ասաց.*
*-Ես տուել եմ հարիւր տարի պարէն, կեանք,*
*Շուտ նրանից դու կրեցիր խոր զզւանք,*
*Թէ կրակին է երկրպագել նա ուզում,*
*Քո բարիքից ասա, ինչո՞ւ ես զրկում:*

***

*Մի շատախօս գնաց բարի մէկի դուռ,*
*Թէ՝ խրւել եմ ցեխում ես պինդ ու ամուր,*
*Անոր մէկին տաս դրամ եմ ես տալիք,*
*Հարիւր լտրից ծանր է սրտիս ու չարիք:*
*Անեն գիշեր տառապում եմ նըրանից,*
*Որպէս ստւեր չի ջոկւում նա ինձանից,*
*Իր խօսքերով նա իմ միտքն է պղտորում,*
*Սրտիս ներսը վէրք է բացել անպատում:*
*Ասես նրան երբ Արարիչն ստեղծեց,*
*Այդ տաս դրամից աւել ոչինչ չըտւեց.*
*Ջեղաւ մի օր որ արևը չը ծագի,*
*Ու այն կաւատն իմ տան դուռը չըթակի:*
*Մտածում եմ թէ ո՞ր մեծը կը գթայ,*
*Ու քարասիրտ մարդու պարտքը այն կը տայ:*
*Բարեսիրտ ծերն երբ խօսքերը այս լսեց,*
*Երկու ոսկի նըրա ափի մէջ դըրեց:*
*Ոսկին ընկաւ մարդու ձեռքն այն ստահիւս,*
*Ոսկու նման երջանկադէմ գնաց տուրս:*
*Մէկն ասաց,- Շէյխ, դու չը գիտես ով է նա,*
*Ջպէտք է մարդ լացի եթէ մեռնի նա.*

*Մի աղքատ է, որ առիւծին կը թամբի,*
*Սատանայի ձեռքն յետեն կը կապի։*
*Խիստ նեղացաւ ճգնաւորը, թէ լռի՛ր,*
*Լեզւի մարդ չես, գոնէ առժամ ականջ դիր․*
*Եթէ ճիշտ էր խօսքը, որ նա ասաց մեզ,*
*Մարդկանց մօտը իր պատւին եմ փրկել ես,*
*Իսկ թէ մարդը կաւատ էր անիրաւ,*
*Իմ արածին ափսոսի՛ր դու բընաւ․*
*Ես փրկել իմ իմ պատիւը չարիքից,*
*Գրպանահատ, սնօտիախօս նենգ մէկից։*

***

*Մէկը մեռաւ ու մեծ գումար թողեց այն,*
*Իր լուսամիտ որդուն մընաց այն համայն,*
*Տըղան ոսկին չպահեց ոնց մի ժլատ,*
*Դուռը բացեց ու ծախսեց նա շատ առատ,*
*Աղքատների առաջ իր դուռն արաւ բաց,*
*Ճամբորդներին ընդունում էր գըրկաբաց։*
*Ուրախացրեց բարեկամին, օտարին,*
*Ոչ թէ հօր պէս գաղեց արծաթն ու ոսկին,*
*Մի կշտամբող ասաց նրան ․- Ա՛յ տղայ,*
*Միանգամայն մի փչացնի ինչ որ կայ․*
*Մի ողջ տարի հազիւ մի կալ հաւաքես,*
*Մարդկութիւն չէ մի րոպէում այն վատնես։*
*Գանձ բարիքը չի մնայ միշտ չըգիտե՞ս,*
*Միթէ՞ հեքիաթն այս չի ասել մէկը քեզ։*
*Այս օրերին միճգնաւոր իր որդուն*
*Լսել եմ որ ասաց ․- Որդի սիրասուն,*
*Փող մի սիրիր ու հիւրատուն պատրաստի՛ր․*
*Հեռատես էր նաև փորձւած այն տղան,*
*Հօրը գովեց, ասաց ․- Հայր իմ պատւական,*
*Զունենալուն համբերութիւն դու չունես,*

*Եղած դէպքում լաւ է հաշւով դու ապրես։*
*Իր աղջկան ինչ լաւ ասաց գեղջկուհին,*
*«Քո նեղ օրւայ համար պահիր լայն օրին.*
*Ամեն օր լիք պահիր քո տիկ ու սափոր,*
*Միշտ մեր գիւղում չի հոսելու առատ ջուր»։*
*Աշխարհում պիտ մարդ տեղ սարքի իր վերջին,*
*Դևի բռունցքը կը ոլորի զուտ ոսկին*
*Եթէ չունես մի գընայ դու եարին տես,*
*Գընա՛ ու տա՛ր եթէ արծաթ դու ունես,*
*Թէ իր առաջ հողը ընկնես՝ համբուրես,*
*Դու պատասխան չես ստանայ երբ չունես։*
*Ոսկու տէրը դևի աչքը կը հանի,*
*Սախր[1] չար ոգուն թակարդի մէջ կը դնի.*
*Սիրունների մի մօտենայ թէ չունես,*
*Թէ դատարկ ես բնաւ արժէք դու չունես,*
*Դատարկ ձեռքով ոչինչ անել չի լինի,*
*Ճերմակ դևի աչքը ոսկին կը հանի։*
*Ասկին ամեն ընկերներիդ մի՛ ցըրիր,*
*Չար ոսոխիդ վնասի հոգն ունեցիր,*
*Թէ ինչ գտնես ձեռքով ցրես անխնայ,*
*Կարիքիդ ժուկ ձեռքըդ դատարկ կը մընայ,*
*Ուժ չեն բռնի աղքատները քո ջանքով,*
*Վախենում եմ դու նիհարես այդ գործով։*
*Բարեգործի արգելողն երբ վերջացրեց,*
*Այն վեհանձնի փութի ջիղը չը քնեց.*
*Սրտանեղւեց այն թերութիւն բըռնողից,*
*Յուզւեց, ասաց .- Բաւ է այդ փուչ խօսքերից.*
*Իմ շուրջի այս եղած ինչքը կուտակւած,*
*Հայրս ասաց. «Իմ պապից եմ ժառանգել».*
*Չէ՞ որ նրանք կծծութիւնից են պահել,*
*Կարօտով են իրենք մեռել ու թողել.*
*Ձեռքը չընկաւ հօրս ինչքը որ մնայ,*

[1] - Սողոմոն իմաստունի մատանին գողացող չար ոգու անունը։

*Ինձնից յետոյ իմ տղան գայ տիրանայ,*
*Հէնց լաւ է, որ այսօր մարդկանց տամ ուտեն,*
*Քան թէ վաղը, ինձնից յետոյ կողոպտեն.*
*Հագիր, բաշխիր, կե՛ր ու այլոց դու հոգ տար,*
*Երբ պահում ես, դու պահում ես ո՞ւմ համար։*
*Այս աշխարհից խելօք մարդիկ կը տանեն,*
*Կծծիները կը ափսոսեն, կը թողնեն,*
*Այս աշխարհում հանդերձեալ կեանք պիտ գնես,*
*Գնի՛ր ջանըս, թէ չէ կարօտը կը տանես,*
*Արծաթ-ոսկին միշտ պէտք կը գան այն մարդուն,*
*Ով հանդերձեալ կեանքի համար շինէ տուն։*
*Մէկը գովեց ազատասէր մի մարդու,*
*Թէ՝ «Օրէնքի ճամբին ջանք ես թափել դու»։*
*Մարդն ամօթխած տւեց նրան պատասխան,*
*-Ի՞նչ եմ արել, որ սիրտ կապեմ ես նրան,*
*Ես յոյս ունեմ ողորմի ինձ տէր Աստւած,*
*Սխալ է մարդն յենւի ջանքին իր ասած։*

***

*Մի կին մի օր իր ամուսնու մօտ ողբաց,*
*Թէ մեր թաղի խանութից մի՛ գնիր հաց,*
*Գնա՛ այնտեղ, որտեղ ցորեն են ծախում,*
*Սա ցորեն է ցուցում գարի վաճառում,*
*Գնորդ չունի ճանճերն են միշտ յարձակւում,*
*Շաբաթը մի մարդու երես չի տեսնում։*
*Կարիքաւոր մարդի օգտին իր կնկան,*
*Ասաց մարդը .- Դու լուսամիտ պատւական,*
*Մեր յոյսով է այստեղ բացել նա խանութ,*
*Մարդկութիւն չէ կտրել մարդից իր օգուտ։*
*Ազատամիտ մարդկանց ճամբան դու ընտիր,*
*Երբ կանգնած ես ընկախ մարդու ձեռք բռնիր.*
*Նրանք որոնք ճշմարիտ են կը գնեն,*

*Այն շուկայից, որ յաճախորդ քեզ ունեն,*
*Առատաձեռն մարդը սուրբ է իսկական,*
*Բարեգործը կենդանի է յաւիտեան։*

***

*Լսել եմ, որ մի ծեր ուխտի էր գնում,*
*Ամեն քայլին կանգնում ՝ աղօթք էր անում,*
*Այնքան տաք էր Աստծոյ ճամբով ընթանում,*
*Որ իր ոտքի փշերն անգամ չէր հանում։*
*Վերջը մարդը իր կասկածից մտացիր,*
*Դուրսը եկաւ ու հաւանեց գործը իր.*
*Սատանայի խաբէութեամբ հոր մտաւ*
*Թէ՝ «Չի կարող ինձնից մէկը գնալ լաւ։*
*Առանձնակեաց մարդու միտքը ապիկար,*
*Վերջն իրար է խառնում օրէնք ու աշխարհ.*
*Պետութիւն  կայ հայելում ու ջրում,*
*Բայց պիտ լինի և մաքրութիւն նրանցում։*
*Դեռ Աստուծոյ գթութիւնը չը գտած,*
*Գոռոզութեանբ ճանապարհից դուրս գնաց...*
*Աներևոյթ մի հրեշտակ ձայն տուեց,*
*Մարդու սխալ գործը իրեն յայտ բերեց։*
*Թէ՝ «Մի կարծիր երբ պաշտամունք ես արել,*
*Մեծ պարգև ես այս սրբատանը բերել.*
*Մի բարիքով թէ մարդ մի սիրտ խնդացնի,*
*Լաւ է քան օրն հազար աղօթք նա անի»։*

## Առակ

*Առատատաձեռն բարի մէկը հարուստ չէր,*
*Իր առնութեան չափով տուն տեղ նա չունէր,*
*Ստորը թող մեծ ինչքի տէր չըդառնայ,*
*Առատաձեռն լաւ է աղքատ չը մնայ։*
*Այն մարդը որ ունենում է մեծ ձգտում,*
*Իր մուրազը քիչ է իր ցանցը ընկնում,*
*Ինչպես անձրև, որ թափւում է սարերում*
*Բայց բարձրութան վրայ բնաւ չի կանգնում*
*Ունեցածից աւել բարիք էր անում,*
*Այդ էր որ իր ինչքը իրեն չէր բաւում։*
*Մի չքաւոր իրեն գրեց քանի բառ.*
*Թէ՝ «Ով վեհանձն, առատաձեռն բարերար,*
*Ձեռքս բռնի՛ր, քիչ դրամով ինձ օգնիր,*
*Շատուց է, որ ես բանտում եմ, ազատիր»։*
*Նրա ուզածն աչքին թէպէտ մի բան չէր,*
*Սակայն ձեռքում մի փշիկ էլ նա չուներ։*
*Բանտարկեալի ոսոխներին մարդ ղըրկեց,*
*Ու այն խեղճի ազատումը նա ուզեց.*
*Ասաց.-Թողէք իր քղանցքը քանի օր,*
*Եթէ փախչի ես ձեր ձեռքն եմ կամաւոր։*
*Ու այնտեղից եկաւ բանտը թէ՝ կանգնի՛ր,*
*Այս քաղաքից ամբողջ ուժով դու փախի՛ր։*
*Ինչպ՝ս մի ծիտ երբ վանդակը բաց տեսաւ,*
*Բանդարկեալը մի ակնթարթ կանգ չառաւ.*
*Ինչպէս քամի դուրս վազեց նա այնտեղից,*
*Ոչ այնպէս վազ, որ հասէիր դու նորից։*
*Առատաձեռն մարդուն յետոյ բռնեցին,*
*Թէ պատրաստիր դու դրամը կամ մարդին։*
*Ճարահատւած ճամաբն բռնեց նա բանտի.*
*Էլ չէր կարող բռնել թռած մի ծտի.*
*Լսել եմ, որ բանտում երկար նա մնաց,*

*Ոչ գանգատւեց, ոչ ձայն հանեց, ոչ ճչաց։*
*Երկար տանջւեց ու գիշերներ չըքնեց…*
*Առաքինի մէկը բանտում հարցըրեց.*
*-Չեմ կարծում դու կերած լինես մէկից բան,*
*Ի՞նչ պատահեց բանտ նստեցիր դու այսքան։*
*Ասաց.-Է՜ դու ընկերակից իմ օրհնած,*
*Չեմ նենգութեամբ կերել մէկի ունեցած.*
*Մի բանդարկեալ ինձնից ուզեց օգնութիւն,*
*Բանտ նստելովս նրան գտայ փրկութիւն.*
*Իմ դատումով ճիշտ չը գտայ բնաւ այդ,*
*Ես հանգիստ ու ուրիշի ոտին որոգայթ։*
*Վերջը մեռաւ, բարի թողեց նա,*
*Լաւ է կեանքը երբ անունը միշտ մնայ։*

## **Առակ**

*Մէկը դաշտում խիստ ծարաւ մի շուն գտաւ,*
*Կիսաշունչ էր, էլ ուժ չունէր այն բնաւ,*
*Գլխարկը դոյլ արաւ բարի մարդը այն,*
*Իր փաթթոցը կապեց որպէս թոկ նրան,*
*Ծառայելու համար իրեն պատրաստեց,*
*Անուժ շանը այդ րոպէին ջուր տւեց,*
*Տիրոջ կողմից ուղարկւածը բերեց լուր,*
*Թէ ներւեցին նրա մեղքին ընդհանուր։*
*Եւ այժմ, եթէ չարագործ ես, մտածիր,*
*Ամկեղծ եղիր ու մեծութիւն սովորիր,*
*Թէ շանն արած բարիքն Աստւած չմոռնայ,*
*Բարի մարդու բարիքը ո՞նց կը մոռնայ։*
*Բարիք արա՜ ինչքան ուժդ կը ների,*
*Աստծոյ կամքն է՝ մարդը գործի միշտ բարի.*
*Գանձարանից կստանա ոսկի նւիրել,*
*Դատած ոսկու տասը հատից չէ աւել,*
*Ամէն մարդ բեռ կրում է իր հաւասար,*

*Մորեխի ոտն ծանր է մրջիւնի համար։*
*Դու բարի մարդ մարդկանց եղիր մեղ ստէպ,*
*Որ վաղն Աստուած խիստ չը վարւի քո հանդէպ.*
*Թէ կոտր ընկնի մէկը գերի չի մնայ.*
*Երբ բռնի ձեռքն ընկածների անխնայ,*
*Մի տուր խեղճին չարչարելու հրաման,*
*Կարող է նա վաղը դառնալ մի իշխան։*
*Երբ մնայուն մեծ իշխան ես, շուքի տէր,*
*Տանջանք մի տուր ռամիկին խեղճ ու անտէր.*
*Հեռատես ու խրատ լսող մարդիկն այն,*
*Ոչ մի սրտում սերմ չեն ցանում քինական.*
*Ցանքսի տէրը ինքն իրեն է վնասում,*
*Երբ հասկաքաղ խեղճին՝ վատ է վարւում.*
*Չի երկնչում, որ բարիքը տան խեղճին*
*Եւ նրա բեռ հոգսը դնեն իր սրտին.*
*Շատ անգամներ ուժեղներն են խիստ ընկել,*
*Շատ աբգամ էլ ընկածներն են բախտ գտել։*
*Ստորադրեալ մարդկանց սիրտը չը կոտրես,*
*Որ դու մի օր ստորադրեալ չը լինես։*

### Առակ

*Անբախտ մէկը գանգատւեց իր բախտից չար,*
*Փութկոտ հարուստ մէկին, որ բան իրեն տար,*
*Սև սիրտ մարդը նրան ոչինչ չըտւեց,*
*Այլ բարկացաւ վրան, գոռաց, բղաւեց։*
*Խեղճ մարդու սիրտն արիւն կտրեց, կսկծաց,*
*Ծանըր ցաւից գլուխն հանեց ու ասաց.*
*-Ինչո՞ւ է դեմքը թթւած այն ընչեղի,*
*Միթէ՞ երկիւղ չունի ցաւից մուրողի։*
*Հրամայեց կարճատեսը ու ծառան,*
*Անարգ ձևով, զօռով քշեց դուրս նըրան։*
*Տէր Աստըծուն երբ գոհութիւն նա չարաւ,*

*Լսել եմ որ նըրա բախտը ետ դառաւ։*
*Մեծութիւնն իր ընթացք բռնեց դէպի վար,*
*Ճակատագիրն դէպ սև գընաց անընդհատ*
*Նրան բախտը մերկ նստեցրեց ոնց սխտոր,*
*Զունեցաւ բեռ ու բեռ կրողը, այլ՝ սև օր։*
*Նրա գլխին չար աղէտը ցանեց հող,*
*Մի ձեռնածու՝ ձեռք-քսակը առանց փող։*
*Գլխից-ոտ իր վիճակը ողջ շրջւեց,*
*Այդ վիճակով մի ժամանակ անց կացրեց…*
*Իր ծառան էլ ընկաւ հարուստ մէկի տուն,*
*Որ հարուստ էր ձեռքով՝ սրտով ու գիտուն։*
*Աղքատ ու խեղճ մարդ տեսնելիս կը ժպտար*
*Ինչպէս խեղճը երբ դըրամն ստանար։*
*Մի գիշեր մէկն իր դռանը խնդրեց հաց,*
*Հազիւ հազ էր քայլում խեղճը այն քաղցած…*
*Հրամայեց լուսամիտը ծառային,*
*Թէ՝ գոհացրու այդ խեղճ մարդուն՝ տկարին.*
*Երբ սեղանից բաժին տարաւ այն մարդուն,*
*Ակամայից բարձրացըրեց վայնասուն.*
*Սիրտը կոտրած եկաւ տիրոջ մօտ նորից,*
*Բացայայտեց գաղտնիքն աչքի արցունքից։*
*Բարեբաստիկ մեծը նայեց ու ասաց.*
*-Ում ճնշումից աչքիդ արցունքն եկաւ ցած.*
*Ասաց.- Ներսս ալեկոծւեց շատ ազդու,*
*Վիճակիցը այս տարաբախտ ծեր մարդու։*
*Նախկինում ես ծառան էի նրա,*
*Մեծ կալւածքի, գոյք արծաթի տէր էր նա,*
*Երբհատեց իր փառք, ունեցւածք ու գգւանք,*
*Դռներում մուրալով է վարում կեանք։*
*Տէրը ժպտաց, ասաց .- Այդ զօռ չէ նրան,*
*Շրջել մարդու կեանքն օրէնք է բնութեան…*
*Նա այն փութկոտ հարուստը չէ՞ անվայել,*
*Որ իր գոռոզ գլուխն երկինքն էր տարել.*

*Ես նա եմ որ դռնից այն օրը վռընդեց.*
*Նրան աշխարհն իմ այն օրւան նստեցրեց:*
*Երես արաւ, նայեց երկինքն ինձ նորից,*
*Լւաց հոգսի փոշին ողջ իմ երեսից,*
*Աստւած եթէ գիտութեամբ մի դուռ գոցէ*
*Ողորմութեամբ մի այլ դուռ կը բացէ.*
*Շատ աղքատներ ու սնանկներ կշտացան.*
*Շշատ հարուստներ վերևից ցած շրջւեցան:*

## Առակ

*Բարի մարդկանց վարք-ու-բարքը հետևիր,*
*Թէ բարեբախտ մարդ ես լաւով ընթացիր,*
*Յորեն ծախող մի խանութից մի պարկով*
*Շիբլին[1] ցորեն տարաւ գիւղ շալակով:*
*Նայեց ու մի մրջիւն տեսաւ ցորենում,*
*Որ շւարած այս ու այն կողմ էր գնում.*
*Խղճահարւած այն գիշեր քուն չը գնաց,*
*Ետ բերեց իր օթևանն ու ասաց .*
*-Տմարդի է այս մրջիւնին վիրաւոր,*
*Իր տեղից մի այլ տեղ ձգեմ հեռաւոր:*

## Խրատ

*Միտքը սրւած անճարների սիրտը ա՛ռ,*
*Որ լաւ աչքով մտիկ տայ քեզ այս աշխարհ*
*Ինչ լաւ ասաց շնորհալի Ֆիրդուսին.*
*Թող երկնային պարգև լինի սուրբ հողին,*
*Մի վնասիր մրջիւնին, որ հունտ է կրում,*
*Որ կեանք ունի, քաղցր կեանք է նա սիրում,*
*Սև միտ պիտ լինի մէկն՝ քարասիրտ,*

---

[1] -Շեյխ Աբու Բաքր Շիբլին (861–946) պարսկական ծագման սուֆի էր և Ջոնայդ Բաղդադի աշակերտը: Նա հետևեց Մալիկիի իրավաբանական դպրոցին-ԷԲ:

*Որ ուզէ մի մրջիւն լինի նեղսիրտ»։*
*Անկարողի գլխին ուժգին մի խփիր,*
*Ինց մրջիւն մի օր կընկնես ոտքի իր։*
*Անճարների սիրտը ուրախ դու պահիր,*
*Անճար եղած ժամանակը քո յիշիր,*
*Վաււող մոմը Թիթեռնիկին չը գիջեց*
*Նայի՛ր ու տե՛ս մարդկանց մօտը ինց այրեց.*
*Հաշւեմ քեզնից անկարողներ շատեր կան,*
*Կայ քեզանից ուժեղ մարդ էլ անպայման,*
*Ների՛ր մարդուն ու սիրտ ձեռք բեր գիջումով,*
*Գազանին է, որ կը որսան Թակարդով,*
*Թշնամուն պիտ կապել լաւով հէնց միայն,*
*Քանզի տէգն էլ անկարող է կտրել այն։*
*Երբ Թշնամին տեսնի գիջում, սէր ու գուԹ,*
*Էլ չի լինի վրէժխնդիր ու անգուԹ,*
*Մի՛ անի վատ, որ վատ տեսնես ընկերից,*
*Բարի պտուղ չի կանաչի վատ սերմից.*
*Երբ ընկերիդ դժւար բռնես, չըգիջես,*
*Չի ցանկանայ տեսնել քո գոյն ու երես.*
*Թէ մարդ լինի ոսոխնորին լաւակամ,*
*Շատ չի անցնի, որ կը լինեն բարեկամ։*

## Առակ

*Ճամբին տեսայ մի պատանի գնալիս,*
*Մի ոչխար էլ իր յետևից վազելիս․*
*Նըրան ասի ․- Այդ պարան ու այդ կապն է,*
*Որ ոչխարին քո յետևից կտանէ։*
*Իսկոյն նա կապն ու շղթան արձակեց,*
*Ու աջ ու ձախ քայլել շարունակեց․*
*Ոչխարն յետևիս շարունակեց դեռ վազել*
*Քանզի ափից գարի ու խոտ էր կերել։*
*Երբ ետ եկաւ ուրախ, զւարթ տեղը իր,*
*Նայեց ինձ ասաց ․- Տէր իմ լաւ գիտցիր,*
*Այս թոկով չէ, որ քաշում եմ ես նրան,*
*Այլ բարիքը նրա վիզն է ոնց ճոպան․*
*Շնորհը որ տեսել է փիղն ահաւոր*
*Չի յարձակւի փղապանին ոչ մի օր։*
*Ով բարի մարդ միշտ գուրգուրի՛ր վատերին,*
*Պատառ հացով շունն է դառնում քո գերին,*
*Յովազն երբէք չի վնասի այն մարդուն*
*Ով ունելիք տւեցն արաւ բարութիւն։*

## Առակ

*Մէկը տեսաւ անձեռք ու ոտք մի աղւէս,*
*Ապշեց Աստծոյ սէր ու շնորհից մեծապէս,*
*Թէ՝ ինչպէս է այս վիճակով նա ապրում,*
*Որտեղից է անձեռք ու ոտք նա ուտում։*
*Այս էր խորհում դէրւիշը խեղճ ու մռայլ,*
*Որ մի առիւծ եկաւ ճանկում շնագայլ,*
*Կերաւ դժբախտ շնագայլին առիւծն այն,*
*Ինչ որ մընաց աղւէսը կուշտ կերաւ այն։*
*Միւս օրը էլի այնպէս պատահեց,*

*Որ Տէրն Աստուած նրա կերը հասցրեց։*
*Հաստատուեց այն տեսնող մարդու աչքերին,*
*Վերադարձաւ ու յենուեց նա Արարչին։*
*Թէ՝ այսուհետ ես մի անկիւն կը նստեմ,*
*Իմ պարէնը ինքը կը գայ ես կուտեմ։*
*Մի քանի օր կգակ տարաւ նա օձիկ,*
*Որ բաշխողը իրեն ղրկէր ուտելիք…*
*Երբ ուժասպառ եղաւ, ուշքից նա գնաց,*
*Այդ վիճակում, թւաց իրեն մէկն ասաց.*
*-Գնա՛, պատուող առիւծ դարձիր դու անճիշտ,*
*Մի ձգիր քեզ ոնց աղուէսը անկեալ միշտ,*
*Ինչպէս առիւծ քեզնից թողնել ցանկացիր,*
*Ոչ աղուեսի պէս թերմացքի սպասիր։*

## Խրատ

*Ով առիւծի պէս հաստ վիզ ունենայ,*
*Եթէ ընկնի շունը լաւ է քան թէ նա,*
*Ճանկիր, ձեռք բեր և այլոց հետ վայելիր,*
*Ոչ ուրիշի թերմացքին դու աչք տնկիր,*
*Կե՛ր բազուկիդ ուժով որքան կարող ես,*
*Ջանցիր որ քո կըշեռքում դու գտնես.*
*Մարդկանց նման գործի՛ր, դարձի՛ր օգտակար,*
*Ուրիշի դատքը կուտէ մեղկը ապիկար։*
*Ձեռք բռնի՛ր դէրւիշի է՛յ ջիւան,*
*Ոչ թէ ընկիր, ուրիշին կանչիր օգնութեան.*
*Աստուած միայն նըրան կանէ շնորհում,*
*Ով որ մարդկանց հանգիստըն է ստեղծում։*
*Բարիք կը գայ այն գլխից որ ուղեղ կայ,*
*Ստորների գլխում ուղեղ, խելք չըկայ.*
*Զոյգ աշխարհում նա միայն լաւ կը տեսնի,*
*Ով Աստուծոյ մարդկանց բարիք հասցընի,*
*Յարատևող կեանքի ճամբին չըտեսա՞ր,*

*Ուղտապանը որդուն գտաւ ինչ հնար,*
*Ուտելիքըդ կե՛ր միշտ բարի մարդկանց հետ,*
*Նոքա ևս անշուշտ կուտեն այլոց հետ։*

**Առակ**

*Լսել եմ որ մի մարդ էր ապրում,*
*Սուֆիաբար, գիտուն հեռու Հռոմում։*
*Ինձ հետ քանի ճանապարհորդ ու շրջիկ,*
*Կամաւ նրան տեսակցելու գնացինք։*
*Ամեն մէկիս դէմք ու ձեռքը համբուրեց,*
*Յարգանքով մեզ նստեցրեց ու նստեց,*
*Ունէր ոսկի, ցանքս ու ծառայ, ապրանք սուղ,*
*Բայց տմարդին ոնց մի ծառ էր անպտուղ,*
*Դիմաւերլն յարգալից էր ու ասան,*
*Բայց խիստ պաղ էր իր խոհանոցն ու կաթսան.*
*Ողջ գիշերը մեղայ եկաւ առ Աստուած,*
*Զունեցաւ քուն, հանգիստ ու մենք էլ քաղցած։*
*Առաւօտեան մէջքը կապած՝ դուռը բացեց,*
*Ու գիշերւան էլ պաշտամունքը կատարեց։*
*Մեզ հետ քաղցր՝ բարեբնոյթ պարման կար,*
*Այն երկրումը՝ ճամբին այն ձիգ ու երկար,*
*Ասաց .- Բաւ է, մի՛ համբուրիր դու մեզ էլ,*
*Մեզ համբոյրից հացը լաւ է առաւել.*
*Մի պատուիր ինձ ձեռք մեկնելով իմ կօշկին,*
*Ինձ հաց տուր ու կօշկով խփիր իմ գլխին։*

## Առակ

*Լսել եմ որ երբ կեանք ունէր մարգարէն,*
*Զունեցաւ Տայն[1] հաւասար իսլամ կըրօնին,*
*Զօրք ուղարկեց, որ քարոզեն ու սաստեն,*
*Ուրացողին ձերբակալեն ու բերեն:*
*Հրամայեց բերւածներին սպանեն,*
*Համարելով անմաքուր ու անօրէն:*
*Մի կին ասաց .- Ես աղջիկն եմ Հաթամի,*
*Ասէք որ զօրավարն ինձ բաց թողնի:*
*Բարիք արա դու իմ դիմաց, դու ով մեծ,*
*Քանզի տէրն իմ բարեգործ էր ու շատ մեծ:*
*Մարգարէի հրամանով այն գթոտ,*
*Շղթաներից արձակեցին ձեռն ու ոտ.*
*Սուր քաշեցին նրա ազգ ու ցեղ,*
*Որ հասցնեն մի գետ ու հեղեղ:*
*Սուր քաշողին ասաց կինը այնուհետ,*
*-Խփէք նաև պարանոցն իմ՝ դրանց հետ,*
*Մարդկութիւն չէ մենակ բանտից ազատել,*
*Ընկերներից կապանքի մէջ թողնել:*
*Ողբում էր նա Տայի տոհմի վիճակին,*
*Որ ձայն հասաւ մարգարէի ականջին.*
*Ներում շնորհեց Տայի տոհմին ամբողջ նա,*
*Ասաց .- Ազնիւ ցեղը երբէք սխալ չի գնայ:*

[1] - Հաթամի գերդաստանը՝ ազգը: **Հաթամ Տայի** Նախաիսլամական Արաբիայի 6-րդ դարի հռչակավոր բանաստեղծ: Եղել է քրիստոնյա: Հայտնի է եղել չափազանց առատաձեռնությամբ և մեծահոգությամբ: Նրա անունը մինչ օրս արաբների համար օրինակ է դարձել մեծահոգության, հարևաններին օգնության հասնելու ու բարոյական բարձր նկարագրի տեր լինելու այաքինության մեջ:
Տային Հազար ու մի գիշեր հեքիաթաշարի կերպարներից է: Նրա մասին զանազան լեզուներով բազմաթիվ աշխատություններ են գրվել: Նրա արկածախնդրությունների մասին ֆիլմեր են նկրավել: Նրա հռչակը տարածվել է ամբողջ Միջին Արևելքում և Պարսկաստանում, ընդիուպ մինչև Հնդկաստան: Նա հիշվել է նաև Մուհամմադի թողած հադիսներում: Նրա բանաստեղծական տողերը փառաբանում են քաջությունն ու մեծահոգությունը: Գրել է նաև սիրային կասիդաներ:Թաղված է Հայիլի շրջանի Թովարեն գյուղում: Նրա գերեզմանը կանգուն է մինչ այսօր.ԷԲ:

## Առակ
## Հաթամը և նրա առատաձեռնութիւնները

*Լսել եմ, որ Հաթամըն ունէր իր օրում,*
*Արագավազ մի սև ձի իր վըրանում.*
*Որոտում էր, արագ թռչում այն սև ձին,*
*Կայծակից էլ սուր էր ցոլում իր հերթին:*
*Հեղեղի պէս դաշտն էր կտրում այն սևը,*
*Քամուն որպէս փոշի թողնում ետևը.*
*Սուրալով նա ցօղ էր թափում դաշտ ու սար,*
*Ասես Նէյսան[1] ամսի անջրև կը տեղար:*
*Ողջ աշխարհում տարածւեց գովքն Հաթամի,*
*Ասին ոմանք նաև կայսրին Հըռոմի.*
*Թէ՝ - Նրա պէս առատաձեռն մարդ չըկայ.*
*Ռազմում սուրող իր ձիու պէս ձի չըկայ:*
*Դաշտ է կտրում ինչպէս նաւը ովկիանում,*
*Այնպէս արագ արծիւն էլ չի սաւառնում:*
*Գիտունի խրատով Արքոան ասաց .- Չըկայ փաստ,*
*Ջուր վիճելը ամօթանք է  և անիմաստ :*
*Արաբական այն նժոյգը Հաթամից*
*Ես կուզեմ, թէ շնորհ անէ ու տայ ինձ,*
*Կը հաստատեմ, որ նա մեծ է՝ վեհաշուք,*
*Իսկ թէ մերժէ մի թմբուկէ փուչ ու փուք:*
*Խելօք գիտուն մի սուրանդակ նա ընտրեց,*
*Տասը մարդ էլ դըրեց հետը, Տայ ղրկեց…*
*Մեռած գետնին լացող ամպը տւեց կեանք,*
*Մեղմ զեփիւռը բերեց երկրին սէր հրճւանք,*
*Ու Հաթամի տանը ղրկաց խումբն իջաւ,*
*Հանստացաւ, ինց Ջայանդեռուդում մի ծարաւ.*
*Հիւրընկալը սեղան բացեց, ձի մորթեց,*
*Փէշով շաքար, բուռով ոսկի բաժանեց:*
*Գիշերն այնտեղ մընացին ու յաջորդ օր,*

[1] - Ապրիլ ամիս:

*Բանբերն յայտնեց իր խորհուրդը առ ի լուր...*
*Ծըշաց Հաթամն ոնց մի պարտւած ու արբած,*
*Հառաչելով ձեռքը կըծեց ու ասաց.*
*-Դու սուրանդակ բարեհամբաւ, գիտնական,*
*Ինչո՞ւ չըյայտնեցիր պատգամն այն,*
*Այն սուրացող Դօլդօլին ես շտապած,*
*Գիշերն արի ձեզ խորտիկ ու խորոված։*
*Ես կարծեցի հեղեղ, անձրև ու քամուն.*
*Չըկարենան դաշտից տաւարը բերել տուն.*
*Չըկար ուրիշ ելք ու ճամբայ ինձ համար.*
*Բացի այն ձին ապարանքում իմ՝ չըկար։*
*Ես առնութիւն չը հաշւեցի իմ խըղճով.*
*Հիւրը իմ տուն սոված քընի գիշերով։*
*Կուզեմ թողնել ես աշխարհում լաւ համբաւ,*
*Ընտիր նժոյգ չունենալը ինձ չէ ցաւ։*
*Դրրամ ու ձի տւեց մարդոց՝ մեծարեց,*
*Շահից անցաւ ու բարի վարք յայտ բերեց.*
*Վեհանձն մարդու լուրը Հռոմ երբ հասաւ,*
*Հազար գովեստ իր բնութեանն ասւեցաւ։*

## Առակ

*Հաթամից այս պատմըւածքով մի բաւիր,*
*Սըրանից մի շատ լաւ արարք այժմ լսիր։*
*Այս հեքիաթը ով ասաց ինձ, չեմ յիշում,*
*Որ եղել է մի թագաւոր Եամանում։*
*Մեծերի մէջ նա ամենից զօրաւոր,*
*Բաշխումի մէջ աննախընթաց ու հզօր,*
*Պիտի ասել նա մի ամպ էր բարութեան,*
*Անձրևի պէս գանձ էր ցըրում մարդկութեան։*
*Մէկն Հաթամից չէր բերում իր մօտ անուն,*
*Որ նըրանից չըգար գլխին բարկութիւն.*
*Թէ՝ քանի այդ քամի կըշռող մարդու խօսք,*

*Որ չունի կայք և մեծ կալւածք, ոչ էլ զորք:*
*Մի օր սարքեց արքայական խըրախճան,*
*Այդ հանդէսին անթիւ մարդիկ կանչւեցան:*
*Հաթամի խօսք մէկը բերեց մէջ դարձեալ,*
*Ու ներբողեց մի ուրիշը կատարեալ…*
*Խանդն արքաքյին քէնախնդիր դարձրեց,*
*Մէկին նրա սպանելուն նա կարգեց*
*Թէ՝ Հաթամը իմ օրում ժամանակ քանի՞ կայ,*
*Իմ համբաւը բարութեամբ չի բարձրանայ:*
*Բանի Տայի ճամբան դահիճը բունեց,*
*Այն վեհանձնին սպանելու շտապեց…*
*Ճամբին մէկը դիմաւորեց ջերմ նըրան,*
*Որ նըրանից բոյր զգացւեց մօտութեան:*
*Բարեդէմ էր, քաղցրա լեզու ու գիտուն,*
*Այն գիշերը նրան տարաւ հիւր իր տուն.*
*Հոգաց նրան, լաւ խնամեց, մեծարեց,*
*Չարագործի սիրտը լաւով գրաւեց:*
*Արշալոյսին ընկաւ նրա ձեռն ու ոտ,*
*Թէ՝ քանի օր շնորհ արա՛, կա՛ց մեր մօտ:*
*Հիւրը թէ ես շատ մընալու ճար չունեմ,*
*Առաջըս մի շատ կարևոր գործ ունեմ:*
*Տան տէրն ասաց .- թէ ինձ խորհուրդ հարցնես,*
*Մի սըրտակից ընկերի պէս կօգնեմ քեզ:*
*-Ասաց .- Լսիր, վեհանձն, ազնիւ, բարի մարդ,*
*Ոնց եմ կարող վեհանձնիցդ գաղել այդ.*
*Գիտես ով է Հաթամը այս շրջակայք,*
*Որ բարի է, առատաձեռն ու գիտակ.*
*Իր գլուխն է ուզել արքան Եամանի,*
*Նա սրտի մէջ չըգիտեմ ի՞նչ քէն ունի…*
*Թէ ինձ ցուցնես նրա տեղը ուր է նա,*
*Աչքըս վրա կառնեմ շնորհըդ անխնայ:*
*Խնդաց մարդը, թէ՝ Հաթամը հէնց ես եմ,*
*Ահա ջոկիր գլուխս տէգով մարմնից իմ:*

Չըլինի որ թողնես օրը դառնայ լոյս,
Վըրաս տեսնես, կամ թէ լինես դու անյոյս:
Երբ Հաթամը գըլուխն ազատ դըրեց ցած,
Երիտասարդը ամբողջ ուժով որոտաց.
Ընկաւ հողը նա ու նորից վեր ցատկեց,
Մերթ աչքն ու մերթ ձեռք ու ոտքը համբուրեց,
Սուրը ձգեց, նետամանը դըրեց ցած,
Ու ձեռքերը կըրծքին դրեց ոնց պարտուած:
Ասաց .- Թէ ես վարդով անգամ քեզ խփեմ,
Մարդկանց մօտ ես ոչ թէ միմարդ, այլ կին եմ…
Նըրան գրեց, երկու աչքը համբուրեց,
Ապա Եաման տանող ճամբան նա բռնեց:
Արքան մարդու երկու յօնքի մէջ կարդաց,
Ու հասկացաւ, որ նա մի բան չէ արած.
Ասաց .- Արի, ասա թէ ինչ լուր ունես,
Ինչո՞ւ գլուխը թամբիդ եռև կապած չես:
Միթէ՞ մի քաջ դէմըդ մղեց մի պայքար,
Թուլութիւնից դու պարտւեցիր ու ընկար:
Երիտասարդ քաջը հողը համբուրեց,
Թագաւորին ներբողեց ու խոնարհւեց.
Ասաց .- Տէր իմ, մեծ Հաթամին գտայ ես,
Հանճարեղ էր, ակնահաճոյ, բարետես.
Առատաձեռն, խելացի ու գիտնական,
Մարդկութեան մէջ շատ մեծ տեսայ ես նրան:
Իր շնորհիվ նա իմ մէջքը բեկանեց.
Բարութեան մեծ դաշոյնով ինձ սպանեց:
Ապա ասաց ինչ տեսել էր ինքն այնտեղ…
Արքան գովեց մեծ Հաթամի ազգն ու ցեղ:
Ուղարկւածին դըրամ տւեց մի քսակ,
Մեծ Հաթամից վըրան գրւած այս տեսակ,
Որ՝ Հաթամը աչժանի է լաւ անուան,
Նրա հուշակն ու գործերն են սրբազան:

## Առակ

*Մի ծերունի գնաց տանը Հաթամի,*
*Շաքարաւազ ուզեց տասը դըրամի.*
*Պատմողիցը լուրն այնպէս եմ ես առել,*
*Որ խերունուն մի հակ էր նա ուղարկել:*
*Կինը վրանից ասաց .- Ինչո՞ւ էլ այսքան,*
*Խերի կարիքը տաս դրամի էր միայն:*
*Լսեց խօսքը Տայի մարդը անուանի,*
*Ծիծաղեց ու ասաց.- Էհ կին պիտանի,*
*Եթէ մարդուդ կարիքի չափ ղրկի նա,*
*Հաթամ ցեղի վեհանձնութիւնն ուր մնայ:*

## Առակ

*Մէկի էշը ցեխի մէջ էր խիստ խրուել,*
*Մելամաղձոտ սիրտն իր արիւնն էր բռնել,*
*Դաշտ էր, անձրև, ցուրտ, հեղեղ ու փոթորիկ,*
*Գիշերն եկաւ, մութը պատեց խիստ՝ սաստիկ:*
*Ամբողջ գիշերն այդ հոգսի մէջ մինչև լոյս,*
*Անէծք կարդաց ու հայհոյեց նա անյոյս.*
*Ոչ թշնամի թողեց նա, ոչ ազգական,*
*Ոչ թագաւոր, որ այդ երկրի տէրն էր այն,*
*Պատահաբար տէրն այդ երկրի ընդարձակ,*
*Անց էր կենում հէնց այդ տգող ժամանակ,*
*Լսեց բոլոր այդ խօսքերը անհաւան,*
*Ոչ իր ուժն էր լսել, ոչ տալ պատասխան.*
*Շքախմբին նայեց արքան ամօթխած,*
*-Սրա վիշտը դէպ ինձ ի՞նչ է,- նա ասաց.*
*Մէկը ասաց .- Արքա, սրան սուր քաշիր,*
*Այս աշխարհից սրա կեանքի վերջը դիր,*
*Նայեց նրան թագաւորը խիստ յուզուած*
*Նա ցաւի մէջ, էշը ցեխի մէջ խրուած,*
*Խղճահարուեց դժբախտ մարդու վիճակից,*
*Ջըսպեց իր ցասումն այդ վատ խօսքերից:*

*Ոսկի տւեց, մորթի կապոց ու նժոյգ,*
*Ինչ քաղցր է սէրն ու հաճելի քէնի ժուկ։*
*Մէկըն ասաց .- Է՛, անյուշ ծեր ու անխելք,*
*Սպանւելուց դու լաւ պրծար, եղաւ ելք։*
*Ասաց – Սուս կաց, ես ողբացի իմ ցաւից,*
*Նա մեծութեան շնորհքով ընծայ տւեց ինձ.*
*Վատութեանը վատ անելը հեշտ է շատ,*
*Եթէ մարդ ես, լաւ արա երբ տեսնես վատ։*

## Առակ

*Լսել եմ մի գողոզ իրեն կորցրեց,*
*Մի աղքատի երեսին դուռը իր փակեց։*
*Մի անկիւնում գնաց խեղճ մարդը,*
*Խոր ա՛խ քաշեց ու ողբաց իր չար բախտը։*
*Նրա ձայնը լսեց մի կոյր անցնելիս,*
*Հարցրեց, ինչո՞ւ նա նստել է ու լալիս։*
*Նստեց թաղի հողի վրայ ու պատմեց,*
*Գողոզ մարդու ցաւն որ իրեն հասցըրեց.*
*Կոյրը թէ՝ դու մի՛ տուր անէծք, հայհոյանք.*
*Այս գիշեր իմ մօտ ընթրելու ե՛կ գնանք։*
*Մի հնարքով նրա օձիքը բռնեց,*
*Բերեց իր տուն ու սփռոցը իր բացեց,*
*Հանգստացաւ խեղճ դէրւիշը բարեյոյս.*
*Ասաց .- Աստւած քեզ օհնի տայ աչքի լոյս։*
*Գիշերն աչքից մի քանի կաթ ջուր հոսեց,*
*Արշալոյսին  տեսաւ աչքը իր բացեց։*
*Տարածեց այն քաղաքումը աղմուկ, լուր,*
*Թէ՝ գիշերը աչքի լոյսն է գտել մի կոյր։*
*Լուրը հասաւ այն հարուստին քարասիրտ,*
*Որ ետ դարձրեց դէրւիշին իր վարքով բիրտ.*
*Եկաւ ասաց .- Պատմի՛ր դու ինձ, բարեբախտ,*
*Թէ՝ ինչպէ՞ս հեշտ դարձաւ քեզ այն գործը բարդ,*

*Ով դարձրեց լուսատու քո աչքերն այդ:*
*Ասաց.- Է՜հ դու բռնակալ մարդ ու տւայտ,*
*Դու  մօտետես էիր ու թոյլ կամքի տէր,*
*Փինիկի տեղ դու ունեցար բուին սէր.*
*Հէնց այն մարդը իմ երեսին բացեց դուռ,*
*Որ կողպեցիր իր առաջ քո տան դուռ:*
*Արդար մարդկանց հողը թէ դու համբուրես,*
*Երդւում եմ, որ քո առաջ լոյս կը տեսնես:*
*Այն մարդիկ որ իրենց սրտի աչքն է փակ,*
*Հէնց նրանք են աչքի դեղից անտեղեակ:*
*Երբ դժբախտը կշտամբանքը այդ լսեց,*
*Խոր տրտմութեամբ մատն ատամով իր կծեց.*
*Թէ՝ իմ բազէն քո թակարդի որսն եղաւ,*
*Բախտը իմն էր, սակայն քոնը նա դառաւ:*

## Խրատ

*Մէկը ոնց է կարող բռնել որձ բազէ,*
*Երբ, որ մկան պէս ատամն իր բացէ,*
*Եթէ իրօք սրտակից ես պահանջում,*
*Ծառայելուց մի ունեցիր թերացում,*
*Կեր տուր ծտին ու կաքաւին, աղաւնուն,*
*Որ մի օր քո թակարդն ընկնի մեծ թռչուն:*
*Ամէն անկիւն թէ կարիքի նետ ձգես,*
*Յոյս կայ յանկարծ ուզած որսըդու խփես,*
*Անթիւ սատափ պիտ որ տայ մի մարգարիտ,*
*Հարիւր նետից մէկը կառնէ նշանիդ:*

## Առակ

*Մեկի տղան ճամբորդելուն կորցւեց,*
*Նա այս ու այն կարաւանում որոնեց*
*Նա մի առ մի մտաւ ամեն մի վրան,*
*Մինչև գտաւ իր տղային մթումն այն։*
*Երբ եկաւ իր կարաւանի մարդկանց մօտ,*
*Ուղտապանին պատմեց անցքը համառօտ.*
*«Չըգիտես թէ ինչքան եմ ես որոնել,*
*Ով իմ առաջն եկաւ ես նա եմ կարծել»։*
*Հէնց այդ է, որ սրտի մարդիկ փնտրում են,*
*Որ լինի թէ իրենց մարդը ձեռք բերեն,*
*Վարդի համար փշերին են դիմադրում։*

## Առակ

*Արքայազնի թագից մի տեղ ընդարձակ,*
*Գիշերն ընկաւ քարերի մէջ մի սուտակ,*
*Հայրըն ասաց .- Թէ՝ այս գիշերը խաւար,*
*Ի՞նչ իմանաս որ՞ն է գոհար, որ՞ն է քար,*
*Ողջ քարերը աչքի առաջ ունեցիր,*
*Սուտակն ամբողջ դրանց մէջ է՝ իմացի՛ր,*

## Իմաստութիւն

*Ամեն տգէտ մարդի բեռը պիտ կրես,*
*Մինչև ուզած բարի մարդը քո գտնես,*
*Այն մարդը, որ սէր ունի դէպ ընկերը,*
*Տես ինչպէս է քաշում մարդկանց բեռները։*
*Մէկի համար դու շատերին խնամիր,*
*Ու հարիւրին մէկի համար պահպանիր*
*Թէ փոշոտ ոտք ու խճճւած մարդիկ կան.*
*Ու նրանք ցածր ու ստորներ քեզ թւան,*
*Երդւում եմ, որ նրանց մէջ էլ լաւ մարդ կայ.*

*Դու նրանցից էլ պիտ ծառայես անխնայ.*
*Դու մի հաճիր բնաւ նրանց լաւ նայել,*
*Նրանց բաւ է, որ Աստուած է հաւանել։*
*Այն մարդը, որ ենթադրում ես թէ վատ է,*
*Ի՞նչ իմանաս տիրոջ սիրած մարդը չէ,*
*Ուսման դուռը նրանց առաջ է միշտ բաց,*
*Որոնց առաջ բոլոր դռներն են գոցւած։*
*Շատեր կան, որ զուրկ են ապրել, միշտ տքնել,*
*Բայց դրախտում իրենց տեղ են պատրաստել,*
*Կը համբուրես թէ խելք հնար դու ունես,*
*Արքայազնի ձեռը՝ բանտում թէ տեսնես.*
*Քանի մի օր նա բանտիցը կը գայ տուն,*
*Կը բարձրացնի քեզ, երբ առնի թարձրութիւն։*
*Վարդի թուփը մի վառիր դու աշնանը,*
*Որ քեզ սիրուն վարդ տայ նորից գարնանը։*

## Առակ

*Մէկը չունէր հանդգնութիւն ծախսելու,*
*Ոսկի ունէր բայց ուժ չունէր կրելու,*
*Ոչ ուտում էր, որ հնգիստ տար իր մարմնին,*
*Ոչ տալիս էչ, որ վաղը գար իր գործին։*
*Գիշեր ցերեկ արծաթ-ոսկի էր փնտրում,*
*Ասկի-արծաթն ագահ մարդու քսակում։*
*Տղան մի օր դարան մտած նկատեց,*
*Թէ կծծի մարդը որտեղ իր ոսկին թաղեց.*
*Հողից հանեց տւեց քամուն նա իսպառ.*
*Լսել եմ, որ ոսկու տեղը դրեց քար,*
*Առտաձեռն մարդուն չեղաւ ոսկին բաւ,*
*Մի ձեռքն եկաւ, միւս ձեռքով նա կերաւ,*
*Քանզի նա էր անհոգ ու անճիշտ,*
*Գլխարկն ու մեզարն էր գրավ միշտ։*
*Հայրը ճանկով իր կոկորդը խիստ սեղմեց,*
*Տղան տաւիղ առաւ ձեռքը նւագեց։*
*Ողջ գիշերը հայրը լացեց ու կոծաց,*
*Առաւօտեան տղան ժպտաց ու ասաց.*

*-Ոսկին պիտի ուտել, ծախսել, ա՛յ իմ հայր,*
*Պահ դնելուն ոսկու տեղ թող լինի քար:*

## Իմաստութիւն

*Պինդ քարից են արտահանում զուտ ոսկին,*
*Որ բարեկամ, հարազատի հետ ուտին:*
*Ոսկին կծծի մարդու ձեռքը թէ ընկնի,*
*Ճիշտ նման է թէ քարի մէջ դեռ լինի:*
*Եթէ կեանքում դու ունես տուն, կողակից,*
*Եթէ ուզեն դու պիտ անցնես քո կեանքից:*
*Յիսուն գազից երբ ընկար ոնց խըրտւիլակ[1]*
*Կը վայելեն ինչքըդ կուշտ այն ժամանակ:*
*Հարուստ կծծին արծաթ ոսկուն անքանակ,*
*Թալիսման է գանձի վըրայ շարունակ.*
*Այն օրից է աչծաթ, ոսկին մնացել,*
*Երբ այնպէս օձ իր գլխին է ունեցել:*
*Մահւան քարով յամկարծ դուռը կը կոտրեն,*
*Հանգստութեամբ գանձն իրենց մէջ կը բաժնեն.*
*Գերեզմանի որդին նախքան դառնաս կեր,*
*Մըջիւնի պէս երբ դիզեցիր ապա կեր:*
*Սաադիի ողջ խօսքերն առակ են ու խրատ,*
*Գործիդ կը գան թէ գործ դնես դու առատ.*
*Է՛հ ափսոս է նրանից դէմք դարձընել,*
*Այդպիսով է, որ կարող ես բախտ գտնել:*

## Առակ

*Երիտասարդ մէկը դրամ նըւիրեց,*
*Մի ծերունու խնդրանքը նա տեղ բերեց:*
*Մի յանցանքով ձերբակալւեց ու արքան*
*Հրամայեց տանեն սպանեն նրան:*
*Ծառաներն ու ժողովուրդը խըռնւած,*
*Դիտում էին դուռ,կտուրը բարձրացած:*

---
[1] - Յիսուն տարին անցնելուց յետոյ:

*Այն խուճապը երբ այն ծերը նկատեց,*
*Ու պարմանին մարդկանց գերին նա դիտեց,*
*Երիտասարդ խեղճի համար կսկծաց,*
*Նա որ մի օր իրեն սիրտն էր ձեռք բերած:*
*Լացեց սաստիկ թէ՝ թագաւորը մեռաւ,*
*Թողեց աշխարհ, ազնիւ վարքը իր տարաւ:*
*Իբր ափսոսանք շփեց միմեանց իր ձեռքեր,*
*Այն լսեցին մերկ սրերով ծառաներ.*
*Բարձըր ձայնով նրանք արին սուգ ու լաց,*
*Պինդ խփելով իրենց կրծքին շւարած:*
*Շուտ վազեցին նրանք պալատ ու տեսան,*
*Որ կենդանի գահին նստած է արքան:*
*Երիտասարդն միջից փախաւ ու ծերին,*
*Որպէս գերի թագաւորի մօտ բերին:*
*Արքան նըրան սարսափ ազդեց, սպառնաց,*
*-Իմ մահն ինչո՞ւ դու ցանկացար, նա ասաց,*
*Երբ իմ վարքը ճշմարիտ է ու բարի,*
*Ինչո՞ւ մարդկանց վատն ուզեցար կատարել.*
*Լեզուն բացեց խօսելու քաջ ծերունին,*
*-Է՛հ, դու աշխարհ, օղ գիտութեան ականջին.*
*Մի սուտ խօսքով, որ թագաւորը մեռաւ,*
*Դու չըմեռար, բայց մի դժբախտ կեանք գտաւ.*
*Այս հեքիաթից արքան այնքան զարմացաւ,*
*Որ էլ ոչինչ չասաց, մեղքից վաղ անցաւ:*
*Իսկ այն կողմից ջիւանն ընկնել-կանգնելով,*
*Գնաց խեղճը անչափ արագ վազելով:*
*Մէկը հարցրեց.-Խաչմերուկի օրէնքից,*
*Ի՞նչ արեցիր, որ փըրկւեցիր դու մահից.*
*Նրան կամաց ասաց թէ՝ դու խելացի,*
*Մի շատ չնչին բարի գործով փրկւեց:*

## Իմաստութիւն

*Մէկը սերմը այն յոյսով է ձգում հող*
*Որ նեղ օրին պէտք գայ իրեն տայ պտուղ,*
*Մի հատ գարին ճար է անում ցաւին մեծ,*
*Մի գաւազանն ասին Օվչին[1] սպանեց։*
*Մէկը տեսաւ զարհուրելի մի երազ,*
*Ողջ աշխարհը անապատ էր ու աւազ,*
*Վերջին օրն էր դատաստանի այն ահեղ,*
*Արևն այրել, պղնձել էր ամեն տեղ.*
*Մարդկանց ճիչը մինչև երկիրքն էր հասել.*
*Տաքից իրենց գլխի ուղեղն էր հալւել։*
*Այն բոլորից հեռու մի մարդ հովումը,*
*Դրախտային մի զարդ ձգած վզումը*
*Քնածն ասաց.- Դու հաւաքի զարդարանք*
*Այդ ո՞նց եղաւ, ինչպէ՞ս գտար դու փրկանք.*
*Ասաց.- ես մի որթ ունէի իմ տնում*
*Մի բարի մարդ քնեց նրա ստւերում.*
*Անյուսութեան ժամին մարդը այն բարի*
*Խնդրեց, որ տէրն ինձ համար լաւ օր բերի,*
*Ասաց.- Աստւած, ներիր դու այս լաւ մարդուն.*
*Քանզի մի օր սա արաւ ինձ բարութիւն։*
*Երբ լսեցի պատմութիւնն այս գեղեցիկ,*
*Բուբաքր Սաադին ասացի ես՝ աւետիք.*
*Որ ժողովուրդն իր շուքի տակ է ապրում,*
*Իր սեղանի բարիքներն է վայելում.*
*Նա մի ծառ է առատաձեռն վիթխարի,*
*Նրանից անց վառելիք է սարերի.*
*Վառելիքը ուրագ դնում են, քանդում.*
*Իսկ պտղատու ծառին այդպէս չեն անում.*
*Է՛հ, արևստի ծառ , դու կանգուն միշտ մնաս,*
*Ու թէ՝ պտուղ և թէ՝ ստւեր ունենաս։*

---

[1] - Անհաւատ մի անձ։

* * *

*Բարի գործի մասին ես շատ եմ խոսել,*
*Սակայն ոչ թէ ամեն մարդու համար էլ։*
*Մարդ ճնշողի ինչքն ու արիւնը կուլ տուր,*
*Լաւ է քանդել վատ հաւի թև ու փետուր։*
*Մի մարդ եթէ կոււում է քո մեծի հետ,*
*Էլ ինչո՞ւ ես տալիս ձեռքը քար ու փէտ.*
*Քանդիր արմատն այն բոյսի որ փուշ կը տայ,*
*Մշակիր ծառ, որ քեզ բարի պտուղ տայ։*
*Մարդը պիտի այն մարդուն մեծ ընդունի,*
*Ավ փոքրերի մօտ իրեն մեծ չըբռնի,*
*Ով աշխարհն է այրում նրան պիտ այրել,*
*Մէկին վառել ու ամենին ազատել։*
*Ով որ գողին խղճում է ու լաւ անում,*
*Նա իր ձեռքով կարաւան է կողոպտում*
*Ճնշողների կեանքը պրտի տալ քամուն,*
*Ճնշողներին ճնշելն է մեծ բարութիւն։*

* * *

*Լսել եմ մէկն իր տան համար մտածեց,*
*Թէ՝ պիծակը մեր օճորքը բոյն դրեց*
*Կինն ասաց թէ՝ ինչ գործ ունես նրանց հետ.*
*Անճարներին անբոյն մի թող այնուհետ։*
*Գիտուն մարդը անխօս գնաց իր գործին.*
*Մի օր կնկան պիծակները խայթեցին,*
*Կինը ճչաց, վազեց դուռ բակ ու կտուր,*
*Իսկ մարդը թէ՝ ինչ ես ճչում դու իզուր.*
*Մարդկանց վրայ թթւադիմելդ ինչ է կին.*
*Դու ասացիր՝ մի չարդի խեղճ պիճակին.*
*Վատերին մէկն ինչպէս անէ լաւութիւն*
*Վատին տոկալ, շատացնում է վատութիւն.*
*Թէ մարդկանց մէջ տանջող գլուխ նկատես,*
*Լաւ է կոկորդն քո սուր տէգը մտցընես։*

Շունն ով է որ սփռոց բացեն յարգանք տան
Հրամայիր նրան միայն ոսկոռ տան.
Գիւղի մեծը ինչքան լաւ խօսք է ասել,
-Քացի գցող ջորուն պիտի շատ բարձել:
Գգւես կատւին քո աղաւնուն կը-բռնի,
Թէ գերացնես գայլին, որդուդ կը տանի.
Եթէ դարձնեն գիշերապահ լաւ մարդուն,
Գողի ձեռքից մարդ չի կարող գնալ քուն.
Ամեն մի մարդ մեծ ինչքի չէ արժանի.
Մէկին ինչք ու մէկին պատիժ պիտ լինի.
Շէնքը եթէ հիմքը թոյլ է, ամուր չէ,
Մի տար վերև, իսկ թէ տարար՝ երկնչէ,

* * *

Ի՞նչ լաւ ասաց.- Բահրամ գուրը առանձին,
Երբ որ գետին խփեց իրեն երկգոյն ձին
Մի ուրշը պիտի բռնել ձիերից,
Որ թէ գցի լինի բռնել էլ նորից.
Կապիր տղաս երբ Տիգրիսն է նւազում,
Չի լինի դա երբ հեղեղն է սաստկանում.
Երբ պիղծ գայլը քո թակարդը գայ ընկնի,
Թէ ոչխարից սիրտ չես կտրել սպանի
Սատանայից երկրպագել չի լինի.
Ոչ էլ նենգը բարութիւն իր մէջ ունի:
Չարամիտին մի տուր տեղ ու ապաստան
Ոսոխն հորում, դևը շիշում պիտ մնան.
Փայտով օձին սպանել դու մի խորհիր,
Երբ գլուխը բերեց քարիդ տակ, խփիր.
Գրագիրն երբ իրնից ցածին վատ արաւ,
Լաւ է թրով կտրել ձեռքը իր իրաւ.
Քաղաքագէտն երբ վատ օրէնք է դնում,
Կրակելու համար է քեզ նա տանում.
Էլ մի ասիր քաղաքագէտն այս բաւ է
Քաղաքագէտ մի ընդունիր, նա ցաւ է:

## Սաադի - Բուստան-գլ. 4

### Լօղմանը

*Լսել եմ, որ սեւամորթ էր Լօղմանը,*
*Չէր անձնապաշտ ու նրբանդամ իրանը.*
*Մէկը նրան իր բանւորը ենթադրեց.*
*Ստոր դասեց, նրան ցեխի գործ յանձնեց.*
*Յաւ քաշեց ու տարաւ ամեն բռնութիւն*
*Ու մի տարում շինեց նրա շինութիւն.*
*Բայց երբ եկաւ փախած ծառան այն մարդու,*
*Նա Լօղմանից ահաբեկւեց շատ ազդու.*
*Ներում խնդրեց, ընկաւ նրա ձեռն ու ոտ*
*Ժպտաց Լօղման թէ՝ չքմեղանքն ինչ օգուտ:*
*Բռնութիւնիցդ ես մի տարի տառապեմ*
*Մի ժամումը իմ սրտից ես ոնց հանեմ.*
*Սակայն նորից քեզ՝ բարի մարդ կը զիջեմ,*
*Քո օգտիցը ես մի վնաս տեսած չեմ.*
*Դու շինեցիր քեզ համար մի շինութիւն,*
*Իմ գիտութեանն աւելացաւ գիտութիւն:*
*Էյ բարի մարդ ծառայ ունեմ ես իմ տանն*
*Որ խիստ գործ եմ յանձնում երբեմն ես նրան,*
*Էլ անողորմ չեմ նեղացնի նրան ես.*
*Ցեխից դաժան գործ երբ յիշեմ միայն ես:*

## Սաադիի, Բուստան, գլ. 5

### Առակ

*Ցինի առաջ այսպես ասաց անկղը վէս,*
*Այս աշխարհում չկայ ինձնից հեռատես.*
*Ցինը ասաց .- Քո այդ խօսքից մի անցնիր,*
*Ի՞նչ ես տեսնում այս դաշտի մէջ այն ցուցնիր,*
*Լսել եմ, որ մօտ մի օրւայ ճանապարհ,*
*Հայեացք նետեց վերևից դէպի վար,*
*-Թէ հաւատաս, տեսնում եմ ես,- անկղն ասաց.-*
*Որ դաշտի մէջ մի հատ ցորեն կայ ընկած։*
*Չհաւատաց ցինը այլևս զարմանքի,*
*Նրանք իջան դէպի ցած այն բարձունքից…*
*Երբ, որ անկղը դէպ հատիկը ցած իջաւ,*
*Այնտեղ դրած կապանքը իր ոտն ընկաւ.*
*Չգիտէր այն հատիկը թէ ինքն ուտէր,*
*Նենգ աշխարհը կապն իր վիզը կը նետէր։*
*Ամեն սատափ գոհարով կիք չի լինի,*
*Բաներն էլ միշտ նպատակին չի հասնի։*
*Ցինը ասաց .- Լաւ տեսնելուց ի՞նչ շահ քեզ,*
*Երբ թշնամուդ դրած ցանցը չտեսնես։*
*Լսել եմ, որ կապանքում ամկղն է ասել,*
*Շահաւէտ չէ ճակատագրից խուսափել։*

### Իմաստութիւն

*Մահը երբ, դէպ ումը ձեռք երկարեց*
*Ճակատագիրն թոյլատես աչքն իր փակեց*
*Սոյն ջուրը որ ցոյց չի տալիս իր եզերք*
*Լողացողի պարծենալն էլ ի՞նչ պէտք,*
*Ջուլհակի այն աշակերտն ինչ լաւ ասեց,*
*Երբ նա արծիւ, ընձուղտ ու փիղ նկատեց,*
*-Ես չեմ կարող ոչ մի պատկեր նկարեմ,*
*Որ վարպետը ձևը վերից չի տուել,*
*Թէ պատկերիդ վիճակը լաւ է կամ վատ,*
*Նկարողն է սահմանել դա՝ ուզել դա[1]։*

---

[1] - Այս տողերից հետո վաղաժամ կտրվեց Խորեն Տեր Վրույրյանի կյանքի թելը, և նրա գործը մնաց անավարտ-ԷԲ։

## Սաադի - Բուստան-գլ. 7

### Մարդկանց թերին դու մի ցուցնիր

*Մի խելացի երիտասարդ գիտնական*
*Որ խօսելուն հմուտ էր ու առնական,*
*Լեզուագէտ էր, նաև բառեր շատ գիտէր,*
*Բայց «շ» տառը չէր կարենում լաւ հնչէր։*
*Մի բարեպաշտ գիտուն մարդու ասացի,*
*Որ՝ այն ինչը չունի ատամն առաջի.*
*Նա կարմրեց մելամաղձոտ իմ խօսքից,*
*Թէ՝ անտեղի էլ մի ասի այն մարդից.*
*Դու նրանից տեսել ես հէնց պակասն այն,*
*Քանի շնորհքից խելքիդ աչքը փակ սակայն։*
*Հաստատ լսի՛ր ինձանից՝- օրն Յարութեան,*
*Վատ չի հասնի լաւատես ողջ մարդկութեան*
*Թէ խառնւածքով բծախնդիր մի մարդ ես,*
*Սիրամագի հէնց գէշ ոտը կտեսնես։*
*Մարդկանց թերին դու մի ցուցնիր, է՛յ ստոր,*
*Աչքդ գոցած թերութիւնից քո բոլոր.*
*Թէ չես սիրում վատը՝ ինքդ մի արա,*
*Յետոյ ասա դրացուդ՝ վատ մի արա։*
*Բարի մարդկանց բարութիւնը անկասկած,*
*Մէկին տասը գրի կանէ Տէրն Աստւած.*
*Դու էլ տղայ, ում մի շնորհք դիտեցիր*
*Նրա տասը թերութիւնից վազ անցիր։*

## Խօսք տանողը ցախ լցնողն է անճարակ

*Մի բարեմիտ սուֆի մարդու մէկն ասաց,*
*Թէ՝ այնինչը քո քամակից վատ ասաց.*
*Սուֆին ասաց.- Բաւ է, եղբայր, լուռ կաց դու,*
*Ես չեմ ուզում լսել խօսքը թշնամու։*
*Նրանք, որոնք խօսք են տանում թշնամուց,*
*Աւելի շատ թշնամի են թշնամուց.*
*Թշնամուց նա խօսք կը տանի ընկերին*
*Ով ինքն է իր ընկերոջ թշնամին։*
*Չը կրցաւ ինձ տալ- թշնամին տանջանքն այն,*
*Որ լսելուց անձս է դողում ամենայն.*
*Դու կդառնաս ոսոխ մէկին երբ ասես*
*Թէ՝ թշնամին այսպէս ասաց գաղտնի քեզ։*
*Բամբասողը նորոգում է կռիւն հին,*
*Երբ դրդում է համբերատար լաւ մէկին…*
*Այն նստեկցից ինչքան կարող ես փախիր,*
*Որ չարիքին քնած ասի արթնացիր։*
*Երկու մարդու մէջ կռիւն է ոնց կրակ,*
*Խօսք տանողը ցախ լցնողն է անճարակ։*

# Յաւելված



ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

«ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

Գիրքը արտացոլում է իւրայատուկ գրական ոճով գրուած, վաստակաւոր ուսուցիչ Խորէն Տէր Վրոյրեանի տպաւորութիւնները Հայաստան կատարած ճամբորդութիւնից:

Ստանալու համար դիմել «Սաքօ» գրախանութին եւ հայ գրատներին:

**Ինչպէս տեսա Հայաստանը**



ԱԼԻՔ ՕՐԱԹԵՐԹ, ԹԻՒ 119 (12,691)

ՆՈՐ ԳՐՔԵՐ

# «ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

«Ալիք»ի տպարանից լոյս տեսաւ Խորէն Տէր Վրոյրեանի «Ինչպէս տեսայ Հայաստանը» գիրքը 75 էջով, եւ հայրենի վանքերի եւ յուշարձանների նկարներով, թւով 14 հատ:

Իրանահայ կրթա-դաստիարակչական եւ դպրոցական ասպարէզում իր տեղն ունի Խորէն Տ. Վրոյրեանը, որն աւելի քան երկու տասնեակ տարիներ, որպէս տեսուչ ու դասատու, աշխատել է օգտակար լինել մեր մատաղ սերնդին, տալով նրան հայեցի դաստիարակութիւն:

Գրքի սկզբում տեղադրուած են հեղինակի չափածոյ գրուածքները՝ թւով 4 հատ, որոնք պանդուխտ հայի կարօտ հոգու եւ պապակ սրտի անկեղծ ու ազնիւ զեղումներն են: Յաջորդ էջերում Խ. Տ. Վրոյրեանը պատմում է իր տպաւորութիւնները Մայր Հայրենիքից, հպարտանում ու հիանում է նրա վերելքով, գիտական նուաճումներով եւ հոյակապ կառոյցներով: Ապա հեղինակը նկարագրում է իր հանդիպումները իր հարազատների եւ իր մանկութեան ընկերների հետ: Հաճելի է կարդալ նաեւ աշխարհահռչակ գիտնական՝ Վիկտոր Համբարձումեանի եւ տաղանդաւոր գրող՝ Սերօ Խանզադեանի հետ ունեցած հանդիպումների մասին:

Ընդհանուր առմամբ գիրքը գրուած է հայրենասիրական ջերմ շնչով եւ ամէն տողի մէջ առկայ են հեղինակի անկեղծութիւնը եւ հայրենասիրական ոգին:

## ՀԱՅՑՈՒ ՍՈԽԱԿԻՆ

Հայաստանի չքնաղ սոխակ, դիւթող երգիչ դու աննման,
Թռար երբ որ Հայաստանում բոյնդ քանդեց թուրքը դաժան,
Ու շրջեցիր Հայաստանում, նստելու տեղ դու չգտար,
Ամէն տեղ էլ համատարած՝ արիւն, աւեր, թալան, աւար,

Հայոց երկրի ծաղիկն ու ծառ հրդեհել էր թուրքն ապիկար,
Վարդ չթողեց Հայաստանում, օրը դարձրեց մութ ու խաւար
Թափառական կեանք յանձն առար եւ աշխարհը ողջ շրջեցիր,
Ու տարագիր հայի նման գաղթական կեանք որդեգրեցիր:

Թափառեցիր շատ երկրներ, տեսար երկիր դու փոքր ու մեծ,
Երկրներից եւ ոչ մէկին քո լայն սիրտը չհաւանեց,
Հայաստանն էր քո երկիրը, սակայն նրա աւերը հէք,
Ընկնեց քեզ ու միշտ տանջեց, չմոռացար դու այն երբե՛ք:

Սիրուն սոխակ,այժմ ետ դարձիր Հայաստանը քո աչքով տես,
Աշխարհումը այնպէս չքնաղ, շէնշող երկիր չկայ այլեւս,
Որ պուճախը աչքդ ընկնի վարդ ու ծաղկով է պճնւել,
Ողջ երկիրը կանաչ թաւշի ու զմրուխտի տեսք է առել:

Ոսոխն անարգ էլ չի կարող հայոց երկրին բերի աւեր,
Նրա ուժից վեր է այլեւս, որ դարձրնէ քեզ բնաւեր·
Հայը հիմա աննկուն է, անպարտելի, քաջ ու արի,
Տէրն է իր վեհ հայրենիքի ու պահակը իր մայր երկրի:

Հայրենադարձ հայի նման կրկին բոյնդ բեր Հայաստան
Անուշ երգիր ու դայլայլիր հայոց երկրի երգչի նման·
Այժմ ետ դարձիր քո ձագերով, էլ մի մնայ դու տարագիր,
Չքնաղ երկիր Հայաստանը միշտ կը մնայ երգի երկիր:

Խ. Տ. Վ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐԱԿԵՐՏ ՎԱՆՔԵՐԸ

Բարձունքներում խորախորհուրդ, անհունններումը երկնամերձ,
Դարերի հետ կառուցել են հայ վանքերը վեհ բարձրաբերձ.
Շանթ, որոնք տարերային իրենց ուժով մեծադղորդ,
Ջնջեցին որմերն ամուր ու հոյակապ վիմով խրոխտ:

Հաւատն անձայր սուրբ է եղել, վեհ ամրակուռ ու անսասան,
Աստուածասէր ազգ չի եղել, ողջ աշխարհում հայի նման.
Ու քարակերտ սուրբ վանքերը վկաներն են Հայաստանում,
Որ Աստուծուն այս աշխարհում ամենից շատ հայն է սիրում:

Ո՞վ կառուցեց հնադարեան կոթողները այդ հոյակերտ,
Ո՞վ, որտեղի՞ց, կամ ոնց բերեց քարերը կարծր, քարերը սերտ:
Ցածերիցը ո՞նց են տարել մինչև բարձունքն այն բարձրաբերձ,
Ոնց են միմեանց վրայ դարսել,դարձել կոթող սէգ,երկնամերձ:

Ու խորհում են խոր յուզումով այցելուները այլազան,
Ո՞նց են կերտել ու կառուցել ուխտատեղերն այն սրբազան,
Ու կառուցող հայ ազգը քաջ քանի՞ հազար զոհ է տուել,
Մինչեւ մի վանք, մի ուխտատեղ, մի յուշարձան է կառուցել:

Ու քարակերտ կամարները այնքան ողորկ, գողտրիկ ու նուրբ,
Ուխտաւորին հիացնում են իրենց շքեղ կառոյցով սուրբ.
Ու ամեն մի հայ ուխտաւոր, երբ մտել է որեւէ վանք,
Խորհրդաւոր կառոյցներն այն բերել են խոր նրան բերկրանք:

Ամրակուռ սուրբ տաճարները՝ սրբատեղերն այն ահարկու,
Երբ դիտում է աստուածասէր հայ ուխտաւորն երկրպագու,
Զգաստացած, խոր յուզումով նա խորհում է խորհուրդ խորին,
Թէ Տէրն ինչպէ՞ս շռայլել է այնքան եռանդ ու կամք հային:

Խ. Տ. Վ.

## ԱԶԳ ԻՄ ՊԱՏԻԱԿԱՆ

Սիրում եմ ես քեզ, քո անցած ուղին, Ազգ իմ պատուական,
Դու կաս, կը մնաս, կստեղծագործես, Ազգ նուիրական.
Ընթացած ճամբին քո միշտ տարածուած կապանք ու շղթայ,
Եւ դու մարտնչել, փշրել, խորտակել, անցել ես անահ,

Դու չես սոսկացել վագր ու առիւծից, բորենուց գազան,
Ջարին միշտ յաղթել ու ընթացել ես ուղիղ սրբազան,
Փշրել ես դաժան, բիրտ արգելքներ ու ընթացել առաջ,
Ոսոխըդ ցնդել՝ երբ նկատել է կեցուածքը քո քաջ,

Դու խաղաղութեան հետեւորդն եղար, կռիւն ատեցիր,
Սերնդից սերունդ վեհ խաղաղութիւն միշտ քարոզեցիր,
Բայց երբ բորբոքեց զայրոյթդ արդար՝ չարը դառնածին,
Սուրդ ձեռք առար ու խորտակեցիր նրա չար հոգին:

Արդարութիւնը միշտ պահպանեցիր, մղեցիր պայքար,
Բայց այդ չցանկաց քո նենգ թշնամու սիրտը չար ու քար,
Հայ ստեղծագործ, շինարար ոգուդ ոսոխդ անարժան,
Ատեց, եւ ուզեց քեզ միշտ խանգարել, Ազգ իմ սիրական:

Ու ամեն անգամ, երբ ծաղկեցրիր երկիրդ շքնաղ,
Այրեց արւեստդ, աւերեց գործդ՝ թշնամիդ ճիւաղ.
Դու կառուցեցիր աւերուածները կրկին ու կրկին,
Աշխարհն հիացաւ, երբ խոր ըմբռնեց հայիդ քաջ հոգին:

Դրախտ է դարձել այժմ Հայաստանը, հայ ձեռքով արի,
Աւելանում են գործարանները տարի առ տարի,
Գիտնականները ողջ երկրների գալիս են այցի,
Ու հիացմունքով գովք են յօրինում հային խելացի:

Խ. Տ. Վ.

## ԵՐԿԻՐ ԻՄ ՉՔՆԱՂ

Ես կեանք եմ առել քո սուրբ հողից դուրս, Երկիր իմ չքնաղ,
Քո հուր կարօտը սիրտս է այրել, այրել է դեռ վաղ,
Հեռու եմ ապրել, պանդուխտ անցաւ իմ կեանքը դառնագին,
Բայց սիրտս յաւէտ քեզ է որոնել, Երկիր իմ անգին։

Քո հրեշտակային հեքիաթներն եմ լսել ու հրճուել,
Քո դիւցազների քաջութիւնները՝ սիրտս է գրաւել,
Բանաստեղծներիդ անգին խօսքերով դիւթուել եմ, գերուել,
Դէպի քեզ գալու, քեզնով ապրելու օրն եմ երազել։

Շատ պօէտներ են գովքդ յօրինել խօսքերով վսեմ,
Ասել են՝ թէ դու Տիրոջ մշակած դրախտն ես Եդեմ․
Երկինքդ ծիծղուն, օդըդ ջինջ, մաքուր, ջուրդ պարզ, յստակ,
Լեռներդ հպարտ, գետերդ վարար, ծովերդ անտակ։

Բայց երբ ես այցի եկայ ու տեսայ, Երկիր իմ օծեալ,
Քո մասին ինչ որ գրել են, երգել, դեռ քիչ է դարձեալ․
Դու արժանի ես, հրեշտակները երգչախումբ կազմեն,
Սրբազան ձայնով Մասիսիդ վերեւ գովքդ գեղգեղեն։

Ուխտել եմ սակայն, որ պիտ կատարուի ուխտը իմ սրտիս,
Մէկը իմ դուռը բաղխի եւ ուրախ տայ ինձ աւետիս,
Ասի․— Դէհ վեր կաց, ժամդ լրացաւ, մտիր կարաւան,
Գնա՛ դէպի քո չքնաղ հայրենիք՝ *Ազա՛տ Հայաստան։*

Խ․ Տ․ Վ․

## ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

*Ամեն մարդու համար ամենից թանկագինն է իր հայրենիքը։ Մարդը շատ երջանիկ է երբ հայրենիք ունի, ծնւում մեծանում և ապրում է իր հայրենիքում, վայելում է իր հարազատ երկրի բարիքը և իր հայրենիքի կառուցման գործին մի աղիւս էլ ինքն է դնում ու նրա վերելքի ովկիանոսին իր կաթիլն է խառնում։ Մեծ ցաւ է մարդու համար, երբ ինքը հայրենիք ունի, բայց ուրիշ երկրում է աշխարհ գալիս, ապրում է իր հայրենիքից հեռու և նրա կարօտն է քաշում մինչև վերջ։ Երկրորդ կարգի մարդկանցից մէկն եմ ես։ Հէնց մանուկ օրից ես զգացի, որ երկիրը ուր ես ծնւել և ապրում եմ, իմ հայրենիքը չէ և ձայնակցեցի հայրենիքի կարօտը քաշող իմ ծնողների ու հարազատների հառաչանքներին։ Հայրենիքի ծով կարօտը սրտիս՝ կեանքս անցաւ միշտ տխուր ու թախծոտ։ Երկար ժամանակ էր, որ ցանկանում էի գոնէ մի անգամ, որպէս տուրիստ գնալ ու աչքով դիտել հայրենիքը, սակայն դա ես չէր յաջողւում և Իրանի նախկին սև ու բռնակալ ռեժիմը այդ ես մերժում էր։*

*Հայրենիքից հեռու ինձ մխիթարական մի առիթ կար միայն և դա այն էր, որ Իրանում ես ինձ նւիրեցի հայ մատաղ սերնդի կրթութեան ու դաստիարակման գործին։ 18 տարի ես ուսուցչական պաշտօն վարեցի հայոց ազգային դպրոցներում։ 18 տարուց յետոյ երբ հնարաւոր չեղաւ ինձ հայոց ազգային դպրոցներում պաշտօնավարել և իմ իղձը հայ մատաղ սերնդին կրթել ու դաստիարակելն էր միայն, ուստի չկարողացայ ձեռքերս ծալել կրծքիս ու նստել, այլ ձեռնարկեցի կրթական նախարարութիւնից*

արտօնութիւն առնել ու Թեհրանում մի դպրոց բացել, որի իրաւունքները ինձ պատկանէր։ Արտօնութիւն առնելու գործում ես հանդիպեցի շատ դժուարութիւնների ու պատճառաբանութիւնների, որոնց մեծ տանջանքներով հաղթեցի մի առ մի և ի վերջոյ առայ իմ նախաձեռնած դպրոցի արտօնագիրը, բացեցի իմ ուզած դպրոցը, ուր սովորեցին բազմաթիւ հայ երեխաներ, ես էլ ի բարձրագոյնս աշխատեցի լաւ հիմքի վրայ դնել այդ դպրոցի կրթական ու դաստիարակչական գործը։

Վերջապէս կատարուեց ցանկութիւնս և իրագործուեց տարիների երազս ու Հայաստան եղած քրոջս՝ Աշխէն Տէր Վրոյրեանի հրաւէրի հիման վրայ, երկար չարչարուելուց յետոյ, 1978 Թւի ամռանը՝ օգոստոս 16-ին ճանապարհուեցի դէպի հայրենիք։ Ինձ հետ էր նաև երկար տարիներ ազգային գործերում ծառայած հօրեղբօրս տղան՝ Սամսոն Քէշիշեանը, որին հրաւիրել էր Հայաստան եղած իր եղբայրը՝ Ռաթէոս Քէշիշեանը։

Թեհրանի երկաթուղու կայարանում էի։ Հասաւ այն պահը, երբ բոլորը պիտի տեղ գրաւէին գնացքում։ Ուժեղ խփում էր սրտիս զարկերակը։ Ու ինքս ինձ հարց էի տալիս՝ ի՞րօք հայրենիք եմ գնում, ի՞րօք կատարւում է երազս, ի՞րօք պիտի արժանանամ ոտք դնել իմ հայրենի սուրբ, մաքուր ու անբիծ հողի վրայ ու թէկուզ մի կարճ ժամանակով թափ տամ իմ վրայից 62 տարուայ պանդխտութեան դաժան ու անհաճելի փոշին։ Քիչ էր մնում գնացքի շարժուելուն, և ինչքան մօտենում էր այդ պահը, աւելի էր շատանում իմ սրտի տրոփիւնը։

Գնացքը շարժուեց։ Ի՞նչ երևակայութիւնների մէջ էի ես։ Գնում էի իմ հայրենի աշխարհը տեսնելու, նրա հռչակւած բնութիւնը դիտելու, նրա սրբութիւնները, տեսարժան վայրերը, լեռներն ու բլուրները, սիգապանծ Մասիսները, Արագածը, կապուտակ Սևանը, գետերը, հովիտները, արտերն ու այգիները, բնական գեղեցիկ անտառները, Թաւշեայ կանաչապատ դաշտերը, նորաշէն բաքանչելի գիւղերն ու քաղաքները, հանքային առողջարար ջրերը, ասֆալտապատ մաքուր խճուղիները իմ աչքով տեսնելու։ Այդ բոլորի մասին ես արդէն վաղուց էի կարդացել և գիտէի, սակայն սիրտս ինձ թելադրում էր գնալ, աչքով տեսնել և իրականը տեսնել։

Գնացքը հասաւ Իրանի սահմանը և կանգ առաւ այնտեղ։ Պիտի վագոնների տակի անիւները փոխէին և սովետական ռելսերին յարմարուող անիւներ կապէին գնացքի տակ։ Այդ գործողութիւնը տևեց չորս ժամ։ Այնտեղ, գնացքի վագոնի պատուհանից պարզ երևում էր մայր Արաքսը՝ Հայաստանի բոլոր գետերի թագուհին, իր հոյակապ յորձանքներով ու կոհակներով, հպարտ ու փարթամ։ Դէպի արևմուտքը նայող պատուհանից նրա գալու հոսանքը, դէպի արևելքը նայող պատուհանից նրա դէպի ծովը գնալու ընթացքն էի դիտում, մէկը միւսից հոյակապ ու հպարտ։ Ու ինքս ինձանից հարցնում եմ՝ սա՞ է հայ ժողովրդի դարաւոր ու պատմական Արաքը, որին այժմ աչքով տեսնում եմ իր ահռելի հոսանքով, որի մասին յօրինւած բազմաթիւ երգերը կարդացել ու երգել եմ միշտ և որին տեսնելու կարօտն էր նեղում ինձ։ Այլևս շատ չէր մնում որ մտնեմ Մայր Հայրենիքիս պաշտելի հողը, շնչեմ նրա մոգական ու կենսատու օդը, թարմանամ ու երիտասարդանամ և թէկուզ ժամանակաւոր վայելեմ իմ հարազատ երկրի հրապոյրը։

Վերջապէս գնացքը շարժուեց երեկոյեան ժամը 6-ին և Արաքսի կամուրջն անցնելով, մտաւ Մայր Հայաստանի պատմական Հին Ջուղան։ Այնտեղ էր Խորհրդային Ադրբեյջանի Մաքսատունը, ուր իջեցրին մեզ՝ մեր բոլոր ճամպրուկներով և մաքսատան սրահը տարան։ Խիստ ստուգումներ կատարեցին Հայաստան տանելիք մեր բոլոր

իրերը։ Դա կատարվեց շատ կոպտութեամբ և տևեց մինչև կէս գիշեր։ Գիշերվայ ժամի մէկին Բաքուից մի գնացք եկաւ մեզ Հայաստան տանելու։ Նախկինը գնացել էր։ Տեղաւորւեցինք այդ նոր գնացքում, որը կանգնած մնաց մի առ ժամանակ։ Յոգնած համբորդները քնեցին վագոններում։ Ես բնաւ չկարողացայ քնել, ամբողջ ժամանակը միտքս զբաղված էր Հայրենիքիս հետ։ Չգիտեմ ինչու ժամանակն այդքան երկար էր թւում ինձ ու այնքան անհամբեր էի դարձել ես։ Գնացքը շարժւեց գիշերվայ ժամի 2-ին և Հայոց Աշխարհի մայր հողը մտաւ լուսաբացին։ Ա՜հ, ինչպէս դողաց ու սարսռեց իմ ողջ էութիւնը և ցնցւեցի ամբողջ մարմնով։ Շատ տպաւորիչ էր այդ պահը ինձ համար։

Ես արդէն գտնւում էի մեր մայր հողի վրայ։ Կանգնել էի գնացքի պատուհանի առաջ ու դիտում էի Հայաստան աշխարհի դիւթող ու հրապուրող բնութիւնը։ Արարատեան դաշտի ընդհանուր տարածքի վրայ տարածուած էր շքեղ կանաչութիւնը։ Բոլորովին տարբեր էր Հայրենիքում իմ տեսած հրաշալի ու չքնաղ բնութեան տեսքը՝ թարմ, զով, կենսատու ու կանաչապատ։ Իմ ծնւած ու 62 տարի կեանքս անցկացրած երկրի ոչ մի կէտում ես չէի տեսել այդքան գեղեցկութիւն, այդքան գրաւչութիւն ու այդքան հրապոյր։ Կախարդւել էի ու չգիտէի որ կողմը նայեմ, որ կարողանամ բոլոր գեղեցկութիւնները դիտել, աւելի հրապուրւել, աւելի հմայւել ու ևս առաւել երջանիկ զգալ ինձ։ Աչքս ընկաւ Հայաստանի զոյգ Մասիսներին։ Նրանց երկնամերձ վեհ ու խրոխտ կերպարի առաջ հմայւել եմ, զերւել ու չգիտեմ կարո՞ղ եմ մարսել այդ բոլոր հիանալի ու փառապանծ գեղեցկութիւնները։ Դիտում եմ շարունակ, ագահացել եմ ու չեմ կարողանում յագենալ այդ չքնաղ տեսարանները նայելուց։

Գնացքը անցնում էր գիւղերի մօտով, սակայն այդ



գիւղերը նման չէին այն հողաշէն, փթած, խարխուլ, տձեւ ապրելու ամեն միջոցներից զուրկ և ամեն բոպէ փլելու վտանգին ենթակայ, չոր ու ցամաք գիւղ կոչւածներին, որոնց մինչև այդ տեսել էի ես։

Գնացքը կանգ առաւ Երևանի կայարանում, որտեղ պիտի իջնէինք և առաջին անգամ ես պիտի ոտք դնէի մայր հայրենիքի հողի վրայ։ Ուրախութիւնից ինքս ինձ կորցրել էի։ Իջանք գնացքից։ Ամեն ինչ ինձ համար նոր էր ու հետաքրքրական։ Ամբողջ ժողովուրդը հայ էր և բոլորը խօսում էին հայերէն։ Թէ համբորդութիւնից վերադարձողները, թէ նրանց դիմաւորողները հայեր էին, որոնք ողջագուրւում, համբուրւում էին միմեանց ու մէկ-մէկու առողջութիւնը հարցնում մաքուր հայերէնով։

Մեր հեռագիրը Թեհրանից չէր հասել և մեր հարազատները մեզ դիմաւորելու չէին եկել, սակայն Իրանից ներգաղթած մեր ազգականներից շատերն էին եկել մեր գնացքով եկած իրենց հարազատներին դիմաւորելու, որոնք ճանաչեցին և ջերմ վերաբերմունք ցոյց տւեցին հանդէպ մեզ։ Վարդանն էլ եկել էր Թեհրանից եկող իր հայրենադարձ քրոջը դիմաւորելու, բայց նրա քոյրը մեզ բերող գնացքով չէր եկել, նա յաջորդ շաբաթ պիտի գար։ Տեղեկանալով եղելութեանը, Վարդանը իր մեքենան մօտ բերեց, մեր ճամբրուկները նրա մէջ տեղաւորեց, մեզ էլ նստեցրեց և ճամբայ ընկաւ դէպի Զարենցաւան, ուր ապրում էր ինձ հրաւիրող քոյրս, եղբայրս, հօրեղբօրս տղան և ուրիշ մեր ազգականները՝ իրենց ընտանիքներով։

Հասանք Զարենցաւան։ Վարդանը ճանաչում էր քրոջս և գիտէր նրանց տան հասցէն։ Նա մեզ տարաւ ուղիղ նրանց տան մուտքի առաջ և մեքենան պահեց։ Քրոջս հարսը դռանը կանգնած էր։ Նա վազեց ներս, յայտնելու մեր գալու լուրը։ Մի վայրկեանում քոյրս, փեսաս իրենց զաւակներով հապճեպ դուրս թափւեցին մեզ դիմա-

ւորելու։ Մի րոպէ յուզմունքը տիրեց բոլորիս, ողջագուրւեցինք, համբոյրներ փոխանակելով։ Երկար տարիներ մեր հարազատներից հեռու, միմեանց կարօտը քաշելուց յետոյ շատ դուրալի և քաղցր էր այդ այցելութիւնը։ Տուն առաջնորդուեցինք։ Շատ գեղեցիկ էր պետութեան կողմից նրանց տրուած տունը՝ լրիւ լաւ յարմարութիւններով օժտուած և առողջապահական։ Ուրախութիւնը ընդհանրական էր։

Իմ Զարենցաւան գնալու լուրը շուտով տարածուեց և քիչ անց եղբայրս՝ Սեդրակը, հօրեղբօրս տղան՝ Ռաթէոսը իրենց զաւակներով և մեր մօտիկ բարեկամներն եկան ինձ տեսնելու։ Բոլորը մեզ մեղադրեցին թէ ինչու՞ նախապէս իրենց չեմ հեռագրել մեր գնալու օրը, որ իրենք գային Երևանի կայարանը մեզ դիմաւորելու։ Բայց ես Թեհրանի հեռագրատան անդորրագիրը ցոյց տալով իրենց հաստատեցի, որ մենք հեռագրել ենք, յանցանքը հեռագրատան անկանոն գործունէութեանն է եղել։

Գիշերը երկար նստեցինք։ Շատուոր էինք, բոլորս էլ ուրախ ու տրամադիր։ Մեր մօտ էին նաև Թեհրանի իմ շատ սիրելի ընկերներ՝ Ղուկաս Բաղրամեանը և Դաւիթ Յուդաղուլեանը, որոնք մի քանի տարի առաջ էին գաղթել և բնակութիւն հաստատել Հայաստանի Զարենցաւան քաղաքում։ Նրանք Իրան եղած ժամանակը ապրում էին Թեհրանի Հեշմաթիէ քաղաքամասում, ուր գտնւում էր իմ Թաբան դպրոցը և նրանց երեխաները սովորում էին այդ դպրոցում։ Ընկերներ Ղուկասը և Դաւիթը նոյն դպրոցի հոգաբարձութեան անդամներ էին և տարիներ իմ կողքին շատ օգտակար և զոհաբերող աշխատանքներ կատարեցին Թաբան դպրոցի նկատմամբ և ես բնաւ չեմ կարող մոռանալ նրանց այն անկեղծ և ազգօգուտ ծառայութիւնները դպրոցին։ Նրանք վերին աստիճանի գոհ էին իրենց վիճակից և շատ երախտագիտութեամբ էին արտայայտւում ու



բարձր գնահատում Հայաստանի պետութեան այն մեծ հոգատարութիւնից և դէպ հայրենադարձներին ցոյց տուած սրտցաւ վերաբերմունքից ու գուրգուրանքից և նրանց լրիւ կարիքները հոգալու տեսակէտից։ Նրանց երեխաները Հայաստանում լրացրել էին իրենց ուսման պակասը և ստացել էին համալսարանային կրթութիւն։ Որքան ես տեղեկացայ Ղուկասի տղան՝ Վարուժը, որ շատ ընդունակ մի երեխայ էր, կայծի ժամացոյցի մի նոր ձևի գիւտարարութիւն էր արել և շատ գնահատուել էր համալսարանի կողմից։ Հայաստանից և իր իշխանութիւնից կատարելապէս գոհ էին իմ ամեն հարազատները։

Գիշերը հանգիստ քնեցի իմ մայր հողի վրայ։

×××

Միւս օրը դիտելու ելանք Զարենցաւան նորաշէն քաղաքը։ Շատ գեղեցիկ է, փառաշուք, հայի յատուկ ճարտարապետական ձիրքով ու ոճով կառուցուած այդ քաղաքը։ Մեծ մասամբ հինգ յարկանի և լրիւ միանման են քաղաքի շէնքերը և հայ երկրին յատուկ տուֆ քարերով երեսպատուած։ Շէնքերի արտաքին տեսքի հիանալի շքեղութիւնը խիստ գրաւում է մարդու ուշադրութիւնը. Արդի արշիթէքթի կատարեալ առողջապահական օրէնքներով իւրաքանչիւր շէնքում ապրում են 30 ընտանիք։ Վերջին տարիների կառուցուած շէնքերը աւելի բազմայարկ են, որոնցում ապրողները վերելակով են ել ու մուտ անում։ Բոլոր շէնքերը բաժանուած և կառուցուած են ահագին տարածութեամբ միմեանցից հեռու։ Ոչ մի շէնքի շուքը միւս շէնքի արևի առաջը չի բռնում։ Շէնքերի միջի տարածութիւնների մօտ 30 տոկոսը ասֆալտապատ խճուղիների, իսկ 70 տոկոսը ծառերի, ծաղիկների և կանաչ մարգերով տարածուած հանրային պարտէզների են յատկացուած։

Քաղաքը թաղամասերի է բաժանուած և իւրաքանչիւր թաղ ունի երեխաների համար մեծ հրապարակ, լի

խաղալու ամէն յարմարութիւններով։ Ամէն թաղ ունի իր մանկապարտէզ և դպրոցը՝ տարրական և միջնակարգի լրիւ բաժիններով։ Հանրային պարտէզներում, ծառերի շուաքների տակ նստարաններ կան դրւած, տարէց մարդկանց ու ծերունիների նստելու և իրենց ժամանակը այդ ծաղկաստաններում անց կացնելու կամ գիրք առած՝ ընթերցանութեամբ զբաղւելու համար։ Քաղաքի կենտրոնում գոյութիւն ունի մի մեծ լողաւազան, լիքը պարզ ջրով, դպրոցական երեխաների լողալու համար և դա մեծ զւարճութիւն ու հրճւանք է պատճառում երեխաներին։

Քաղաքի իւրաքանչիւր թաղում գոյութիւն ունի մի ընդարձակ սրահ, յատուկ նրա համար, որ եթէ մէկը ուրախութեան կամ տխրութեան մի հաւաքոյթ է ուզում կազմակերպել ու հացկերոյթ տալ, ամէն հնարաւորութիւն ունեցող այդ սրահների գոյութեան միջոցով կարողանայ իր նպատակը գործադրել։

Իւրաքանչիւր թաղ ունի իր ուտելիքի վաճառատեղին կամ այլ բառով՝ իր սուփերմարքեթը, լի ամէն բարիքներով, առատ և չափազանց մաքուր։ Չկայ մի վաճառատեղի Հայաստանում, որ որևէ ուտելիք չգտնւի։ Իւրաքանչիւր վաճառատեղի գրաւում է որևէ շէնքի առաջին յարկը՝ վաճառատեղիի յատուկ յատակագծով՝ մեծ, լուսաւոր ու շքեղ։ Որոշ վաճառատեղի իր մէջ ունի մի աւազան, որի մէջ լողում են մեծ ձկներ և եթէ մէկը սառեցրած ձուկ չի ցանկանում գնել, վաճառորդը աւազանից հանում է կենդանի ձուկը և վաճառում նրան։ Զարենցաւանում, կամ ընդհանրապէս Հայաստանում չկան միջին արևելեան երկրների նման ամէն խճուղիների և փողոցների վրայ գոյութիւն ունեցող անկարգ ու բաժանբաժան փոքր ու կեղտոտ խանութներ, իրենց ուտելիքներով և աղէտ վաճառորդներով։

Զարենցաւանում գոյութիւն ունի իր հիւանդանոցը՝ արդիական լրիւ յարմարութիւններով ու հիւանդներին պառկացնելու մաքուր մահճակալներով։ բժշկութիւնը լրիւ ձրի է ամբողջ Հայաստանում։ Հիւանդը բժշկական քննութեան ենթարկւելուց և բժշկի ախտաճանաչումից ու գատորոշումից յետոյ, եթէ ծանր հիւանդ չէ և կարող է ոտքի վրայ բուժւել, դեղ է տրւում նրան և գործելուց զերծ կացուցւում քանի դեռ չի բուժւել կատարելապէս։ Իսկ այն հիւանդը, որի հիւանդութիւնը ծանր է նկատւում, բժիշկը նրան պառկեցնում է հիւանդանոցում և նա պիտի պառկէ ու հանգստանայ մինչև կատարեալ բուժւի, կանոնաւոր խնամքի ու հոգածութեան ներքոյ։ Տուրիստ գնացող օտարականներն էս հիւանդանալու դէպքում օգտւում են բժըշկական նոյն օրէնքից։

Զարենցաւանը շրջելով հասանք մի մեծ ծառաստանի, լի ամէն տեսակ ծառերով։ Շատ մեծ ու ընդարձակ էր այդ ծառաստանը և յարմար զբօսավայր Զարենցաւանի բոլոր բնակչութեան համար։ Ասֆալտապատ լայն խճուղիներ կան ծառաստանի ամէն կողմերը գնալու համար։ Մեծմեծ հրապարակներ կան այնտեղ և ամէն տեղ նստարան է դրւած նստելու և հանգստանալու համար։ Փոքրերի հրապարակն աւելի մեծ և առանձին է՝ լի խաղալու ամէն յարմարութիւններով։ Հայաստանի բոլոր բուլւարների նըման Զարենցաւանի այս մեծ բուլւարն էս ունի իր ամէնամեծ հրապարակը։ Գարնանը բնութեան կանաչելու և ծառ ու ծաղկի զարթնելու և զարդարւելու հետ նորանում և ծաղկում է նաև Հայաստանի ժողովրդի կեանքը։ Զարենցաւանի այդ մեծ հրապարակում և առհասարակ Հայաստանի բոլոր մեծ հրապարակներում երեկոյեան զով ժամանակներում գեղարւեստի ծրագիրներ են գործադրւում, քաղրահնչիւն երաժշտութեան հետ հայկական քաղցր երգեր են երգւում և խմբական հիանալի պարերի կատարումներ են տեղի ունենում՝ ներկաներին ուրախ տրամադրութիւն

և հոգեկան առատ սնունդ պարգևելով։ Չարենցաւանի բուլւարի այդ մեծ հրապարակում է դրուած հայ մեծ տաղանդաւոր բանաստեղծ՝ Եղիշէ Չարենցի արձանը։

×××

Ինձ շատ հետաքրքրում էր Երևանը տեսնելը։ Հայաստան գնալու 3-րդ օրը ինձ յաջողւեց այդ, եղբօրս և քրոջս տղաների ուղեկցութեամբ։ Շատ գեղեցիկ ու հիանալի քաղաք է Երևանը։ Հայ ժողովուրդը կերտել է իր չքնաղ երկրի համար մի հիանալի մայրաքաղաք։ Մէկը միւսին գերազանցում է բազմայարկ և ուշագրաւ իւրաքանչիւր շինութիւն։ Ագահօրէն դիտում ու զննում էի առաջս եկող այն հրաշակերտ, հմայող և դէպի իրեն քաշող իւրաքանչիւր ստեղծագործութիւն։ Ամեն տեղ վիթխարի պերճութիւն, չքեղութիւն, կերտուածք ու յօրինուածք, որոնց հրաշագործութիւն կարելի է համարել։ Ամեն տեղ բուլւարներ, պուրակներ, փառաւոր զբօսապարտէզներ, ծառաստաններ, վայելուչ հրապարակներ ու կանաչ մարգապատ տարածութիւններ, որոնցից իւրաքանչիւրը կրում է մի հայ բանաստեղծի, գիտնականի, մեծ գրողի կամ մի անւանի դիւցազնի անունը կենտրոնում մեծ պատւանդանի վրայ կանգնեցրած պատկան անձի չքեղ արձանը։ Ամեն տեղ չքնաղակերտ յուշարձաններ, որոնք հմայում և անշարժութեան են ենթարկում դիտողին, որ աւելի լաւ զննի, ուսումնասիրի ու հաճոյք ստանայ իրենց այդ սքանչելի կերտուածքից, որոնց ստեղծել է հայ հնարագէտ վարպետն ու իր մատներից աղամանդ թափող ճարտարապետը։

Շատ գեղեցիկ են Երևանի խճուղիները։ Ընդհանուր առմամբ սալահատակւած կամ ասֆալտապատւած, մաքուր, հարթ ու հաւասար։ Խճուղիների մեծ մասը լայն են ու ընդարձակ։ Երկու կողմը լայն մայթերի և նրանց միջի մեքենագնաց լայն ուղիների մէջ գոյութիւն ունեն



գեղեցիկ ծառուտներ, որոնց ստւերի տակ ցանւած են կանաչ մարգեր և սիրուն ծաղիկներ։ Ոչ մի խճողում չկայ փողոցներում կամ գլխաւոր խճուղիներում։

Ողջ Երևանը ինքնին մի հոյակապ պարտէզ է ներկայացնում՝ իր մէջ ունենալով արշիթէքթի լրիւ օրէնքներով կառուցւած հսկայ շինարարութիւններ, հիմնարկութիւններ և մայրաքաղաքին պէտք եղած ամեն հաստատութիւններ։ Երևանում գոյութիւն ունեն բազմաթիւ զբօսապարտէզներ ու ծառաստաններ, որոնց թագուհին ու պետն է վիթխարի ու Եդեմ դրախտը ներկայացնող գեղատեսիլ Ազատութեան Այգին, որի ամեն կողմը տանող խճուղիները, աւազաններն ու հսկայ խորհրդաւոր ծառերը դիտողին տանում են այլ աշխարհ, մոգական ու կախարդական աշխարհ, դէպի լի ապրումներ, որոնք փոխում են մարդու տրամադրութիւնը և մարդը հոգեպէս բաւարարւած ուզում է խօսել չգիտես ում հետ, երկնայինների հետ, Աստծու հետ։ Այգու մի կետում, որտեղից երևում է ողջ Երևանը, մի մեծ ու հոյակապ պատւանդանի վրայ կանգնած է Մայր Հայաստանը խորհրդանշող մի գեղեցիկ յուշարձան։ Այդ արձանը լրիւ ներկայացնում է հայի գիտակից ու զաւակի հոգը քաշող սքանչելի մօր կերպարը։ Այդ խորհրդաւոր արձանը իր կանացի պարթև հասակով կանգնած, աջ ձեռքով թուրը բռնած, թրի ծայրը ձախ ձեռքի ափը դրած ու թուրը հորիզոնական ձևով իր կրծքի վրայ պահած՝ մի մոգական ստեղծագործութիւն է, որին դիտող հայը զգում է թէ ով է ինքը, ով է հայը, ով է հայ մայրը և որքան մեծ է ինքը, երբ հայի զաւակ է ու որտեղ կհասնէր հայը, եթէ իրեն չխանգարէին չար թշնամիները։ Իսկ պատւանդանը, որի վրայ կանգնած է արձանը, մի գեղեցիկ թանգարան է, որ դիտողին հիացմունք է պատճառում։

Երևանի հրաշագործութիւնները դիտելով, ցանկա-

ցանք տեսնել Եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած ու հայ բիւրաւոր նահատակների յիշատակը յաւերժացնող հոյակապ յուշարձանները, որ կերտուած է մայրաքաղաքի կենտրոնական մասում, մի ընդարձակ լեռնահատուածի՝ Ծիծեռնակաբերդի վրայ, որի ստորին մասով անցնում է Հրազդան գեղեցիկ ու պատմական գետը։ Այդ լեռնահատուածը տիրաբար իշխում է մայրաքաղաքի վրայ և նրա գագաթից երևում է ողջ Երևանը և Արարատեան դաշտը իր բազմաթիւ կառոյցներով։ Այդ լեռնահատուածի ամենաբարձր գագաթի մի ընդարձակ հարթութեան վրայ է կառուցուած յուշարձանը։

Հայ հանճարեղ ու հայրին յատուկ շնորհուած ձիրք ու տաղանդի տէր և արուեստի գերագոյն վարպետ ճարտարապետը միայն կարող է կերտել այդպէս գլուխ գործոց կոթողներ։ Յուշարձանը երկու մասի է բաժանուած։ Այնտեղ վեր է միտում մօտ 40 մետրի բարձրութեամբ բուրգաձև մի կոթող։ Այդ անմեղ կերտուածքը նայում է լազուր երկինքին ու խօսում է երկնայինների հետ և մէկ ու կէս միլիոն հայ զոհերի արիւնի արդար բողոքն է ներկայացնում ու եղեռնող մարդակերպ ցեղասպան հրէշին իր պատիժը կրելու հատուցումն է պահանջում։ Միւս մասը մի բոլորաձև, բաց սրահ է, գետնի հարթ մակերևոյթից ցածր՝ շրջապատուած 12 մոյթերով։ Մոյթերի միջև եղած բացուածքներում աստիճաններ կան, որոնք տանում են ցածրիկ սրահը, որի կենտրոնում վառւում է հաւերժական կրակը։ Մոյթերը խոնարհուած են դէպի սրահը ու թւում է թէ դրանք արթուն և հերոս պահակներ են, որոնք հսկում և անդորր ու ապահով պահում են ցածրիկ սրահը և իր մշտնջենական կրակը։

Ամբողջ լեռնահատուածը՝ գագաթից մինչև ստորին մասերը ծածկուած է բնական ծառերով, կանաչութիւններով ու ծաղիկներով, ի բացառեալ գեղեցիկ սրբատաշ քարերով



կառուցուած այն հրաշալի աստիճանները, որ ցածրից տանում են գագաթը՝ դէպի յուշարձանը։

Նորաձև մի կառուցուածք է նաև Երևանում Երիտասարդութեան պալատը և նրա աննախընթացութիւնն ու աննմանութիւնը անվիճելի է։ Հայ հանճարեղ ճարտարապետը կառուցելով այդ հոյակապ պալատը, ուզեց ապացուցել աշխարհին, որ շինարարութեան աշխարհում ինչպիսի հրաշագործութիւն կարող է անել ինքը։

Երևանում շրջելով ու մոգական հրաշալիքները մէկ-մէկ դիտելով հասանք մի ընդարձակ ու հոյակապ 4-յարկեայ շինութեան, որ մեծ վաճառատեղին է Երևանի, որ իրենց բառով ունիվերմակ է կոչւում։ Բացառիկ է այդ վեհաշուք շինութեան ճարտարապետական և արշիթեքթի կատարեալ ստեղծագործութեան ոճը։ Թւում է միայն հայ ճարտարապետը կարող է կառուցել այդպիսի մի շքեղ վաճառատեղի։ Ես մինչև այդ այդպիսի մեծ և առատ վաճառատեղի չէի տեսել։ Այդ շէնքի բոլոր յարկաբաժինները լեցուն էր ամենաընտիր ապրանքներով։ Ելեկտրական բոլոր ապրանքներն ու պիտոյքները, ամեն կարգի տղամարդու և կանացի հագուստները, տնային ամեն տեսակի ապրանքներն ու կահ-կարասիները, կանացի ամեն տեսակի զարդեղէններն ու շպարուելու միջոցները, լուքս ապրանքներն ու ամեն տեսակի ընտիր կտորեղէնները, գեղեցիկ շրջանակներն ու յուշանուէրները, երեխայական խաղալիքները ու գրենական պիտոյքները առանձին-առանձին բաժիններում վաճառւում են շատ շնորհալի և կիրթ վաճառորդների միջոցով, ուր առևտուրի տաք եռուզեռ կար և վաճառատեղին լիքն էր ուրախ գնորդներով։ Այնտեղ նկատւում էին քիւրդ, թուրք և ուրիշ այլազգիներ իրենց հագուստի տարբեր տարազներով՝ ուրախ ու տրամադիր։

Երևանում գոյութիւն ունեն բաւականին ուրիշ վաճառատեղիներ, լի ամեն կարգի ապրանքներով և սու-

թական ու կայուն կամքն ու բարի ջանասիրութիւնը։

Հասանք պարզ, ծիծղուն, կապույտ ու աննման Սևանին։ Ինչքա՜ն մեծ խորհուրդ է յայտնաբերում այդ մոգական ու դիւթող ծովը։ Պրն. Դէյրմինջեանի կարգադրութեամբ մեքենան կանգ առաւ Թերակղզու ստորին մասում։ Մենք իջանք ու բարձրացանք կղզու բարձունքը, այնտեղ ուր գոյութիւն ունեն հնում կառուցւած երկու քարակերտ եկեղեցիներ։ Մտանք եկեղեցիները, ուր լեցուն էին ամէն կողմից եկած տուրիստներ և Հայաստանի հեռու տեղերից եկող ուխտաւորներ։ Երկու եկեղեցում էլ պատմութեանը տեղեակ բացատրող մարդ կայ և իւրաքանչիւրը շատ յստակ պատմում է այցելուներին կղզու լրիւ պատմութիւնը, եկեղեցիների կառուցման թւականը, նրանց կառուցող անձնաւորութիւնների անունները և կղզում տեղի ունեցած անցքերն ու դէպքերը։ Իր սքանչելի տեսքով այցելուին հիացմունք է պատճառում կղզու եկեղեցական համալիրը։ Ցուցարձանախմբի Ս. Առաքելոց եկեղեցին կառուցել է 874 թւին, Մաշտոց Բ. կաթողիկոս Եղիվարդեցու և Սիւնեաց Մարիամ տիկնոջ նպաստով և հովանաւորութեամբ։ Եկեղեցու մօտակայքում, հնում բնակելի շէնքեր են գոյութիւն ունեցել, որոնք այժմ փլած վիճակում են և նրանց հետքը մնացել ու պարզ երևում է կղզում։ Բարձրացանք կղզու ամենաբարձր մասը, որտեղից փերուզեայ ծովը ցոյց է տալիս իր ամբողջ շքեղութիւնը։ Ես այնտեղ զգացի հարազատ երկիր ունենալու երանութիւնը լի ու լի։

Մեր հիւրընկալի թելադրութեամբ մենք կրկին մեքենայ նստեցինք և ուղևորւեցինք ծովի հիւսիսային մասով դէպի Գեղամա սարը։ Ճանապարհին հասանք Ախթամարի գեղասքանչ արձանին, որը իսկապէս ներկայացնում է հայ գեղեցիկ, մաքուր ու անմեղ աղջկայ կերպարը, վառող կրակամանը ձեռքը՝ բարձր պահած, գիշերւայ պահուն ծովի վրայ լողացող, մոլորւած եարին փրկելու



նպատակով։

Մեքենան գնալով կանգ առաւ սարի մօտ, Սևանի մի անկիւնում, հէնց ծովին կպած մի շքեղ ու արդիական հիւրանոցի առաջ։ Այնտեղ մեր հիւրընկալը մեզ առաջնորդեց հիւրանոց, ուր լւացւեցինք ու նստելու տեղ գրաւեցինք։ Քիչ անց, մեր սեղանի վրայ շարւեցին բազմատեսակ համադամ կերակուրներ և մի քանի տեսակի խմիչքներ։ Լաւ տրամադրութիւններով եղան բարեմաղթութիւններ։ Այնտեղ մենք ճաշակեցինք Սևանի անւանի իշխան ձուկը։ Այն օրը ևս մեզ շատ լաւ անցաւ, կատարեալ երջանկութիւն վայելեցինք Սևանում և երեկոյեան անսահման գոհ և քաղցր յուշերով վերադարձանք Երևան։

× × ×

Շատ դժւար էր Իրանից Հայաստան գնալը։ Իրանի հին, սև ու դաժան ռեժիմը և բռնապետական խաւար ու ահաւոր իրաւակարգը թոյլ չէր տալիս Հայաստան գնալու, մանաւանդ եթէ գնալ ցանկացող անձը երկրում պետութեան հետ կապւած մի գործ ունէր։։

Տարիներ առաջ Հայաստանի կրթական նախարարութիւնը իրանահայ մի խումբ ուսուցիչների, որոնց թւում նաև ինձ, հրաւիրեց Հայաստան գնալու, այնտեղ կայանալիք կրթական ձեռնարկումներին մասնակցելու և ծանօթանալու դպրոցական դրւածքին։ Սակայն Իրանի պետութիւնը մեզ երկար չարչարելուց և այս ու այն կողմ ուղարկելուց յետոյ, մերժեց և ոչ մէկիս թոյլ չտւեց Հայաստան գնալ։ Այն ինչ սփիւռքի բոլոր հայ գաղթօջախներում էլ այդպէս հրաւէրներ լինում են ամէն տարի, ամէն տեղ էլ յարգւում է այդ հրաւէրը և որևէ երկիր չի արգելում այդպիսիների մուտքը Հայաստան։

14-տարի առաջ, երբ աղջիկս՝ Արփիկ Տէր Վրոյրեանը Թեհրանի հայոց «Մարիամեան» դպրոցում վերջա-

փերմարքէթներ՝ առատ կենսամթերքներով։ Այդ վաճառատեղիներից ոմանք գրաւում են որևէ շէնքի լրիւ ցածրի յարկաբաժինը, որի կառուցուածքի ձևը յարմարեցուած ու սարքուած է միայն վաճառատեղիի համար։ Ոմանք էլ աւելի մեծ են և գրաւում են շէնքի լրիւ յարկաբաժինները, իհարկէ այն շէնքերի, որոնք յատուկ են և կառուցուել են միայն վաճառատեղիի համար։ Ամեն այդ վաճառատեղիներում էլ տիրում էր առևտուրի ջերմ եռուզեռ։

Երևանը կամ ընդհանրապէս Հայաստանը տեսարժան վայրեր շատ ունի եթէ տուրիստը կարողանայ դիտել ամենը։

×××

Երևանում ամենից առաջ ցանկացայ Սփիւռքահայութեան Մշակութային Կապի Կոմիտէի նախագահին՝ Գրն. Համազասպեանին տեսնել, մի բացիկ էլ Թեհրանից մոտս կար, այն ևս իրեն յանձնել։ Դա հնարաւոր չեղաւ, իր Անգլիա ճամբորդած լինելու պատճառով։ Երբ տեղեկացայ որ այդ հաստատութեան գլխաւոր քարտուղարը Գրն. Շաւարշ Ղուկասեանն էր, շատ ուրախացայ և շտապեցի իրեն տեսնելու։ Նա Թեհրանի Սովետական հիւպատոսարանում պաշտօն ունէր տարիներ առաջ և մենք մոտ ծանօթներ էինք այն ժամանակ։ Նա սիրով ընդունեց և ուրախացաւ ինձ տեսնելով։ Ես ևս փոխադարձաբար։ Չափազանց շնորհալի մի անձնաւորութիւն է նա, պարկեշտ, քաղաքավարի և վերին աստիճանի յարգալից։ Շատ լաւ վերաբերմունք է յայտնաբերում նա դէպի իւրաքանչիւր հայի, որ սփիւռքից հիւր կամ տուրիստ է գնում Հայաստան։ Սիրում է հարցազրոյց ունենալ սփիւռքահայի հետ, տեղեկանալ դուրսի մշակութային կեանքից, կրթական գործից, հայ երեխաների հայերէն սովորելու հնարաւորութիւններից և դրսում ապրող հայերի կեանքից։

Գրն. Ղուկասեանին ես այցելեցի կրկին ու կրկին։ Նրա



առաջնորդութեամբ տեսակցութիւն ու երկար խօսակցութիւն ունեցանք պրն. Մարտիրոսեանի հետ, որը այդ հաստատութեան նախագահի տեղակալն էր։ Շատ լաւ անձնաւորութիւն է նա։ Սփիւռքահայութեան Մշակութային Կապի Կոմիտէն մի քանի ամերիկահայ հիւրեր ունէր Սևան տանելու։ Գրն. Մարտիրոսեանը ինձ և Սամսոնին էլ հրաւիրեց մասնակցելու այդ հիւրասիրութեանը։ Մենք սիրով ընդունեցինք այդ հրաւէրը։

×××

Որոշուած օրը մենք ներկայ գտնուեցինք այն վայրը, որտեղից պիտի մեկնէինք Սևան։ Մեր հիւրընկալը Գրն. Դէյրմինջեանն էր։ Ճանապարհ ընկանք։ Սևան տանող ճանապարհին ևս շատ դիտելու բաներ կան։ Մեծ-մեծ տարածութեամբ խնձորի պարտէզներ կան, որոնց օրէնքով տնկուած ու մշակուած ծառերը բեռնաւորուած էին Հայաստանի հիւթեղ ու համեղ խնձորներով։ Նկատում էինք, որ երկրագործական բոլոր աշխատանքները կատարւում էին մեքենաներով։ Ճանապարհի ամբողջ երկարութեամբ, որտեղ ծառեր չէր եղել նախկինում՝ նոր ծառեր էին տնկել և այդ ծառերը ջրում էին ջրկիր մեքենաներով։ Հաճելի էր տեսնել հայ հերոս կանանց աշխատելը ճանապարհներում ու հանդերում։ Ինչպէս ամեն տեղ, Սևանի ճանապարհին ևս հանդիպում էինք արւեստի հանճարեղ վարպետների ստեղծած հրաշակերտ ու խորհրդաւոր յուշարձանների, որոնք հիացմունք են պատճառում դիտողին։ Ընդհանրապէս Հայաստանում կերտուած բոլոր յուշարձանները՝ նոր թէ հին, ներկայացնում են հայի ստեղծագործ ոգին, նրա կենսունակութիւնը, նրա արւեստագիտական և արւեստասիրական վեհ ու վսեմ ենթագիտակցութիւնը, նրա տոկունութիւնը և վերջապէս հայի չընկճւող, չյուսահատւող, ամեն տանջանքի դիմադրող քաջ ու արի և ընդմիշտ յաղ-

ցրեց իր միջնակարգը, ես չցանկացայ, որ իմ զաւակը գնար Եւրոպա կամ Ամերիկա իր բարձրագոյնը սովորելու, այլ ցանկացայ, որ նա գնար Հայաստան և այնտեղ վերջացնի իր բարձրագոյնը, մանաւանդ որ ինքն էլ վերին աստիճան ձգտում ունէր իր հայերէնը կատարելագործելու։ Հայաստանի իշխանութեան համաձայնութիւնն առնելուց յետոյ, աղջիկս Եւրոպայի ճանապարհով գնաց Հայաստան և այնտեղ վերջացրեց բանասիրութեան ճիւղը։ Սակայն Իրանի իշխանութիւնը այլեւս չթողեց վերադառնար Իրան, թէպէտ և նրա կարիքը Իրանում շատ կար։ Իրանի համալսարաններում 2 հայագիտական ամբիոն կայ և Արփիկը մի դասախօս կարող էր լինել այդ ամբիոններից մէկում։ Բարեբախտաբար, Հայաստանի համալսարանում Լիբանանահայ մի ուսանող՝ Րաֆֆի Գալայջեան անունով ամուսնանում է աղջկաս հետ և երկուսով գնում են Լիբանան ու հաստատւում այնտեղ։ Ես չեմ զղջացել, որովհետև աղջիկս լաւ հայերէն է սովորել և ուր էլ լինի, նա կարող է կատարել իր ազգօգուտ ծառայութիւնը իր ժողովրդին։

Երկար տարիներ սպասումից և մեծ նեղութիւններ կրելուց յետոյ երբ յաջողւել էր ինձ Հայաստան գնալ, ցանկանում էի նրա բոլոր տեսարժան վայրերը գնալ, պատմական բոլոր հնութիւնները տեսնել, նրա շինարարական, կրթական ու մշակութային յառաջադիմութիւններն ու վերելքը դիտել ու իմ Հայաստան լինելու մի րոպէից էլ օգտւել՝ միշտ նոր հրաշալիքներ տեսնելու ցանկութեամբ։ Պիտի շրջէի, պիտի տեսնէի ամեն մի սրբազան վայր, ամեն մի պատմական յուշարձան, որոնցից միայն Հայաստան կայ, որոնց հայ կուռ ձեռքն է միայն կարողացել կերտել, յօրինել և յաւերժ ապրելու ոգի պարգևել։ Ես Պրն. Ղուկասեանից խնդրում էի այդ գործում ինձ օգնել ու նա արաւ իր կարելին, բայց ես չյագեցայ դը-



րանով, միշտ ցանկանում էի աւելին տեսնել, աւելին գիտել։

×××

Ես քրոջս ցանկութիւն յայտնեցի Հայաստանի անւանի և պատմական Արագած լեռը գնալու։ Շուտով կատարւեց ցանկութիւնս։ Քոյրս, եղբայրս, հօրեղբօրս տղան՝ իրենց զաւակներով ու մօտիկ ազգականներով մի մեծ խումբ կազմած, ճաշն այնտեղ ուտելու պատրաստութեամբ ուղևորւեցինք դէպի Արագած։ Արևածագին էր այդ։ Հասանք նրա մեծ ու տարածւած ստորոտը։ Այնտեղ մենք մի քանի գիւղեր տեսանք, որոնց բնակչութիւնը ըստ երևոյթին զբաղւում է երկրագործութեամբ և խաշնարածութեամբ ու վայելում է այդ բարի և առատաձեռն լեռան բարիքները։ Այդ լեռը իր ստորին մասերից մինչև գագաթը ծածկւած է ծառերով և դալար, կանաչ խոտերով ու ծաղիկներով։ Նրա ամբողջ լանջերում բազմաթիւ ոչխարների հօտեր էին արածում և ուտում երբէք չվերջացող դալար խոտերը։ Գեղեցիկ է նրա գագաթը տանող ինժիներական օրէնքով գծւած ու մաքուր ասֆալտապատւած ճանապարհը և մեր մեքենաները հեշտութեամբ բարձրացան վերև։

Լեռը մի ընդհանուր մեծ ու տարածւած գագաթ ունի։ Այդ ընդարձակ գագաթի վրայ լեռը տեղ է տւել դէպի երկինք բարձրացած չորս ուրիշ գագաթների, որոնք շուրջբոլոր նստած են մեծ գագաթի վրայ ու իրենց կենտրոնում գոյացրել են մի գեղեցիկ ծովակ, ուր թափւում են չորս գագաթների ձեան ու իրենցից բխող աղբիւրների պարզ ու յստակ ջրերը։ Աշխարհի ամենաբարձր ծովակը կարելի է համարել այդ։ Մենք իջանք այդ ծովակի եզերքին, մի հարթ տեղ։ Այդ րոպէին ես ամենաերջանիկ մարդն էի համարում ինձ։ Հայոց Աշխարհի մեծ լեռան՝ վեհապանծ

Օ՜, մեծ է Շիրազը։ Հայրենասէր է նա։ Իր բոցաշունչ ստեղծագործութիւնների ուժով ու գողտրիկ արտայանելու ոճով նա կարողանում է գիւթել, կախարդել, ուրախացնել և միենոյն ժամանակ յուզել ունկնդրին ու չգիտես ուրախութեան թէ տխրութեան արցունքներ քամել նրա աչքերից։

Այնուհետև Մեծ Պօէտը իր շնորհակալական խօսքն ասելուց յետոյ, իր գնգուն ձայնով արտասանեց հայրենասիրական բազմաթիւ պարգևող իր քերթուածներից ու հայրենասիրութեան քանիսը, որոնք հայրենասիրութիւններից մի ստեղծութիւններից մի քանիսը, որոնք հայրենասիրունաստեղծութիւններից մի քանիսը, որոնք հայրենասիրական ժողովուրդին ուղղած լողին։ Ուսուցիչներ՝ Հայթիւնը աւելի են ամրացնում լողին։ Ուսուցիչներ՝ Հայկազ Միրզայեանը և Գուրգէն Աղաջանեանը իրենց լաւ ձայնով երգեցին մի քանի հայրենասիրական երգեր։ Եզան նով երգեցին մի քանի հայրենասիրական երգեր։ Եգան բաժակաճառեր և արտասանութիւններ, խմեցին հայ մըշակոյթը ծաղկեցնողների ու հայրենիքը կառուցողների կենացները։ Շատ լաւ անցաւ բոլորիս ու քաղցր յուշեր մնացին ինձ այդ հրապուրող գիշերւանից։

×××

Մի գիշեր երբ Խոր Վիրապից տուն վերադարձայ, քոյրս ինձ տւեց մի բացիկ։ Կարդացի։ Յովհաննէս Գրիգորեանն էր ինձ գրել։ Իսկոյն մտաբերեցի գրողին։ Նա իմ ուսուցչութեան առաջին տարիներում սովորում էր ինձ մօտ, երբ ես պաշտօնավարում էի Բուրւարի գաւառի Սանգոֆիդ գիւղում։ Այն ժամանակ նա շատ ընդունակ և բարի երեխայ էր և ես շատ սիրում էի նրան։

1946 թւին երբ զանգւածային ներգաղթ սկսեց ու վտարանդի հայութեան առաջ դուռ բացւեց Հայաստան գնալու, Իրանահայութիւնը մի աննախընթաց ոգևորութեամբ ձգտեց Հայաստան գնալու։ Իրանի գաւառներից մեծ թւով հայեր ներգաղթեցին Հայաստան։ Շատ հայաբնակ գիւղեր ամբողջովին դատարկւեցին։ Պրն. Արշակ



Գրիգորեանը՝ Յովհաննէսի հայրն եւս որ այժմ բնակւած է Հայաստանի Աֆշար գիւղում և Հայաստանում նա յայտնի է իր տոհմական ծառով, ընտանիքով գաղթեց Հայաստան։ Յովհաննէսը Հայաստանում շարունակում է իր ուսումը և վերջացնում է բարձրագոյնի ինժիներական ճիւղը։ Նա լսել էր իմ Հայաստան լինելը, եկել էր ինձ տանելու ես տանը չէի եղել։ Նա այդ բացիկով օր ու ժամ էր որոշել ինձ տանը մնալու, որ նա կրկին գար ինձ տեսնելու։ Նա բացիկում գրել էր նաև իր հասցէն Երևանում։

Անչափ ուրախացայ։ Ես էլ էի ցանկանում նրան տեսնել։ Այլևս չհամբերեցի մինչև նրա որոշւած օրը, այլ հէնց վաղը, Սեդրակ եղբօրս հետ գնացի նրան տեսնելու։ Չեմ կարող նկարագրել թէ ինչ վիճակ ստեղծւեց ինձ, երբ տեսայ նրան։ Նա, փոքրիկ, թխլիկ ու աշխոյժ երեխայ, իմ աշակերտը, այժմ միջին տարիքի պատկառելի ու գեղադէմ մի ինժիներ։ Եսչ շատ երիտասարդ, կորովի ու եռանդուն, նրա ուսուցիչը, այժմ 60-ից անց, մազերս սպիտակած, ընկճւած, ու քայքայւած։ Ողջագուրւեցինք, համբոյրներ դրոշմեցինք միմեանց և յուզմունքից ահագին ժամանակ չկարողացանք խօսել։ Ապա սկսեցինք մէկմէկու վիճակից հարցնել։ Նրա տիկինը՝ Տիկ. Մարլէնը շատ յարգեց մեզ։ Նա շատ շնորհալի և կիրթ մի կին է։ Նրանք միայն մի քաղցրիկ երեխայ ունէին՝ Արամ անունով։ Ես ուրախացայ նրանց այդ քաղցր ընտանեկան կեանքը տեսնելով։ Երկար խօսեցինք, ապա ժամադրւելով միւս անգամւայ հանդիպման համար, թողեցինք իր տունը։

×××

Այնուհետև ես և Պրն. Յովհաննէսը չկարողացանք միմեանցից կտրւել։ Նրա հետ գնացինք հանրագիտարանի խմբագրատունը և նա ինձ ներկայացրեց Պրն. Արտակ Ոսկանեանին, որը հանրագիտարանի գլխաւոր խմբագրի,

Արագածի բարձրութեան վրայ էի, որի վսեմութեան փա-
ռաշուքութեան ու Թովչութեան մասին գրել, յօրինել ու
երգել են հայ գրողներն ու պօէտները՝ դարեր շարունակ։
Բառի բուն իմաստով ես ապրում էի երանութեան ու ցըն-
ծութեան բարձր գագաթնակէտին։ Ես 62 տարի օտար
երկրում ապրած ու անընդհատ ծանր ցաւեր քաշելուց
ընկճւած ու քայքայւած անձը չէի այդ օրը. Ես և ցան-
կացայ գրել, գովերգել այդ դիւթող լեռան վեհաշուքու-
թիւնը, հմայքը և անծայրածիր մեծութիւնը։
Շատուր էինք։ Մորթեցինք քրոջս բերած ոչխարը։
Շատ ուրախ խրախճանք կազմակերպւեց։ Կերանք, խմե-
ցինք հայոց հողից պատրաստւած բարիքը և մնացինք
մինչև ուշ երեկոյ։ Արագածը թողեցինք ուշ գիշերը, սիրտ
չէինք կտրում բաժանւել այդ դիւթող ու հմայող սարից։

×××

Ցանկութիւն ունէի տեսնել Հայաստանի տաղանդա-
ւոր ու հայրենասէր բանաստեղծ Յովհաննէս Շիրազին։
Քրոջս տղայի՝ Երւանդի հետ գնացինք նրան տեսնելու։
Մեզ հետ էր նաև Սամսոնը։ Իրեն հանդիպեցինք իր
գրասենեակից ոչ հեռու փողոցի մայթում։ Ես Շիրազին
չէի ճանաչում։ Երւանդը ճանաչում էր, նա մեզ ծանօ-
թացրեց մէկ-մէկու։ Հայրենասէր բանաստեղծը մեզ հրաւի-
րեց իր գրասենեակը և շատ սիրալիր վարւեց մեզ հետ։ Նա
հարցրեց Իրանահայ գաղութից, կրթական և մշակութային
գործից, հայերի կենցաղային վիճակից և ընդհանրապէս
Իրանի կացութիւնից։ Ես իմ գիտեցածի սահմաններում
պատմեցի և պատասխանեցի իր հարցումներին։ Նա իր
«Եօթնապատում» գրքից իւրաքանչիւրիս մի օրինակ նւի-
րեց։ Նա շատ գիտակից և համեստ մարդ է, ես շատ սիրեցի
նրան և խնդրեցի, որ մի գիշեր շնորհ անի մեզ մօտ
գալու։ Ժամադրւեցինք և որոշւած օրը քրոջս տղան գնաց



և նրան բերեց Զարենցական։

Այդ գիշեր քրոջս մեծ տղայի՝ Մինասի տունն էինք հրաւիրուած։ Շատուր էինք և նա մեծ ներողութիւն էր կրել մեզ լաւ յարգելու։ Թեհրանի իմ մանաւոր «Թաբան» դպրոցում պաշտօնավարած նախկին ուսուցիչներից, որոնք հայրենադարձի հանգամանքով արդէն տարիներ էր, որ Իրանից գաղթել և ապրում են Հայաստանում, մի քանի հոգի այդ գիշեր եկել էին ինձ տեսնելու։ Սեղանի բացման խօսքը եղաւ իմ մի բանաստեղծութիւնը, որ ձօնել էի մեծ Բանաստեղծին, որ արտասանեցի և այդ րոպէին իրեն յանձնեցի գրուածը։ Ահա այդ ձօնի տեքստը։

Շիրազ, դու հայոց Մեծդ բանաստեղծ, մեծասքանչ պօէտ,
Դու ժամանակի գերագոյն երգիչ, սիրուած առյաւէտ.
Դու հայրենիքիդ վեհագոյն զաւակ, այրուող իր ցաւով,
Ցերեկ թէ գիշեր, զարթուն թէ քնած՝ միշտ տարուած երգով:

Դու հերոսական մեծ հզօր ուժով ընդմիշտ յաղթական,
Անվերջ ձգտեցիր ներս տանել Մասիսն՝ վեհ, անապական.
Դու վեհ ես, հերոս, որքան որ վեհ են Սիսն ու Մասիսը,
Ու մենք-մենակ դու տարար քո տուն Մասիսն ու Սիսը:

Դարեր պիտ անցնեն, որ հայոց ազգը տայ մի հատ Շիրազ,
Ազգն աղօթում է, որ դու ողջ մնաս, այդ է իր երազ.
Երբ դու երգում ես հայոց ցաւերից, այդ մենակ դու չես,
Ամբողջ հայ ազգն է իր սրտի խորքից սերտ ձայնակցում քեզ:

Մեր ազգն հերոս է, չի մնայ տակը եւ ոչ մի ճնշման,
Վառ է ու յաւէտ վառ պիտի մնայ հայոց ապագան.
Ջենք թողնի մնան գերի մեր հողերն ու լեռները վէս,
Մի օր կը բերենք մեր պատկանելին մեր երկիրը ներս:

Դո՛ւ հերոս երգիչ, մեծըդ բանաստեղծ, Վահագնդ օրւայ,
Դու ստեղծւել ես քաջութիւն տալու ցեղիդ վեհագնեայ,
Երգդ տալիս է ոգի եւ աւիւն, Շիրազդ աննկուն,
Դու կաս, միշտ կապրես ու կը մեծարւես, մատաղ քո հոգուն:

գլխաւոր տեղակալն էր։ Պրն. Ոսկանեանը շատ հայրենասէր, ազգասէր, անձնուէր ու գործունեայ, երիտասարդ տարիքի կիրթ մի անձնաւորութիւն է։ Հէնց առաջին հանդիպումին նա ցոյց տուեց իր վերին աստիճանի ազնըւութիւնն ու վեհանձնութիւնը։ Նա հարցրեց իրանահայութեան կեանքից, հայոց դպրոցներում հայերէն սովորելու հնարաւորութիւններից, հայերի ազգային գործերում համագործակցութիւն ու միաբանութիւն ունենալուց, հայերի հայրենասիրութիւնից և նրանց հայրենադարձութեան ձըգտումներից, իմ և իրանահայ մտաւորականների ունեցած տպաւորութիւնները Հայաստանում հրատարակւող հանրագիտարանի նոյակապ գործից, Իրանի կառավարութեան դէպի հայերն ունեցած վերաբերմունքներից և այլն։ Ես իմ գիտեցածի սահմաններում աշխատեցի հնարաւորին չափ ճշգրիտ ու գոհացուցիչ պատասխաններ տալ իր հարցերին։ Բաւական նստելուց ու զրուցելուց յետոյ, երբ ցանկանում էինք թողնել իր գրասենեակը, նա մի ուրիշ ժամադրութիւն նշանակեց մեզ գալու ու տեսակցութիւն ունենալու Պրոֆեսոր Սիմոնեանի՝ Հանրագիտարանի գլխաւոր խմբագրերի հետ։

Ժամադրութեան համաձայն ես և Պրն. Գրիգորեանը կրկին գնացինք հանրագիտարանի խմբագրատունը, ուր Պրն. Ոսկանեանը մեզ առաջնորդեց Պրոֆ. Սիմոնեանի գրրասենեակը և ինձ ներկայացրեց Պրոֆեսորին։ Պրոֆ. Սիմոնեանն ես մի պատկառելի գիտնական է և արժանի է իր բարձր կոչումին։ Նա սիրով ընդունեց մեզ։ Այնտեղ ես նոյն խօսակցութիւններն ունեցանք, որ անցած անգամ ունեցանք Պրն. Ոսկանեանի հետ։ Ես աշխատեցի Իրանից և իրանահայութիւնից տեղեկութիւններ հաղորդել Պրոֆեսորին։ Խօսեցինք մեր գրաւած հողերի շուրջ։ Ես իմ չափազանց լաւ տպաւորութիւնները յայտնեցի Հայաստանի շինարարական ու կրթական բարձր վերելքի նկատմամբ։



Պրոֆ. Սիմոնեանի և Պրն. Ոսկանեանի կարգադրութեամբ, հանրագիտարանի տպւած իւրաքանչիւր հատորից մի օրինակ նուիրեց ինձ, խոստանալով մինչև վերջին տպւելիք հատորն ուղարկել, որի դիմաց յայտնեցի իմ խորին շնորհակալութիւնները։ Պրոֆ. Սիմոնեանին հրաժեշտ տալուց յետոյ, այլևս չկարողացայ հանդիպել, իսկ Պրն. Ոսկանեանին կրկին մի քանի անգամ հանդիպեցինք։ Նա ինձ և Պրն. Գրիգորեանին թէ՛ թատրոն և թէ՛ շարժանկար հրաւիրեց, երբ Հայաստանի մեծ գրող՝ Սերո Խանզադեանի գրած հայրենասիրական վէպը՝ «Մխիթար Սպարապետ»ը ժապաւէնի էր վերածել և առաջին անգամն էր ցուցադրըւում ռուսերէն լեզուով։

Պրն. Ոսկանեանի գրասենեակում ես և Պրն. Գրիգորեանը հանդիպեցինք և ծանօթացանք Ինժիներ Մարջանեանի հետ, որը Հայաստանի տեխնոլոգիացման գործում մեծ վաստակ ունի։ Նա հմուտ ճարտարապետ է և ծրագիր ունի Հայաստանի ամեն մի գիւղում գործարան հիմնել, Հայաստանի իշխանութեանը իրեն թիկունք ունենալով։ Նա Հայաստանի աշխարհահռչակ աստղագէտ Պրեգիդենտ Վիկտոր Համբարձումեանի մտերիմ անձնաւորութիւնն է։ Պրն. Ոսկանեանի ցանկութեամբ ժամադրութիւն որոշւեց, որ ճարտարապետի հետ գնայինք թէ՛ աստղադիտարանը դիտելու և թէ՛ Պրեզիդենտի հետ տեսակցութիւն ունենալու։ Որոշւած ժամկէտին Ինժիներ Մարջանեանը, Պրն. Ոսկանեանը, Պրն. Գրիգորեանը, ես և Սեդրակ եղբայրս ճանապարհ ընկանք դէպի աստղադիտարանը՝ Բիւրական։

Մի նոյակապ հիմնարկութիւն է Հայոց Աշխարհի աստղադիտարանը իր հսկայ սարքաւորումով։ Ֆրանսահայ մի խումբ տուրիստներ և մի խումբ ռուսեր ես եկել էին աստղադիտարանը դիտելու։ Բացատրողը առաջ ռուսերէն, յետոյ հայերէն լեզուներով մանրամասն բացատրեց թէ

իւրաքանչիւր գործիք ինչ դեր է կատարում։ Ըստ բացատրողի՝ Բիւրականի աստղադիտարանը Սովետական ամբողջ երկրներում երկրորդն է հանդիսանում։ Այդ աստղադիտարանը ինքնին ապացոյց է թէ ինչքան նշանաւոր է հայոց աշխարհը և նրանում ապրող ստեղծագործ հայ ժողովուրդը։ Հայ դիտողը հպարտանում է և զգում թէ ինչ մեծ ժողովրդի մասնիկն է ինքը և ինչ աշխարհահռչակ անձնաւորութիւններ է տուել իր որակեալ ազգը։

Դիտարանից դուրս գալով, ֆրանսահայերը և ռուսերը բաժանւեցին մեր խմբից ու թողեցին հիմնարկութիւնը։ Իսկ մենք, համաձայն Ինժիներ Մարջանեանի նախապէս կարգադրման, դիմեցինք Աստղադէտ Պրեզիդենտ Վ. Համբարձումեանի գրասենեակը, բախտ ունեցանք այն մեծ մարդու ընդունելութեանը արժանանալու և մի ժամից աւելի խօսակցութիւն ունենալ իր հետ։ Պրեզիդենտը հարցեր ուղղեց ինձ՝ Իրանի կացութիւնից, (այդ օրերում էլ սկսւել էր Իրանի յեղափոխական շարժումը) Իրանահայութեան հայրենասիրութիւնից ու հայրենադարձութեան տրամադրութիւնից, Իրանահայերի ազգային մարմինների համերաշխութիւնից ու համագործակցութիւնից, հայերի դպրոցներից, կրթական գործերից և հայերէն սովորելու հնարաւորութիւններից, կառավարութեան հայերի հետ ունեցած վերաբերմունքից, հայերի ընթերցասիրութիւնից, իրանահայ մշակութային յառաջդիմութիւնից և հայ կեանքին կապւող ամեն մանրամասնութիւններից։ Ես իմ գիտեցածի սահմաններում ի ծայրագոյնս աշխատեցի որքան կարելի էր ճշգրիտ պատասխանել Պրեզիդենտի հարցերին։

Ապա իմ տպաւորութիւնները հարցրեց Հայաստանի շինարարութեան նկատմամբ։ Այդ մասին ես չգիտէի ինչ պատասխանել, որովհետև ինչքան էլ ցանկանայի իրական կեանքը նոյնութեամբ նկարագրել, եղածի և կատարւածի իսկական պատկերը տալ, դարձեալ չպիտի կարողանայի



սել այն, ինչ որ կատարւել էր ու տեսել էի աչքովս։ Հայաստանի կառուցման ու վերելքն ընթանալու գործը հրաշագործութիւն կարելի է համարել։ Ես այդպէս էլ արտայայտւեցի։ Պրեզիդենտը այն տեսակէտն ունէր, որ մինչև այժմ Հայաստանի ժողովուրդը շինարարութեամբ է զբաղւել, սրանից յետոյ է, որ պիտի լաւ ապրի և իր աշխատանքի արդիւնքը վայելի։

Հայոց լեզւի ուղղագրութեան մասին խօսւեցւ Պրեզիդենտի տեսակէտն այն էր, որ եթէ հին ուղղագրութիւնը մնար, աւելի լաւ էր, թէպէտ հին ուղղագրութիւնն էլ իր թերութիւնն ունէր։ Բայց այժմ, երբ Հայաստանում շուրջ կէս դար ամբողջ հրատարակութիւնները կատարւել է նոր ուղղագրութիւնով և Հայաստանի ամբողջ ժողովուրդը սովորել է այդ ուղղագրութեամբ, հետևապէս Հայաստանը չի կարող ետ դառնալ հին ուղղագրութեան։ Եւ որովհետև սփիւռքահայութիւնը փոքրամասնութիւն է և Հայաստանի համեմատութեամբ հրատարակչութիւնն էլ շատ քիչ է, ուստի լաւ է, որ սփիւռքահայութիւնը հին ուղղագրութիւնը փոխի նոր ուղղագրութեան։

Խօսեցինք եղեռնագործ ու ցեղասպան Թուրքի ձեռքն ընկած և բռնութեամբ գրաւած մեր հողերի մասին։ Իմ հարցին թէ՝ արդեօ՞ք մեր հողերը միշտ պիտի մնան եղեռնագործի ձեռքը, Պրեզիդենտը այն կարծիքն յայտնեց, որ ամեն ինչ իր ժամանակն ունի և ժամանակին անպայման կստացւեն և մենք տէրը պիտի դառնանք մեր հողերի։ Ըստ Պրեզիդենտի, հայ ժողովուրդը երբէք չի կարող մոռանալ և Թուրքին զիջել իր հողերը։

Շատ գեղեցիկ էր այդ ընդունելութիւնը, որ տևեց մէկ ժամից աւել։ Խոր տպաւորութեան տակ հրաժեշտ տւեցինք և թողեցինք մեծ գիտնականի գրասենեակն ու Բիւրականը, մեզ հետ տանելով վերին աստիճանի լաւ և

անմոռանալի յուշեր։

×××

Մեր լաւ հանդիպումներից մէկն էլ Հայաստանի մեծ և հայրենասէր գրող և Մխիթար Սպարապետ հերոսին անմահացնող՝ Սերո Խանզադեանի հետ ունեցած հանդիպումն էր։ Ցաղթանդամ ու վեհաշուք մի անձնաւորութիւն է նա։ Նրան տեսնելու ժամադրութիւնը կատարւել էր հանրագիտարանի խմբագրատնից նախապէս՝ Պրն. Արտակ Ոսկանեանի կողմից։

Զորս հոգի էինք Պրն. Խանզադեանի մօտ գնացողները՝ Պրն. Ոսկանեանը, Պրն. Յովհաննէսը, քրոջս տղան՝ Մինասը և ես։ Նրա շատ գեղեցիկ ու հոյակապ դղեակը գտնւում է Նորքի մի բարձրունքում՝ իր նման խրոխտ, փարթամ ու վեհաշուք։ Շատ սիրով և ջերմ մթնոլորտում ընդունեց մեզ և առաջնորդեց իր գեղեցիկ ու բանաստեղծական գրասենեակը, ուր գրադարակներում լեցուն էր հազարաւոր մեծ ու արժէքաւոր գրքերով։

Նա շատ ուրախացաւ մեր գնալու համար և երկու ժամից աւել իր ժամանակը մեզ տրամադրեց։ Նա հարցրեց իրանահայ կեանքից, կրթական գործի դրւածքից, դպրոցներում հայերէն դաս տալու հնարաւորութիւններից, ազգային իշխանութիւնների գործունէութիւնից, Իրանի գրողներից և նրանց արտադրած գործերից, Իրանի յեղափոխութեան շարժումներից ու ժողովրդի դժգոհութեան պատճառներից և դեռ ուրիշ շատ հարցեր։ Ես աշխատեցի իմ գիտեցածի սահմաններում գոհացուցիչ պատասխաններ տալ և լուրեր հաղորդել նրան։

Շատ մտերիմ տեսակցութիւն էր Հայաստանի այդ նշանաւոր և սիրւած մարդու հետ ունեցած մեր տեսակցութիւնը։ Շատ շնորհալի խօսէկից է նա և հարազատ մթնոլորտում խօսեցինք շատ խնդիրների շուրջ։ Երբ հարցրեցինք թէ՝ արդեօք մեր հողերը միշտ պէտք է օտարների, յատկապէս ցեղասպան ու ոճրագործ Թուրքի ձեռքը մնան, նա յուսադրեց, որ ամէն ինչ իր ժամանակն ունի և մենք մի օր մեր հողերի տէրն ենք դառնալու։

Պրն. Խանզադեանը հպարտութեամբ էր արտայայտւում Հայաստանի մեծ ու հոյակապ շինարարական վերելքի մասին։ Նա շատ լաւատես էր ապագայի նկատմամբ և խօսք էր տալիս, որ շատ չանցած մեր երկիրը պիտի դասւի աշխարհի ամենազարգացած երկրների շարքում և դառնայ աշխարհի ամենաչքնաղ երկիրը։

Ճիշտ այդ օրերին նրա <Մխիթար Սպարապետ> վէպը ժապաւէնի էր վերածւել և առաջին անգամը ցուցադրւում էր Երևանում։ Նա հպարտ էր իր այդ գործի յաջողութեան վրայ։ Բայց որովհետև ժապաւէնի գլխաւոր դերակատարները ռուսեր և վրացիներ են եղել, լեզուն ռուսերէն էր: Սակայն աշխատանք էր տարւում հայերէն խօսուն դարձնելու ժապաւէնը։

Երբ հարցրեցի թէ՝ դեռ գրում է, նա պատասխանեց.

_Այո, ես դեռ գրում եմ և պիտի գրեմ քանի ուժերս թոյլատրեն։ Ես իմ մէջ դեռ շատ գրելու ուժ եմ նկատում և քանի այդ ուժն ունեմ, պիտի յետ չկանգնեմ գրելուց և հէնց հիմա մի վէպ գրելու գործով եմ զբաղւած։

Երբ կանգնեցինք մեկնելու, նա եկաւ մեզ ճամբելու։ Պարպասի մօտ մի քանի պտուղի մեծ ծառեր կային։ Պրն. Խանզադեանն ասաց, որ այդ ծառերը ինքն է տնկել ու մշակել և ուրախ է, որ իր տնկած ծառերը այդքան մեծացել են և լաւ պտուղ են տալիս։



Հայաստանի սիրուած եւ հայրենասէր գրող՝
ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

×××

Ես ցանկանում էի Հայաստանի բոլոր քաղաքները տեսնել։ Բոլոր քաղաքներում էլ մօտիկ ազգականներ ու Իրանից գնացած ընկերներ ունէի, որոնց տեսնելու բուռն ցանկութիւն ունէի։ Ես և Սամսոնը մեր հարազատների հետ շրջեցինք Հայաստանի բոլոր քաղաքները՝ Հրազդան, Աբովեան, Դիլիջան, Կիրովական, Լենինական, Էջմիածին, Հոկտեմբերեան, Աշտարակ, Մասիս, Գորիս և Ղափան։ Գրեթէ մեծ մասամբ տեսանք նրանց, որոնց ցանկանում էինք տեսնել։ Կարևորն այն է, որ բոլոր քաղաքներն էլ նորաշէն են, մէկը միւսից գեղեցիկ, հինգյարկանի շէնքերով, արտաքին տեսքով տուֆակերտ, ուշագրաւ և հոյակապ։ Բոլոր շէնքերը միանման են, բաժանուած և հեռու միմեանցից, իսկ նրանց միջի տարածութիւնների վրայ գեղեցիկ պուրակներ, ծառեր, ծաղիկներ ու կանաչութիւններ։ Վերջին տարիների կառուցած շէնքերը աւելի բազմայարկ են, որոնց ելնելն ու իջնելը կատարւում է վերելակով։ Այն բոլոր նկարագրութիւնները որ կատարել եմ Զարենցաւանի մասին, վերագրւում է բոլոր քաղաքներին։ Միւս քաղաքները թերևս աւելի գերազաս են ու անթերի։ Այդչափ հոյակապ ու վեհաշուք կառուցածքները ե՞րբ է կատարել, ուղղակի մարդ մնում է զարմացած։ Հրաշք է կատարել։

×××

Ես և Գրն. Գրիգորեանը առաջին հանդիպումից յետոյ համարեայ մեծ մասամբ եղանք միասին։ Նա պատրաստակամութիւն յայտնեց ինձ ընկերակցել, ուր որ ցանկութիւն ունէի գնալու։ Ես շատ ուրախացայ, որովհետև հաճելի է գիտուն մարդու հետ ճամբորդելը։ Մեզ ամեն տեղ տանողը եղբայրս՝ Սեդրակն էր, իր մեքենայով։

Որոշեցինք Հաղպատ և Սանահին գնալ, բայց Լենինականով, որովհետև մեր գպրոցի նախկին ուսուցիչ

Գուրգէն Աղաջանեանի հետ պայման ունէինք Հաղպատ գը-
նալու համար գնայինք Լենինական, գիշերը իր հիւրը
լինէինք և առաւօտը վաղ Գուրգէնի, իր քրոջ և փեսայի
հետ միասին ուղևորուէինք դէպի Հաղպատ։ Մեր ծրագիրը
նոյնութեամբ գործադրեցինք։ Կիրովականով անցնելիս իմ
հօրեղբօր աղջկան՝ Ժենիկին և իր ամուսնուն՝ Վահանին
էս առանք մեզ հետ ու շարունակեցինք մեր ճանապարհը։
Ամբողջ ճանապարհի երկայնութեամբ զուգահեռ ձգուած
երկու անտառապատ, կանաչ ու վիթխարի լեռների միջում
ընկած ձորի՝ մի նեղ ու շատ երկար հովտի միջով, մի
ասֆալտապատ հարթ ճանապարհով, Դեբեդի ափով գնում
էինք դէպի Հաղպատ։ Հասանք այնտեղ, ուր մայր ճանա-
պարհից մի ուրիշ ճամբայ բաժանուելով, սարի լանջով դը-
նում է վերև, դէպի Դսեղ պատմական գիւղը, մեծ բա-
նաստեղծ՝ անմահ Յովհաննէս Թումանեանի ծննդավայրը։
Մենք որոշել էինք Դսեղ գիւղն էս գնալ։ Դսեղ
տանող ճանապարհը բռնելով սկսեցինք սարը բարձրանալ։
Մարդ չէր կարողանում հաւատալ, որ այդ սարի վրայ
գիւղ և ապրողներ լինեն։ Բայց երբ հասանք գագաթը,
այնտեղ մեր առաջ բացուեց մի գեղեցիկ, մեծ ու ընդար-
ձակ դաշտավայր, ուր գտնւում էր Դսեղ գիւղը։ Գեղեցիկ
էր այդ գիւղը իր դիրքով, իր հանդ ու արտերով, իր բը-
նական գեղեցկութիւններով ու չքնաղ տեսարաններով և
իրեն նախկին հայ գիւղերի ներկայացուցիչը ներկայաց-
նելով։ Հասանք գիւղը և ուղիղ գնացինք մեծ բանաստեղ-
ծի տուն թանգարանը։ Բանաստեղծի եղբօր դուստրը՝
Տիկ. Թամարն էր թանգարանի բացատրողը։ Նա սկսեց
բանաստեղծի ծնուած մութ խրճիթից, ուր դրուած է բա-
նաստեղծի օրօրոցը և այն օրուայ մի գիւղացու տնային
խղճուկ կահ-կարասիները, ինչպէս նաև այն օրուայ երկրա-
գործական պիտոյքները։ Այդ խրճիթը պատուհան չունի
և դրա լոյսն ստացւում է առաստաղին գոյութիւն ունե-



ցած մի փոքրիկ երդիկից։ Ապա ցոյց տուեց նրան կից մի
աւելի լաւ սենեակ, դուռ պատուհաններով, բոլորովին ա-
ռողջապահական, արևահայեաց, որ սարքել է բանաստեղծի
քահանայ հայրը։ Ապա մեզ տարաւ Բանաստեղծի հօր
շէնքին կից, նրա արևելեան կողմը մի երկյարկանի քա-
ղաքավայել գեղեցիկ շէնք, բոլորովին յարմար և առողջա-
պահական, ունենալով քաղաքում ապրող մի բարեկեցիկ
վիճակ ունեցող ընտանիքի ունեցած լրիւ պատւաբեր կահ-
կարասիները, որը կառուցել է ինքը բանաստեղծը, երբ
արդէն քաղաք է գնացել, ուսում առել և քաղաքի կեանքն
է տեսել և ուսումնասիրել։
Վերնայարկի մեծ սրահում, պատերին շրջանակով
կախուած էին այն օրուայ իրեն գրած նամակները, որ ըս-
տացել է ժամանակի մեծ մարդկանցից ու մեծ թւով ար-
ժէք ներկայացնող նկարներ՝ ինքն իր տանեցիների կամ
ժամանակի մեծ անձնաւորութիւնների հետ։ Իր անձնական
միջոցներով տպուած՝ իր սկզբնական շրջանի ստեղծագոր-
ծութիւնների փոքրիկ հատորները ցուցափեղկերի մէջ
խնամքով դասաւորուած, կախուած էին պատերին կամ սե-
ղանների վրայ դրուած։ Այնտեղ կար Բանաստեղծի գրադա-
րանը և Հայաստանի պետութեան կողմից տպուած իր բոլոր
ստեղծագործութիւնները մի քանի հատորներով։ Այնտեղ
կար Գիւղացի Համբոյի և Գիքորի արձանը։ Համբոն
ճանապարհի յոգնածութիւնից դուրս գալու համար մի
քարի վրայ նստած, չիբուխը ձեռքը, խորհրդաւոր՝ խրա-
տում է իր մօտ նստած փոքրիկ Գիքորին, որ տանում էր
քաղաք գործի տալու։ Արուեստագէտ վարպետը այնքան
ճիշտ ու հարազատ է կերտել հօր և որդու կերպարն ու
ոճը, որ մարդը նայելիս չի կարողանում հոգեկան մի այլ
աշխարհ չգնալ ու չյուզուել։ Այնտեղ կային Բանաստեղծի
ձեռագիր ստեղծագործութիւնների բնագրերը։ Խորհրդաւոր
էին թէ՛ թանգարանի բոլոր իրերը և թէ՛ Տիկ. Թամարի



Դսեղ՝ Յովհաննէս Թումանեանի տուն թանգարան
Աջից ձախ_ Ա. շարք՝ Գուրգէն, Քնար, Արմէն, տիկ. Թամար (Յ. Թումանեանի եղբօր դուստրը) Խորէն, Ժենիկ եւ Վահան: Բ. շարք՝ Լեւոն, Յովհաննէս, Ռուբիկ եւ Սեդրակ:

գեղեցիկ բացատրութիւնները, որ յուզեց բոլորիս:

Թանգարանն ունի մի մեծ բակ, ծածկուած՝ ծաղիկներով, վարդերով ու գեղեցիկ ծառերով: Բակի մէջ տեղը բարձր պատուանդանի վրայ դրուած է Բանաստեղծի կիսանդրին: Մոր տպաւորութեան տակ, արձանի մօտ նկարուեցինք Տիկ. Թամարի հետ և իրեն հրաժեշտ տալով թախցալից թողեցինք թանգարանը:

× × ×

Մայր ուղին բռնած, գնում էինք դէպի Սանահին և Հաղպատ, որոնք ճիշտ Դսեղ գիւղի դիրքն ունեն. պէտք է ցածից՝ մայր ուղիից բաժանուած ահագին սարը բարձրանալ ու այդ գիւղը գնալ: Սանահինի ճամբան բռնած, սարը բարձրացանք ու հասանք Գիւղը: Այդ գիւղի բնական դիրքն էլ նման է Դսեղ գիւղի դիրքին: Սանահինում էլ գոյութիւն ունի ճարտարապետական մի հրաշալի համալիր, բաղկացած մի քանի եկեղեցիներից և օժանդակ այլ կառուցուածքներից: Ամենափոքրիկ եկեղեցին վանքի գլխաւոր տաճարն է, որ կառուցուել է 966 թւականին: Եկեղեցին ներսից ունի խաչաձև յատակագիծ: Այդ վանքն էլ Հայաստանի բոլոր վանքերի նման կառուցուած է սրբատաշ քարերից՝ հոյակապ ու փառահեղ: Վանքին կից, դարձեալ սրբատաշ քարերով կառուցուած է մի ճեմարան, ուր նախկինում սովորել են Հայաստանի հոգևորականները, մեծ գիտնականներն ու բարձր մտաւորականները: Այնտեղ կառուցուած է որմնասիւններով ու կամարներով Ս. Գրիգոր եկեղեցին, որ կառուցուել է 1063 թւականին, Դաւիթ անհողին թագաւորի դուստր Հրանուշ թագուհու կողմից: Մոր պատկառանքով գլխաւոր տաճարում երկիւղած մրմնջացինք մեր աղօթքը և ուղղուեցինք դէպի մայր ուղին՝ Հաղպատ գնալու համար:

Մայր ուղին բռնած հասանք Հաղպատ տանող ճա–

նապարհին, որը 3-րդն էր այդ օրուայ սարը բարձրացող մեր ճանապարհներից: Հասանք Հաղպատ և ուղիղ գնացինք վանքը: Մարդ պիտի գնայ տեսնելու այդ վանքը, որ կարողանայ ճանաչել հային և հասկանայ թէ ով է հայ ժողովուրդը: Քարակերտ այդ վանքն էլ Հայաստանի բոլոր վանքերի նման կառուցուած է զուտ սրբատաշ քարերից, միայն այն տարբերութեամբ, որ այդ վանքի քարերը, կամարներն ու սիւները շատ աւելի վիթխարի և աւելի փառաշուք են: Մարդը այնտեղ մնում է շւարած, որ դարեր առաջ կառուցուած այդ վանքի ահռելի ու վիթխարի քարերը որտեղի՞ց են բերել ու այդ սարերը, որ այսօրուայ մեքենաները իրենց ամբողջ ուժով դժուարութեամբ են բարձրանում, այն օրուայ թոյլ միջոցներով ինչպէ՞ս են բարձրացել: Ինչպիսի հսկաներ են եղել հայերը և ինչքա՞ն մեծ հաւատ են ունեցել դէպի Աստուած: Սա ես ճարտարապետական մի բարդ համալիր է, բաղկացած մի քանի քարաշէն եկեղեցիներից: Ըստ մեր ստացած տեղեկութեան 11-րդ դարից սկսած Հաղպատի վանքը դարձել է Հայաստանի գիտութեան կարևոր օջախներից մէկը: Գլխաւոր եկեղեցին Ս. Նշանն է իր հոյակապ գմբեթով, որին չքնաղ տեսք են տալիս իր վիթխարի սիւներն ու հրաշագեղ, բարձրաբերձ կամարները: Պատերին կան արձանագրութիւնների հետքեր, որոնց չկարողացանք վերծանել: Ու հարցնում եմ՝ Օ՜, հայ հանճար ու ճարտարապետ, դու ի՞նչ չկարողացար անել: Դու ամենակարող ես, բզաւի՛ր, ճչա՛, թող աշխարհն իմանայ, որ դու մեծ ես, ամենագէտ և ամենակարող ես, դու պիտի ապրես, ստեղծագործես, որ տեսնի ու հիանայ աշխարհի անխիղճ մարդկութիւնը, որ բնաւ չպաշտպանեց քո արդար իրաւունքը:

Մենք շրջեցինք համալիրի բոլոր կառուցուածքները: Նողկանքով մտաբերեցինք Աղա Մահմէդխան հրոսակի եղեռնագործութիւնը, որ իր բոլոր մարդասպանութիւնների

36

հետ այդ սրբավայրերում սպանեց նաև հոգևորական դարձած անմահ Սայաթ-Նովուն, Կովկասի մեծ տիտանին: Ապա Ս. Նշան եկեղեցում երկիւղած մեր աղօթքը մրմնջալուց յետոյ, Պրն. Գրիգորեանը իր շատ քաղցր ու հաճելի ձայնով երգեց «Միայն Սուրբ»ը: Վերջում խոր տպաւորութեան տակ յուզմունքի արցունքը մեր աչքերին թողեցինք Հաղպատի սրբավայրերն ու մութն ընկած վերադարձանք Երևան:

×××

Ես ցանկացայ Հայաստանի գիւղերն ես գնալ և նրանց կեանքն ես մօտիկից տեսնել: Ես Արարատեան դաշտի տարբեր գիւղերում ազգականներ և բարեկամներ ունէի, որոնք Իրանից Հայաստան էին գաղթել 1946 թւի զանգուածային ներգաղթին: Ոմանք իմ Հայաստան գնալու լուրը առնելով եկան Զարենցաւան ինձ տեսնելու: Նրանք հրաւիրեցին ինձ և մեծ ցանկութիւն ունէին, որ ես իրենց տունը գնայի: Ես խօսք տւեցի, որ նրանց բոլորի տունն էլ գնամ:

Երբ Պրն. Գրիգորեանին ասացի այդ մասին, նա ես ցանկութիւն յայտնեց ինձ ընկերակցելու: Եղբայրս՝ Սեդրակն էր մեզ ամեն տեղ տանողը՝ իր մեքենայով:

Գնացինք Քօրանլու գիւղը, մօրաքրոջս տղայի՝ Սիմէոն Ծատուրեանի տունը:

Մօրաքրոջս տղան, իր կինը՝ Մարջանը և երեխաները շատ ուրախացան մեր գնալու համար: 34 տարի միմեանցից հեռու, միմեանց կարօտը քաշելուց յետոյ շա՜տ տեղին և քաղցր էր այդ հանդիպումը: Ես և մօրաքրոջս տղան մեր կրովի երիտասարդ ժամանակն էինք բաժանւել մէկ-մէկուց: Այժմ կորացած, ընկճւած և մեր մազերը ճերմակած էինք հանդիպում միմեանց: Գրկախառնւեցինք, համբուրւեցինք և յուզմունքից մի պահ չկարողացանք

37

խօսել։ Ապա մաքրելով մեր արցունքները, նստեցինք և
սկսեցինք խօսել ու հարցնել մէկ-մէկու վիճակից։ Ուրախ
էինք բոլորս։ Ուրախ էին մանաւանդ Սիմէոնն ու Մար-
ջանը։ Նրանք Մայր Հայրենիքում բազմացել, զաւակների,
հարսների, փեսաների և թոռնիկների տէր էին դարձել։
Նրանք գոհ էին իրենց կեանքից, իրենց գիւղից, իրենց
երկրից և Հայոց Աշխարհի հոգատար իշխանութիւնից։
Մի գեղեցիկ դղեակ էր նրանց տունը, երկյարկանի
ու շքեղ։ Նա մի մեծ պարտէզ ունէր և տունը այդ պար-
տէզի մէջ էր կառուցւած։ Շէնքը միայն հիւսիսային կող-
մով էր կպած խճուղիին, միւս երեք կողմը պարտէզն էր
բռնած իր պտղատու ծառերով։ Շէնքը ամեն կողմից էլ
լոյս էր ստանում և ամեն կողմից ծառեր, ծաղիկներ ու
կանաչութիւններ էին երևում։ Իւրաքանչիւր յարկ ունէր
չորս չափազանց մեծ ու լուսաւոր սենեակներ՝ արդիական
բոլոր յարմարութիւններով, ունենալով՝ կայծ, հեռախօս,
գազ, ռադիո, հեռուստատես ու խողովակապատւած մաքուր
ջուր։ Տան մեծ սրահաձև սենեակը, որտեղ նստում էին
իրենք, ունէր քաղաքավայել ամեն կահ-կարասիներ և այն
բոլոր իրեղէնները, որ ունենում է մի հարուստ քաղա-
քացի։
Մեզ շատ յարգեցին և գիշերը ճոխ ընթրիքի սե-
ղան բացեցին՝ լի ամեն բարիքներով ու խմիչքներով։ Շատ
լաւ անցաւ։ Եղան բաժակաճառեր ու բարեմաղթութիւն-
ներ։
Բաժակաճառերի ժամանակ, մօրաքրոջս տղան՝ Սի-
մէոնը ի միջի այլոց ասաց։
—Թանգագին հիւրերս, Աստւածային մի բարիք,
մի երանութիւն էր, որ ներգաղթ տեղի ունեցաւ, մենք
հայրենիք եկանք և փրկւեցինք Իրանի գեղջկական այն
դառը, ցաւոտ, դաժան ու ողբերգական սև կեանքից և
գիւղատէրերի անխիղճ ստրկատիրութիւնից, որոնք տզրուկի

նման ծծում էին մեր արիւնը։ Մենք տարին 12 ամիս
ստրկային կեանք վարելով՝ տանջւում, տառապում, ճրդ-
նում, տքնում և գերմարդկային ճիգեր գործ դնելով քա-
րից ու հողից հաց էինք հանում, սակայն անխիղճ գիւղա-
տէրերը, նրանց տեղակալ նայիբները, տեսակ-տեսակ վաշ-
խառուներն ու պետական շրջիկ պաշտօնեաները այդ քա-
րից հանած հացն ու մեր արդար վաստակը շռթում,
կողոպտում էին և մեզ միշտ մնում էր քաղցածութիւնը,
մերկութիւնը և ամենայետին թշւառութիւնը։ Դու՛, մօրա-
քրրոջ զաւակ, տեղեակ ես, որ ինչ էինք քաշում մենք այն
արնախում գայլերի ձեռքը։
Իսկ այժմ, մեր երկրում, մեզ համար լաւ ապրե-
լու բոլոր միջոցները ստեղծած և մեր արդար վաստակի
տէրը դարձած, ապրում ենք ազատ ու երջանիկ։ Այստեղ
մեզ կողոպտողներ ու կեղեքողներ չկան։ Գործում ենք մեր
մայր երկրում ու նրա ծով վերելքին մենք էլ մեր կա-
թիլն ենք աւելացնում։ Դու տեսնում ես, որ մենք ապ-
րում ենք լաւ պայմաններում և զուրկ չենք կեանքի որևէ
բարիքից։ Մենք ունենք այն, որ ունի քաղաքում ապրող
քաղաքացին։ Մենք ունենք դպրոց, հիւանդանոց, շարժա-
նըկար, թատրոն և այլն։ Ես վերին աստիճանի գոհ եմ
իմ կեանքից։ Երեխաներս բոլորն էլ ուսում են ստացել
և իրենց տեխնիկ կուրսերն են վերջացրել։ Իմ և կնոջս
հանգստի կոչւելու ապահովութիւնը կայ և ոչ մի պակաս
չի մնացել մեզ համար մեր այս շէն ու լուսաւոր երկրում։
Դու տեսնում ես, որ մենք ապրում ենք լաւ պայմաննե-
րում և զուրկ չենք որևէ բարիքից։ Փա՜ռք մեր հոգատար
իշխանութեանը և նրա շինիչ գաղափարին։ Փա՜ռք մեր
բարեբեր հողին և իր առողջարար օդին ու ջրին։ Յաւի-
եան փա՜ռք մեր երկիրը կառուցող ձեռքերին ու հայ ժո-
ղովրդի ստեղծագործ ոգուն։
Երբ վերջացրեց իր խօսքը, ոտքի կանգնեցինք,

բարձրացրինք մեր բաժակները ի յարգանս այդ մեծ բա-
րեմաղթութիւնների, ու խմեցինք հայ ժողովրդի և իր ըն-
տեղծագործ ոգու կենացը։
Շատ լաւ անցաւ մեզ այդ գիշերը։ Նրանց այդ
լաւ կեանքը տեսնելով բառի բուն իմաստով ուրախ էի ես։
Գիշերը երկար նստեցինք և շատ խօսեցինք։ Նրանք շատ
զարմացան երբ յայտնեցինք, որ գիշերը գնալու ենք։ Շատ
ստիպեցին, որ գիշերը, գուցէ և մի քանի օր մնայինք
իրենց մօտ, սակայն մենք վաղուայ ժամը Ց-ին ուրիշ տեղ
ժամադրութիւն ունենալով չկարողացանք այդ անել, Նը-
րանք այն ժամանակ մեզ թոյլատրեցին մեկնելու, երբ
իրենց խոստացանք մի ուրիշ անգամ ես գալ իրենց մօտ։

×××

Հետաքրքիր էր մեր այցելութիւնը հօրաքրոջս տը-
ղային՝ Արշակ Թովմասեանին, իր կնոջը Ծաղիկին և
իր ընտանիքին, որ ապրում են Էջմիածնի շրջանի եր-
բորդ սովխոզում։ Արշակը և ես գրեթէ հասակակից էինք։
Իրանում նրանք ապրում էին Բուրւարի գաւառի Բուրդ
գիւղում։ Ես նրան դեռ պատանի հասակից, իրենց Իրան
եղած ժամանակը տարիներ էր, որ չէի տեսել և մօտ 50-
տարի էր, որ միմեանց չէինք հանդիպել։ Մեր դիմագիծը
այնքան էր փոխուել, որ միմեանց չճանաչեցինք և իմ ու-
ղեկիցները մեզ ներկայացրեցին մէկ-մէկու։ Գրկախառնւե-
ցինք և խիստ յուզուեցինք։ Երկու կողմից էլ չէինք կարողա-
նում պատկերացնել, որ պատանի ժամանակւայ մեր յիշո-
ղութիւնների մէջ մնացած անձնաւորութիւններն ենք
մենք։ Խորհրդաւոր էր երևոյթը։ Մեր ծնողներից ոչ մէկը
չկար։ Բոլէներ տեսյ մինչև կարողացանք համակերպուել
կացութեան հետ, խօսել ու հարցնել մէկ մէկու վիճակից։
Գիւղերի այցելութիւններին մեծ մասամբ հօրեղբօրս տը-
ղան՝ Սամսոնն ես մեզ հետ էր լինում։ Այստեղ մեր թիւը



շատ էր և Զարենցաւանի մեր մօտիկ հարազատներից շա-
տերն էին եկել մեզ հետ։ Կէսօր էր։ Կէս ժամ յետոյ նը-
րանք մի այնպիսի ճոխ և առատ սեղան բացեցին, որ
մենք մնացինք զարմացած։ Երևում էր, որ ամեն ինչ կար
այդ տանը և մենք պարզ նկատեցինք, որ ոչինչը դուրսից
չբերուեց։ Մեծ խրախճան կազմակերպուեց։ Եղան բաժակա-
ճառեր։ Այստեղ ես կայութիւնը եղաւ նոյնը, ինչպէս
եղաւ մօրաքրոջս տղայի՝ Սիմէոնի տանը։ Սրանք ես
վերին աստիճանի գոհ էին իրենց Հայաստան գնալու հա-
մար, շատ գոհ էին իրենց կեանքից և օրհնում ու բարե-
մաղթութիւններ էին կատարում իրենց երկրին, նրա հո-
ղին ու ջրին ու նրան հովանաւորող իշխանութեանը։
Արշակն ու իր կին Ծաղիկն ես, Իրանից գաղթած և
Հայաստանի գիւղերում հաստատուած մեր բոլոր բարեկամ-
ների նման Հայաստանի խաղաղ և նպաստաւոր պայման-
ներում աճել ու բազմացել էին, ունէին շատ զաւակներ,
բոլորն էլ դպրոց գնացած և ուսում ստացած։
Այստեղ էլ մեզ ստիպում էին մի քանի օր մնալ։
Ամեն տեղ էլ հրաժեշտ տալուն դժւարութեան էինք
հանդիպում։ Ուր գնում էինք, ցանկանում էին մի քանի
օր մնայինք իրենց մօտ։ Հայաստանում հայրենադարձնե-
րին միայն արտասահմանի իրենց հարազատների կարօտն
է նեղում, այլապէս նրանք ուրիշ ոչ մի անհանգստու-
թիւն չունեն։

×××

Այնուհետև այցելեցինք իմ բոլոր ազգականներին
ու բարեկամներին, որոնք ապրում են գիւղերում։ Մենք
շրջեցինք հետևեալ գիւղերը՝ Էջմիածնի շրջանի 3-րդ սով-
խոզ, Աշտարակ, Արմաւիր, Սուրէնաւան, Աֆշար, Փարաքար,
Ղուկասաւան, Արմաշ և Խնձորեսկ Գիւղերում։ Ամեն տեղ էլ
նոյն լաւ կեանքը կար և բոլորն էլ տնտեսական շատ լաւ

միջոց ունէին։ Ուր էլ գնացինք առատութիւն տեսանք և ամէն տեղ էլ ճոխ սեղան բացեցին մեր առաջ։ Ամէն տեղ էլ գեղեցիկ ու արդիական տներ տեսանք լրիւ յարմարութիւններով, կառուցուած տնամերձ այգիներում։ Մի տարբերութիւն, որ քաղաքի և գիւղերի տների մէջ կայ, այն է, որ գիւղերում բազմայարկ տներ չկան։ Գիւղացիների տները երկու յարկից չեն անցնում և իւրաքանչիւր տան մէջ միայն մի ընտանիք է ապրում ու այդ տան միջի ապրողին է պատկանում թէ՛ տունը և թէ՛ տնամերձ այգին կամ պարտէզը։

Գիւղացին Հայաստանում չի շահագործւում։ Նա իր տնամերձ պարտէզից կարողանում է լաւ օգտուել։ Գիւղացին իր տնամերձ պարտէզի չորս բոլորը՝ մեծ մասամբ հիւսիսային մասը խաղողի որթեր և պտուղի ծառեր է մըշակում։ Իսկ միջի մասը, որ բաց է և առատ արև է տեսնում, բանջարանոցային բոյսերի և կանաչեղէնի է յատկացնում։ Սրանցից իւրաքանչիւրը իր տեղին լաւ բերք է բերում և բաւարար շահ հասցնում մշակողին։ Ջանասէր, աշխոյժ և գործունեայ մարդիկ կարողանում են իրենց բանջարանոցին յատկացրած հողից տարեկան երկու անգամ հասոյթ ստանալ։ Նրանք գարնան սկզբին ցանում են այնպիսի ցանքս, որ հէնց գարնանը բերք են տալիս ու վերջանում։ Այդ եղանակին վերջացող ցանքսի տեղը նորից մի այնպիսի ցանքս են ցանում, որ ամռան վերջը կամ աշնանն են հասնում ու հասոյթ տալիս։

Հայաստանի պետութիւնը բոլոր քաղաքներում պըտուղ վաճառելու շուկայ է պատրաստել գիւղացիների համար։ Ամէն մի շուկայում բաւականաչափ սեղաններ կան շարուած և իւրաքանչիւր սեղանի վրայ մի կշեռք է դրուած իր կշռաքարերով։ Գիւղացին իր տնամերձ պարտէզից ստացած հասոյթը տանում է ամենամօտիկ քաղաքի շուկան, գրաւում է շարուած սեղաններից մէկը, իր բե-



րած մաքուր, թարմ ու առողջ մրգեղէնը և բանջարանոցային բերքը դարսում է սեղանի վրայ, սպիտակ գոգնոց հագած, վաճառում է իր հասոյթը և երեկոյեան դրամը գրպանը դրած, ուրախ գնում է իր տուն։

Գիւղի ընդհանուր երկրագործութիւնը գիւղից ու տնամերձ պարտէզներից այն կողմ պատկանում է սովխոզին և նրա անմիջական տէրը պետութիւնն է։ Այնտեղ գիւղացիները աշխատում են միասնաբար և ամէն մէկը ռոճիկ է ստանում պետութիւնից։ Այնտեղ նորից շինականի համար մի ուրիշ բարեմասնութիւն է նկատի առնուած։ Իւրաքանչիւր գիւղի համար մի պլան, մի չափ է նշանակուած։ Գիւղը եթէ իր պլանից աւելի բերք հասցնէ պետութեան, պետութիւնը յաւելեալի դիմաց դրամ է վճարում գիւղացիութեանը, որը բաժանւում է նրանց մէջ ըստ նրանց աշխատած օրերի։

Գիւղացու վիճակը լաւ է Հայաստանում և պէտք է որ լաւ լինի, որովհետև ամենադժուար աշխատանքը դաշտում ու հանդում նրանք են կատարում։ Ամառը տաք արևի տակ շատ դժուար է աշխատելը։ Նրանք են, որ պիտի այդ ծանր աշխատանքի դիմաց վայելեն ու լաւ ապրեն։ Գիւղերում դպրոցներ կան տարրականի և միջնակարգի լրիւ բաժիններով։ Գիւղերում ակումբ, թատրոն և շարժանկար կայ։ Գրեթէ ինչ որ քաղաքում կայ, գիւղերում էլ կայ։ Որոշ գիւղերում գործարաններ էլ կան և գիւղացիները կարողանում են թէ՛ գործարանում աշխատել և թէ իրենց հողագործութեանը հասնել։ Ծրագիր կայ Հայաստանի բոլոր գիւղերում էլ գործարաններ հիմնելու, որ գիւղում եթէ մէկը չցանկանայ հողագործութիւն անել, փոխանակ գնայ հեռու քաղաքի գործարանում աշխատելու, նա հէնց իր գիւղի գործարանում աշխատելու հնարաւորութիւն ունենայ։ Որոշ գիւղացիներ գրեթէ ունեն իրենց մասնաւոր մեքենան։

×××

Այժմ տեսնենք մինչև Իրանի յեղափոխութիւնը ինչ վիճակում է ապրել Իրանի գիւղացին։ Նա ապրում էր վերին աստիճանի չքաւորութեան և դժբախտութեան մէջ։ Նա չգիտէր ինչ է տնամերձ այգին կամ պարտէզը։ Իրանի գիւղերի մեծ մասը չգիտէ ինչ է այգեգործութիւնը, պարտիզագործութիւնը և բանջարանոցագործութիւնը։ Նա գիւղատնտեսական կանոններին դեռ անծանօթ՝ չէր մշակում այն հացահատիկները, որոնք շատ կարիք էին իրեն։ Նա չէր ցանում՝ ոսպ, բակլայ, լոբի, սիսեռ, գետնախնձոր, հաճար և այլն։ Նա չէր ցանում բամբակ, որ շատ օգտակար էր իրեն։ Նա ցանում էր միայն ցորեն և գարի, այն էլ երբեմն երաշտ տարին խորտակում էր նրա յոյսը։ Այդ բոլորի անմիջական պատճառներն երկու էին։ Նախ այն, որ պետութեան կողմից մի ուսեալ գիւղատնտես չգնաց նրանց ճիշտ գիւղատնտեսական և երկրագործական օրէնքները սովորեցնելու և գիւղացուն գիւղատնտեսական փորձառութիւն տրամադրելու։ Երկրորդ՝ կալւածատէր խանը ցանկանում էր, որ գիւղացին մի բան ցանէր, որ շահը իրեն՝ խանին հասնէր և ոչ թէ խեղճ երկրագործին։ Ցորեն և գարին միայն խանի շտեմարաններն էին լցնում, դրանից այն կողմ ամենը գիւղացու օգտին էր և ոչ թէ խանի։ Այդ պատճառով էլ գիւղատէր խանը չէր թոյլատրում որ բացի ցորեն և գարուց ուրիշ բան ցանեն գիւղացիները։

Հազարաւոր տարիներ է, որ Իրանի շինականը տանջւում, չարչարւում ու հարստահարւում էր՝ գիւղատէր խանի, նրա տեղակալի կամ կապալառուի, պետական հիմնարկութիւնների և նրանց շրջիկ պաշտօնեաների ու ժանդարմների ձեռքում։ Մի սուտ բողոք կամ զրպարտութիւն բաւական էր, որ նրան պառկեցնէին ու չար մտրակով կամ թարմ ճիպոտով գանահարէին, որի դաժան հարւածների ցաւից խեղճ գիւղացին պարտաւորւում էր չեղած տեղից պարտք անել ու տալ տուգանք, բոլորովին չգործած յանցանքի համար։ Նա խեղճ էր, նա թշւառ էր, նա դժբախտ էր, նա մերկ էր։ Նա յուսահատ ապրում էր խաւարի մէջ, զուրկ ապրելու բոլոր միջոցներից, հողէ այն սև մրոտւած ու ամեն ժամանակ փլելու վտանգին ենթակայ, ծուռ-մուռ պատերով մութ ու խաւար խրճիթի մէջ, որ լոյս էր ստանում ծածկի մի փոքրիկ ծակից, որ երդիկ է կոչւում։

Իրանում գիւղացին խարխափում էր թշւառութեան գրկում։ Նա միշտ էլ իր ցանքը հաւաքելուց յետոյ, երբ տեսաւ որ խանի բաժինը յանձնելուց յետոյ էլ ոչինչ չմնաց իրեն, մնացածն էլ պարտքի տեղ գնաց ու ձմեռը իր երեխաները սովի պիտի մատնւեն, էլ ոչ մի ճանապարհ չգտաւ, բացի այն, որ աշնանացանը վերջացնելուց յետոյ պանդխտութեան ցուպը ձեռք առնի, գնայ հեռու քաղաքները, որտեղ գործ կայ, որտեղ ճանապարհ են սարքում, որտեղ թունել են բացում, որտեղ բեռ են փոխադրում, ծանր գործեր յանձն առնի և իր վաստակած աննշան դրամն ուղարկի կին, երեխաներին, սովի ճիրանից փրկելու և դա կրկնւում էր ամեն տարի։

Քիչ չէին նաև այն պարագաները երբ խեղճ ու ճնշւած գիւղացին իր փոքր երեխային, կարօտանքի չար միջոցների թելադրանքով քաղաք էր ուղարկում հաց աշխատելու և իր տան ծախսերին նեցուկ հանդիսանալու։ Այդ դեռաբողբոջ ու մատաղահաս երեխան քաղաքացու խոհանոցի անկիւնում, այդ տան թերմացքը ուտելով, տիկնոջ հրամանները կատարելով և ծանր ու ցածր գործեր յանձն առնելով անց էր կացնում իր ոսկի ժամանակը, երբ նա պիտի կարդար, զարգանար, ձգտէր դէպի բարձրութիւնը և գուցէ մի օր մի տաղանդ, մի հանճար դառնար։ Ճնշւում

էր ծնողը, հոգեպէս տանջւում, մորմոքւում, ինքն իրեն ուտում, սակայն ի՞նչ ճար կար իրեն։ Միթէ նոյնը չէ՞ր երբ գիւղացու երեխան գիւղում իր մօտ էր մնում։ Միթէ՞ նա մերկ ու բոբիկ, գիւղի քարքարոտ դաշտում, առաւօտից մինչև ուշ գիշեր վառ արևի տակ չէր տանջւում, չարչարւում և իր ուժից վեր դաշտային աշխատանք կատարում հօր հետ միասին։

Գիւղացին Իրանում ելք էր որոնում իր դաժան վիճակից դուրս գալու։ Նա ցանկանում էր ընտանիքով չւել, գաղթել մի անյայտ ուղղութիւն, այնտեղ ուր կարողանար մի պատառ հաց աշխատել ու իր կին երեխաների հետ ուտել, նրանց մօտ լինել։ Նա փորձում էր մի հանգըրւան գտնել։ Եւ ահա հասաւ նրա փրկութեան ժամը ու դուռ բացեց իր առաջ։ Իրանի քարիւղն ու գազը լաւ գնի հասաւ և հեղեղի նման դրամ յորդեց Իրան։ Ու մի խումբ փորձւած ու ճարպիկ գողեր, իւրացրեցին այդ ահռելի գումարները ու դեռ չյագեցան։ Նրանք ցանկացան իրենց օգտին գործի դնել այդ դրամները ու ևս աւել դրամ շահել։ Շուտով Թեհրանում սկսեցին մեծ թւով գործարաններ հիմնել և երկնասլաց բազմայարկ շէնքեր կառուցել։ Շուտով լուր տարածւեց, որ Թեհրանում առատ գործեր են սկսել և գործաւորի շատ կարիք կայ։ Մի մաս պետական գործեր էլ Իսֆահանում, Թաւրիզում և Արաքում պետութիւնն էր սկսել և այդ բազմամարդ քաղաքներում էլ գործաւորների խիստ կարիք առաջացաւ։

Դրանք դռներ էին, որ բացեցին Իրանի գիւղացիութեան առաջ։ Նրա գիւղ մնալն այլևս յանցանք էր։ Նա ձանձրացել էր արդէն դարեր շարունակ գիւղը քաղցած մնալուց, անվերջ տառապանք կրելուց և ամենստոր կեանքն ունենալուց։ Նա աննախընթաց արագութեամբ իր կին և երեխաների թևը բռնեց ու գաղթեց այդ մեծ քաղաքները, իսկ ճնշող մեծամասնութիւնը Թեհրան։ Դրա հետևանքն այն եղաւ, որ գիւղերը դատարկւեցին, երկրագործութիւնը կանգ առաւ, գիւղատնտեսական արդիւնաբերութիւնը ոչնչացաւ և վերջին մի քանի տարիները ուտելիք ուրիշ երկրներից էր ներմուծւում Իրան։

Իսկ ինչ վիճակ ստեղծւեց Թեհրանում։ Իր տարողութիւնից տասն անգամ աւելի ժողովուրդ լցւեց Թեհրան։ Բնակարանների պակասութիւն առաջ եկաւ և դա պատճառ դարձաւ, որ թէ բնակարանների արժէքը և թէ նրանց վարձը ահռելի կերպով բարձրացաւ։ Առասպելական ձևով բարձրացաւ նաև գետնի արժէքը, որովհետև գետինները մեծ մասամբ գնւեցին մեծ դրամատէրերի կողմից և յատկացւեցին գործարանների կառուցման։ Ուտելիքի արժէքը սոսկալի բարձրացաւ և օր-օրի դէպի բարձրացումը գնաց։ Անծայր խճողում առաջացաւ խճուղիներում և Թեհրանի բոլոր խճուղիներն ու փողոցները լցւեցին մեքենաներով, որոնց մէկ-մէկու ճամբայ տալու անհնար լինելը պատճառ դարձաւ, որ մարդը հինգ րոպէի ճանապարհը անցնի ժամերով։

Թեհրանի օդն այնքան է կեղտոտել ու ապականւել, որ մարդը դժւարութեամբ է շնչում և Թեհրանում մահացողների մեծ տոկոսը մեռնում են քաղցկեղով, որի իսկական պատճառը օդի կեղտոտութիւնն է միայն։

Իսկ ինչու՞ գործարաններն ու վաճառելիք շէնքերը հիմնեցին ու կառուցեցին Թեհրանում, որ առանց այն էլ խճողւած էր և օդը կեղտոտ։ Ինչու՞ այդ գործարաններն ու կառուցումները չտարան գաւառներն ու գիւղերի մէջ հաստատելու, որ գոնէ գիւղացուն հէնց իր տեղը պահէին, ու մայրաքաղաք չքաշէին, որ գիւղացին կարողանար թէ գործարանում գործէր և թէ իր հողագործութեանը հասնէր։ Պատճառը պարզ էր։ Նրանք ցանկացան ամեն ինչ իրենց քթի տակ լինի, որ իրենք կարողանային անձամբ հսկել իրենց գործին և լաւ օգուտ ստանային։ Իսկ Թեհրանի

×××

Ես շատ կարօտ ունէի Հայաստանի հին վանքերն
ու սրբատեղիները դիտելու Իմ ցանկութիւնը տեղը բերելու
համար իրենց ազնիւ վերաբերմունքը ցոյց տւեցին եղ-
բայրս՝ Սեդրակը, հօրեղբօրս թոռները՝ Հայկազն ու Սար-
գիսը, քրոջս տղաները՝ Մինասն ու Երւանդը և իրենց մե-
քենաներով մեզ տարան մեր ցանկացած տեղերը։ Գրն.
Յովհաննէսը և Սամսոնը մեծ մասամբ ինձ հետ էին լինում։
Մեր լաւ և չմոռացուող օրերից մէկն էլ այն օրն
էր, որ մեծ խմբով, համարեայ իմ բոլոր հարազատներով
այցելեցինք Գեղարդի վանքը, որ գտնւում է Երևանից 38
կիլոմետր դէպի հարաւ-արևելք, գեղատեսիլ կիրճի մէջ։
Գեղարդի գլխաւոր եկեղեցու կառուցուածքն էլ Հա-
յաստանի միւս քարակերտ մեծ վանքերի ճարտարապետա-
կան կառուցուածքային ոճն ունի։ Միայն թէ Գեղարդի
գլխաւոր եկեղեցու հիւսիսային պատին կից երկու ժայռա-
փոր եկեղեցի գոյութիւն ունի, փորւած լեռան սերտ ժայ-
ռի մէջ, եկեղեցական ընդարձակ և գեղեցիկ ոճով, մէկը
միւսի վրայ, միևնոյն օրինակով, որ մի հոյակապ ստեղ-
ծագործութիւն է, փորւած 13-րդ դարում։ Այդ հիման
վրայ Գեղարդը կրում է նաև Այրիվանք անունը։
Գեղարդի վանքը միջնադարեան Հայաստանի հոգե-
ւոր ու մշակութային նշանակալից կենտրոններից մէկն է
եղել, ուր բացի պաշտամունքային կառոյցներից գոյութիւն
են ունեցել դպրանոց, գրադարան, գրչատուն և մեծ թւով
խուցեր վանականների համար։ 13-րդ դարին է ստեղծ-
ւել Գեղարդի ճարտարապետական յուշարձանախումբը,
գլխաւոր եկեղեցին՝ Կաթողիկէն և իր յարակից բոլոր
համալիրը։ Գլխաւոր եկեղեցին ըստ արևմտեան մուտքի
ճակատի արձանագրութեան կառուցւել է 1215 թւին, Զա-
քարեանների օրօք։





Գեղարդի պատմական մայր տաճարը լեռների մէջ
Սեդայի (քենուս) եւ իր զաւակներ՝
Աշոտի եւ Այվարդի հետ



Խ. Աբովեանի տուն թանգարանը Քանաքեռում: Ձախից՝ Յովհաննէս եւ Խորէն

քաղաքային վիճակը և ապականուած օդը մի մազաչափ չէր հուզում իրենց: Նրանք Թեհրանի հիւսիսում՝ Ալբորզ լեռան լանջերին մեծ ու հոյակապ պալատներ ունէին, որոնց մէջ տասնեակ հեկտարներով ծառաստաններ, ծաղկաստաններ ու մրգերի ծառեր էին մշակուած: Այդ պալատներում ապրում էին մարդկութեան արիւնը ծծող այն երջանիկները, վայելելով աշխարհի ամեն բարիքները, մոռանալով՝ աշխարհ, մարդկութիւն, խիղճ, օրէնք և արդարութիւն:

Բայց նրանք Թղթի մի երեսն էին կարդացել: Դեռ չգիտէին, որ ժողովրդի ցասումը երբ իր գագաթնակէտին հասնի, ոչինչը չի կարող նրա ընդվզման առաջը պահել: Նա կապստամբի և կյեղաշրջի ամեն մենատիրական ռեժիմ ու բռնապետական կարգ, կտապալի ամեն ինչ, ինչպիսին արաւ Իրանի ժողովուրդը Իմամ Խոմէյնիի ղեկավարութեամբ:

×××

Գնացինք Քանաքեռը տեսնելու: Այն այժմ միացել է Երևանին, ուր կառուցել են հրաշալի շէնքեր: Նախկին գիւղական շէնքերը չկան այլևս: Մնացել է միայն Խաչատուր Աբովեանի շէնքը նորոգութեամբ, որին ընդմիշտ ապահով պահելու համար Հայաստանի պետութիւնը շուրջը չորս ամուր սիւներ հիմք դնելով, վրան մի փառահեղ սրահ է կառուցել ու նրան կից ուրիշ կառուցածք: Այդ ամենը կրում է Խաչատուր Աբովեանի տուն թանգարան անունը: Թանգարանը իր նախկին կառուցածքով գոյութիւն է ունեցել տարիներ ի վեր, սակայն նրան այդքան փառաշուք դարձնելը նոր ձեռնարկութիւն էր, որ իմ այնտեղ եղած ժամանակը դեռ չէր աւարտել: Շէնքի առաջ տարածուած է մի մեծ հրապարակ, որի կենտրոնում, բարձր պատուանդանի վրայ կանգնեցրած է անմահ Խաչատուր Աբովեանի արձանը:

Օրը կիրակի էր։ Եկեղեցում Պատարագի արարողութիւն էր կատարւում։ Ես երբէք չէի ենթադրում, որ Հայաստանի շէն ու քաղաքներից կտրւած, լեռների մէջ գրտնըւող մենակեաց մի վանքում այդքան մեծ թւով հաւատացեալներ լինեն։ Թէ՛ եկեղեցու ներսը և թէ՛ բակում ու շրջափակում այնքան բազմութիւն կար, որ շարժւել չէր լինում։ Այդ ժողովուրդը եկել էր աղօթելու, իր սիրտը բացելու, խօսելու իր Աստծու հետ և իր դրախտ ու չնաշխարհիկ հայրենիքի համար բարի և կանաչ օրեր մաղթելու։ Արտակարգ ցնծութիւն ու բերկրանք էր նկատւում բոլորի դէմքի վրայ և ազգային յաղթանակի հպարտութիւն էր արտացոլւում բոլորի աչքերից։

Այդ օրը ինքնըստինքեան առիթ ստեղծւեց, որ ես Իրանից Հայաստան ներգաղթած շատ բարեկամների, ծանօթների և Թեհրանի իմ երբեմնի աշակերտների տեսայ։

Եկեղեցու բակից դուրս, հարաւային կողմը, պարզ ջուր հոսող առւի ափի դարաւոր ծառերի ստւերներում տեղ էին գրաւել ուխտաւորները ու ճոխ սեղաններ բացած, կերուխումով և երգ ու նւագով ուրախ անց էին կացնում իրենց ժամանակը։ Խրախճան, ուխտագնացութիւն, տօնախմբութիւն ու զուտ հայկականութիւն։ Շատ հրապուրիչ ու հոգեպարար էր տեսարանը։

Մեզ համար նստելու տեղ չգտնւեց, ուստի վերադարձանք Երեւան տանող ճանապարհին մի ուրիշ նստելու տեղ գտնելու ցանկութեամբ։ Մեծ ցանկութիւն ունէինք տեսնելու նաև Գառնիի հեթանոսական վերակառուցւած տաճարը, որը գտնւում է նոյն ճանապարհի վրայ։ Տեսանք։ Բայց միթէ՞ մարդը կարող է հեշտութեամբ բացատրել այդ տաճարի վեհութիւնը, փառաշուքութիւնն ու հայ ճարտարապետական հանճարի գերբնական ուժն ու ստեղծագործութիւնը։ Մարէը միայն մի խօսք կարող է ասել՝ փա՜ռք քեզ ու քո ստեղծագործական մեծութեանը հայ ժողովուրդ։





Գառնիի հեթանոսական Մեհեանը
Նկարում. – աջից ձախ՝ Արամ Խաչանեան, Թագուշ (իր կինը), Անահիտ Շահբազեան, Սիրանոյշ Խուդավերդեան եւ Վարդանոյշ Խաչանեան:
Նստածներ՝ Արշակ Խուդավերդեան եւ Եզնիկ Շահբազեան:

---

Շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Երևան։ Ճանապարհին մի գեղեցիկ ծառուտ գտանք։ Նստեցինք այնտեղ ու կազմակերպեցինք մեր խրախճանը։ Բացեցինք մեր ճոխ սեղանը, լիառատ խմեցինք Հայաստանի հռչակւած գինին ու կոնեակը, կերանք մեր բազմատեսակ համադամ կերակուրները, ունկնդրեցինք քրոջս հարսի՝ քաղցրիկ Ժենիկի հայրենասիրական երգերը ու նրա քնքուշ ու հրապուրիչ ձայնի ազդեցութեան տակ աւելի հրապուրւեցինք և օրհնեցինք պայծառ արեւը Հայաստանի: Ուշ երեկոյեան վերին աստիճանի լաւ տրամադրութեամբ վերադարձանք



Ս. Էջմիածնի Մայր Տաճարի զանգակատան հարաւում՝ Արամիկիս հետ



տուն, մեզ հետ տանելով քաղցր ու անմոռանալի յուշեր։

× × ×

Հայաստանի նշանաւոր և պատմական մեծ արժէք ներկայացնող եկեղեցիներից մենք այցելել և դիտել ենք նաև հետևեալ մեծ վանքերն ու սրբատեղիները։

Գառնիի հեթանոսական աննման Մեհեանը, որ կառուցել է հայոց Տրդատ Ա. Թագաւորի օրօք, Քրիստոսից յետոյ առաջին դարի երկրորդ կէսին, որի յատակագիծը ուղղանկիւն սրահ է, շրջապատուած 24 հոնիական ոճի սիւներով՝ դրուած բարձր պատուանդանի վրայ։

Տաթևի հոյակապ վանքը, որ պատմական Սիւնիքի կրօնական կենտրոնն է եղել և կառուցել է 895-906 թըւերին Սիւնեաց Յովհաննէս եպիսկոպոսի կողմից։ Այդ ճարտարապետական հրաշագործ կառուցածքի շրջանակում կառուցած է մի մեծ սիւն, որը առաջներում ճօճել է հըպումից, բայց սելջուկ հրոսակների արշաւանքների աւերումից յետոյ ձեռքից տւել է իր շարժւող յատկութիւնը։

Ս. Էջմիածնի մայր տաճարը, որ կառուցել է 301 թւին, Ս.Գրիգոր Լուսաւորչի և Տրդատ Բ. Թագաւորի օրօք, որը բացառիկ է իր կառուցածքով։

Ս. Գայանէ տաճարը, որ կառուցել է Էջմիածնում 630 թւին Եզր կաթողիկոսի կողմից։

Զւարթնոցը, որ կառուցել է Ներսէս Գ. Շինող կաթողիկոսը 601 թւին, Էջմիածնից Արտաշատ տանող հին ճանապարհի վրայ, այնտեղ, ուր միմեանց են հանդիպել Գրիգոր Լուսաւորիչը և Տրդատ Թագաւորը։ Տաճարը կանգուն է մնացել աւելի քան 300 տարի և կործանւել է երկրաշարժից։ Այժմ նրա աւերակները գոյութիւն ունեն միայն։

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, որ կառուցած է Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանի վրայ 1875

թուին Գէորգ Դ կաթողիկոսի կողմից։

Բջնու Ս. Աստուածածին եկեղեցին, որ կառուցուած է Բջնի գիւղում Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու կողմից 1031 թուին։

Հայրավանքը, որ կառուցուած է -րդ դարում, Սեւանի ափին։

Կեչառիսի վանքը և իր մօտի երեք եկեղեցիները, որ կառուցուել է 1033 թուին Գրիգոր Մագիստրոսի կողմից ծաղկաձոր աւանում։ Գլխաւոր եկեղեցին կոչւում է Ս. Գրիգոր Լուսաւորիչ, միւսները կոչւում են՝ Կաթողիկէ, Ս. Նշան և Ս. Յարութիւն։

Խոր Վիրապի վանքը Արարատեան դաշտավայրում, Արաքսի ափին, ուր կառուցուած են Ս. Աստուածածին և Ս. Լուսաւորիչ եկեղեցիները 1661 թուին, մինչև այդ գոյութիւն ունեցող եկեղեցիների տեղում, ուր արգելափակուած է եղել Ս. Գրիգոր Լուսաւորիչը իր ժամանակին։

Հայաստանի վանքերի մեծ մասը կառուցուած է լեռների վրայ, իսկ ընդհանուր առմամբ վանքերը կամ եկեղեցիները կառուցուած են զուտ սրբատաշ քարերով։ Այդ քարերը բերուած են շատ հեռու վայրերից, որովհետև վանքերի մօտակայքը այդքան պինդ քարերի հանքեր չկան և ոչ մի հետք էլ ցոյց չի տալիս, որ այդ քարերը բերուած լինեն մօտիկներից։ Հարիւր տոկոսով մարդը համոզուած է, որ այդ քարերը բերուած են շատ հեռաւոր վայրերից և կարևորն այն է, որ քարերը սարերի ցածից են բարձրացուել վերև։ Զարմանալին այն է, որ երբ այսօրուայ մեքենաները թեթև բեռներով, իրենց ամբողջ ուժով շատ դժուարութեամբ են բարձրանում այդ բարձրութիւնները, այնօրուայ թոյլ միջոցներով, որ եզներով քաշող սայլերն են եղել, ինչպէս են կարողացել այդ ահռելի քարերը և քարէ ծանր սիւները այդ վիթխարի բարձրութիւնները բարձրացնել։ Կրկին զարմանալին այն է, որ այդ հսկայ



քարերը և տասնեակ թոներ ծանրութիւն ունեցող սիւները ինչպէ՞ս և ինչ միջոցներով են յարմարեցրել իրենց տեղերը, ինչպէ՞ս են բարձրացրել, դարսել իրար վրայ ու պատ դարձրել։ Իսկ ամենից դժուարը այն է, որ մօտ 8-9 մետր բարձրութեան վրայ այդ ահռելի քարերով ինչպէս են այն հոյակապ կամարները կապել։ Մարդը ուղղակի շւարում է մտածելով։ Արդեօ՞ք իւրաքանչիւր մեհեանի, վանքի կամ եկեղեցու կառուցման գործում հայը քանի հազար նահատակ է տուել ու շատ բացայայտ է, որ հայը իր հաւատքի, կրօնի ու պաշտամունքի համար ոչ մի անձնազոհութեան առաջ կանգ չի առել,

Արդ ամեն մի դիտող գալիս է այն եզրակացութեան, որ հայը ամենակարող է, հայը հնարագէտ է, հայը ստեղծագործ է, հայը տոկուն է և նրա համար անկարելի բան գոյութիւն չի ունեցել։ Հայը մեծ կամքի տէր է և անսահման հաւատք ու սէր է ունեցել դէպի այն մեծ Աստուածը, որ դժբախտաբար բնաւ չօգնեց իրեն, երբ մարդակերպ ու մարդակեր ճիւաղ գազանները գործ դրեցին հային ոչնչացնելու, հային տապալելու, հային բնաջնջելու իրենց դիւային ամեն միջոցներն ու վայրագութիւնները։

Ա՜խ, ինչե՜ր կանէր հայը եթէ միշտ միաբան լինէր, հակառակութիւններ չունենար և մէկը միւսի նկատմամբ վատ անել չցանկանար։

×××

Մարդը երբ մի րոպէ զգաստանում է և ակնարկը դարձնում է հայ ժողովրդի անցեալին՝ խիստ յուզւում է, բայց և չի կարողանում չխորհել այդ ազգի վեհութիւնը, հերոսութիւնն ու փառքը։ Դարեր շարունակ մեր Հայրենիքը միշտ ահռելի արհաւիրքների, աւերումների, բնաջնջումների, թալանի ու գազանատիպ ազգերի հրէշային կործանումների է ենթարկուել։ Հայոց Աշխարհի արիւնարբու



Մայր Հայաստան
Ա. եկուսը՝ Արմենակ Աւէտեան, Ցասմիկ Աւագեան
Բ. երկուսը՝ դր. Բագրատ Աւագեան, վրէժ Աւէտեան



Թշնամիներն ու մարդակերպ գազաններն իրենց եղեռնագործութեան ու ցեղասպանութեան ախտին ենթակայ ու մոլի, սպանեցին, թալանեցին, աւերեցին, հրդեհեցին ու չէին չթողեցին մեր աքանչելի հայրենիքում որեւէ տեղ։ Առաջին համաշխարհային պատերազմին, ննջող թշնամին մոմենտը յարմար համարելով, իր ամբողջ վայրագութիւնները, գազանութիւններն ու հրոսակութիւնները գագաթնակէտին հասցնելով՝ տրորեց Հայոց Աշխարհը։ Սակայն հայը մեռնողը չէր։ Երբ նա աշխարհի անարդարութիւններն ու անիրաւութիւնները դիտեց, երբ պետութիւնների շահամոլ ու քծնող վերաբերմունքը նկատեց, երբ տեսաւ որ քրիստոնեայ ազգութիւնները ոչ միայն չօգնեցին իրեն, այլ անցան ճիւաղ թշնամու կողմը ու շինծու ծաղրածպիտով զէնք ու ռազմամթերք հասցրին նրան, այն ժամանակ հերոս հայը իր յոյսը դրեց մենակ իր վրայ, դարձաւ մի կամք, մի ուժ, մի հոգի, կանգնեց տասնեակ անգամ իրեն գերազանցող թշնամի զօրքի առաջ, Սարդարապատը կերտեց ու հերոսական աննախընթաց քաջագործութեամբ ծունկի բերեց ու նահանջի ենթարկեց ճիւաղ թշնամուն և ձեռք բերեց իր անկախութիւնը, փրկելով իր երկրի մի մասը միայն։ Այնուհետև երբ պանծալի հայը սկսեց շունչ քաշել, բուժել իր դարերի վէրքերը, գործ դրեց իր էներգիան իր աւերուած ու փլատակների ենթարկուած հայրենիքի շինարարական աշխատանքները մի տեղ հասցնելու վրայ հասաւ աշխարհաւեր համաշխարհային երկրորդ պատերազմը, որը նորից անհելի արհաւիրքներ հասցրեց մեր երկրին՝ կլանելով մեր հերոս երիտասարդութեանը, որոնք մեկնեցին ճակատ, նահատակւեցին ու չվերադարձան։

Անշուշտ երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ Հայաստանի իշխանութիւնը մի քանի տարի էլ պատերազմի վնասների հատուցումն է կատարել և ինչպէս էլ հաշւելու լինենք 25 տարւայ ժամանակամիջոցից աւելի չէ,

որ Հայաստանում կատարել է ներկայ հոյակապ շինարարութիւնը։ Կարեւորն ու զարմանալին այն է, որ 25 տարուայ ընթացքում ինչպէս է հնարաւոր եղել այդքան շինարարութիւն ու վերելք։ Այդ կարճ ժամանակամիջոցում ինչպէ՞ս են հիմնել ու կառուցել այդքան հիանալի քաղաքներ, այդքան շէն ու հրաշալի գիւղեր ու գիւղատընտեսութիւն, այդքան յուշարձանների կերտում, այդքան կրթական ու մշակութային բարձր նուաճումներ, այդքան ծառ ու տունկ մշակել, երկրում ամեն տեղ կեանք ու կենդանութիւն ստեղծել և վերջապէս մեր զրկուած ու զարկուած հայրենիքը շէն ու ծաղկած դրախտի վեր ածել։ Իսկ աւելի զարմանալին այն է թէ ե՞րբ և ինչպէս են հիմնուել ու կառուցուել այդ բազմաթիւ արդիւնաբերական գործարանները, մանաւանդ գազ ու քարիւղի ստորերկրեայ մի արդիւնաբերութիւն էլ չի ունեցել մեր Հայրենիքը։ Այդ բոլորը ապացուցում են, որ հայը միայն կարող էր անել այդ բոլորը, ուրիշ ոչ մի ազգ։

Բացարձակ հրաշք է կատարել։

×××

Մեր շքեղ հայրենիքը ընդհանուր առմամբ մի հոյակապ թանգարան է աշխարհի համար։ Հայաստան այցելող տուրիստը այնպիսի թանգագին հնութիւններ ու հրաշալիքներ կտեսնէ այնտեղ, որ թերևս իրեն հնարաւոր չլինի տեսնելու ուրիշ որեւէ երկրում։

Էրեբունին, Ուրարտուի հայրենասէր թագաւոր Արգիշտիի պալատը, շուրջ 2700 տարի անցեալ ունեցող այն շքեղ պալատը, հազարաւոր տարիներ հողի տակ քնելուց յետոյ, այժմ երբ գիտուն և իմաստուն հայի տքնաջան աշխատանքների շնորհիւ զարթնել և դուրս է եկել հողի տակից իր քարերի վրայ գրուած սեպագիր արձանագրութիւններով, միթէ՞ ծով արժէք ներկայացնող հնութիւններ



չե՞ն թէ՛ հայի և թէ՛ աշխարհի մարդկութեան համար։ Այդ պալատի սեպագիր արձանագրութիւնների տուած տեղեկութիւնները և հինաւուրց դարերի կեանքն ու անցուդարձերը պարզող այդ մատեանները միթէ՞ հոյակապ արժէք չեն ներկայացնում թէ՛ հայերի և թէ՛ աշխարհի բոլոր ժողովուրդների համար։ Աշխարհը պիտի ճանաչի շուրջ երեք հազար տարի առաջուայ ստեղծագործ հային, երբ նա ապրում էր իր Ուրարտու հայրենիքում ու ստեղծագործում։ Ապա աշխարհը պիտի ճանաչի նաև քրիստոնէութիւնը ընդունած հային, երբ նա ապրել է իր Հայաստան երկրում ու իր քարակերտ հզօր վանքերն ու եկեղեցիներն է կառուցել ու ստեղծագործել, որոնց ոչնչացնել չի կարողացել ոչ մի փոթորիկ։ Աշխարհը պիտի ճանաչի ևս ներկայ դարի տիտան հային, իր հազարաւոր ճարտարապետական վեհ ու սքանչելի ստեղծագործութիւններով, իր Հայաստան Աշխարհում։

Աշխարհը թող դիտէ հազարաւոր դիւթող, հմայող, վեհ ու վսեմ յուշարձաններ ու կոթողներ կերտող հայի հայրենիքը ու ճանաչի նրա մեծութիւնը։

Երևանի ճոխ մատենադարանը իր անթիւ ձեռագիր Աւետարաններով ու հազուագիւտ անգին գրքերով, որոնց գտնելը ոչ մի տեղ հնարաւոր չէ, վիթխարի ու եզակի մի հիմնարկութիւն է, որով պիտի հպարտանայ ու պարծենայ իւրաքանչիւր հայ։ Ցուցափեղկերում խնամքով դրուած հընագոյն թագաւորների ֆարմաններն ու իրենց հատը չունեցող անգին ձեռագիր գրքերը զգաստացնում են դիտողին, թէ ինչպէս աշխարհ եկած որոշ մարդիկ ի ծայրագոյնս աշխատում են թէկուզ իրենց նահատակութեան ենթարկելու գնով մի բարի գործ կատարել, մի բարի յիշատակ թողնել իրենցից յետոյ։ Այնտեղ շատ խնամքով պահւում են մեծ մարդկանց ու գիտնականների մեծ գործերը։ Այնտեղ ես հիացմունքով տեսայ Իրանի մեծ գիտ-



Մատենադարանի առաջ, Ս. Մեսրոպ Մաշտոց
Նկարում․– աջից՝ Սեդրակ, Խորէն եւ Յովհաննէս





Սարդարապատի 1918 թուի ճակատամարտին նուիրուած յուշարձանը
Նկարում․– Աջից ձախ՝ Սիրանոյշ, Սեդրակ, Ամիր, Խորէն, Աշխէն, Սամսոն, Ովսան եւ Սիլուա (նստած)։

նական Դէհխօդայի կազմած հոյակապ արմատական բառարանը, որին հանրագիտարան եւ կարելի է համարել, բազմաթիւ հատորներով շատ շքեղ կազմուած ու դարանում խնամքով շարուած։ Գուցէ Իրանում այդքան չի գնահատուել ու խնամքի արժանացել այդ գիրքը։

Մատենադարանի մուտքի արտաքին կողմում կերտած Ս. Մեսրոպ Մաշտոցի և մի քանի հայ հանճարների արձանների խումբն այնքան մեծ խորհուրդ է պարունակում իր մէջ, որ մարդը ինքնաբերաբար խոնարհւում ու ծով պատկառանք է զգում այդ վեհութեան առաջ։

Այնուհետև երբ մարդը գնում ու դիտում է Երևանի պետական Թանգարանը և տեսնում ու դիտում է այն ճոխ հնութիւնները, որ դուրս են եկել հայրենի երկրի ընդերքից և այնքան խնամքով տեղադրուած ու դասաւորուած են մեծ ցուցափեղկերի մէջ ցուցադրելու համար, խորապէս տպաւորւում է ու չի կարողանում յարգանք չտածել ըստեղծագործ հային։ Իսկ շէնքի եզակի կառուցուածքը Հայաստանի Թանգագին քարերով երեսապատուած և դուրսի հոյակապ սրբատաշ քարակերտ և հային յատուկ ոճով կառուցուած կամարները լրացնում են Թանգարանի շքեղութիւնն ու աքանչելիութիւնը։

Ու յետոյ երբ մարդ մտնում է Երևանի օպերայի շէնքը, հրապուրւում է լիովին։ Գեղահրաշ այդ սրահը դիւթում և հմայում է մարդուն իր աննման գեղեցկութիւններով ու շողարձակներով։ Միթէ՞ հայը կարող էր իր օպերայի շէնքը այդքան գեղեցիկ չկառուցել, երբ նրա հոգու արգասիքն է միշտ շքեղը կառուցել, միշտ աննմանը կերտել, միշտ վեհագոյնը ստեղծել։

Բիւրաւոր նահատակների յիշատակն յաւերժացնող վիթխարի յուշակոթողները կերտուած Երևանում՝ Ծիծեռնակաբերդում, իրենց շքեղութեամբ հայ ժողովրդի ստեղծագործութիւններն են խորհրդանշում։





Աւետիք Իսահակեանի տուն թանգարանը
Աջից՝ Խորէն, Գուրգէն, Սեդրակ եւ Լեւոն



Աջից ձախ՝ Ամիր, Աշխէն, Խորէն, Սիլվա, Սեդրակ, Ովսան, Սիրանոյշ, Սամսոն եւ Ռաֆ-էլս

Երևանից դուրս Սարդարապատի կոթողներն ու այն չքնաղ զանգակատունը իր քաղցրահնչիւն զանգերով, որոնք կերտուել են Սարդարապատի յաղթանակը յաւերժացնելու և հայ ժողովրդի աննահանջ արիութիւնը միշտ վառ պահելու, բացառիկ են աշխարհում իրենց մեծ խորհրդաւորութեամբ։

Շատ գեղեցիկ է էջմիածնի մայր տաճարը և հայոց պատուաբեր կաթողիկոսարանը իր աննման կառուցուածքով ու իր ճոխ թանգարաններով։ Թանգարաններում, ցուցափեղկերի մէջ խնամքով պահւում և ցուցադրւում են էջմիածնի մայր տաճարը այցելողներին ու թանգարանը դիտել ցանկացողներին։ Այնտեղ պահւում են Գրիգոր Լուսաւորչից մինչև այժմ բոլոր եկեղեցական թանգագին անօթները, ոսկեայ և արծաթեայ սաղաւարտները, կաթողիկոսական թագերը, իրենց թանգագին ակունքներով, արծաթեայ և ոսկեայ գաւազանները, խաչերն ու խաչվառները, կաթողիկոսական ու եպիսկոպոսական պատարագի անգին ու շատ շքեղ զգեստները, մեծ քանակութեամբ ոսկեայ և արծաթեայ խաչեր ու բուրվառները, մեծածաւալ թանգագին հին գրքերը և այլ անգին անօթներ։ Հայը պիտի գնայ տեսնելու այդ ամենը և հպարտանայ իր հայ լինելու համար։

Հայաստանում, աշխարհի այդ հոյակապ թանգարանում դեռ շատ տեսարժան վայրեր և դիտելու անթիւ հրաշալի տեղեր, ուսումնասիրելու, նկարագրելու և տպաւորուելու աքանչելի ստեղծագործութիւններ կան, որոնց տեսնելու բախտը չունեցայ ժամանակիս շատ լրանալու պատճառով։

Դժբախտաբար թէ՛ սփիւռքից և թէ՛ հայրենիքից չգիտես ի՞նչ շահադիտական նպատակից ելնելով որոշ հայեր, գնում են Ամերիկա «լաւ ապրելու»։

Այսօր երբ մեր ոսկիան տենչերը իրականացել և մենք մեր աննման հայրենիքի ու իշխանութեան տէրն ենք



դարձել, երբ օր-օրի աճում, ծաղկում ու դէպի վերելքն է ընթանում մեր երկիրը, հայի մի տարրը ինչու՞ է կարկամել, շւարել, յետ կանգնել իր ձգտումներից ու դեռ շարունակում է թափառական ու վտարանդի ապրել։ Ինչու՞ չի ցանկանում իր պանդխտութեան ցուպը դէն շպրտել, իր հայրենիքում ապրել։

Միթէ՞ երկար դարերը քիչ են եղել մեզ օտար երկրներում տանջելու, չարչարելու և հարազատ երկիր ունենալը տենչալու։

Միթէ՞ հայրենիքի ազատութեան նպատակին դարերի մեր տուած միլիոններով զոհերն ու նահատակութիւնները քիչ են եղել։

Միթէ՞ մեր հարազատ հայրենիքում ապրելու յոյսերն ու յոյզերը քիչ են տանջել ու մաշել մեր աստանդական հայերին։

Բաւ է հային այլևս օտար երկրներում, օտար իշխանութիւնների ծանր լծի տակ յածելը։ Ինչու՞ ենք մեր դարերի պապենական հայրենասիրական վառ զգացմունքները ձեռքից տւել։ Ինչու՞ չենք հպարտանում, որ Արարատ լեռ ունենք, որի գագաթին Աստուած իջեցրեց իր Նոյան Տապանը, ուր տեղաւորուած էր Աստուծոյ ամբողջ ստեղծագործական նմոյշները, որոնք պիտի դուրս գային ջրհեղեղով ամայիացած աշխարհը նորից բազմանալու ու նրան կենդանութիւն տալու։ Աստուծոյ այն սուրբ լեռան վրայ դեռ կան Նոյան Տապանի կտորները և աշխարհի գիտնականները դնում են այնտեղ ուխտելու, համբուրելու իրենց երեսը Տապանի կտորներին շփելու ու այն սրբավայրից իրենց մուրազն առնելու։

Ինչու՞ չենք հպարտանում, որ Վահագն դիւցազն ենք ունեցել, երբ նա ծնուեց երկնքի, երկրի և ծիրանի ծովի երկունքներից և իր դարին պահեց Հայաստանը ապահով ու անձեռնմխելի։

Ինչու՞ չենք պարծենում մեր Հայկ Նահապետով, որը Հայաստանի ազատութեան համար կանգնեց բռնակալ Բէլի մեծ զօրքի առաջ և նետի մի հարուածով գետին տապալեց Բէլին՝ այն բռնակալ ու չար ոսոխին։

Ինչու՞ չենք հպարտանում մեր Արա Գեղեցիկով, երբ աշխարհի ամենաչքնաղ ու զօրաւոր կայսրուհին՝ Ասորեստանի չնաշխարհիկ Շամիրամ թագուհին, որին գլուխ էին խոնարհում տասնեակ թագաւորներ ու կայսրեր, աչք ձգեց մեր Արային, սիրեց նրան տենդագին, սակայն նա իր ամբողջ հրապոյրով, նազանքով ու հմայքով, իր ամբողջ կայսերական զօրութիւնով, իր բոլոր մեծութիւնը նրա ոտքի տակը դնելով ու աշխարհը Արային խոստանալով չկարողացաւ տիրել նրան։ Արայի ազնիւ ու հայրենասէր հոգին չկարողացաւ սիրել այլազգի չքնաղ կայսրուհուն։ Նա սիրեց իր ազգութիւնը, սիրեց իր Նուարդ թագուհուն, իր Անուշաւան թագաժառանգին ու իր սրբակեցութեանը նուիրեց իր թանգ կեանքը։

Հայը պիտի հպարտանայ իր դիւցազն Սասունցի Դաւթով։ Նա իր Թուր Կայծակին քաշեց և ուժգին թափով խփեց Մսրա Մելիքին, որը մեր դիւցազնի զարկից փրկուելու համար մտել էր խոր հորը և վրան առել քառասուն գոմշի կաշի և քառասուն ջաղացի քար։ Սակայն հայ հերոսի բազկի ոյժը և Թուր Կայծակի զօրութիւնը կտրեց այդ ամէնը, միջից կիսեց Մսրա Մելիքին և Հայաստանը ազատեց այն ժանտ հրէշի բռնակալութիւնից։ Այսօր երբ աշխարհն է ճանաչում ու գովում մեր Սասունցի Դաւթի ոխրագործութիւնը, մենք ո՞նց ենք կարող մոռանալ նրան։

Հայը միթէ՞ կարող է մոռանալ Վարդան Մամիկոնեան քաջ զօրավարին՝ Հայոց անմահ Սպարապետին ու իր հրաշագործ զինակիցներին, որոնք իրենց փոքրաթիւ զօրքով կանգնեցին Յազկերտի մեծ զօրասիւնի առաջ, Աւարայրը կերտեցին և պարտութեան մատնեցին թշնամի



զօրքին։ Թէպէտ իրենք հերոսացումով նահատակուեցին, սակայն ծունկի բերելով բռնակալ Յազկերտին, փրկեցին Հայոց Երկիրը, կրօնն ու լեզուն։ Շատ են մեր պանծալի և անմահ հերոսները՝ Մխիթար Սպարապետները, Դաւիթ Բէգերը, Սմբատ Բագրատունիները ու շատ շատերը։

Է՛, հայեր, Միթէ՞ կարող ենք չհպարտանալ ու մոռանալ մեր սարերի Ասլան՝ Հերոս Անդրանիկին, այն հրաշափառ Զօրավարին, երբ 36 տարի՝ իբրև արծիւ սաւառնեց Հայաստանի լեռների ու ժայռերի վրայ, երբ քիւրդ ու տաճիկը նրա անունը լսելիս օձերի պէս իրենց բոյնն էին սողում և երբ թշնամին անգամ այն վիթխարի ու անմահ Զօրավարի հերոսութիւնն է գովում։

Է՛, միթէ՞ մենք հայ արքայական տոհմեր, արժանիքաւոր գահակալներ, հերոսուհի թագուհիներ ու իշխանուհիներ քիչ ենք ունեցել։

Աշխարհը ճանաչում է մեր Սուրբ Մեսրոպ Մաշտոցին, որը երկար տարիներ մղձաւանջային ու ճգնաժամային ապրումներից յետոյ, մի բացառիկ ու կատարեալ այբուբեն հնարեց հայ ժողովրդի համար ու իր նման անմահացրեց հայոց լեզուն ու հայ գրականութիւնը։ Աշխարհը ճանաչում է մեր պատմաբաններին՝ Մովսէս Խորենացուն, Կորիւնին, Ղազար Փարպեցուն, Անանիա Շիրակացուն, Փաւստոս Բիւզանդին, Ագաթանգեղոսին և ուրիշ աշխարհահռչակ հայ փիլիսոփաներին։

Մեր մեծ ազգը աշխարհին տուել է՝ Հրաչեայ Աճառեան, Կոմիտաս Վարդապետ, Վիքտոր Համբարձումեան, Արամ Խաչատրեան, Ալիխանեան եղբայրներ և ուրիշ միջազգային հռչակ ստացած հանճարներ ու տաղանդներ։

Մեծ են նաև մեր աշխարհահռչակ գրողներն ու բանաստեղծները։ Միթէ՞ հայը կարող է չհպարտանալ ու չսիրել իր անմահներին՝ Խաչատուր Աբովեանին, Ղևոնդ Ալիշանին, Գրիգոր Նարեկացուն, Րաֆֆիին, Սիամանթո-

յին, Յովհաննէս Յովհաննիսեանին, Յովհաննէս Թումանեանին, Աւետիք Իսահակեանին, Յովհաննէս Շիրազին, Ստ. Զօրեանին, Սերօ Խանզադեանին և մեր մտքի տիտաններից շատերին։ Աշխարհն հիանում է նրանց հանճարի վրայ։

Հայ աշխարհահռչակ արուեստագէտները, քարին շունչ տուողները և կերպասին յաւերժութիւն պարգևողները, քաղցրահնչիւն հայ սոխակները, նրանց յաւիտեան ապրող քաղցր մեղեդիներն ու անուշ դայլայլումները մի՞թէ չեն ուրախացնում աշխարհի բոլոր հայութեանը։

Ապա Հայոց Աշխարհի աշխարհագրական դիրքը՝ Արարատը, Արագածը, Սևանը, Սիւնիքը, Գուգարքը, Դիլիջանը, Արաքսը, Արփան, Որոտանը, Դեբեթը, Ջերմուկը, Բջնին, Երևանը և մէկը միւսին գերազանցող ամեն մի դրախտանման վայր։

Օ՜, հայեր, դուք մոռանում էք հայոց բոլոր սրբութիւնները, ձեր աննման երկիրը և ձգտում էք Ամերիկա գնալու։ Ինչու՞ էք ուզում բարձրութիւններից իջնել և ձեզ նետել ունայնութեան գիրկը։ Երբ հայը աշխարհի բարձրութիւնների գագաթնակէտին է կանգնած եղել, Ամերիկան բնաւ գոյութիւն չի ունեցել և ոչ մի յիշատակելի սրբութիւն չունի նաև այժմ։ Իսկ հայ, դու գնում ես այնտեղ ձուլուելու։ Օ՜, դա շատ ծանր է և ողբերգական։

Մի՞թէ քիչ են եղել հայ ձուլուողների թիւը, որոնք հայոց անուանացանկից հանուեցին ու յայտնի չէ թէ մտան որ ազգի անուանացանկում՝ հէնց միայն վերջին 50 տարիների ընթացքում։ Մի 50 տարի եւս մենք այլևս հայ չենք ունենալու Ամերիկայում։ Նոյնը պիտի լինի հայութեան վիճակը նաև Եւրոպայում և այն բոլոր երկրներում, որոնց պետութիւնները թոյլ չեն տալիս, որ հայը իր դպրոցում հայերէն սովորի։

×××





Քրոջս կիրք, շնորհալի եւ հայրենասէր հարսը՝ Ռիմաև եւ իր բնդունակ երեխան՝ Ժիրայրը



Աղջկաս՝ Արփիկի, իր ամուսնու՝ Րաֆֆիի եւ թոռնիկներիս Սեւակի եւ Նարեկի հետ

×××

Մի քանի խօսք Ինժիներ Յովհաննէս Գրիգորեանի հօր և տոհմի մասին։

Յովհաննէսի հայրը՝ Արշակ Գրիգորեանը ծնուել է 1902 թուին՝ Իրանի Փերիա գաւառի Բոլորան գիւղում։ Իր ուսումը ստացել է Բոլորան գիւղի Հայրիկեան դպրոցում, որ այն ժամանակ շրջանի օրինական դպրոցն էր, որովհետև գիւղը պատկանում էր Նոր Ջուղայի ազգային իշխանութեանը և շրջանի հոգևոր այցելու հանգուցեալ Եղիկ ծայրագոյն Վարդապետ Երկարակեցեանը անձամբ հովանաւորում էր այդ դպրոցին։

Դպրոցը յաջողութեամբ վերջացնելուց յետոյ Արշակը հինգ տարի տանուտէրի պաշտօն է վարում Թիրքեարթ հայկական գիւղում։ Սակայն գիւղացիութեան դժբախտութիւնները և գիւղատէրերի, կապալառուների, պետութեան ու նրա շրջիկ պաշտօնեաների ճնշումների ու կեղեքելու դէպքերը չկարողանալով տանել, թողնում է այդ պաշտօնը և մտնում է ուսուցչութեան ասպարէզ։ Նա պաշտօնավարում է՝ Բոլորանում, Ղարղունում, և Սենկերտում։ Նա իր լաւ վարքի և վերին աստիճանի բարեխիղճ ծառայութեան համար միշտ ափսոսանքի հառաչանքներ է թողնում իր քամակից, երբ մի գիւղից միւսն է անցնում շարունակելու իր ուսուցչական պաշտօնը և դա տևեց մինչև 1946 թիւը, երբ բոլոր Գրիգորեան տոհմը ներգաղթեց Հայաստան և հաստատուեց Արարատեան դաշտի տարածքում։

Հայաստանում Գրիգորեան ողջ տոհմը իր անաղարտ գործունէութեան դիմաց գնահատուել է կատարելապէս և այդ մասին Սովետական Հայաստան ամսագիրը հանգամանօրէն անդրադարձել է իր 1971-թուի, նոյեմբեր ամսուայ համարում «Ուշագրաւ հաւաք» և 1976-թուի յուլիս ամսուայ



համարում «Տոհմածառի մի ճիւղը» խորագրերով։

Անգամներ Հայաստանի պետութիւնը Արարատ քաղաքի մշակոյթի տանը գեղարուեստական ճոխ ծրագրով մեծ հանդիսութեան ու տօնակատարութեան հաւաք է կազմակերպել, ուր ներկայ են եղել հոծ բազմութիւն և Հայաստանի պետական բարձրաստիճան պաշտօնեաներ։ Այդ հանդիսութիւններին ընթերցուել են զեկոյցներ, որոնցով արժէքաւորուել և բարձր են գնահատուել բոլոր Գրիգորեան տոհմի բեղմնաւոր գործունէութիւնը, նշուել է նրանց անկեղծ ու անձնաջան ծառայութիւնները հայրենիքին, թուարկուել են տոհմի բարձր դիրքերի հասած և իրենց պաշտօնները գերազանց բարեխղճութեամբ կատարելու համար մրցանակ շահած անձնաւորութիւնները, գերագնահատուել է նրանց վերին աստիճանի ընդունակութիւնները, աշխատասիրութիւնները և իրենց շինիչ առանձնայատկութիւնները՝ ամեն բնագաւառում։ Տոհմի մարդկանց սխրանքների մասին յաճախ է տպուել Հայաստանի մամուլում, ձայնասփռուել է ռադիոյով ու ցուցադրուել է հեռուստատեսով։

Յարգանք Գրիգորեան տոհմին։

×××

Հայաստանում մի բան որ շատ տարօրինակ է թւում, դա Օվիրի բոլոր պաշտօնեաների երկաթեայ անտարբերութեան վերաբերմունքն է Հայաստան այցելած հայ տուրիստների նկատմամբ։ Հայաստան այցելած հայը եթէ գերմարդկային ճիգեր գործ դնելով հազիւ-հազ կարողացել է յաջողել մի ամսուայ ժամանակով մտնել Հայաստան՝ իր հայրենիքը, այդ մէկ ամսուայ 15 օրը Օվիրի հաստատութիւնը պիտի անտեղի տանէ ու բերէ և վատնէ նրա ժամանակը։

Սփիւռքի հայը, որ մի ամբողջ կեանք օտար երկրում, օտար արևի տակ տառապել է հարազատ երկրի կա-

բոտով, ուրիշ երկրի հացը կերել, սակայն իր հայրենիքի համար է աղօթել ու բարեմաղթութիւններ կատարել, գիշերները երեսը դէպի հայրենիքն է դարձրել ու քնել, իր հայրենիքի սիրով տոգորուած, դժուարին պայմաններում իր հայութիւնն է պահել և սակայն նա իր ողջ կեանքում հազիւ կարողացել է յաջողել մի ամիս գնալ հայրենիք ու իր ամբողջ կեանքի կարօտը այդ մի ամսումը առնել, արդեօ՞ք տեղին է այդ մի ամիսն էլ փոխել տալ մի անհաճոյ ու անախորժ ամսուայ և այդ հայրենակարօտ հիւրին յուսախաբ անել ու փշրել նրա տենչերի սրւակը ամբողջովին։ Արդեօ՞ք տեղին է աւետիսեանների, զաքարեանների և միւսների այնքան անտեղի բղաւոցները, գոռգոռոցները, հայհոյանքներն ու վիրաւորական խօսքերը, որ տեղում են այն մէկ ամսուայ հայրենակարօտ հիւրի գլխին։

Ինչու՞ Օվիրի պաշտօնեաները չեն մտածում, որ իրենց այդ արարքով այդ մէկ ամսուայ հայրենակարօտ հիւրերի ներաշխարհն են խորտակում։ Արդեօ՞ք այդ մէկ ամսուայ հայրենակարօտ հիւրերը նրանց այդ վերաբերմունքը նկատելու համար են գնում հայրենիք։ Աւետիսեաններն ու զաքարեանները իրենց այդ արարքով հային ոչ միայն հայրենիքից են կշտացնում, այլ ամբողջ աշխարհից, իրենց կեանքից ու այդ մէկ ամսուայ հիւրը շտապում է հեռանալ ու իր մնացած կեանքը քարշ տալ աստանդական, մինչև որ մեռնի ու թաղւի օտար երկնքի տակ։

Ինչքան մեծ նեղութիւններ պիտի կրէ ու դժուարութիւնների հանդիպէ մէկը եթէ ցանկանայ մի քանի օր աւել մնալ Հայաստանում։ Ես որ մասամբ էլ Սփիւռքահայութեան Մշակութային Կապի Կոմիտէի հիւրն էի և հրաւիրագիրս էլ 3 ամսուայ էր, իսկ վիզաս սխալմամբ մի ամսով էր գրւել, երբ այդ չքնաղ երկիրը դիտելու և տեսածս գրի առնելու համար ցանկացայ 50 օրով իմ ժամանակը երկարաձգել, չնայած որ Սփիւռքահայութեան Կոմիտէն էլ միջամտեց ու այդ կապակցութեամբ գրաւոր դիմում կատարեց և մի քանի անգամ էլ հեռախօսով կապւեց Օվիրի հետ, այդուհանդերձ ճիշտ մէկ ամիս ես գնացի ու եկայ մինչև այդ իրաւունքն ստացայ, այն էլ բաւական գոռգոռոցներ, հայհոյանքներ ու անհաճոյ խօսքեր գլխիս տեղալուց յետոյ։ Դրա արդիւնքը եղաւ այն, որ դեռ շատ տեսարժան վայրեր կար տեսնելու ու գրելու, սակայն Օվիրի այդ վերաբերմունքով ժամանակս զուր անցաւ և իմ ցանկութիւնը մնաց թերի։



×××

Ես և Սամսոնը Հայաստանի բոլոր քաղաքներում էլ հարազատներ, մօտ ազգականներ ու ընկերներ ունենք, որոնց տեսնելու ցանկութիւնն ունէինք։ Բոլոր քաղաքներն էլ գնացինք, այցելեցինք բոլորին, ուրախ ժամանցներ ունեցանք բոլորի հետ և նրանց բոլորի փոխադարձ յարգանքին արժանացանք։ Իմ խորին շնորհակալութիւններն եմ յայտնում բոլորին մի առ մի և իրենց ներողամտութիւնն եմ խնդրում, որ հնարաւորութիւն չունեցայ նշել իրենց անունները մէկիկ-մէկիկ։ Մի բան որ ինձ ուրախացնում ու հոգեկան բաւարարութիւն է պատճառում՝ այն է, որ իմ բոլոր հարազատները, ազգականներն ու ընկերները չափազանց գոհ էին իրենց Հայաստան գնալու համար, գոհ էին իրենց լաւ վիճակից և օրհնում էին արևը Հայաստանի։ Ամեն տեղ էլ բաժակները բարձրացրած բարեմաղթութիւններ էին կատարում Հայոց Աշխարհի հողատար իշխանութեանը և աւելի բարձր յաջողութիւններ էին մաղթում իրենց շէն ու բարեբախտ հայրենիքին։

Ինձ ընկերակցեցին ամեն տեղ Ինժիներ Յովհաննէս Գրիգորեանը և եղբայրս Սեդրակը, որոնց լաւ վերաբերմունքի դիմաց ընդմիշտ երախտապարտ եմ համարում ինձ։

## ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | Տող | Տպուած է | Պէտք է լինի |
|---|---|---|---|
| 1 | 3 | ծնւում | ծնւում, |
| 3 | 27 | երեկոեյան | երեկոյեան |
| 5 | 1 | փթած | փտած |
| 5 | 4 | այգ | այդ |
| 6 | 19 | թեհրանի | Թեհրանի |
| 10 | 18 | դիտնականի | գիտնականի |
| 10 | 27 | սալահատակւած | սալայատակւած |
| 11 | 17 | կետում | կէտում |
| 22 | 13 | եզան | Նդան |
| 23 | 6 | տանելու | տեսնելու |
| 35 | 7 | թախցալից | թախծալից |
| 40 | 9 | –ին | 8–ին |
| 41 | 7 | կայութիւնը | կացութիւնը |
| 44 | 6 | բանչարանոցա–<br>դործութիւնը | բանչարանոցա–<br>գործութիւնը |
| 46 | 32 | մածամասնու–<br>թիւնը | մեծամասնու–<br>թիւնը |
| 56 | 5 | –րդ | 9–րդ |
| 56 | 9 | ծաղկաձոր | Ծաղկաձոր |
| 56 | 11 | Ս․ նշան | Ս․ Նշան |
| 68 | 27 | ոխրագործու–<br>թիւնը | սխրագործու–<br>թիւնը |
| 69 | 26 | Վիքտոր | Վիկտոր |
| 72 | 4 | 1·02 թւին | 1902 թւին |

*«Ինչպէս Տեսայ Հայաստանը» գրքի վերջ*

# Այլ փաստաթղթերի ընտրանի

## ՏԻԿԻՆ ԽԱԹՈՒՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

### (ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՆՕՐԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ)

Այս տարուայ Յունուար 4ին, Թեհրանում իր մահկանացուն կնքեց մի շատ շնորհալի մայր, լաւ մանկավարժ եւ բառի բուն իմաստով մի բարի եւ առաքինի կին՝ Տիկ. Խաթուն Յովսէփեանը։

Հայ մայրերը ընդհանուր առմամբ ինչպէս սփիւռքում, այնպէս էլ Իրանում, հարիւրաւոր տարիներ շարունակ, շատ մեծ պարտականութիւններ են ունեցել, տանջանքներ, տառապանքներ, ու զրկանքներ են կրել, մինչեւ կարողացել են դժուարին պայմաններում, օտար երկնքի տակ, իրենց երեխաներին հայ պահել, նրանց մէջ հայ հոգի ներշնչել. հայկական բոլոր աւանդութիւններն ու սովորութիւնները նրանց սովորեցնել ու փրկել հայրենիքից դուրս գտնուող իրենց երեխաներին ցուլւելու վտանգից։



Հայութեան այդ բացառիկ մայրերից մէկն էլ եղել է Տիկ. Խաթուն Յովհաննէսեանը, որ ծնուել է Թեհրանում, 1800 թըւին։ Իր սկզբնական կրթութիւնն ստացել է Թեհրանի Ամերիկեան քոլէճում։ Նա ունեցել է իր գերագոյն արժէքը իր շրջապատում եւ վայելել է բոլոր իրեն ճանաչողների անկեղծ յարգանքը։

Տիկ. Խաթուն Յովսէփեանը երկար տարիներ ունեցել է իր մասնաւոր դասարանը իր բընակարանում եւ պարապել է ուսուցչութեամբ։ Նա տուել է մեզ հինգ կրթուած ու մեր ազգին պատիւ բերող զաւակներ, որոնց խնամքը, մեծացնելու ծանրութիւնն ու կրթութիւն տալու բոլոր դժուարութիւնները տարել է մենակ, առանց որեւէ յենարան ունենալու իր մէջքին։ Նա տըւեց մեր ժողովրդին համալսարանի դասախօս, բժիշկ եւ մարզանքի ախոյեան անձնաւորութիւններ։ Տիկ. Խաթուն Յովսէփեանը եղել է հոգատարութեան եւ համեստութեան մի մարմնացում։ Նրա դուռը միշտ բաց է եղել բոլորի առաջ եւ նա իր բարի խորհուրդներով եւ այլ բարեգործութիւններով օգտակար է եղել բոլոր այն անձնաւորութիւններին, որոնք դիմել են իրեն եւ կարեկցել է նրանց, որոնք նրա կարեկցութեան կարիքն են ունեցել։

Թեհրանի հայոց «Թաքան» դպրոցն եւս, որ բացուել է 22 տարի առաջ, բացուել է Տիկ. Խաթուն Յովսէփեանի զոհողութիւնով։ Նա սկզբում իր շէնքը ձրիաբար տրամադրեց այդ նըպատակին եւ եթէ չլինէր նրա աջակցութիւնը, գուցէ չբացուէր այդ դպրոցը եւ հազարաւոր հայ երեխաներ զըրկուէին հայոց լեզուն սովորելու եւ հայեցի դաստիարակութիւն ստանալու հնարաւորութիւնից։ Տիկ. Խաթուն Յովսէփեանը այնուհետեւ տարիներ շարունակ սաներ ուղեգրեց «Թաքան» դըպրոցում, որոնք այժմ իրենց բարձրագոյնն են սովորում եւ երբեք չպիտի մոռանան իրենց բարերարին։

Տիկ. Խաթուն Յովսէփեանը 1956 թւին իր որդու՝ Դր. Արշաւիր Յովսէփեանի օգնութեամբ Թեհրանում բացել է Յովսէփեան Անգլերէն դըպրոց, ուր սովորել են շատերը, որոնց մեծ մասը մտել են համալսարան, անգլերէն լեզուն կատարելագործելու։ Նրանցից ոմանք լաւ անգլիագէտ դառնալով, հայ գրականութիւնից թարգմանութիւններ կատարելով մեր ազգի մեծութիւնն են յայտնաբերում օտար ազգերին։

Հանգիստ իր աճիւնին, յաւէտ անմեռ մնայ իր վառ յիշատակը։

ԽՈՐԷՆ ՏԷՐ ՎՐՈՑՐԵԱՆ

---

Մութ անտառում չարագուշակ կանչում էր բուն...

Լաց չեղաւ Նազանը։ Քարացաւ ու լաց չեղաւ։ Նա կուլ տուեց սրտից եկող բոլոր արցունքները ու լաց չեղաւ։ Ցիշեց իր անցած-գնացած օրերը, որ չպիտի դառնան էլ երբէք։ Ցիշեց առանց խօսքի, յիշեց լուռ, յիշեց մինչեւ լոյս։

Արեւի առաջին շողերի հետ Արտուշը դուրս եկաւ սենեակից։ Բացեց պատշգամի դուռը ու զարմացաւ։ Նազանը նստած էր թախտին, ինչպէս երեկոյեան թողել էին իրենք նոյն դիրքում։

— Այս ի՞նչ է, դու չե՞ս քնել,— մայրը հեռու սարերի կողմն է նայում։ Բարձր սարերի ուր կամաց-կամաց ծագում էր արեւը։

— Քնել եմ,— առանց որդու կողմը նայելու, խուլ արձագանգեց Նազանը,— անուշ քնեցի, քաղցր-քաղցր երազներ տեսայ...

«Քուլիս» կիսամսեայ հանդէս, Ապրիլի 1, 1974

ԿԻՐԱԿԻ, 17 ՕԳՈՍՏՈՍ, 1975 ԷՋ 3

# ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ հայերէն առարկաների քննութիւնները

ԽՈՐԷՆ ՏԷՐ ՎՐՈՅՐԵԱՆ

1975-ի տարեվերջին, Թեհրանի հայոց դպրոցների հայերէն առարկաների քննութիւնների առթիւ կարծիքներ եղան մասնակցող – չմասնակցողների մասին. մասնակցելը դրական երեւոյթ է եւ խրախուսելի, իսկ չմասնակցելը արդարացուցիչ պատճառներ չունի, որովհետեւ քննութիւնները խթան են հայ լեզուի եւ քննութեան ենթակայ հայ աշակերտ–ուհիները նախանձախնդիր են դառնում հայերէնով գրագիտելու, յառաջադիմելու, հայեցի կրթութիւն ու դաստիարակութիւն ստանալու:

Հետեւաբար որքան շատ դպրոցներ (ազգային թէ մասնաւոր – անհատական) մասնակցեն քննութիւններին, այնքան հայ երեխան ուշադիր կը լինի իր մայրենի լեզուի նկատմամբ:

Ինը տարի է որ Թեհրանի «Ազգային Դպրոցների Կենտրոնական Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, Ցունիս ամսուայ ընթացքում, Թեհրանի հայոց տարրական եւ ուղեցոյց դպրոցների աւարտող դասարանների հաւաքական քննութիւններ են տեղի ունենում՝ ուշադիր եւ ճիշտ ձեւով որ իսկապէս մի ազգօգուտ ձեռնարկ է եւ ունի իր դրական յատկութիւններն ու արդիւնքը, որոնցից նշում ենք մի քանիսը.—

1. Երբ հայոց դպրոցի, հայերէն առարկայի, աւարտող դասարանի որեւէ ուսուցիչ գիտենայ, որ այդպիսի մի հաւաքական քննութիւն գոյութիւն ունի եւ իր դասարանն

րենց երեխաները մի պաշտօնական քննութեան են մասնակցում եւ նրանց հայերէնի նիշերը հաշւով է տրւում իրենց:

Մի յօդուածագիր կարծիք էր յայտնել որ ներկայ քննութիւնների եղանակը անարդիւնք է եւ ճիշտն այն է, որ նախկինի պէս իւրաքանչիւր դպրոցի ուսուցիչը ինքը կատարի իր աւարտական դասարանի քննութիւնները՝ իր դպրոցում: Դա կը կորցնի խնդրի լրջութիւնը. նախկինում, իւրաքանչիւր քաղաքում, անգամ Թեհրանում մենք միայն մի հայոց դպրոց էինք ունենում, սակայն այդ մի դպրոցի աւարտող դասարանի քննութիւններն էլ մենակ ուսուցիչը չէր կատարում, այլ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից, զարող ուսուցիչներից մի յանձնախումբ էր ընտրւում, կամ ընթերականներ, այդ անելու: Այսօրուայ Թեհրանի հայոց դպրոցների վիճակը չի կարելի համեմատել նախկինի հետ: Այսօր Թեհրանում մենք ունենք շուրջ 26—28 հայոց դպրոց եւ տասնհինգ հազարից աւելի հայ աշակերտութիւն: Ուստի պիտի համանմանութիւն ստեղծուի բոլոր դպրոցների հայերէն պարապմունքների մէջ եւ քննութիւնների ճիշտ եղանակն էլ հէնց այն պիտի լինի, որ տեղի է ունենում ներկայում, արդիական հիմունքով:

Տողերիս գրողն էլ 25 տարի է, որ վարիչն է մի ոչ-ազգային դպրոցի: Մինչեւ մի տասը տարի առաջ էլ այդ դպրոցի ա-

եւս պիտի մասնակցի այդ քննութիւններին, որտեղ պիտի երեւան գայ իր աշխատանքի արդիւնքը, նա պիտի աշխատի իր դասարանի աշակերտութեան գիտելիքը համապատասխանեցնել այդ քննութիւնների նիւթերի եւ հարցերի մակարդակին գոնէ հէնց ինքը իր դասատուութեան պատասխանատուութիւնից պարզերես դուրս գալու համար:

2. Որ ինքը՝ երեխան երբ գիտենայ, թէ մրցակցութեան խնդիր կայ եւ ինքը պիտի հրապարակային քննութիւնների մասնակցի, որտեղ երեւան պիտի գայ իր գիտելիքների չափը, այլեւս չի մտածի, որ հայերէն առարկաները աւելորդ են եւ լոկ ցոյցի համար են ծրագրի մէջ մտցրել եւ այլեւս մասերի արանքով չպիտի նայի հայերէն առարկաներին, այլ հայերէնն էլ հաշուի կառնի ինչպէս միւս դասերն է հաշուի առնում:

3. Որ իւրաքանչիւր դպրոցի տնօրէն կամ հոգաբարձութիւն, հանգիստ խղճով պիտի գիտենայ թէ ինչպիսի՛ աշխատանք է տարել իր հովանաւորող դպրոցի ուսուցիչը եւ ինչ պիսի յառաջադիմութիւն է ունեցել իր դպրոցի աշակերտութիւնը:

4. Որ հայ ծնողները, որոնք միայն հայոց լեզուն սովորելու համար են իրենց երեխաներին հայոց դպրոց ուղարկում, խղճով հանգիստ պիտի զգան իրենց, երբ տեսնեն ի-

րի առաջ էլ այդ դպրոցի աւարտող դասարանների հայերէն առարկաների դասատուն ես էի: Չնայած որ բոլոր ուժերս գործադրում էի լաւ սովորեցնելու, սակայն հոգեպէս չէի կարողանում բաւարարուել, որ երեխաները սովորել են պէտք եղած հայերէնը: Մինչեւ մէկ տարի առաջ էլ մեր դպրոցը չէր հրաւիրւում մասնակցելու քննութիւններին: Այս տարի, երբ մեր դպրոցն եւս ազգային դպրոցների Կենտրոնական Յանձնախմբի կողմից հրաւիրուեց մասնակցելու այս քննութիւններին, սիրով ընդունեց եւ միայն այս տարի է, որ թէ՛ դպրոցի մանկավարժական խորհուրդը եւ թէ՛ ծնողները հոգեպէս հանգիստ են, որովհետեւ պարզուել է թէ ինչ աստիճանի են հայերէն սովորել մեր աւարտող դասարանի երեխաները:

Այդ քննութիւնների հարցարաններ պատրաստողը եւ ղեկավարը յարգելի դր. Աշոտ Առաքելեանն է եւ անգնահատելի են նրա կրած նեղութիւնները ամառուայ այն տօթ օրերին: Յարգելի դոկտորը անձամբ եւ լուրջ ղեկավարում է քննութիւնները եւ նրա խորհրդով են դասաւորւում քննութեան բոլոր հարցերը:

Վերոյիշեալ յօդուածի վերջում հայոց լեզուի ուսուցչի պակասի, հայ ծնողի անփութութեան եւ անգլերէն լեզուի պաշտամունքի խնդիրներ էր մէջ

(Շար. տես 6րդ էջ)



# Թեհրանի հայոց դպրոցների

(Շար. 3րդ էջից)

րերել, որ բնաւ կապ չունեն քննութիւններին, այլ վերաբերում են Ազգային իշխանու-թիւններին։

Ուստի պիտի ընդունել, որ մի շատ արդիւնաւէտ եւ ազգօգուտ ձեռնարկութիւն եւ լաւ նախաձեռնութիւն է Թեհրանի հայոց դպրոցների հայերէն ա-ռարկաների քննութիւնների արդի ձեւը, բոլորի համար ող-ջունելի է այդ եւ յուսանք որ այդպէս էլ պիտի շարունակւի ապագայ տարիները։

«ԱԼԻՔ» — Ըստ մեր քա-ղած տեղեկութիւնների, 1975ի Յունիսի քննութիւններին մաս-նակցել են Թեհրանի հայոց տարրական դպրոցներից 16-ը (1268 հոգի), որոնցից 9-ը ազգային իսկ 7-ը այլ, մաս-նաւոր դպրոցներ են։ Այդ քըն-նութիւններին մասնակցել են 15 ուղեցոյց դասընթացքների աշակերտ – ուհիներ (1092 հո-գի), որոնցից 8-ը ազգային, իսկ 7-ը յարանւանութեանց եւ մասնաւոր դպրոցներ։

Արդիւնքը եղել է մէկ տա-սերորդից պակասը վերաքննե-լի։

Այս քննութիւնների վարի-չը եւ հարցարաններ կազմո-ղը եղել է դոկտ. Աշոտ Առա-քելեանը, որ Թեհրանի համալ-սարանի դասախօս է նաեւ։



دانش آموزان دبستان تابان پایان سال تحصیلی را جشن گرفتند

Թաբան դպրոցի տարեվերջի հանդեսը



Պրն. Խորէնի մեծ աղջիկը



Պրն. Խորէնի հօրաքոյրը և իր ամուսինը



# جشن پایان سال تحصیلی دبستان ملی پیروز بطرز باشکوهی برگذار شد

چند روز قبل جشن آخر سال دبستان ملی پیروز در دبستان مزبور واقع در خیابان خواجه نظام الملک

بقیه در صفحه ٤

دانش آموزان دبستان ملی پیروز هنگام اجرای بالت

## جشن پایان سال

بقیه از صفحه ١

چهارراه شیشان برگذار شد

مدعوین عبارت بودند از اولیای اطفال دبستان وعده ای از فرهنگ دوستان محل و انجمن محلی و چند نفر از خبرنگاران جرائد

برنامه جشن از پنج قسمت جالب توجه تشکیل یافته بود و از ساعت ۸ بعدازظهر باسرود شاهنشاهی شروع ودرساعت ۱۱ و نیم بپایان رسید

قسمت اول عبارت بود از سرودهای دسته جمعی ودکلمه های شیرین بزبان فارسی وارمنی که بوسیله کودکان ۷ ساله انجام شد و با موفقیت کامل اجرا گردید قسمت دوم عبارت بود از سرودهای دسته جمعی ملی واشعاری چند از شعرای نامی پارسی وارمنی که بوسیله دسته بورگان اجرا و توجه حضار را کاملا جلب نمود

قسمت سوم گذارش یکساله سال تحصیلی ۳۵–۱۳۳٤ دبستان ملی پیروز که بوسیله آقای خورن دروردیان مدیر لایق آن دبستان باطلاع حضار رسید

قسمت چهارم - عبارت بود از یک نمایش نامه اخلاقی و تربیتی ...

## مقدمات انتخابات

ساعت شش بعدازظهر روزدوشنبه گذشته جلسه شورایعالی شهر باحضور

## بدبخت کشوری ک... زن...

توکیو - آمار منتشره در تو... ۱٦۳ر۸۲۲٤ر۸ نفر رسیده است. این آمار نشان می دهد که ... کمتر از ... ان می باشد

۱۳۴۴/۴/۵ سال ۴۱

تیرماه ۱۳٤٥ – شماره ٦٨٧٣

## جشن پایان تحصیلی در دبستان ملی تابان

جشن پایان تحصیلی دبستان ملی تابان با حضور جمعی از شخصیت های فرهنگی و والدین دانش آموزان در محل دبستان واقع در خیابان خواجه نظام الملک برگزار گردید.

درابتدای جشن مدیر دبستان گزارش سالیانه دبستان را قرائت کرد وسپس برنامه های مختلف هنری توسط دانش آموزان این دبیرستان اجرا گردید.

درپایان یکی از فارغ التحصیلان کلاس ششم از طرف همکلاسی های خود از زحمات آقای دردیان مدیر دبستان سپاسگزاری کرد و جشن با شکوه خاصی پایان پذیرفت.

انتخابات اعضاء انجمن محلی

## ...تمام روز میشود

بعدا این تصمیم ساعت درس کلاسهای اول تاششم از ۱۸ به ۲۸ ساعت افزایش داده شد.

ضمنا مقرر گردید ۷ درصدی که از بابت مالیات قرار بود از حقوق افراد تمام وقت کسر گردد صرفنظر گردد.

## جشن پایان تحصیلی دبستان تابان

جشن پایان سال تحصیلی دبستان ملی تابان (ارامنه) در محل دبستان (خواجه نظام الملک) منعقد گردید. وبرنامه های جالبی از طرف دانش آموزان این دبستان اجرا گردید.

از ٤٦٨ نفر دانش آموزان این دبستان تعداد زیادی را محصلین ارامنه بی بضاعت وکم بضاعت تشکیل میدهند که از نقاط مختلف بتهران آمده اند و در مدت کوتاهی زبان فارسی رادر این دبیرستان توام با روشهای تربیتی فرا گرفته اند.

دراین مراسم آقای «خورن دروردیان» رئیس دبستان گزارشی باطلاع حاضرین رسانید واظهار داشت که از عده ای از محصلین این دبستان شهریه گرفته نمیشود.

مدیر دبستان تقاضانمود که وزارت فرهنگ بموسسات فرهنگی اقلیت های ایرانی که در اشاعه زبان فارسی فعالیت میکنند توجه بیشتر مبذول دارد.

## برای انتخاب مروجین کشاورزی

چندروز قبل ازطرف اداره ترویج برای دیدن یکدوره بتهران اعزام

Թաբան դպրոցի տարեվերջի հանդեսի արտացոլումը իրանական մամուլում

وزارت فرهنگ

اداره کل فرهنگ استان مرکز

اداره ..................

شماره [illegible]

تاریخ [illegible]

پیوست ..................

آقای خورن مسیحی دروردیان رئیس

دبستان تـــــــابان

طبق گزارش اداره اموراجتماعی فرهنگ استان مرکزی نظربفعالیتی که بمنظور پیشرفت اموتحصیلی وتربیتی وهنری دانش‌آموزان درسال ۳٦ـ۳۷ مبذول داشته ایـــد بدینوسیله ازمساعی وزحمات شما قدردانی نموده امیدواراست درسالهای آینـده تحت توجهات شاهنشاه بزرگ فرهنگ‌دوست درکلیه قسمتها آموزگاران شریف و دانش آموزان آن دبستان بهٔ پیشرفتهای منظرر نائل گردند .ـ

مدیرکل فرهنگ استان مرکزی ـ گرجی

[signature]



۱۳۵۸/۹/۲۲

تاریخ ............ ۱۳۵

شماره ثبت ۴۴۰۶۳

شماره دفتر نماینده ............

وزارت دادگستری

اداره سجل کیفری وعفو وبخشودگی
(قسمت سجل کیفری)

۷۵۰۲۶

## گواهینامه

قسمت سجل کیفری این اداره گواهی میدهد که طبق سوابق موجوده دراین

اداره آقای/خانم [illegible] فرزند [illegible]

نام خانوادگی [illegible] شماره شناسنامه/پروانه اقامت-گذرنامه ۸

صادره از [illegible] متولد ۱۲۹۳ سابقه محکومیت کیفری ندارد.

رئیس اداره سجل کیفری وعفو وبخشودگی

[illegible]

چاپ روزنامه رسمی ...

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԹԵՀՐԱՆԻ ԹԵՄԻ
ԻՐԱՆ

Ողոսայ Վիլա, 311
Հեռախօս: 891634_891635

خلیفه‌گری ارامنه تهران
ایران

تهران: خیابان ویلا شماره ۳۱۱
تلفن: ۸۹۱۶۳۵–۸۹۱۶۳۴

Թուական:
Թիւ:

تاریخ: ۱۳۵۸/۷/۲۲
شماره: ۱۱۱/۲۰۹۳

## گواهینامه

باستناد مدارک موجود در دفتر خلیفه گری ارامنه تهران بدینوسیله گواهی مینماید که آقای خورن درووریان فرزند پطروس دارای شناسنامه شماره ۸ صادره سنگ سفید بربرود در مدارس ارامنه بشرح ذیل با سمت آموزگاری بطور تمام وقت مشغول انجام وظیفه بوده است.—

۱– دبستان ارامنه منصور آباد از آغاز سالی پایان سال تحصیلی ۱۳–۱۳۱۲
۲– دبستان ارامنه ونک از آغاز سال تحصیلی ۱۴–۱۳۱۳ الی پایان سال تحصیلی ۱۵–۱۳۱۴
۳– دبستان ارامنه بربرود از آغاز سال تحصیلی ۱۶–۱۳۱۵ الی پایان سال تحصیلی ۱۹–۳۱۸
۴– دبستان ارامنه کمره از آغاز سال تحصیلی ۲۰–۱۳۱۹ الی پایان سال تحصیلی ۲۱–۱۳۲۰
۵– دبستان ارامنه ونک از آغاز الی پایان سال تحصیلی ۲۲–۱۳۲۱
۶– دبستان ارامنه منصور آباد از آغاز سال تحصیلی ۲۳–۱۳۲۲ الی پایان سال تحصیلی ۲۵–۱۳۲۴
۷– دبستان ارامنه دانائی از آغاز سال تحصیلی ۲۶–۱۳۲۵ الی پایان سال تحصیلی ۲۸–۱۳۲۷
۸– دبستان ساهاکیان (شاه‌عزیز سابق) از آغاز سال تحصیلی ۲۹–۱۳۲۸ الی پایان سال تحصیلی ۳۰–۲۹
۹– دبستان ارامنه کوشش از آغاز سال تحصیلی ۳۱–۱۳۳۰ الی پایان سال تحصیلی ۳۲–۱۳۳۱

اسقف اعظم آرداک مانوکیان
خلیفه ا[illegible]
خلیفه ارا[illegible] تهران

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ
ԴԱՆԱՅԻ ԴՊՐՈՑ
( ՋԻԾԵՐԱԲԱԴ )

ԹԵՀՐԱՆ 19 [illegible] 1953 Թ

№ ..........

[illegible]
[illegible]
[illegible]

Ի պատասխան Ձեր [illegible] 16 [illegible]
[illegible]
[illegible] 2 և 3-րդ
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]
[illegible]
Ատենապետ [illegible]
Քարտուղար [illegible]



ՎԱՆԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑ

مدرسه ملی ارامنه ونک

№

Վանակ 1942 Սեպտեմբեր 1

Պայմանագիր

دبستان کوشش

شماره ........

تاریخ ۲۶/۷ ماه ۱۳۳

پیوست ........

گواهی میشود

آقای جوزن دروردیان در سال تحصیلی ۱۳۳۱-۱۳۳۰

(سال جاری) در این دبستان مشغول تدریس میباشند

از طرف رئیس دبستان

استپانیان

دبستان کوشش پسران ارامنه

تهران ۱۳۴۹

مؤسس داویدیان


ՏԵՍՈՒՉ
ԹԵՀՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
„ԴԱՒԹԵԱՆ" (ՔՈՒՇԵՇ) ԴՊՐՈՑԻ

Թեհրան, 1946 թ.

№

Պրոֆեսոր Ռուբէն Աբրահամեանի նամակը



Պրոֆեսոր Ռուբէն Աբրահամեանի նամակներից ԽՏՎ-ին



Պր. Ռ Աբրահամեանի նամակներց ԽՏԿ--ին



[illegible]

[illegible]

[illegible] 1933-34

[illegible] 200 [illegible] 120 [illegible]

[illegible]

«21» [illegible] 1934

دبستان کوشش

تاریخ ۱۹ / ۶ ماه ۱۳۳۰

شماره

پیوست

آقای ~~آقای~~ خانم ژوران روزرمان

هیئت مدیره دبستان کوشش شما را برای ۲۵ ساعت تدریس در هفته باحقوق ماهیانه ۲۵۰۰/- ریال در سال تحصیلی ۳۱ - ۱۳۳۰ از تاریخ اول مهر ۳۰ تا تاریخ اول شهریور ۳۱ دعوت مینماید مقتضی است نکات زیر را کاملا مراعات نمائید .

۱ - تنظیم برنامه درس شما برطبق مقتضیات دبستان معین خواهد شد .

۲ - باید هر هفته یك روز را با ناظم دبستان در انتظامات دبستان کمك نمائید .

۳ - حضور شما در جلسات شورای آموزگاران لازم و تصمیمات شورای آموزگاران را باید کاملا بموقع اجراء گذارید .

٤ - اگر یکی از آموزگاران بعللی نتواند در دبستان حضور بهمرساند شما باید در ساعات بیکاری خود کلاس او را اداره نمائید .

رئیس دبستان کوشش | منشی هیئت | رئیس هیئت مدیره دبستان کوشش ارامنه

Arzoumanian



دبستان کوشش

شماره 250

تاریخ ۲۹ / ۶ ماه ۱۳۳۱

پیوست ..........

خانم خورشن دروبوریان
آقای

هیئت مدیره دبستان کوشش شما را برای ۲۵ ساعت تدریس در هفته باحقوق ماهیانه ۲۵۰۰/ ریال در سال تحصیلی ۳۲ – ۱۳۳۱ از تاریخ اول مهر/ ۳۰ تا تاریخ اول شهریور/ ۳۱ دعوت مینماید مقتضی است نکات زیر را کاملا مراعات نمائید .

۱ – تنظیم برنامه درس شما برطبق مقتضیات دبستان معین خواهد شد .

۲ – باید هر هفته یك روز را با ناظم دبستان در انتظامات دبستان کمك نمائید .

۳ – حضور شما در جلسات شورای آموزگاران لازم و تصمیمات شورای آموزگاران را باید کاملا بموقع اجراء گذارید .

٤ – اگر یکی از آموزگاران بعللی نتواند در دبستان حضور بهمرساند شما باید در ساعات بیکاری خود کلاس او را اداره نمائید .

رئیس دبستان کوشش — منشی هیئت — رئیس هیئت مدیره دبستان کوشش ارامنه

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐ

Армянская ССР
МИНИСТР
ПРОСВЕЩЕНИЯ

№ 0-1   Ձեր № ______ «___» ______ 196 թ.   27. VII. 1965 թ.

Тел. 2—18—67   На ваш № ______ от «___» ______ 196 г.   г.

Հասցեն՝ Երևան, Կառավարական տուն: Адрес: Ереван, Дом правительства.

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԱՐԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉ
ՊԱՐՈՆ ԽՈՐԵՆ ՊԵՏՐՈՍԻ ՏԵՐ-ՎՐՈՒՅՐՅԱՆԻՆ

Հայկական ՍՍՌ լուսավորության մինիստրությունը հրավիրում է Ձեզ մասնակցելու սփյուռքահայ ուսուցիչների համար ընթացիկ տարվա Օգոստոսի մեկից մինչև սեպտեմբերի 15-ը կայանալիք ձեռնարկումներին, ծանոթանալու դպրոցներում դասավանդման դրվածքին, ինչպես և գիտության, տեխնիկայի և կուլտուրայի նվաճումներին։

Շ.Ս.ՍԻՄՈՆՅԱՆ



شماره ۳۷۸

تاریخ ۲۹/۹/۳۵

پیوست

**وزارت فرهنگ**

**دبستان ملی کشوری**

جناب آقای سیوچی ریاست محترم دبستان ملی تابان

تحسین و تشکر خود را از حسن تنظیم رشته‌های ورزشی دبستان متعهده

لطفاً و ضمناً بعموم کارکنان محترم آن دبستان که در این

گردش‌نامه هدایت و همکاری صمیمانه و دوگرانه‌ای بذل نموده

مراتب امتنان خود و عموم کارکنان سازمان پیشاهنگی کشوری

تقدیم و امیدوارم توفیق در راه خدمتگذاری به پیشاهنگی عمومی کشور

به همه شما خواستارست

رئیس سازمان پیشاهنگی کشوری



ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ
ԴԱՆԱՅԻ ԴՊՐՈՑ
(ՅՈՒՍԵՓԱԲԱԴ)

ԹԵՀՐԱՆ ............ 19[4]8 Թ

№ ..........

Վկայագիր

[illegible] 1946-47
և 1947-48 [illegible]
[illegible]
[illegible]

[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]
[illegible]
[illegible]



۵۸/۶/۱

از همکاران و آموزگاران تجربی که در دبستان تابان سالهای متمادی با اینجانب انجام وظیفه نموده‌اند و مدیران مدارس دیگر که از کارنده واقف و آگاه هستند که اینجانب از سال ۱۳۳۲ که دبستان تابان را تأسیس نمودم و از آن تاریخ همیشه و تمام وقت در آن دبستان مشغول انجام وظیفه بودم و پس از گرداندن کلیه کارهای دبستان در هفته ۲۸ ساعت در کلاسهای پنجم و ششم نیز تدریس نموده‌ام و پس از مشمول فرمان در آمدن دبستان مرتب در دبستان تدریس نمودم. تقاضا دارم گواهی خود را مرقوم فرمایند. خورن دردوریان

اینجانب راده مشتاق دارنده شناسنامه ۲۱۴۸ صادره از تبریز از اول سال تحصیلی ۴۴-۱۳۴۳ با آقای خورن دردوریان صاحب امتیاز دبستان تابان مشغول انجام وظیفه بوده و از هر جهت ناظر و آگاه هستم که او همیشه در دبستان مشغول انجام وظیفه بوده و ۲۸ ساعت در هفته نیز در کلاسهای پنجم و ششم مشغول تدریس بوده است

اینجانب مارگارید اصلانیان دارای شناسنامه شماره ۵ از اراک که از سال تحصیلی ۴۰-۱۳۳۹ الی ۵۲-۱۳۵۱ با سمت آموزگاری با آقای خورن دردوریان در دبستان تابان انجام وظیفه نمودم از فداکاری او چه در اداره کردن دبستان و چه در هفته ۲۸ ساعت تدریس نمودن گواه میباشم.

اینجانب [illegible] که از سال تحصیلی ۱۳۵۱ بمدت ۳ سال [illegible] دبستان تابان بودم [illegible] خورن دردوریان صاحب امتیاز دبستان ذکر شده تمام اوقات رسمی [illegible] ساعت در هفته باشد در دبستان حضور داشته و چه کلیه امور دبستان که مربوط به آن بود رسیدگی نموده و در کلاسهای پنجم و ششم نیز تدریس داشته

اینجانب هرابوش کشیشیان دارای شناسنامه شماره ۳۲ صادره از اصفهان که از سال تحصیلی ۵۲-۱۳۵۱ الی ۵۷-۱۳۵۶ در دبستان تابان به سمت آموزگاری انجام وظیفه نموده‌ام و از کار آقای خورن دردوریان کاملاً آگاه و گواه هستم که او چه پیش از فرمان و چه بعد از فرمان در هفته ۲۸ ساعت در دبستان فوق تدریس نموده است.

اینجانب [illegible] دارای شناسنامه شماره ۳۴۶ صادره از [illegible] تهران که از تاریخ ۱۳۴۰/۱/۲ الی ۱۳۴۹/۷/۱۵ با سمت مدیر مسئولی از طرف اداره آموزش و پرورش در دبستان تابان انجام وظیفه نموده‌ام گواه هستم که آقای خورن دردوریان پس از [illegible] کامل [illegible] ۲۸ ساعت در هفته پنجم و کلاسهای ششم تدریس نموده است [illegible]
۵۸/۷/۷

اینجانب [illegible] دارای شماره شناسنامه ۱۴۲۷۹ [illegible] در دبستان تابان [illegible] مشغول انجام وظیفه [illegible] گواهی می‌نمایم آقای خورن دردوریان در دبستان تابان مشغول انجام وظیفه بود و در سال ۵۷-۵۶ در دبستان تابان ریاست را بعهده داشتم و [illegible] تدریس اشتغال داشتند و تمام وقت مشغول تدریس بود.

اینجانب [illegible] سروری دارای شناسنامه شماره ۷۶۸ صادره از تهران شغل آموزگار [illegible] آگاه و مطلع هستم که آقای خورن دردوریان از فرهنگیان باسابقه و فعال [illegible] در سنوات ۱۳۳۲ [illegible] بعد با افتتاح دبستان تابان خدمات صادقانه [illegible] خود در راه آموزش و پرورش ارائه داده [illegible] علاوه بر اداره [illegible] نیز [illegible] مشغول بوده‌اند.

اینجانب [illegible] از مؤسسین مقدم سرپرست [illegible] کودکان که [illegible] بیش از ۴۵ سال فعالیت آموزشی دارم [illegible] گواهی [illegible] آقای خورن دردوریان از ۲۴ سال [illegible] بعنوان معلم و بعد از سال ۱۳۳۲ با تأسیس دبستان تابان بعنوان اداره کننده و معلم صادقانه به آموزش و پرورش خدمت کرده است.

ԹԵՀՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԱԶԻԶ ԴՊՐՈՑ
(ՀԵՃՄԱԹԻՒ)

Թեհրան ۱۳۳۳/۹/۲۶ 195 Թ.

№

بدینوسیله گواهی میشود که آقای جورج درورديان در سالهای تحصیلی ۲۹،۱۳۳۸ و ۳۰،۱۳۲۹

مدیر داخلی دبستان شاه عزیز بوده است مشار الیه خدمت خود را بکمال صمیمیت و درستی

انجام داده و هیئت مدیره از اخلاق و درستکاری او کمال رضایت را دارد

رئیس هیئت مدیره دبستان ملی شاه عزیز

۳۳،۹،۲۶

ԱԶ. ՇԱՀԱԶԻԶ ԴՊՐՈՑ
تهران
تأسیس ۱۳۲۸

خلیفه‌گری ارامنه جلفای اصفهان

ایران و هندوستان

مورخه ۱۴ رجب ۱۳۳۸ مطابق ۱۹۲۰

نمره ۱۶۶

عالیجاه کدخدا پطروس

بموجب نوشته قرارداد که درخصوص امر فیمابین ماناسرزرئه و مرتضی گماشته

جناب اجل آقای خواجه میرزا قلیخان [illegible] باید رسیدگی کامل در آن

موضوع نموده و احقاق حق ماناسرزرئه را بنمائید در رفع ادعای او بشود

یقین است برحسب المرقوم معمول خواهید داشت



Պրոֆ. Ռուբէն Աբրահամեանի նամակներից՝ Պրն Խորէնին



Պրոֆ. Ռուբէն Աբրահամեան



ԹԵՀՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԱԶԻԶ ԴՊՐՈՑ
(ՀՈՎՄԱԹԻԵ)

ԹԵՀՐԱՆ, 8 Նոյեմբերի 1950 Թ.

№



ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԴԻՒԱՆ

Թիւ 169-687

Թեհրան, 19 Մայիս 1980

Մեծայարգ՝ Պրն. Խորէն Տ.Վրոյրեան

Սոյն գրութեամբ յայտնում ենք թէ՝ Պատգամաւորական ժողովի 10-րդ, նստաշրջանի 14 Մայիս 1980թ.-ի նիստում ընտրուեցիք որպէս Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի անդամ:

Սոյն Թեմական Խորհրդի նստաշրջանը կամբողջանայ, երբ վերամշակուած կը լինի Թեմիս նոր կանոնադրութիւնը եւ կը կատարուեն Պատգամաւորական ժողովի նոր ընտրութիւններ վերամշակուած կանոնագրի սահմանումներով:

Շնորհաւորելով Ձեր ընտրութիւնը լիայոյս ենք, որ Ձեր գործօն մասնակցութիւնը կը բերէք Թեմական Խորհրդի ժողովներին եւ աշխատանքներին:

ԴԻՒԱՆ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
Նախագահ՝
ԱՐՏԱԿ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Ատենադպիր՝
Օր. Այիդա Յովհաննիսեան

Ատենապետ՝
Սերոժ Սուքիասեան

Պարոն Խորէնը՝ Թեհրանի Թեմականի անդամ

# ԳԻՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Մանսուրաբադ Յունիս 11 1944

Յունիս 2-ին տեղի ունեցաւ Մանսուրաբադ գիւղի հայոց դպրոցի ամավերջի քննութիւնը Թեհրանի Հայկ. դըպրոցի տեսուչ Ռ. Աբրահամեանի և գիւղի հայ կառավարիչ պր. Օ. Եղիազարեանի ներկայութեամբ։

Մանսուրաբադի հայ դըպրոցը 8 տարի փակ մնալուց յետոյ վերաբացուել է այս տարի. ընդունել մի խումբ դպրոց չգնացած և անգրագէտ երեխաներ ունեցել է 8 ամսայ դասընթաց և ունել է մի խումբ կանոնաւոր ամփոփած աշակերտութիւն, որի ուսման գնահատումը ըստ համեմատականի. Պրոֆեսոր Աբրահամեանը բոլոր էր գտնում թէև [illegible] հայ դպրոցներից փորձերէնի թելադրութիւնը, լաւ նիւթը կազմում է գրքի ամենադժուար մասը և ընտրել էր պրոֆեսորը, [illegible] որ ամենաթոյլ աշակերտը կարողել էր երկու սխալ միայն։

Մնացած բոլոր քննութիւնները յաջող էին. Ոչ կըռւած և ոչ վերացնելի աշակերտ չեղաւ. Մեծամասնութիւնը արժանացաւ 19—20 թւանշանների, իսկ 14ից պակաս թւանշան առաջող չըղներեց. Այդ նշանակում է կատարեց ինքը տեսուչը։

Քննութիւնների պահուն դպրոց այցելեց գիւղապետ պ. [illegible] հասարակ աշխատանքները այնտեղ գան թողին նրան, որ հրահանգից գիւղի կառավարչին մեծացնել դպրոցի արահ, նորոգել ու կանոնաւորել իր ծախքով։

Գնահատելի է պ. տեսչին բարեսրտութիւնը, որը աշակերտութեան յառաջադիմութիւնով յանգեցրած, ամառային մի ամբողջ ամիս որ նւիրեց աշակերտութեան քըննութեան։

Գնահատելի է նաև գիւղի կառավարիչ պ. Օնիկ Եղիազարեանի աշխատանքը, որ [illegible] պարտականութիւն է յանձն առել նիւթական ամենադժուար պայմաններում իսկ. այս տարի պահել է Մանսուրաբադի դպրոցը առանց ազգային ժողովների որևէ օժանդակութեան։

Ամավերջի այս քննութիւններն էլ, յատկապէս [illegible] որը նշանակելով նա հըրաւիրել էր ազգային ժողովի[illegible] ներկայացուցիչներին, որ յայտնել [illegible] քից եկողներին՝ ինչպիսի մեծ խումբ էլ լինէր։

Յարգելի տեսուչը, քննութիւնից յետոյ գրաւոր կերպով վկայեց, որ [illegible] որ նիւթը [illegible] լիվին չեղած [illegible] տարւայ [illegible] Գնահատելի է [illegible] ու թւերը չկան և բոլորի գիտութիւնը համարեա միատեսակ է գնահատուած 14—20 թւանշաններով։

Շրջիկ Թղթակից

Ուրմիա 17 մայիս

Ուրմիայից 21 կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնւում է Նախշևանթափա [illegible] հայաբնակ գիւղը։ Ապրիլի 17ին բնակչութեան գիւղի ուսուցիչ պ. Մ. Յովսէփեանի ղեկավարութեամբ Արշին Մալ-ալան ժամը 12 ին [illegible] արդէն փողոցները լցուն էին հայ և պարսիկ հիւրերով, որոնց եկել էին շրջակայ գիւղերից ներկայացումը տեսնելու։

Հաղորդակցութիւնը նկատելով որ [illegible] բոլոր հանդիսականներին անցկացրելու հնարաւորութիւն չունի իսկոյն անցան գործի և ուսուցչի ու գիւղի երիտասարդութեան հետ միասին բեմը փոխադրեցին դպրոցի բակը և ծածկեցին [illegible] հաւաքած գորգերով։

Ներկայացումից առաջ բեմ բարձրացան մի խումբ ճառախօսներ, որոնցից Վ. Ներսիսեանը խօսեց [illegible] յաղթանակների մասին, [illegible] հայ հերոսներին և [illegible] որոնց [illegible] դէմ. (ծափահարութիւններ)

Յետոյ խօսեց [illegible] որը [illegible] հայ և պարսիկ [illegible] բարեկամութիւնը և նրանց [illegible] փոխադարձ յարաբերութիւնները։ (երկար ծափահարութիւն)։

Դրանից յետոյ [illegible]

---

№ 17 (2448)

## ԵՐԿԻՐ ԻՄ ՉՔՆԱՂ

Ես կեանք եմ առել քո սուրբ հողից դուրս, երկիր իմ չքնաղ,
Քո հուր կարօտը սիրտս է այրել, այրել է դեռ վաղ,
Հեռու եմ ապրել. աչքով չեմ տեսել հողդ անտառս,
Բայց սիրտս յաւէտ քեզ է տենչել երկիր հարազատ.

Քո հերոսական նահատակներն եմ լսել ու երգել
Քո գիւղացիների քաջութիւնները՝ սիրտս գրաւել,
Բանաստեղծների անգին խօսքերով դիւրել եմ, գերել,
Դէպի քեզ գալու, քեզնով ապրելու օրն եմ երազել.

Շատ պոէտներ են գովք յօրինել խօսքերով վսեմ,
Ասել են թէ դու Տիրոջ մոռացած դրախտն ես Եդեմ,
Երկինքդ ծիծաղուն, օդդ զինչ, մաքուր, ջուրդ պարզ, յստակ,
Լեռներդ հպարտ, գետերդ վարար, ծովերդ անտակ:

Բայց ես գիշերով տեսիլք եմ տեսել, երկիր իմ օծեալ,
Քո մասին ինչ որ գրել են, երգել, դեռ քիչ է դարձեալ,
Դու արժանի ես, որ հերոսներդ երգչախումբ կազմեն,
Սրբազան ձայնով քո հողի վերեւ գովքդ գեղգեղեն,

Մօտ է այն օրը, որ պիտ կատարուի ուխտը իմ սրտիս,
Քնեմ ու տեսնեմ մէկն երազում սայ ինձ ասելիս,
Ահ—դէն վեր կաց, ժամդ լրացաւ, մեծ է կարաւան,
Դնա դէպի քո չքնաղ հայրենիք, ազատ Հայաստան,

ԽՈՐԷՆ ՏԷՐ ՎՐՈՑՐԵԱՆ

---

## ԴՈՒՆ ՊԻՏԻ ԱՊՐԵՍ

Դարեր փառապանծ ջահով լուսատու,
Փառքով ապրել ես, իմ քաջ ազգ Հայկեան,
Երբ դեռ չկային ազգերից ոմանք,
Դու կային քո մեծ երկրով Նայիրեան.

Բազում փոթորիկ, մրրիկ, հեղեղներ,
Փչեցին իրենց յորդ թափով ուժգին,
Նրանց թնդիւնին կորան շատ ազգեր,
Բայց դու պահեցիր կեանքդ թանկագին.

Դուն պիտի ապրես, որ տաս աշխարհին
Հսկայ կոթողներ, շինարար որդիք.
Որ աշխարհահռչակ կոթողների հետ,
Յաւիտեան մնայ քո փառք, արժանիք:

Եթէ կործանիչ, ապիկար մի ազգ
Տիրել ցանկանայ խաղաղ աշխարհին,
Դուն պիտի ապրես, տաս քաջ ռազմիկներ,
Նրան կործանող ազգերի շարքին:

Այժմ երբ սփիւռքից լսում է ուժգին
Ուրախ ղօղանջը կարաւանների,
Երբ հայը մաշուած, պանդուխտ, տարագիր,
Դառն է մտնում իր սուրբ մայր երկրի,

Դուն պիտի ապրես հսկայ ուժ դառած,
Խանդավառ երգես զարունը քո նոր,
Հայոց հոյակապ փառքը հինաւուրց,
Անսասան ուժով պահես զօրաւոր:

Թեհրան ԽՈՐԷՆ ՏԷՐ ՎՐՈՑՐԵԱՆ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, 1975 ԷՋ 3

թիւ 265 (11,143)

# ՅԱԿՈԲ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

(ՄԱՀՒԱՆ ՔԱՌԱՍՆՕՐԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

ԽՈՐԷՆ ՏԷՐ ՎՐՈՅՐԵԱՆ

Սոյն թուի Հոկտ. 2-ին, Թեհրանում իր մահկանացուն կնքեց Իրանի Փերիա գաւառի Բոլորան գիւղի Նաւասարդեան մեծ գերդաստանի զաւակ՝ Յակոբ Նաւասարդեանը, որ իր ամբողջ կեանքը նուիրել էր իր գաւառի հայ ժողովրդի կրթական եւ դաստիարակչական վեհ գործին եւ Փերիայի հայ գիւղերում Մեսրոպեան գիրն ու տառը տարածելուց հայ մատաղ սերնդին։

Տեղին է յիշել, որ Նաւասարդեան գերդաստանը Փերիա գաւառի, Բոլորան մեծ գիւղի [illegible] եւ օգտակար գերդաստաններից մէկն է եղել եւ մի քանի սերունդ իր երէցներով ու պաշտօններով ծառայել է գիւղի եկեղեցուն ու դպրոցին։

Յակոբ Նաւասարդեանը ծնուել է 1893 թուին Բոլորան գիւղում։ Իր նախնական կրթութիւնը ստացել է նոյն գիւղի Մելքոն վարժապետի մօտ։

Ճիշտ այդ ժամանակները կրթական մի շարժում է սկըսւում ինչպէս ամբողջ Փերիայում, այնպէս էլ Բոլորանում։ Դպրոցների յարմար շէնքեր են կառուցւում եւ Նոր Ջուղայի Ազգային Իշխանութիւննե-րի կողմից կերթ ուսուցիչներ են ուղարկւում այդ դպրոցներում պաշտօնավարելու։ Յակոբն այնուհետ սովորում է Բոլորանի նոր ձեւ ստացած դպրոցում։ Գիւղի դպրոցը վերջացնելուց յետոյ, մի քանի տարի էլ յաճախում է Բոլորանին մօտիկ Աֆուս պարսկաբնակ գիւղի դպրոցում՝ պարսկերէն սովորելու եւ [illegible] է տալիս ընթերցանութեան ու ինքնադաստիարակման եւ դառնում է շրջանի զարգացած անձնաւորութիւններից մէկը։

Այդ ժամանակ Բոլորան է այցելում գաւառի Հոգեւոր [illegible] այցելու Եղնիկ Ծայրագոյն [illegible] վարդապետը։ Վարդապետը երբ [illegible] ճանաչում է Յակոբ Նաւասարդեանի հետ ու [illegible] է նրա քաղաքավարի կեցուածքը եւ խօսելու մաքուր [illegible]

Նոր Ջուղայի հայոց դպրոցնե-րը վկայուած գաւառացի ե-րիտասարդներին հրաւիրում ու յանձնում է գաւառի դպրոցնե



Յ. Նաւասարդեան

րը դաստիարակելու եւ զարկ է տալիս Փերիայի կրթա-դաստիարակչական գործը ամուր հիմքի վրայ դնելուն։ Տէր Յո-վակիմն եւս հէնց սկզբից Յա-կոբ Նաւասարդեանին գործա-կից է դարձնում իրեն, շատ անգամ օգտւում է նրա խելացի խորհուրդներից եւ իր ամբողջ գործունէութեան ընթացքում, նրան եւս ուսուցչա-կան պաշտօն է յանձնում Փե-րիայի հայ դպրոցներում։

Իր ժամանակին Իրանա-Հնդկաստանի Թեմակալ Ա-ռաջնորդ Վահան Արքեպիսկո-պոս Կոստանեանն եւս Յակոբ Նաւասարդեանին ուսուցչա-կան պաշտօն է յանձնում Փե-րիայի դպրոցներում պաշտօ-նավարելու։ Յակոբ Նաւա-սարդեանն պաշտօնավարել է մեծ քաղաք Բոլորանում, ա-պա Փերիայի Բուլէկ, Շուրիշ-կան, Հաղան, Միլակերտ, Ղարղուն եւ Ախուրուլ գիւղե-րում։

Յակոբ Նաւասարդեանն ուր որ եղել է՝ սրտանց եւ նուիրուա ծորէն վարել է իր պաշտօնը, ու մի զոհողութիւն չխնայե-լով իր գիտցածը լաւ սովո-րեցնելու հայ երեխաներին եւ ... [illegible]

## Յակոբ Նաւասարդեան

(Շար. 3-րդ էջից)

րեց մինչեւ իր մահը։

Ափսոս որ Նաւասարդեան-ները գնում են աշխարհից ու դատարկ են թողնում իրենց տեղը։ Անցել են այն ժամա-նակները, որ հայ երիտասարդ-ները քաղաքներում սովորե-լուց յետոյ, յուսալով, խանդա-վառուած եւ ազգասիրական հո-գով առողջուած, առանց որեւէ շահ ակնկալելու, իրենց նե-տում էին ուսուցչութեան աս-պարէզ եւ քաղաքներում կամ գիւղերում իրենց գերմարդկա-յին ճիգերը գործ դնելով, մա-տաղ սերունդ էին կրթում ու դաստիարակում, հայկակա-նութիւն, հայ հոգի, հայ լե-զու ու Հայաստան էին ներշըն-չում հայ մանկան։

Սիրելի Յակոբ, դու կա-տարեցիր քո բարի պարտակա-նութիւնները դէպի քո ազգն ու քայլեցիր քո սուրբ ճանա-պարհով եւ նուիրեցիր ազնիւ քո հանճար լուման։ Վստահ եղիր որ քո սովորեցրած մա-նուկները ուր էլ գնան, ինչ աստիճանի էլ հասնեն, քեզ չեն մոռանայ։

Հանգիստ քո աճիւնին, հողը թեթեւ գայ վրադ եւ միշտ անթառամ մնայ քո յի-շատակը։

...թուլթիւնը, ստացել է նոյն գիւղի Միկոյեան վարժարանի մօտ:

Ճիշտ այդ ժամանակները կրթական մի շարժում է սկըսւում ինչպէս ամբողջ Փերիայում, այնպէս էլ Խոյգանում: Դպրոցների յարմար շէնքեր են կառուցւում եւ Նոր Ջուղայի Առաջնորդարանի Իշխանութիւնների կողմից կիրթ ուսուցիչներ են ուղարկւում այդ դպրոցներում պաշտօնավարելու: Յակոբն այնուհետ սովորում է Խոյգանի նոր ձեւ ստացած դպրոցում: Գիւղի դպրոցը վերջացնելուց յետոյ, մի քանի տարի էլ յաճախում է Խոյգանին մօտիկ Աֆուս պարտէզը նաև գիւղի դպրոցում՝ պարսկերէն սովորելու եւ ապա դարձ է տալիս ընթերցանութեան ու ինքնազարգացման եւ դառնում է շրջանի զարգացած անձնաւորութիւններից մէկը:

Այդ ժամանակ Խոյգան է այցելում գաւառի հոգեւոր այցելու Եղնիկ Ծայրագոյն վարդապետ Երկաթակեցեանը: Վարդապետը երբ տեսնում եւ ծանօթանում է Յակոբ Նաւասարդեանի հետ ու դիտում է նրա քաղաքավարի կեցուածքը եւ խօսելու մաքուր առոգանութիւնը, նրան յանձնարարում է պաշտօնավարել Խոյգանի դպրոցում եւ այնուհետեւ Յակոբ Նաւասարդեանը մնում է ուսուցիչ:

Ժամանակի Իրան-Հնդկաստանի Թեմի Առաջնորդ Մեսրոպ Մաղախեան Արքեպիսկոպոս Տէր Մովսիսեանը, երբ ծանօթանում է Յակոբ Նաւասարդեանին, հաւանում է նրան, խրախուսում ուսուցչին եւ յանձնարարում է գնալ, պաշտօնավարել Խոյգանի դըպրոցում:

Այնուհետեւ Նոր Ջուղայի Առաջնորդարանի Իշխանութիւնների կողմից շրջանային տեսուչ է հրաւիրւում Փերիայի համար Տէր Յովակիմ քահանայ Բարսեղեանը, որը տարիներ շարունակ նուիրուածօրէն վերահասու է լինում գաւառի կրօնական, դատական եւ կրթական գործերին եւ կրթական գործը հասցնում է իր արժանաւոր աստիճանին: Տէր Յովակիմը համարեա ամեն գիւղում կառուցում է պատուաբերող դպրոցական շէնքեր եւ հիմքի վրայ դնելու: Տէր Յովակիմն եւս հէնց սկզբից Յակոբ Նաւասարդեանին գործակից է դարձնում իրեն, շատ անգամ օգտւում է նրա խելացի խորհուրդներից եւ իր ամբողջ գործունէութեան տեւողութեան, նրան եւս ուսուցչական պաշտօն է յանձնում Փերիայի հայ դպրոցներում:

Իր ժամանակին Իրան-Հնդկաստանի Թեմակալ Առաջնորդ Վահան Արքեպիսկոպոս Կոստանեանց եւս Յակոբ Նաւասարդեանին ուսուցչական պաշտօն է յանձնում Փերիայի դպրոցներում պաշտօնավարելու: Յակոբ Նաւասարդեանն պաշտօնավարել է մեծ մասամբ Խոյգանում, ապա Փերիայի՝ Խունկ, Ծուրիշկան, Հաղան, Միլակերտ, Ղարղուն եւ Ազնաւուլ գիւղերում:

Յակոբ Նաւասարդեանն ուր որ եղել է՝ սիրուել եւ նուիրուածօրէն վարել է իր պաշտօնը, ոչ մի դժուարութիւն չխնայելով գիտցածը լաւ սովորեցնելու հայ երեխաներին եւ դրա համար էլ ուր որ պաշտօնավարել է, երեխաները սիրել են նրան եւ տարեկիցներին արտասուել եւ դժուարութեամբ են կարողացել բաժանուել իրենց սիրելի ուսուցչից:

Յակոբ Նաւասարդեանն երկչոտութեան եւ հոգատարութեան կարգի անդամի պաշտօններ եւս ունեցել է եւ ուր որ եղել է, կարողացել է մարդկանց միջեւ ծագած խռովութիւնները վերացնել եւ այն ժամանակայ պետական շրջիկ պաշտօնեաների կեղեքումների առաջն առնել: Նա իր լաւ, ազնիւ ու համեստ բնաւորութեամբ պատկառանօք, սիրուել ու յարգուել է բոլորի կողմից:

Վերջին տարիները, երբ մէկը միւսի ետեւից հայ գիւղերն սկսեցին քայքայուել ու դատարկուել հայ բնակչութիւնից, որոնց մեծ մասը դարձան հայրենիք եւ ոմանք էլ գաղթեցին Նոր Ջուղա կամ Թեհրան, Յակոբ Նաւասարդեանը եւս՝ յոգնած, քայքայուած ու ծերացած, իր ընտանիքի հետ փոխադրուեց Թեհրան եւ դժուարութիւններով ապ-

(Շար. տես 8-րդ էջ)

## ԹԱԲԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԸ



Թաբան դպրոցի Տէր ու Տնօրէն Խորէն Տ. Վրոյրեան

Մեր կրթական օջախների ոսկեղէն շղթային միացող մէկ օղակն է նաեւ «Թաբան» դպրոցը։

Դպրոցը մեր ժողովրդի փրկութեան խարիսխն է, կենսունակութեան խորհրդանշանը եւ մեզ լուծող ուժերի դէմ կանգնած անխորտակ պատնէշ-ամրոցը։

«Թաբան» դպրոցն էլ որպէս այդպիսին, հիմնուել է 1952 թուին եւ 20 տարուանկեալ տարիներ, Թեհրան փոխադրուող մեր գեղջուկ եւ ուսումնածարաւ արենակիցներին իր թեւերի տակ ծուարելով՝ կրթել-դաստիարակել է նրանց եւ օժտել է քաղաքակրթութեան շնորհներով։ Իր ձեռնարկած հանդէսներով, ազգային տօների կատարմամբ եւ ներկայացումների ու դասախօսութիւնների կազմակերպմամբ սատար է հանդիսացել մեր խոնարհ խաւերի հոգեւոր ու մշակութային պահանջներին գոհացում տալու եւ հայրենասիրութիւն ներշնչելու գործում։

Թեհրանի Ազգային դպրոցներին առընթեր առաջատար յառաջադիմական եւ մասնաւոր դպրոցների մասին ներքով խօսելիս, այս տարի ներկայացնում ենք «Թաբան» դպրոցը եւ իր անխոնջ արտօնատէր-տեսուչ ու հիմնադիր Պրն. Խորէն Տէր Վրոյրեանը։

Դպրոցն օժտուած է սեփական շէնքով, տարրականի լրիւ դասընթացով, ունի 350-400 աշակերտ-ուհիներ, ուղեցոյց դասարանների բաժանմունք, գրադարան, բացօթեայ բեմ, փողարկած ջուր, ելեկ. լոյս եւ հեռախօս։ Այս Լուսոյ Օջախն իր 20-ամեայ կեանքում տուել է հարիւրաւոր շրջանաւարտներ, որոնք հանդիսանում են մեր գոյութեան պայքարի արգասիքը։ Կրթա-Դաստիարակչական Նախարարութիւնից ստացել է գնահատական գրութիւններ, հեռուստատեսի կայանից պատկերասփռել է իր սան-ուհիների հայերէն եւ պարսկերէն երգերն ու պարերը։ Նիւթական օժանդակութիւն է ստանում Իրանի Բարեխնամ Կառավարութիւնից եւ Գ. Գիւլբէնկեան Ֆոնդից միայն։

Այս դպրոցն այցելել են Թեմակալ Առաջնորդ Գերաշնորհ Տէր Արտակ Սրբազան Արք. Մանուկեանը, Գիւլբէնկեան Ֆոնդի Իրան այցելող ներկայացուցիչները, Կրթ. Նախարարութեան բարձրաստիճան անձինք եւ այլն։

Այս կրթական օջախի հիմնադիր եւ արտօնատէր-տեսուչ Պրն. Խորէն Տէր Վրոյրեանը 1942 թուին հիմնել է «Դանայի» եւ 1948-ին «Ճահագիգ» ազգային դպրոցները։ Այս դպրոցներում պաշտօնավարել է, որպէս հիմնադիր-տեսուչ, ապա հայերէն եւ պարսկերէն լեզուների դասատու ուսուցիչ։

Եթէ մինչ այժմ մամուլի մէջ իր անունն ու գործը էջեր չեն գրաւել, պատճառը պէտք է վերագրել իր համեստութեան։ 30-ամեայ իր կրթա-դպրոցական սպասաւորութեան տարիները աղաղակող փաստեր են արդէն, Նա պատկանում է մեր կրթական մշակների համեստ դասին։ Իր ըղձակէտն է հայրենասիրութիւն ոչ թէ փառասիրութիւնը։

Նրա դպրոցն առեւտրական գրասենեակ չէ, որ փառքչութիւններով ուշադրութիւն գրաւի, այլ մեր Մեծասքանչը թոթովել տալու հայ մանուկներին, հայոց պատմութիւնը փոխանցելու նոր սերնդին եւ հայկականութիւն ջամբելու նրանց, որպէսզի արմենական ցեղն ապահովել կարողանայ իր գոյութիւնը ամեն տեղ։

Պրն. Խ. Տէր Վրոյրեանն օժտուած է նաեւ բանաստեղծական ձիրքով, Տարիներ առաջ հրատարակուած իր «Հըրանդը» պոէման եւ մամուլի մէջ գրուած իր տաղաչափուած գրուածքները այդ են ապացուցում։

Ստորեւ տպագրում ենք մեր մօտ գտնուող իր բանաստեղծութիւններից մէկը եւ բարեմաղթում ենք՝ նորանոր նուաճումներ։

### ԺՈՂՈՎՈՒՐԴ ԻՄ ՔԱՋ

Ազգ իմ, օտարից մենք շատ ենք խաբուել, տեսել շատ վնաս,
Օտարը հային միշտ էլ դարձել է ցաւ ու պատուհաս.
Զուր ենք յոյս դնում օտարին մի օր, մի ժամ, ակնթարթ,
Օտարը հային միշտ դաւ է նիւթել, միշտ լարել թակարդ,

Շատ մեծ ազգեր մեզ յուսադրեցին, բայց ամենը սուտ,
Հեռուից դիտեցին երբ մեզ կոտորեց ոսոխն անգութ.
Մեր օրհասական խաչելութեանը կամաւ կուրացան,
Ու նենգութիւնով եղեռնագործին թեւ-թիկունք դարձան։

Մեզ յոյս տուողը քնաւ մեզ չօգնեց՝ իր շահով տարուած,
Ուրացաւ ե՛ւ խիղճ, եւ արդարութիւն, այլ եւ իր Աստուած.
Է՜, նրան ինչ փոյթ, որ քաղաքակիրթ մի ազգ էր մեռնում,
Նրա աչքը միշտ իր շահն էր տեսնում, շահը որոնում։

Ազգ իմ, նեղ օրին մեր ուժը միայն մենք մեր մէջ գտանք,
Երբ մի շունչ, մի կամք, մի անձ, մի հոգի ու մի ոյժ դարձանք.
Մեծ հերոսութեամբ ճիւաղ թշնամու դէմը կանգնեցինք,
Փրկեցինք նրան ու մեր սուրբ հողը ազատագրեցինք,

Ժողովուրդ իմ քաջ, թող մենք յարատեւ ձեռք ձեռքի տուած,
Դարձեալ միակամ, մի անձ, մի հոգի եւ մի ոյժ դառած.
Միշտ նոյն իդէալին ձգտենք եւ մնանք անյողդողդ ու քաջ,
Մեր կամքով միայն, մեր ծունկի ուժով ընթանանք առաջ։

ԽՈՐԷՆ ՏԷՐ ՎՐՈՅՐԵԱՆ

### ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Արեւի նման ոտքի ելած,
Երբ գնում եմ ես իմ գործին,
Ողողում ես իմ սիրտը բաց
Քնքուշ բոյրով լուսաբացի,
Ո՛վ ինձ ծնող,
Սնուցանող,
Դու քա՜ղցր մայր, հայրենի՛ հող։

Օտար ափին, յիշելով քեզ,
Ես չեմ ծռի մէջքն իմ շիտակ,
Եւ բիւր անգամ հզօր եմ ես,
Երբ դու ես իմ ոտքերի տակ,
Ինձ յա՛ղթ պահող,
Միշտ մա՛րդ պահող,
Կո՛ւռ պատուանդան, հայրենի՛ հող։

Թէկուզ Մասիս էլ հանեմ մի օր,
Ու այլ սիրով հոգիս տարուի,
Ո՛չ մի վայրկեան կեանքում այդ նոր
Սիրտս քեզնից չի՛ կտրուի,
Ինձ վե՛ր տանող,
Թեւե՛ր տուող
Իմ զօրավիգ, հայրե՛նի հող։

Աշոտ Լուսենց

Հով. Տէր Պետրոսեանի «Կանթեղ» օրացոյցը
Պր. Խորէնի մասին



ՏԵՂԵԿԱՏՈՒ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 15

# ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Թեհրանի Էշրաթաբադ հրապարակում պայթած ռումբի հետեւանքով, ի շարս այլոց, զոհուեցին Ոսկանեան ընտանիքի հայրը եւ իր տղան: Միեւնոյն ժամանակ վիրաւորուեց ու մէկ ոտից զրկուեց իր աղջիկը:

Տղան սովորում էր «Ալիք» տարրական դպրոցում, իսկ աղջիկը «Ռոստոմ» ուղեցոյց դպրոցում:

Մահարիթ պատահարի զոհերի թաղման տխուր արարողութեան մասնակցեցին «Ալիք» դպրոցի ծնողական խորհուրդը եւ մի խումբ աշակերտ-ուհիներ:

Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց եօթնօրեակի առթիւ մատուցուած Ս. պատարագի արարողութեան եւ Թեմական Խորհրդի անդամների ընկերակցութեամբ Ոսկանեանների բնակարանը գնալով մխիթարութիւն մաղթեց եւ հիւանդանոցում այցելութիւն տուեց վիրաւորուած աղջկան:

Թեմական Խորհուրդը նաեւ ցաւակցութիւն յայտնեց սգահար ընտանիքի պարագաներին դժբախտ այս պատահարի առթիւ:

Այս ամսուայ ընթացքում, ի շարս այլ ազգայինների, ցաւով վըկան եղանք ազգային-հասարակական ծառայութեան մէջ դերակատար հանդիսացած մի քանի դէմքերի մահուան, յանձինս երկար տարիների ուսուցիչ եւ դպրոցների հիմնադիր-տեսուչ, Թեմական Խորհրդի անդամ Խորէն Տէր Վրոյրեանի, Թ. Հ. Կ. Բարեգործական

Ընկերութեան երկար տարիների նուիրուած նախագահուհի Շուշանիկ Յորդանանեանի եւ Թեմիս 10-րդ Պատգամաւորական Ժողովի անդամ Հայկազ Նազարեանի:

Թեմական Խորհուրդը Սրբազան Հօր նախագահութեամբ կազմակերպել է ազգային թաղում եւ իր տուած մահազդներով ու ցաւակցութիւններով յարգել է նրանց յիշատակը:

Թեհրանի Թեմի տեղեկատու- Խ. Տէր Վրոյրեանի և նրա քրոջ ամնոււ՝ հնազուցեալ Հայկազ Նազարեանի վախճանման մասին: Վերջինս էլ 10-րդ պատգամաւորական ժողովի անդամ էր, Երկուսն էլ շատ մտերիմ ու գաղափարակից էին, Նազարեանի մահը անտանելի ցաւ պատճառեց Պրն Խորէնին, օրեր շարունակ մանկան նման լալիս ու ողբում էր:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ 1148

Խորէն, Վարդուհի, Արփիկ (Լիբանան) Տէր Վրոյրեանները, Բնոչ, Սէթ, Վաղարշակ, Մանուազ, Երուանդ, Սաթիկ եւ Նւարդ, Սամսոն եւ Ովսաննա, Ռուբիկ եւ Ալիս, Օննիկ եւ Նւարդ, Եգնիկ եւ Ծահգադար, Անահիտ, Նոյեմ, Ռաֆիկ, Եղիշէ եւ Նարգիզ, Սերոժ, Արտուշ, Սամուէլ, Սաւուղ եւ Սրբուհի Տէր Վրոյրեանները, Անուշ եւ Հայկազ Նազարեանները՝ զաւակներով, խորը վշտով յայտնում են, որ առաջինների սիրելի մօր եւ միւսների թանկագին հօրեղբօր կնոջ, տագեր կնոջ, զոքանչի եւ շատ սիրելի մեծ մօր՝

ՍԱԼԲԻՆԱԶ ՏԷՐ ՎՐՈՅՐԵԱՆԻ

ցաւալի մահւան տարելիցի առթիւ ուրբաթ, Յունւար 23-ին, առ. ժամը 10-ին, Ս. Թարգմանչաց եկեղեցում կը կատարուի՝ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ցաւակցութիւնները եկեղեցում եւ արարողութիւնից յետոյ իրենց բնակարանում։

Հասցէ.– Շահնաֆի պողոտայ, Քառուղի Շէյխան, Թարան դպրոց։

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆ

Խորէն Տէր Վրոյրեանը իր սիրելի մօր՝ ՍԱԼԲԻՆԱԶ ՏԷՐ ՎՐՈՅՐԵԱՆԻ մահւան տարելիցի առթիւ տասը հազար (10,000) ռիալ նուիրում է Լիբանանի հայ աղքատներին։ 1169

*Խ. Տէր-Վրոյրեանի մայրիկը մաւան տարլիցի հոգեհանգիստը և մերձավոր պարագաները – Ալիք օրաթերթ*




Շնորհավոր Նոր տարի
ՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ
Ջերմորեն շնորհավորում ենք Ձեր ամանորը:
Երջանկություն ու ամենայն բարիք մաղթելով Ձեզ, նորանոր հաջողություններ ենք ցանկանում Ձեր այն ազնիվ ու հայրենասիրական ջանքերին, որ նվիրաբերում եք Դուք հայապահպանությանը:
Թող խաղաղության, աշխարհաշեն ու բարի գործերի տարի լինի 1969 թվականը:
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵ


1975
ՇՆՈՐՀԱՎՈՐ
ՁԵՐ
ՆՈՐ ՏԱՐԻՆ



مورخه ۵۸٫۹٫۲۰

ریاست محترم اداره آموزش و پرورش بخش ۳ تهران

احتراماً، در پاسخ اعلام آن اداره در مورد [illegible] شماره ۶۷۳۱ واقع در [illegible]

[illegible]

۱- [illegible]

۲- [illegible]

الف - [illegible] ۱۴ [illegible] ۲۰ [illegible]

ب - [illegible] ۵ [illegible] ۲ [illegible]

پ - [illegible] ۲ [illegible]

۳- [illegible]

[illegible]

۴- [illegible]

الف - [illegible]

ب - [illegible]

پ - [illegible] $\frac{1}{200}$ [illegible]

ت - [illegible]

۵- [illegible]

[illegible] تلفن ۷۶۰۳۵۳

۱- [illegible] ۲- [illegible] ۳- [illegible]

Թաքան դպրոցի պետութեանը վաճառման մասին



مقام منیع مدیریت کل آموزش و پرورش استان مرکزی ایران

محترماً بعرض میرساند اینجانب خورن دردریان دبستانی بنام تابان از سال ۱۳۳۲ داشته و مدت ۲۶ سال آن را اداره نمودم. در سال ۱۳۵۳ این دبستان هم مانند کلیه دبستانهای غیر دولتی مشمول فرمان و مخارج آن به عهده دولت درآمد. برای ساختمان آن که به چند نفر تعلق دارد و بنده هم یکی از شرکای آن هستم طبق ارزیابی دو نفر کارشناس دادگستری اجاره بهای تقریباً کمی برای آن تعیین گردید که تاکنون هم اجاره بها بدون تعدیل به همان میزان باقی مانده است در تابستان سال جاری اداره آموزش و پرورش ناحیه ۳ بدون مطالعه تصمیم گرفت دبستان مذکور را به مهد کودک تبدیل دهد و برای این منظور در شهریور ۵۸ پرونده دانش آموزان دبستان را بدانان داده از مدرسه خارج نمودند بعد وقتی دیدند دبستان را برای تبدیل به مهد کودک به مخارجی بستگی دارد از تصمیم خود منصرف و اظهار پشیمانی کردند که چرا دانش آموزان را از دبستان خارج نمودند زیرا ساختمان دبستان وسیع و در آن حوالی ساختمانی از آن بهتر و مناسبتر برای دبستان وجود ندارد. در ضمن اموال و اثاثیه دبستان پس از فرمان پنج سال تمام مجاناً و بطور رایگان مورد استفاده واقع گردید و پس از پنج سال که قسمتی از آن از بین رفته و اسقاط گردیده ارزیابی شد و قیمت ناچیزی برای آن تعیین گردید که متاسفانه تا بحال دیناری در مقابل قیمت آن به بنده پرداخت نشده است و اکنون با وصف بودن آن اثاثیه در دبستان اداره آموزش و پرورش ناحیه ۳ دستور تخلیه آنرا داده و اجاره بها را قطع کرده است. در حالی که آن ساختمان فقط برای دبستان ساخته شده و هیچ نوع استفاده دیگری از آن نمیتوان کرد و از طرفی هم بنده پس از ۲۸ سال خدمت مداوم به آموزش و پرورش این کشور از هیچ منبع حقوق یا درآمدی ندارم و فقط با قسمتی از اجاره بهائی که بمن تعلق دارد امرار معاش مینمایم. چه بسا سالهای پیش که خانه و ساختمان ارزش خوبی داشت ما میتوانستیم آن ساختمان را به قیمت خوب بفروشیم بارها تقاضای فسخ اجاره را نمودیم ولی هر دفعه تقاضای ما بلا اثر ماند و ساختمان را واگذار نشد. لذا از مدیریت محترم تقاضا میشود دستور فرمایند تا ساختمان باز به اجاره آموزش و پرورش باقی ماند و در سالها بعد از آن برای دبستان استفاده شود زیرا در آن محل ساختمانی بهتر از آن وجود ندارد و از طرفی نظریاتم تأمین خواهد شد.

با تقدیم احترامات خورن دردریان

۵۸/۱۲/۱۵

Թաբան դպրոցի պետութեանը վաճառման և վարձավճարի մասին

# Գրքի խմբագրի մասին



Էդիկ Բարդուղիմեոսի Բաղդասարյանը մասնագիտացած է Հայ ժողովրդի պատմության ասպարեզում. հեղինակել կամ թարգմանել է 172 գիրք եւ երկու հարյուրի շուրջ հոդված Հայոց պարմության եվ մշակույթի նաեւ տեխնիկական գիտությունների մասին, նաեւ խմբագիրն է «Լույս» մշակութային ամսագրի եւ «Ապագա» արեւելագիտական հանդեսի: Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի հիմնադիր եւ տնօրեն, - Թեհրան, «Նիշաբուր Իրանագիտական հաստատություն», Թեհրան 1981-2002, ապա Տորոնտոյի «Հայկական Ուսումնասիրությունների - Կենտրոն»-ի հիմնադիր-տնօրեն 2002-ից: Ն աեղել է Թեհրանի համալսարանների բակավրիայի, մագիստրատուրայի եւ դոկտորական գիտական ժուրիի անդամ Հայոց պատմության եւ մշակույթի գծով, 1987-2002:

Նրա աշխատանքներից կարելի է հիշատակել՝ Հայ Ժողովրդի Պատմություն, երկու հատորով, Հայ եկեղեցու Պատմություն, Արցախի Պատմություն,

Թեհրանի Հայ համայնքի Պատմություն, Իրանահայ համայնքի համառոտ պատմություն, Քյամարա գավարի Պատմություն, Մովսես Խորենացու հայոց պատմության թարգմանություն եւ ծանոթագրությունները, Հայ մշակույթի Պատմություն, Հայ Մատեմատիկայի պատմություն, Սովորենք Հայերեն, Անգլերեն-Հայերեն-Պարսկերեն Զրուցարան, Անգլերեն-Հայերեն-Պարսկերեն պատկերազարդ բառարան, Հայ պետականության պատմություն (7 հատորով), Իրանահայ Համայնքի Ամբողջական Պատմություն (10 հատորով), Հայկական Հարցը (2 հատորով), Հայկական Հարցի մանիֆեստ, Հայ գրականության պատմություն (3 հատորով), Հայ գրականության ընտրանի, Հոդվածների ժողովածու (3 հատորով), Հայոց ցեղասպանության մասին երեք գրքեր եւ բազմաթիվ այլ աշխատություններ, Հայկակամ Հանրագիտարան (10 հատոր, անգլերեն) և այլն: Խմբագրել է զանազան գրքեր՝ Նարեկացու «Մատյան ողբերգության» պարսկերեն թարգմանությունը, Պետրոս Քաջբերունու «Մատյան խոհերիս», Խորեն Տեր Վրույրյանի «Ինչպես տեսա Հայաստանը», Թամար Փանոսյանի «Հայերեն-անգլերեն-պարսկերեն արածանի», Թեհրանահայ գրական շրջանակի «Հանադիպում» հանդեսի 3-րդ հատորը, եւ շատ այլ հայերեն, պարսկերեն եւ անգլերեն գրքեր:

Գրքերի և հոդվածների մասին տեսնել՝ www.Edic-Baghdasarian.com

# دیوان اشعار

# خورن در ورویریان

به کوشش ،گردآوری، تنظیم، پیشگفتار، ویرایش ، تحشیه و انتشار

توسط ادیک باغداساریان (ا. گرمانیک)

با همکاری خانم تامار پانوسیان

## Khoren Ter-Vruyrian

# Collection of poems

Collection, Introduction, Commentary notes, editing and publishing
by
**Edic Baghdasarian**

With assisstance of
**Mrs.Tamar Panosian**

ISBN: 978-1-927860-80-9
Հայկական Ուսումնասիրութիւնների Կենտրոն
Armenian Research Center

**Տորոնտո 2020 Toronto**